Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1351

9(33)
Х-85

9(33)
Հ-85

30 MAY 2011

2 SEP 2006

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս·ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԲԱԺԱՆԵԱԼ ՅԵՐԿՈՒՍ ՀԱՏՈՐ

ՀԱՏՈՐ Ա.

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ
ՀԱՒԱՔԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Տ· ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՑ
ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԽՏԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ
Տ· Տ· ՄԱԿԱՐԱՑ
ՊԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս· ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ· ՅԱՐՈՒԹԻՒՆ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ
Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ
Տ· ԹՈՐԳՈՄԱՑ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1890

9(33)
Հ-85

12 JUN 2013

1357

Տպագրեալ բարեյօժար արդիւնատրութեամբ
երկուց տոհմակցաց Վ. սեմ. Աբրահամ Պէյի Բարթողեան
Եւ Վ. սեմ. Պօղոս Պէյի Աղբզեան.
Ի Յիշատակ բարեաց ծնողաց իւրեանց
Ի Տէր հանգուցելոց.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՀ ԳԱԱ Մաշտոցի անվան Մատենադարան
ZUUՈ-Арм. ССР
ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА
им. А. Мясн...
ЕРЕВАН

58152-67

Ա.Ո. Աջնունեաւոյ ՍԱՏԱՐԻՁՄ
ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԻՍ

Թագ պարծանաց և վայելուչ պսակ վառաց հիւսեալ կապեցիք ի վեհմախոհ գլուխս ձեր, Ո՛ աղնուաշուք և բարեսոհմիկ Տեարք, Վ. սեմ. Աբրահամ Պէյ Բարթողեան, և Վ. սեմ. Պօղոս Պէյ Աղբզեան, երկոքին տոհմակից և բարեկեցան սիրելիք, ոչ ի գեղանշոյլ մարգարտաց՝ ոչ ի փայլուն քարանց և յականց պատուական, որք գիւրեղծանելիք են և զանցաւորիս միայն ունին գլխելուծութիւն. այլ յոսոյլ անմահ Թագաւորին՝ անեղծին և միանձնաւորին ակնկալեալ, սիրով և խնդութեամբ զնորին զառհաւատչեայն յօժարութեամբ յանձն առիք աստէն ցուցանել: Ընդ հոգևկան բարեմասնութիւնս՝ զաղձալին ամենեցուն՝ զմտաւոր բանին առեմ և զբարոյականն կցորդելով յարդիւնս ածել խորհեցայք, լեալ յորդորիչ և քաջալերք աշխատասէրք մտոց յայսպիսի շահաւէտ և ազդաչէն երկս, օձան և երախտաւոր համազգային ուսումնասիրաց ընթերցանելեաց և հնախոյզ քննասիրաց, սատարիչ եւ ձեռնտու դոյզն ինչ վաստակոցս, զոյն իսկ՝ ժամանակագրական պատմութիւնս սրբոյ քաղաքին Երուսաղէմի ի լոյս ընծայել: Արդարեւ մեծի վառաց և արձան յաւերժական յիշատակի կանգնեցիք դարուց ի դարս վասն Ձեր և վասն հոգւոց ի Տէր հանգուցելոց Բարթողեան եւ Աղբզեան բարեսոհմիկ զարմին, որոց բաղում անգամ զօրավիգ և օժանդակ լեալ են արդեանց մտաւոր վաստակաւորաց ոմանց՝ ի զարգացումն Հայ մանկաւարժն, յորոց յոլովք տպագրութեամբ ի լոյս ընծայեալ են առաւել ի Սրբոյ Աթոռոյս եւ քանզի

ըստ Տէրունական բանին «Ծառ՝ ի պտղոյ իւրմէ ճանաչի»։ եւ «Ծառ բարի՝ պտուղ բարի առնէ»։ Եւ դուք իսկապէս յայսմ հարազատ և բարի արմատոյ վերաբուսեալ՝ ընտիր շառաւիղք եւ բողբոջք նոցին՝ ի դէպ ժամու ծաղկեալ եւ պտղաբերեալ իսկապէս ցուցիք զարդիւնս առաքինական գործոց ձերոց, զորոց քաղցրութիւնն նոքա միայն կարեն գիտել, որոց կիրքք են ճաշակելիքն։

Արդ՝ ոչ այլ ինչ մնայ երկայնիրիս երախտագէտ մնոք փոխարէնս և տրիտուր հատուցանել քարեխոնրհութեանց բարեացակարտ աղնուականութեան ձերոյ, բայց միայն անմոռաց յիշատակաւ նպատոս ազթից և հայցուածոց ի Աբբայն վայրս Տնօրինականաց Քրիստոսի փրկչին մերոյ, կեալ Ձեզ և որոց ընդ ձեզ են՝ անդադրը և անտրտում ուրախութեամբ յանցաւոր և յառաքեալ կեանս, անմահին և մշտնջենաւորին լինել արժանի երանաւէտ կենաց և անթառամ պսակին։

Եւ ... տեսեալ զքաղաքն՝ ելաց ՚ի վերայ նորա ... ։ Զի եկեսցեն աւուրք ՚ի վերայ քո, եւ պատեսցեն զքեզ բշնամիք պատնէշ · եւ պաշարեսցեն զքեզ, եւ նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց · եւ յատակեսցեն զքեզ, եւ զորդիս քո ՚ի քեզ · եւ ոչ թողուցուն քար ՚ի քարի վերայ յամենայնի ՚ի քեզ · փոխանակ զի ոչ ծանեար զժամանակ այցելութեան քո ։

Ղ.—ԺԹ · Գ.Ը · ԺԹ · 41—43 ։

ԿԱՆԽԱՐՀԱՆ

ՈՐՈՑ միանգամ ուշ ՚ի կուրծս առեալ՝ փայթ յանձին կալան յիշել զքաղաքն Սուրբ ԵՐՈՒՍԱՂԷՄ, և զմտաւ առնել զորպիսութենէ հանգամանաց նորին, ուշիմ և հասուն խորհրդով ՚ի խոյզ և ՚ի խնդիր լինել զանաղան արկածից և դիպուածոցն, զկրօնականացն ասեմ և զքաղաքականաց, որ եկին հասին ՚ի վերայ նորա ՚ի պէսպէս դարս և ՚ի յոլով ժամանակս, ՚ի յայդս խառնուրդս և ՚ի վրդովմունս աշխարհի · բանին սպասքէն առաջի նոցա ասպարէզ լայնածաւալ հոգեւորական եւ մտաւորական գիտութեանց, եւ աստուածային անապատելի դանձ իմաստութեան, ՚ի կիրս մարդեղութեան եւ ՚ի խորհուրդս չարչարանաց Փրկչին մերոյ ։

Թողեալ մեր ՚ի բաց պրպտմաբարեան ժամանակս եւ զգործս Հրէական ազգին, որոյ մայրաքաղաք եւ տեղի նուիրական եկաց քաղաքն ընտրեալ · իսկ ՚ի ծագել Արեգականն արդարութեան յաչխարհին յայնմիկ, ՚ի սփռել և ՚ի ծաւալիլ ճառագայթից Աւետարանին լուսոյ՝ ընդ ողջոյս տիեզերաց քարոզութեամբ Առաքելոց, յամիլ և ՚ի զարգանալ քրիստոնէական Սուրբ հաւատոյ եւ ճշմարիտ կրօնիւ, առաւելագունի հասին չնորհաց և փառաց պատուոյ վեհաւայր տեղիքն Տնօրինականք ՚ի ձեռն բարեպաշտ թագաւորաց, իշխանապուն պայազատաց, և համայն հաւատացելոց ։ Զի թէպէտ և բազում անգամ արիութեամբ ՚ի դիմի հարաւ լաչմաղէտ վշտաց եւ արկածից, արիւնահեղ պատերազմաց, անմեղ սպանութեանց, եւ անթիւ գերութեանց, որովք քարինք չինուածոցն և հող երկրին յոլովիցս ողողեալ ներկան արեամբ ազգի մարդկութեան · Այլ իրրեւ արի ախոյեան արհամարհեալ գխոչ և գխութ և զհոյլս տառապանաց և նեղչաց, կրկին և վերստին յարուցեալ եկաց յաւերակացն՝ տարեալ զյաղթանակն փառաց, առեալ և զպսակն պարծանաց ։

Այսոցիկ այսպէս եղելոց ապաքէն գտանել գտան արք ոմանք հոյակապք եւ խնաստասէրք, որոց ոչինչ կարծիս երկմտութեան ՚ի միտս բերեալ, փոյթ կալան ՚ի գրի հարկանել զդէպս իւրաքանչիւր ժամանակի, զրազմաղէտ վիշտս եւ զխաղաղաւէտ կեանս, զբերկրանս հոյակապ չինուածոց, եկեղեցեաց և վանօրէից, և զհոյլս կրօնաւորական դասուց փայլեալ ՚ի նոսին։ Այլ և ՚ի յաւերումն և ՚ի քանդումն, զտխրաթախիծ սուգս և տարաչխարհիկ վտարանջուման կղերաց, այլովքն հանդերձ։ Թողեալ յիշատակ յաւերժական և գանձ ցանկալի ՚ի բարգաւաճանս ազգի եւ կրօնի իւրեանց։ Այլ չեղեւ ինչ փոյթ գէթ միւսք ՚ի նոցանէ հարեւանցի ինն ակն արկանել ՚ի կրօնաւորս Հայոց և յարարս նոցա, և եթէ եղենն, այնք եւս մասնակի եւ աննպաստ, այլ իւրաքանչիւր ոք ջանաց զիւրն պանծացուցանել զգործ։

Ապաքէն իղձ մեծ էր տեսանել զայսպիսս ոմանս վայելեալ յազգի մերում, նախանձաւորս այնպիսի փառաց և պարծանաց, թողլով առ յապայս մատեանս կարեւորս առ այս գործ պիտանի և օգտակար՝ որպէս նոքայն։ Այլ աւա՛ղ, չհասին ՚ի ձեռս մեր այսպիսի իրաց մանրապատում իրք։ Զի Թերեւս՝ ժամանակացն դառնութիւնք չետուն պարապ յայսպիսիս պատասխանի։ և կամ եթէ պարապեցան, գուցէ նոցին գործք և երկք ՚ի կորուստ մատնեցան։ Այլ ՚ի վերայ այսր ամենայնի նշմարեն տակաւին հատուածք բանից սփռեալ յերկս տոհմային Մատենագրաց, և հատակոտոր բանք աւանդեալ յայլ և այլ թղթեանս ՚ի ցրիս։ Եւ թէպէտ երեւեցաւ ՚ի յետին ժամանակս գրքոյկ ինչ մակագրեալ Պատմութիւն կամ Մատենագրութիւն սուրբ Երուսաղէմի, այլ չեղեւ բաւական տալ յագուրդ հետաքրքրողի եւ բանասէր մտաց, ՚ի խնդրել եւ ՚ի հետազոտել զհանգամանս արկածից դիպեալս ՚ի պէսպէս ժամանակս։

Զայս ամենայն և առաւել քան՝զայնս յուշի կապեալ, անվեհեր ձեռն արկի յայս գործ տաժանակիր, չհայեցեալ ՚ի տկարութիւն անձինս, այլ վստահեալ ՚ի հնորհս Տեառն, որ զօրացուցիչն է յամենայնի, սկիզբն արարի յածել եւ թարթափիլ յայլ և այլ գիրս և ՚ի մատեանս, որոնել և ՚ի

ձեռս բերել ըստ կարելւոյն զգանազան թղթեանս և գրիչառտակարանս, և հաւաքեալ զայնոսիկ ըստ պատշաճի իրացն՝ կարգաւ դասաւորեալ խմբեցի ՚ի մի զբազաքականս և զկրօնականս, զվէմս և զդատաստանական խնդիրս ընդ օտար ազգիս, վաստակեալ ՚ի սմին ամս իրր վեց, եւ զգործն բաժանեցի յերկուս Հատորս։ ոչ ՚ի պարծանս ինչ անձին, և կամ ՚ի ժառանգել զանուն և զփառս պատմագրի, այլ կէտ նպատակի կալայ զօգուտ և զբարգաւաճանս բանասիրաց ազգիս՝ ընտրելով ինձ ոճ միջակ դիւրամատչելի եւ հասկանալի։

Ընթացք գործոյս ուրեք ուրեք ընդ միջեալ կասին յիւրոց անխոտոր շաւղաց՝ առ ՚ի նուազութենէ նիւթոց եւ կարեւոր բանից։ զի չեղեւ հնար անընդհատ գլխաւորել զայն մինչ ՚ի վախճան իւր։ ուստի հարկ ՚ի վերայ կայր թողուլ զայնս առ յապա՝ առաւել ճարտար և հմուտ եւ ճոխացեալ մտաց աշխատութեան, ածել յերեւան զարգասիս այսոցիկ բարեաց, ՚ի խոյզ եւ ՚ի խնդիր լինելով այսպիսի ցանկալի իրաց, ՚ի լրումն բաղձանաց ազգիս։

Աղբիւրք՝ յորոց քաղեալ բովանդակեցաւ ժամանակագրական Պատմութիւնս Սուրբ Երուսաղէմի, են՝ տոհմային Մատենք՝ գրչագիր և տիպ։ Պատմութիւն Հայոց։ Հ։ Մ։ Ջամչեան, Տիպ ՚ի Վենետիկ։ Տիեզերական Պատմութիւն Հ։ Ց։ Գաթրճեանի, Տիպ ՚ի Վիեննա։ Պատմութիւն Տիեզերական Ժողովոց։ Ցովսեպոս Երրայեցի, Գիրք յաղագս պատերազմացն Հրէից։ Մարինոս Սանուտոյ Լատին։ Պատմութիւն Ս։ Երկրին, ձեռագիր։ Իւնս էլ ձեվիլ Արաբացի, Պատմութիւն Երուսաղէմի և Քերբոնի, որ և կոչի Թուրէխ էլ Համդէլէ։ բազմաթիւ հրովարտակք, տուեալ ՚ի Սուլթանացն Եգիպտոսի և ՚ի Բարբարիայ կայսերաց Օսմանեան հզօր պետութեան։ Հէօճճէթք, իլամք, մաղազաթայք, պույրուլթիք կուսակալաց։ մուրասալայք, աղերսագիրք, արձանագրութիւնք դատաստանական քննութեանց, պատճէնք երեւելի արձանագրութեանց Հայերի և Արաբացի՝ գրուածեալ ՚ի քարինս և ՚ի բարաւորս դրանց։ յիշատակարանք և կտորք թղթոց։ հարուստ նամականիք եւ կոնդակք, այլովքն հանդերձ։

Զարքունի Հրովարտակս և դպատաստանական վճիռս և հետևարս տուեալ ՚ի դիւանաց և ՚ի դատարանաց ՚ի թուրք և յարարացի բարբառ, մտադիւր և զգուշաւոր լինի քննութեամբ հեղաք ՚ի բնիկ մեր հայեցի խօսս՝ եդեալ առ ընթեր իւրաքանչիւրոց զդգ ընդ Քրիչական թուականին՝ եւ զթուականն հիմնդթի. է զոր ամբողջութեամբ եդաք ՚ի կարգի գործոյս, եւ է զորոց իմաստս և եթ յաւելաք ՚ի նոյն՝ խորշելով միանգամայն յաւելորդ և յերկար բանից։ Զգաղիական նամակն և զարաբական արձանագիրս իսկութեամբ պահեցաք յաւելլով և զթարգմանութիւնս նոցա։ Ի յաջորդութենէ Եպիսկոպոսաց կամ Պատրիարգաց Սրբոյ Առաքելական Աթոռոյս զանս միայն եդաք ՚ի կարդի Պատմութեանս՝ զորոց գործս, և զորս միանգամ վաւերական գտաք. թէպէտ եւ ոմանք ՚ի Միաբանից Ս. Ուխտիս, յառաջագոյն առանձին աշխատ եղեն առ այս գործ, և ՚ի տիպ արձանացուցին։ Հուսկ ապա՝ զայս գուզնաքեայ վաստակ մեր քրտնաթոր կամակար մտօք մատուցանեմք օրհնել ազդիս Հայոց յօգուտ եւ ՚ի զարգացումն բանասէր մտաց, ՚ի դիւրութիւն և ՚ի մխիթարութիւն Միաբանական Ս. Ուխտիս ողջմիտ Հարց և եղբարց, և ՚ի փառս միոյն Աստուծոյ՝ որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԳԼՈՒԽ Ա.

Ծնունդ Տեառն մերոյ. Գալըստ Մոգուցն. Կատարումն մանկանց. Յաքիանէս մկրտիչ. Հերովդէս. Աբգար. Պիղատոս. Հրէշտակք Աբգարու. Միրտութիւն Տեառն և քարոզութիւն նորին մինչեւ ՚ի համբառնալն յերկինս։

Յամի քառասներորդի կայսերութեանն Հռոմայ Օգոստոսի և յերկրորդի թագաւորութեանն Հայոց Աբգարու յետևեալ, եւ յերեսներորդի եօթնևերորդի թագաւորութեանն Հրէաստանի Հերովդէի մեծի Ասկաղանացւոյ, «Ել հրաման ՚ի նմին իսկ Օգոստոս կայսերէ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս». որպէս պատմէ Աւետարանադիրն Ղուկաս, ելին և սկսեան գործակալք ինքնակալին ընդ ամենայն գաւառս տէրութեանն, ածել ըստ պատկեր նորին Օգոստոսի կանգնել ՚ի մեհեանս դից մեր ազգաց. ի սմին ժամանակի ծնաւ Փրկիչն մեր և ամենակալ թագաւորն Յիսուս Քրիստոս անճառելի և անապական ծննդեամբ՝ յանարատ կուսէն Մարիամայ ՚ի Բեթղեհէմ Հրէաստանի՝ յանշուք և ՚ի գծուծ այրի, պատեալ ՚ի խանճարուրս եւ եդեալ ՚ի մսուր անբանից. Զի սուրբ կոյսն Մարիամ եկեալ էր ընդ Յովսեփայ ՚ի Նազարեթէ մտանել յաշխարհագիր ՚ի քաղաքն Դաւթի. Հովիւքն բացօթեայք աւետեաց հրեշտակաց տեսին զհին աւուրցն մանկացեալ ՚ի գիրկս կուսին. Թլփատեցաւ ութօրեայ, եւ կոչեցաւ անուն նորա Յիսուս՝ ըստ կանխասաց բանի հրեշտակին. Ասացն նորատեսիլ եղեւ առաջնորդ Մոգուցն արեւելից,

և 12 հազարաց նոցին, և լուեալ թէ սիրէ սով ՚ի Պաղեստին, թողին զզբօսն առ Արդար արքայն Հայոց, եւ եկին 12 Իշխանօք և 1000 հեծելովք, Մելքոն, Գասպար և Պաղտասար, ըստ վարդանայ, ոսկի, կնդրուկ և զմուռս բերեալ պատարագ։ Լուկիանոս ոմն Հռոմայեցի՝ գրեաց առ կայսրն Օգոստոս յԱորեաց։ «Գիտասցէ ինքնակալութիւնդ, զի եկին ՚ի հարաւոյ յարեւելից արք մեծաչուք, և երկրպագին տղայի միոյ ծնելոյ ՚ի Պաղեստին, հրաման առեալ ՚ի վերուստ յաստեղէ մեծէ, որ առաջնորդէր նոցա»։ Ընծայեցաւ քառասնօրեայ ՚ի Տաճարն, արձակեալ զծերունին Սիմէոնէ ՚ի խաղաղութիւն։

Փախեաւ յեգիպտոս ընդ ծնողացն ապրեալ ՚ի մահուենէ Հերովդէ, զի ծանեաւ զնա նախանձորդ թագաւորութեան իւրոյ եւ կամէր սպանանել։ Այլ իրրեւ խաբեցաւ ՚ի Մոգուց անտի, եհեղ զցասումն սրտմտութեան իւրոյ ՚ի տղայսն Բեթղեհէմի և յամենայն սահմանս նորա, և ետ կոտորել զնոսա յերկեմնից և ՚ի խոնարհ, 1462 անձինս՝ ըստ վարդանայ։ կարծելով սպանանել զՓրկիչն ՚ի նոսին։ Ինդրեաց և զՅովհաննէս՝ ուր և գտանիցի նա ՚ի լեռնակողման։ զի հաչակեալ էր անուն նորա ընդ ամենայն Հրէաստան՝ վասն աքանչելի ծննդեան նորա։ Սճապարեաց Եղիսաբէթ, առեալ զնանուէն փախեաւ ՚ի լեառն, եւ ՚ի պնդել արքունի խնդրակաց զհետ նորա, նոյն ժամայն պատառեցաւ վէմն, և առ ընկալաւ ՚ի ներքս զնայրն և զմանուկն։ Եւ ապա հրէշտակ Տեառն երկան ըզնոսա ՚ի վիմէն։ Եղիսաբէթ զնաց ՚ի տուն իւր, և մանուկն մնաց յանապատի սպասաւորեալ ՚ի հրէշտակաց։

Եկեալ Եղիսաբէթի եդիտ զԶաքարիա նահատակեալ վասն ճշմարտութեան, զի սպանին զնա Հրեայք ՚ի Տաճարին՝ (որք Մեսիայ առնէին զՀերովդէս), վասն քարոզելոյ նորա զգալուստ ճշմարիտ Մեսիային, և թագուցանելոյ զորդի իւր։

Իսկ Հերովդէս ցասուցեալ արքային Հայոց Աբգարու, սակս արհամարհանաց իւրոյ պատկերին, գումարէ զօրս ՚ի վերայ նորա, և պատահեալ քաջայն Հայոց՝ անկանի ՚ի մարտին եղբայր նորին Ծովէփ, և զօրքն ցրուին փախստական, եւ ինքն անկեալ յախտ դժնդակ՝ եւացին որ-

դունք ՚ի բովանդակ մարմին նորա, և չարաչար մահուամբ փչեաց զհոգին, վասն ՚ի Քրիստոս յանդգնութեանն, որպէս պատմէն Ծովնէփոս և մերս Խորենացի։

Ցետ թագաւորելոյ Աբգեղայոսի ՚ի Հրէաստան փոխանակ հօր իւրոյ Հերովդէի, դարձաւ մանուկն Յիսուս ընդ ծնողացն յեգիպտոսէ ՚ի քաղաքն Նազարէթ. և յերկոտասան ամաց հասակին իւրոյ՝ եւ ընդ ծնողացն ըստ սովորութեան յերուսաղէմ ՚ի տօնի զատկին. և վայելեցոյց ըզնչոյլս ճառագայթից Աստուածեղէն իմաստութեանն ՚ի Տաճարին առաջի դպրաց, եւ ապա իջեալ գնաց ընդ նոսա հնազանդութեամբ, և զարգանայր հասակաւ և իմաստութեամբ և շնորհօք։

Աբգեղայոս ամբաստանեալ առաջի կայսեր՝ անարգաբար արտաքսեցաւ ՚ի սահմանաց թագաւորութեան իւրոյ և դառապարտեցաւ յաքսորս։ Եւ զկնի այնց, առաքեցաւ Պիղատոս պոնտացի ՚ի Տիբեր կայսերէ դատաւոր Հրէաստանի. սա եհաւ ծածկարար ՚ի գիշերի զպատկեր կայսերն յերուսաղէմ. եւ յետ երից աւուրց դղրդեցաւ քաղաքն ողջոյն, դիմեցին առ նա Հրեայք ՚ի կեսարիայ, բազում պաղատանօք հայցէին չպղծել զքաղաքն, մանաւանդ զօրինս իւրեանց։ Ցընդդէմ դառնալն Պիղատոսի՝ յանձն առին մեռանիլ ՚ի վերայ հայրենատուր աւանդից քան տեսանել զանարգանս կրօնից։ Զարմացեալ Պիղատոսի՝ ետ բառնալ զպատկերն ՚ի քաղաքէ անտի. Սակայն զգանձս տաճարին, զոր պատարագն կոչէին, ծախեաց ՚ի ջրէջս ջուրց, որ տայր բերել ՚ի հեռաստանէ (՚). գրգռեալ Հրէից վերստին յարուցին աղմուկ չփոթի, մինչեւ համաձակ աղաղակել յերեսս նորա. այլ նա խորամանկութեամբ իւրով զբազումս ՚ի նոցանէ բրօք ետ կոտորել չարաչար։

Իսկ յառաջընթաց կարապետն Փրկչին անաւ յանապատի անդ՝ մինչ ցլրումն երեսներորդ ամի հասակին՝ սպասաւորեալ ՚ի հրէշտակաց։ Եւ ՚ի հնգետասաներորդի ամի

(՚) Զորս ժամս հեռի յերուսաղէմ յարեւմտից հարաւոյ, Աբրատ կոչեցեալ տեղւոյն, որպ հին ծնացորդ ճանապարհին ցարդ ուրեք ուրեք երեւին ՚ի ճանապարհին, այժմ յանկան զայս ջուր բերել յերուսաղէմ, որ բազում ծախուց պէտս ունի։

Թադաւորութեան Տիրերեայ կայսեր, եկն՝ի կողմանս Ցորդանանու քարոզել աշխարհի ապաշխարութիւն՝ի թողութիւն մեղաց եւ մկրտել զմարդիկ։ Եկն երեւեցաւ սրբիչն տիեզերաց ինքն Յիսուս՝ի Ցորդանան, մկրտեցաւ՝ի Յովհաննէ սրբելով զՂուբս։ բացան նմա երկինք, ՝ի վերուստ Հոգին Սուրբ աղաւնակերպ էջ՝ի վերայ նորա։ վկայեցաւ՝ի հայրական ձայնէ Որդի սիրելի, և յայտնեցաւ աշխարհի Երրորդութեանն վսեմք Աստուածութեան։

Հերովդէս Անդիպաս չորրորդապետ աշխարհին Գալիլեացւոց, որդի մանկակոտոր Հերովդի մեծի, ոխացեալ ընդ Յովհաննու, զի ստէպ յանդիմանէր զնա սակս զեղծ և անառակ վարուց, և կնոջն Հերովդիադայ եղբօր իւրոյ Փիլիպպոսի՝ զի բազում յաւիշտակեալ էր զնա՝ի գայթակղութիւն բազմաց, վասն որոյ կալեալ կապեաց զնա և առաքեաց՝ի դղեակն Մաքերունդայ, յայնկոյս Ցորդանանու, և՝ի բանտի անդ եւս դնեաւեալ զնա։ Եւ աչակերտացն բարձեալ զմարմին նորա տարեալ թաղեցին՝ի Սեբաստիա Գալիլեացւոց, ուր էին գերեզմանք մարդարէիցն Եղիսէի և Աբդիու։ Յաւելու Նիկիմոր յոյն պատմիչ. Թէ Հերովդիադա վասն երկիւղին պահեաց առ իւր զդլուխն Յովհաննու, զի մի գուցէ վերստին միացեալ՝ի մարմին նորա և յարուցեալ յանդիմանեսցէ զինքն։ Տես վասն այսր, ՝ի վարս սրբոց, Հատ. Ա. երես 34։ Եւ եւսեբ. Պատմ. եկեղեցւոյ՝ Ա. 11։ (30)։

Այլ Յիսուս յետ մկրտութեանն վարեցաւ յանապատ՝ զաւուրս քառասուն փորձեալ՝ի սատանայէ, և յաղթեալ նմա, պաշտեցաւ՝ի հրեշտակաց։ Եւ ապա սկիզբն արար սերմանել զսերմն Աստուածեղէն վարդապետութեանն՝ի հոգիս բանաւորաց, ուսուցանելով զապաշխարութիւն կենաց, յորդորելով՝ի պահպանութիւն Աստուածային օրինաց՝ գործովք բարեաց, եւ հաստատէր զնոսա մեծամեծ նշանօք և սքանչելիօք։ Սկիզբն նշանաց եղեւ՝ի հարսանեան կանայ՝ փոխեալ զՋուրն՝ի գինի. առաջին եւ երկրորդ անգամ յայտեցոյց 4—5000 ժողովրդաց՝ որք լսէին զբանն կենաց. եբարձ զհիւանդութիւնս և զդեւս վերացոյց, կուրաց շնորհեաց տեսանել. մատեաց մահու և եհան յարտաքս զաւար իւր զչորեքօրեայ. տարերք լսեցին յաստուածային

ձայնէ նորին. այսք չարք հալածական եղեն՝ի հրամանէ նորին, խոստովանեալ զնա Որդի Աստուծոյ։ Եցոյց աշակերտացն թէ զի՞նչ կրելոց իցեն վասն իւր և վասն վարդապետութեան իւրոյ. մարգարէացաւ զանցից և զտարաձելոյ եկեղեցւոյ իւրոյ և զկործանմանէ Հրէական տէրութեանն, երուսաղէմի և Տաճարին, խառն ընդ նոսա և ընդ վերջին դատաստանէ. յայտնեաց զանապարհորդելի փառս աստուածութեան իւրոյ՝ի լեառն Թափոր, ծանուցեալ զինքն տէր կենդանեաց և մեռելոց. պատմեաց աչակերտացն և թշնամեացն իւր՝ զիւրոյ ելիցն զոր կատարելոցն էր յերուսաղէմ։

Պիղատոսի իսկ զարմացեալ ընդ սքանչելի գեղ աստուածախառն մարմնոյ Փրկչին մերոյ՝ դրեաց զնմանէ առ Տիբեր կայսր եւ առ ամենայն ծերակոյտն Հռոմայ, որ ունէր օրինակ զայս։

Այր մի մեծ՝ առաքինութեամբք իւրովք երեւեցաւ յաւուրս մեր, որում անուն կարդային Յիսուս Քրիստոս, որ յարուցանէ զմեռեալս եւ բժշկէ զամենայն ազգս հիւանդութեանց, և կոչեն զնա Մարգարէ ճշմարտութեան, և ունի նա աչակերտս՝ որք անուանեն զնա Որդի Աստուծոյ։ Այր՝ արդարեւ գեղեցկահասակ և արժանի տեսանելոյ, ունելով դէմս պատկառելի՝ որ տայ զսէր միանգամայն և զերկիւղ ամենեցուն՝ որ՝ի նա հային։ Վարաք իւր են՝ի գոյն հասուն կաղնւոյ՝ միաւորեալ մինչեւ յականջացն՝ի վայր գառուզացեալ եւ գանգրեալ գեղեցիկ և պայծառ՝ որք և սփռեալ և ծածանեալ կան զուսովքն. գոլով նոյն վարսից բաժանեալ ընդ մէջ գլխոյն՝ ըստ տարազու Նազովրեցւոց։ Դէմք իւր չունի ինչ արատ և ոչ խորշոմութիւնս, կարմրագոյն է և քաղցրադէմ. իսկ ունչք նորա և բերանն չունին ինչ բնաւ տեսլի։ Աչք իւր են իբր կապոյտ և իբր կանաչ սպիտակախառն։ Ունի մորուս թանձր՝ պատ ոչ երկար՝ և է՝ի գոյն վարսից՝ և բաժանեալ ընդ ծնօտիւքն։ Ձեռք իւր և բազուկք գեղգր են՝ի տեսանել։ Ահաւոր է նա՝ի կշտամբանսն, և՝ի յորդորմունս իւր մարդասէր, սիրելի և զուարթ, բայց միանգամայն և ծանր. քանզի ոչ ոք եւս զնա ծիծաղիլ, այլ արտասուել երբեմն՝ այո՛, դուն ուրեք խօսի՝ և համեստ է՝ի խօսիլ իւ-

թաւմ և գեղեցիկ 'ի մէջ որդւոց մարդկան։

Հրեշտակք Աբգարու եկեալ հասին առ Մարինոս զօրավար Հռովմայեցւոց յելեւթերուպօլիս, և նորա ընկալեալ զնոսա խաղաղութեամբ՝ խօսեցաւ բանս բարիս, եւ արար պատասխանի բանիցն Աբգարու չկասկածիլ 'ի կայսերէ։ Եւ նոցա դարձ արարեալ անտի, եկին յերուսաղէմ տեսանել զՔիստոս, զի լուեալ իսկ էին զհամբաւ սքանչելեացն՝ զոր առնէր 'ի վերայ հիւանդաց եւ ցաւագնելոց, և ակնառեալ լեալ՝ պատմեցին Աբգարու 'ի գործի իւրեանց։ Ընդ որ զարմացեալ նորա՝ հաւատաց ճշմարտապէս իբր արդարեւ Որդի Աստուծոյ։ Եւ թէ այն զօրութիւնք Աստուծոյ են եւ ոչ մարդոյ։ Եւ քանզի ապականեալ էր մարմին նորա 'ի չար ցաւոց ուրկութեան, պատահեալ նմա յաշխարհն Պարսից, եւ տանել առ նա թուղթ աղաչանաց գալ եւ բժշկել զնա 'ի ցաւոցն։ Տես Խորենացի. Հատ. Բ. Պրակ. 29։

Հասեալ հրեշտակացն Աբգարու՝ յաւուր մտանելոյ Փըրկչին յերուսաղէմ, մատուցին առ նա զթուղթն. վկայէ այսմ և Աւետարանական բանն. «Էին անդ ոմանք և հեթանոսք յելելոց անդր, զի երկիրպագանիցեն 'ի տօնին»։ Եւ ընթերցեալ Քիստոսի զթուղթն, հրամայեաց Թովմայի առաքելոյ գրել առ նա պատասխանի։ Տես Խորենացի՝ անդ։

Զայս թուղթ երեր Անանէ հաւատարիմն Աբգարու, և ընդ նմին զանձեռագործ պատկեր Փրկչին 'ի դաստառակին, որ եկաց 'ի քաղաքն Եդեսեայ մինչեւ 'ի ժամանակս Նիկիփորի կայսեր Յունաց, որ 'ի ձեռն Աբրահամու մեդբապօլսին եւ տանել 'ի Կոստանդինուպօլիս, որպէս պատմէ Վարդան։

Իսկ Փրկիչն մեր Քիստոս, քարոզէր և ուսուցանէր ըզԺողովուրդս աստուածային վարդապետութեամբ, ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս նստէր և ուտէր, զի ածէ զնոսա յուղղութիւն, այլ ոչ հաւատային նմա խստասիրտ Հրէայքն՝ զկծեցան և գրգռեցան բազում անգամ դարան դրծեալ, և զինի յարութեան Ղազարու սահմանեցին յիւրեանս սպանանել զնա։ Այլ Քիստոս չոգաւ յերուսաղէմ 'ի վերջին Պասեքատօնին, յայտնապէս խօսելով զմահուանէն

և զերկրբօրեայ յարութենէն։ Եկեր անդ 'ի վերնատան ըզշաւիղն, հաստատեաց զխորհուրդ փրկական պատարագին, լուաց զոտս աշակերտացն, մատնեցաւ յաշակերտէն, կալեալ կապեցաւ 'ի գինուորաց յաղօթելն 'ի պարտիզին, և ածաւ 'ի տուն քահանայապետին Աննայի. եւ տեսեալ զնա յայն վիճակ դառնութեան՝ ուրախ եղեւ, և եւս կալել առ վայր մի 'ի ծառն ձիթենւոյ, (որոյ չառաւիղքն կան մինչեւ ցայսօր) եւ ապա առաքեաց առ տեսեալ իւր կայիւափայ քահանայապետ մեծ (1)։ Ապաակեցաւ 'ի ծառայէն՝ չարչարեալ զդիչերն ողջոյն 'ի խուժանէն յայսն կատականաց, երիցս ուրացաւ 'ի ծերոցն աշակերտէն, և այլքն փախեան։ Եկաց առաջի դատաւորին, յայտ արար և ոչ թագոյց թէ արդարեւ Քրիստոսն է եւ Թագաւոր։ Ցետ բազում դիմադարձութեան եւ խոստովանելոյ զանմեղութիւն նորա՝ ապա մատնեաց զնա դատաւորն 'ի ձեռս՝ առ ահի ժողովրդեանն։ Ցետ բազմապատիկ դանից, նախատանաց և թշնամանաց բառնայր յինքեան ըզփայտ խաչին, ելանէր 'ի Գողգոթայ, մատուցանէր զինքն պատարագ բոլորանուէր մատուցանելով աղօթս առ Հայր վասն հաշտութեան մարդկան ընդ Աստուծոյ, եւ սատանեալ չարժեցաւ բնութիւնն անմահութիւ. եւտուն դժոխք զաւար իւրեանց 'ի դուրս. վարագոյրն, որ զսրբութիւն հնոյ կտակարանացն ծածկէր՝ ցելոյ վերուստ 'ի վայր. բերան առն հեթանոսի օրհնեաց զԱստուած և խոստովան եղեւ թէ արդարեւ այրս այս արդար էր և Որդի Աստուծոյ. վերիս ժամն խաւար կալաւ զաշխարհ։ Ծովեզր այր արդար և բարեգործ, իջոյց զմարմինն Քիստոսի 'ի խաչէն Նիկոդիմոսիւ, խնկեալ պատեաց զնա սուրբ կտաւովք, և թաղեաց մեծաւ փառաւորութեամբ 'ի նոր դերեզմանի։ Իսկ Քիստոս աւերեալ զդժոխս և յաղթեալ բռնութեան մահու՝ յետ երից աւուրց յարուցեալ եկ 'ի գերեզմանէն, զոր կնքեալ էին մատանեաւ և պահէին զօրականաւ. երեւեցաւ ամենօրհնեալ մօրն, կանանցն Իւղաբերից և Աշակերտացն, Թովմայի, Կղէովպեանց, եւ այլոց. եկաց ընդ նոսա աւուրս քառասուն արարեալ նշանս առաջի նոցա։

(1) Ա. Ժամ վասն Հայոց Ս. Փրկչի՝ ար է և բանս կենարարին մերոյ։

58/52-67
Государственная Ленинская Библиотека СССР

Եւ ապա առեալ հանէ զաշակերտան 'ի լեառն ձիթենեաց, և կրկնէ նոցա զբանն. «Երթայք յաշխարհ ամենայն, մկըրտեցէք զնոսա»։ Եւ ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց, տալով նոցա զկատարեալ շնորհս առաքելութեան, և ինքն մեկնեալ 'ի նոցանէ վերանայր յերկինս այնպէս աքանչելի եւ անհաս իմն օրինակաւ, որպէս եկեալն էր յաշխարհ։ Եւ Առաքելոցն երկրպագեալ դարձան յԵրուսաղէմ սպասել աւետեացն Հոր ըստ բանի Վարդապետին իւրեանց։ (33)։

ԳԼՈՒԽ Բ.

Գալուստ Հոգւոյն Սրբոյ։ Հաստատութիւն Եկեղեցւոյ։ Եւ հալածումն նորին։ Յակոբ առաջին եպիսկոպոս Երուսաղէմի եւ Թադէ նորին։ Պետրոս։ զվաստուքն Յակոբայ։ Հերակլէս Ագրիպպա։

ՅԵՏ ընտրութեան Մատաթիայ 'ի թիւ երկոտասանից, յորմէ անկաւ Յուդա, սպասէին առաքեալքն եւ աշակերտք և Աստուածամայրն հանդերձ կանանիք 'ի վերնատան անդ, ըստ բանի Տեառն, զգենուլ զզօրութիւն 'ի բարձանց։ Եւ զկնի տասն աւուր վերանալոյ Փրկչին յերկինս, եղեւ յանկարծակի հնչիւն յերկնից իբրեւ սաստիկ հողմոյ, և ելից զտունն բովանդակ, յորում նստէին։ Էջ-ամենասուրբ Հոգին Աստուծոյ, և 'ի կերպարանս հրեզէն լեզուաց նստաւ 'ի վերոյ ամենեցուն որք ժողովեալ էին անդ, և խօսէին յայլ և այլ լեզուս, և ամենայն ազգք ժողովեալ 'ի տօնին՝ իմացեալ սքանչանային։ Եւ քարոզութեամբ Պետրոսի հաւատացին 'ի Քրիստոս արք 3000։ Այսպէս հեղմամբ Հոգւոյն Սրբոյ ա'ռ զառաջինն հաստատութիւն Եկեղեցի, եւ սեւեականութիւն վասն ամենայն ժամանակաց։ Մխիթարն հաւանութեամբ ընտրեցին Առաքեալքն զեօթն Սարկաւագունս 'ի սպաս սպասչաման այրեաց։

Ընդ աքանչելիս բժշկութեան կաղին մուրականի, եւ ընդ համարձակութիւն քարոզութեան Առաքելոցն 'ի Տաճարին, զայրանալ սկսան Փարիսեցիքն եւ Սադուկեցիք

վասն վարդապետութեան յարութեանն։ Ածան յատեան խորհրդով 71 արանց Պետրոս և Յովհաննէս, և պատուիրեալ արձակեցին չխօսիլ յանուն Յիսուսի։ Այլ իբրեւ տակաւ յորդէր քրիստոնէութիւնն քարոզութեամբ Առաքելոց, վիճաբանեցին Փարիսեցիք և Սադուկեցիք համածել առ հասարակ զեկեղեցին, որոյ սկիզբն քարկոծմամբ կատարեցաւ սուրբն Ստեփաննոս նախատարփաւագ՝ առաջին վկայ Աւետարանական օրինաց, որոյ տանջման կամակից էր և երիտասարդն Սաւուղ։ Թէպէտ և ցրուեցան հաւատացեալքն յերուսաղէմ բայ յԱռաքելոց, այլ տարածեցաւ Աւետարանն 'ի Հրէաստան, 'ի Սամարիա, յԱսորիս, 'ի Փիւնիկէ և 'ի Կիպրոս, ուր ընկալան զբանն կենաց։

Միաբանեալ Առաքելոցն ձեռնադրեցին զՅակորոս արդարն և զեղբայրն Տեառն՝ առաջին եպիսկոպոս Սիոնայ Երուսաղէմի (34)։ Յորմէ ակնածէին իսկ Հրէայքն վասն արդարութեան և զգօնութեան, որպէս գրէ և Եւսեբիոս վասն նորին։ «Այր՝ որ զառաջին ընկալաւ զեպիսկոպոսութիւնն 'ի Փրկչէն մերմէ եւ յԱռաքելոց անտի զեկեղեցւոյն Երուսաղէմի, այն որ էր եղբայր Քրիստոսի, որպէս ասացեալ է 'ի գիրս։ մինչեւ ցայսօր ժամանակի պահեն յարգելն եղբարք որ անդ են ըստ յաջորդութեան կարգի, և ցուցանեն յայտնապէս ամենայն մարդոյ, եթէ առաջինքն և եթէ որ մինչեւ ցայսօր ժամանակի թէ որպիսի պատուով ունին զարս սուրբս սիրելիս Աստուծոյ»։ Պ-ոմ. Եկեղ. Ի. 18։ Առ սովաւ եղև առաջին ժողովն Առաքելոց և երիցանց յերուսաղէմ վասն խնդրոյն Անտիոքացւոց, և սահմանեցին չդնել լուծ նորադարձ հրէից և հեթանոսաց պահել զօրէնս Մովսէսի և Թլփատիլ։ Այլ ազգ արարին թղթով ղգուշանալ 'ի պոռնկութենէ, 'ի ղոհելոյ կռոց, և հեղձուցեալ կենդանեաց և յարենէ, և զայս յանձնարարին Յուդայի և Շիղայի տանիլ յԱնտիոք ընդ Պօղոսի և ընդ Բառնաբայ։ (51)։ Այլ կերինթոս՝ հեղինակ մոլորութեանս ոչ դադարէր աշակերտովքն յուզելոյ զհնարճուածս 'ի քաղաքի անդ, և քարոզին զթլփատութիւն եւ զպահպանութիւն օրինացն Մովսէսի։

Զկնի նահատակութեան առաքելոյն Թադէոսի 'ի հայս,

աշակերտ նորին Մ. Եղիշէ դառնայ յերուսաղէմ, եւ ձեռնադրի եպիսկոպոս ի Յակոբայ Տեառն եղբօրէ, եւ դառնայ ի դաւառն Ուտի։ Մ-ԼԷ. Կ-ՂԵ. Հ-Ժ. Ա. 9։

Գոնեի և ի ձեռագիրս Թուղթ լինչ մակագրեալ յանուն սոյն այս Յակոբայ, ղորոյ զվատճէնն գնեմք առանձօր։

Թուղթ՝ ղոր առաքեաց Յակոբոս եպիսկոպոս Երուսաղէմի առ Կոգբատոս. զի ցուցցէ նմա թէ զինչ հրաման ետ Տիբեր կայսր վասն Հրէից, որ ի խաչ հանին ընդ Քրիստոս։

Յակոբոս եպիսկոպոս Երուսաղէմի, առ Կոգբատոս առնուն բարի եւ աշակերտ հաւատացեալ ի Տէր ողջոյն։ Լուայ ես եւ ուրախ եղէ թէ քանի փոյթ ունիս վասն քարոզութեան Աւետարանին Քրիստոսի. թէ սրտիւս խընդութեամբ ընդունիս զայնոսիկ՝ որք կան ի տառապութեան և ի ճշմարտութեան, եւ մաքառիս ընդդէմ Հրէից և հեթանոսաց, և ցուցանես խաչահանուացն ի դրոց վկայութիւն վասն տեառն մերոյ. եւ զոր օրինակ ի ժամանակի լքրեւ առնէր տէր մեր զնշանս եւ զքաջագործս, կային ընդդէմ նորա եւ ոչ հաւատացին, այնպէս եւ այս օրինակ ընդդէմ մեր հակառակութիւն ուրացողութեան իւրեանց։ Բայց այժմ զի յայտնի եղեւ նենգութիւն նոցա առաջի Պիղատոսի դատաւորի եւ խոստովան եղեն Աննա եւ Կայիաֆա եւ Բենիամին եւ Նաթանայէլ դվնասուրք ժողովրդեան իւրեանց, թէ որպէս ետուն կաշառս պահապանացն, որ պահէին զԵրեզման Տեառն մերոյ հանդերձ Սքիսոխտեսիս և Անատոլիս, զի թաղցեն զոր ինչ ասէին. նա և ինքեանք իսկ պահապանքն խոստովանեցան զայս թէ արդարեւ առին կաշառս զի մի՛ ասիցեն թէ յարեաւ Քրիստոս ի մեռելոց, և իրրեւ ի վերայ եհաս Պիղատոս ճշմարտութեամբ բանիցս այսոցիկ, հրաման ետ զի արգելցեն զդահիճան ի բանդ։

Եւ քանզի հաղարապետ էր Պիղատոս, կայսեր գրեաց և եցոյց նմա զամենայն զոր գործեցին Հրէայքն ի դատաստան ընդ Տէրն մեր, զի կասկածէր նա յոյժ յայնմ բանիզոր լուաւ ի նոցանէ. Ցիսուս այո՛ ասէն Թաղաւոր է Հրէից։ Եւ ոչ գիտէին Հրէայքն թէ զինչ հրաման ետուն

կայսր վասն նոցա։ Փոյթ լիցի քեզ այսուհետեւ եղբայր մեր, զի լուիցես և ցուցցես ինձ թէ զինչ հրաման տայ կայսր վասն այսորիկ, զի ահաւասիկ առ ձեզ է արքայ յիսուսիա, եւ զպատճէն Թղթոյն զոր առաքես առ մեզ, ուղղեացես եկեղեցւոջդ Եփեսոսի առ Յովհաննէս որդին Զերեթեայ, եւ եկեղեցւոջն Անտիոքայ առ Սիմէոն վիմի. եւ ես առաքեմ զպատճէն նորա յեկեղեցին Ալեքսանդրի առ Մարկոս աւետարանիչ։

Եւ Սողոս որ եղեւ մեր ընկեր և գործակից ի Թեսաղոնիկէ, եւ զայս գրեցի առ քեզ զի գիտասցեն և հեռաւորք զնենգութիւնս Հրէից, որ ոչ հաստատեցան։ Բայց Փիլիպպոս և Սեննեկա և Յաւատոս և Ղեւի և Ափրէ և Յուդայ, զպիրք անուանիք Հրէից հանդերձ այլովք ընկերօք իւրեանց, եկին դարձեալ առ իս և խոստովան եղեն ի Քրիստոս և ընկալան զմկրտութիւն, եւ ահա մաքառին ի դրոց մարգարէից ընդ որդիս ժողովրդեան իւրեանց. բայց Գամաղիէլ աւագ քահանային նոցա, ոչ ուրանալով ուրանայ ի Քրիստոսէ իրրեւ զորդիս ազգի իւրոյ յայտնապէս, եւ ոչ խոստովանելով խոստովանի այժմ իրրեւ զմեզ, և որք կամին չարաթօսել զմեզ յորդւոց ժողովրդեան իւրեանց, ոչ ընդունի զնոսա, այլ ի լռութեան և ի հանդարտութեան է, մանաւանդ զի ետես էթէ զինչ վերանալոյ Տեառն մերոյ առ Հայր իւր, որպէս թուեաւ աւետարանն նորա ընդ ամենայն տիեզերս իրրեւ զլոյս արեգական որ սփռեալէ ընդ ամենայն արարածս, և ահա երկրպագի յամենայն հեթանոսաց և փառաւորի յամենայն լեզուաց, և ի ձեռն խորհրդոյ Մարմնոյ և Արեան իւրոյ, զոր ետ մեզ եւ յանամէ զերկրպագուս իւր եւ ոչ թաղուզինոսա մինչեւ կատարի այս աշխարհ եւ երեւի այն աշխարհ, որոյ չիք կատարումն սկզբան նորա. զայս զոր դուք ինքնին գիտէս։ Ողջոյն տուր Նիկանովրայ և Պարմենայ և Ընեսիփորայ և եկեղեցեաց ամենեցուն որ այդր են եւ քահանային առաքինորդաց նոցա։ Ողջոյն առ յեկեղեցւոյս Երուսաղէմի որ աստ է, եւ սպասեմ եւ ակն ունիմ, զի գրեացես առաքեացես ինձ զպատճէն բանիցս այսոցիկ ի ձեռն Ափսդխաս։

Գրէ Տէրտուղիանոս առ Եւսեբեաւ՝ թէ Պիղատոս ծա-

նոյց Տիբերի կայսեր զխառաւար յարուխիւն Փրկչին մերոյ և զԱռաւաձաւխիւն նորին, նոյնպէս յայտնի երեւեցաւ 'ի նախընթաց թղթէն Յակոբայ, ասէին և ինքն Տիբեր վկայէ 'ի թղթին իւրում առ Արքար· ահաւասիկ ըզպատճէն թղթոյն Պիղատոսի զոր դնեմք 'ի չարս բանից։

Ինքնակալիդ Սեբաստիա փառաւորի և հզօրի Տիբերիա կայսեր, 'ի Պիղատոսէ դառաւորէ կողմանց Արեւելից Պաղեստինեայ և Փիւնիկեայ, արքայի խնդալ։

Հարկ եղեւ ինձ գրել առ մեծութիւնն քո զիրս զայս, որ անկաւ 'ի վերայ իմ 'ի դժնդակ պատահմանէս որում ականատես եղէ։ Քանզի Հրեայք՝ որք ժողովեալ էին յերուսաղէմ, մատնեցին ինձ զայր ոմն անուն Յիսուս, որոյ վասն աւետիս ունէին հարքն նոցա, եթէ առաքէ Աստուած զաւուրն իւր յերկնից, որ և թագաւոր կոչեսցի Իսրայէլի, զոր խոստացեալ էր Աստուածն երկնից 'ի ձեռն կուսի յերկիր առաքել, որ 'ի դառաւորութեանս իմում 'ի հրէաստանի բազում սքանչելիս արար· քանզի մի 'ի հերձուածոցն՝ զոր դնէին 'ի վերայ նորա, այն էր թէ զշաբաթս ոչ պահէ։ Այլ նա այսու լուծանէր, զանդամալոյծս առողջացուցանէր, զկոյրս լուսաւորէր, զկաղս դնացուցանէր, խլից լսել տայր և հաւերց խօսել։ Այլ և զայր մի մեռեալ չորեքօրեայ կոչեաց 'ի գերեզմանէն և յարոյց 'ի մեռելոց, զայսահարս որ 'ի գերեզմանս բնակէին զդաստացոյց, զդեւս հալածեաց, զդօսացեալս, զմիակողմանիս, և զկիսին տեառատես բժշկեաց, և այլ բազում նշանս գործեաց, զորս ոչ էր գործեալ մարդոյ կամ լուեալ յաշխարհի, զնա Անննա և կայիափա մատնեցին 'ի ձեռս իմ· իբրեւ ոչ կամեցայ խաչել զնա, բազում խռովութիւնս և աղաղակս յարուցին 'ի վերայ իմ և քննութիւն արարեալ ոչ ինչ վնաս մահու գտի 'ի նմա, բայց ոչ կարացի հաւանեցուցանել զնոսա· առեալ տարան զնա և խաչեցին, և խաւար կալաւ զամենայն տիեզերս 'ի միջօրէի՝ զի խաւարեցաւ արեգակն։ Եւ յորժամ Յիսուս խաչեցաւ՝ էր օրն Ուրբաթ և ժամն վեցերորդ· երկիր չարժեցաւ և վէմք պատառեցան, և մեռեալք 'ի գերեզմանացն յարեան, որպէս ինքեանք իսկ Հրէայքն վկայեցին· և 'ի խաչէն իջուցեալ թաղեցին զնա, և մատանեաւ իւրեանց կնքեցին զգերեզմանն, և եկեալ

խնդրեցին յինէն գունչակս, և ես ետու զինուորս պահապան գերեզմանին զոր ինքեանք կամէին։ Եւ զինուորքն եկեալ 'ի միաշաբաթու առաւօտուն այսպէս ասացին· յերեկոյի չաբաթուն յորում միաշաբաթին լուսանայր, թնդիւն եղեւ յերկնից և երկիրս պայծառացաւ լուսով եօթնապատիկ առաւել քան զարեգակն, և երեւեցան պայծառ լուսով անթիւ բազմութիւնք լուսակերպ արանց՝ որք աղաղակէին· Քրիստոս Յիսուս խաչեալն Աստուած մեր յարեաւ 'ի մեռելոց· պատուէր ետ լուսակերպ արանց երթալ պատմել աշակերտացն զի երթիցեն 'ի Գալիլեա և անդ տեսցեն զնա, և զայս ամենայն տեսեալ զինուորաց պատմեցին մեզ· և մեք ծանուցաք Ինքնակալութեանդ· ողջ լեր։

Իսկ Արքար արքայ յերկրորդ նամակին իւրում առ Տիբեր բողոք կալեալ զանիրաւութենէ Պիղատոսի՝ խնդրէ լուծանել զնա յիշխանութենէ և զայլ ոք առաքել 'ի տեղի նորա։ Ապա 'ի յայտնիլ անիրաւ դառաստանի նորին, կոչեցաւ 'ի Հռոմ տալ համար վասն գործոց իւրոց (35)· և դառապարտեցաւ յաքսորս, ուր յուսահատեալ 'ի դառն առաջապանաց եղեւ անձին դահիճ առնուլէր։ Ընկեցաւ 'ի պատուոն և կայլիափա, ընդ որ ուրախ եղեն Հրեայք։

Հերովդէս Ագրիպպաս յետ մահուան Տիբերի հնարիւք զերծաւ 'ի բանտէն և առեալ զթագաւորութիւնն Պաղեստինոյ՝ դարձաւ անդ, բանդառեաց զՀերովդէս չորրորդապետ երթալ 'ի Հռոմ կնաւ իւրով և ինքն յարոյց հալածանս և ձեռն արկ չարչարել զոմանս յեկեղեցւոյն, եւ սպան զՅակոբոս զեղբայրն Յովհաննու սրով· և զի առաւել հաճոյ Հրէիցն լինիցի, կալաւ զՊետրոս եւ կապեալ կրկին չղթայիւք եդ 'ի բանտի, ուստի աղօթիւք հաւատացելոց և 'ի ձեռն հրեշտակի Տեառն ազատեալ ապրեցաւ։ Այլ վասն առաքելոյն Յակոբայ, որ զկնի Ս· Ստեփաննոսի՝ նախ քան զամենայն առաքեալս նա էարք զբաժակ մարտիրոսութեան, պատմի 'ի Ճառ ընծիրս և Ծայսմաւուրս Հայոց, թէ գլխատեցաւ նա 'ի կեսարիա Պաղեստինացւոց, 'ի գիւղն Գաղուն, և հրեշտակ Տեառն առեալ զպատուական գլուխ նորին երեր յերուսաղէմ և եդ առաջի սուրբ Աստուածածնին, մինչդեռ նստեալ սգային 'ի միասին առաքեալքն Մարիամ, և տեառնեղբայրն Յակովբոս եւ

աւետարանիչն Յովհաննէս զմահն Յակոբայ · քանզի ազդեցաւ նորա, թէ սպան զնա Հերովդէս · իրրեւ տեսին զգլուխն Յակոբայ՝ արարին կոծ մեծ ի վերայ նորա եւ ապա ամփոփեցին ի պատշաճաւոր տեղւոջ ի կալուածի Յակոբայ արդարոյն, յորոյ վերայ չինեցաւ վանք հոյակապ և հռչակաւոր մեզ ազգիս Հայոց ի սկիզբն Դ · դարուն : Իսկ զպատուական մարմին երանելի առաքելոյն առեալ կիւնն Ապանիացի աշակերտեալ Յակոբայ՝ կապեաց ի սիւն և պահեաց ի քաղաքն Յոպպէ-այցւոց, մինչեւ հանդիպեսցի նաւաւ · այլ ալիք ծովուն առաջնորդութեամբ հրեշտակի տարեալ եհան զնա ի վիճակն իւր ի Սպանիա յոր քարոզեալ էր յառաջադոյն և յանձանօթս պաշտէին զնա իրրեւ անդրէմս աստուած , մինչեւ հասին առ նոսա Ս · Պօղոս և կիւնն հաւատացեալ : Թողցուք ի բաց զրանս Սպանիացի մնաւենադրաց , յորս երեւին չիմաստութիւնք ոչ սակաւ , և յառաջ բերեն նաեւ զրանս Ճառընտրի մերոյ Հայոց գտելոյ յերուսաղէմ, զոր յօրինեալ է ասեն Պատրիարքն Հայոց , որ անդ յամի 1045 :

Այլ Հերովդէս յաւուր միւմ մեծապայծառ զարդարեալ ի կեսարիա՝ նստէր ի գահոյս եւ լսէր հրեշտակացն Տիրացւոյ և Սիդոնացւոց , զորս ի նեղ իսկ արկեալ էր հաստանելով զպաշարս նոցա · եւ ի հրապարակախօս լինիլ մեծաւ ամբարտաւանութեամբ ձայն բարձեալ դոչէր ամբոխն թէ « Աստուծոյ բարբառ է եւ ոչ մարդոյ » , անդէն եհար զնա յանկարեւոյթս հրեշտակ Տեառն · քանզի չէտ փառս Աստուծոյ , հարաւ ի նմա որդն և մեռաւ յետ անհնարին լքանաց հինգ աւուրց յեօթներորդ ամի թագաւորութեան իւրոյ : Եւ առնոյր խաղաղութիւն եկեղեցի ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց : Զկեղծ պատիւն զոր մատուցանէին կեսարացիք Հերովդէ ի կենդանութեան նորին իրրեւ Աստուծոյ , այլ իրրեւ բարձաւ ի կենաց , ի բաց առեալ զպատրուակ խարէութեանն , հասարակաց ոճն ցնծութեան կատարէին , եթէ ոչ ընդդէմ եղանէր ցասումն կղզեաց կայսեր , անարգէին արդեօք զընտանիս նորա :

ԳԼՈՒԽ Դ .

Մահ Աբգարու · Կին նորա Հեղինէ Թագուհին Հայոց · Մահ և շիրիմ նորին : Նահատակութիւն Յակոբայ արդարոյն :

ԵՐՋԱՆԻԿՆ և առաջինն ի թագաւորս քրիստոնէից երանելին Աբգար , մկրտեցաւ ի Թադէոսէ առաքելոյ ամենայն տամբք իւրովք և բժշկեցաւ ի ցաւոցն , և պայծառացաւ ինքն և քաղաքն ողջոյն քրիստոնէական սուրբ հաւատով , և հաստատեցաւ անդ եկեղեցի Քրիստոսի · և զրեալ զանազան թուղթս յարեւմուտս և յարեւելս վասն Քրիստոսի Աստուածութեանն , վախճանեցաւ թագաւորեալ ամս 38 : Իսկ Անանէ որդի նորա թագաւորեալ յետ նորա երից ցառաջարս կաց , ետ սպանանել զՀայրապետն Ագդէ յաթոռ վարդապետութեան , եւ դադարեցոյց զքարոզութիւն Աւետարանին եւ անկեալ սիւն ի վերայ նորա բարձաւ ի կենաց : Եհաս Սանդրուկ , որ թագաւորէր ի Հայս , կոտորեալ ջնջեաց զնա Աբգարու : Եւ զգլխոյն Հեղինէ առաքեաց յետս ի Խառան ի քաղաք ծննդեան իւրոյ , թողեալ նմա զտիկնութիւն ամենայն Միջագետաց փոխանակ բարեացն , զորս միջնորդութեամբ նորա գտեալ էր յԱբգարէ : Այլ թագուհին Հեղինէ զարդարեալ քրիստոնէական սուրբ հաւատովք եւ ընտրհօք Ս · Հոգւոյն , ոչ հանդուրժեաց բնակիլ ի մէջ հեթանոսաց , զի առ աստուածպաշտութեանն ոչինչ համարէր զգուշս աշխարհիս և զվայելչութիւն տիկնութեան իւրոյ · չորս յերուսաղէմ յամի Տեառն իրր 42 , յաւուրս կղզեայ կայսեր , մինչ տիրէր սուլ սաստիկ յերուսաղէմ և ի սահմանս Հրէաստանի , ըստ մարգարէութեանն Ագաբոսի · Գործ · ԺԱ · 28 : Եւ առեալ զամենայն դանձս իւր՝ ետ բերել ցորեան առատ յԵգիպտոս և յայլ ուստեք , և առատապէս սփռիւ բաշխէր եւ կերակրէր զամենայն կարօտեալս , որք դիմէին առ նա , ոչինչ խորհելով զերկեայս և զհեթանոսս ի հաւատացելոց , որոյ օգնութիւն եհաս մեծ զօրավարն Խուրան , և հաւատարմութեամբ ծառայեաց մինչեւ ի մահ նորին : Գտանին ի ձեռագիրս ինչ բանք վասն Հեղինեայ թարգմանեալ

յԱսորի գրոց ՝ի քաղաքն Սիա յաւուրս Գրիգորի Մագիստրոսի և որդւոյ նորա Գրիգորի Վկայասիրի, ուր յետ այլոց բանից յարէ · « Եւ յետ յամին հինգերորդի ելանելոյ Իւրոյ յերուսաղէմ, իբրեւ լինէր առաւուօթիւն կերակրոյ, եւ վերանայր սոճ ՝ի Հրէաստանէ և ՝ի յերուսաղէմ, ինքն Հեղինէ տիկինն Արգարու ձեռն արկ և սկսաւ պարապել ՝ի շինուԹիւն մատրանացս : Նախ սկիզբն արար շինել մատուռն ի մեծամեծ քարամբք բրգաձեւ ՝ի վերայ չիրմին Քրիստոսի, եւ այլ փոքր մատուռ ինչ ՝ի լեառն Ձիթենեաց ՝ի վերայ Ս · Ոտնատեղւոյն Քրիստոսի : Ապա շրջապատեաց քարամբք զՍ · Այրն ծննդեանն Քրիստոսի, որ ՝ի Բեթղեհէմ քաղաքի, յորում է և մատուռն, ուր և եղաւ մանուկն Ցիսուս խանձարրապատ : Եւ հուսկ ուրեմն ետ յօրինել կամար մի ՝ի վերայ չիրմին Ցակոբայ մեծի Առաքելոյն որդւոյն Զերեթեայ, ուր սակս այց ելանէր առ Ս · Կոյն մայրն Ցիսուսի մերձ ՝ի վերնատունն Սիովն · · · · Եւ յետ յեօԹներորդումն ամի վախճանի անդ, և Թագի առաջի դրանն Երուսաղէմի, որ ՝ի հիւսիսակողմն քաղաքին, զկնի երկրորդ ամի Վերափոխման Ս · Կուսի մօրն Ցիսուսի, ՝ի Սեպտեմբեր լինն » : Ապոքսիրիսն Եղեսացւոյ · 6 · եւ յետոյ կանգնեցին ՝ի վերայ գերեզմանի նորա չիրիմ նշանաւոր եւ վսեմաւոր յոյժ, որպէս դրեն Եւսեբի և մերս Խորենացի · Հա · Բ · Գլ · 32 : Ականատես ՝ի հանապարհորդելն իւրում յԱղէքսանդրիա աշակերտակցովք իւրովք ՝ի Ճեմարան գիտութեան, որ և մնացին աւուրս ինչ յերուսաղէմ : Մեռաւ անդ և ղօրավարն Խուրան և Թաղեցաւ առ չիրմի նորին :

Իսկ յաղագս չիրմի երանելի տիկնոջս պատմէ Հ · Դուկաս Ինճիճեան ՝ի գիրս Հնախօսութեան · Հա · Բ · 299, զորոյ զբանս դիցուք աստանօր : « Շիրիմ կանգնել միայն վասն Հեղինէայ տիկնոջ Արգարու Թագաւորին՝ դառնէմք յիշատակել առ Խորենացւոյն, և այն յօտար երկրի · · · · : Բայց զտորագրութիւն այսր չիրմի առ օտար մատենագրի ուրուք գտանիմք · որ նա ինքն է Պաւսանիաս Ցոյն յԱրկատեան գիրս իւր, կամ Գիրք Ը · ուր նախ ասէ · « Եւ քանզի բազում ճանաչեմ չիրիմս զարմանալոյ արժանիս, զերկուս միայն յիշատակեցից յայսմ վայրի, զնին յԱղեկսանդրիա · իսկ միւսն ՝ի Հրէաստան » : Ցետ ասելոյ նորա յԱ-

ղեկսանդրիայ կանգնեալ չիրիմն վասն Մաւսոլիոսի Թագաւորին, այնչափ մեծագործ էր և վսեմազարդ, մինչև Հռոմայեցւոց զամենայն մեծագործ չիրիմս կոչել Մ——ի : Ապա զՀեղինեայն յիշէ, այլ սակաւուք ստորագրելով՝ ասէ այսպէս · « Բայց առ երթայեցիս ՝ի քաղաքին Սաղիմացւոց, զոր կայսրն Հռովմայեցւոց ՝ի հիմանց քանդեաց, գտանի Հեղինեայ տիկնոջ բնակչի Շէէմ հրաշակերտ, զի գուցէ ի դուռն է դործեալ ՝ի նմա մարմարոնեայ, որպէս են և այլ կողմանք չիրմին · այս դուռն ՝ի պայմանեալ աւուր տարւոյն և ՝ի ժամու գաղտնի իմն շարժմամբ մեքենայի բանի, ապա յետ սակաւուց վակի, զոր թէ յայլում ժամանակի դուռն դործեացես բանալ, յաւէտ խորտակել կարասցես քան թէ վակել » :

Ի նարդեան ժամանակիս Թէպէտ և յայտնի է տեղին՝ և յամենեցունց անդիտաբար կոչի գերեզմանք Թագաւորաց, այլ չնշմարեն այնպիսի ճարտարութեամբ և հրաշակերտ հետք չինուածոյ չերմի, զի դառնութիւնք ժամանակինյաւէր և յապականութիւն գարձուցեալ են զրուանդակ տեղին : Արդարեւ երեւէին ՝ի փլատակս նորին Թաղեալք ընդ հողով բեկորք մխալաղաղ քարեայ դրանց, խոյակք սեանց և այլոց իրաց, և ՝ի ճակատ արտաքին վիմափոր դահլճին մնացորդք մանրաքանդակ նկարուց, նկանակ հացի, ողկոյզ խաղողոյ, արմաւենի և պսակ : Իսկ ներքին կուռածոյ այրն բաժանեալ ՝ի խորչս և ՝ի սենեակս, և յիւրաքանչիւրումն տեղի հանգուցանելոյ զդիակն հանդերձ աղեղնաձեւ կամարաւ : Եւ ՝ի ժամանակի մերում Եւրոպացի Պ · Սալըի, այրն գիտնաւոր եդիտ զչերիմն միով Թագուհւոյ ամբողջ նորին ոսկերովք : Ապա յամի 1875 զտեղին զայն գնեցին ամբողջ Գաղիացիք · և ՝ի մաքրելն գտին զչրամբարս, և զհին յատակս յարտաքին գաւԹի, և ՝ի ներքս զմի տապան ամբողջ ոսկերովք, զոր բարձեալ առաքեցին ՝ի Փարիզ և է այժմ ՝ի ձեռս նոցա :

Իսկ զպալատն Թագուհւոյն Հայոց Հեղինեայ ցուցանէ Ցովսեպոս Երթայեցի ՝ի գիրս պատերազմացն Հրէից՝ լինել յայնժամ ՝ի մէջ քաղաքին Երուսաղէմի, յորում տեղւոջ Երեւի այժմ վսեմաւոր շինուածք ՝ի ձեռս Արաբացւոց, և կոչի ԹէէԷ, և ըստ աղբյուրին աւանդութեան կան մնան

տակաւին անդ 3 մեծամեծ խալխինքն ի նչան առատասիրտ ղԹուԹեան նորին։

Այլ վասն Յակորայ առաքելոյն եղբօր Տեառն, գրէ Յովսեպոս երրայեցի այսպէս. «Հրէայք իրրեւ դիտացին եԹէ ի դերեւ ելին նենդաւոր խորհուրդք իւրեանց վասն Պողոսի, դարձան ի վերայ Յակորայ արդարոյն»։ Եւ Թէ, «Անանոս քահանայապետ Սադուկեցի դտեալ պարապ յառաջ քան զգալոստա Աղրիննեայ դատաւորի յայնորդին Փեստոսի, առեան կարգեալ ժողովրդեանն ամբաստան եղեւ զՅակորայ, և մատնեաց զնա ի դատաստան մահու (62)։ Բայց Կղեմէնտոս և Հեգեսիպպոս առ Եւսեբեայ, որոց բանիւ համաձայն են Յայսմաւուրք, Յաղընկերք և Վարք Սրբոց, այսպիսի օրինակաւ պատմեն զնահատակութիւն արդարոյն։ Կալեալ զպրաց եւ փարիսեցւոց զՅակորոս, ըստ խորատու քահանայապետին, ասեն ցնա՝ աղաչեմք զքեզ տէր, եԼ կաց ի վերայ աշտարակի տաճարին զի եղիցիս երեւելի ի վերուստ և եղիցին բանք քո լսելի ամենայն ժողովրդեանդ. զի վասն զատկին եկեալ էին ամենայն տոհմքն Իսրայէլի, և հեԹանոսք ընդ նոսա։ Հանին կացուցին զնա ի վերայ աշտարակի տաճարին աղաղակեցին և ասեն ցնա, Ո՛վ արդար, ասա՛ մեզ, ո՞ր դուռն է խաչեցելոյն Յիսուսի։ Պատասխանի էառ ի ձայն բարձր բարբառոյ եւ ասէ. Զի՞ հարցանէք դուք զիս վասն Որդւոյ մարդոյ, նա աւանիկ նստի յերկինս ընդ աջմէ զօրութեան մեծի, եւ հանդերձեալ է գալ ընդ ամպս երկնից։ Բազումք ի լսողաց ասէին օրհնութիւն Որդւոյ ԴաւԹի։ Իսկ դպիրք և փարիսեցիք ասէին՝ չարիս գործեցաք, զի առաք տալ Յակոբայ վասն Յիսուսի զայսպիսի վկայութիւնս։ Ելին այնուհետեւ և արկին զնա ի վերուստ ի վայր, և սկսան քարկոծել. եւ նորա ծունր եդեալ աղօԹէր. Տէր, Թող դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն. և մի ումն ի նոցանէ էառ զտափանն Թափչի և եհար զգլուխ արդարոյն. և այնպէս վկայութեամբ կատարեցաւ երանելին Յակոբոս (63). կացեալ յեպիսկոպոսութեան ամս իրրեւ 30։ Սա ի կենդանութեան իւրում գրեաց զԹուղԹն ԿաԹուղիկեայց ի չորհաւք Հոգւոյն Սրբոյ։

Այլ վասն դերեզմանի և պատուական նշխարաց արդարոյն

Յակոբայ, բազում բանք են առ մատենագիրս, զի Կղեմէնդոս եւ Հեգեսիպպոս առ Եւսեբեայ, ասեն Թէ՝ Թաղեցին զնա ի տեղւոջն առ կողմն տաճարին, և մինչեւ ցայսօր ժամանակի չիրիմ նորա կայ անդ։ Եւ Թէ Թաղեցաւ նա ուր կատարեցաւ մերձ ի տաճարն, և անդ դոյր յիշատակ դերեզմանի նորա նաեւ յետ աւերածոյ տաճարին։ Իսկ ի վերս Սարգիս չնորհալի յաւարտ մեկնութեան Թղթոյ արդարոյն ասէ. յորում չերմի Թագաւորն եղաւ, մօտ ի տեղին յայն և սպասաւորն Թաղեցաւ։ Յաւելուն և այլք Թէ՝ նա ինքն Յակոբ չինեալ էր իւր դերեզման ի լեառն Զիթենեաց, և անդ ամիսիւեալ էր զսակերս սրբոյն Զաքարիայ հօրն Յովհաննու Մկրտչի, և Ս. Սիմէոնի Ծերունւոյն. և Թէ ընդ նոսին եդան զկնի և ոսկերք իւր, և Թէ դոյ յիշատակութիւն Յայսմաւուրս Արաբացւոց և Եգիպտացւոց մօն փոխադրութեան մարմնոյ սրբոցս ի սկզբան Դեկտեմբեր ամսոյ։ Բեբէ և Լեւոն Ալլատիոս ի Պատմութեանց Երուսաղէմի. Թէ ոչ կարի հեռի է ի ձորոյն Յովսափաթու վանք սրբոյն Յակոբայ Աստուածեղբօր բնակեալ ի Հայոց, եւ այլ ոմն Թէ դերեզման նորուն Յակոբայ տեառնեղբօր, էր առ ժամանակօք խաչակիր զօրաց ուխտատեղի ի վերայ ճանապարհին, որ տանէր ի ձորն Յովսափաթու և ի դերեզման Աստուածամօր կուսին. բայց որպէս դերեզման տիրամօրն էր Թափուր, նոյնպէս եւ դերեզման Յակոբայ համարեալ էր իբր դատարկեալ, քանզի ասի Թէ, Կայսրն Յուստինոս Թրակացի և Թագուհին Սոփիա փոխադրեալ էին յերուսաղէմ ի Կոստանդնուպոլիս զնչխարս Յակոբայ, Զաքարիայ և Սիմէոնի, եւ եդեալ ի տաճարն կանգնեալ յինքեանց յանուն նորին Տեառն եղբօր։ Իսկ ազգային աւանդութեամբ զօր ունիմք մինչեւ ցայսօր, զտեղի նահատակութեան արդարոյն Յակոբայ ցուցանեն ի ձորն Յովսափաթու մերձ յարձանն Աբիսողոմայ ի ներքոյ կամրջի, որոյ յարեւելեան կողմն է ջրհորն մեծ, և տեղի դերեզմանի նորին ի հարաւ կոյս արձանին Աբիսողոմայ փորեալ ի ժայռին, որոյ պատուհանքն երեւին ցսրդ, և ի վերայ սորա կառուցեալ էր վանք յանուն սրբոյն Յակոբայ բնակեալ ի միաբանացն Հայոց, որպէս գրեցաք, և ի միջոյ եկեղեցւոյն աստիճանաւ իջանէր ի դերեզման սրբոյն։ Դոյ զայս

մանէ յիշատակութիւն և՛ի գիրս վանօրէիցն Հայոց այսպէս. «Սահառունեաց վանք՝ ի կողմն Սելովամայ, զոր Թոքո վանք կոչեն, որ է Տեառնեղբօրն զոր վէմն ընկալաւ, այսինքն՝ ի վիմի Թաղեցաւ կամ քարկոծեցաւ։ Սակայն յետ աւերման սոյն վանացս զպատուական նշխարս Ս. Յակոբայ ամիսոփեալ են՝ ի տաճարի մեծի առաքելոյն Յակոբայ՝ ի ներքոյ Աւագ Սեղանի, որպէս ունիմք հաստատուն աւանդութեամբ՝ ի նախնեաց անտի։

ԳԼՈՒԽ Դ.

Նշանք ժամանակի։ Պատահարութիւն Հրէից։ Պաշտպանն Երուսաղէմի։ Առումն և հիմնայատակ քանդումն նորին՝ ի Տիտոսէ հանգերձ Տաճարաւն։ Կատարումն Հրէից և գերութիւն նոցա։

Ասացուիս կարճ՝ ի կարճոյ եւ վասն քաղաքական անցիցն Երուսաղէմի եւ դատաստանացն Աստուծոյ, զոր Փրկիչն դուշակեաց յառաջագոյն, եւ արտասուօք պատմեաց Աշակերտացն յաւուր մտանելոյ իւրոյ յերուսաղէմ. և առաւել մանր նկարեաց՝ ի ցուցանել նոցա զչինուածս Տաճարին. զի այն ամենայն ելն՝ ի կատարումն յետ 37 ամաց։

Այլ նախ քան զպատերազմն իրրեւ՝ ի յայտնութենէ հրաման եղեւ եկեղեցւոյն Երուսաղէմի եւ առաքինեացն ելանել՝ ի քաղաքէ անտի և ապաստանել՝ ի Պելլա քաղաքի յայնկոյս Յորդանանու։ Զի եկեղեցն հասցեն ասէ Եւսեբի դատաստանք վրիժուցն Աստուծոյ՝ ի վերայ քաղաքի Թագաւորութեանն Հրէից եւ՝ ի վերայ ամենայն երկրին Հրէաստանի. զի համարձակեցան՝ ի Քրիստոս և յԱռաքեալս նորա, և ջնջեսցէ զազգն ամբարիշտ և զտհին անուղղայ՝ ի տեղւոջէն յայնմանէ։ Բայց թէ ո՛րպիսի չարիք անցին ընդ ամենայն ազգն եւ չարաչար տանջանօք տանջեցան, և թէ քանի՛ բիւրք՝ ի սով և՛ ի ծարաւ և՛ ի տառապանս ազգի ազգի մաշեցան, և գերեցան ամենայն քաղաքք Հրէաստանի եւ վաճառակուր եղեն, զայս ամենայն պատմէ

ընդարձակագոյն Յովսեպոս Երիսայեցի՝ ՛ի Գիրս յաղագս պատերազմացն Հրէից։

Խաժամուժ ամբոխն երիսայական առաւել մտադիւր անսայր ստութեանց խաբեբային և աւազակացն այնոցիկ, որք զիաղաղութիւն ասէին քան ահաւոր նշանաց եւ արհաւրաց երեւելոց, որ զաւերումն երուսաղէմի եւ զսատակումն ժողովրդոց դուշակէին։

Նախ երեւեցաւ յերկինս աստղ մի՝ ի ձեւ նիզակի եւ կայր՝ ի վերայ երուսաղէմի ամմի ողջոյն։ Եւ՝ ի տօնի բազարջակերացն յիններորդ ժամու գիշերոյն հատան փայլատակունք՝ ի վերայ սեղանոյն և Տաճարին, ուր խառնեալ էին ժողովուրդք բազումք, և եղեւ լուսաւորութիւն իրրեւ կէս ժամ։ Դարձեալ՝ ի նոյն տօնի երինջ մի, զոր ածեալ էին՝ ի զոհ, երկնեաց եւ ծնաւ գառն՝ ի Տաճարին։ Արեւելեան ներքին դուռն Տաճարին պղնձազոյլ եւ յոյժ ծանր՝ ի մէջ գիշերի ինքնին բացաւ, զոր լուեալ իշխանաց Տաճարին՝ ի պահապանաց, եկեալ փակեցին։ Եւ զկնի տօնին նախ քան զմտանել արեգական՝ երեւեցան յերկինս՝ ի վերայ ամենայն գաւառին կառք և զօրք սպառազինեալք, որք յանկարծ պատեցին զքաղաքն։ Եւ՝ ի Պենտեկոստեական տօնին մինչ քահանայքն՝ ի գիշերի կային՝ ի սպաս պաշտաման Տաճարին, լսելի լինէր շարժումն և հնչումն, և ապա ձայն բարբառոյ, ՚ընդ՚ առաջ, ՚ընդ՚։ Յետոյ ոմն անուն ձայն բարբառոյ, ելանեմք՝ ի տաճարին՝ ի տօնի Տաղավարահարաց, աղաղակէր և ասէր. Ձայն յարեւելից, ձայն յարեւմտից, ձայն՝ ի չորից հողմոց, ձայն՝ ի վերայ Երուսաղէմ և Տաճարիս, ձայն՝ ի վերայ փեսայից և հարսանց, ձայն՝ ի վերայ ամենայն ժողովրդեանս այսորիկ։ Թէպէտ կալան զնա խոշտանգեցին եւ տանջեցին, բայց նա ոչ լուէր և ոչ դադարէր՝ ի բանիցն։ Եւ՝ ի քերել զմարմինս նորա մինչեւ յոսկերս, նա ոգւոյ հանեալ ասէր. վա՛յ վա՛յ Երուսաղէմ, եւ իրրեւ եհարց զնա դատաւորն Ալբինոս, թէ ո՛վ, կամ ո՛ւստի է, և վասն է՞ր ձայն բարբառի. նա ոչ ինչ տուեալ պատասխանի կոծէր զքաղաքն զցայգ եւ զցերեկ մինչեւ յամս 7 և ամիս 5։ Եւ՝ ի պաշարման անդ քաղաքին, մինչ չէջերը՝ ի վերայ պարսպին եւ ասէր. վա՛յ վա՛յ տաճարին եւ Տէ՛ր, եւ իրրեւ վերջին յասել վա՛յ ինձ, ձգեալ քար

մի 'ի քարընկէց մեքենայիցն սպան դնա : Ամբարձաւ Գայիոս 'ի դահ կայսերութեան Հռովմայեցւոց , զանձն առաւուածացոյց , եւ առաքեաց զպատկեր իւր յերուսաղէմ դնել 'ի Տաճարին (40) : Իսկ Հրէայք , որ սաստիկ տեսլութեամբ էին ընդ Հռովմայեցիս , և ամբարտաւանելով իմն պարծէին յաղգն և 'ի Տաճարն իւրեանց , յանձն առին առհասարակ մեռանիլ , քան տեսանել զանարգանս օրինաց : Մխատէր ըմբոստութիւն Հրէից ընդդէմ հրամանի կայսեր , այլ կանխահաս մահ նորին զերծոյց զնոսա 'ի մօտալուտ վտանգէ : Եկաց թագաւոր կղզիոս , չնորհեաց Ագրիպպայ գթագաւորութիւնն Հրէաստանի , զոր հայրենեաց ունէր : Հասաք տէրութեանն յորդեաց առաւել քան զկարծիս իւր , և այնչափ մեծածախ հիմնարկեաց զպարիսպն երուսաղէմի , զոր եթէ աւարտեալ էր , ընդունայն լինէր պաշարումն Հռովմայեցւոց եւ մարտնչիլ ընդդէմ երուսաղէմի , այլ նախ քան զկատարումն գործոյն մեռաւ 'ի Կեսարիա Պաղեստինացւոց :

Ապա եկին իրրեւ դաւառապետք մի զինի միոյ Փեստոս , Ադէքսանդրոս և Կամանոս : Սա զումարեաց զզօրս 'ի կամարակապն Տաճարին սակս բառնալոյ զխռովութիւնն 'ի մէջ պահապան զօրաց և ժողովրդոց · այլ 'ի խուճապել և 'ի տագնապել Հրէից 'ի զինուորաց սուսերամերկ դիմելոց , կոխեցան 'ի միմեանց 'ի մուտս դրան 'ի խառն անդ , եւ սատակեցան արք իրրեւ 10,000 , և ոտնք նոցա դարձան 'ի սուգ տրտմութեան :

Ցետ սորա առաքեցաւ Փելիքս , որ առաքեաց զնեղխազար աւազակապետն կապանօք 'ի Հռոմ և զընկերս նորա 'ի խաչ հան · ցրուեաց զխումբս աւազակաց , որք կոչէին Սիկարեանս : Հալածական արար և զայրն Եգիպտացի , որ մարգարէ զինքն անուանէր , եւ զհետեւողս նորա իրրեւ արք 3 բիւրք : Եւ յետ սոցայսոսիկ այլ գունդք աւազակաց , որք սպանութեամբ և աւարառութեամբ սպառնային հնազանդելոցն Հռոմայեցւոց (55) : Ապա առաքեցաւ 'ի Ներոնէ կայսերէ Փեստոս , որ խաղաղացոյց զերկիրն : Ցետ Ալբինոսի յաջորդեաց Գեսսիոս Փլորոս , այր ժանտ և ընչաքաղց , որ անցոյց զանցոյց զառաջնովքն ժլատութեամբ և անգթութեամբ , պաշտպան էր աւազակաց՝ առնուլ բը-

ժիշկն յաւարէ նոցա , սաստկացոյց զհարստահարութիւնն ժողովրդեան , զի ապստամբութեամբ նոցա ինքն արդարասցի , և ահաս իսկ որում ցանկայն · «Զմեծամեծ չարիսն , զոր յուղէր Փլորոս , զարժանիկ պատճառս չդատանեմ» ասէ Յովսեպոս : Թէպէտ 'ի դալ Կեստիոսի դատաւորին Ասորւոց յերուսաղէմ՝ դիմեցին առ նա Հրէայք արք իրրեւ 300 բիւրք և աղաչէին զնա 'ի բաց վանել զՓլորոս զապականիչ գաւառին , այլ չահեցան և ոչ ինչ · զի նա յորդորեաց զնոսա հանդարտիլ 'ի խաղաղութիւն , և անդ գնաց : Բայց Փլորոսի ոչ ինչ էր փոյթ զմարտանութեանց նոցա · Թագաւորն Ագրիպպաս խառնամտութիւն խառնամեանս թէ ծագր առնէր զազգակից խառնամտութիւն իրրեւ մոլեգնելոց :

Եղիազար որդի քահանայապետին Անանիա իչխան Տաճարին , բարձ զաւինայն պատարագս վասն օտարաց (66) : ընդ որս բարձաւ և պատարագն վասն կայսեր · յարձակեցաւ ամբոխ ինչ 'ի վերայ դղեկին Մասադայ առ Մեռեալ ծովուն , և կոտորեաց զամրականսն Հռովմայեցիս , և այսպէս եղեւ սկիզբն պատերազմին ապստամբութեան : Խաղաղասէրքն աղաչէին զՓլորոս առնուլ զառաջս խռովութեանն , բայց նա չէտ ինչ նոցա պատասխանի · 3000 հեծեալքն՝ զոր թագաւորն առաքեաց , ոչ կարացին լինել դիմակալ ապստամբացն , որ երթային և ամէին , եւ անդադար յարձակէին 'ի վերայ արքունական դղեկին Երուսաղէմի , մինչեւ արկանել զՀռովմայեցիսն յերեսին աչառական չինելոյս 'ի հերովդէէ , եւ զօրացն Ագրիպպայ չնորհեցին երթալ 'ի բաց : Իրրեւ անձնատուր եղեն նոցա Հռովմայեցիք , կոտորեցին զնոսա յաւուր չաբաթու հակառակ խոստմանն իւրեանց :

Բարձաւ այնուհետեւ ամենայն յոյս խաղաղութեամբ զերան վճարելոյ : Կեստիոս Գաղղոս կառավար Ասորւոց 25000 արամբ խաղայր 'ի Հրէաստան , զմանապարհսդն զգիւղս և զքաղաքս հրձիգ առնէր , և որ ոք անկանէր 'ի բուռն կոտորէր : Ցարկանել զբանակ իւր հանդէպ երուսաղէմի , Հրէայք յարձակեցան մոլեգին 'ի վերայ նոցա , եւ կոտորեցին աւելի քան զ500 այր : Այլ Կեստիոս եմուտ 'ի քաղաքն ստորին , եւ հարկանէր զքաղաքն վերին զաւուրս հինգ , եւ 'ի վեցերորդումն զՏաճարն իսկ գլխովին , եւ

առնէր իսկ արդեօք դիւրաւ վախճան պատերազմին, թէ տեսէր ի պաշարմանն. մանաւանդ զի երկպառակեալ եւ վշտաբեալ իմն էին խռովիչքն։ Այլ յանկարծ եթարձ նա զպաշարումն, եւ դարձ նորա նման իմն էր փախստեան. եւ խռովչացն միաբանգամ քաջալերեալ եւ զհետ մտեալ հալածէին զնա, մինչեւ դիւերային սպրդէր զօրավարն յետ անկանելոյ ի բանակէ նորա 5300 արանց, 980 երիվարաց եւ մեքենայից։ Ասպա յայտնի եղեւ թէ տեսական է պատերազմն, յայն սակս բազումք յերեւելեաց եւ ի մտացեացն Հրէից մեկնեցան ի քաղաքէն, իբր ի նաւակէ որ մերձ է չընկղմիլ, ընդ որս եւ քրիստոնեայք որպէս ասացաք. եւ մնացեալքն ի Հրէից պատրաստէին ի պատերազմ։ Վխլագրին Ծովսէպոսի յանձն եղեւ Գալիլեա, եղիազարու Եդովմի, և այլ ումն Ծովսեպոս և Անանոս քահանայապետ՝ կացին հրամանատարք յերուսաղէմ։

Հրէայք երկիցս յարձակեցան յԱկաղոն և մերժեցան յետս կորուսեալ զաթս 20.000։ Վէսպասիանոս զօրավար Ժողովէր գունդ հարուստ յԱսորիա, եւ սկիզբն 67 ամին հասանէր առաջի Ծողոպատայ ի Գալիլեա 60,000 արամբ, և Տիտոս որդի նորա խառնեցաւ ի նա։ Աւուրս 47 դիմակալ եղեւ պաշարման քաղաքին Ծովսեպոս մեծաւ քաջութեամբ. բայց առաւ յարձակմամբ եւ ապականեցաւ հրով և սրով։ Ընդ գերեալսն էր և Ծովսեպոս՝ զոր կամէր զօրավարն առաքել առ Կայսր, բայց իրրեւ պատմեաց նմա Ծովսեպոս թէ հասանիցէ յաթոռ կայսրութեան, պահեաց զնա առ իւր սիրով։ Առան և այլ քաղաքք Գալիլեացւոց մեծաւ աշխատութեամբ և արիւնհեղութեամբ, եւ մինչեւ ցկատարած ամին գրաւեցաւ ամենայն երկիրն յայնկոյս Ցորդանանու։

Ընդ այն ժամանակս յերուսաղէմ կողմն Նախանձայուզաց բռնացեալ էր ի վերայ այլոց կողմանց, քանզի երկպառակեալ էին։ Նախանձայուղքն բարբանօք որպէս թէ զԱստուծոյ փառն խնդրեն, չկամէին ընդ ուրուք իշխանութեամբ մնանել. այլ զամենայն իշխանութիւն օտար մերժել յանձանց։ Սրբա նախ աւարառութեամբ և սպանութեամբ մոլեդնեին ի վերայ հակառակորդացն ի մօտաւոր վայրսն երուսաղէմի, եւ յետ այնորիկ առաջնորդու-

թեամբ եղիազարու ուրումն մտին յերուսաղէմ, գրաւեցին զՏաճարն և անտի յարձակէին առեալ այսր և անդր (68)։

Անանոս որ երբեմն քահանայապետն էր, հաւանեցոյց զժողովուրդն մերժել զնոսա զինուք. և յետ սաստիկ կռուոյ մերժեալ վակեցան իսկ ի ներքին կողմանս Տաճարին։ Այլ Ծովհաննէս, որ ի Գիսկաղայ Դղեկէ Գալիլեայ, սպրեալ եկեալ էր ամբոխիւ յերուսաղէմ, ննդգութեամբ կղզեաւորէր որպէս թէ կամիցի երթալ խօսիլ ընդ նոսա անտալ Անանոսի, բայց արդեամբք խրատ ետ նոցա պնդել կալ հաստատուն, և զեղոմայեցիս կոչել ի Թիկունս։ Եկին վաղվաղակի եղոմայեցիքն 20,000 արամբ, չեթող զնոսա Անանոս մտանել ի քաղաքն. բայց ի մրրկայոյզ գիշերի միւս Նախանձայուղքն գաղտ բացին նոցա դուռն։ Այնուհետեւ միաբանեալ սոցա ընդ նոսա զարարին կոտորած անհնարին ի մէջ հակառակորդաց իւրեանց, և անկան սրով 12.000 արք երեւելիք, յորս և Անանոս, մինչեւ գժամիլ եղոմայեցւոց ընդ այն և դառնալ յետս։

Նախանձայուղքն յետ ջնջելոյ զարան երեւելիս՝ սկսան մոլեգնիլ ի վերայ անաւադացն. զմեծաւորսն քան զամենեսին արժանի պատժոյ համարէին։ Բազումք ի Հրէից կենաց իւրեանց իսկ վտանգաւ անկան անձնատուր ի կեսարիա ապաստանիլ ի Վեսպասիանոս, որ մնայր անդ. զի երկպառակութիւն Հրէից և առաջնորդաց նոցա դիւրացուցէ նմա զյաղթութիւնն։ Քանզի էր խորհուրդն, քանզի Ծովհաննէս զյաղթութիւնն։ Քանզի էր խորհուրդն, քանզի Ծովհաննէս զԳիսկաղացի չկամէր զայլ ոք հրամանատար առ իւր. եւ այնպէս Նախանձայուղք բաժանեալ յերկուս և անդադար մարտ պատերազմ էր նոցա ընդ միմեանս, ի նմին ժամանակի կազմեցաւ գունդ արտաքոյ քաղաքին ասպատակաւորաց եւ աւազակաց եւ առաջնորդ նոցա Սիմոն ումն անուն, որ խոստմամբ իւրով ստուարացոյց զգունդն իրրեւ 20,000 արանց։ Ընդ Սիմոնեանս միաբանեցին և յեղոմայեցւոց 25,000 այր, և միաբան պաշարեցին զերուսաղէմ։ Յայնժամ յարեան ի քաղաքին հակառակ բռնաւորութեանն Ծովհաննու, և նա ամրացաւ ի բերդն Տաճարին. բայց երկընչէին թէ խնդրեսցէ նա զքէն վրիժուց. ընկալան զՍիմոն ի ներքս, զի պաշտպանեսցէ նոցա յերեսաց Ծովհաննու։ Եւ այսպէս յաւելոյ ի քաղաքին միւս եւս բռնաւոր

յաճախել դպրեւս բնակչաց։ Իսկ Վեսպասիանոս առաքեալ
չորեր յաչխարհն Եդոմայեցւոց (68)։ Եւ կացուցանէր զորան
յամուրս եւ զառնայր ՚ի Կեսարիա։ Այն ինչ կամէր ամե-
նայն զօրութեամբ խաղալ ՚ի վերայ Երուսաղէմ, եկաս
զրոց ՓԷ Ներոն ընկեցաւ, եւ գալբա անդ սպանան. յայն
սակս յամեցոյց զարշաւանն՝ տեսանել զկատարած իրացն։
Սպանաւ եւ Գալբա եւ անց Ոթոն (69)։ Ձեւ մահուն Ոթո-
նի ինքն Վեսպասիանոս ընտրեցաւ կայսր յԱսորիս յարեւե-
լեան Էկզեոնացն, եւ թողեալ զզօրն ՚ի ձեռն որդւոյ իւրոյ
Տիտոսի՝ մեկնեցաւ ՚ի Հռոմ։

Ընդ այն ժամանակս յերուսաղէմ եղեալ ոմն ՚ի քա-
հանայական տոհմէ՝ կացեալ գլխաւոր դնդի խմբ 2400
Նախանձայուզացն, զրաւեալ կարաւ դներքին սրահ քա-
հանայիցն ՚ի Տաճարին եւ զՅովհաննէս Գիսկաղացի արգել
՚ի սրահի ժողովրդեանն։ Եւ սա 6000 արամբք անդէն լի-
նէր նմա դիմակալ, և առեալ յարձակէր ՚ի վերայ քաղաք-
քին, զոր գրաւեալ ունէր Սիմոն 1000 Նախանձայուզօքն
և 5000 Եդոմայեցւովք։ Յովհաննէս Գիսկաղացի այրէր զա-
մենայն որ ինչ ՚ի բուռն դայր, որով և բազում մթերք
ցորենոյ, որ բաւական էին ամաց բազմաց՝ այրեցան։ Մինչ-
դեռ յայսոսիսի վիշտս էր Երուսաղէմ ՚ի ժամանակին, Տի-
տոս զայր մերձենայր ՚ի պարիսպն (70)։ Զորք Հռոմայեցի
ընդ նմանք էին նորա իբրեւ 7000 այրուձի և 5000 ընտիր
ընտիր զօրաց, և բազմաւիւռ զունդ օդնական յԱգրիպպայ
եւ յայլոց իշխանացն Ասիացւոց, որովք սկսաւ պաշարել
զքաղաքն երուսաղէմացւոց, որ չինեալ էր ՚ի վերայ Սկրայ
բլրոյն, փակեալ ուրեք ուրեք անդնդովք, ուրեք ուրեք
երկբղին պատուարաւ, և բազում ամուր ամուր աշտարա-
կօք՝ յորոց երեւելի էին երեքինն՝ Հիպպիկոս, Փասայել,
և Մարիամնէ։ Տաճարն ՚ի Մորիա բլրին էր միւս եւս ա-
ռանձին գրեթէ անառիկ լինն բերդ։ Իսկ ամենայն ժողովր-
դեանն՝ որ ՚ի ինչ բազում էր յոյժ, առաւել եւս ատե-
բացեալ վասն մեռանելոց Պասեքա տօնին, որպիսի բազմու-
թիւն չէր լեալ յաւուրսն երբեք։ Տեսեալ տոհմակից հա-
կառակորդաց զզօրն Հռովմայեցի, սթափեցան և միաբա-
նեցին ընդդէմ հասանելոյն Թշնամւոյն։ Սակայն չէր տե-
ւական խաղաղութիւնն։ Յովհաննէս ՚ի ժամանակի տօնին,

քանզի բացեալ էր Եղեալար զմուտս Տաճարին, ա՛ռ զբը-
րահ քահանայիցն մեծաւ կոտորածիւ. մնացորդք գնդին
Եղիազարու և ինքն իսկ եղինազար հնազանդեցան Յովհան-
նու, և էին այնուհետեւ երկու և ևթ կողմանք (այսինքն
Յովհաննու և Սիմոնին), որ յարձակէին միւսանդամ ՚ի մի-
մեանս յորժամ լինէր հանդիստ յարտաքնոցն։ Տիտոս յետ
երկիցս առաքելոյ առ նոսա պատգամաւորութիւն հաշ-
տութեան եւ մերժելոյ ՚ի նոցանէ, ակամս սաստկագոյնս
բազմել զբազաքն քարընկէց մեքենայիւք։ առաւս 15
վանտակեալ՝ մտին Հռոմայեցիք յարտաքին պարիսպն։
Ձեւ Տաւուրց անկան պարիսպն երկրորդ և կացին մնացին
ընդ Հռովմայեցիք՝ ՚ի բաց մղեալ զյարձակումն Սիմոնի և
զգնդի նորա։

Տիտոս իբրեւ պատրաստ էր յարձակել ՚ի վերայ երրորդ
պարսպին, յղէր նոցա վերջանց սղոսկից զՅովսէպոս խոս-
տանալ նոցա միւսանդամ թողութիւն, բայց նոքա խոցե-
ային զնա նետիւ։ Տիտոս վասն կարեկցոյ անյաջողութեան զպա-
շարն՝ եւս առեալ որմ զքաղաքաւանն փոխանակ խրամոցն զոր
խորացուցեալ էին, մինչեւ չկարել ուժգնք մտանել կամ
ելանել։ Այնուհետեւ սաստկացաւ անհնարին սովն՝ մինչ
ելանել։ Այնուհետեւ սաստկացաւ անհնարին սովն՝ մինչ
եւ զզարշելի իրս ուտել բնակչացն, զղեկաւանն որ կի-
սովն լուծեալ էին, փորէին հանէին ՚ի կեղտակոյտ. նաեւ
կին մի ՚ի կանանց տոհմիկաց ա՛ռ և մսեաց զմանկիկն իւր
կին մի ՚ի կանանց տոհմիկաց ա՛ռ և մսեաց զմանկիկն իւր
եւ եկեր առ քաղցուն վտանգի։ Զարհուրեցաւ քաղաքն
ամենայն։ Եւ Տիտոս իբրեւ լուաւ՝ գժդմեցաւ եւ ասէր՝
Թէ զանօրէնութիւնն պատ և զչարիսն Թագեցից ընդ աւե-
րակօք քաղաքիդ։ Ի վերայ այնր ամենայնի հասին ախտք
եւ ժանաք, եւ ՚ի ևԷ օրէ Ապրիլ ամսոյ մինչեւ ցսկիզբն
Յուլեայ ընդ մի եւ ևթ դուռն հանին դիակունք իբրեւ
116,000, և ընկեցան ընդ պարիսպն 600,000 (քան Յովսէ-
պոսի), իսկ զխմահատէից բանտային զօրականք ժլատք ըզ-
վոյս. քանզի տարաճեալ էր համբաւ ՚ի զօրականին՝ Թէ
վախստանեալք կլեալ տանին ՚ի բաց զոսկին իւրեանց։

Ձեւ կատարելոյ Հռովմայեցւոց զվատարաստութիւն
մեքենայիւ յարձակման, առին զղեկաւն Անտոնիենայ մե-
ծաւ աշխատութեամբ, քակեցին զբոմունս նորա, զի ար-
դելոյր այն հարկանել զՏաճարն։ Միւսանդամ առաքեցաւ

Յովսեփոս հաւանեցուցանել զՀրէայսն և խոստանալ Յովհաննու, եթէ թողուն զնալ նմա համարձակ ՚ի բաց։ Բայց քանզի այնպէս մոլորեալ ունէին ՚ի մտի թէ մարդկեղէն զօրութիւն չկարէ առնուլ զՏաճարն, ոչ միայն զխորանն նորա մերժեցին այլև զՏիտոսին, որ ինքնին մատուցեալ յորդորէր զնոսա, քանզի զմեծանձնութիւն նորա համարէին երկիւղ։ Ապա հարկ էր զինուք առնել զրաւ իրացն։ ի սէգ յարձակմանն՝ քայքայեցաւ հիւսիսային ճակատ Տաճարին հրով, և այնպէս գրաւեցաւ սրահն արտաքին։ Հարկանէին զրուն որմունսն Տաճարին, այլ զօր ուրեմն աւուրս 6 քարկոծ առնէին հզօր մեքենայիւք եւ փորէին զհիմունսն։ յարձակեցան միանգամ եւս Հռովմայեցիք՝ բայց մղեցան յետս։ Յայնժամ եւս արկանել Տիտոս հուր ՚ի դրասնան և յաջողեցաւ գործն։ բայց հրամանն եւս անդրէն չիջուցանել՝ յորժամ ՚ի բուն Տաճար անդր եհաս բոցն, Մինչդեռ զայնու էր զօրականն, սահմանեցաւ ՚ի խորհըրդեան պատերազմին առհասարակ յարձակել ՚ի վերայ, բայց զՏաճարն պահել անվնաս։

Այլ իրրեւ այն ինչ յարձակեալ էին Հրէայք և մղեալ յետս, մի ոմն ՚ի զօրականաց առ լուցկի անհրաման, ամբարձ զնա ՚ի վեր յընկերէ իւրմէ եւ ձգեաց զհուրն ՚ի ներքս ՚ի Տաճարն։ Այնպէս սաստկագոյնս սկսեալ հուրն, զի անհնարին էր չիջուցանել։ Զօր ճեպէր անդր Տիտոս, աղաչէր, հրամայր, սպառնայր զի միայն զհուրն չիջուցանիցեն, այլ զօրականն որ դարձեալ էր յառ և յաւար՝ չէնէր նմա վիտ։ Յայնժամ մատուցեալ հայեցաւ նա ՚ի տեղին Սուրբ և ՚ի Սրբուհին Սրբոց, և սպրեցոյց զսպասն սրբութեան, սպա եւ արտաքս, բայց և այն տեղիք լուցեալ այրեցան, թէպէտ և կրկնէր և երեքնէր զհրամանն Տիտոս։ Ա՛ռ զօրականն յաւարի զոր ինչ միանգամ եգիտ եւ լցան իսկ գանձուք։ Ընդ առեղծն սրբութեան անկաւ կործանեցաւ և ամենայն իսկ յոյս եւ քաջալերութիւն Հրէիցն։ կրկնեալ հնչէին ՚ի լերանց դոչիւն եւ աղաղակ վայնոյ, վերջին յոյս եւ ապաւէն լեալ էր նոցա Տաճարն։ Սկսաւ այնուհետեւ կոտորած սրոյն Հռովմայեցւոց ՚ի մէջ նոցա չխնայեալ ծերոյ և երիտասարդի, պառաւ և իղի, սպազի և անսպազի։ Հոլա-

րաւորք ՚ի մէջ բոցոյն, կամ դահավէժ դարահոս մեռանէին։ Դադարեաց հուրն և սուրն և մնացին երկու և եթ դրունք Տաճարին և մանր մի գաւթին կանանց։ Իսկ յանդըգնագոյնք ՚ի խռովչացն անցեալ գործեցին պատնէշ ՚ի քաղաքին ամրանալ անդէն, իրրեւ չտուաւ նոցա թոյլ երթալ ՚ի բաց ազատութեամբ, ամրացան ՚ի դղեակն Սիովնի ՚ի վերին քաղաքի, և կոտորեցին անդ իսկ և իսկ 8000 ոգի յաղգակցաց իւրեանց՝ որ անդէն ամրացեալ էին։ Երուսաղէմ տուաւ յաւար զօրացն, և ապա լուցեալ այրեցաւ անթիւ և անհամար դիակամբքն։ Ցետ այնորիկ կատարեալ Տիտոս զպատրաստութիւն մեքենայիցն՝ սկսաւ հարկանել զդղեակն Սիոն։ վհատեցան խռովիչքն, իրրեւ չկարացին փախչիլ՝ մտին ՚ի գետնափոր տեղիս եւ ընդ կամարօք։ հեղան զնդան Հռովմայեցիք ՚ի փողոցսն եւ կոտորեցին մինչեւ ցերեկոյ եւ զդիւցերն ամենայն առչորէր հուր։ եւ մտեալ Տիտոսի ՚ի քաղաքն զարմանայր ընդ ամրութիւն պարսպացն՝ մանաւանդ երեցունց գլխաւոր աշտարակաց, և ասէր։ «Աստուծոյ օգնութեամբ մղեցաք զպատերազմն։ Աստուած իսկ եհան զՀրէայսն յամրոցաց ասի, զի զի՞նչ ձեռնհաս էր ձեռն մարդոյ կամ գործի յաշտարակս պատսիկ»։ եւ չ՚էաւ յանձն ընդունիլ զպսակն յաղթութեան զոր առաքեցին նմա իշխանք Ասիացւոց ըստ սովորութեան ժամանակին։ զի ոչ իմ ինչ էր՝ ասէր, յաղթութիւնն, այլ Աստուծոյ։

Գերեալքն փախեցան ՚ի գաւթին կանանց եւ անդէն ընտրեցան։ եւ կոտորել Տիտոս զխռովիչսն և զաւազակսն։ զերիտասարդսն սահմանեաց ՚ի շուք յաղթանակին իւրոյ, իսկ որք 17 ամէնից ՚ի վեր էին, հրամայեաց տանել յԵգիպտոս ՚ի գործ աշխատութեան և առաւելն քան զնոսա տալ ՚ի խաղս ազանութեան թատերոց եւ զկարի մանկագոյնսն առնել վաճառականս։ Ցաւուրսն ընտրութեան մեռան ՚ի սովէ 11,000 ոգիք, կէսք ինքնակամ եւ կէսք առ պահապանացն դաժանութեան։ Առաւել քան զհարիւր բիւր մարդկան ՚ի պաշարմանն մեռան։ իսկ թիւ հանարոյ գերեվարացն հասանէր 97,000։ և ըստ Յովսեպոսի 110 բիւր։ Յովհաննէս Գիսկալացի եւ Սիմոն առ քաղցուն վտանգի եղեն յորջուց իւրեանց ՚ի գետնափոր կամարացն։ Նա գա-

տապարտեցաւ 'ի բանս ցկեանս եւ սա ասէաւր ,

Ցետ կատարելոյ զամենայն՝ հրամայեաց Տիտոս հարթ հաւասար կրծանել որ ինչ մնացեալ էր 'ի քաղաքէն եւ 'ի Տաճարէն , եւ հանել 'ի հիմանց զվէմս եւ առնել արօրագիր զերկիրն ուր երբեմն երուսաղէմ էր , բայց կային մնացին իրրեւ յիշատակարանք աշտարակքն Հիպպիկոս , Փասայել, Մարիամիւ , եւ չինուածք ինչ 'ի կողմն Սիոնի: Զկնի ամենայն ինչ առին նաեւ զերիս տերեւս սա Մեռեալ ծովուն Հասմոնեցիք՝ զոր զրաւեալ ունէին Հրէայք , պարիսպքն Հերոմդիոն , Մաքերոնէ , և Մասադա (73) :

Այսպէս լուծաւ քայքայեցաւ Հրէական ազգաբնակութիւնն , զկնի ամենայն ինչ առին նաեւ զերկիրն նոցա վաճառեաց Կայսրն առեալ ըզդինան յարքունիս , և ամենայն այր Հրէայ տայր Հռոմէական պետութեան զՀարկան , զոր յառաջագոյն Տաճարին տային : Թող եւս նոցա ազգաբնակութիւնն վարիլ կրօնիւք օրինաց և սովորութեամբք իւրեանց ; եւ գլխաւոր նոցին նահապետ ազգին նասիէր 'ի Տիբերիա և ունէր տէրութիւն 'ի վերայ ժողովրդեանցոյց նոցա , ուսուցչաց և ապաստարանն 'ի նոսին կարգելոց :

Ընդ այլ ամենայն տարան Երուսաղէմի երեւելի էին և սոքա . Եօթնաջահեան արծաթակք Տաճարին , Սեղանքն , նշտարակքն , պուտեղք , ամենեքեան կազմեալ յոսկւոյ սրբոյ : Ծանրագին վարագոյրք , կամարք և հանդերձք քահանայապետացն յօրինեալ մարգարտով : Ծիրանի և կարմիր յոլով պահեալ 'ի գործ վարագուրաց . կինամոն , կասիա և այլ տեսակք ծխանելեաց զանձք բազումք և զարդք սրբութեան , զոր թերեալ մատուցին Տիտոսի երկոքին պահապան քահանայքն Յեսու և Փենեհէս : Բարձ Տիտոս զդրունս և զսիւնս Տաճարին՝ այլովքն հանդերձ և խաղացոյց 'ի Հռոմ . և ինքն այնպիսի երեւելի չքով և վայելուչ յաղթանակաւ եմուտ 'ի Հռոմ , որոյ նմանն չէր ուրեք երբէք երեւեալ . և զարդարեաց զՏաճարն խաղաղութեան՝ կառուցելոյ 'ի հօրէ իւրմէ Վեսպասիանոսէ 'ի զարդուց և 'ի գանձուցն Երուսաղէմի . բայց յաւուրս Կոմոդոսի Կայսեր հրդեհեցաւ Տաճարն խաղաղութեան և այրեցաւ կառուցն Երուսաղէմացւոց (189) և այլ ի մնոյն կորեաւ 'ի ծուխ ,

---

ԳԼՈՒԽ Ե .

Շմաւոն ազգական Քրիստոսի . Կառաջնորդէ Տէրն . Եպիսկոպոսութիւնք 'ի Հրէից հաւատացելոց . Շիմաւոն Երուսաղէմի յԱգրիպեայ . Կառաջնորդէ և հալածուի Հրէից . Մարկոս եպիսկոպոս 'ի Ներոնեայ հաւատացելոց , մինչ 'ի կառաջնորդել Աղէքսանդրիոյ .

Սիմէոն Շմաւոն , որ և Սիմէոն կամ Սիմոն , եղբայր Յակոբայ արդարոյ , որդի Կղեոպայ , եղբօրորդի Յովսեփայ Աստուածահայր կոչեցելոյ եւ ազգական Քրիստոսի , յետ համբառնալոյ Փրկչին մերոյ չորեցաւ յայլ եւ այլ տեղիս , որպէս և այլ առաքեալքն . քարոզեաց զաւետարանն Հրէից և հեթանոսաց , իբրեւ հաւատարիմ վկայ ականատես եւ ապաստուր Բանին Աստուծոյ կրեաց զազգի ազգի չարչարանս և զնեղութիւնս վասն անուան Տեառն : Իսկ զկնի կատարման եղբօրն իւրոյ Յակոբայ արդարոյն և աւերածոյն Երուսաղէմի , ժողովեցան աշակերտք աշակերտաց առաքելոցն յամենայն կողմանց , որք մնացեալ էին յայնմ ժամանակի հանդերձ ազգատոհմիւ Տեառն մերոյ , և խորհրդով եդին յԱթոռ եպիսկոպոսութեան Երուսաղէմի զծերունին Շմաւոն , իբրեւ արժանաւոր այնմ պատուոյ և աստիճանի և օրինաւոր յաջորդ եղբօր իւրոյ Յակոբայ : Որ և զառաքելական քարոզութիւնն եւս քան զեւս 'ի կիր արկեալ քարոզէր զԲրիստոսի Աստուածութիւնն ընդ ամենայն կողմանս Պաղեստինոյ . չինէր զեկեղեցիս ըստ տանելոյ ժամանակին , եւ անպակաս առնէր զաղաչանաց և զպաշտօնեայս , և այսպէս եկաց յԱթոռն հովուութեան աս բազումս , մինչեւ հասանիլ նմա ի արդեամբք յերկար ծերութիւն :

Պատմէ Հեգեսիպոս սա եւսեբեայ , թէ զկնի Յակոբայ սա եկաց եպիսկոպոս երուսաղէմի . զի ամենայն ոք 'ի նա եղեալ էր զմիտս , և վասն այսորիկ կոչէին զեկեղեցին կոյս . զի ցայն վայր ոչ էր ապականեալ 'ի լուրս ընդունայնս : Այլ սկսաւ զառաջինն Թէբութիոս ապականել , զի ոչ եղեւ եպիսկոպոս , եւ է մին յեօթանց հերձուածոց անուն , ուստի Սիմոնն էր . եւ ապա յաւելու , զի ամենե-

քին մի մի ՚ի նոցանէ առանձին ըստ կարծեաց իւրեանց մուծին աղանդս, և ՚ի սոցանէ եղեն սուտ քրիստոնք, մարգարէք և առաքեալք· զի բաժանելին զՀաւատարմութիւն եկեղեցւոյ բանիւք ապականութեան զոր խօսեցան ՚ի վերայ Աստուծոյ և ՚ի վերայ Օծելոյ նորա· Սրդ՝ յետ Ներոնի՝ յարոյց երկրորդ հալածանս կայսրն Դոմէտիանոս՝ կրտսեր եղբայր և պայազատ Տիտոսի (95)· Եւ սովաւ առան ինչք քրիստոնէից, բազումք աքսորեցան յայլ և յայլ տեղիս, արտասահմանեցաւ ՚ի Պաղմոս կղզի Ս· Յովհաննէս աւետարանիչ, միայն մնացեալն յԱսացելոց· Այս ինքնին գրգռեցաւ ՚ի վերայ Երրայական ազգին, և հրաման ետ կոտորել զսերունդս Դաւթի, զի մի ոք մնասցէ պայազատ թագաւորութեանն Հրէից· Իսկ սուրբն Շմաւոն թէպէտ և երեւելի էր յայնմ ցեղի, այլ վասն ծերութեան և պատուական ալեացն ոչ արարին վտիճ զնմանէ խընդրակք կայսեր, այլ կալան զերկուս եղբօրորդիս Շմաւոնի, որք էին որդիք կամ թոռունք առաքելոյն Յուդայ, և տարեալ կացուցին առաջի Դոմէտիանոսի, և ՚ի լինել հարցափորձի անգոնեցան իբրեւ արք տառապեալք·

Ի թագաւորել Տրայիանոսի նորոգեցաւ հալածումն եկեղեցւոյ, եւ վերստին յոյզ և խնդիր եղեւ ազգատոհմին Դաւթի· Մատնեցաւ ծերունին Շմաւոն ՚ի հերձանոսաց և ՚ի հրէից աղանդաւորաց ժամանակին յատեան Ասորիկոսի կայսերական Հիւպատոսին, վտխանակի բդեշխին Ասորւոց Նատալ յերուսաղէմ, և մատուցեալ զնա դատաւորին ՚ի տանջանս ստիպէր ուրանալ զՔրիստոս, իսկ նա համարձակ քարոզէր զնա, արկաւ ՚ի բանտ տանջեալ ՚ի սով և ՚ի ծարաւ·

Իբրեւ կամեցաւ արձակել զնա Հիւպատոսն, ոտիք նորա սկսան չարաչար ցաւել զնմանէ, և աղաղակէին տալ զնա ՚ի մահ խաչի· վասն որոյ հրաման ետ իշխանն, զի ըստ օրինակի առաջնորդին իւրոյ ՚ի խաչ բեւեռեսցի· Եւ այնպէս կատարեցաւ ծերունին Շմաւոն ՚ի տանջանս խաչին յերուսաղէմ քաղաքի ՚ի հասակի իրր 120 ամաց, յետ 45 ամեայ եպիսկոպոսութեանն (108)· և պատուական մարմին նորա ամիսիթեցաւ ՚ի հաւատացելոց, որոյ տեղին է այժմ անյայտ· Վրդ· Սբոյ Հոգ· Ս· 529·

Չկատարումն Շմաւոնի զեղեցիկ գովութեամբ արձանագրէ Հեգեսիպոս հաւատարիմ օրինակագիր ոչ ինչ հեսի ժամանակաւ· Ն--ՔՀ· Պ--Գ· ԵԿԷ· Գ· 32·

Յետ նահատակութեան սորա յաջորդեաց Յուդան երեսաղէմի Յուստոս· Ի ձեռագիրս ինչ ասի թէ սորա արարեալ իցէ զօրհնութիւնս եկեղեցւոյ Խաչի եւ Մատաղի, սակայն բանքն ընծային վանականի· Զկնի սորա Զաքէոս, Տուբիաս, Բենիամին, Յովհաննէս, Մատաթիա, Փիլիպպոս, Նեկաս· Յուստոս Բ· Դեսի, Եփրեմ, Յովսէփ եւ Յուդաս մի զկնի միւսոյ յաջորդեցին յաթոռն երեսաղէմի· զժամանակս եւ զթիւ ամաց եպիսկոպոսացն երեսաղէմի չգտանի եւսերի աւանդեալ ՚ի գիրս ուրեք, այլ միայն թէ սակաւ ժամանակս կացեալ են 15 եպիսկոպոսունք՝ մինչեւ ՚ի պաշարումն Ադրիանոսի· զի ՚ի ժամանակին յայնմիկ նոքա ընտրելին զարժանաւորս յայն աթոռ· որոյ վասնաւ ետ ապստամբութիւն եւ կոտորումն Հրէից ՚ի Հռովմայեցւոյ, որպէս տեսցի արդ·

Յութ եւ տասներորդ ամի ինքնակալութեանն Տրայիանոսի մնացորդք Հրէից, որ ՚ի Պաղեստին, ապստամբեցին ՚ի Հռովմայեցւոյ, մանաւանդ Յմփրիկէ և յԵգիպտոս, որոց առաջնորդեր Դուկիա անն (115)· առաքեցաւ յինքնակալէն բազում զօրօք Մարկիոս Տուրբոյ, և նուաճեաց զնոսա յԵգիպտոս բազում սպատերազմաւ, և հատոյց նոցա զչարիսն տակաւռօք· Եւ Ղուկիոս կառաւս սուբ եղեալ կոտորեաց զբազումս ՚ի Հրէից, որք բնակեալ էին ՚ի Միջագետս, զի մի դարձեալ ՚ի վերայ բնակչացն աւերեցեն զաշխարհն, և վասն այսր քաջութեան ելոյ դատաւոր Հրէաստանի· Յետ մահուն Տրայիանոսի թագաւորեաց Ադրիանոս, և եղ չինել զերուսաղէմ զկնի 47 ամի աւերածոյն ՚ի Տիտոսէ, զի քանդեալ էր քաղաքն եւ աւերեալ Տաճարն, և սակաւ ինչ տունք մնացեալ ՚ի կողմն Սիոնի· և վասն եկեղեցին ուր Առաքելքն ժողովեցան յետ Համբարձմանն, այսինքն է վերնատունն, և 7 ժողովրդանոցն· և այլ ոչինչ· Եւ կոչեաց զնա Ելիա (ըստ աւելի անուանն, զի անուանէր Ելիոս Ադրիանոս, եւ ետ կանգնել անդէն մեհեան կապիտոլեանն Պատմողդ ՚ի վերայ աւերակաց Տա-

ճարին, եւ բնակեցոյց զՀռոմմայեցի զաղթականն. ըզչարեալ Հրէայք ընդ այո ապստամբեցին ՚ի Կայսրէ եւ տային պատերազմ ընդ Թռխոսի եպարքոսին Հրէաստանի, առաջնորդութեամբ առն ուրումն աւազակի Բար Կոքեբայ, այսինքն աստղորդի, որ էր գործով չարագործ եւ ըսպանող. բայց անուամբ իւրով մեծաբանեալ պարծէր, իբր յերկնից ծագեալ նոցա փրկիչ։ Հարուստ գնդաւ առաքաւակերը յԱսորիս, եւ կալեալ զքրիստոնեայսն տանջէր, զի ոչ կամէին երթալ ընդ նմա ՚ի ճակատ ընդդէմ Հռոմմայեցւոց. եւ առաւել եւս մոլեգնեալ կամէր ածել զնոսա տանջանօք յուրացութիւն. եւ այնքան աստակացաւ մարտն ամէ՝ մերս Խորենացի, մինչեւ ՚ի նոսա հայելով ՚ի բաց կացին հարկելոյ Հռոմմայեցւոց Ասորիք, Միջագետք եւ Պարսք ամենայն, բաց ՚ի մերոյն Արտաշիսէ։ Առաքեցաւ յինքնակալէն զօրավարն Ցուլիոս Սեւերոս լերդէոնօք ՚ի Հրէաստան, եւ ըստ Խորենացւոյն ինքնին կայսրն եկ ՚ի Պաղեստին. քանդեաց զամուրս աւելի քան զ50, զքաղաքս և գիւղս 900։ Ցետ առին Բեթորոնի (յայնկոյս Ցորդանանայ) ուր անկաւ Բար Կոքեբ յանդ եկ պատերազմն (135)։ Աւելի քան զ580,000 այր ՚ի Հրէից պատմի կոտորեալ, եւ այլոց բազմաց այլ ինչ ազգ վախճանեալ. մեծ մասն մնացելոցն եղեւ վաճառակուր և ածաւ վտարանդի յերկիր օտար։ Ադրիանոս չինեաց զքաղաք իւր նոր ՚ի նոյն տեղւոջ, զոր պարունակէ այժմ. եւ մասնաւոր ինչ նախանձամութեամբ փակեաց զՀրէան Գողգոթայ ՚ի մէջ պարսպացն։ Չ՚իշխէր ոք այնուհետեւ ՚ի Հրէից երթալ մերձենալ ՚ի վայրն երուսաղէմի, այլ յետոյ առին գնոյ հրաման միանգամ ՚ի տարւոջ երթալ աշխարել ՚ի վերոյ քաղաքին իւրեանց, ուր տիրէր այնուհետեւ պաշտօն հեթանոսութեան։ Բայց եւ քրիստոնէից, զոր տակաւին ընդ Հրէայն չփոթէին հեթանոսք, չ՚էր համարձակ մտանել անդր։ Ի թշնամանս Հրէից և առ ՚ի տալ մտանել խաչատ զհայրենիս իւրեանց, եւս կանգնել Ադրիանոս պատկեր խոզենի մարմարեայ ՚ի վերոյ մուտ ՚ի դրանց քաղաքին որ տանի ՚ի Բեթղէհէմ. (արեւմտեան, որ այժմ կոչի Ցոպպէ եւ կամ Հայր Աբրահամու դուռն)։ Սակայն և ոչ ՚ի նուիրական տեղիս քրիստոնէիցն խնայեցաւ. ՚ի Գողգոթա

կանգնեցաւ պատկեր Ասողկան, և ՚ի վերայ Գերեզմանին Քրիստոսի եդաւ պատկեր Արամազդայ, ՚ի Բեթղէհէմ ՚ի տեղին ծննդեանն Քրիստոսի տնկեցաւ անտառ Ադոնիսայ, և ՚ի վերայ Մարդոյն արձանն Ափրոդիտեայ։ Ցետ կատարելոյ այսմ ամենայնի ժողովեցաւ եկեղեցին և եդին յաթոռ եպիսկոպոսութեան երուսաղէմի զՄարկոս, զառաջին եպիսկոպոս ՚ի հեթանոսաց հաւատացելոց։ «Զառաջին օրինակ այսպիսի մեծարազոլտական միաւորութեան յարեւելս ցուցանէ եկեղեցին Քրիստոնէից դարձելոց ՚ի Հրէութենէ յերուսաղէմ, որք էին ՚ի հաղորդութեան միաբանեալ ընդ եկեղեցեացն Գալիլեայ, Հրէաստանի և Սամարիայ։ Ցետ կործանմանն երուսաղէմի առ Ադրիանոս, այն իշխանութիւն մեծապատիւ անց ՚ի Կեսարիա Պաղեստինացւոց»։ Պատ. Տէրեր. Հայ. Բ. 220։

Ցետ վախճանելոյ Մարկոսի յաջորդեցին զկնի միմեանց զԱթոռն եպիսկոպոսութեան՝ Կասիանոս, Ոսկղիոս, Մաքսիմոս, Գայիոս, Սիմեաքոս, Գայիոս Բ. Ցուլիանոս Բ. Կիպրիտոն, Մաքսիմոս Բ։ Ի սորա դրոց թէ՝ ուստի իցէ չարն, և թէ յԱստուծոյ ստեղծաւ նիւթն, և հատակոտոր բանք ինչ առ Որոդինեայ երեւին. յետ որոյ Անատոլիոս, Վաղէս, Գուղիքիանոս և ապա Նարկեսոս։ Սա եկաց յԱթոռն եպիսկոպոսութեան երուսաղէմի առաքինի և աքանչելի վարուք. ընդ որ նախանձեալ ոմանց չարադրդիւ արանց չարախօս եղեն զնմանէ, և երդմամբ հաստատէին զբանս սուտս նմանէ թէ ապատեացի մարմին Տեառն ՚ի չարաշար կիզոյ հրոյ։ Ընդ որս երդնոյր թէ այրեցի հրով, եւ նոքա հաւատային և երթային խաւարել բիրք աչացն, այլ նա համբերութեամբ իւրով յաղթեաց թշնամեաց իւրոց. եւ զի սիրէր նա զվարս միաձնութեան, խոյս ետ յանապատս ինչ և թագաւոր անդ, որոյ զտեղին ոչ ոք կարաց գիտել։ Այլ դատաստանք Տեառն վաղ ընդ փոյթ հասին ՚ի վերայ։ Այլ դատաստանք Տեառն վաղ ընդ փոյթ հասին ՚ի վերայ այնոցիկ. առաջինն այրեցաւ տաճիք և աղտարարչացն այնոցիկ դատոհմանն իւրով՝ ՚ի կայծականց, երկրորդն անկեալ յախտ դժնդակ կերակուր եղեւ որդանց։ Տեսեալ երրորդին զանցս ընկերացն, խոստովան լինէր առաջի ամենեցուն ըզչարիսն զոր խորհեցան. եւ այնպէս լայր և կոծէր զանձն իւր մինչեւ խաւարեցան երկոքին աչք նորին։

Ի հեռանալ Նարկիսոսի, կալաւ զԱթոռն Երուսաղէմի Գիտա սակաւ ժամանակս. ապա Գերմանիոն, և զկնի Գորդիոս։ Ցաւուրս սորա երեւեցաւ Նարկիսոս. և յաղաչէն եղբարց, զիջեալ ի կամս նոցա վերստին կալաւ զԱթոռն. այլ վասն բազմամեայ ծերութեան իւրոյ անկարող էր այնուհետեւ վարել զառաջնութիւն եկեղեցւոյն, վասն որոյ ընտրեցին զԱղեքսանդրոս եպիսկոպոս Դամրաց կամ Կիւղիկեցւոց՝ աշակերտակից և մտերիմ Որոգինեայ ի պաշտօն հովուութեան եկեղեցւոյն Երուսաղէմի ընդ Ներկոսի. զի ի նմին ժամանակի եկեալ էր յերուսաղէմ յերկրպագութիւն Տնօրինական տեղեաց Քրիստոսի. թէպէտ կամեցաւ նա վերստին դառնալ յաշխարհ իւր, այլ եպիսկոպոսունք գաւառին արգելին զնա։ Եւ յանձն առ պաշտօն հովուութեան եկեղեցւոյն Երուսաղէմի՝ որպէս երեւի ի թղթէն զոր գրեաց առ Անտոնինոս Կարակալլայ՝ թէ հարցանէ զողջոյնէ ձերմէ Նարկիսոս, որ յառաջ քան զիս նա վարէր զեպիսկոպոսութիւնն տեղւոյս, և այժմ պղծութիւք խնդրուածս առնէ ընդ իս. և են աւուրք կենաց նորա հրեսմամբ 119. և աղաչէ զձեզ որպէս և ես իսկ լինել ձեզ միաբան ի մի միտս և ի խորհուրդս հաւատոյ։ Եւ ապա հանգեաւ Նարկիսոս անարատ վարուք ի խոր ծերութեան. (212)։

Ի ժամանակս հալածանաց Սեւերոսի ընդ այլ խոստովանող վկայս եղաւ ի բանտի և Աղեքսանդրոս եպիսկոպոս, եւ Անտոնինոս գործոյց զնա ի տեղի իւր, որպէս զայլ աքսորեալսն վասն հաւատոյ։ Գրեաց սա զանազան թուղթս առ այլև այլ եպիսկոպոսունս և առ մտերիմն իւր Որոգինէս, որպէս և նոքա առ սա։ Հաստատեաց մաշտնագարան ինչ յերուսաղէմ ըստ տանելոյ ժամանակին, և ժողովէր անդ զայլ և այլ գրեանս, որք գրէին յայնժամ երեւելի վարդապետք և եպիսկոպոսունք ի կողմանց կողմանց՝ յորոյ առեալ է բազում ինչ նա ինքն եւսեբի, եւ կոչէ զնա տուն գանձի։

Դեկիոս Տրայիանոս յարոյց հալածանս եկեղեցւոյ, եղեալ ի մոխ բնաբարձ ջնջել զքրիստոնէութիւնն ի թշնամանս նախորդին իւրոյ Փիլիպպոսի նախատաւոր եղելոյ քրիստոնէից. զի յաւուրս նորա բազմացան քրիստոնեայք ի կարգս

և յաստիճանս, և տարածանէր եկեղեցի եւ նուաղէր կռապաշտութիւնն։ Ի հասանիլ հրամանի նորին ի նահանգն բազում նահատակեցան վասն հաւատոյն Քրիստոսի. առաւել կատաղէր բռնաւորն ի վերայ եպիսկոպոսաց. յետ նահատակութեան Փաբիոս եպիսկոպոսին Հռոմայ, կալան և զծերունին Աղեքսանդրոս եպիսկոպոսն Երուսաղէմի եւ կացուցին առաջի դատաւորին ի Կեսարիա Պաղեստինացւոց, ի դատաստան վասն ի Քրիստոս հաւատոյն։ Փառաւորեցաւ անդ երկիցս խոստովանելով զՔրիստոս Աստուած, զի էր ծերացեալ եւ լցեալ աւուրբք և պատկառ ծադկեալ ալեօք, կապեալ եղեն ի բանտի և վախճանեցաւ նա անդ ի կապանս (250)։ Նոյնպէս և այլք բազումք յայլ տեղիս առաքինացան։ Եւ զնի մահուան սորա կալաւ զԱթոռն Երուսաղէմի Մազրանոս։

ԳԼՈՒԽ Զ.

Որոգինէս։ Նավատիա աղանգաւոր. Պողոս Սամոսատցի։ Կինն ակառաւոս։

Այծր այս հռչակաւոր բազմահմտութեամբ իւրով, և գերազանց քան զվարդապետս իւր, ծնաւ յԱղեքսանդրիա քաղաքի յամի 185. որդի Լեւոնդեայ վկայի. սանդրեա քաղաքի յամի 185. որդի Լեւոնդեայ վկայի. աշակերտեալ Ս. Կղեմտի Աղեքսանդրացւոյ յերախայական դպրոցի. ի մանկութեան այր կատարեալ եւ լի սիրովք Քրիստոսի, քաջալերէր զհայր իւր գրովք ի բանտի կալ հաստատուն ի հաւատս Քրիստոսի։ Ել հռչակ իմաստութեան նորա. եկաց վարժապետ երախայական դպրոցին, ուր յաճախէին թիւ աշակերտաց և բազումք եւս ի կանանց յոտնումն վարդապետութեան կրօնի՝ առ սիրոյ զգաստութեան և իմանալով խոստոնակ զբանն Քրիստոսի. Մ-Դ. ԺԹ. 12. կրճատեաց զանձն, և խնացեալ Դիմէտրիոսի եպիսկոպոսի Աղեքսանդրեայ յանդիմանեաց զնա։ Զոքաւ ի Պաղեստին, ուր ի Կեսարիա հրամանն եւսեբի նմա նախակապատուանք յեկեղեցւոջ մեկնել զիւրս. դժկամակեալ ընդ

այն Դեմետրիոսի կոչեաց զնա անդրէն ՚ի վիճակ իւր։ Ձետ 10 ամեայ մաաննագրութեան՝ թղթով ընծայութեան եպիսկոպոսին իւրոյ առաքեցաւ Յակոբիա վասն եկեղեցական ինչ գործոց։ յանցանել նորա ՚ի Պաղեստին՝ ձեռնադրեցին զնա երկոքեան Թէոկրետոս եպիսկոպոս Կեսարու և Աղեքսանդրոս Երուսաղէմի 43 ամաց (228)։ Զայրացաւ Դեմետրիոս ընդ յաւելուածոյն, և զնէր Որոգինեայ նախատինս յանցանօք մանկութեան, եւ յետ դարձի նորա Յակոբիայ ժողովով արգել ՚ի վարդապետութենէ և մերժեաց յԱղեքսանդրիայ (231)։ Եւ յետ մեկնելոյ Որոգինեայ ՚ի Պաղեստին՝ գումարեաց Դեմետրիոս միւս եւս ժողով և հան զնա ՚ի հաղորդութենէ եկեղեցւոյ և ՚ի քահանայական պաշտամանց։ Իսկ նա եղ դպրոց ուսման քրիստոնէութեան անդէն ՚ի Կեսարիա։ գայլն եւ ժողովէն յամենայն կողմանց վարդապետք և եպիսկոպոսունք լսել զվարդապետութիւն նորա, և բազումք աշակերտեալ եղեն արք երեւելիք։ Ի ժամանակս հալածանացն մեկնեցաւ ՚ի կոչն Փիրմիլիանայ ՚ի Կեսարիա Գաղատացւոց, ուր պարապէր ուղղել զԱղեքսանդրացի կամ զԵօթանասնից թարգմանութիւնն և յօրինեալ կարդէր զՎեց Օրինակն, և տակաւին էր ընդ բանիւք, յայն սակս համարձակագոյնս յանդգնէին թշնամիքն ՚ի վերայ նորա, որոյ վասն բազում անգամ տրտնջէ զանիրաւ գործոց հակառակորդաց իւրոց։ և թէ ազատաղն և խանգարեն զգիրս նորա մուծանելով բանս սուտս յանձանց։

Առ Դեկիոս հալածմամբն ըմբռնեցաւ և Որոգինէս և արկաւ ՚ի բանտ և ՚ի յանհնարին տանջանս։ յետ հաստատուն խոստովանութեան՝ գրեաց ՚ի բանտէ անտի առ եղբարսն թուղթս բազումս լի մխիթարութեամբ և քաղցրութեամբ։ Թէպէտ և ազատեցաւ անտի, բայց մեռաւ յետ տակաւին 69 ամաց ՚ի Տիւրոս (254)։ Թերեւս ՚ի վէրոյ անտի զոր կրեաց։

Բարեկամք նորա ունէին զնա ՚ի պատուի, եւ վասն այսորիկ զլուսաւոր միտն եւ զտոհմն ջան վաստակոց նորա՝ կոչելով զնա աղանդակալ եւ պղծեալ։ Ամբաւ էին նորա մատենագրութիւնք։ այնչափ գրեաց, որչափ յետոյ չկարացին ընթեռնուլ։ Եօթն նոտարք արագագրք զմի-

մեանս փոխանակէին գրել զոր ասէր, եւ եօթն եւս ընդ օրինակէին զնոտարացի նշանակեալսն։ Այլ բազումք ՚ի գրոց անտի նորա այժմ չերեւին ՚ի միջի։

Ի բովանդակ մատենագրութիւնս Որոգինեայ գտան բազում ուրեք մոլար վարդապետութիւնք ընդդէմ ուղիղ հաւատոյ։ ոմանք համարեցան զայնս մուծեալ յետոյ ՚ի թշնամեաց իւրոց։ իսկ այլք ոմանք համարձակեցան ասել, թէ այնոքիկ մոլորութիւնք արդիւնք մտաց և արատագրութիւնք գրչի նորին իսկ Որոգինեայ են։ եւ այսպէս բազումք ՚ի բազում կարծիս բաժանեցան, և զկնի ժամանակաց յուզեցան բազում խռովութիւնք և չխոթութիւնք վասն դրոց նորին ՚ի մէջ կրօնաւորացն երուսաղէմի։ մինչդեռ վասն դրոց նորին ՚ի մէջ կրօնաւորացն երուսաղէմի։ մինչդեռ սիեզերական ժողովով վճարել զիրսն, զոր տեսցուք յիւրում տեղւոջ։

Իսկ վաղերիանոս նախատաւոր եղեալ զինքն քրիստոնէից, այլ մոլորեալ ՚ի բանս Մակրիանոսի նորագեայ ըղհերձանութիւնն և արգել քրիստոնէից ժողովել ՚ի գերեզմանս մարտիրոսաց։ Ս. Ստեփանոս եպիսկոպոս Հռոմայ մեռաւ ՚ի բանտի, Դիոնիսիոս եպիսկոպոս Աղեքսանդրիայ աքսորեցաւ ՚ի Լիբիա, որ երեւելին էր ՚ի մատենագիրս ժամանակին եւ գրեաց ղյոլով թուղթս ՚ի վերայ այլ եւ այլ խնդրոց ուղղեալ առ եպիսկոպոսունս, առ Փաւիլիոս եպիսկոպոս Անտիոքայ, առ Մեհրուժան եպիսկոպոս Հայոց վասն վկայութեան սրբոց եւ առ Նովատիոս երէց Հայոց վասն վկայութեան սրբոց եւ առ Նովատիոս երէց Հռոմայ՝ որ մոլորեալն էր ՚ի հաւատոյ, որոյ վասն ժողովեցան 60 եպիսկոպոսունք ՚ի Հռոմ, եւ դատապարտեցին զնովատիոս և զաղանդ նորին, որպէս յայտ առնէ Եւսեբի եկեղեցական պատմութեան։ Ցաւուրս Աւրելիա խաղաղացաւ եկեղեցին։ հրամայեաց նա եպիսկոպոսաց հաւատարմակ ունել զօրէնս եւ առնուլ զնեղին Մարտիրոսաց։ (269)։ Ի ժամանակի խաղաղութեանն այսմիկ հանդեաւ եպիսկոպոսն երուսաղէմի Մազբանոս, եւ փոխանակ նորա եկաց եպիսկոպոս Հիմենոս։ Սա փառաւորեցաւ առ Եւսեբի, յաւուրս մեր ասն բազումս։

Պօղոս Սամոսատացի եպիսկոպոս Անտիոք քաղաքի, վարժ յուսումն գրոց, այլ աչխարհասէր և փառասէր, խափանեաց զերգան Քրիստոսի եւ ընդ այնր տայր նուագել

աղջկանց յեկեղեցւոջ զերդս գովութեան իւրոյ յաւուր ածնի Յաւկին։ Պատուական համարէր զվերակացութիւն հարկաց քան զպատիւ եպիսկոպոսութեան իւրոյ։ Ուստի ցանէր թէ՝ Ցիսուս ընկալաւ զբանն, այսինքն զգօրութիւնն Աստուծոյ (որ բնակեաց ի նմա, սիրէրն արարեալ ի յղութենէ մինչեւ ցչարչարանսն)։ Ժողովք երեք եպիսկոպոսաց գումարեցան Անտիոք, յերկուս առաջին ժողովն, (264) որ եղեն առաջնորդութեամբ Փիրմիլիանոսի եպիսկոպոսին կեսարու Կապադովկիացւոց՝ պատրեաց գՀարս պատ ի պատ բանիւք և օուտ զղչմամբ, այլ յերրորդումն (269), որում առաջնորդէր Հեղինոս եպիսկոպոս Տարսոնի, կոչեցաւ և Դիոնիսիոս եպիսկոպոս Ալեքսանդրիոյ։ այլ նա վան ծերութեան իւրոյ գրով յայտնեաց զդաւանութիւն հաւատոյ՝ զոր ունէր։ գտաւ ի ժողովն սատ ընդ այլսն և Հիմէնոս եպիսկոպոս Երուսաղէմի, եւ այլ երիցունք և Սարկաւագունք։ Մաղքիոն երէց եկեղեցւոյն Անտիոքայ, վարժ հելլենական դպրութեան եւ հրմուտ աստուածային գրոց, խայտառակեաց զնա յաւանի անդ։ ընկեցաւ Պօղոս յԱՓեսոսէ, և Հարքն՝ սիւնհոդոսական թղթով (առ Եւսեբեայ) ծանուցին զանցան համօրէն կաթուղիկէ եկեղեցւոյ։ Բայց Պօղոս ոչ մեկնեցաւ ի բաց յԱՓեսոսէ՝ պաշտպանութեամբ Զենոբիայ դշխոյին Պալմիրացւոց, որում սիրելի իսկ էր։ այլ իբրեւ ըմբռնեցաւ Թագուհին յԱւրելիանեայ (272)։ արտաքսեցաւ եւ Պօղոս անարգանօք ի ձեռն աշխարհական իշխանութեան եպիսկոպոսարանէ անտի։

Իսկ եպիսկոպոսն Երուսաղէմի Հիմէնոս վարեալ խաղաղութեամբ զիշխանութիւնն իւր վախճանեցաւ, և զինի նորա կալաւ զաթոռն Զարեա, և ապա Հերմոն, մինչեւ ի ժամանակս հալածանացն։ Սա առաքեաց զնիկիոմ եպիսկոպոս ի Թուրքաստան, և զվասիլիոս եպիսկոպոս ի Քերսոն, այն է Խրիմ, վան քարոզութեան։ իբրեւ նահատակեցին Քերսոնացիք զվասիլ, առաքեաց Հերմոն զաշակերտ իւր Աթիրիա եպիսկոպոս, զայր սուրբ և առաքինի։ իբրեւ ոչ ընկալան զնա Քերսոնացիք՝ ձեռնտուութեամբ կոստանդիանոսի հան անտի զմնացեալ անհաւատս եւ բնակեցոյց զքրիստոնեայս և չինեաց զեկեղեցիս, և ի

միւսանգամ ճանապարհորդութեան իւրում վախճանեցաւ ի Սալեն կղզի Տանաբրիս գետոյ։

Զերկուս կեսարիայս գտանեմք ի գիրս։ մին կոչի Կեսարիա Պաղեստինացւոց առ եզերք Միջերկրական ծովու, ուր եղաւ ժամանակ ինչ Աթոռ եպիսկոպոսութեան Պաղեստինոյ, և յետոյ փոխեցաւ յերուսաղէմ, եւ միւսն անուանի կեսարիա Փիլիպպեայ ի սահմանս Գալիլեացւոց մերձ յակունս Յորդանանու։ զսմանէ ասէ Աւետարանիչն թէ եկն Ցիսուս ի կողմանս Փիլիպպեայ Կեսարիոյ։ սա յառաջագոյն կոչէր Լայիսա։ Հռոմայեցիք առեալ զայն անուանեցին Պենադաս, եւ ետուն զայն Փիլիպպոսի եղբօր Հերովդի եւ նորա ընդարձակեալ կոչեաց ի պատիւ Տիբեր Կայսեր եւ իւր, Փիլիպպեայ Կեսարիա։ Լատինք ասեն թէ՝ ի քաղաքի ասա ասաց Ցիսուս ցՊետրոս, դու ես վէմ, եւ եւսեբի յաւելու թէ՝ կինն տեսանէս, որ եդիտ բժշկութիւն ցաւոց իւրոց ի Քրիստոսէ, էր ի քաղաքէս յայսմանէ, և նշան պանչելւոյ Փրկչին կայ ասէ մինչեւ ցայսօր առաջի դրանց տան նորա։ Պատկեր պղնձի եղեալ ի վերայ բարձր վիմի, յորում նկարեալ կին մի իջեալ ի ծունկս եւ ամբարձեալ զձեռս իւր աղաչէ ըստ նմանութեան կնոջն։ Եւ յանդիման նորին է դարձեալ պատկեր պղնձի, եւ նկարեալ ի նմա պատկեր առն կանգնեալ արկեալ զիւրեւ մեկնոց և ձգեալ զձեռն իւր ի կինն, եւ առ ոտիւք նորա ի վեր քան զչանգերձս բուսեալ արմատ ինչ տարօրինակ և հասեալ մինչ ի դրոշակ հանգերձի նորա, որ է նմանութիւն Փրկչին մերոյ, և տեսաք իսկ առ չօք մերովք ասէ՝ ի դնալն մեր ի քաղաք անդր, ուր և զկերպարանս նմանութեան Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի և նորին Բրիստոսի նկարեալ են դեղովք և կան մինչեւ ցայսօր։ զի նոքա ըստ սովորութեան կռապաշտութեան, օրինակաւս իրրեւ զփրկիչս պատուէին զնոսա։ Ցայսմ բանէ Եւսեբի բամբասեցաւ ի Տիեզերական ժողովէն որ գումարեցաւ վան պատկերամարտից՝ զորմէ յետոյ։ Իսկ յամին 363 յորժամ եկաս յանցողն Յուլիանոս ի կողմանս՝ ետ կործանել զպատկերսն զսյնոսիկ և տնկեաց զարձանն իւր, որ յետոյ հարեալ ի կայծակէ խորտակեցաւ մանր։

ԳԼՈՒԽ Լ.

Հալածումն Եկեղեցւոյ։ Մեծն Կոստանդիանոս. Ժողով Նիկիոյ ընդդեմ Արիոսի։ Դէպքն Հերմէ մօր Կոստանդիանոսի. Շինութիւն Տաճարական Ս. Տեղեաց Յերուսաղէմ։

Ի ՓՈՓՈԽԻԼ Կայսերացն Հռոմայ, վերստին առնոյր եւ վիճակ եկեղեցւոյ. մերթ վտարանդի ՚ի հալածմունս եւ մերթ յանդորր ՚ի խաղաղութեան։ Այլ երբեք ամբարձան ՚ի գահ կայսերութեան Դիոկղետիանոս եւ Մաքսիմիանոս, առաջնոյն առեալ զարեւելս եւ երկրորդին թողեալ զարեւմուտս, սկիզբն եղեւ տակաւ արծարծել հրդեհի հալածման քրիստոնէից եւ առաւել եւս բորբոքեցաւ ՚ի սաղրելոյ գազանաբարոյ գահակցի նորին Դիոկղետիանոս Գաղերիոյ (292)։ Ցառաջին 18 ամսն Դիոկղետիանոս էր եկեղեցին ՚ի մեծի յաջողութեան, եւ յամենայն քաղաքս տէրութեանն կային քրիստոնեայք եւ եկեղեցիք, եպիսկոպոսունք էին մեծարոյ առաջի գործակալաց տէրութեանն, եւ կայսրն իսկ ակն ածէր ՚ի քրիստոնէութենէ։ Սակայն երեւէր ե վառաբերութիւն, հեռ ե նախանձ ՚ի մէջ քրիստոնէից ե նոցին հովուաց, որովք արժանի իսկ էին խրատուելոյ յԱստուծոյ հալածանօք, որպէս ասէ Եւսեբի։

Դիոկղետիանոս զառաջինն միայն զմանիքեցիսն հալածէր երբեմն աղանդ ինչ պարսկային մտեալ ՚ի սահմանս Հռոմայեցւոց, տուեալ հրովարտակ զգլխաւորս նոցա այրել հանդերձ գրովք նոցին, եւ զհետացեալսն սպանանել։ Սակայն Գաղերիոս առեալով քրիստոնէութեան՝ չրջեաց զմիտս Դիոկղետիանոսի եւ վճռով սահմանեցաւ առհասարակ հալածումն եկեղեցւոյ։ Ի սմին ժամանակի անունն անդամ երուսաղէմի այնպէս մոռացեալ էր, մինչեւ ան ՚ի վկայից պատասխանել ումեմն Կառավարչի Հռովմայեցւոց՝ եթէ իցէ ինքն յերուսաղէմ, կարծեաց նա թէ բանք վկային են զքաղաքէ միոջէ գաղտն կառուցելոյ ՚ի քրիստոնէից (303)։ Ելին այլ եւ այլ հրովարտակք, եւ տեւեաց

դժնդակ կոտորումն անմեղաց մինչեւ ՚ի ժամանակս Մեծին Կոստանդիանոսի (313)։ Եւ ինքեանք բռնաւորքն, որ ընդդէմ Քրիստոսի ոգորէին, չարաչար մահուամբ ելին ՚ի կենաց ասի։

Ցետ այնորիկ Կոստանդիանոս դիմեաց առ Աստուածն Քրիստոնէից, զոր մեծարէր հայր իւր, զի ցուցցէ նմա զաջ իւր աղաւիւ ՚ի բռնութենէ Մաքսենտեայ։ Եւտս յերկինս զնչան լուսեղէն խաչին եւ գիր թէ՝ Այս՝ յաղթեա՛ կամ յաղթեցո՛։ Եւ ՚ի գիշերին յայնմիկ երեւեցաւ նմա Քրիստոս նովին նշանաւ եւ հրամայեաց առնել զնմանութիւն նորա եւ տանիլ առաջի զօրուն։

Այսպէս եհար Կոստանդիանոս զնզօրագոյն գունդն Մաքսենտիոսի, եւ բազումք ՚ի թշնամեաց սատակեցան ՚ի գետն Տիբերիս, ընդ որս եւ ինքն Մաքսենտիոս հանդերձ երիվարաւ։ Ապա եւտն հրովարտակ Կոստանդիանոս եւ Լիկինիոս ընդունել Քրիստոնէից միաւանդամ զխրաւունս իւրեանց եւ աղաւտութիւն պաշտել զԱստուած որպիսի օրինական եւ կամիցին։ Մեծարուե լինէր Կոստանդիանոս խաղաղասէր օրինօք, իսկ Լիկինիոս անառակութեամբ եւ նոր հալածանօք լինէր ատելի ամենեցուն։ Խափանեաց զպաշտամունս Քրիստոնէից, սպան եպիսկոպոսունս բազումս եւ ժողովրդականս, ընդ որս եւ զօրականս 40 ՚ի Սեբաստիա Հայոց։ Եւ զի կատաղեալ էր ընդդէմ Հայոց վասն քրիստոնէութեան նոցա, կոտորեաց զբազումս ՚ի զօրաց նոցին ՚ի կողմանս Նիկոմիդեայ։ Ցետ սպանանելոյ զեպիսկոպոսն Սմասիոյ զՍ. Վասիլիոս եւ սպասաւորելոյ ՚ի Կոստանդիանոսէ, ժողովեաց զօրս ընդդիմանալ պատերազմաւ, և ցրտացեալ ՚ի սիրոյ Տրդատայ մերոց Թագաւորին, որպէս արդարեւ ՚ի թշնամւոյ. քանզի գիտէր թէ առելի է արդարոյն ամենայն ամբարիշտ. Խոր. Բ. 85։ Պարտեցաւ Լիկինիոս և ՚ի Բիւզանդիոն սպանաւ երբեմն դաւաճան (313)։ Բարձան, անհետ եղեն ամենայն հալածիչք ՚ի միջոյ. ընկալաւ եկեղեցի խաղաղութիւն եւ Կոստանդիանոս եհան զհրաժանեալ տէրութիւնն Հռովմայեցւոց և սիրեաց մեծաւ զօրութեամբ միահեծան (324)։ Սիրէր և մեծարէր զքրիստոնէութիւնն. եւտ բազմապատիկ օրէնս եւ սպա-

հարկ տրար զկղերն եկեղեցւոյ, չնորհեաց զայլ և այլ իրաւունս հովուացս նորին, երարձ և զհեթանոսական աղտեղի սովորութիւնս, մանաւանդ զղօհս կռոց, և հուսկ ուրեմն ետ վակել զմեհեանս և փոխանակ նոցա կանգնել զեկեղեցիս յամենայն տեղիս։

Շիջաւ հրդեհն հեթանոսական, և սկիզբն առ զարդանալ և բարգաւաճել կրօնն աստուածպաշտութեան· սակայն հակառակութիւնք վաւամով եպիսկոպոսաց՝ հովիւ և առաջնորդ կոչեցելոց՝ վրդովեաց զխաղաղութիւնն· զի արդէն երեւեալ էր մոլորութիւն Դանաեանց յամի 311։ Թէպէտ բաղում անգամ՝ ի ժողով գումարեալ քննեցան առաջի կայսեր հակառակութիւնք և անհաստատութիւնք, այլ չեղեւ հնար միաբանել նոցա, որ եւ տեւեաց մինչեւ երեւումն Արիանոսութեան, որոյ սկզբնահայր եկաց Արիոս Աղեքսանդրացի կամ Լիբիացի։ Սա ձեռնադրեցաւ Սարկաւագ՝ ի Պետրոս եպիսկոպոսէ Աղեքսանդրացւոց և մերժեցաւ նզովիւք· իբրեւ աղաչեցին ժառանգաւորքն արձակել զնա՝ ի կապանաց նզովիցն, պատմեաց նոցա ըզհրաշալի զյայն տեսիլ, «Տէր, ո՛վ պատառեաց զպատմուճան քո, ասէ, Արիոս։ Իսկ Ակիւղաս յաջորդն Պետրոսի խոթեաւ՝ ի պատիր բանից Արիոսի, ընկալաւ զնա և ձեռնադրեաց երէց։ Իբրեւ յաջորդեաց յաթոռն Աղեքսանդրոս, ծանրացաւումն եղեւ Արիոս, զի ինքն ակն ունէր նոքա՛ կալ յաթոռն հայրապետական· եւ սկիզբն առնէր այնուհետեւ քամահրել զձշմարիտ վարդապետութիւնն Աղեքսանդրոսի եւ հրապարակաւ սերմանել զիւր հայհոյութիւնն, եւ՝ ի մոլար վարդապետութեան իւրում ասէր, «Որդին Աստուծոյ ոչ է հաւասար Հօր, և ոչ՝ ի բնութենէ և յէութենէ Հօր, ոչ միասնական և ոչ հանդիսատասարեան նմին, ոչ ծնեալ՝ ի նմանէ յառաջ քան զյաւիտեանս, այլ օտար ինն և կրտսեր եւ յետ ժամանակի գոյացեալ որպէս զարարած բնութիւն, և անդրանիկ ամենայն արարածոց, և նոքա՛ արարեալ զամենայն արարածս»։ Նոբե· Բ· 86։ Զեռնտու և օգնական գտաւ սմա և Եւսեբիոս եպիսկոպոս Նիկոմիդեայ։ Աղեքսանդրոս նզովիւք զատապարտեաց զԱրիոս եւ զհամախոհս նորա՝ ի ժողովի 100 եպիսկոպոսաց (321), եւ սիւնհոդոսական թղթով ծանոյց զիրս համօրէն

եկեղեցւոյ։ Զոքաւ Արիոս՝ ի Պաղեստին, այլ Մակար Հայրապետ Երուսաղէմի ոչ ընկալաւ զնա, և անտի մեկնեցաւ՝ ի Նիկոմիդեա՝ ի կոչ Եւսեբիոսի բարեկամին իւրոյ։

Գումարեցաւ ժողով վասն այսր հրամանաւ Կոստանդիանոսի 318 Հայրապետաց՝ ի Նիկիա Բիւթանացւոց (325)։ Զկնի Հայրապետացն Աղեքսանդրեայ, Անտիոքայ, և Հայոց, երեւելի էր և Մակար Հայրապետն Երուսաղէմի, յորոյ առնուանէ անգամ սարսէր Արիոս· քաջասիրտ հանդիսացաւ՝ ի ժողովի անդ Աթանաս Սարկաւագն եպիսկոպոսին Աղեքսանդրիայ· մերժեաց ժողովն զվարդապետութիւնն նոր· ընկեցաւ մերժեցաւ Արիոս՝ ի հաղորդութենէ եկեղեցւոյ և հրամանաւ կայսեր աքսորեցաւ՝ ի Լիւբիկէ, և գիրք նորա մաշեցան՝ ի հուր։

Իսկ Կոստանդիանոս եւ՝ ի Հռոմայ, և ընտրեաց զԲիւզանդիոն քաղաք քրիստոնէից՝ ի միջոց վայրի Ասիայ եւ Եւրոպայ· մեծացոյց զքաղաքն, զարդարեաց ապարանիւք, ՝ի գեղեցիկ սրահի չքեղ կայսերական պալատանն կանգնեցաւ Խաչ ոսկի ընդելուզեալ ակամբք պատուականօք· գեղեցկագոյն քան զամենայն եկեղեցիսն, եկեղեցի Առաքելոցն էր։ (330 կամ 334)։

Նախ քան զորդին իւր արդէն ելեալ էր՝ ի պալատանէն Դչխոյն Հեղինէ 79 ամեայ գնալ՝ ի Պաղեստին, ուր եգիտ ձեռնտու և օգնական իւր զմակար Հայրապետ Երուսաղէմի, և բուռն հար գտանել սրբել զՁնօրինական Ս· Տեղիսն, որ պղծեալ և ծածկեալ էին հեթանոսական պաշտամունք· երարձ զարձանս կռոց զնգեալսն յԱդրիանոսէ· եգիտ զԳերեզմանն Ս· եւ զայլ տեղիս (326)։ Ապա զհետ եղեւ խնդրել փափաքելի տենչմամբ զկենսատու փայտ Խաչին Քրիստոսի ծածկեալն՝ ի Հրէից, եւ՝ ի հարցանել խոշտանգանօք զխորամանկ Հրէայն ցուցանել զտեղի Սրբոյ Խաչին, նոքա յառաջ մատուցին զՇուքա իբրեւ առաւել տեղեկագոյն հնութեան։ Այս Շուքա էր ազգաւ Հրէայ բնակեալ՝ ի Պաղեստին հանդերձ մեծ իւրով Աննային, և էր ինքն ծանուցեալ՝ ի մէջ Հրէից իբրեւ այր առաքինի և բարի՝ ի կարգի աւանդապահ երկայնատոհ և աւանդութեամբ առանձին ցեղին իւրոյ համարեալ էր յազգականութենէ տանն Ս· Ստեփաննոսի նախավկային։

և էր տեղեակ քան զայլ երուսաղէմացիս յիշատակութեան անցիցն անցելոց ընդ Յիսուս Քրիստոս և ընդ աշակերտս նորա։

Ապա եցոյց Յուդա զտեղին յոր արկեալ էին Հրէայք զՅաչափայան եւ ծածկեալ ընդ աղբիւրօք· յետ բազում յուզմանց եւ բառնալոյ զՀոգին գոին զերիս խաչսն հինգ բեւեռօք, յորոց բժշկութեամբ պատանեաց մերձ մեռելոյ ընտրեցեալ խաչն Քրիստոսի։ Եւ ինքն Յուդա հաւատացեալ՝ ի խաչելեալն Քրիստոս՝ մկրտեցաւ Հանդերձ մարդն, եւ ըստ սահմարութեան Հեղինեայ կոչեցաւ Կիւրեղ եւ ձեռնադրեցաւ յեպիսկոպոսութիւն մերձ քաղաքացն Պաղեստինոյ, և որպէս կարծի, նստաւ առ ժամանակ մի եւ յԱթոռն Երուսաղէմի զինի Մակարայ կամ՝ ի ժամանակս աքսորանաց մեծին Կիւրղի։

Կանգնեցան Հոյակապ տաճարք՝ ի Ս· Տեղիս յերուսաղէմ և արտաքոյ նորին հրամանաւ Մեծին Կոստանդիանոսի և մօր նորա Հեղինեայ՝ ի Տրդատայ արքայէն Հայոց։ Կանգնեցաւ Տաճար փառաւոր՝ ի տեղի Գիւտի Խաչին իրրեւ շինուած նորին Հեղինեայ։ Իսկ Մովսէս Կաղանկատուացի պատմիչ եօթնևերորդ դարու, նկարագրէ ըզՍուրբ Տեղիս և զեկեղեցիս Երուսաղէմի· Եւ վասն այսր տաճարի ասէ· Եկեղեցին կաթուղիկէ, որ մատուռն անուանի որ է Գիւտ Խաչին· 65 սիւն վեր և՝ ի ներքոյ երկայնութեան· Պաս· Աղաւն· Հաս· Ա· 421։ Աւերակք եկեղեցւոյս այժմ նշմարին յարտաքուստ՝ զոր աւերեցին Սուլթանք Եգիպտոսի՝ ի ժամանակի իշխանութեան խրեանց, եւ յետոյ՝ ի տեղի նորա կառուցեալ է եկեղեցի փոքր՝ ի վերայ չորից սեանց յանուն Ս· Լուսաւորչի և է՝ ի ձեռս Հայոց։ Ապա սկիզբն եղեւ շինելոյ մեծ և փառաւոր եկեղեցի յանուն Ս· Յարութեան՝ ի վերայ Գերեզմանին Քրիստոսի։ Լատին պատմիչք ասեն թէ Կոստանդիանոս յետ կատարելոյ զքառանամեակն իւր գրեաց առ Մակար Եպիսկոպոսն Երուսաղէմի չինել այնպիսի Հոյակապ եկեղեցի՝ ի վերայ Գերեզմանին Քրիստոսի, մինչ ղի գեղեցկութեամբ եւ պայծառութեամբ եւս քան զերս գերազանց փայլիլ քան զամենայն Տաճարս որ յամենայն տեղիս· Թէպէտ մայր նորա Հեղինէ ոչ եռեւս զկատարումն նորին, զի յետ

մահուն Հեղինեայ՝ Կայսրն՝ ի գլուխ եհան զայն գործ եւ արար մեծաւ փառօք նաւակատիս այնր Տաճարի՝ ի ձեռն մեծահանդէս Ժողովոյ Եպիսկոպոսաց, զորմէ յետոյ։ «Անճնաչելի կենարարին Քրիստոսի լայնութիւն տապանափորած վիմին գերեզմանէն· եւ՝ ի վերայ եկեղեցւոյն, որ չինեալ է 100 կանգուն բարձրութիւն եւ 100 լայնութիւնն՝ բոլոր յայս և յայն կողմն երկոտասան սիւնք ներքոյ և 12 ՝ի վերոյ վերնատանն· և յայն վերնատանն գեղարդն եւ սպունգն և սիաբատակն Քրիստոսի պատեալ ոսկւով»· տես անդ Մովսէս։ Այս Տաճար յետ կրելոյ զանազան փոփոխմունս յայլ և յայլ դարս մինչ՝ ի վերջին հրկիզումն 1808· վերին եւ ստորին կամարքն կացեալ էին դարձեալ՝ ի վերայ 12 մարմարեայ սեանց և ոմանք եւս զոյդ· այժմեան գմբէթն մեծ ամառնայ՝ ի վերայ 18 թուականէ քարեայ սկսեալ։

Կանգնեցաւ տաճար՝ ի լեառն Ձիթենեաց՝ ի տեղի Համբարձման Տեառն յար և նման Տաճարին Ս· Յարութեան, ուր եւ յայտնի աքանչելիք ցուցան· զի՝ ի սալայատակել զտաճարն՝ անհնարին եղև շինողաց ծածկել քարամբք զերկու ոտնաչափ տեղիս Քրիստոսի, որպէս և ոչ զվիճնայարկին գմբեթին զուղղահայեաց՝ ի նոյն վայր կարացին ծածկել, որով յայտնի եղեւ ոտնատեղին եւ ճանապարհ վերելից Փրկչին մերոյ՝ ի պահու Համբարձման։ Կանգուն եկաց եկեղեցին Համբարձման մինչեւ 1212 դար, և ապա կործանեցաւ ասէ Լատին պատմիչն՝ ի ղինուորաց Սուլթանին Եգիպտոսի· ուր յետոյ առաքինի ձեռամբ՝ ի պատիւ տեղւոյն շինեցաւ մատուռն գմբէթաւոր ութ անկիւնի մարմարիոն սեամբ և խոյակօք։

Կառուցաւ և տաճար կրկին՝ ի վերոյ գերեզմանի սուրբ Կուսին Մարիամու՝ ի ձորն Գեթսեմանի և միջավայրի աստիճանացն յարեւելս են գերեզմանք Յովակիմայ և Աննայի, եւ յարեւմուտս յանդիման նոցին գերեզման Յովսեփայ Աստուածահայր կոչեցելոյ· ՝ի ներքին եկեղեցին, որ պահի ցարդ հնութեամբ խրամ, իջանի 48 աստիճանաւ· գիրք եկեղեցւոյն է խաչաձեւ կամարակապ առանց գմբէթի, և յարեւելեան բազկի է գերեզման Ս· Կուսին փոքր գմբէթիւ·

իսկ վերին եկեղեցին ասեն Լաստինք Թէ քանեալ աւերեցաւ յԱրաբացւոց· պատուական քարինք եւ սիւնքն փոխադրեցան 'ի շինուած մզկիթին Օմարայ և պարսպի քաղաքին, թեպետ յաւուրս Խալիփայութեան Ապալ—Մելիքայ որդւոյ Մրվանայ, շինողի մզկիթին Օմարայ իբր յեօթներորդ դարու։

Ապա ետ կառուցանել եւ Տրդատ արքայն Հայոց եւ զվանս Բեթղեհէմի հանդերձ եկեղեցեաւն 'ի վերայ տեղոյն ծննդեանն Քրիստոսի։ Տես Յայսմաւուր յԱպրիլի 12· որպէս ազգային աւանդութիւն է· և կամ հիմն արկ Հեղինէ եւ Տրդատ կատարեաց զայն իբր ծախիւք նուիրեալ յանուն Սուրբ Աստուածածնին· զառաջին ձեւ եկեղեցւոյն այսպէս նկարագրէ Պատմիչն Ագաթանգեղոս· «Զամէ մեծութեան եկեղեցւոյն 200 կանգուն յերկայնութիւնն և 100 'ի լայնն՝ 90 սեամբք մարմարիոնովք, քարեայ կամարակապ։ Եւ ներքոյ բեմին Ս· Այրն և Մսուրն, ուր սեղան է և պատարագ մատչի»· Եղէս 422։ Այժմ կորուսեալ է եկեղեցին զառաջին ձեւն, զորոյ զոսխտակամած վայտակէզն ձեղունն ամրառնան միայն 50 յաղթ սիւնք, և սադաչէնն վայտակերտն է կապարածածք, եւ եկեղեցին խաչաձեւ· արտաքին դրունքն խոխանեալ են բաց 'ի միոյն, զորմէ լիցին բանք մեր 'ի տեղւոջ իւրում։ Ի կարգի շինութեանց եկեղեցեացն Ս· Տեղեաց և ժամանակակից նոցին գտանի և վեհաւոր եկեղեցին կառուցեալ 'ի վերայ շիրմի գլխոյ Մեծի աւազելոյն Յակոբայ, որդւոյն Զերեբեայ ծախիւք արքային Հայոց մեծին Տրդատայ սակս բնակութեան կրօնաւորացն Հայոց· նոյնպէս և եկեղեցիքն սրբոց Հրեշտակապետաց և սուրբ Փրկչի 'ի նմին դարու։ Առաջինն կառուցեալ է 'ի տեղի տան քահանայապետին Աննայի, ուր ածաւ նաև Քրիստոս կապանօք 'ի դիչերի մատնութեան՝ եւ առաքեցաւ առ Կայիափա· ասա է առաջին բանն Քրիստոսի և Զիմէոնին յոր կապեցաւ· երկրորդն 'ի տեղի տան քահանայապետին Կայիափա, ուր է երկրորդ բանն Քրիստոսի։ Զամանէ ասէ և պատմիչն Ագաթանգեղոս Մամիէս, «Ցահեկէ Սիոնի բանան, ուր զՔրիստոս արդելին· անդ տեղան է և պատարագ մատչի»։

Մնացորդք ճարտարապետական շինուածոց Ս· Յակոբայ

և Հրեշտակապետի վանաց յայտ առնեն լինել գործ այնմ դարու· սակայն վանք Փրկչին կորուսեալ զառաջին հընութիւն իւր, զորոյ և լիցին բանք մեր յընթացս պատմութեան։

Իսկ Թագուհին Հեղինէ յետ կալոյ ժամանակս ինչ յերուսաղէմ և կատարելոյ զաստուածահաճոյ բարեգործութիւնս, և մատուցանելոյ զչերմեռանդ աղօթս 'ի Տնօրինական տեղիս Քրիստոսի, դարձաւ առ որդին իւր 'ի Նիկոմիդեա, 'ի ճանապարհին ցուցեալ անթիւ բարիս յաղքատս և յեկեղեցիս, ուր և մեռաւ խակ 'ի հասակի 80 ամաց, (327 կամ 328), խրատելով զորդին կալ մնալ յԱստուածպաշտութեան, եւ խնդրելով յԱստուծոյ զչնորհս վասն նորա։

Այն ինչ յանգ ելանէր շինութիւն եկեղեցեացն Ս· Տեղեաց, Մակար[1] Հայրապետ Երուսաղէմի վախճանեալ թաղեցաւ անդ 'ի Սիոն, որոյ գերեզմանն ցարդ անյայտ մնաց, որպէս այլ Հայրապետաց և կաղաւ զԱթոռն Մաքսիմոս։

Դարձաւ Արիոս յաքսորանաց՝ խաբեալ զկայսրն չողմարար բանիւք եւ երկդիմի դաւանութեամբ։ Եւսեբիոս Նիկոմիդացի 'ի պատճառս տեսանելոյ զչինութիւն Տաճարին Ս· Յարութեան՝ եկն յԱնտիոք (330)· և ժողովով եպիսկոպոսաց կղզման իւրոյ արկ զնեստաթիոս եպիսկոպոս յԱթոռոյ, և ընդ նմա նզովեալ դատապարտեցան յաքսորս բազում երիցունք, սարկաւագունք և եպիսկոպոսունք։ Դատապարտեցաւ և Աթանաս 'ի ժողովին Տիւրոսի, զոր դումարեաց Եւսեբիոս Նիկոմիդացի· ընկեցաւ յԱթոռոյն եւ արդելաւ նմա դառնալ յաղէքսանդրիա· իսկ Աթանաս

---

[1] Այն սա Մակար 'ի խնդրոյ Ս· Վրթանիսի Հայոց Հայրապետի առաքեաց Թղթով 8 կանոնական բանս սակս բարեկարգութեան եկեղեցւոյն Հայոց։ Զբնական Թղթոյն և կանոնական բանից աւանդէ 'ի դիս Յովհաննես Խոստաւորի, որպէս յառաջ բերէ Հ· Մ· Չամչեան։ Սա կոչի Մակար վախճանի յամի 333· իսկ Ս· Վրթանէս կալաւ զԱթոռն յամի 350· կամ 342· յորմէ կրնաւ Թէ Մակար ժամանակակից է Արիոս. սակի և ոչ Վրթանիսի· և երկարեան գտան 'ի ժողովն Նիկիոյ· ուստի կամ Մակար առաքեաց զայն առ Արիստակէս· և կամ յաջորդն Մակարայ առ Վրթանէս· Թէպետ չտեղիք հակառակիլ աւանդութեանց նախնեաց մերոց։ Պատմ· Հայոց· Ա· 422։

զերծաւ 'ի Կոստանդինուպոլիս : Ժամ էր Սիւնհոդոսին Ա-
բիսոսականաց երթալ, ըստ յանձն արարելոյ Կայսեր , յե-
րուսաղէմ 'ի Նաւակատիս Եկեղեցւոյն Ս · Յարութեան :
Ցետ այնքան անամօթութեանցն մատեան եւսեբեանք 'ի
գերեզման Տեառն, ընդ որս էր և Մաքսիմոս եպիսկոպոս
տեղւոյն : Իբրև կատարեցաւ օրհնութիւն Նաւակատեացն,
անդ ընկալան զԱրիոս 'ի հաղորդութիւն Եկեղեցւոյ , եւ
առաքեցին Թուղթ սիւնհոդոսական առ եկեղեցին Աղէք-
սանդրացւոց՝ Թէ արդար գտաւ Արիոս և ուղիղ դաւա-
նութեամբ , եւ ոչ պատկառեցին իսկ ասել , Թէ յորդո-
րեաքը 'ի բանից Կայսեր ընկալան զԱրիոս : Սակայն փու-
թով եհաս անդ հրաման Կայսեր , և փութացուցանէր ըղ-
սիւնհոդոսն գալ 'ի Կոստանդինուպոլիս : Ամբաստանեալ
Աթանաս յեսիբեանց աքսորեցաւ . և իբրև կամէին մու-
ծանել զԱրիոս ընդ մեծաւ և ամբոխիւ եկեղեցի , որպէս
մուծիչն յերուսաղէմ , սատակեցաւ 'ի ճանապարհին 'ի
գարշելիսն իւր , եւ այս յաւէտ աղօթիւք Ս · Յակոբայ
Մծբնայ Հայրապետին , որ յայնժամ 'ի քաղաքին գիսկե-
ցաւ (336) :

Ցետ այնորիկ վախճանեցաւ և Կայսրն Կոստանդիանոս
յաւուր Պենտեկոստէից (22 Մայիս · 337) 'ի հասակի 64 ա-
մաց , և թաղեցաւ 'ի կայսերական չիրմին 'ի գաւթի անդ
Եկեղեցւոյ Առաքելոցն :

Այլ յաղագս մկրտութեան Կոստանդիանոսի՝ խնդիր է
'ի նախնի և արդի մատենագիրս . զի Ագաթանգեղոս , Խո-
րենացի , և այլ տոհմային պատմագիրք՝ աւանդեն Թէ նա
'ի սկզբան հաւատալն 'ի Քրիստոս մկրտեցաւ 'ի Սեղբեսար-
բոսէ եպիսկոպոսէն Հռոմայ : Իսկ այլք յառաջ բերեն Թէ
Կայսրն ցանկացեալ էր մկրտիլ 'ի Յորդանան , սակայն ոչ
ժամանեաց այնմ , այլ ընկալաւ զայն յԵւսեբեայ Նիկոմի-
դացւոյ , որ էր դրօշակակիրը Արիանոսաց՝ եւ այն մերձ 'ի
վախճանի իւրոյ . և այսպէս 'ի բազմանալ վիճմանց , խըն-
դիրն մնաց կնճռոտ և անլուծանելի : Սակայն Քրիստոնեայք ,
մանաւանդ ուխտաւորք երուսաղէմի՝ ոչ միայն յառաջին
դարուն ցանկային մկրտիլ 'ի Յորդանան , այլ և նոյն սովո-
րութիւն պահեցաւ եւ յայսդայ ժամանակի . ո՛չ միայն
ուխտաւորք Յունաց առնէին զայս , այլ և Հայոց . որպէս

է տեսանել 'ի Թուղթն Կոմիտասայ կաթուղիկոսի գրեալ
առ Մովսէսոս Երզից տեղապահ Երուսաղէմի , ուր յետ այ-
լոց բանից ասէ · « Մկրտէին զմարմինս 'ի ջուր սրբութեան
'ի Յորդանանու յորձանան հրաղէզս » : Սեբեոս · 137 : Զնոյն
յայտ առնեն և զանազան հրովարտակք Եգիպտական եւ
Օսմանեան Սուլթանաց տուեալ սակս ուխտաւորացն Հա-
յոց , խաղաղութեամբ և առանց իւիք ինասու երթեւեկել
անդ : Սակայն մկրտիլն 'ի Յորդանան ոչ է պարտ խմա-
նալ զսորհրդաւոր մկրտութիւնն , զոր ընդունին երախայք
զկնի ծննդեան իւրեանց յաւազանէ ըստ կանոնի ընդհա-
նուր եկեղեցւոյ . այլ լոկ լուանիլ 'ի ջուր անդր՝ ուր մե-
կըեբեցաւ Քրիստոս , ապա Թէ ոչ ակնկալութեամբ մկըր-
տութեան 'ի Յորդանան , անկարելի լիներ ամենեցուն
հասանել 'ի վերկութիւն : Այս սովորութիւն պահի առ
Յոյնս մինչեւ ցայսօր ժամանակի , և ուխտաւորք նոցին
իբրաքանչիւր տարւոյ անխափան երթան 'ի գետ անդր :
Բայց Հայք նեղեալ յերեսաց բազմադիմի ազատուց՝ 'ի մերձ
ժամանակի խափանեցին զայն , և մի միայն 'ի տարւոջ մի-
անգամ ասն բերել ջուր 'ի գետոյ անտի Յորդանանու և
բաժանեն յուխտաւորս , այս է սովորութիւն Երուսաղէմի :
Զայն պարտ է խմանալ եւ զասն մկրտութեան Կոստան-
դիանոսի , ասել Թէ ոչ՝ չէր օրէն եկեղեցւոյ դասել 'ի
կարգս տօնելի Սրբոց զայնպիսի ոք , որ մկրտեալն էցէ
յԱրիանոսաց · զայս չափս բաւական համարելով՝ Թողուք
այլոց ընդարձակ մտաց քննել զայս խնդիր որչափ եւ
կամին . տես վասն այսր նաեւ 'ի Վարս սրբոց , 'ի Յանո-
Թութիւնս . Հայ · ժ · 385 :

Ցետ գրելոյ մեր զայդ ինչ բանս սակս մկրտութեան
Կոստանդիանոսի , ասացաւ ակաւուք և յաղագս չինաս-
Թեան Սուրբ Տեղեաց :

Պատմութիւն և բանք նախնի և արդի Մատենագրաց ,
յաղագս չինութեան Եկեղեցեաց 'ի Ս · Տեղիս յերուսաղէմ ,
առ հասարակ հիմնեն 'ի վերայ Կոստանդիանոսի եւ մօր
նորա Հեղինեայ . նոյնն տեսանի 'ի Պատմութիւնս եւ 'ի
Ճառ ընտիրս Հայոց . Թէպէտ ուրեք ուրեք պահեն Ազգային
յիշատակութիւնք և աւանդութիւնք : Ի սկզբան չորրորդի
դարուն , յոր հաւատացին 'ի Քրիստոս Տրդատ արքայ

Հայոց և Կոստանդիանոս կայսրն Հռոմայ, արդէն զաշնակից էին ընդ միմեանս ՚ի քաղաքական իրս, առաւել եւս զօրացաւ այն սէր և ընտանութիւն նոցին ՚ի քրիստոնէութեան. զի եթէ ունէաք ՚ի ձեռին զհաւատարիմ և զանեղծ օրինակս Ագաթանգեղեայ և Թղթոյն դաշանց, պարզ եւ մեկին յայտնի լինէր խնդիրն. սակայն եւ նա այնպէս անաստղ եւ աւերդ բառից կոստակութեամբ աղտաղեալ է, որ եթէ դոյլ ՚ի նմա ստոյգ ինչ՝ այն եւս համարի լինել կասկածելի և ՚ի կարգի ստութեան. Զի եթէ էին առ այս ստուգագոյն յիշատակարանք, այնոքիկ եւս չհասին ՚ի ձեռս մեր, միայն Յայտնութիւն Ապրիլ 12 ՚ի վարս Տրդատայ ասի՝ թէ սորա է կառուցեալ զվանս Բեթղեհէմի եկեղեցեաւն հանդերձ և զայլ եկեղեցիս յերուսաղէմ. եւ ՚ի գիրս 70 վանօրէիցն Հայոց յիշատակին եկեղեցիք և վանօրայք յանուն Տրդատայ, յորոց ոմանք յայտնեցան ՚ի ժամանակս մեր Հայեցի վերատաւութեամբ, զորս ունիմք յիշել ՚ի կարգին, թէպէտ Հ. Մ. Զամչեան իբրեւ առասպելս վարկանի զնոսա. Պաթ. Հայ. Ա. 650։ Այլք ասեն թէ Հեղինէ հիմնարկեաց զեկեղեցին Բեթղեհէմի, և Տրդատ արքայ ՚ի գլուխ եհան զայն գործ. զի Հեղինէ 79 ամեայ եկն յերուսաղէմ և 80 ամեայ մեռաւ ՚ի Նիկոմիդեա. յայտ է թէ այնպիսի մեծակառոյց չինուած՝ չէր գործ միոյ կամ երկու տարւոյ, զի միայն 90 յաղթ սիւն պատրաստել բաւական ժամանակի պէտս ունի. Թէպէտ օտարազգիք ոչ ինչ ակնածելով ՚ի սիրոյ և ՚ի մեծարութենէ Կոստանդիանոսի և Տրդատայ, առ նախանձու և աւերութեան յորժամ լսեն զանուն արքային Հայոց գծաղուս գան։ Իսկ վենետիկեան Հարք, որք հանապազ դեղերին ՚ի գիրս գտանել յարացոյց ինչ մեծարման եւ ընտանեկան սիրոյ և կապակցութեան ՚ի միջի երիւց թագաւորաց, յառաջ բերեն պարբերական բանս ՚ի դատաստանական գրոց Ինքնակալին՝ այսպէս. « Ինքնակալ Կոստանդիանոս օգոստոս առ Պրոկղիանոս (հազարապետ արքունի)։ Բաց առանին իրաց մերոց, և ՚ի կամ ուղիկ եկեղեցեաց, և ՚ի տանէ պայծառայիշատակ եւսեբիոսի՝ որ երբեմն հիւպատոսն էր և Մագնատոս այրուձիոյ, և Արշակայ (կամ Արշակունւոյ) Հայոց արքայի՝ ոչ ոք այլ ՚ի

մերմէ հրամանէ օժանդակեսցի գլխաւոր պատարութեամբք ընտանեկան ընչից ». Վ-րք Սբ-ց. Գ. 479։

Զայսպիսի ընտանութիւնս ունէին յայնժամ Հռոմայեցիք առ Արշակունի հայս, և այսպիսի եղանակաւ սկիզբն արարին չինել զՍ. Տեղիս յերուսաղէմ իբրեւ կայսր եւ թագաւոր սիրոյք ազգաց և ժողովրդոց, և կամ իբրեւ հարք հասարակաց, յորս անխտիր կատարել գիտէին ըզպաշտամունս ընդհանուր քրիստոնէից։ Ասել յայտնի երեւի թէ ոչ ՚ի սեպհականութիւն միոյ ազգի և ժողովրդեան չինեցան Ս. Տեղիքն, այլ ընդհանուր քրիստոնէութեան։ Եւ ՚ի սմին անխառն բարեպաշտութեան գործս, լցեալ Պաղեստին եկեղեցեօք եւ վանօրէիւք ամենայն ազգաց ՚ի պարծանս քրիստոնէութեան, անխտիր պաշտել զԱստուած կենդանի առանց քննելոյ զիւրն և կամ զընկերին։ Սակայն ՚ի կէս հինգերորդի դարուն՝ յորում գումարեցաւ ժողովն Քաղկեդոնի, առաջին երջանկութիւնն վտեսեցաւ ՚ի թշուառութիւն. անկաւ խաւար ՚ի կրօնս ազգաց, անկցելի երկպառակութիւն եւ բաժանումն ՚ի մէջ եկեղեցւոյ, սաստկացաւ ազգ առ ազգ եւ տէնչանք տիրապետութեան նաեւ ՚ի Ս. Տեղիս, մինչեւ հալածել զկրօնաւորս և յաչխատակել զվանօրայս նոցին։

ԳԼՈՒԽ Ը.

Վիճակ եկեղեցւոյ։ Կիրակոս երուսաղէմցի։ Երեւումն Սրբոց Խաչին յերկինս։ Յաւելուածս և հակառակութիւնք նորին ընդդէմ Քրիստոնէից։ և սատակումն նորին ՚ի Պարս։

Եկեղեցւոյ Քրիստոսի իբրեւ նաւ ալեկոծեալ յանդրին ծովու տատանէր եւ տագնապէր յերեսաց գառնաչունչ հողմոց և խառնակ մրրկաց Արիանոսաց և այլ զանազանաւորաց ժամանակին։ Քանզի ՚ի մեռանել Մեծին Կոստանդիանոսի՝ թագաւորեաց յարեւելս որդի նորա Կոստանդիոս. ընդ այլ եպիսկոպոսաց աքսորէլոց՝ դարձաւ և Ս. Աթանաս յաթոռ իւր Աղեքսանդրիա (340)։ Սակայն յետ սակաւուց Կոստանդիոս ջատագով և պաշտպան

եկաց Արիանոսաց, և եղեւ առիթ խռովութեանց և տարբերութեանց բազմաց. զի վերստին վարեցան ուղղափառ եպիսկոպոսունք յաթոռոյ տառապանաց և լկանաց, ընդորա և Աթանաս. եւ՝ ի տեղի նոցա եդան Արիանոսք։ Զի՝ ի մտանել Գէորգեայ եպիսկոպոսի Կաղադովկացւոյ յեկեղեցին յԱղէքսանդրիա հեթանոսական ամբոխիւ յաւուր ծննդի Զատկին, և յաւարի առնուլ զայն և անարգել ընդ սրբութիւնն Աստուծոյ, Աթանաս խոյս ետ անտի և մեկնեցաւ՝ ի Հռոմ (350)։ Իսկ Մաքսիմոս եպիսկոպոս Երուսաղէմի խոստովանող առաջնեալ, զի՝ ի ժամանակս հալածանաց ղրկեալ էր յաջոյ ականէ, որպէս և աջոյ սրունքն ջալխեալ վասն՝ ի Քրիստոս հաւատոյն. ձգեցաւ՝ ի Ժողովն Տիւրոսի յեւսեբեանց ընդդէմ Աթանասի. նայնպէս հարկեցաւ եւս առաջնակաց դասանել՝ ի միւս ժողովն Երուսաղէմի ընդդէմ նորուն Աթանասի զկնի կատարման նաւակատեաց Տաճարին Ս. Յարութեան, յորում ընկալաւ զԱրիոս, որով համարեցաւ՝ ի կարգի Կեսարիոսեանց։ Սա ձեռնադրեաց զՍ. Կիւրեղ սարկաւագ՝ ի քահանայութիւն եկեղեցւոյն Երուսաղէմի, եւ նա հոգեբուղխ վարդապետութեամբ մխիթարէր զժողովուրդն։ Դարձաւ Աթանաս՝ ի Հռոմայ թղթով կայսեր՝ ի Կոստանդինուպոլիս, և հրաման ետ նմա երթալ ունել զաթոռ իւր եւ զոր ինչ թուղթք հակառակութեան եւ մատնութեան գրեալ էին վասն նորա, մաշեցան՝ ի հուր։ Եւ Աթանաս եւ յերուսաղէմ եւ պատմեաց Մաքսիմոսի զամենայն անցս ժողովոյն Սարդիկիայ և զկամս թագաւորաց, և նորա ուրախացեալ ընդ դարձ նորա արար ժողով 15 եպիսկոպոսաց, ընկալաւ զԱթանաս՝ ի հաղորդութիւն և գրեցին գիր խնդակցութեան մխաբան սուրբգրութեամբ յԱղէքսանդրիա և առ եպիսկոպոսունս Եգիպտացւոց, առետարանելով նոցա ընդդարձն Աթանասի։ Ապա կացեալ Աթանասի աւուրս ինչ յերուսաղէմ, մեկնեցաւ յԱղէքսանդրիա յաթոռ իւր։

Կացեալ Մաքսիմոսի՝ ի հայրապետութեան ամս 15 վախճանեցաւ (350)։ Անժառանգ մնաց առ վայր մի աթոռն Երուսաղէմի, զի Արիանոսք դուն դործէին ասրել այնմ, եւ կէսք զՀերակլիոս ումն ասէին՝ թողեալ՝ ի Մաքսիմոսէ լինել իւր աթոռակալ. իսկ ժողովուրդն խնդրէր զկիւրեղ աւագերէց հայրապետանոցին։ Եւ յետ բազում խնդիր լինելոյ, ժողով ընդհակայ եպիսկոպոսաց զկնի՝ ի խնդիր ժողովրդեան եւ ընտրեաց զկիւրեղ իրրեւ արժանի ժառանգ այնր աթոռոյ, որում հաւան գտան առ հասարակ ամենեքեան։

Քանզի երանելին Կիւրեղ՝ որ յառաջն զղուշութիւն իմն ցուցանէր՝ ի կշտամբել զհերձուածս ժամանակին, յետ նստելոյ յաթոռ հայրապետութեան՝ առաւել համարձակ և անպատրուակ յանդիմանէր և յաղթահարէր զնոսա, և զբազումս՝ ի մոլորելոց դարձուցանէր՝ ի ճշմարիտ հաւատս ուղղափառութեան։

Եւ յաւել Տէր շնորհել Ս. Հայրապետին Կիւրղի լինել հայր բազմութեան նոր հաւատացելոց՝ ի ձեռն աշխարհաքարող աքանչելեաց երեւման Սրբոյ Խաչին յերուսաղէմ։ Քանզի յառաջնում ամի անդ հայրապետութեան նորա, կամ՝ ի սկիզբն երկրորդին (351 կամ 352) յեօթներորդ աւուր ամենեան Մայիսի յերրորդ ժամու աւուրն՝ երեւեցաւ յերկինս Խաչ մեծ հրաշալի լուսեղէն, որ յաղթէր պայծառութեամբ ճառագայթից արեգական տարածեալ՝ ի վերայ սրբոյ լերինն Գողգոթայի, եւ ձգեալ մինչեւ՝ ի լեառն Ձիթենեաց, դեղեցիկ եւ աքանչելի յոյժ պատեալ շուրջանակի պսակաձեւ նշուլիւք իրրեւ զծիածան։ Դղրդեցաւ քաղաքն ամենայն և հիացեալ կային ընդ աքանչելի տեսիլ Սրբոյ Խաչին, եւ ապա ամենայն բազմութիւն տեսողաց ընթացան յեկեղեցին և բազումք յանհաւատից եկին՝ ի հաւատս Քրիստոսի, և հրահանգեալ՝ ի սրբոյն Կիւրղէ մկրտեցան՝ ի նմանէ և՝ ի պաշտօնէից նորա։ Աւազանն յոր մկրտեաց Ս. Կիւրեղ զբազմութիւն նորադարձ հաւատացելոց, պահի աւանդութեամբ՝ ի տաճարի Ս. Յարութեանն ցայսօր։ Եւ կայ կորայ զկնի ժամանակաց բերեալ՝ ի Սիովն, և եդեալ կայ կորայ՝ ի ներքոյ սեղանի նուիրեալ յանուն Ս. Կիւրղի։

Իսկ Ս. Հայրապետն Կիւրեղ ականատես վկայ սքանչելեացն՝ փութացաւ գրեաց գիր առ կոստանդիոս կայսր, քարոզելով զմեծութիւն ահաւոր հրաշիցն, կոչելով զնա Աստուածասէր և բարեպաշտ, թէ և գիտէր զնա դուլ արիոսական։ Այս թուղթ Ս. Կիւրղի վերծանի յեկեղեցիս Հայոց յաւուր ածնի Երեւման Խաչի։

Իսկ Ակակիոս չարանենդ եպիսկոպոս կեսարու Պաղեստինոյ՝ մահացեալ ընդ հարաւս արրութեան և խոստովանութեան երանելւոյն Կիւրղի, յարոյց հալածանս ընդդէմ նորա, և՝ ի բացակայութեան նորին ժողովով Արիանոսաց ընկեց զնա յաթոռոյն, և այնչափ բռնացաւ՝ մինչեւ հալածել զԿիւրեղ քաղաքէ՝ ի քաղաք և ինքնին տիրել աթոռոյ նորա, մինչեւ դիպել զայլ ոք արքունի իշխանութեամբ։ Իսկ երանելին Կիւրեղ խոյս տուեալ յերուսաղէմ գնաց՝ ի Տարսոն Կիւղիկեցւոյ առ Սիղուանոս եպիսկոպոս, և նա սիրով ընկալաւ զնա, և թոյլ ետ քարոզել զիւրոյն կենաց առ ժողովուրդն Տարսոնի։ Գումարեցաւ ժողով՝ ի Սելեւկիա 160 եպիսկոպոսաց, որք էին Արիանոսք և կէս Արիանոսք· ուր եհաս և Ակակ գործակցովք իւրովք, և իրրեւ արդարացաւ Կիւրեղ՝ ի ժողովի անդ, զայրացեալ Ակակայ դիմեաց՝ ի Կոստանդինուպոլիս և չարախօս եղեւ զնարոյ ժողովոյն առ կայսրն Կոստանդիոս, այլ առաւել ընդդէմ Կիւրղի դրդռեաց զնա չարանենդ լեզուն· քանզի ասէր թէ զսուրբ պատմուճանն ոսկեթել, զոր հայր քո՝ ի պատուել զեկեղեցին երուսաղէմի տուեալ էր՝ ի պարգեւս Մակարայ հայրապետին, նուաճ կատարել զմկրտութեանն խորհուրդ, զոյն վաճառեաց Կիւրեղ պատճառանօք· վարձակի կամ միմոսի ուխտն արկեալ զանձամբ այնպէս ելեալ՝ ի թատրոն, այլ՝ ի ժամ կաքաւելոյն պատուհասեալ անկեալ է և մեռեալ, յաւել և զայլ չարախօսութիւնս։

Ի դումարել ժողովոյ ըստ կամացն Ակակեանց հրամանաւ կայսեր (360)՝ ի թագաւորեալ քաղաքի անդ, յորում հաստատեցաւ Հանգանակն Արիմինեայ, դատապարտեցան ամենայն հանգանակք որ յառաջ քան զնա յօրինեալ էին և որ յետ այնորիկ երկեք յօրինեսցին· ընկեցան յաթոռոյ գլխաւորք Կէս Արիանոսացն։ Հերքեցին զԿիւրեղ և զմիաբանեալսն ընդ նմա իրրեւ խռովիչս և մոլորեցուցիչս· և եղ հրաման արտաքսմանութեան նոցա։ Ակակիոս չոքաւ՝ ի Տարսոն և ետ աքսորել զՍիղուանոս և զԿիւրեղ՝ ի հեռաւոր տեղիս, կարգեաց յերուսաղէմ առ ժամանակ մի փոխանակ Կիւրղի զԵւտէքիոս ոմն եպիսկոպոս թշնամի նորա, որպէս և յետ սակաւուց զայլ ոք· դարձեալ ասի յոմանց թէ՝ ի սոյն մի-

ջոցի առաջնորդէր Երուսաղէմացւոց Արհելիոս և ըստ այլոց Հերակլիոս կամ Կիւրղոս անուն ոմն· սակայն հաստատագեալքն առաջնորդեալք՝ ի քաջ հովուէն իւրեանց ոչ հանդարտէին այնպիսի չարաբարոյ աւազակաց, մինչեւ՝ ի դէպ իսկ է կարծել թէ հուսկ յետոյ Ակակիոս՝ ի խնդրոյ ժողովրդեանն կացուցեալ իցէ առաջնորդ այնր աթոռոյ զծերունին Յուդա, որ հաւատաց՝ ի ժամանակս Գիւտի Խաչին առ Հեղինեաւ եւ կոչի միւս Կիւրեղ իբրեւ եպիսկոպոս երուսաղէմի, որ և յետ սակաւուց նահատակեցաւ հանդերձ մարբն՝ ի Յուլիանոսէ, որպէս առեալ զինի։

Իսկ Կոստանդիոս ապրեալ՝ ի պատերազմէն Շապհոյ Պարսից արքային, յանկարծ դարձաւ յետն և հասեալ՝ ի Տարսոն Կիւղիկեցւոց առ ոտամբ Տաւրոսի մեռաւ անդ՝ ի ձնդէ՝ ի 45 ամաց հասակի և՝ ի 25 ամի կայսերութեան (3 Նոյեմ· 361), եւ մարմին նորա տարեալ՝ ի Կոստանդինուպոլիս արկաւ՝ ի շէրմին կայսերական առ մարմնոյն Կոստանդիանոս յեկեղեցի Առաքելոց։

Եւ յետ նորա ա՛ւ մահեծան զէրուբէիեն Յուլիանոս ուրացող՝ ի 29 ամաց հասակի։ Անդէն՝ ի սկզբան 361 ամին հրովարտակաւ յայտ արար զօրացն թէ՝ ազատատանելոյ է յօդնականութիւն դիցն անմահից· պատուականագոյն համարէր լինել մեծ քրմապետ հին կրօնիցն քան Օգոստոս· և՝ ի հրովարտակս իսկ հրամայէր կոչել զԲրիստոնեայս անաստուած Գալիլեացիս, ՚ի գլխաւոր գրոչէ զորուն հանգիր անուանն Բրիստոսի, զոր Կոստանդիանոս եդեալ էր· իսկ զայլսն՝ ի գօրոցս զարգարէր դից և իւր պատկերօք· Ջաւերեալ մեհեանս եւ կանգնել մեծաշուք ծախիւք Բրիստոնէից։ Ջամենայն առաւելութիւնս եկեղեցականաց, զոր Կոստանդիանոսի շնորհեալ էր, ա՛ւ յետս։ Ցամենայն պաշտամանց տէրութեանն՝ ի բաց հան զԲրիստոնեայսն· առ՝ ի ծաղր առնել զՀաւատս Բրիստոնէից, ընդ որս դրեաց դէպս հակառակ Աւետարանին։ Ժողովէր երբեմն եպիսկոպոսունս յայլ և այլ կարծեաց հանդերձ ժողովրդականաւք յիւրում պալատան՝ զի վիճեսցին, և՝ ի տատակալել զԺառանգութեանն՝ առաւել բորբոքէր զհակառակութիւնս նոցա· զմին իբրև տայր աղատութիւն դառնալոյ և եպիսկոպոսացն աքսորելոց՝ ի Կոստանդեայ (362)։ Եւ այնպէս

դարձաւ յաքսորանաց և Ս. Կիւրեղ և մարդասիրութեամբ
ընկալաւ զնա յԱնտիոք Ս. Մելիտոս, ուր էր յայնժամ եւ
Թագաւորն, և յանձն արար նմա մանուկ զոմն որդի քրմի,
փախուցեալ ի ձեռաց հօր իւրոյ և Ծուլիանոսի. և կիւրղի
առեալ զայն գիշերայն եւ ի քաղաքէն և եկն յաթոռ իւր
յԵրուսաղէմ, ուր մկրտեաց զմանուկն եւ յետ ժամանա-
կաց դարձոյց նաեւ զհայր նորին ի Ս. Հաւատս։ Կարի
զայրացեալ էր Ծուլիանոս ընդ Աթանաս, եւ հրամայեաց
հանել զնա ի սահմանացն եգիպտացւոց. այլ Աթանաս
զերծաւ ի ձեռաց իշդրակացն։ Պատրաստեցաւ Ծուլիա-
նոս տալ մեծ ինչ մարտ պատերազմի ընդ Պարսից, և եկն
յԱնտիոք, կողոպտեաց զՔրիստոնեայս և զեկեղեցիս ծան-
րութեամբ հարկաց։ Եւ ազատութիւն Հրէից և հրամա-
յեաց զոհս մատուցանել ըստ օրինացն Մովսիսի։ Իսկ Հրէ-
այքն ասեն, չէ մարթ ուրեք զոհս մատուցանել, եթէ ոչ
չինեացի Տաճարն, կործանեալ ի Տիտոսէ. ևս անդրէն ի
տեղւոջն կանգնեցից. բուռն հարեալ չինել զայն ի հիմանց
և ևս զծախսն լցից յարքունի գանձուց։ Մեծ էր կատա-
ղութիւն Հրէից ժողովելոց յերուսաղէմ և լուտանք նախա-
տանաց ընդդէմ Քրիստոնէից։ Ծուսով չինելոյ զնոր Տա-
ճար հոյակապ՝ քակեցին և զպաղուման ի մեացեալ քարանց
հիման հնոյ Տաճարին առ արկանել զհիմն նոր. և զհողն
կուտեցին ի բլուրս բլուրս, և պատրաստեցին զնիւթս չի-
նուածոյն՝ զի ի վաղիւ անդր արկցեն զհիմն։ Եւ ահա ի
գիշերին այնմիկ եղեւ յանկարծակի սաստանութիւն ահա-
գին զտեղեաւն, և յետ չարժմանն յարեաւ հողմ սաստիկ
ուժգին փոթորկեալ. և ի կրկին դղրդմանց սաստ կործա-
նեցան առնք չրջակայ, յորս ժողովեալ էին բազմութիւնք
Հրէից գործաւորաց, մինչեւ ճմլիլ նոցա ընդ փլատակաւ
եւ կորնչիլ. և ի մրրկէ անտի [հողակոյտն ամենայն լցաւ
անդրէն ի փոսն փորեալ. եւ քարինք մեծամեծք պատ-
րաստեալք վասն հիմանց ձգեցան ի վայրս հեռաւորս,
առաղձ չինուածոյ ցիր եւ ցան եղեն ի մէջ քաղաքին։
Հրէայք ոչ զգաստացան յԱստուածասաստ յանդիմանու-
թենէ անտի. այլ ի վաղիւ անդր յանդգնեցան միւսան-
գամ յառաջին գործն. այն ինչ սկսան մաքրել զտեղի հի-
մանն, յեղակարծուց լիմն ի վեր եւ հուր ի գետնոյ անտի

եւ լափեաց զբազումս ի Հրէից. և ի խուճապիլ ի փա-
խուստ իբրեւ դիմեցին խուժանօք անկանիլ յեկեղեցի
Քրիստոնէից, զոր բաց տեսանէին, անդէն ինքնին փակե-
ցան դրունքն. բուռն առնէին և հակառակէին ընդ պաշ-
տօնեայս եկեղեցւոյն բանալ զմուտս. ահա եւ ընդ առաջ
նոցա նոր հուր ի ճակատէ եկեղեցւոյն, զոմանս բոցակի-
զեաց և զայլս խանձողեալս և կիսայրեացս դարձոյց ի փա-
խուստ։ Դարձեալ և յայլում վայրի երեւեցաւ հրձգու-
թիւն անդիտելի. զի յորժամ ազգականք սրանցն կորու-
սելոց ընդ փլատակաւ եկին ի խնդիր դիականց նոցա,
տեսին յանկարծակի հուր ցոլացեալ սաստիկ ի յարկաց
անտի, յորս եգեալ կային երկաթի գործիք չինուածոյն,
և ի փախչիլն՝ բուռն ձգմամբ յածէր բոցն զկնի նոցա ընդ
փողոցս և ընդ հրապարակս, իբրեւ ի խնդիր ճարակելոյ
զո ոք և զտանիցէ ի Հրէից անտի։

Եւ ի միւսում գիշերի երեւեցաւ լոյս մեծ յերկինս
խաչանիշ շրջանակաւ իբրեւ զնկարչն նշան աստեղազարդ
և ճաճանչագեղ, ոչինչ ընդ հատ ի պայծառութենէ խա-
չին երեւելոյ ամբ յառաջ առ Կոստանդ կայսերաւ, եւ
այս եւս տարածեալ ի Գողգոթայէ մինչեւ ի լեառն Ձի-
թենեաց։ Իբրեւ յարեան Հրէայք ի տեսանել զերեւոյթ
ահաւոր նշանին, դրոշմեցան ի զգեստս բազմաց ի նոցանէ
խաչք բազմաթիւք թխատեսակ իբրեւ զտեղիս խանձո-
ղեալս ի հրոյ։ Փութացին Հրէայք թոթափել զայն նշանս
նշանին ի հանդերձից իւրեանց չփելով և լուանալով, այլ
ի զուր, զի Աստուածագրոշմ էր կնիքն ի յանդիմանու-
թիւն նոցա։ Նոյն նշան սրբոյ Խաչին երեւեցաւ ի վերայ
հաւատացելոց և ի վերայ հաւատոյ եկեղեցւոյ,
ոչ միայն յԵրուսաղէմ, այլ և ի մերձակայ սահմանս մին-
չեւ յԱնտիոք։

Իբրեւ եկն Ծուլիանոս յԵրուսաղէմ, պատուեցին նմա
Հրէայք զամենայն մի ըստ միոջէ, և ի բաց կացին ի խոր-
հրդոյ շինութեան Տաճարին՝ ըստ Սոկրատայ։ Ապա ձեռն
արկ չարչարել զՔրիստոնեայսն. լուեալ իսկ էր զհամբաւ
կիւրղի եպիսկոպոսի դարձելոյ ի հրէութենէ, և թէ նա է
որ եգիտ զՍ. Խաչն ի Գողգոթա առ Հեղինեաւ, ոմանցաւ
ընդդէմ կիւրղի ըստ առելութեանն զոր ունէր առ կեն-

սատու Խաչէլեայն· վասն որոյ հրաւիրեաց սա ՚ի Ս· Եպիսկոպոսն առաջի իւր նոյնպէս և զմայր նորա Աննա, և յետ բազմադիմի հարցափորձի՝ արկ զնոսա ՚ի կարծրագոյն տանջանս, և ապա նահատակեաց նախ զԱննա և յետ նորա զԿիւրեղ[1]· Ընդ սոսա կատարեցաւ և Արդան, որ էր գլուխ թովչաց իւրոց հաւատացեալ ՚ի Քրիստոս, նոյնպէս բազումք ՚ի կողմանս Ասորւոց· Որպէս և ՚ի քաղաքին Ակաղընացւոց և Գազացւոց, և ՚ի քաղաքս քաղաքս Պաղեստինացւոց՝ յորս բնակեալ էին բազումք ՚ի քրիստոնէից, քահանայք, աշխարհականք, անապատական միայնակեացք, և կանայք կուսակրօնք· քանզի կալեալ զրազումս ՚ի նոցանէ նեղէին ազգի ազգի տանջանօք, և հերձեալ զորովայնս նոցա արկանէին դարի իբրեւ ՚ի մուրս եւ արձակէին ՚ի վերայ մարմնոյ նոցա գկինճս և զխոզ· Թող զոր արարին ՚ի կեսարիա և ՚ի կողմանս Գալիլեացւոց· Եւ ՚ի Սերաստիա էառ բանալ Ցուլիանոս զգերեզման սրբոյն Յովհաննու Մկրտչի, և զմնացորդս նշխարաց նորին արտաքս հանել և այրել հրով և զփոչին ցնդել յօդս· Են որք ասեն թէ՝ չէր անդ մարմին սրբոյն, այլ կամեցեալ Ցուլիանոսի կատարել զկամս իւր՝ էառ հանել զայլ ոսկերս հաւատացելոց, որք մերձ կային Սրբոյ տապանին, զորս խառնեալ ընդ ոսկերս չանց, այրեցին եւ հողմով հոսեցին· Եւ էառ կործանել զպղնձէ պատկերս Քրիստոսի ՚ի Փիլիպպէայ Կեսարիա, որպէս գրեցաք յառաջագոյն· Զ'ասային ինչ յաղուրդ չարիքն խստացեալ սրտի նորա՝ զոր ած ՚ի վերայ հաւատացելոց յԱնտիոք և ՚ի Պաղեստին, և առ զայրոյթ չարութեան իւրոյ, ՚ի մեհենիքն ՚ի Պարսս կոյս՝ մեծամեծս սպառնայր Քրիստոնէից, և պատուէր էառ չինել աւիւիթէադրոն մեծ յերուսաղէմ, զի ՚ի դարձին իւրում ՚ի գաղանամարտ մատուցէ զեպիսկոպոսունս, զքահանայս, զկրօնաւորս, եւ զամենայն նազովրեցիս· Եւ ինքն զոհիւք եւ ըղձութեամբ դիմեաց հասանիլ ՚ի Տիզբոն, ուր և սատակեցաւ ՚ի պատերազմին,

(363)· և դիակ նորա ածեալ թաղեցաւ ՚ի Տարսոն Կիլիկեցւոց· Իսկ Կիւրեղ հայրապետ՝ որ ակն ունէր նահատութեամբ կատարել ՚ի Ցուլիանոսէ իրրեւ զմիւս Կիւրեղ, այլ ոչ եհաս ուխտի փափաքանաց իւրոց· բայց կրեաց ոչ ինչ նուազ նահատակութիւն հանապազորդեան մրցանօք ընդդէմ Արիանոսաց·

Յետ սատակման Ցուլիանոսի ընտրեցաւ ՚ի զօրականէ Յովիանոս (364)· որ հասեալ յԱնտիոք, հան հրաման թողուլ զՔրիստոնեայս ազատ ՚ի կրօնս իւրեանց, այրեաց և կուսանաց տուան միւսանգամ առաւելութիւնքն, զոր հանեալ էր ՚ի նոցանէ Ցուլիանոս· դարձաւ Աթանաս յաթոռ իւր և Մելիտոս յԱնտիոք, մերժեաց զԼևոնդիոս Արիանոսաց· Ձեռընտու եմ ասել՝ այնոցիկ, որք ունին զմիաբանութիւն, Հայլ ճէլ տուեալ զօրուն Յովիանոս՝ եկ յԱնտիոքայ յաւուրս ձմերայնի երթալ ՚ի Կոստանդինուպոլիս եւ մերձ ՚ի Բիւթանեա դտաւ մեռեալ յանկողնի իւրում·

Թագաւորեաց Վաղէս Արիոսական, եւ սկիզբն արար հալածել զամենայն Քրիստոնեայս, յափշտակել զեկեղեցիս եւ արեամբ թանալ զսեղանս· տարագրեցան եպիսկոպոսունք յաթոռոց, և արտաքսմանեցան ՚ի մետաղս, վասն չմիաբանելոյ նոցա ընդ Արիանոսեանս· անկաւ և Ս· Կիւրեղ յաթոռոյն Երուսաղէմի· Սրդ ՚ի կրկին վտարանդութեան կիւրղի և ՚ի դնել Արիանոսաց զայլ ոք յԵրուսաղէմ, լցաւ Պաղեստին ամենայն անկարգութեամբ· Համարձակ մուտ գտին անդ Արիոսականք, Ապողինարիոք, Մակիդոնեանք· եւ այլ աղանդաւորք, որոց բազմօք ընդդէմ զինեալ էր Ս· Կիւրեղ բանիւ և գրով· Այս վտարանդութիւն Կիւրղի յերկարէր ամս իբր 10 և եւս աւելի· Թէպէտ եւ կրեաց նեղութիւնս և տառապանս յարտասահմանութեան՝ այլ համբերութեամբ տարաւ յամենայնի· Այլ առաւել դժնդակ իրք պատահեցան յեկեղեցիս Աղէքսանդրիայ և ՚ի կրօնաւորս Եգիպտացւոց յետ մահուան Ս· Աթանասի հայրապետին· Իսկ Վաղէս յետ այսչափ անպատուին անդթութեանց, հալածանաց և լկտեանց դատուցն սուղղահաւաց պարտեցաւ ՚ի մարտին ընդդէմ Գթոց առ Ադրիանուպոլիսաւ և փախուցեալ ապաւինեցաւ ՚ի խուղ մի, զոր նուաստացուցեալ տարան ՚ի տուն իւր, ուր հրձիգ արարին Գութք յանդէտս և անդէն այրեցաւ· Որ-

---

[1] Ի դարձին ՚ի Բաբելացւոյ Ներսէսեայէ՝ ՚ի Հանապարհին, ուր Տէրն զթզենին ցամաքեցոյց· ցուցանեն զվէմն յորոյ վերայ հաստեալ էրն զձեռն Ս· Կիւրեղի· և մերձ նմին տեղւոյ ցուցանեն զգերեզման սրբոյն, և մօր Նորա Աննայի· Տեղեաքեր Նիկողա Էմէնոպոսի Ասէրմանեան·

պէս ասէ Յորինոսին. «Ըստ արժանի անօրէն իւրոյ խորհրդոյ զյաւիտենական գեհենին աստէն բերելով զօրինակ, հրկիզ եղեալ յԱդրիանուպոլիս սատակեցաւ» (378):

ԳԼՈՒԽ Թ.

Ժողով Կոստանդինուպոլսոյ. Յովհաննէս Հայրապետ. Դէպք ի ժամանակի նորին:

Ի ԹԱԳԱՒՈՐԵԼ Մեծին Թէոդոսի յարեւելս, դարձան ամենայն Հարք ուղղափառք յիւրաքանչիւր աթոռս, որք արտաքսմանեալ էին առ Վաղէսիւ, եւ տուաւ ազատութիւն կրօնի՝ բաց յաղանդաւորաց: Դարձաւ և Ս. Կիւրեղ յերուսաղէմ յաթոռ իւր (379), եւ եդիտ զհօտ իւր վարաւեալ ի գայլոց ապականչաց. բազումս աշխատեալ ի մաքրել զվիճակ իւր յամենայն ձեռնասկար վարդապետութիւնից և յանկարգութիւնից. եւ կրեաց այնուհետեւ նորանոր վիշտս, ոչ այնչափ ի չարափառաց, որք նկուն եղեն յերեսաց անուան Թէոդոսի, որչափ յուղղափառաց ի պատճառս Պաւլինոսի Անտիոքացւոյ, որում թէեւ կից էին արեւմտեայք ընդդէմ Մելիտոսի բարեկամին Կիւրղի. զի նոքա որպէս խորչէին ի Մելիտոսէ, նոյնպէս և ի Կիւրզէ, և արգելուին իսկ զոմանս ի գնալոյ յաւիտ յերուսաղէմ: Թէպէտ և միջնորդ հաշտութեան եկաց Ս. Գրիգոր Նիւսացի ի մէջ եպիսկոպոսաց՝ որք ոչն կամէին հաղորդել ընդ Կիւրզի իբրեւ ի կէս Արիոսեանց ձեռնադրելոյ, սակայն եւ այնպէս ոչ կարաց խաղաղել զերկպառակութիւնս նոցա. ապա ողջունեալ զՍ. Կիւրեղ և յայց եղեալ Տնօրինական տեղեաց, դարձաւ ոչ ուրախութեամբ ի տեղի իւր: Եմուտ Թէոդոս կայսր ի Կոստանդինուպոլիս, (380). զի յետ մերժելոյ զՍ. Գողգս յաթոռոյն՝ Արիանոսք նստէին մի ըստ միոջէ, և քաղաքն կայսերական լեալ էր մայրաքաղաք Արիանոսութեան: Տիրէր անդէն վարդապետութիւն Արիոսի, առ նմին՝ մոլորութիւն Նովատեանց քարոզէր յայլ և յայլ եկեղեցիս քաղաքին. անդ էին և խանճարուրք Մակեդոնեանց, և այլոց:

Ըստ խորհրդեան եպիսկոպոսաց բազմաց՝ մանաւանդ Գրիգորի Նազիանզացւոյ հան Թէոդոս հրաման լինել ժողովոյ եպիսկոպոսացն արեւելից ի Կոստանդինուպոլիս: Ժողովեցան 150 Հարք (381). Դամասոս Հռոմայ, Նեքտարիոս Կոստանդինուպոլսի, Տիմոթէոս Աղէքսանդրիայ, Մելիտոս Անտիոքայ, Կիւրղոս Երուսաղէմի, և Ներսէս Հայոց: Առաջին գործ ժողովոյն եղեւ նստուցանել զԳրիգոր Նազիանզացի յամառն Կոստանդինուպոլսի փոխանակ սուտ անուն Մաքսիմոսի. Մելիտոս գահերէց ժողովոյն յետ նստուցանելոյ զԳրիգոր իակ և իակ վախճանէր: Հասին եպիսկոպոսունք եգիպտացիք և Մակեդոնացիք, և ի չհաւանիլ նոցա ընդ ընտրութիւն Գրիգորի՝ հրաժարեցաւ նա յաթոռոյն խոսեալ ճառ յաւուրն: ընտրեցաւ փոխանակ նորա Նեկտարիոս Տարսոնացի, որում առաւ նախ կնիք, ապա ձեռնադրութիւն և ապա դահերիցութիւն ժողովոյն: Ինն ետուն ի ժողովի Հարց աղանդք Մակեդոնեանց, որոց ծնող և սկզբնահայր Եկաց Մակեդոն Հայհոյիչ, եպիսկոպոս Կոստանդինուպոլսեայ: Սա բաժանէր Թէ Հոգին Սուրբ ոչ է ճշմարիտ Աստուած և ոչ երկրպագելի և փառաւորելի ընդ Հօր և ընդ Որդւոյ, այլ ծառայ յԱստուծոյ բնութենէն և ստացական և պաշտօնեայ. ազդումն ինչ և ոչ էութիւն անձնաւոր. վասն որոյ հոչեցան ինքն և հետեւողք իւր հոգեմարտ. յետ այնորիկ քննեցան և այլ աղանդք եւ ամենեքեան հերքեցան ի կաթուղիկէ եկեղեցւոյ նզովիւք եւ կարգեցին Հարք ժողովոյն եօթն կանոնս ի հաստատութիւն նիկիական դաւանութեան և ի հերքումն հերետիկոսաց: Իսկ յաղագս պատուոյ և իշխանութեան եպիսկոպոսաց իրաքանչիւր աթոռոց. Տե՛ս ի Պաւ. Տէրէ. ժողովս. 132:

Ի կատարել գործոյն՝ սիրով և մեծարանօք արձակեալ Հարց ժողովոյն ի Մեծէն Թէոդոսէ՝ չոգան ի գաւառս և յեկեղեցիս իւրեանց, ընդ որս և Կիւրեղ յաթոռն իւր յերուսաղէմ. ուր սկսաւ յայնմհետէ յանդորրս վարել ընտեսչութիւն հօտին իւրոյ այլ եւս առն քանի մի, և ապա հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս լի արդեամբք (386. Մարտ 18). Թողեալ զանձ եկեղեցւոյ զդիրս ողջախոհ վարդապետութեան իւրոյ, որ ասի՝ Կաթեքէտ ընծայութեան. կացեալ յաթոռն եպիսկոպոսութեան զամս 35 եւ

զամն 16 անցոյց 'ի վաստրանդութեան, ամք կենացն 70։

Սակ զամանէ թէ առանձին խորհրդով կարգեաց 'ի մի մատեան զայն ընթերցուածս քառասնորդաց պահոց, ըստ կարգի աւանդութեան Ս. Յակոբայ եղբօր Տեառն առաջնի եպիսկոպոսին Երուսաղէմի։ Գոնէի և 'ի ձեռագիրս գրուած լինէ 'ի ձեռ հարց պատասխանի ընծայեալ սմին կիւրղի, որոյ վերնագիրն է. « Երանելւոյն Աթանասի Աբք եպիսկոպոսի Աղէքսանդրացւոյ հարցմունք վայելուչք և պատուականք կիւրղի Երուսաղէմայ Հայրապետի յաղագս մակացութեան և հանճարոյ։ Արդ Ս. Կիւրեղ Հայրապետ է մին յերկոտասան վարդապետաց եկեղեցւոյ, ախրաալէս պարծանք Սիոնի և Աթոռոյն Երուսաղէմի, զորոյ գրիչատակն կատարէ երկիցս 'ի տարւոջ եկեղեցին Հայոց։

Ձեռ վաճառելոյն Կիւրղի Հայրապետին ընտրեցաւ ասնելին Յովհաննէս իբրեւ արժանաւոր ժառանգ աթոռոյ եկեղեցւոյն Երուսաղէմի (390)։ Սա 'ի սկզբան ընտրեաց զկեանս միայնակեցութեան, և ապա կարգեցաւ ընդ երիցունս եկեղեցւոյն Երուսաղէմի 'ի Ս. Կիւրղէ. վաստակակից եղեւ նմին 'ի բազմադիմի վիշտս վտանգի, կրեաց տառապանս յաւուրս հալածանաց և աքսորանաց Կիւրղի 'ի չարախառաց բռնացելոց 'ի վերայ աթոռոյն Երուսաղէմի, որպէս և անտի բանբասանս յոլովս յուղղափառաց, կամակածեալ 'ի վերայ իրերաց, այլ այն ամենայն խափանեցան յետ ժողովոյն Կոստանդինուպոլսի։

Իսկ ինքն վայելէր բանիւ վարդապետութեան, առաւել զարդարեալ դիտութեամբ և առաքինութեամբ, պերճ յատենախօսութեան և ազդու 'ի քարոզս։ Սակայն անկաւ դժուարութիւն 'ի մէջ Յովհաննու և Եպիփանու Կիպրացւոյ, եւ անտի տարածեցաւ յԱղէքսանդրիա առ Թէոփիլոս, և 'ի Կոստանդինուպոլիս առ Յովհաննու Ոսկերբան։ Քանզի դէպ եղեւ Եպիփանու երթալ յերուսաղէմ, և եդիտ զՅովհան ջատագով գրոցն Որոգինեայ. ազդ առաքար նմա զդոյզ լինել անտի զի նախահայր և ծնող է առ Արիոսի եւ այլոց ժանտից. այլ ոչ անաց նմա Յովհաննէս, եւ 'ի կշտամբել Եպիփանու յատենի եկեղեցւոյ զգիրս մոլորութեան Որոգինեայ, նախատինս վարկաւ զայն ինքեան Յովհաննէս, եւ մեկնեալ անտի Եպիփանու դէպ

յԱսորիս՝ ձեռնադրեաց 'ի վիճակի նորին զՊաւղինիանոս պղտայրն Հերոնիմոսի Լատին վարդապետի Թարգմանչի Ս. Գրոց, առանց գիտութեան Յովհաննու 'ի քահանայապետել եւս դժուարեցաւ Յովհան, որով և ապստամբեալ վճռեն, Տե՛ս Վ՚ոբ Սբ՚ոց. Հայ. Բ. 458։

Եւ ինքն Յովհաննէս առնէր բարեկարգութիւնս 'ի վիճակին եկեղեցւոյ. գրեաց զանազան թուղթս ի խմաստութեամբ յարեւելս եւ յարեւմուտս։ Առաքիկայ գոտաւ հանդիպի թագաւոր սրբուհւոյն Պաւլայի Հռոմայեցւոյ վախճանելոյ յերուսաղէմ։ Սա էր ազնուատոհմ այրի Հռոմայեցի, թողեալ զամենայն ինչս գնաց յերուսաղէմ, և բնակեցաւ 'ի վանս Բեթղեհէմի զամս 28. վախճանեցաւ 57 ամաց (407) եւ թաղեցաւ անդ, եւ գուստր նորին Եւսթաքիոս կոչման՝ կեցեալ սրբութեամբ անդ կնքեաց և նա զկեանս իւր և եղաւ առ մօր իւրում, և զվարս նոցա Հերոնիմոս գրեաց մեծաւ գովութեամբ, զորոյ գերեզմանս ցուցանեն լատինք անդ 'ի վանս իւրեանց 'ի տորերկրեայ յայրի, ուր են գերեզմանք Հերոնիմոսի եւ այլոց։

Յովհաննէս հայրապետ կրկին անգամ գումարեաց ժողով եպիսկոպոսաց յերուսաղէմ եւ 'ի Դիոսպոլիս, այն է Լիւդիա 'ի քննել զաղանդս Պելագիոսի Բրիտանացւոյ, որ եկեալ էր ուսմանել 'ի Պաղեստին. այլ իբրեւ ազդ արար Օգոստինոս Աւրելիոս նամակաւ Յովհաննու զկեղծաւոր բարս առնն, հալածեցաւ 'ի վիճակէ նորին, (416)։

Արդ՝ զկնի քարկոծման և ննջման սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, բարձեալ զպատուական մարմին նորա Գամալիէլ վարդապետն Պօղոսի ըստ ոմանց՝ և նորուն իսկ Ստեփաննոսի եւ եղբայրն Գամալիէլի Նիկոդեմոս՝ 'ի ծածուկ աշակերտ Յիսուսի՝ թաղեալ էին յագարակի իւրեանց. և ինքեանք եւս 'ի մեռանիլն իւրեանց՝ թաղեցան մերձ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային Հրիստոսի, որպէս և որդին Գամալիէլի Աբիբաս գպիր. և 'ի ժամանակս յայսմիկ յայտնեցան նշխարք ամենեցունց սոցա 'ի ձեռն Դանիէլեանոսի երիցու. և Յովհաննէս Հայրապետն երուսաղէմի փոխադրեաց զայն 'ի Ս. Սիոն, ուր ձեռնադրեալ էր նա ինքն Ս. Ստեփաննոս սարկաւագ. եւ յետ սուղ ինչ

առուրց Սղէքսանդրոս ումն վիլայասէր՝ չինեալ տաճար մեծագործ ի Ս· Քաղաքն Երուսաղէմ, որ զկնի ժամանակաց աւերեցաւ ի Թուրքացն (1)· եւ բազում պաղատանօք անդր փոխեալ զնշխարս Նախավկային· և զկնի մահուան իւրոյ՝ կին նորին Յուլիանէ այրի տարաւ զնշխարսն սրբոյն Ստեփաննոսի տապանակաւ ի Կոստանդինուպոլիս յաւուրս Յոբնաղ Պատրիարքի Ս· քաղաքին· Այս ամենայն ընդարձակագոյն պատմի ի Ճառ ընտրին մեր· Տե՛ս Նախ՝ ի վ՚ս՚ Սբ՚ց՚ Հա՚ ժ· 268: Իսկ Նեկտառիոս եպիսկոպոս ի պատմել զԳիւտա նչխարացն Նախավկային եւ որոց ընդ նմա, զտեսիլ Ղուկիանոսի քահանային մեկնաբանօրէն գրէ, որպէս ասանդի ի նոյն Ճառ ընտրի:

Թէպէտ են ոմանք որք գրեն թէ՝ Եւդոկիա բարեպաշտ թագուհի, կին Թէոդոսի Փոքրոյ՝ երթեալ յուխտ ի Ս· Քաղաքն Երուսաղէմ, արար անդ բազում չինուածս, և կառոյց Տաճար յանուն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, եւ պաղատեր եղեւ եկեղեցեացդ և Ս· Տեղեացդ բազում ընծայիւք· և Յոբնաղ Հայրապետան Երուսաղէմի առ թագուհւոյն փոխարէն հոգեւոր պարգեւս, ընդ որս եւ զխառնճարուրս Փրկչին և զչքմայս սրբոյն Պետրոսի առաքելոյ: Զոյնիսիք առել ինչ զպատանեաւ թագուհւոյն յերուսաղէմ, բայց չինուիս Տաճարի, և փոխադրութիւն նչխարացն Նախավկային ի Կոստանդինուպոլիս, եղեն ի ձեռս Սղէքսանդրոսի և կնոջ նորա Յուլիանեայ:

Իսկ երջանիկ հայրապետն Յովհաննէս հանդիպեալ այսպիսի Աստուածապարգեւ հոգեւոր գանձուց ի վերջին

---

(1) Իսկ ի Ժամանակս մեր գոյս տեղի եկեղեցւոյն ի հիւսիսակողմն քաղաքին եւ ի մէջ գրան Դամասկոսի եւ շիրմին Թագուհւոյն Հայոց Հէլենեայ· յատակ եկեղեցւոյն միայն գոյս ամբողջ և քանի մի յատնական տունք· պահակքը Աստուածոյ նկարեալ ի վերայ քարանց· տեղի խորանին, չքամբքը 3· և տեղի գերեզմանաց 3· տապանակքն և ի վերայ նոցա մեռելոցք պատատեալքը սղոցվին հանգերձ· Զայս տեղի դնեալ յանգոյս այր ումն ազգաւ Ճոյն և ի մարդել գնդոյ և զբաղինս՝ եգիտ զտեղի եկեղեցւոյն Ս· Ստեփաննոսի, և եւ յատակ վաճառեաց զայն Գագիացոց: Նիկոդոս Էպիսկոպոս Ադրիանի յաստատութեան իւրում 1483 ամին, գրէ այսպէս· Մերձ ի պարիսպն Երուսաղէմի ցուցանեն զգերեզմանս Գամալիելի և Ս· Ստեփաննոսի:

ժամանակս իշխանութեան իւրոյ յուրախութիւն և ի մըխիթարութիւն հաւատացեալ հօտին, եւ հասեալ ի բարւոք ծերութիւն հանդեաւ սրբութեամբ և խաղաղութեամբ ի Քրիստոս (417), եւ կալաւ զառաջնորդութիւն երուսաղէմի Պրայիլիոս որ պատրեալ պատ ի պատ բանից Գիւղագիսոսի՝ գրեաց Թուղթ ընծայութեան վասն նորա առ հայրապետն Հռոմայ Զոսիմոս:

Մովսէս Կաղանկատուացի յառաջ բերէ ի պատմութեան իւրում վասն սրբոյն Մեսրովպայ վարդապետին, թէ յետ գիւտի գրոյն Հայոց, որ եղեւ յամի 406, և առնլոյ զնշանագիրս նաեւ վրաց և Աղվանից, գնացեալ իցէ աշակերտօքն հանդերձ յուխտ յերուսաղէմ, եւ գարձ արարեալ անտի բերելով խաչ արծաթիղէն, յորում կայր ասէ, անտի բերելով խաչ արծաթիղէնն, յորում կայր ասէ, մասն ինչ ի խաչափայտէն Քրիստոսի, եւ մտեալ ի գաւառն Ուտի՝ ընակին յատանն Գիս: Գէր· Բ· եբ՚ս՚ 190: Եւ գարձեալ յաւելու անդ թէ՝ զկնի վախճանի սրբոյն Մաշտոցի, աշակերտքն նորին որ յԱղուանս, գրկեալ ի հոգեւոր մխիթարութենէ հովուաց՝ խորհրդով գիմեալ իցեն յերուսաղէմ և բերեալ անտի քահանայս ոսկեթել և արծաթիղէնն սպասուք ի կարգել հովիւս աշխարհին Քրիստոնէից· և թէ նոյն քահանայք յետոյ անկեալ իցեն ի սուր, և սպասքն մատնեալ ի ձեռս թշնամեաց:

Արդ՝ Մովսէս Խորենացի աշակերտ եւ ժամանակակից երանելոյն, որ զամենայն հանգամանս գիւտի գրոյն Հայոց ի գրի եհար, չ՚ասէ ինչ վասն գնալոյ նորին յերուսաղէմ, որպէս յայտնապէս գրեաց զուղևորութենէ իւրմէ հաստանէն ի Պաղեստին և մնալն ասուրս ինչ յերուսաղէմ: Նոյնպէս և աթանչելին Կորիւն, որ զբովանդակ պատմութիւնս վարուց Սրբոյն ի գիր արձանացոյց, չ՚յիշատակէ զայդպիսի ինչ, և այլ տեղեացն Պատմիչք լուեն վասն այդր, և յաղագս Գիւտի գրոյն ի բազում տեղիս թափառեցաւ երանելին, այլ ի նոսա եւս չ՚յիշի անունդ երուսաղէմ, թողէ թէ յետ Գիւտի գրոյն ասէ Մովսէս· ուստի բանք կարդալոյ ստուգագոյն անհաւանական են և ընդ կասկածանօք· զի յետ Գիւտի գրոյն՝ անկարելի էր երանելւոյն մեկնել յաշխարհէն Հայոց, զի բացեալ էր առաջի նորա դուռն բազմապիսի երկանց և աշխատութեանց ի լուսաւորութիւն

ազդին, որպէս յայտնի տեսանի ՚ի Պատմութենէ ժամանակին։ Այլ վասն երթալոյ աշակերտաց նորին յերուսաղէմ և բերելոյ անտի զառաջնորդս, չունի ինչ սակաս քննութեան, զի համօրէն պատմիչք ազդիս լուեն վասն այդր։

Գլուխ ժ.

Ժողով Եփեսոս. Եւտիքէս վանահայր։ Բ. Ժողով Եփեսոս. և յերրորդ Ժողով Քաղկեդոնի։

Ներսէս ծնեալ էր ՚ի Գերմանիկ աւանի Սատրոց, մկրտեալ եւ անեալ յԱնտիոք, աշակերտեալ Թէոդորոսի Մոպսուէստացւոյ. ձեռնադրեալ քահանայ ՚ի Թէոդոտոս հայրապետէն Անտիոքայ։ Ինքնակալն Թէոդոս Փոքր կոչեաց զսա յաթոռն Կոստանդինուպոլսի, զի ակն ունէր տեսանել ՚ի նմա զմեծն Ոսկերերան, եւ մեծաւ փառօք ձեռնադրեալ նստաւ յաթոռ եպիսկոպոսութեան, և յառաջին ճառին զոր խօսեցաւ, ծանեան ուղղափառք զանբարտաւան միտս նորին։ Եհան հրաման կործանել զեկեղեցին Արիանոսաց, որոց ցասուցեալ ինքեանք մատուցին հուր յեկեղեցի անդր, եւ եղեւ հրդեհ մեծ և դղրդեցաւ քաղաքն ողջոյն. Թէպէտ զլեսան զնեստորիս արկանէին, այլ նա ոչ կասեցաւ յետս դառն ՚ի շնամանաւք, լկանօք և մահուամբ խակ հալածել զներքուածսըն և յափշտակել զեկեղեցիս նոցա. զի եդեալ էր ՚ի մտի խափանել զայլ ապզանդս առ ՚ի դիւրաւ հաստատել զիւրն, և սկիզբն առնէր ժայթքել զանլուսոր հայհոյութիւնս յատենի եկեղեցւոյ, «ես զծնեալն ՚ի Մարիամայ և կաթնատուն եղեալն Աստուածոյ ոչ Աստուած անուանեմ» (Սկիզբ.)։ Առաւել դեղեցիկ համառօտիկ մերս Խորենացի. «Նեստոր Հրէական իմացմանց հետեւեալ, հայհոյեաց զամենասուրբ կոյսն մարդածին լինել և ոչ աստուածածին։ Քանզի ծնեալն ՚ի նըմանէ առեալ սկիզբն, այլ Որդի առեր շնորհօք ՚ի Մարիամայ, եւ այլ Որդի ՚ի Հօրէ յաւաջ. արպէս զի լինել երկուս որդիս, որով երկրորդութիւնն՝ չերրորդութիւն լինի։ Գ. 61։

Ի բաղմանալ խռովութեանց ՚ի թագաւորեալ քաղաքին՝ եկ հրաման յինքնակալէն լինել ժողով եպիսկոպոսաց, և ժողովեցան 200 եպիսկոպոսունք ՚ի քաղաքն Եփեսոս (431)։

Կիւրեղ Աղէքսանդրեայ, Ծորնաղ երուսաղէմ, Ծովհան Անտիոքայ և այլք. եկին եւ երեք վոխանորդք Կելեստինոս հայրապետին Հռոմայ։ Ցետ բազմադիմի խռովութեանց և նենգութեանցն եղելոց, հուսկ ուրեմն ընկալաւ Նեստոր զվճիռ նզովից և հատեալ ՚ի բաց ընկեցաւ ՚ի հաղորդութենէ եկեղեցւոյ, եւ Հարք ժողովոյն դաւանեցին մի Որդի զՏէրն մեր Յիսուս Քրիստոս եւ Աստուածածնին զամենասուրբ կոյսն Մարիամ։ Տե՛ ՚է էէր Պապռնիան Տիեզերական ժողովոյ։ Եւ զի Մեծն Սահակ եւ Մեսրովբ ոչ կարացին հանդիպիլ ժողովոյս, գրով ընկալան զսահմանս և զկանոնս նորին ՚ի ձեռս Թարգմանչաց մերոց։ Եւ Հարք ժողովոյն հրամանաւ Թէոդոսի արձակեալ գնացին յիւրաքանչիւր քաղաք և յեկեղեցի իւր։ Իսկ Նեստոր տարագիր եղեւ յՈվասիս յանապատն Եգիպտոսի, ուր որդնալից լեալ ատակի (440)։

Եւտիքէս վանահայր միով յերեւելի մենաստանացն կոստանդինուպոլսեցւոյ՝ հան յերեւան զկարծիս մոլորութեան իւրոյ։ Փլաբիանոս հայրապետ քաղաքին՝ ժողովով 55 եպիսկոպոսաց յետ երից խրատելոյ՝ իբրեւ եգիտ հաստատուն ՚ի կարծիս մոլորութեան իւրոյ, դատապարտեաց զնա նզովիւք և ՚ի բաց կարեաց ՚ի հաղորդութենէ եկեղեցւոյ (448)։ Եկեղեցին Հայոց եւս նզովէ զնեստորէս, որոյ մոլորամիտ վարդապետութեան բաւական լինին յանդիմանական բանք Ներսիսի Շնորհալւոյ։

Որպէս ասաց Յովհաննէս Եւտիքէս
Թէ ոչ մարմին առ իսկապէս,
Այլ առ աչօք անց ընդ կուսին՝
Ծողովական նմանապէս.
Կամ կաղապար հրահալելեաց՝
Որ զրնութիւն ոչ տայ ինքեանց,
Միայն զձեւս քանդակեալ
Եւ զբանակս ենթակայեալ։

Ի բաղաքել Եւտիքեայ առ կայսրն՝ եւ հրաման դուման-
րել Ժողով յԵփեսոս. եկն Դէոսկորոս Աղէքսանդրացի ե-
պիսկոպոսօք իւրով աշխարհին, Ցուրնալ յԵրուսաղէմ, և
Պարսումայ երէց մենաստանին Աստուց. հրաւիրեաց Թէ-
ոդոս և զհայրապետն Հռոմայ զԼեւոն, բայց նա առաքեաց
զխոհանորդս իւր. Ժողովեցան Եպիսկոպոսունք 130 և ա-
ւելի եւս յԵփեսոս՝ յԿիկղեցին Ս. Աստուածածնէ, որպ
գահերէց էր Դէոսկորոս, եւ արդարացուցեալ զԵւտիքէս՝
կատարեալ ուղղափառ կոչեցին, եւ այս յաւէտ 'ի բանից
Ցուրնալ Պատրիարգի Երուսաղէմի, որ յառաջ մատուցեալ
ասէր. դառնեմ զԵւտիքէս 'ի բանից իւրոց կատարեալ
ուղղափառ, և Դէոսկորոս հաստատեաց զսահմանս Ժողո-
վոյն դարձուցանելով նմա վերստին զիրաւունս պատուոյ
երիցութեան և վանահայրութեան. Բարձին նաեւ զնզովս
Փլաբիանոսի 'ի վանականացն Եւտիքեայ բանիւք Ցուրնա-
զի, որ ասէր զայսպիսի ուղղափառան արժան է ընդունել
և դարձուցանել յիւրաքանչիւր 'ի կարգ ասելոցն իւր-
եանց: Ապա ած վճիռ դատապարտութեան Դէոսկորոս
'ի վերայ Փլաբիանոսի և Եւսիբեայ ամենատանողին Եւտի-
քեայ, և ձեռն արկին 'ի նոյն վճիռ 135 Եպիսկոպոսունք
և վանահարք, ընդ որս և Պարսումայ Աստի: Այլ Թէ յետ
այնորիկ ինչ դարձեցաւ 'ի Ժողովի անդ, Տես 'ի Տէոֆէր
Յոբյանոֆրոֆիէն Բազիկեդոնի Ժողովն: Այլ վասն մահուան
Փլաբիանոսի զանազան են կարծիք. ոմանք ասեն վախճա-
նեցաւ 'ի ըմբռնաց անտի, և այլք թէ յաքսորս վախճանե-
ցաւ. և ոմանք իսկ ասեն թէ ոտնակոխ եղև 'ի խուժադուժ
վանականացն Պարսումայ և 'ի խոտան անդ և մեռաւ:

Վախճանեցաւ կայսրն Թէոդոս Փոքր (450). եւ քոյր
նորին Պուլքերի եւ յամուսն կայսերական ամուսնացեալ
ընդ Մարկիանոսի Թրակացի յաղէտ. և զչխոյն Եւդոկիայ
ամօք յառաջ մեկնեալ էր յԵրուսաղէմ, զրկեալ 'ի կայսե-
րական պատուոյն. Թէպէտ Սոկրատ եւ այլք ասեն թէ
Կայսրն առաքեաց զնա (449):

Ի բազմանալ խռովութեանց և 'ի յաճախել թղթոց Լե-
ւոնի Պապին Հռոմայ, հան հրաման Մարկիանոս յամենայն
գաւառս տէրութեան իւրոյ գալ Ժողովիւ Եպիսկոպոսաց,
և տեղի Ժողովոյն ասհմանեցաւ 'ի Բազկեդոն քաղաք Բիւ-

Թանացւոց Հանդէպ Կոստանդնուպօլեայ, 'ի տաճարի
Տրեպտոյի վկային Եւփեմեայ կուսին: Եկին և Ժողովեցան
Եպիսկոպոսունք 'ի տասմանեալ տեղին. եկին եւ փոխա-
նորդք Հայրապետին Լեւոնի. կոչեցան Դէոսկորոս և Ցուր-
նալ, ամենեքեան իրրեւ 636. յամի Տեառն (451. Հ-Ի. 8):
Ի ձեռագիր յարձանագիրս Բազկեդոնի Ժողովոյն Թիւ
Եպիսկոպոսաց գումարելոց ոչ անցանէ աւելի քան զ300:

Ցուրժամ մատեան 'ի քննութիւն գործոց Բ. Ժողովոյն
Եփեսոսի, նզովեցին զԴէոսկորոս, զի զամենայն ինչ բըռ-
նութեամբ արար ատկին: Ցուրնալ Եպիսկոպոս Երուսաղէմի՝
խորհրդակից Դէոսկորոսի, իրրեւ տեաս Թէ գտաւ զպարաե-
ցաւ գաւանութիւն Եւտիքեայ և յայտնեցան բռնութիւնք
Դէոսկորեայ, յարուցեալ 'ի սերոյէ իւրմէ անց 'ի մխս
կողմն, ուր նստէին արեւելեայք, որոց հետեւեցան բա-
զումք յԵպիսկոպոսաց Պաղեստինոյ եւ այլոց գաւառաց:
Յերկրորդ գումարման ընթերցան զՀանդանակ հաւատոյ
եւ զդումարն Լեւոնի, զոր ընկալան Հարք Ժողովոյն: Եւ
ապա յետ երից հրաւիրելոյ 'ի Ժողով անդր զԴէոսկորոս՝
իրրեւ ոչ երեւեցաւ նա և ոչ առ յանձն գալ և ցուցանել
զիրաւունս իւր, հատին 'ի վերայ նորա վճիռ գատապար-
տութեան՝ մերկացուցեալ զնա 'ի քահանայական եւ Ե-
պիսկոպոսական պաշտամանէ. յայտ արարին զայս 'ի Թա-
գաւորեալ քաղաքի անդ և առ ժառանգաւորս Եկեղեց-
ւոյն Աղէքսանդրեայ: Եւ յետ կատարածի Ժողովոյն աք-
սորեցաւ Դէոսկորոս հրամանաւ Մարկիանոսի 'ի Գանգրա
Պապղագոնեայ, ուր մեռաւ Քշտաւութեամբ:

Ի չորրորդ գումարման ընկալան զչնդհանին եպիսկո-
պոսունս 'ի Ժողովն, որոց գլուխ էր Ցուրնալ Երուսաղէմի.
զի ընկալալ էին ձեռնագրով զոտումարն Լեւոնի: Ապա
ընթերցան զՀանդանակն հաւատոյ, զոր յօրինեալ էին. 'ի
սմա յառաջ բերին զսահմանս երից առաջին Ժողովոց եւ
զԹուղթն Լեւոնի, և 'ի վերայ Մարդեղութեան Բանին Ա-
տուածոյ սահմանեն այսպէս. «ԶՏէր մեր Յիսուս Քրիստոս
կատարեալ յԱստուածութեան և կատարեալ 'ի մարդկու-
թեան, Աստուած ճշմարիտ և մարդ ճշմարիտ, 'ի բանա-
ւոր հոգւոյ և 'ի մարմնոյ, բնակից Հօր ըստ Աստուածու-
թեան եւ բնակից մեզ ըստ մարդկութեան. ամենայնիւ

մեզ նման առանց մեղաց · յառաջ քան զյայտնեանս 'ի Հօրէ ծնեալ ըստ Աստուածութեանն · իսկ 'ի վերջին աւուրս նոյնն վասն մեր եւ վասն մերոյ փրկութեան 'ի Մարմնոյ յԱստուածածնին Կուսէ՝ ըստ Մարդկութեան ։ Զմի և զնոյն Բրիստոս Որդի , Տէր , Միածին , յերկուս բըներութիւնս՝ առանց չխոհութեան , առանց փոփոխութեան , առանց բաժանելոյ և առանց անջատելոյ ճանաչելի · բըներ ոչ 'ի բաց բարձեալ զայլակերպութիւն բնութեանց վասն միաւորութեանն , այլ մանաւանդ անկորուստ պահեալ զառանձին սեպհականութիւն երկուց բնութեանց , և 'ի մի դէմս և դոյացութիւն 'ի միասին ընթացեալ · ոչ յերկուս դէմս անջատեալ կամ բաժանեալ , այլ մի և նոյն Որդի և Միածին Աստուած բան , Տէր Յիսուս Քրիստոս ։ Ահա այս է դաւանութիւն Ժողովոյն Քաղկեդոնի ։

Որոշեցան հակառակութիւնքն երուսաղէմի և Անտիոքայ եպիսկոպոսաց վասն դաւառաց · Արաբիա և երկոքին Փիւնիկաստան , այն է Փիւնիկէ Ծովեզերեայ եւ Փիւնիկէ Լիբանանու ընդ իշխանութեամբ Անտիոքայ , իսկ երեքին մասունք աշխարհին Պաղեստինոյ կամ Ս · երկրին լինել ընդ իշխանութեամբ եպիսկոպոսին երուսաղէմի ։ Ի վերջին 'ի հնգետասաներրորդ գումարման ընթերցան 28 կանոնս սահմանեալ 'ի ղգուշութիւն հաստատելոց · և 'ի սմին գումարման սահմանեցին զաթոռն Կոստանդնուպոլսի երկրորդական պատուով մեծարել 'ի մէջ եկեղեցւոյ զկնի դահին Հռոմայ՝ 'ի պատիւ թագաւորեալ քաղաքին , որում զըժկամակեալ ընդդէմ կացին փոխանորդք Լեւոնի , և անդէն անդ նախ քան զյորուիլ ժողովոյն անկաւ գժտութիւն 'ի միջի նոցա ։ Տէս յոբյնոփէյէ ոյն ժողվ · Ե Պաթ · Տէեղ · ժող · 336 ։

Դարձան եպիսկոպոսունք և վանականք յիւրաքանչիւր աշխարհ իւր և կայսրն սպառ հրովարտակ չհակառակիլ ումեք սահմանաց Ժողովոյն Քաղկեդոնի · չեւ էր սիրեալ հրովարտակն եւ բաղումք 'ի հարց ոչ ևս էին հաճեալ 'ի տեղիս իւրեանց , իսկ եւ իսկ սկիզբն առնոյր աղմուկս , Նախ 'ի Պաղեստին աճապարեալ հասին վանականք բազմաք , որոց գլխաւոր էր Թէոդոսիոս ումն անուն , ժողովեալ վանականացն գունդ գունդ յուզեալ չխոհեմ

յին զաշխարհն եւ սրիկին զանցմն խռովութեան 'ի միջս բազմաց · հասեալ 'ի փողոցս և 'ի հրապարակս տապնապելին զջատագովս ժողովոյն Քաղկեդոնի , և յամենայն սրտիք դոչէին անդրկիւղ , թէ ընդս մեծ գործեցաւ սուրբ Հաւատոյ 'ի Սիւնհոդոսին Քաղկեդոնի , զարձան 'ի վարդապետութիւն Նեստորի ։ Ապա դիմեալ վանականաց առ դվալն Եւդոկիայ , որ կայր մնայր անդէն յերուսաղէմ , զսին օգնութիւն 'ի նմանէ , եւ զրդռեալ զժողովուրդս զրաւեալ կալան զքաղաքն , եւ Թէոդոսիոս վանականօքն չոքաւ առ Յորնադ հայրապետ երուսաղէմի և մահու ըսպառնալեօք բուռն առնէին նմա նզովել զժողովն Քաղկեդոնի · իբրեւ ոչ ետ նա տեղի բանից նոցա , ժամադիր եղեն խռովելոքն 'ի ձեռն առն ուրուք զաղանի զաւազանել և բառնալ զնա 'ի կենաց · իսկ Յորնադ խոյս տուեալ անտի փախստեայ անկաւ 'ի Կոստանդինուպոլիս , և փոխանակ նորա անդիտութեամբ ապանաւ Սեւերեանոս եպիսկոպոս Սկիւթոպոլեայ ։ Համարձակեալ վանականաց այնուհետեւ տային աւերել և քանդել խաժանին զքաղաքս և զգիւղս Եւ չկարէր լինել դիմակալ զօրն ։ Եւ ապա առեալ ածին վառօք զԹէոդոսիոս 'ի տաճար Սուրբ Յարութեան եւ եռուն ձեռնադրել զնա եպիսկոպոս եւ նստուցին յաթոռն երուսաղէմի , եւ մերժեցին զայլ եպիսկոպոսունս յաթոռոց , և եդին 'ի տեղի նոցա զձեռնադրեալն 'ի Թէոդոսիոսէ ։ Համբաւք աղետից հասին կալան ղլսելիս Մարկիանեայ , և նա դրեաց առ Դորոթէոս կոչնակալ Պաղեստինոյ , և յետ 20 ամաց ընկեցաւ Թէոդոսիոս յաթոռոյն և աքսորեցաւ և վերստին կալաւ զաթոռն Յորնադ (453) , և հատոյց տոկոսեօք զչարիս վնասականացն այնոցիկ՝ որք հակառակն կային նմա , և սկիզբն առնէր համարձակ քարոզել յամենայն ուրեք զժողովն Քաղկեդոնի · իսկ որք ոչն կամէին լսել ձայնի նորա՝ հալածէր և չարչարէր քանդելով և աւարելով իսկ զնկերսն նոցա ։

Խառապոյն եւս դիպեցան իրքն յԱղէքսանդրիա · հասին անդր եպիսկոպոսունք եգիպտացիք հանդերձ Թղթով ընդնակալին և եռուն զրոյց թէ մերժեցաւ և աքսորեցաւ Դիոսկորոս եւ ընտրեցաւ հայրապետ սարկաւագ նորին

Պրոտէրիոս · յերկուս ձեղքեցաւ բազմութիւնն, ոմանք զՊրոտերիոս կամէին եւ այլք հակառակեալ ազազակէին թէ՝ ոչ է օրէն ՚ի կենդանութեան հայրապետի՝ կացուցանել նոր հայրապետ · և զօրացեալ կողմանն Դիոսկորեանց առաւել զրդռեցին զամբոխն և յարուցին խառն ժեծ, քարաձիգ լեալ հալածեցին զսպասաւորն պինուորս յաւերակս մեհենին Սերապեայ և անդէն այրեցին զնոսա կենդանւոյն· յաւուրս 6 հասանէին անդր ՚ի կայսերական քաղաքէ նոր դունդ 2000 արանց · բարձաւ աղմուկն եւ Պրոտերիոս իսկ և իսկ դուսարեաց ժողով եպիսկոպոսաց յԱղէքսանդրիա եւ դատապարտեաց զոմանս ՚ի վանականաց, որք ասէին մի բնութիւն, որոց պարագլուխք էին կուզն Տիմոթէոս և Պետրոս Թոթոզ և աքսորեցան Հրամանաւ Կայսեր· սակայն և այնպէս տատանէր քաղաքն ՚ի խառնչաց ·

Ցետ վախճանի Պուլքերիայ և Մարկիանոս՝ պսակեցաւ Լէւոն Ա· (457) · Դարձան յաքսորանաց Տիմոթէոս կուզ և Պետրոս Թոթոզ · եմուտ յեկեղեցին Աղէքսանդրացւոց Տիմոթէոս և ձեռնադրեցաւ եպիսկոպոս առաջի բազմամբոխ ժողովրդոց · ապան զՊրոտէրիոս և զնոյն ընկերս նորա և ՚ի ժողովի եպիսկոպոսաց նզովեաց զժողովն Քաղկեդոնի, զԼեւոն և զառաջնորդս նորին, և զհակառակորդս Եւտիքեայ և Դիոսկորեայ · և կացոյց յաշխարհն եգիպտացւոց զեպիսկոպոսունս իւրոյ կողման · Աքսորեցաւ Տիմոթէոս կուզ հրամանաւ Լէւոնի երկրորդի և ընտրեցաւ հայրապետ այնր աթոռոյ Տիմոթէոս իսանատուն ·

Նոյն անուք անցին և յԱնտիոք· զի յետ մահուան Պարսումայի Ասորւոյ (458), եկն անդ Պետրոս Թափիչ ձեռընտուութեամբ Զենոնի փեսայի Կայսեր, եւ վերստին տարագիր եղեւ անտի · Այլ միւսանգամ խառնակեաց զամենայն Կայսրն Բասիլիսկոս (475)· դարձոյց զկուզն Տիմոթէոս յԱղէքսանդրիա եւ զՊետրոս Թափիչ յԱնտիոք· նզովեաց կայսերական հրովարտակաւ զժողովն Քաղկեդոնի և զառաջնորդսն Լէւոնի, և հրամայեաց զամենայն արձանագիրս ժողովոյն հուրս մատնել · 300 եպիսկոպոսունք հաւանեցան դատապարտութեան ժողովոյն· իսկ Ակակիոս հայրապետ թաղաւորեալ քաղաքին չհաւանեալ եկաց զիմադարձ· խռովեցաւ ժողովուրդն և ընկեցաւ Բասիլիսկոս

յաթոռոյ, եւ աքսորեաց զնա Կայսրն Զենոն հանդերձ որդւովք իւրովք ՚ի դղեակն Կապադովկեայ, ուր սովալլուկ վճարեցան ՚ի կենաց · Հա՛ն Զենոն զհրովարտակն միաբանութեան ըստ թէոդորութեան Ակակիոսի հայրապետի, յորում մերժէր զժողովն Քաղկեդոնի · վճարեցաւ Զենոն ՚ի կենաց, և ա՛ռ Թիրանին Անաստաս (491) · Սկիզբն լինէր տատակութեամբ յուզելոյ մեծի դժուարութեան յեպիսկոպոսունս զժողովոյն Քաղկեդոնի, որոց կամակից իսկ էր կայսրն · ընկեցան յաթոռոյ ոմանք յերեւելի եպիսկոպոսաց և աքսորեցան, ընդ որս էին եղիա հայրապետ Երուսաղէմի և Սարայ վանահայր ·

Զժողովն Քաղկեդոնի ՚ի սկզբանէ և այսր ոչ ընկալաւ եկեղեցին Հայոց, այլ միայն ՚ի զինին եկաց հանդիպել խառնութեանց եւ դժուարութեանց եպիսկոպոսաց և այլոց, որ եւ զինի ինքեան եւս ունէր հաւանիլ· Ոչ ընկալան նաեւ եպիսկոպոսիք, եթովպացիք և Ասորիք, այնքան հակառակեալ միմեանց մինչեւ չաղաղակել զձեռս եւ ներկել զսեղանս արեամբ, զորմէ ասացաք սուղ ինչ բանիւ · ի ժողովի անդ ոչ գտան ՚ի հարցն Հայոց· զի մեծն Սահակ եւ սուրբն Մեսրովպ վաղ իսկ վախճանեալ էին, եւ որք մնացին զինի նոցա չէր հնար թողուլ զաշխարհն անխնամ, զի արդէն հուրն Պարսկական Ատրուշանաց և սպառնալիք թագաւորին ահ արկանէր բառնալ և ջնջել զքրիստոնէութիւն յաշխարհէն Հայոց, և տնկել ՚ի տեղի նորա զկրօնս մոգութեան· Թէպէտ եւ Հայք խնդրեցին օգնութիւն ՚ի Թէոդոսէ, այլ տարաժամ վախճան նորա եղեւ խափան խոստմանն· իսկ Մարկիանոս ոչ միայն անտես արար զխնդիրս Հայոց, այլ եւ դաչինս կռեաց ընդ թագաւորին Պարսից՝ չ՚լինիլ ձեռնտու Հայոց ոչ զինուք եւ ոչ այլ ինչ իրօք, յորմէ վատահութիւն առեալ նորա անկասկած դիմեաց ՚ի վերայ աշխարհին Հայոց, որ և եղեւ պատերազմն Վարդանանց (451), ուր անկան բազմաց ընդ զօրավարին, իշխանք եւ վարդապետք մեր վտարեցան յօտարութիւն եւ տառապեցան ՚ի գանս, ՚ի բանս եւ ՚ի մահուընս իսկ զլխովին, զորոց հանդամանս գրեցին երկար եղիշէ եւ Ղազար վարդապետք ականատեսք · զի թէպէտ յաւուրս Յազկերտի Մանդակունւոյ

բերին 'ի Հայս զսահմանս Ժողովոյն Քաղկեդոնի, այլ նոքա ոչ ընկալան զնա։

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա.

Վանօրայք Հայոց Յերուսաղէմ։ Անաստաս Վարդապետ։ Հայ Հաւատք։

Ա ՅԱՐԳԵՍՑՈՒԿ սատանօր ըստ կանխադոյն խոստման մերոյ՝ զնկեղեցիս և զվենաստանս, որք կանգնեցան Յերուսաղէմ 'ի զանազան ժամանակս 'ի թագաւորէն Տրդատայ, 'ի Հայրապետաց եւ 'ի Նախարարաց ազգիս · զի առ Ջերմեռանդ փափաքանաց բազմութեան Ուխտաւորաց յամախելոց անդր 'ի դէպ լսկ էր բազմացուցանել զեկեղեցիս և զվենաստանս 'ի Պաղեստին ըստ զանազան ցեղից 'ի դիւրութիւն նոցին · ուր էին բազմութիւն կրօնաւորաց հոգեւոր տեսչաւ նոցին, սահմանեալ 'ի պէտս նոցա գիւղս և ագարակս, որոց շահեկան արդիւնքն առաքէին սմ ըստ սմէ Յերուսաղէմ 'ի հաստատութիւն վանօրէից և եկեղեցեաց։ Սակայն այս բարեկարգութիւն ոչ տեւեաց ընդ երկար, զի բաց 'ի Քաղկեդոնի Ժողովոյն յորում հալածանս կրեցին վանականք Հայոց, աւերեցաւ նաեւ աշխարհն Հայոց յերեսաց հինից և ասպատակաց, և պահասեցան թուշակք նոցին։ Դիցուք արդ զոր աւանդէ Անաստաս վարդապետ ոմն, և 'ի տարեւ [1] նոցին 'ի կարգի ծանօթութեանց թուանշանօք զբանս Մովսէսի Կաղանկատուացոյ, զոր յանուն Ազուանից վերագրէ · և նշանակեցուք զտեղիս ոմանց վանօրէից, որք այժմ յայտնի երեւին։

Տեառն Անաստասայ բարեշնորհ վարդապետի գրեալ յայտարարութիւնս 'ի խնդրոյ բարեսիրաշնորհ իշխանին Համազասպայ Կամսարականի Պալհավունոյ, որ կամէր գնալ Յերուսաղէմ,

[1] Ասէ այնց որ Յերուսաղէմ են վենեալ Աղուանից անուն, զոր յերանելոյն Անաստասայ առ Վահրամ Մամիկոնեան ուսաք, այս են։ Ցաթ. Մաշ. Կաղանկատ. Գլ. ՍԲ. Երես 423։

Ի ժամանակս թագաւորութեան Մեծին Տրդատայ եւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ չինեցան 'ի մեծամեծ իշխանացն մերոց 'ի Ս. Քաղաքն Երուսաղէմ բազում վանորայք, որոց ականատես եղեալ դրեցի իւրաքանչիւր զնոսա յանուանէ յանուանէ։

1°. Հառաչման վանքն Պետրոսի Առաքելոյ · չինեցաւ յարքունի դանձէն, արտաքոյ քաղաքին 'ի ներքոյ Սիոնի յարեւելից կուսէ · (այժմ աւերակ, միայն այրն երեւի) [1]։

2°. [2] Պանտակ վանքն Ս. Կարապետի · յարեւելից կողմն Ջիթենեաց լերինն՝ չինեցաւ արքունի ծախիւք, յանուն Ս. Կաթուղիկէին որ 'ի վաղարշապատ քաղաքի, որ է 'ի ձեռս Աղվանից [3]։

Այս վանք կանգուն կայր մինչեւ 12° դար · յետ մեկնելոյ խաչակրեաց 'ի Պաղեստինոյ կործանեցին եգիպտացիք, մինչ զի տեղւոյն եւ անուան անգամ լինիլ անյայտ, որպէս այլ վանօրայք · իսկ յաւուրս մեր (1868) վանահայրն Ռուսաց գնեաց զայս տեղի Արաբացւոց իբրեւ պարտէզ թզենեաց և անդ սերմանելի, և 'ի մաքրելն գտաւ երեւեցան գերեզմանք Նախնեացն Հայոց արձա-

[1] Հրամանաւ և ծախիւք երանելւոյն Տրդատայ Թագաւորին Հայոց կանգնեալ է վանքս այս հոյակապ · այլ թէ յորում Թուականի կործանեալ և ի սպառ եղծեալ և յայտականութիւն գայթակղ, չէ յայտ։ Ի ձեռագիր օրինակս զոր ունիմք առ մեզ, գրեալ է 'ի կողմն Սելեմանայ · սակայն քննելով զտեղին գտանի այժմ 'ի Սիոնէ իբր 15 վայրկեան դէպ յարեւելս՝ փոքր ինչ զատ 'ի վայր իջանելով · ուստի յայտնի երեւի Սիոնվանայ գիւղն իբր պարապարիւք յարեւելս։ Յաւուրս մեր 1887 զտեղիս զայս որմնալ եդին Կամէն Գաղղեացի, և գնեաց Արաբացւոց զտեղին՝ զոր որմնալ եդին Կամէն Գաղղեացի, յորս անկեալ են ծառք ձիթենեաց · և յանձն արար Օգոստինեան կրօնաւորաց, որք ոկսան պեղել զնոսա և մաքրել զտեղին, բայց 'ի միայն երեւեցաւ միւս եւս այլ լցեալ հողով, և մնացորդ հաստատուն որմոց · և 12 ջրամբարք · և ջրհորք, եւ քանի գրամբ պղնձիք Ագրիանոսի և Կոստանդեայ։

[2] Հայր Ղ. Ալիշան Թարգմանէ Պանդակեանի · վրիպակ երեւի · զի Պանտակեանքն Պանան յանուանէ առեալ է զծագումն և յանուն Ս. Կարապետի է։

[3] Պանտակեանքն որ յարեւելից կողմանէ 'ի Ջիթենեաց լերինն կայ · Պանան ոմն ճգնաւոր Աղուանից եղեալ նախաշինող, եւ այժմ Ագուանք քահանայ ոմն։

նագրութեամբ երկաթագիր Մեսրոպեան տառիւք յօրինեալ մուզայիւք։ Ուխն գերեզմանք՝ ի մի կարգ ծածկեալ համարաւ, և՝ ի վերայ նոցա հարթ հաւասար, յօրինուածք սքանչելի պատկերաց և ծաղկանց զոյն զոյն մուզայիւք։ Ի չորից մասանց մի մասն միայն գերծեալ, յորոց վերայ երեւի հոյակապ կամար դրան՝ և՝ ի միջի նորա գաւն, 3 ճկուռնք յերիս չրջանակս՝ զանազանեալ՝ ի միմեանց, արծիւ, ոզկոյզ խաղողոյ երկու, բաղ, և այլ ծաղիկք, և յեզրն արձանագիր այսպէս։

ԱՅՍ ԴԻՐ Է ԵՐԱՆԵԼՈՒՀՈՒ ՇՈՒՇԱՆԿԱՆ ՄԱՒՐՆ ԱՐՏԱԻԱՆԱՑ ՀՈՌԻ ԺԸ։

Արտաւան որդի Յովհաննու Արչակունւոյ (539), ցուցեալ բազում քաջութիւնս՝ ի պատերազմին Խոսրովու Պարսից արքային, ապա զինուորեալ՝ ի դուռն Կայսեր, առաքեցաւ յԱխրիկ ընդդէմ Թանթարայ։ Տէս Պ–ի Հայոց, Հ. Մ. Զամչեան. Հատ. Բ. 241. 251։ Մայր սորա Շուշանիկ եկեալ յերուսաղէմ վասն, և թաղի անդ՝ ի վանս Ս. Կարապետին, որ եւ յետոյ որդի նորին տայ յօրինել չիրիմ՝ ի վերայ նորա։ Իցէ թէ և յաւերեալ տեղիան հին նշանակք եւ արձանագիրք թերեւս յայտնիցին զանուանս այլոց, այլ դաժանութիւն ժամանակին ծածկեալ է զայնս։

Մերձ սոցա են 2 բաւիղք իրր չափարան՝ ի միում նկարեալ էին Խաչք 3 ՝ի վերայ ծեփի, և՝ ի միւսում երեւէին հայելի տառք։ Ի վերայ սոցա կառույց վանահայրն Ռուսաց սենեակ՝ անեղծ պահելով զհնութիւնն. սորա հիւսիսային կողմն է աւերակն եկեղեցւոյ, զոր քանդեալ վանահայրն կառույց՝ ի տեղի նորա սենեակս վայելուչս, և առաջի նորա անկեալ զանտառս նոճեաց։

Ցարեւելից կուսէ չինուածոյս գտանին 16 դամբարանք չինեալք քարուկիր երկկարդ ուրոյն ուրոյն, ոմանց կափարիչքն ամբողջք և ծածկեալք, եւ ոմանց խորտակեալ եւ բացեալ՝ ի վերայ նոցա ընթերցեալ լինին անուանքդ ՋՈՋԻԿ՝ ՇՈՒՇԱՆ ԵՒ ՄԱՒՐԻՆ՝ և այլքն եղծեալ են։

Սակաւ ինչ հեռի՝ ի սոցանէ է և առանձին չիրիմ, յորոյ վերայ յօրինեալ և գրեալ է մուզայիւք յետագոյ առպանագիրն։

ԲԱՐԵԹԱԻՍ ՈՒՆԵԼՈՎ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՋՈՒՐԲ ԵՒՍԻՑ ԵՒ ՋԵՐԱՆԵԼԻ ՀԱՐՍՍ ԵՒՎԱԳԱՆ ԱՐԱՔԻ ՎԱՍՆ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՑ ՋՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆ ՋՈՅՑ

Եաղլան կամ Արաւաղան է անուն արքային Աղուանից՝ ի խնդրոյ սորա արար նշանագիր ազգին Աղուանից Ս. Վարդապետեան Մեսրովբ (420)։ Ուստի գրեալ է տապանագիրս՝ ի ժամանակս Ս. Սահակայ և Մեսրովբայ և թադաւորին Արաւաղանայ, որպէս յայտնի կացուցանեն հնութիւնք տառիցն։

Դարձեալ առանձին տապանագիր մուզայիւք յայլոյր։

ՎԱՍՆ ԱՂԱԻԹԻՑ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԹԻՒԱՑ ԱՐԱՍՈՒ ԵՒ ՄԱՒՐԿԱՆ

Սոքա չգտանին՝ ի Պատմագիրս՝ թերեւս իցեն յաղագ Աղուանից։ Զայսոսիկ Հայկական հնութիւնս վանահայրն Ռուսաց պահեաց զգուշութեամբ։

Ցարեւմուտս կոյս և կից սոյն վանաց՝ գտաւ գերեզմանք Ցունաց ձեռամբ սոյն վանահօր. եկեղեցին յատակեալ կիսով չափ սպիտակ մարմարիոնեաւ ներկեալ արեամբ Քրիստոնէից՝ և ճեպեալքն մուզայիւք, և՝ ի մէջ եկեղեցւոյն գերեզման մի Ցունական տապանագրաւ։ յայսմ տեղւոջ եւս կանգնեաց վանահայրն եկեղեցի վայելուչ կոփածոյ քարամբք և գմբէթաւոր։

3°. Մժավանքն (*) յանուն սրբոց Քառասնից՝ մերձ՝ ի նա, զոր Տաճկիք ունին։

Այս վանք է՝ ի հիւսիսային կողմն Ս. Կարապետի իբրեւ քարընկէց մի. հիմունք, չրջապատ որմոյ միայն երեւին այժմ. ՝ի կեդրոնի կանգնեալ են Արաբացիք գմբէթ և կոչեն ըստ բարբառոյ իւրեանց Գ–պէր էլ–ղոյն ըհ–հոբ, գմբէթք 40 Մարտիրոսաց ըստ առաջին անուան իւրոյ, և մի մասն գերեզմանատուն պիւղականաց։ Ասա եւս գոն գերեզմանք նախնեաց մերոց, բայց ծածկեալ են Արաբացիք։

(*) Թերեւս Մժուժ։

4°. Բատայ վանք Շիրակացւոց, որ յետոյ կնկղաւորաց վանք անուանեցաւ մերձ ՚ի նա · անյայտ տեղին։

5°. Սուրբ Գէորգայ վանք · ՚ի նոյն կողմն զոր Տաճիկք աւերեցին · զայս տեղի Ցոյնք առեալ մաքրեցին, որ է յարեւելս Ղաղբա- գիւղին ՚ի տեղին՝ ուր ընդ առաջ եղեւ Մարթայ Ցիսուսի, և ՚ի վերայ քարանց յատակի եկեղեցւոյն երեւէին Հայկական տառ Տ։ Սակայն տեղին հեռի և խորան եկեղեցւոյն է ՚ի ձեւ Ցունաց · այժմ է եկեղեցի նոր և վանք նոցա։

6°. Նորավանքն՝ մերձ գերեզմանին Եսայեայ մարգարէին · զոր քակեալ են Տաճիկք։

7°. Խաթայ երանելւոյ վանքն, մերձ Սուրբ գերեզմանի մօր Տեառն, թերեւս է պարտէզն ՚ի ձեռս Հայոց։

8°. Սրբոյն Պողիքտոսի (*) վանքն, ՚ի կողմն հիւսիսոյ ՚ի Զորրորդ ապետէն Հայոց չինեալ։

9°. Աբծրուեցաց Ս · Գէորգայ վանքն։

10°. Զարեհաւանի վանքն՝ արտաքոյ քաղաքին։

11°. Մամիկոնէից վանքն՝ որ յանուն Ս · Կարապետին։

12°. Գուգարաց վանքն՝ արտաքոյ քաղաքին։

13°. Բղեշխի վանքն՝ յանուն սրբոյն Սարգսի եւ Բագոսի մերձ ՚ի Սիօն։

14°. Ընդտուեցաց վանքն, ուր էր ուրկանոց վանօրէից Հայոց։ Արեւելեան կողմն Հրեշտակապետի վանաց հողակոյտ, յորոյ աւերակս նստէին տակաւին ուրուկք երուսաղէմի, որ յետոյ բարձան եւ բնակարանքն քակեցան։ Սոքա ունէին սահմանեալ հաց ՚ի վանաց Ս · Յակոբայ, որ յետոյ արգելաւ։

15°. Սիւնեաց վանքն՝ որ յանուն Ս · Գէորգայ · զոր Տաճիկք քակեցին։

16°. Խորխոռուեցաց վանքն՝ յայն կողմն կամ արտաքոյ քաղաքին։

(*) Պողիքտոս գինուոյ նահատակեալ յաւուրս Դեկոսի կայսեր ՚ի Միլիտինէ Փոքուն Հայոց, որ այժմ ասի Մալաթիա, և Թաղեալ անդ, յամին 249, կամ 259։ Իսկ չորրորդապետն է Աբբէղայոս վերակոչեալ չորրորդ Հայոց Ծորիայ գաւառին, որ ՚ի ձանապարհին սրով սպան զՍ · Հայրապետն Արիստակէս կրտսեր որդի Ս · Գրիգորի Լուսաւորչին և ինքն փախուցեալ վերծաւ ՚ի Տարան Ախլիկեցւոց։

17°. Երիցավանքն Ս · Աստուածածնի առ դրան Դաւթի · այժմ ՚ի ձեռս Արթասցւոց։

18°. Սրբոց Ղեւոնդեանց վանքն։

19°. Կրտի վանքն՝ չինեալ ՚ի Զորրորդապետէն Հայոց ՚ի կողմն յարեւելից։

20°. Անճեւացեաց վանքն՝ որ յանուն Ս · Անանիայ մերձ ՚ի Բեթղեհէմ։

Զայս տեղի դնեն ոմանք մերձ ՚ի ջրհորս Դաւթի, որ այժմ միացեալ է ընդ քաղաքին · եւ թէ երեւեալ իցէ նչմարանք հնութեան, և գիւղականք ծածկեալ են զայն · իսկ մեք հաւանական կարծեօք դնեմք մերձ ազարակին Պաբա Տէր կ՚ելեալ այգւոյ տեղւոյն, ուր էին աւերակք չինուածոց, եւ անդ գտաք բեկորք աւազանի, ՚ի վերայ որոց էր Հայկական տառքս գրեալ իբր 15° դարու, այսպէս « Տ՚ր · · · · »։

21°. Արշակունեաց վանքն, ՚ի Ս · Պրոպատիկէի կողմն է։

Առ Պրոպատիկէիւ տեսանի հոյակապ և գմբեթարդ եկեղեցին յանուն Յովակիմայ և Աննայի և տեղի ծննդեան ամենօրհնեալ Կուսին։ Սալահատակն կարգեալ էր զայն դարոց այլազգեաց · ձեւ եկեղեցւոյն է նման եկեղեցեացն Հայոց երեք խորանաւ, եւ երկաթի օզակք վարագուրին Աւազ սեղանոյ կային տակաւին ցմեր ժամանակս ՚ի գլուխ սեանց · եւ պատկեր Աւետեաց գարձեալ ՚ի սիւնն չորիմ եւ չահեկէ եղծեալ, զոր բարձին Լատինք ՚ի տիրելն Իերուսաղեմ, զորմէ յետոյ։

22°. Գազաւոնի վանքն, յանուն սրբոց Հռիփսիմեայ և Գայիանեայ, առ դրան Ս · Յարութեան։

Նախադուռն տաճարին Ս · Յարութեան էր յառաջագոյն յարեւելս ՚ի ձախակողմն փողոցին, որ տանի ՚ի Դ՚ր ղ՚ն։ Ասաի քանի մի աստիճանաւ ելանէ ՚ի վեր, ուր կանգնեալ կան երիւս հնացեալ սիւնք առ դրան գործարանի օճառի, եւ ճանապարհն հանէ ՚ի վանս Խալիտայ։ Հանդիպ սորա չաչակողմն փողոցին երեւին կրպակք եւ փուռ հացի՝ ինացորդք հին չինուածոյն, և ՚ի փուռն անդ տեսանի առաջին դուռն վանաց երկու սեամբք աստի և անտի · սակաւ ինչ յառաջ գնացեալ մտանէ ՚ի ներքոյ կամարի և դառնայ յարեւելս, ուր է այժմեան դուռն հանդիպ տան մեծ,

որ յառաջագոյն էր հիւսիսատապարան տէրութեան Ալմանիոյ։ Այս է Գազաւանի վանքն. եկեղեցին կանգնեալ է ի վերայ 12 կարծրաքար սեանց, և թաղեալ մինչ ի խոյեսկան, դժբէթն անկեալ և հնութիւնք եկեղեցւոյն խափառ ծածկեալ, թէպէտ տեղին ընդարձակ, սակայն լցեալ հողով և խանգարեալ է, և ուրեք ուրեք մանուանդ ի վերին յարկն նորանոր շինուածովք այլայլեալ և է այժմ ի ձեռս սերնդոց Հապոյ-ի կոչեցեալ այլազգեաց, որք պատմեցին մեզ թէ՝ էր յառաջագոյն եկեղեցի և վանք ի ժամանակս Խաչակրաց, և ի տիրելն Սալահատինայ՝ դրաւեալ այլազգեաց արարին հիւրանոց կամ խան, և ապա չտեսմարան ձիմաւիզոյ եւ այժմ է գործարան օճառի։ Գազավան քաղ կամնարական ի տոհմէ նախարարաց որ յետոյ եւ Արշակունի դրեցաւ (386 — 389)։

23°. Կամսարականաց վանքն, յանուն սրբոյ Լուսաւորչին հիմնեալ յԱրշակունեաց։

24°. Ամատունեաց վանքն. ի կողմն սուրբ Սիոնի։

25°. Միւս եւս Ամատունեաց վանք դոյ անդ, ուր 100 կուսանաց բնակին, թերեւս այժմեան Հրեշտակապետի վանքն է։

26°. Մամիկոնէից վանքն, յանուն սուրբ Կարապետին ի կողմն Սիոնի, անյայտ։

27°. 28°. 29°. 30°. Զորս վանք ի կողմն Սեբաստիոյ։

31°. Կառնացւոց վանքն՝ հիմնեալ ի Սմբատայ Բագրատունեաց։

32°. Սահառունեայ վանքն, զոր Քաբա-Վանի կոչեն, որ Տէառն եղբօրն է, զոր ընկալաւ վէմն (*)։

33°. Պալհառունեաց կամ Պալունեաց վանքն, ի կողմն Գաղիւեայ ձորին։

34°. Այլ Անձեւացեաց վանքն, ի նոյն կողմն։

35°. Պաղակունեաց վանքն, ի նոյն կողմն, այժմ Տահիկ ունին։

36°. Սրբոց Քառասնից վանքն, ի նոյն կողմն։

(*) Ի սա ի ձորն Յովսափատ ի հարաւ կայ արձանին Աբխազոնից, որպէս գրեցաք յառաջագոյն. յերեսս ժայռին երեւին գեւս պատուհանքն, յորոց վերայ կառուցեալ էր սուն վանքն. այժմ բոլորովին անյայտ, և տեղին լեալ գերեզմանատուն Հրէից։

37°. Կոտայեցւոց վանքն, ի նոյն կողմն Զիթենեաց լերին, ուր Քրիստոս զինն երանութիւնս ետ։

38°. Վարաժնունեաց վանքն, ի կողմն Սոզոմենեան տաճարին։

39°. Վանանդացեաց վանքն, անդ։

40°. Զատեցեաց վանքն, եւս անդ։

41°. Մոկաց վանքն, ի կողմն Գեթսեմանի։

42°. Բաջբերունեաց վանքն, ի կողմն Գալիլեայ լերին։

43°. Սանատունեաց վանքն, եւս անդ։

44°. Մաղխազեաց վանքն, այժմ ի ձեռս Հառոմոյ։

45°. Սուրբ Յովհաննու վանքն, առ դրան Ս. Յարութեան. փոքր մնասուս ի ձեռս Հայոց ի գաւիթ տաճարին Սուրբ Յարութեան։

46°. Սանատունեաց կամ Սպանատունեաց վանքն, այժմ աւերակ է։

47°. Արշակունեաց կամ Արշամունեաց վանքն, այժմ աւերակ է։

48°. Կողայ կամ Կողբայ վանքն, ի նոյն կողմն, զոր Հառոմն ունի։

49°. Վանք մի եւս յարեւելից կողմն։

50°. 51°. 52°. Դերջանաց վանքն։

53°. Սիւնեաց վանքն, յարեւելից կողմն է։

54°. Սիւնեաց վանք մի եւս ի ձորն Յովսափատ։

55°. Սիւնեաց վանք մի ի ձորն Սարայի։

56°. Սիւնեաց վանք մի եւս, զոր Տահիկք ունին այժմ։

57°. Այլ վանք Սիւնեաց յարեւելս։

58°. Բատրոյ (*) Ս. Աստուածածնի վանքն, առ աշտարակին Դաւթի (**)։

59°. Կաղանդառորաց (*) վանքն, ի նոյն կողմն։

(*) Յարեւելից հարաւոյ եկեղեցւոյն Անգլիացւոց կայ ձեայ ամբողջ եկեղեցի մի իւրով հնութեամբ ի ձեռս պղտգեաց։

(**) Պարտաւայ ձայնք Ս. Աստուածածնի. որ առ աշտարակին Դաւթի. այժմ ունի կին ունի Մարիամ անուն Շամբուրեցի, և զկնեն Տահիկ։

(*) Կացանկայտուաց ձայնք ի նոյն կողմն. այժմ Թէոդորոս ունի Քրիստոնեայ. Տահիկ Աբրահամեան գոլով Ազգակամեայ (Թերեւս քան Աբրահամեան ազգակամեայ կամ գաշնակից) Ազգակամեաց ի Զարիշատայ. և զկնեն անկրաւ և չար Տահիկ։

60°. Մարասայ [5] Ս. Գրիգորի վանք։

61°. Արցախայ վանքն, ի նոյն կողմն ի հարաւոյ [*]։

62°. 63°. 64°. Այլ երեք վանք Աղվանից, զոր Տաճիկք ունին այժմ։

65°. 66°. 67°. [6] Երեք վանք եւս գոն ի մէջ քաղաքին չինեալք։

68°. Տաշրացւոց վանքն յանուն Ս. Գէորգայ Աբրշակունեաց չինեալ։

69°. 70°. 71°. 72°. Եւ այլ չորս վանք մեծամեծ ի մէջ քաղաքին չինեալ ի Մամիկոնէից, որոց բովանդակն եօթանասուն և երկու վանօրայս լինին չինեալք յիշխանաց մերոց ի Ս. Քաղաքն երուսաղէմ։

Այլ [*] և Աստուածահոմս Ս. Տնօրինական տեղիքն Քրիստոսի Տեառն մերոյ, նա եւս զմեծամեծ եկեղեցիսն, զՍ. Ծնունդն, զՍ. Գողգոթայն, զԱստուածընկալ Ս. Գերեզմանն, զՀամբարձման Ոտնատեղին, զՍ. Յակոբ, զՔրիստափակապետն, զԲրկիչն, զՇաւնեւերն, զՄաչ Գիւտն, զեկեղեցի Ս. Լուսաւորչի ի ժամանակս Կոստանդեայ և Տըրդատայ Ս. Թադեւորայն չինեալք հաստատեցան ի պէտս

---

[5] Ամարասայ վանք Ս. Գրիգոր. այժմ ունի կին մի Գրիգորի անուն. և զկնի ունի Տաճիկ։

[*] Ի մէջ եկեղեցւոյն Անգղայաց և կաթուածոց Ս. Յակոբայ ի վերայ փողոցի է տուն մի ընչ այլազգաց Տէրէ կոչեցեալ. որ զմեռեալս իւրեանց Թաղէն ի բակի անդ, և մի մանր սորա խաւնեալ ի տունս Հայոց։ Զայս տեղի Մաշ. Կող. կոչէ Արցախայ վանք Ս. Աստուածածնայ հերաց և Ս. Ստեփաննոսի. այժմ Տաճիկ ունի զամենայն։ Իսկ Լատինք կոչեն զսա Խաչէր Յանուն Նոցա. և յարեւելս այն տան է պարսպին ի ձեռս Հայոց, որ էր յառաջագոյն կաթուած այլազգաց ուրեմն, զոր Արաբացիք կոչեն Եափուռ եւ Աբէդ։

[6] Այլ երեք վանք Աղուանից զոր Տաճիկք ունին բռնութեամբ, անուանքն չեն յայտ։ Միւս եւս այլ վանք Աղուանից ընդ Առաւելից վանացն որ ի շուկամիջին է, զոր այժմ Տաճիկք ունին։ Այսոքիւք առնախանձու հայրապետքն երուսաղէմի խանգարեցին զՀայոց և զԱղուանից անգ ձեռնադրութիւն ի վանօրէից զի 100 և աւելի վանք, որք կան անդ, զոր փոյթ կալեալ իշխանացն Հայոց 7 կենաւինաբ տուեալ Թագաւորին Յունաստանաց, որ է 70,000 դահեկան. Թախեցին ի բռնութենէ հայրապետացն զամենայն վանօրայսն, ասպա յետոյ յանհոգանալոյ մերոցս ամենեքեան այլայլեցան. Կաղանկայ. 424։

[*] Այս հատուած ի վերջ գրեալ է։

աղօթից ի փրկութիւն հոգւոց ամենայն հաւատացելոց։

Եւ արդ Հայրապետաք տեղւոյն յետոյ չարժեալք ի նախանձ, որք էին Քաղկեդոնիկք, խանգարեցին զամենայն կարգս վանօրէից մերոց. վասն որոյ իշխանքն Հայոց միաբանեալ եւս հինգ կենդինարս Թագաւորին Յունաստանաց, որ է եօթանասուն հազար դահեկան, և ազատեցին յիշխանութենէ հայրապետացն Յունաց զամենայն վանօրայս Հայոց, թէ արանց և թէ կանանց, և թէ խըրճիթք միանձանց, անդէն զինքեանս առնելով իշխեցողս։

Բայց յետոյ անխոթ արարեալ իշխանացն Հայոց եւ կաթուղիկոսացն, որպէս և զսկիզբն ի մեծամեծ պատուիրատնացն զանց առնէին անհոգութեամբ. ուստի բազում վանօրայք տապալեալ քանդեցան, որք ունէին զբնակիչս հեզք և ծոյլ։ Իսկ որք էին ժիրք և պիտանիք եւ աստուածահաճոյ վարուք, պահեցին միաբանց սահման հաւատոյ, դեռ եւս վանօրայք նոցին մնան հաստատուն։ Այլ և յոլով վանօրէից մերոց առաջնորդքն մինչ վախճանէին, ոչ ոք լինէր հոգաբարձու կարգել զայլ ոք առաջնորդ Հայոց, յաղագս որոյ զնոյն անտերունչ մնացեալ վանքն աճապարեալ առնուին և արբէին Յոյնք։ Դարձեալ և էր զի ինքեանք իսկ վանականքն Հայոց թողեալ զիւրեանց վանսն կամաւ ի բաց գնային յաղագս ծանրութեան Թեան տահկական հարկացն. եւ էր զի ի վանս իւրեանց զկանայս և զաւարկաւագուհիս բնակեցուցանէին, որք էին ընդ պարսպօք, զի ազատ լիցին ի հարկապահանջութենէ, իբրեւ զվհան հաւատաւոր կանանց. եւ ինքեանք վանականք Հայոց եկանէին արտաքոյ քաղաքին յայլ տեղի, և փոխեալ զանուանն գաւառաց և ազգացն, և յայլ անուն անուանէին զվանօրայս իւրեանց, թերեւս ի նոցանէ գտցեն օգնութիւն լինչ և պահպանութիւն։

Արդ էին և յայլ տեղիս վանօրայք Հայոց ի չրջակայս Յեդիպտոս, Աղէքսանդրիա, ի Թէփայիդ և ի լեառն Սինէական վանօրայք մեծաւանք. նաեւ ի լեառն Թափօր, և յեզր ծովուն Տիբերիայ, և ի սահմանս Պաղեստինոյ. զորոց զյոլովն խմով իսկ աչօք տեսեալ յամն բազումս մնացեալ անդ յերկրին յայնմիկ և հոգեպատում Մատեանք եւ Աստուածաշունչք անթիւ գտանէին ի հայկական լեզուս

յամենայն մեծաւորանս Երուսաղէմի, նաեւ չուրջ զերուսաղէմեայս ուր էին վանօրայք Հայոց։

Անաստաս վարդապետս Ցերապօլսեցի 'ի խնդրոյ բարեպաշտ իշխանին Համազասպայ Կամսարականի Պալհաւունեաց գրեալ զայսոսիկ եւս նմա, որ կամէր դնալ 'ի Ս. Երուսաղէմ, որ և դնաց իսկ և արժանացաւ աստուածակոխ Ս. Տեղեացն, յորս չրջեցաւ Տէր Յիսուս 'ի մարդանալն իւրում, եւ 'ի Հայրապետէն Ս. Երուսաղէմի թափեալ ազաւեաց զամենայն վանօրայսն Հայոց անկելոց ընդ բռնութեամբ Ցունաց, որք կամէին փոխել զկարգ և զսահմանս նոցա, եւ յեղաշրջել 'ի հաւատս՝ զոր քարոզէին յայնմ ժամանակի Ցորնաղ Բաղկեդոնիկ հայրապետն Երուսաղէմի։

Բայց սակայն յետ ժամանակաց լինչ և աւուրց սկսան նեղութիւնս տալ եւ տանջանս հարցն Հայոց Պատրիարգունք Ցունաց սակս ոչ հաւանելոյ նոցա Ժողովոյն Բաղկեդոնի։ Եւ միաբանեալ ամենայն Հարք եւ առաջնորդք անճինք 500 գրեցին առ երանելի Կաթուղիկոսն Ցովհան, և այլ ախոռականսն, թէ զի՞նչ պարտ է առնել. հաւանի՞լ նոցա և ունել իւրաքանչիւր զանգի բնակութեան իւրեանց, եթէ թողուլ եւ ելանել անտի. վասն զի հրաման Թագաւորին Ցունաց օր ըստ օրէ խստանայր 'ի վերայ քաղաքին Երուսաղէմի եւ 'ի վերայ հայրապետացն մերոց. զի մի ոք բնակեսցի անդ 'ի կրօնաւորացն Հայոց, և Յակորիկ Աւորի, և կամ յեգիպտացւոցն. այլ միայն բնակեսցին այնք, որք ունին զդաւանութիւն Թագաւորին եւ զսահմանադրութիւն Ցորնաղի։

Առ այս գրեաց Կաթուղիկոսն Հայոց, թէ վասն հաւատոյ մի հնազանդիք դոցա, այլ Թողէք և արտաքս գնացէք 'ի քաղաքէդ այսի։ Վասն որոյ բազումք Թողին զվանօրայս և զինչս իւրեանց և 'ի բաց գնացին. ոմանք չոգան յեգիպտոս, ոմանք գնացեալ բնակեցան 'ի Կեսարիա. և բազումք եւս 'ի տեղւոջէ իւրեանց ո՛չ չարժեցան և ո՛չ գնացին յայլ ուրեք, այլ կացին և մնացին 'ի տեղիս իւրեանց՝ համբերելով բազմաց նեղութեանց, աւարառութեանց, գանից և տանջանաց. մինչեւ տիրեցին Տաճիկք աշխարհին Պաղեստինոյ և Երուսաղէմի. և այնուհետեւ

ոչ եւս համարձակեցան Ցոյնք բռնադատել զոք, եւ ինքեանք իսկ քայքայեալք 'ի Տաճկաց եղեն իբրեւ զմեզ տառապեալք։ Եւ ապա որք մնացեալ էին յերուսաղէմ 'ի Հայոց՝ գան ի զհանգիստ. նաեւ Աւորիք և Եգիպտացիք։

Իսկ յետոյ 'ի ծանրութենէ տաճկական հարկացն նեղեալք, և վասն աւերանացն երկրին Հայոց, զի ոչ բերկրին զտուրս գիւղօրէից՝ զոր պարգեւեալ էին Թագաւորքն և իշխանքն Հայոց, վասն որոյ և նոցա չկարացեալ համբերել՝ թողին զտեղիս իւրեանց, եւ հնգետասան վանք մնայն մնաց 'ի ձեռս Հայոց. ոմանք 'ի լեառն Զիթենեաց, այլք մերձ 'ի Բեթղեհէմ, և այլք յեղր գեթսի Ցորդանանու, նա եւ 'ի լեառն Փորձութեան, եւ յանապատ Փրկչին, և 'ի լեառն Թափորական, և 'ի Հերմոն Հանդէպ Թափորայ. եւ յեղր Տիբերիական ծովուն, եւ անդ՝ ուր Քրիստոս զեօթն նկանական ետ հինգ հազարացն։

Ցայսոսիկ տեղիս մնացին բազմութիւն կրօնաւորացն Հայոց։

Զայս Պատմութիւն գտաք 'ի Գազատիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, եւ անտի օրինակեալ գրեցաք 'ի ծանօթութիւն և 'ի տեղեկութիւն ազգիս Հայոց։

Մակարիոս Ցոյն Պատրիարք Անտիոքայ 'ի գիրս Մեղուանոց կոչեցեալ. Եբե. 228 ասէ, « Գլխաւորք եկեղեցականացն Հայոց եւ Աւորուց 'ի Կիլիկիա, 'ի Միջագետս և 'ի Հայաստան՝ խօսէին զլեզու Հայոց և Աւորուց, և դիտէին զդպրութիւն երկուց ազգաց, ուսանէին նաեւ Ցունարէն սակս վիճաբանութեան. Սոքա բաժանեցան յընդհանուր եկեղեցւոյ զկնի չորրորդ Ժողովոյն (Բաղկեդոնի), և մի մնան Հայոց ոչ միաբանեցան ընդ նոսա 'ի դոնի), և մի մնան Հայոց ոչ միաբանեցան ընդ նոսա 'ի հաւատս, ասել մի բնութիւն եւ մի կամք 'ի Քրիստոս, և ոչ բաժանեցան յեկեղեցւոյ, որ և կոչէին 'ի նոցանէ Ծայթ. բայց յեկեղեցական գիրս ուղղափառք ճանաչէին. և հաստատ զայս անապատականն Նիքոն վանահայր Սիմոնի սքանչելագործի վանայ 'ի Թուղթս իւր առ Պատրիարքն և առ վանահայրս Երուսաղէմի, թէ նոքա ուղղափառք են, և հրամայէ հաղորդիլ ընդ նոսա 'ի հոգեզափառք են, և հրամայէ հաղորդիլ ընդ նոսա 'ի հոգեզափառք են, և հրամայէ հաղորդիլ ընդ նոսա 'ի հոգեւորս. զի Պատրիարգունք Անտիոքայ և գլխաւոր եկեղեցականք հաղորդէին ընդ նոսա։ Եւ թէ բազումք էին 'ի

քահանայից եւ ի վարդապետաց անտի Ծայթ կոչեցելոց բնակեալ յԵրուսաղէմ և ի սահմանս նորա։ Եւ ոմանք ի կղերականաց խորչէին հաղորդիլ ընդ նոսա, եւ հարցին ցՊատրիարքն Անտիոքայ, և Նիքոնն հրաման ետ հաղորդիլ ընդ նոսա ի հոգեւորս· զի ի բաղում տեղիս նահանգի նորին բնակէին բազմաթիւ քահանայք և կրօնաւորք ի Ծայթ կոչեցելոց· լեզու, գիրք և ընթերցուածք նոցա Հայերէն· բանք նոցա ճշմարիտք իբրեւ գրոց մերոց· նոյնպէս և հաւատք նոցին, և ոմանք ի նոցանէ կային մինչեւ ի ժամանակս մեր բնակեալ ի քաղաքն Կարնոյ, և ձեռնադրութիւնն առնուին ի Պատրիարքէն Անտիոքայ, որպէս և ինքն ձեռնադրեալ է զեպիսկոպոսս և զքահանայս։

Սոքա են բուն յազգէն Հայոց և բաժանեցան ի պատճառս խռովութեան ժողովոյն Քաղկեդոնի, և կոչին Հայ հոռոմք, և բնակին այժմ ի կողմանս Ակնայ և գաղթեալ ոմանց ի Բիւթանիա, և մինչեւ ցարդ վարին հայկական դպրութեամբ յեկեղեցիս և ի քաղաքական կենցաղս· բայց տգիտաբար գինքեանս Ծայն կոչեն։

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ.

Երկրորդ ժողով Կոստանդինուպոլսի։ Վանք Սարայ կրօնաւորի։ Թուղթ Գրիգորի Եպիսկոպոսի Արծրունեաց ի Հայս։ Վասն ոծի Տեառնընդառաջի։

Ի Հայրապետութեան Սիմոնի Երուսաղէմի եղեալ յարեւս խռովութիւն յաշխարհին Պաղեստինացւոց ի մէջ միանձանցն մեծի Լաւրայի, այն է վանք սրբոյն Սաբայ, վասն մոլորական գրոց Որոգինեայ, զորս յատաջագոյն հարք ժողովոյ մերժեալ էին, Թէպէտ եւ Եղիա հայրապետ խորհրդով Ս. Սաբայ եհան արտաքսեալ զվերոյ ասելոցն ի ժողովոյ եղբարց, այլ յանկանել Եղիայի ի ձեռն Անաստասայ կայսեր եւ ի մեռանիլ Ս. Սաբայ, համարձակութիւն գտեալ խռովչաց՝ որոցային զբազում միանձունս ի կողմն իւրեանց, և սկսան համարձակ քարոզել զմոլորութիւնս, զոր ուսեալ էին ի գրոց Որոգինեայ։

Ասպա ի լինել բանից եւ վիճմանց՝ յերկուս ճեղքեցան միանձունքն եւ սաստկացաւ անհնարին խռովութիւնն, մինչ զի բարկութեամբ յարձակել ի վերայ իրերայ բահ և իրիչ ի ձեռին հարկանել, սատակել և կործանել իսկ ընդվանան։ Լուր աղմկիս և չիմաստութեանց կրօնաւորացս այսոցիկ վաղ իսկ եհաս ի Կոստանդինուպոլիս յականջս Յուստինոսի կայսեր ի ձեռն Պետրոսի հայրապետին Երուսաղէմի եւ կայսրն հրովարտակաւ մերժեաց զմոլորութիւնս Որոգինեայ։

Ի հասանել հրովարտակին յԵրուսաղէմ՝ ընկալան զայն Նալիսկոպոսունք Պաղեստինոյ, այլ ոչ երբէք դադարեաց զայրոյթ խռովութեան ի միջոյ վանականաց։ ոմանց թողեալ ի բաց գնացին, և ոմանք յարեցան յայնս՝ որք ջատագովքն էին ուսման Որոգինեայ։

Եւ իբրեւ ետես կայսրն թէ չդադարի խռովութիւնն՝ եհան հրովարտակ գումարել ժողով Տիեզերական· կոչեցաւ և հայրապետն Հռոմայ Վիգիլիոս· եկին և եպիսկոպոսունք յիւրաքանչիւր քաղաքէ, թուով 160· (547)։ Եւ ատեանք էին Հայրապետ Երուսաղէմի չկարաց անձամբ ժամանել ի ժողովն, այլ առաքեաց ընդ իւր վոխանորդս։ Ութն գումարմամբ քննեցին և ի գլուխ հանին զինդիրսն որ յուղէին, այսինքն նզովեցին զԹէոդորոս Մոպսուեստացի հանդերձ գրովք իւրովք, զդիրս Թէոդորետոսի կիւրացւոյ, եւ զԹուղթն Իբասայ եդեսացւոյ առ Մարիս պարսիկ, և սահմանեցին նզովս կամ կանոնս 11։

Յետ այնորիկ մատեան ի գատ Որոգինեայ, որ մեծամեծ խռովութեանց լեալ էր պատճառ ի Պաղեստին· զի գրեալ էր կայսրն՝ ըստ աղաչանաց վանականացն Երուսաղէմի՝ առ ժողովեալ Հարս, քննել զամենայն սխալանս Որոգինի եւ որոց ընդ նմա միաբանին՝ և նզովել· առաքեաց առ ժողովն և զայն երկայն հրովարտակ իւր, զոր յօրինեալ էր ընդդէմ կարծեաց Որոգինի։ Ընկալեալ ժողովոյն զայսոսիկ՝ կարդային վճիռ նզովից ի վերայ Որոգինեայ և աշակերտաց նորին։ Եւ զի Վիգիլիոս հայրապետ Հռոմայ չէ միաբանեցաւ ընդ ժողովեալ Հարս, վասն թէ յաքսորս եպիսկոպոսականացն իւրովք ի կղզի մի

'ի ծովին Մարմարայ· և յետոյ աղաչանօք Ներսիսի պատրիկի Հայկազնոյ ազատեալ անտի դարձաւ 'ի տեղի իւր։

Իրրեւ լուան միանձունք Ս· Սաբայ թէ ընկալաւ Որոգինէս 'ի ժողովի անդ զվճիռ նզովից, որոչեցան յայտնապէս 'ի մէս կուսակցութենէ միաբանից· Թէպէտ և աղաչէր զնոսա նեստոքիոս հայրապետն ածել 'ի հաւանութիւն ողջամիտ բանիւ իւրոց· բայց իրրեւ եհաս թէ 'ի նոսին են ամենայն վաստակք իւր, արքունի իշխանութեամբ 'ի բաց վարեաց զնոսա 'ի գաւառէ անտի։ Այսպէս նզովեցաւ Որոգինէս 'ի ժողովի ՟ղկնի 299 ամօք մահուան իւրոյ։ Տես Պապ· Տիեզ· ժողո· 350։

Վանք Ս· Սաբայի է յարեւելից հարաւոյ Երուսաղէմի 3 ժամաւ հեռի· ուր բնակէին կրօնաւորք, եւ վանահայր եկաց նոցա Հայր Սաբայ և Թաղեցւոյ անդ· և աշակերտա նորին Ս· Եւթիմիոս նորագործ զվանս։ Եւ յետ ժամանակաց Եւդոքսեայ Թագուհին՝ մինչ էր յերուսաղէմ, եւս շինել անդ աշտարակ մի· եւ բնակէին 'ի վանս 4000 կրօնաւորք· եւ 'ի շրջակայ վանօրայս մինչեւ 10,000· ամենեքեան ընդ իշխանութեամբ հօր վանից Ս· Սաբայ։ Յաւուրս պատմիչք ասեն թէ վանք Ս· Սաբայ անկեալ էր երբեմն ընդ իշխանութեամբ վրաց, յոր կացուցեալ են պահապանս յարքունի զինուորաց՝ յերկիւղէ Արաբացւոց· և թէ բնակեալ էին անդ երբեմն կրօնաւորք Լատինաց, և ամենք նահատակեալք վասն հաւատոյ· և թէ ասա էր և Յովհան Դամասկացի, զորոյ ձեռն հատեալ էր իշխանն Դամասկոսի յաւուրս Յովհաննու Պատրիարքի (728)։

Եւ 'ի սմին ժամանակի կայսրն Յուստինոս խաբեալ 'ի բանից առն ուրումն Հրէի՝ գրեաց առ Պատրիարքն Երուսաղէմի կատարել զսոսն քառասնօրեայ Գալստեան Տեառն 'ի տաճարն՝ ընդ Ծննդեան եւ ոչ ըստ Ցայտնութեան 'ի վերն Յունվարի· զի մինչեւ ցայն վայր ամենայն քրիստոնեայք կատարէին զսոսն Տեառնընդառաջին 'ի 14 Փետրվարի։

Իսկ Երուսաղէմացիք ընդդէմ կացեալ հրամանի կայսեր՝ ոչ աւրն յանձն կատարել այնպէս, և 'ի բանանալ զօրավարին 'ի վերայ նոցա, երեւեցան նշանք մեծամեծք և սքանչելիք ակն յանդիման ամենեցուն, որպէս գրէ Կիւրեղոս վարդապետ 'ի պատմութեան իւրում· Եբ· 23։ Իսկ Գրիգոր եպիսկոպոս Սիծրունեաց էր յայնմ ժամանակի յերուսաղէմ, ականատես լեալ ամենայն անցիցն անցելոց, գրեաց Թուղթ 'ի Հայս, զդաւաճացուցանելով զնոսա 'ի խոտորմանէ սոնից· որպէս աւանդի 'ի ճառընտիրս այսպէս։

Յամի յերեսներորդի Թագաւորութեան Յուստինոսի կայսեր, էր խաղաղութիւն յերուսաղէմ և յամենայն եկեղեցիս Աստուծոյ· զի եպիսկոպոսք եւ Քահանայք եւ ամենայն ուխտ եկեղեցւոյ, եկք և բնակք, աղքատք եւ մեծատունք վառեալ 'ի պաշտօնն և յուղիղ հաւատս։ Իսկ բարեխառնեցաւ սատանայ մխաւոգեալ ընդ իրան կամէր եղբարիատեցն սատանայ մխաւոգեալ ընդ իրան կամէր եղծանել զընտրեալ կարգս եկեղեցւոյ, կարգեալ 'ի տուրբ Հայրապետացդ և հաստատեալ 'ի տուրբ կիւրեղ, եղեւ չար խորհուրդ հրամանի համակամ բանաւորութիւն բանս առնէր թագաւորին, թէ պարտ է զՏեառնընդառաջն ըստ Ծննդեան առնել, և ոչ ըստ Ցայտնութեան քառասնօրեայ։ Որում հատանեալ թագաւորին գրէ Թուղթ յերուսաղէմ առ Յուստոս հայրապետն և առ երուսաղէմացիս· զի փոխեսցեն զՏեառնընդառաջն ըստ Ծննդեան՝ որ 'ի 25 Դեկտեմբերի, առնեն յայլ քաղաքս՝ ոչ աստուածութեամբ։ Իրրեւ լուաւ Հայրապետն զհրամանս կայսեր յոյժ խռովեցաւ և ամենայն երուսաղէմացիք ընդ նմա, և առ հաստարակ ամենեքեան 'ի Ս· Եկեղեցիս ընթանային՝ բազում հառաչանօք և արտասուօք պաղատանս ամենատեառն մատուցանէին, և զամենասուրբ կոյսն 'ի բարեխօսութիւն և յօգնութիւն անձանց կարդային· եւ ուխտ եդին մեռանել, քան անցանել ընդ օրինօք եւ զաւանդութեամբ Հայրն Սրբոց, և այսպէս ջառեալ զինու Ս· Հոգւոյն կացին միահորհուրդ 'ի սէր Աստուածութեան և ընդդէմ հրամանի թագաւորին· իրրեւ լուաւ կայսրն առաքեաց անդ զոմն դուքս տալ կատարել բանի զսոսն· Թէպէտ հասին զօրքն յերուսաղէմ, այլ դարձեալ ոչ անսացին հրամանի թագաւորին, այլ վառեցին ջահս և մոմեղէնս և էլին ընդ Տեառն ընդառաջն 'ի Ս· Պրոկոպս, կատարել զսոսն ըստ Ցայտնութեան և ըստ սովորութեան· և զօրն արգելոյր զնոսա և նոքա սպասէին մահու քան կենաց։ Եւ մինչդեռ յայսմ

մարաի էին, յանկարծակի երեւեցաւ նշան 'ի Տեառնէ. զի 'ի Ս. Սիօն 'ի քրիստոսազարդ սեանէ ջուր բղխեաց վերուստ 'ի վայր։ Եւ տեսեալ պաշտօնէիցն սղղ արարին ամենեցունն, և նոքա հասանէին անդր բազմութեամբ տեսանել զքաղաքելիսն, զոր Տէր եցոյց հաւատացելոց զօրութեամբ իւրով՝ յամօթ և 'ի նախատինս հակառակորդաց· և օծանէին ամենեքեան ջրովն և փառաւոր առնէին զԱստուած։ Տեսեալ դքսին և զօրացն՝ ահիւ և դողութեամբ անկանէին 'ի Ս. Սիօն և առաքի սուրբ սեանն ծունր եդեալ խնդրէին զթողութիւն 'ի Տեառնէ, և ժողովուրդն կատարեաց զՏօն Տեառնընդառաջին ըստ Յայտնութեան 'ի փառս Քրիստոսի։

Այս նշան և զօրութիւն եղեւ առ Յուստոս հայրապետիւ։ Իսկ յամին երկրորդի Մակարիոս անուն ոմն յաջորդեաց զաթոռն, եւ վերստին յուղեցաւ խռովութիւն 'ի մերձենալ տօնին. եւ կայսրն դարձեալ առաքեաց զօրս շարժեալ 'ի բանսարկուէն, կատարել զտօնն ըստ կամաց իւրոց. հասին զօրքն, հայրապետան, դուքսն եւ այլ իշխանք, որք առաքեցան 'ի թագաւորէն, զի տացեն կատարել բռնութեամբ զտօն Տեառնընդառաջին ըստ Մննդեան, որպէս հրամայեալ էր կայսրն։ Յայնժամ երուսաղէմացիքն պնդեալ նովին հաւատով և բազմութեամբ յեկեղեցիս հաւանէին, և անկեալ առաջի սեղանոյն արտասուօք հայցէին զօգնութիւն 'ի Տեառնէ. որպէս եցոյց զզօրութիւն իւր յառաջնումն։ Եւ էր աղաղակ մեծ և խռովութիւն յերուսաղէմ. եւ ընտրեցին առ հասարակ զնահ քան կատարել զտօնս խղճիւ, եւ յեկեղեցիսն ոչ լինէր լսելի ձայն պաշտամանն, այլ լալոց եւ ողբոց, եւ զինեալ զօրքն կային 'ի դուռս եկեղեցւոյ ահ արկանել. բայց նոցա չէր լինչ իրիթ։ Տեսեալ հայրապետին և դքսին զվերնեւանդ հաւատս ժողովրդոցն, ձայն բարձեալ ասեն՝ դադարեցոյր 'ի ձէնջ աղաղակդ և խռովութիւնդ, զի որպէս Տէր հրամայեցոյց այնպէս արասցուք։ Եւ եպիսկոպոսս ոմն եառեւ 'ի խորհուրդ պատարագին զնմանութիւն հրեշտակի 'ի Ս. Գողգոթայն և 'ի Ս. դուռն Տեառն. և ահաս մինչեւ յերկրորդ դուռն մատրան եւ եհար զալ բազուկն իւր 'ի նա, և անդէն բեւեռեցաւ ալ Տեառն 'ի վերայ սեանն, և ինքն

եղեւ աներեւոյթ, եւ ապա պատմեաց ամենեցուն զտեսիլն և նոքա փառաւոր առնէին զԱստուած։ Եւ մինչդեռ զարմացեալ էին 'ի վերայ այսմ, երեւեցաւ այլ նշան. զի ամենատուրբ կոյսն Մարիամ Աստուածածին տպաւորեցաւ 'ի նմին սեան ունելով զՍ. Մանուէլն Յիսուս 'ի գիրկս իւր, և Խաչ Փրկանի յաջոյ ձեռին Տեառն, և Խաչ մի 'ի միւսում սեան երեւեալ. եւ զայս ամենայն նշանս տեսին արդարք եւ մեղաւորք առ հասարակ 'ի 29 Մեհեկանի ամսոյ յաւուր Կիւրակէի 'ի ժամ Պատարագին։ Եւ բազում ախտաժետք եւ դիւահարք բժշկեցան յերեւիլ նշանացն. եւ նշանք բժշկութեանն եղեն նախ 'ի վերայ Հայոց, զի կին մի անուն Սողոմէ 'ի Մոկաց գաւառէ, կարկամեալ 'ի 23 ամաց հետէ, եկն եւ անկաւ առաջի սեանն և ջերմ հաւատով խնդրէր զբժշկութիւն 'ի Տեառնէ, որ և յարուցեալ եկաց 'ի վերայ ոտից իւրոց եւ գոհանայր զԱստուծոյ. և յետ պատմելոյ զայլ բժշկութիւնս, ասէ, եղեւ խաղաղութիւն յերուսաղէմ և կատարեն զտօն Տեառնընդառաջին ըստ Յայտնութեանն, ըստ դրութեան առաքելոյն Յակոբայ։ Զայս վասն զգուշութեան գրեցի 'ի Հայս, որ անդէն իսկ ականատես եղէ մեծամեծ սքանչելեացն որք գործեցան։ Մանաւանդ զի զգոյշ լինիցիք 'ի չար խորհողաց անտի, որք սնոտի բանիւք խոտորեն 'ի կարգադրութեանց Ս. Յակոբայ և այլսիոսեան զՏօնս, այլ դուք որպէս լուարուք, 'ի նմին կացջիք մինչեւ 'ի գալուստն Տեառն, այլովքն հանդերձ (557)։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Հերակլ կայսր. Առումն Երուսաղէմի 'ի Պարսից. Գերեվարիլ Ս. Խաչին և Զաքարիայ Պատրիարքին։ Մագեստաս երէց անդադար Թուղթ նորին առ Կամիտաս Խոթուզեկաս Հայոց. Դարձ Ս. Խաչին Երուսաղէմ։

ԲՌՆԱԻՈՐՆ Փոկաս Հելից արեւմտից զքաղաքն Թագաւորեալ. 'ի սուր ահան զընակիչսն Անտիոքայ և Երուսաղէմի և զամենայն կողմանս գաւառացն այնոցիկ, որք ոչն կամէին հնազանդիլ Թագաւորութեան նորա։ Եհաս Հե-

բակլ զօրավար յեգիպտոսէ 'ի Կոստանդինուպոլիս. սպան զՓոկաս (610) եւ նոյնպէս զորդի իւր զՀերակլէս յաթոռ թագաւորութեան։ Եւ Խոսրով արքայն Պարսից աւերէր և քանդէր զաշխարհն Յունաց 'ի վրէժ քինու տարապարտ արեանն Մօրիկայ, և սպան զդեսպանս Հերակլեայ։ Եւ 'ի հակառակն Սնահոքայ 'ի պարտութիւն մատնեցան Յոյնք. զօրքն Պարսից արշաւեալ մտին 'ի Կիլիկիա, և լցին զայն արեամբ և գերութեամբ՝ և առին զքաղաքն Տարսոն, եւ հասին մինչեւ 'ի սահմանս երկրին Պաղեստինոյ, որոյ բնակիչք կամօք մտին 'ի ծառայութիւն նոցին։ Իրրեւ լուա եղեւ յԵրուսաղէմ, թէ ահա հասեալ կան Պարսիկք, մեծաւորդք ազգին Երբայեցւոց ժամ դիպոյ գտեալ ապստամբեցան 'ի Քրիստոնէից, և դործեցին զմեծամեծ չարիս անդ յԵրուսաղէմ, սպառնացեալ ընդէլ խաղաղ զքրիստոնեայսն 'ի քաղաքէ անտի և կործանել զՍ. Տեղիան։ Եւ ապա մխաբանեալ՝ մեծամեծ պատարագօք դիմեցին առ Խոսրեամ զօրավար, որ նստէր յայնժամ 'ի Կեսարիա Պաղեստինացւոց։ Ընկալեալ զօրավարին զընծայսն 'ի ձեռաց նոցա և ետ ոստիկան քաղաքին իւրեանց։ Եւ զնոքին աւուրց ինչ չվիպաբանեալ Քրիստոնէից ընդ Երբայեցիս, յարուցին աղմուկ մեծ 'ի քաղաքին Երուսաղէմ։ Սպանին զոստիկանն և քարշեալ ընկենդին 'ի բաց։ Եւ սկսան Քրիստոնեայք եւ Հրէայք կոտորել զմիմեանս, և զօրացեալ Քրիստոնէից հարին 'ի բերան սրոյ և սատակեցին զրազումս յԵրբայեցւոց։ Իսկ ապրեալքն 'ի սրոց անկեալ 'ի պարսպաց քաղաքին զերծան 'ի բանակն Պարսից և չարախօս լեալ գրգռեցին զնոսա ընդդէմ Քրիստոնէից։

Յայնժամ մրմռեալ Խոռեմայ՝ ժողովեաց զրազմութիւն զօրաց իւրոց, և եկեալ պաշարեաց զԵրուսաղէմ, և մարտ եդեալ կռուէին յաւուրս 18, վտրեցին զհիմունս պարսպին և կործանեցին զայն, և յաւուրն 19°ի յամսեանն Մարտաց, որ օր 27 էր ամսոյն, 27°ի յամի թագաւորութեան Ալբուհն Խոսրովայ Պարսից արքայի, զնոքին 10 աւուր Զատկին, առին զքաղաքն Երուսաղէմ (614)։ Եւ խուժեցին 'ի նմին 'ի քաղաքն զօրքն Պարսից և աւուր եդեալ կոտորեցին անխնայ զմարդիկ մինչեւ ցաւուրս երեք, այրեցին հուրբ զքաղաքն և աւերեցին զեկեղեցիս Ս. Տեղեաց ընդ

որս և զվայելուչ Տաճարն Համբարձման տեղւոյն 'ի լեառն Ձիթենեաց։ Թիւ անկելոցն 'ի կոտորածէ 'ի քաղաքի անդ, դնեն ոմանք 17,000, եւ ոմանք 'ի Պատմագրաց 50,000, եւ գերելոցն 35,000· այլք 30,000։ Կալան զՀայրապետն Երուսաղէմի զԶաքարիա և զիաչապատն, և խոշտանգեալ տանջին զնոսա ցուցանել զտեղի կենսարեր Խաչափայտին Քրիստոսի, ուր և բազում մեռան 'ի պաշտօնէից· ապա հարկեալ ցուցին զտեղին ուր ծածկեալ կայր, զոր առեալ վարեցին 'ի գերութիւն։ Զօրք Պարսից սփռեցան 'ի սահմանս Երուսաղէմի, և հասեալ 'ի վանս Ս. Սաբայ՝ աւարի առին զայն, եւ կոտորեցին զկրօնաւորս վանացդ, զորոց ոսկերսն եւ զկուսափուշս ցուցանեն ցարդ 'ի նոյն վանս զետեղեալ 'ի բաւիղս։ Յետ այնորիկ աւարի առեալ զքաղաքն և կողոպտեցին զամենայն եկեղեցիս եւ զվանօրայս, և ժողովեալ կուտեցին արծաթ և ոսկի բազում, և հալեալ ձուլեցին զնոսա տանել 'ի դուռն Պարսից։ Եհաս լուր աւետեաց յականջս Խոսրովու, թէ առաւ Երուսաղէմ և գերեցաւ Ս. Խաչն ընդ հայրապետին Զաքարիա· ընդ որ յոյժ խնդացեալ արքայն՝ պատուէր հրամանի արձակեաց առ զօրավարն Խոռեմ, առնել ողորմութիւն 'ի վերայ գերելոց՝ դարձուցանելով զնոսա 'ի տեղիս իւրեանց, չինել զքաղաքն և զաւերեալ տեղիսն եւ զամենայն ինչ հաստատել 'ի կարգի իւր, և զհրէայսն հալածական առնել 'ի քաղաքէ անտի։ Ընկալեալ զօրավարին զհրաման թագաւորին իւրոյ, կարգեաց տեղապահ աթոռոյն Երուսաղէմի զմին երիցապետ Մոգեստաս անուն, որ չարաչար կատաղեաց զսյն աթոռ զամս երիս ընդ Սերգիոս եպիսկոպոսին Յոպպէի, ասէ Մարիննոս լատին։

Մեկնեցաւ զօրավարն Խոռեմ 'ի սահմանացն Երուսաղէմի բազմութեամբ գերեաց և ճոխ աւարաւ, տանելով ընդ իւր զԽաչափայտն Քրիստոսի և զհայրապետն Զաքարիա· իսկ Հրէայք սփռեալք ընդ հրէաստան, գնեցին 'ի թագաւորէն Խոսրովայ 90,000 գերիս քրիստոնեայս եւ հեղձամահ արարին զնոսա։

Իսկ Մոգեստաս երէց ձեռն արկ և նորոգեաց զՍ. Տեղիս և զեկեղեցիս զաւերեալն 'ի Պարսից ընդ որս եւ զեկեղեցին Համբարձման տեղւոյն, որոյ մեծապէս ձեռն-

տու և օգնական գտան ժողովուրդք Հայոց, որպէս յայտնի տեսանի 'ի նամակէ Նորին զոր գրեաց 'ի Հայս առ Կոմիտաս Կաթողիկոսն. յորում յայտ առնէ զմխիթարութիւնն եւ զխնդութիւնն իւր ընդ գալուստ բազմաիրեղս Ուխտաւորացն Հայոց 'ի Ս. Քաղաքն Երուսաղէմ, զամենայն անցս չարչարանաց զոր կրեցին 'ի Հրէից և 'ի Պարսից 'ի ժամանակին յայնմիկ, զնորոգութիւնն և զպայծառութիւն Ս. Տեղեաց, զկարգաւորութիւն պաշտօնէից ըստ իւրաքանչիւր կարգի, զխաղաղութիւնն տուրք Քաղաքին և շրջակայից նորա. «Որպէս տեսին ասէ՝ Բրիստոսասէր մարդիկդ ձեր»: Թէպէտ և առատասիրտ և կրօնասէր ժողովուրդն Հայոց յամենայնի ձեռնտու եղեն շինութեան և նորոգութեան Ս. Տեղեաց, սակայն Յոյն երէցն վերսաին զնոյն հայցէ 'ի Կաթողիկոսէն, ասելով. «եւ արկցէ 'ի միտս ձեր անդադար աղօթելով վասն մեր, և մի' պակասել ամենեւին 'ի յիշել և 'ի նայել 'ի մեզ և յաղքատս Երուսաղէմի, և որ ինչ պիտոյ է ընուլ: Եւ եթէ հնար իցէ զաստուածասէր ձեր նախանձդ և 'ի ձեռնտուութիւն չինածոյ կենարար չարչարանացն ձգել»: Ապա խնդրէ ընթեռնուլ զնամակն առաջի եպիսկոպոսաց և կղերացն Հայոց, և կնքէ զբան իւր: Ընթերցեալ Կոմիտասայ զթուղթ Մոգեստոսի, գրեաց առ նա պատասխանի ի խնդատութեամբ, ուր ընդ այլոց բանից յուշ ածէ նմա նաեւ զառաջին ուխտաւորսն Հայոց, որք յաճախէին 'ի Տնօրինական տեղիս Քրիստոսի: Պատմ. Սեբեոսի 131. 135:

Զհնի բազմադիմի մարտից եւ պատերազմաց յազթական գտեալ Հերակլի, եհաս մինչեւ 'ի դուռն Տիգրոն քաղաքի և 'ի հուր գառնեցաւ զազարանն արքունի. Թագաւորեաց կաւատ և եւս սպանանել զՅոսրով և զորդիս նորին 40, խօսեցաւ հաշտութիւն ընդ կայսեր Յունաց. և մինչդեռ զնեաւ զնեալ Ջանայր բարեկարգութեան աշխարհին, եհաս նմա վախճան կենաց Թագաւորեալ ամս մի և ամիսս 6: Եւ եդին յաթոռ Թագաւորութեան զԱրտաշիր զորդի նորա ազգ հասակաւ: Լուեալ զայսոսիկ Հերակլի՝ գրեաց առ Խոռեմ եւ կոչեաց առ ինքն՝ խոստացեալ նմա զթագաւորութիւնն Պարսից: Ընթերցեալ Խոռեմ զնամակն՝ թողու զԱղէքսանդրիա և փութանակի հասանէ

առ Հերակլ, եւ տեսեալ զմխիթարանս ուրախ եղեն յոյժ: Ապա 'ի լինել բանից՝ երդմամբ խոստանայ Հերակլ տալ նմա զթագաւորութիւնն Պարսից՝ եւ յետ նորա որդւոյ նորին, և զուսմարել զօր բազում որքան և կամեսցի, միայն զի զարձուսցէ ինքեան զփայտ խաչին Քրիստոսի, զօր զերեաց յԵրուսաղէմ. և երդուաւ նմա Խոռեմ եւ ասէ. յորժամ հասից 'ի դուռն Պարսից, խնդիր արարեալ դսից և առաքեցից առ քեզ, և մեկնեցան 'ի միմեանց: Հասեալ Խոռեմայ 'ի Տիգրոն՝ սպան զմանուկն Արտաշիր, եւ ինքն անցեալ նստաւ յաթոռ թագաւորութեան Պարսից. կոտորեաց զամենայն այր կասկածաւոր և զայլս առաքեաց կապանօք առ Հերակլ:

Իսկ կայսրն յաւել արձակել առ Խոռեմ զարս հաւատարիմս վասն կենսաբեր Խաչին, և նորա խնդիր արարեալ ըստ խոստմանն եդիտ զայն 'ի տան գանձուն, և եւս ցարսն եւ արձակեաց զնոսա ուրախութեամբ: Եւ նորա ընկալեալ զնա 'ի ձեռաց հաւատարմացն՝ լցաւ անպատմելի ուրախութեամբ և չոչ արարեալ բազմութեամբ զօրաց իւրոց տարեալ հասոյց զայն 'ի Ս. Քաղաքն Երուսաղէմ հանդերձ սպասուք եկեղեցւոյն, որք զերծեալ էին 'ի ձեռաց թշնամեաց 'ի Բիւզանդիոն. և կանգնեաց զինքնին զՍ. Խաչն 'ի տեղի իւր 'ի Գողգոթա եւ եղեւ ուրախութիւն և ցնծութիւն հաւատացելոց, և պատուեալ զեկեղեցիս և զաղքատս տրօք և ողորմութեամբ դարձաւ 'ի Միջագետս Ասորւոց, (629):

Եւ յաղագս դարձի Խաչին յԵրուսաղէմ. Տես 'ի Ծանոթութիւնս. Հ. Մ. Վ. Զոհրաբ. Պատմ. Հայոց. Հատ. Բ. Երես 531:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Մէհէմմէտ. Օմար. Աբուպեքր Իսմայէլեան զբաղի Աստիս. Առումն Դամասկոսի. Դաշինք Քրիստոնէից. Գալուստ Իւմէրայ Երուսաղէմ և սկիզբ քաղաքին գաղթի.

ՅՈՒԹԵՐՈՐԴԻ տարի կայսերութեան Հերակլի երեւելոյ Մէհէմմէտ Աբրահիմ՝ ի քաղաքին Մէքքէ՝ իբր 40 ամեայ հասակաւ, և քարոզեաց զանձնէ լինել մարգարէ և առաքեալ Աստուծոյ. դատապարտեալ խոյս ետ՝ ի Մեդինէ քաղաք (յամի Տեառն 622. ի 16 Յուլիսի). Սակայ ոմանք թուականն Հիճրէթի չրջանաւ լուսնի, զոր յայսմհետէ նշանակեսցուք յընթացս Պատմութեան զոյգ ընդ թուականին Քրիստոսի. Արաբացի պատմիչք դնեն զփախուստան Մէհէմմէտի լինել առ թագաւորն Եգիպտոսի, այսինքն Հապեչաց, և նորա սիրով ընկալեալ զնա հանդուցանէ առ իւր, եւ յետ ժամանակի դարձուցանէ զնա ի տեղի իւր.

Սա եկաց գլուխ և առաջնորդ ազգին Իսմայէլի, եւ քարոզեաց նոցա ճանաչել զմի միայն Աստուած արարիչ երկնի և երկրի. Տոհմային պատմագիրք այլ և այլ եղանակաւ ասանդեցին զծագումն սորա, ուստի՞ ուսաւ եւ որպէս հրատարակեաց զկրօնս իւր, չառասցին նոքօք բանագէտք և պատմաբերք. ի չարս գրոց Ս. Աթոռոյս գըտանի և դաշնագիրն մարգարէին Աբրահամայ վարդապետ ումն յազգէն Հայոց գնացեալ ի Մեքքէ առեալ է զայն վասն հաստատութեան վանօրէից և սեփհականութեան Ս. Տեղեաց, խաղաղութեամբ և անդորրութեամբ չրջիլ կրօնաւորացն Հայոց եւ ուխտաւորաց նոցին ի Պաղեստին, առեալ ի Է թուականի Հիճրէթի (626), յորոյ վերայ հիմնեալ են դաշնագիրքն Օմարայ եւ Սալահատտինի և այլոց, որպէս ունիմք ասել յետոյ. Են սորա այլ օրինակք որ դաշինս դնէ ընդ արեւելեան քրիստոնեայս. Թէ որպէս պարսին կենցաղավարիլ ընդ ժողովուրդս իւրեանց.

Իսկ երբայեցիք որք էին ի Պաղեստին և ի Միջագետս՝ ապստամբեալ ի կայսերէ Յունաց, բազմութեամբ դիմեցին առ որդիսն Իսմայէլի, և միաբանեալ ընդ նոսա կազմեցին դունդ ստուար և դիմեցին յերկիրն Պաղեստինոյ, և յանկարծօրէն անկեալ ի վերայ զօրացն Յունաց ի սահմանս Արաբիոյ, արարին զնոսա փախստական, և պատգամաւորս առաքեցին առ կայսրն եւ ասեն, չատ լիցի քեզ ունիլ զերկիրդ մեր, զի Աստուած հօր մերոյմ Աբրահամու և որդւոց նորա խոստացաւ զայն, ի բաց թող խաղաղութեամբ, և մեք մի մտցուք յերկիրք քո: Եւ կայսրն ոչ առ յանձն, իմ է ասէ երկիրն, և քոյ վիճակ ժառանգութեան անասատն. և ժողովեալ զօրս իբրեւ 70,000 արանց առաքեաց ընդդէմ Իսմայէլեան դնդին, պատուէր տուեալ սպասել մնացեալ զօրուն, զոր հուպ ընդ հուպ ժողովեալ արձակել ունէր զկնի նոցա: Իսկ նոքա հասին ի Պաղեստին՝ անցեալ ընդ Յորդանան գետ խոնջ և վաստակ պատահեցան յաւազուտ անապատի անդ Իսմայէլեան բանակին, և ի դիմի հարեալ ի պարտութիւն մատնեցան, և բազումք ի մեծամեծաց անկան ի սրոյ Իսմայէլեան զօրուն և մնացեալքն եղեն փախստական: Մեռաւ Մեհեմմէտ և թաղեցաւ ի Մեդինէ եւ անմիջական յաջորդ եկաց նմին Ապու—Պէքիր—Սատդ կոչեցեալ. ԱԱ (632). և ի սմին ամի առին զԲոստրա քաղաք: Եւ կացեալ ի Խալիփայութեան ամս 2 և ամիսս 3 վախճանի, և կալաւ զթոռն Օմար—Իպն—Խաթթաբ. (ԺԳ—634). եւ կոչեցաւ Ամիր—էլ—Միւմին, այսինքն Իշխան հաւատացելոց: Իսկ և իսկ գրեաց ի բանակն և ընկէց յիշխանութենէ զզօրագլուխն Խալիտ—Իպն—էլ—Վալիտ եւ կացոյց ի տեղի նորա Ապու—Օպիտայ Իպն—էլ—Ճէրահ, որք էին յայնժամ ի կոզմանս Միջագետաց: Ի հասանիլ թղթոյն առ զօրավարն նոր, յորդան տուեալ զօրաց իւրոց եկեալ պաշարեցաւ պիտանակոս չորիւք զօրավարօք ի չորից կողմանց զաւուրս 70 եւ նեղեալ քրիստոնէից գրեցին գիր պայմանի եւ ետուն նոցա զքաղաքն. զայս գիր յետոյ առաքեցին առ Օմար, որ ուներ օրինակ զայս. «Ի պահարեն ձեր զքաղաքն խնդրեցաք ազատութիւն որդւոց, ընչից, ազգի, և ժողովրդոց մերոց, եւ եդաք դաշինս

ընդ Ձեզ չէինել այսուհետեւ 'ի քաղաքիս եւ արտաքոյ նորին վանս, եկեղեցիս, խուցս եւ խրճիթս կրօնաւորաց՝ մինչ 'ի սահմանս Իսլամաց. հիւրընկալել 'ի վանս մեր զցայգ եւ զցերեկ զիսլամս բացեալ զդրունս նոցին իբրեւ զհիւրասանց, եւ իւրաքանչիւր նուագի կերակրել զնոսա զերիս գիշերս. չպահել զզաղտնիս յիսլամաց եւ զլրտեաս 'ի տունս և յեկեղեցիս մեր. ոչ ուսուցանել զկուրանն որդւոց մերոց, չյիշել զանուն երրորդութեան, և չհրաւիրել զոք առ այն, չլինել արգել ումեք՝ յորժամ կամովին ընկալցի զիսլամութիւնն, յառնել յոտն կալ 'ի ժողովոց մերոց 'ի պատիւ Իսլամաց, եթէ կամիցի նա նստիլ, մի և մի իւիք լիցի մեզ նմանել նոցա, 'ի ըմպեսս, 'ի վահկեզս, 'ի կոշիկս և 'ի վարս. չխօսիլ զբանն և զգաղտնիս նոցին. չնստիլ 'ի թամբեալ երիվար. չկրել զսուր եւ զայլ զէնս. չգրոշմել 'ի կնիքս գիր Սրաբացի. չվաճառել զգինի և զայլ ըմպելիս. չթողուլ զանգուր 'ի ճակատս իբրեւ զարդ, որպէս յառաջն. չածել գօսի ընդ միջ. չդնել Խաչ 'ի վերայ եկեղեցեաց մերոց եւ չհանել զայն յերեսան՝ և ոչ մի ինչ 'ի Գրոց մերոց 'ի ճանապարհս և 'ի վաղցս Իսլամաց. չհարկանել կոչնակ յեկեղեցիս, բայց եթէ մեզմ և սակաւ ինչ. յուղարկաւորութեան մեռելոց չ'աղաղակել բարձր. չդնել զգերիս եւ զաղախինս, որոց յերեսս գծեալ իցեն նշան նեսթեղեաց, և չդիտել 'ի տունս նոցին. Զայս դաշինս եդաք ընդ ձեզ ընկալեալ զաղաւաւթիւն անձանց, ազգի և ժողովրդոց մերոց, և յերաշխի կացուցաք և զպարտիս հաւատոց մերոց. չանցանել եւ չլուծանել զիրս ինչ 'ի դաշանց աստի. և եթէ արասցէ ոք, համարեսցի նա 'ի կարգս ուխտադրուժ եւ կամակոր ազգին»: Ընթերցաւ Օմար զգիր դաշանց Հրիստոնէից առաջի գիտնականացն Արաբացւոց, և ամենեքեան հաճեցան ընդ այն:

Ոմանք 'ի պատմագրաց յաւելուն ասել, թէ հրաման ետ Օմար Հրիստոնէից թողուլ զանգուր 'ի ճակատս, և նըստիլ յերիվար կողմնակի, այլ ոչ ըստ օրինակի Իսլամաց, և ածել գօսի ընդ միջս, բայց չվնասել զոք յայլազգեաց: Ցետ այնորիկ աւրն զօրավարքն զքաղաքս գայսոսիկ զնժմես (Համս), զՀամայ, զԱլեպպիկ եւ զսահմանս նոցա, զԲերիա (Հալէպ), զՆիտարիա Պաղեստինոյ, զԱբրաստիա, զԱամարիա, զԴիմասղիս, զՑոպոլէ այլովքն հանդերձ. է որ առին պատերազմաւ, եւ է որ անձնատուր եղեն պայմանաւ մինչ 'ի թուականն Հիճրէթի ՝ (636): Ցետ այսր ամենայնի եհաս զօրավարն Ապու Օպիտայ բազմութեամբ զօրաց 'ի կողմանս Ցորդանանու, եւ դրեաց զիր առ Երուսաղէմացիս եւ ասէ. «Ողջոյն այնոցիկ որք հետեւին ուղիղ ճանապարհին եւ հաւատան Աստուծոյ և մարգարէի նորին, հրաւիրեմ զձեզ ընդունիլ զդաւանութիւնն, զոր քարոզեաց Մէհէմմէտ. եթէ ընկալջիք՝ կարճեմք զձեռս մեր հեղուլ զարիւնս ձեր եւ յափշտակել զորդիս և զինչս ձեր. համարեալջիք մեզ յեղբարս եւ մնայիցէք ընդ լծով ծառայութեան մերոյ. իսկ եթէ հակառակ կացեալ բանիւ իմով յօժարութեամբ ձերով սիրիցէք զնահ, ուտել զխոզնոյն և ըմպել զգինի, ոչ դարձուցից զսուր իմ մինչեւ խապառ ընկեցից զձեզ յերկրէդ յայդմանէ»:

Իսկ Երուսաղէմացիք գիտակ իսկ էին արշաւանաց Իսմայէլեան զօրուն, և թէ որպէս առնկալ էր ամ և երկիւղ նոցա 'ի վերայ բնակչաց երկրին, եւ հասեալ կային ոսոք նոցին առ դրունս Երուսաղէմի. վասն որոյ աճապարեալ բարձին զիայտ Խաչին Քրիստոսի և զամենայն սպասս եկեղեցեաց և առաքեցին ընդ ծով 'ի Կոստանդինուպոլիս:

Եւ իբրեւ ոչ ընկալաւ զօրավարն պատասխանի բանից իւրոց, եկեալ պաշարեաց զերուսաղէմ, եւ սկսաւ նեղել զքաղաքն: Եւ յաւուր միում եկեալ Քրիստոնէից 'ի քաղաքէն անկան 'ի վերայ բանակին Իսմայէլեան, բայց կոտորեալ 'ի նոցանէ բազմաց՝ մնացեալքն փախուցեալ ամրացան 'ի քաղաքն. յայսմ մարտի զօրավար եկաց Խալիտ իսն-էլ-Վըլիտ: Տեսեալ Ապու-Օպիտայ թէ սակաւ են զօրք Քրիստոնէից 'ի քաղաքին, ոչ երկարձգեալ զպաշարումն, Նեղեալ քաղաքացեաց խնդրեցին հաշտութիւն այսու պայմանաւ. «Գալ ինքնին Օմարայ յերուսաղէմ կոչել դաշինս, տալ սպասութիւն ինքեանց, և ապա առնուլ զքաղաքն»: Յանձն առ զօրավարն, բայց խնդրեաց զերդումն, զի 'ի գալն Օմարայ մի դժուարսցին բանիւ իւրեանց, և ոտահակեալ ոչ առնուցուն յանձն մնանել ընդ լծով ծառայութեան Արա-

բացւոց, որպէս մնին Դամասկոս և այլ քաղաքք։ Եւ ընկալեալ զօրավարին զխոստումն՝ գրեալ ապ արար Օմարայ։ գրեցին նաեւ Յոյնք եւ առաքեցին պատգամաւորս ի կաղմանց Յորդանանու։ Հասեալ նոցա ի Մէքկէ քաղաք մատուցին զգիրն առ Օմար, և ի ձեռն Թարգմանի խընդրէին հաշտութիւն, ի պահուն յայնմիկ խաոսութեամբ վարեցաւ Օմար ընդ նոսա, և ասէր ամիսոլել կայսեր զձեռն իւր ի կաղմանցն յայնոցիկ։ ապա ժողովեալ զբարեկամս իւր ընթերցաւ առաջի նոցա զգիր զօրավարին իւրոյ, եւ խորհրդով նոցին էլ ի ճանապարհ զօրու ծանուց։ Հասեալ զօրացն նորա ի տեղի ուրեք ի ճանապարհին աւարի առին զայգի ուրումն քրիստոնէի, որ մոեալ էր ընդ լծով ծառայութեան Սարացւոց եւ ընկալեալ գիր դաշանց յՕմարայ։ Եւ ի բողոքել առնն, Թոյլ եւս Օմար զօրաց իւրոց ուտել զբովանդակ բերս այգւոյն, եւ ինքն վճարեաց զգինն։ Ի շարս գրեանց Ս։ Սիմոնայ գտանի յետկար ինչ գրեալ ի մագաղաթի յանուն Օմարայ ի ՝՛ Թուին Հիճրէթի, սովին խոստիւք տուեալ Գրիգորի եպիսկոպոսի որդւոյ Եզեկիէլի եգեսացւոյ։ Եհաս Օմար յերուսաղէմ նստեալ յուղտ արագընթաց (հէֆին), զոր Արաբացիք կոչեն պէրղ-ն, եւ էջ յանդիման քաղաքին ի լեառն Զիթենեաց։ Եւ առ նա մի ոմն ի մեծամեծաց յողջոյն ի դիմաց Պատրկի քաղաքին եւ առաջի եւս նմա զբան հաշտութեան առնուլ զՀարին և ի խաղաղութեան պահել զքաղաքն և զեկեղեցիս որ ի նմա։ խոստացաւ նմա Խալիփայն առնել այնպէս։ յաւել պատգամաւորն խնդրել և վանն տեառն իւրոյ ճանաչել զիշխանութիւն նորին եւ վաւերական համարել զխոհագարձ պայմանագրութիւնս հաշտութեան որ ի ձեռն նորին իշխանի քաղաքին։ զայն եւս յանձն առ Օմար։ Զկնի այսր եւ առ նա Պատրկի քաղաքին բազմութեամբ քրիստոնէից, և եդին զպայման հաշտութեան։ Իսկ Սոփրոնիոս Պատրիարգն յայտ արար ժողովրդոց, թէ Աստուած Օմարայ եւս զյաղթութիւնն երուսաղէմի առանց հեղման արեան Քրիստոնէից։ Ապա գրեաց Օմար զգիր դաշանց, զոր խնդրէին երուսաղէմացիք, ըստ այսմ օրինակի։

Զայս գիր եւս Ծառայն Աստուծոյ Օմար իշխանն հա-

տատացելոց առ ժողովուրդն երուսաղէմի եւ առ ամենայն ազգս, որք բնակեալ են ի քաղաքին եւ ի սահմանս նորա, որոց յանձնառու լինելն խնայեցաք անձանց և ընչից նոցին։ ապատ լիցին եկեղեցիք և խաչք, մի՛ խափանեսցին և մի՛ կործանեսցին, և մի՛ ինչ առցի ի նոցանէ և ոչ ի սեպհականութենից նոցին։ մի ոք զարշեսցի ի կրօնից նոցա, և մի զոք վնասեսցեն։ Հրէայք մի բնակեսցին յերուսաղէմ ընդ քրիստոնեայս, և ժողովուրդքն ամենայն լիցին հարկատու ըստ օրինակի այլոց քաղաքաց։ Ցոյն առաջակը ելցեն անտի, իակ եթէ օր կամիցի մնալ ի քաղաքին՝ ապատ լիցի ինքն և առացուածք իւր։ Նոյնպէս և որք մնասցեն անդ, և եղիցի հարկատու իրրեւ զմի ի բնակչաց երուսաղէմի։ Եւ եթէ օր ի բնակչաց քաղաքին կամիցի մնալ ընդ Յոյնս և պահել զեկեղեցիս, զնաչէ և զինչս իւր՝ չիք արգել։ Եւ եթէ օտարական որ մնասցէ ի քաղաքին՝ եղիցի հարկատու իրրեւ զմի ի նոցանէ։ Եւ եթէ կամի դառնալ ի հայրենիս իւր՝ մի՛ նեղեսցեն զնա մինչեւ ժողովեսցէ զհունձս իւր։ Եւ որ ինչ է ի գրի առ ուխտ Աստուծոյ, և պարտիք նորին Մարգարէին և Խալիփային Իսլամաց։ ապա ձեռնագրեն ի գրի առ չորեքին բարեկամք նորին իրր վկայք։

Ձեռ կատարելոյ Օմարայ զպայման հաշտութեան ընդ երուսաղէմացիս, եհարց ցՊատրիկն զաղօթարանն Դաւթի, եւ նա խոստացաւ ցուցանել զայն։ Ապա յարեաւ Օմար ի տեղւոջէ իւրմէ ած զաւուրն ընդ մէջ իւր, ածին և 4000 զօրականքն եկեալ ընդ նմա եւ գտանդն Սուսեբաձիզ, որոց ոչ էր օրէն կրել զայլ զինս բաց ի սրոյ, և կալեալ զձեռանէ Պատրկին մտին յերուսաղէմ բազմութեամբ, եւ դէպ ուղիղ գնացին ի տաճարն Ս։ Յարութեան, եւ ասէ։ այս է աղօթարանն Դաւթի, իակ Օմար ոչ ընկալաւ զայն։ և անտի գնացին յեկեղեցին Սիոնի, և ոչ ընդ այն հանգեցաւ, և ապա գնացին ի տեղի տաճարին Սողոմոնի։ իրրեւ հասին ի գաւիթն՝ տեսին զի լեալ էր աղբիւրն մինչ ի կամարս և հասէր արտաքս յատաճարանացն եւ վակեալ էր զնուստս։ ապա անկեալ յատակն մտին ի ներքս և հասին ի գաւիթն։ ամրարձեալ Օմարայ զաչս հայեցաւ այսր և անդր, եւ ասէ։ այս է

աղօթարանն Դաւթի, եւ որոնեալ եդիտ զվէմն՝ զոր կա-
չէին Սխրայ ծածկեալ յաղբիւսի, եւ սկսաւ Օմար մաք-
րել զտեղին քզանձիւ հանդերձի իւրոյ, եւ ընդ որ գհողն
'ի գոգս իւր եւ ընկենոյր արտաքս· տեսեալ զօրականին
եւ ամենայն այլազգեաց որք ընդ նմա, արարին եւ նոքա
ըստ օրինակի նորին, եւ մաքրեալ զտեղին հրամայեաց
Օմար կանգնել մզկիթ 'ի վերայ վիմին, եւ կոչեցաւ Մզկիթ
Օմարայ, եւ 'ի մաքրելն զտեղին կոչեցեալ 'ի հնումն Սբր-
բութիւն Սրբոց, զոր ինքեանք կոչեն Աքսա, գտին անդ
զպատակերս քրիստոնէից, բայց գողով նոքա գայթակղու-
թիւն Իսլամաց՝ կորուսին զայնս։

Այսպէս տիրեաց Օմար Երուսաղէմի 'ի թուին Հիճրէ-
թի ՝՟ (636) յետ պաշարելոյ զայն զամիսս չորս, եւ բար-
ձաւ իշխանութիւնն Յունաց յաշխարհէն Պաղեստինացւոց
եւ մահն քրիստոնեայք ընդ լծով հարկի ծառայութեան
Արաբացւոց։ Զայսոսիկ, որպէս եւ զայլ դէպս որ գկնի,
թարգմանեցաք 'ի պատմութենէ Արաբացւոց որ կոչի Խա-
ԵՀՃԵՒԼ ԲՈՒՒՔ ԵՀՀՈՂԼԻ։ Հա։ Ա։ Երես 224։ Սակայն 'ի
տեղին կոչեցեալ Սբրութիւն Սրբոց, որպէս գրեցաք, կա-
ռուցեալ էր Յուստինոս կայսր եկեղեցի՝ յանուն Ընծա-
յման սրբոյ Կուսին Մարիամու, զոր Թերեւս փոխեցին
'ի մզկիթ։

Յաւելու Արաբացի պատմիչն Թէ Օմար անուանեաց
զմզկիթն զայն Հըմմ Շեդիֆ եւ զտաճարն Ս։ Յարութեան
կոչեաց Ֆըմմէ, որ է աղբանոց· զի Հրէայք առ առնել-
թեան զոր ունէին առ Քրիստոնեայս, ասէ արարեալ էին
զտեղի տաճարին աղբիւս· և մինչեւ ցայսօր յածէ 'ի բե-
բանս և 'ի գրուածս այլազգեաց բառդ Ֆըմմէ։

Իսկ 'ի հայկական ձեռագիրս ուր գտանին հաւուկո-
տոր բանք վասն գալստեան Օմարայ եւ գործոց նորին՝
նշանակեմք առաւելոր։ Օմար-Իպն-Խաթթաղ յետ [առ-
ման Դամասկոսի՝ եկեալ պաշարեաց զերուսաղէմ, և Պատ-
րիարգն Սոփրոնիոս չոքաւ առ նա և անձնատուր եղեւ,
և Օմար եւս գնդր 'ի ձեռս նորա օրինակ զայս։ Յանուն Ա-
ռաւածոյ գթածին եւ ողորմածին, յՕմարայ որդւոյ Խաթ-
թաբայ առ բնակիչս Երուսաղէմ· որպէս զի ապահով և
անկասկած լիցին վասն արեանց զաւակաց, ընչից և եկե-

ղեցեաց իւրեանց, որք ոչ կործանեսցին եւ մի բնակեսցի
ոք 'ի մէնջ 'ի նոսա եւ վկայեմ վկայութիւք։ Եւ ապա երթայ
նմա Սոփրոնիոս գլուխն քաղաքին և նմուշ Օմար 'ի ներքս
ինքն և ընկերք իւր ընդ նմա, եւ բազմեցաւ 'ի գաւթի
տաճարին Ս։ Յարութեան։ Եւ 'ի մերձենալ պահու աղօ-
թից, ասէ Պատրիարգն՝ ով իշխան ժողովրդեան, կաց
յաղօթս 'ի տեղւոջդ յորում կաս, եւ նա ասէ՝ ոչ կացից
յաղօթս 'ի տեղւոջ յայսմիկ, և եհան զնա յեկեղեցին Կա-
ոստանդիանոսի, եւ արկ նմա փախեաւ 'ի մէջ եկեղեցւոյն։
ասէ Օմար և ոչ աստանօր կացից յաղօթս, եւ էլ Օմար
յոտիւնէն յայն որ 'ի վերայ դրան եկեղեցւոյն Կոստան-
դիանոսի, եկաց յաղօթս միայնակ 'ի վերայ աստիճանին,
և ապա բազմեալ ասէ ցՍոփրոնիոս։ խնդա՛ս ով Պատրի-
արգ՝ թէ ընդէ՛ր ոչ կացի յաղօթս 'ի ներքս եկեղեցւոյդ,
և նա ասէ՝ ոչ։ ասէ՝ եթէ կացեալ էր իմ յաղօթս անդ,
կորուսանէիր զայն, զի յետ անցման իմոյ տիրէին Տաճիկք
այնմ տեղւոյ թէ աստանօր յաղօթս եկաց Օմար։ Այլ մա-
տո լինէ քարաձգ և գրեցից յետկար մատեանի։ և գրեաց
թէ։ Մի՛ ոք 'ի Տաճկաց յաղօթս կացցէ 'ի վերայ աստիճա-
նին այնորիկ, բայց եթէ մի զկնի միոյ, և մի ժողովեսցին
անդ համախումբ կալ յաղօթս, եւ մի էշն կարգասցեն
'ի վերայ։ Եւ զայս թուղթ եւս գՊատրիարգն։ Եւ ապա
ասէ Օմար թէ արգարեւ իրաւունս կալայ 'ի վերայ քո,
ուրեմն տուր ինձ տեղի ինչ՝ զի շինեցից 'ի նմա մզկիթն։
և նա ասէ։ ցուցից քեզ տեղի շինել մզկիթ, յորմէ ձեռն-
թափ եղեն թագաւորք Հռոմայեցւոց 'ի շինել զնա, եւ
նա է վէմն յորոյ վերայ խօսեցաւ Աստուած ընդ Յակո-
բայ և անուանեաց զնա Յակոբ գուռն երկնից, եւ որ-
դիքն Իսրայէլի կոչեցին զնա Սբրութիւն Սրբոց, և եղեւ
դիքն Իսրայէլի կոչեցին զնա Սբրութիւն Սրբոց, և եղեւ
Տաճար որդւոցն Իսրայէլի, և մեծարեալ յարգեն զնա, և
ուր ուրեք յաղօթս կային՝ ունէին զդէմս իւրեանց 'ի նա։
Քանզի որպէս գրեն Պատմիչք Թէ Հռոմայեցիք՝ յորժամ ըն-
կալան զՀաւատս Քրիստոսի։ և Հեղինէ մայր Կոստանդիա-
նոսի չինեաց զեկեղեցիս յերուսաղէմ քաղաքի, տեղի վիմին
և չուրջանակի նորա գողով աւերակ, այնպէս 'ի բաց թողաւ,
և արկին հող 'ի վերայ վիմին՝ մինչև կատեցաւ աղբիւս մեծ։
և յիրաւի թողին եբին զնա Հռոմայեցիք և ոչ մեծարե-

ցին, որպէս մեծարեալ պատուէին զնա որդիքն Իսրայէլի, եւ ոչ չինեցին եկեղեցի ի վերայ նորա, ըստ բանի Տեառն. «Ահա թողեալ լիցին ձեզ տունդ ձեր աւերակ, եւ թէ ոչ միասցէ այդր քար ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի»։ Եւ Սոփրոնիոս աւետել զձեռանէ Օմարայ կացցէ զնա ի վերայ սղրխսին, եւ նորա առեալ քուրձ եւլից ի հողոյ եւ թաւիեաց ի ձորն Գեհոնի. եւ հայեցեալ այլազգեաց յիշխանն Իւրեանց՝ ամաստարեցին եւ նոքա բառնալ զհողն այր իւրաքանչիւր յուս իւր, ի հանդերձս և ի վահանս և ի զամբիւղս, մինչեւ մաքրեցին զսեղին զայն, եւ յայտնեցաւ վէմն, որ կոչի Սխերայ, և ասացին ոմանք թէ չինեացուք մզկիթ և արուցուք ընծվէմն ի Գալէ, եւ ասէ Օմար ոչ, այլ չինեացուք մզկիթ և արուցուք զվէմն ի վերջն մզկիթին։ Ցետ այնորիկ չոքաւ Օմար ի Բեթզեհէմ տեսանել զնա, և եկաց յաղօթս ի ներքս եկեղեցւոյն, և դրեաց յիտակար և ետ ցՊատրիարգն, թէ ոչ ոք ի Տաճկաց յայսմ տեղւոջ կացցէ յաղօթս, բայց եթէ այր գինի առն, և ոչ ժողովեսցեն առանձնոր համախումբ յաղօթս, և մի՛ կարդացեն կնձն ի սմա, եւ մի՛ այլայլեսցեն զերս ինչ ի շինուածոյ սորին։ Բայց այլազգիքն որք եկին գինի Օմարայ, զհակառակն յետակարի նորին դործեցին ըստ հաճոյից Իւրեանց ի Բեթզեհէմ, քանզի կորզեցին զմիւսիօնան, եւ գրեցին ի նմա զոր ինչ և կամեցան, և կնձն կարդացին։

Տուեալ է Օմար եւ դաշնագիրս կրօնաւորացն Հայոց եղելոց յԵրուսաղէմ ի ժամանակին յայնմիկ ի ԼՕ թուականի Հինդրէթին (636), յորում ականէ յանուանէ համառաւ զամենայն վանօրայս Հայոց, թէ ի ներքս ի քաղաքին և թէ արտաքոյ նորին, մինչեւ ի Սամարիա, ուր էր վանք Հայոց, և զբաժին ժառանգութեան Ս. Տեղեացն, զԳողգոթա տեղի Խաչելութեանն ի Տաճարին Ս. Յարութեան, զորոյ զԹարգմանութիւնն Թողումք ընթեռնուլ ի դաշնագիրս Մելքի Սալահատինին։

Այսպէս Խալիփայն Օմար երկրորդ յաջորդն Մահմետի, տիրեաց Երուսաղէմի. նոյնպէս Պաղեստին եւ Եգիպտոս մինչ ընդ լծով ծառայութեան Յաղթողին, կրօնաւորքն Հայոց Երուսաղէմի թէպէտեւ զերծան աւ ժամն ի կրո-

նական բռնութենէ Յաւնաց, զի նոքա եւս ըստ օրինակի Հայոց եղեն սաստկագ օտարաց. սակայն մատնեցան ի խիստ ծառայութիւն Հագարացւոց, որք ելին հարկս ի վերայ կրօնաւորաց եւ վանօրէից նոցին, յորմէ բազումք տարագիր եղեն, և վանօրայք նոցին պղծեցան քայքայեցան, որպէս սակաւուք նշմարեցաք ի պէս վանօրէից. ի Գ–ԼՒ ԺԱ.

Գ Լ Ո Ւ Խ ԺԵ.

Մահ Օմարայ և Սոփրոնիոսի։ Ապաքէ Մելքի սրդի Մրկոսայ։ Շինութիւն մզկթին Օմարայ։ Երկրորդ յաղագ Նիկիայ։ Գնդեղման Բագրատ։ Յաղթանակ Զմլիկ։

Ցետ այսր ամենայնի դարձ արար Օմար յաթոռ իւր ի Մէտինէ քաղաք, և յաւուր միում յորժամ կայր յաղօթս բազմութեամբ ժողովրդոց յաւաւօտեան պահու, եհար զնա Ալու Լէվլէվ ծառայն Մուղիրայ երկայրի դաշնակաւ ի հարուածս երիս և սպան զնա, և որդի Նորին Ապտուլլահ բարձեալ զնմանին նորա թաղեաց առ դերեզմանի մարդարէին Իբրանայ ի Թուին Հիճրէթի ՀՓ (643), կացեալ յիշխանութեան ամս 10, ամիսս 6, և աւուրս 8։ Եւ յետ սակաւու սպառ Խալիփայութեանն վտղրեցաւ ի Դամասկոս, եւ Մուաւիվէ եղեալ յաթոռ Իշխանութեանն, գլուխ եկաց հարստութեան Պէնի Ումմիէ (661)։ Ցետ այնորիկ հաստատեցան Խալիփայութիւնք Ֆաթիմեան յեգիպտոս, եւ Ապպասեան ի Պաղտատ և ընդ իշխանութեամբ սոցա անկան Աւորիք, Պաղեստին և Երուսաղէմ և լցին զաշխարհն խռովութեամբ և թշուառութեամբ, մղեալ պէս պէս պատերազմունս և հեղեալ զարիւն արիւնս, զամս իրրեւ 463, մինչ ի գալուստ Խաչակրաց. այլ թէ սրոյնիսի երբ պատահեցան յերուսաղէմ ի միջոցի յայսմիկ, կարի սակաւք են, զորոց ոչնիմք դրել զինի.

Ի չորրորդ ամի իշխանութեան Հազարաւոյց մեռաւ և Սոփրոնիոս Պատրիարգն Ցուննայ երուսաղէմի եւ Ցոյնք ոչ կարացին դնել զոք ի տեղի նորա յերկիւղէ Հազարաւոյց· այլ տեղապահք ունէնք կառավարէին զաթոռն, որպէս պատմէ Մակարիոս Ծոյն Պատրիարգն Անտիոքայ, թէ յերրորդ ժողովին Կոստանդնուպօլսի, որ ասի վեցերորդ տիեզերական սիւնհոդոս, գումարեալ յամի Տեառն (680), յորում նզովիւք մերժեցին զմիակամեայս, և հաստատեալ ընկալան ասէլ ի Բրիտաոս զերկուս կամս և զերկուս ներգործութիւնս, զոտն Գեւորս երէց փոխանորդ Պատրիարգին Սղէքսանդրեայ· Դէպղ երէց· (որ յետոյ Պատրիարգ եղեւ Անտիոքայ), եւ Թէոդորոս վարդապետ փոխանորդ Պատրիարգին երուսաղէմի, զի ի սմին ժամանակի ասէ աթոռն երուսաղէմի եւ Սղէքսանդրեայ էին առանց Պատրիարգի յերկիւղէ Հազարաւոյց· Դէպ· 76—79·

Սալա ի փոխիլ թուականին Տաճկաց ՀՕ (68Ն) կալաւ զաթոռ Խալիփայութեան Հազարաւոյց Աստիւլ Մէլիք որդի Մրվանայ ի Դամասկոս· Սա եղեւ հզօրնակ հատանէլոյ զգերամս յոսկւոյ և յարծաթոյ յանուն Իսլամաց, որ մինչեւ ցայն վայր ի կիր առնուին զգերամս Հռոմայեցւոց և Ցունաց· և խոստացաւ առնել դիւրութիւն հզաւտակաց իւրոց· Եւ յերկրորդ ամի իշխանութեան իւրոյ եհան հրովարտակ առ ամենայն Իսլամս, և հաճութեամբ նոցին ընկիպէն արար մեծամեծ ծախիւք չինել զմզկիթն յերուսաղէմ, զոր չինեալ էր Օմար յառաջագոյն ի վերայ Սէբէդ կոչեցեալ վիմին, ի տեղի տաճարին Սողոմոնի, որպէս ասացաք ի նախընթաց գլուխն, զի չէր բաւական այն բովանդակել և պատսպարել զիսլամս յարեւոյ և յանձրեւոյ· և յետ աւարտելոյ զայն՝ կանգնեաց գմբէթ մեծակառոյց եւ փառաւոր ի վերայ նորա, նորոգեաց նաեւ զմզկիթն Ափսա կոչեցեալ ի նմին տեղւոջ, յորս աշխատ եղեն ճարտարապետք և բազմաթիւ գործաւորք, զորս բերեալ էր յայլ և այլ քաղաքաց· եւ ի պէտս ծախուց չինութեան սոցա սահմանեալ էր զեօթնամեայ հարկս Եգիպտոսի· և ի լրանալ գործոյն զարդարեաց զնոսա պէս պէս յօրինուածովք, ոսկեզէն և արծաթեզէն ջահիւք և բիւրաւոր կանթեղօք, զորս լուցանէին յաւուրս հանդիսի ածոյց իւրեանց· և կացոյց ի հրկից զարս 20 աւել ածել և մաքրել զմզկիթն և զգաւթս նոցա· և զայլ ոմանս չինել ազակի կանթեղս և պատրաստել պատրոյգս ի պէտս նոցա· եւ զարս 10 ի քրիստոնէից գործել վախճս և մաքրել զնոսա ի ժամ ազօթից, և զչրմուղս ջրհորոց և զայլս սոցին նմանս· եւ ազահարկ արար զնոսա ժառանգել զպաշտօնն զայն յորդւոց յորդւոյ· տես զնկարագրութիւնս այսր մեծագործութեան ի պատմութիւնս Արաբացւոց Իբն-Էլ-Ձեւզի· Հ·Ա· Եր· 249·

Բայց զկնի 34 ամաց Խալիփայն Օմար սկսն Ազտիւլ Ազիզ հալածեաց զՀրէայս ի տաճարէ անտի, և եդ ի տեղի նոցա զԱրաբացիս· Իսկ Ազտլատեան առաջին Խալիփայն Պաղտատի Ազու Ճաֆէր Մանսուր (1), եկեալ յերուսաղէմ եւս քակել և ի բաց կորզել զսկկէղէն եւ զարծաթեղէն թիթղունս ի դրանց տաճարին զոր պատեալ էր Ազտիւլ Մէլէք, և եւս հատանել դրամս և նոքօք նորոգել զաւերակ տեղիս մզկիթին· Սա ամարաճաւ ի դահն Ազտլատեան ՀՄ (753) եւ եւս չինել զքաղաքն Պաղտատ ՀԷՕ (762)· Սա է որ հրաման եւս Պատրիարգին երուսաղէմի առաքել առ մեծն Կարոլոս զրանալիս Ս· Գաղղոքիայի, Գերեզմանին Քրիստոսի և լերին Ձիթենեաց· (784)· Թէպէտ Մարիոնս Լատին Առանոս իշխան Արաբացւոց ասէ· որ և նա յետոյ առաքեաց զրանալիս յերուսաղէմ և ողորմութիւն առատ ի ձեռն Զաքարիայ քահանայի ուրուսն· (800)·

Երկրորդ ժողով Նիկիոյ, որ ասի եօթներորդ տիեզերական սիւնհոդոս, գումարեալ ի Նիկիա Բիւթանացւոց, յաւուրս ինքնակալութեան Կոստանդեայ և մօր նորա Երինեայ (787) ընդդէմ ազանդոյ պատկերամարտից, որոյ սկիզբն եղեւ յինքնակալութեան Լեւոնի Իսաւրացւոյ եւ առաւել եւս արծարծեցաւ հրդեհ մոլորութեանն յաւուրս որդւոյ նորին Կոստանդեայ Կոպրոնիմոսի· ի ժողովի 367 որդւոյ նորին կոստանդեայ կոպրոնիմոսի· ի ժողովի 367 Հարց քննութեամբ ընթերցան զՍ· Գիրս, և զրանս Ս· Հայ-

(1) Սա ապան գխալիֆայն Մրվան, որով ազատեցաւ հարստութիւն Ումմեանց յեւ թագաւորելոյ ամ 85 և ամիս 4 ի Դամասկոս, եւ զգն իւր սպանեաց մինչ յԵգիպտոս·

բալեատաց և իրրեւ մատուցաւ չընթերցումն Թուղթ Եւսեբի Պանփիլացւոյ, դատեցաւ գրեալ զայն Արիոսական մոռաք եւ օտար ի կաթուղիկէ Եկեղեցւոյ։ Ցեօթներորդ գումարման աւարտեալ զամենայն գործս ժողովոյն՝ նզովիւք հերքեցին զչարամիտ մոլորութիւնս պատկերամարտից, և հաստատեցին յարգել զպատկերս Փրկչին մերոյ և երանուհւոյ Մօր նորին և ամենայն սրբոց, սահմանեալ կանոնս 22 ի բարեկարգութիւն Եկեղեցւոյ։ Պատմ. Տէրէնճ. Ժող. 469։ Յայսմաւուր Հայոց 11 Հոկտեմբեր և 5 Դեկտեմբեր։

Յոյնք ի տարւոջ միանգամ յերկկրորդ կիւրակէի քառասնորդական պահոց յերուսաղէմ ի տաճարին Ս. Յարութեան՝ մեծահանդէս թափօրիւ կատարեն զյիշատակութիւն ժողովոյս, ունելով ի ձեռին իւրաքանչիւր հանդիսական պատկերս վոսքունս, և տան համբուրել զայնս ժողովրդոց առ հասարակ։

Յաւուրս կայսերութեան Կոստանդեայ եւ Երինեայ, նահատակեցաւ նոր արեղայն Բագոս յամիրայէ այլազգեաց՝ վասն ի Քրիստոս հաւատոյն յերուսաղէմ քաղաքի, զորոյ զմարմինն բարձեալ քրիստոնէիցն թաղեցին մերձ ի Սիոն. և անդի դերեզմանին նորա կայ մինչեւ ցայսօր ժամանակի յարեւմտեան կողմն Ս. Փրկչի վանացն ի մէջ դերեզմանատան Հայոց, չրջապատեալ փոքր որմով, և է ի ձեռն այլազգեացն Սիոնի, և ըստ բարբառոյ իւրեանց կոչեն զնա Շեյխ էլ-Մէնէխ։ Արաբացիք այրեցին զՅովհաննէս Պատրիարգն ի տաճարին Ս. Յարութեան (969)։ Կայսրն Յունաց Յովհաննէս Զմիսկիկ, որ և ասի Կիւրժան, դարձոյց զարշաւանս իւր յարեւելից դէպ յԱարիս, անցեալ ընդ Դամասկոս և զՅոռն Տիրերական՝ եմուտ ի Նազարէթ, եւ ի լեառն Թափոր, անտի էջ ի Կեսարիա Պղեստինացւոց և եհաս մինչ ի Ռեմլէ, այլ ոչ կարաց եղանել յերուսաղէմ և ազատել զՍ. Տէդիս ի ձեռաց այլազգեաց, որպէս պատգամաւորք Լանդրէին բնակիչք քաղաքին, այլ դարձ արար անտի՝ յետ պատերազմին Եգիպտացւոց յաթոռ իւր ի Կոստանդինուպոլիս՝ տիրելով Ասորեաց և Փիւնիկեցւոց, որպէս է տեսանել ի Թղթին զոր գրեաց առ թագաւորն Հայոց Աշոտ։ Մատթ. Ուռհ. 23. (972)։

Ս. Ստեփաննոս Թագաւորն Հունգարիոյ կառոյց զեկեղեցիս և վանաւոր վանօրայս յերուսաղէմ (1002)։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Թագաւորիկ և կատարած քրիստոնէից։ Աւերած տաճարին Ս. Յարութեան եւ նորոգութիւն նորին։ Հովսեփոսակ Մեսոպէ Եպիսկոպոս։ Արաբն Եպիսկոպոս։ Բարձեալ իշխանութեան Ֆաթիմեանց յերուսաղէմ և վերահաս աւերք նորին։

ՅԱՒՈՒՐՍ վաղի կայսեր Յունաց եղեւ խռովութիւն Զաւակի ընդ Յունաց, որ ասի Ծռազաւորիկ. զի Յոյնք ի բաց թողեալ զառումարն Անդրիանոսի ընկալան զառումարն Ռիսնի, զոր արարեալ էր ի չորրորդի դարուն, եւ եղեւ խռովութիւն մեծ յաշխարհին Յունաց մանաւանդ յերուսաղէմ. զի Յոյնք ասօնեցին զՊասէքն ի տաճարին Ս. Յարութեան միով ետիճեակաւ յառաջ քան զՀայս և զայլ քրիստոնեայս յաւուր Ծաղկազարդի և կանթեղք Գերեզմանին Քրիստոսի ոչ վառեցան յայնմ ամի, ասէ Մատթէոս Ուռհայեցի. Երես 52։ եւ ի լինել այսպիսի կռուոյ և հակառակութեան ի մէջ քրիստոնէից՝ զայրացեալ այլազգեաց քաղաքին, սուր եդեալ կոտորեցին զնոսա ի տաճարի անդ, որք էին ոգիք իրրեւ 10,000 և լցաւ Ս. Գերեզմանն Քրիստոսի արեամբ աղօթաւորաց, և մինչեւ ցայսօր լցեալ կան ոսկերք նոցա յայրի անդ յարեւմտից կուսէ քաղաքին երուսաղէմի, զոր այժմ մանկանց Նչխարք կոչեն. (1006)։

Զաւեղն զոր ցուցանէ Ուրհայեցին, են անդ արդարեւ բազում այրք և բուխղք և գմբեթաւոր գերեզմանք իշխանաւորացն այլազգեաց Եգիպտոսի եւ բովանդակեն զնաւարացն այլազգեաց, և կոչեն զտեղին յանուն Սրբոյն Մամբռէայ. սակայն տեղի ոսկերաց քրիստոնէից չէ յայտ։ Ատ է եւ մին յաւերակաց վանօրէիցն Հայոց, ուր ի ժամանակի մերում գտաւ գիր հայերէն Սրեւեզեցի Սարգիս վարդապետ, զոր իմացեալ Յունաց եղծին զնա ի քակել զգրմունս նորին Բդեշխի քաղաքին, և առնուլ զբարիս ի չինութիւն կրպակաց։

Իսկ այլազգիք երուսաղէմի յետ գործելոյ զայսպիսի անգթութիւնս, ժողովեալ մեծամեծաց նոցին գրեցին գիր դանդատանաց առ Թամիմեան Խալիփայն եգիպտոսի Հաքիմ պի էմր Ուլլահ, եւ ամբաստան եղեն զքրիստոնէից· Թէ ժողովեալ յաւուր ճրագալուցի Զատկին՝ ի տաճարին Ս· Յարութեան, բարձեալ զխաչս եւ զգիրս իւրեանց բարձրագոչ աղաղակեն, և անուանեն զօրն զայն չարաթլուսոյ, և զայլս այսպիսիս որք հակառակ են օրինաց մերոց· եւ ընթերցեալ Հաքիմայ զգիրս նոցա, հրաման արար կործանել զեկեղեցին զայն, զսպասս և զդանձս նորին առնուլ յաւարի· ՅՁՈ (1007)։

Այլ իբրեւ յաջորդեաց յաթոռ Խալիփայութեան թոռն նորա Մուսթանսր Պիլլահ, խնդրեաց կայսր Յունաց տալ թոյլ ինքեան չինել և նորոգել զտաճարն Ս· Յարութեան յերուսաղէմ, զոր աւերեաց Հաքիմ· և ինքն արձակեաց զՅ000 Սպարապի դերիս։ Իբրեւ յանձն առ Խալիփայն, կատարեաց կայսրն զխոստումն իւր արձակելով զդերիան, և առաքեաց գանձ բազում յերուսաղէմ, և նորոգեաց զեկեղեցին, զի ոչ խոպան աւերեալ էին զայն։ Ի-Ա-Ե-Ձ-Ե-Լ-Ե· Հաւ· Ա· 268· ՀՀՎ· (1036)։

Զդիպուածս՝ զոր գրեցաք ի վեր անդր, առեալ եդաք ի պատմագրութենէ Սարպացւոց հանդերձ թուականաւ նոցին։ Սակայն այլք այլ ինչ եղանակաւ յառաջ բերեն զայն, այսպէս «Սա այս Հաքիմ յամի 1009, աւերեաց զգերեզման Փրկչին· եւ թէ մայր նորա, որ էր քրիստոնեայ, կանգնեաց զորմանն այսր եկեղեցւոյ»։ Ոմանք եւս ասեն, թէ որպէս Խալիփային եգիպտոսի՝ ի տիրելոյ Արկիերոթալի եթող քրիստոնէից պարսիկք զԱրքաղան վայրըս՝ ի նոր չինուածի։ Բայց որպէս առ թագաւորութեամբ Հաքիմի քրիստոնեայքն երուսաղէմի չէին ըստ բաւականին հարուստ, և ոչ յաջողակ՝ ի չինել զկերտուածն որ ծածկէ այսօր զԳողգոթան։ և թէ Մարիամ կին Հաքիմի և մայր նորա Խալիփայի՝ արար զծախան, և թէ օգնական եղեւ նմա յայսմիկ բարեպաշտ գործս Կոստանդիանոս Մոնոմախոս, իսկ Մարինոս Լատին՝ այսպէս ասէ, «Քրիստոնեայք ողորմութեամբ Եւրոպայի, մանաւանդ Կոստանդիանոս դքսին և Մոնոմախ Կայսեր չինեցին զչորիր մասն պարսպին երուսաղէմի հարկադրեալ ի Խալիփային, որ և հատոյց զծախսն, և հրաման եւս քրիստոնէից բնակիլ ի կողմն յայն, և պատրիարգն միայն ունել ինքեանց դատաւոր»։

Իսկ եկեղեցին որ ի վերայ Գլուխ Խաչին, կառուցեալ ի Հեղինեայ, եւ գացեալ կանգուն ցեօթներորդ գարն, չնշմարի ի գիրս ուրեք, թէ յո՞րմէ և յորո՞ւմ ժամանակի կործանեցաւ այն չինուած հոյակապ, որ կայ մնոյ մինչեւ ցայսօր ժամանակի յաւերակի իւրում։ Եւ Խաչակիրք եւս զանց արարին զայնու՝ ի ժամանակի իւրեանց, և չիւրեւի նշան ինչ երեւէք, թէ չինեցին նորա զեկեղեցի Ս· Գերեզմանին, այլ եկաց մնաց միշտ հիմնեալն ի Կոստանդիանոսէ դէպ պարիսպքն։ Զայսոսիկ այսպէս եղեալ, դարձցուք մեք ի կարգ բանիս։ Ի հրովարտակս Եգիպտոսական իշխանութեան առաջին համարի գրեալ ի բարբառ Արաբացւոց, զոր առեալ է Մեսրովբ Արքեպիսկոպոս ի ժամանակի իշխանութեան իւրոյ, զորոյ գիւարդմանութենէն դիցուք ասասանօր։ «Հրամայեցաք Մեսրովբ Եպիսկոպոսի լինել Արքեպիսկոպոս յերուսաղէմ ի վերայ Հայոց, զգեցուցաք նմա վերարկու պատուոյ, եւ կարգեցաք զնա վերատեսուչ ի վերայ ամենայն կալուածոց նոցին, և բարձաք զամենայն նեղութիւնս եպիսկոպոսին այնմիկ և վանօրէից նորա, չհամարձակել ումեք պահանջել կամ առնուլ ի վանաց ձէթ, մոմ և զայլ իրս, և եթէ ոք յանդգնեսցի հակառակ օրինաց մերոց՝ պատիժս կրեսցէ· արգելեալ է ծանրանալն ի վերայ վանաց յանկրաւէ՝ սահմանել նորանոր իրս և յաւելուլ զանիրաւութիւնս և զչարիանս· քանզի կամաց իւրեանց վակասցեն և բացցեն զդուռն վանաց երբ և յորժամ կամիցին, և մի ոք հակառակեսցի այնմ· ցորչափ կամիցին միաբանք վանաց՝ լինի ի վերայ նոցա Մեսրովբ եպիսկոպոս տէր և իշխան, և յորժամ ոչ հաճեսցին ընդ այն, լիջուսցեն զնա յիշխանութենէ, ըստ ընտրութեան կամաց և ըստ վաղեմի սովորութեան իւրեանց, մի ոք հակառակ կացցէ հրովարտակիս»։ Գրեցաւ ի ՀՈ· Րէպիլ Խվէլ· Հ·Ղ (1008)։ Հ· Մ· Զամչեան՝ ի պատմելն զվարս Սիմէոնի Հայկազն կրօնաւորի, ասէ· «Ի հասանիլ նորա յերուսաղէմ և ի տարածիլ համբաւոյ սրբութեան և աքանչելի վարուց նորա, ընկալաւ զնա Արսէն եպիսկոպոս քաղաքին,

և մխիթարէր ՚ի նմանէ երբեք ՚ի հրեշտակէ Աստուծոյ »։

Ապա յետ վախճանի սրբոյն, որ եղեւ յիսուսեան ՚ի վանըն Բիւնեափկատեան կրօնաւորաց, ուր պահէն ասէ ամիսուեալ յարկեղը խարազն նորա, Սաղմոս և կանականան հայերէն, բերեալ ընդ իւր ՚ի հայրենի աշխարհէն։ Եւ թուղթ մի ՚ի Հայ լեզուս գրեալ առ նա յԱրսենէ Հայ եպիսկոպոսէ Երուսաղէմի, զոր ոմանք դնեն լինիլ Պատրիարգ քաղաքին։ Սա ինքն Արսէն գրեալ էր և զայլ թուղթ մի յանճնարարական ընդհանրապէս առ Արեւելեայս յետ եղանելոյ սրբոյն ՚ի Պաղեստինոյ։ Պոյմ. Հայ. Հաթ. Բ. 861—865։

Չփառաւոր տաճարն, զոր ետ կանգնել Մեծն Կոստանդիանոս ՚ի Դիոսպօլիս, այն է Լիւդէա, յանուն Ս. Գէորգայ զօրավարին, ՚ի հայրենիս մօր նորին, զնոյն վախճանը բուեան նշխարաց սրբոյն ՚ի Նիկոմիդեայ, աւերեաց զայն Սուլթանն եգիպտոսի, զի մի Լատինք առեալ զնիւթս նորա՝ չինեսցեն մեքենայս պատերազմի ընդդէմ Երուսաղէմի (1010)։

Ապա ՚ի վերանալ թուականին ՀՀՕ (1034) եղեւ երկրաշարժ յեգիպտոս, յԱսորիս և ՚ի Պաղեստին, յորմէ անդունդ և կործանեցան չինուածք մեծամեծք, և մեռան բազմաթիւ մարդիկ ՚ի վիլատակս նոցին։ Աւերեցաւ եւ երիր մանն Ռեմլէ քաղաքի, զնասեցաւ եւ մզկիթն ՚ի նմա. եւ քանակեաց խոյս առեալ ՚ի քաղաքէն, դադարեցին արտաքոյ նորին աւուրս 8 և անդրէն դարձան ՚ի տեղիս իւրեանց, Աւերեցան ոմանք ՚ի չինուածոցն Երուսաղէմի, զնասեցան մզկիթքն Օմարայ և Հայր Աբրահամու ՚ի Քեբրան։

Աթսիզ պէն Աբք ՚ի Խարեզմայ, զոր տուհմային պատմագիրք կոչեն Ախոն. տիրեաց Երուսաղէմի և Ռեմլէ քաղաքի յաւուրս Մուսթանսր Պիլլահ Խալիփային Եգիպտոսի, եւ յետ երկու ամաց խռովս բարձաւ իշխանութիւնն Թաճիմեան ՚ի Պաղեստինէ, և անկաւ ընդ իշխանութեամբ Սալջուկեան Խալիփային, որք նուաճին ՚ի Պաղտատ ՀՀՕ (1072)։ Եւ յետ այնորիկ տիրեաց նաեւ Դամասկոսի, ուր և սպանաւ զինի 6 ամաց։ Եւ ևկաց իշխան երկրին Թրթուշ՝ որդի Ալփասլանայ ՚ի Սելճուգ տուհմէ և յերուսաղէմ, որ համարեալ էր յայնժամ մին գաւառաց Դամասկոսի, ևկաց իշխան Արթուք զըն էքսիք ՚ի Թիւրքմէն տուհմէ ՚ի սերնդոց Թադաւորաց Մարտինի։ Սա ինքն Արթուք ՚ի տիրել իւրում քաղաքին սրբոյ ՚ի հարկի կացոյց զԳերեզմանն Քրիստոսի, եւ պահանջէր յիւրաքանչիւր ազգաւորաց մէն մի ոսկի ՚ի մտանել նոցա ՚ի տաճար անդր։ Եւ ՚ի նմին ժամանակի եկեալ էր յարեւմտից Լատին կոմսն, որոյ անուն ասի լինել Սինկեզ յորմէ աւելի պահանջելին քան զսահմանեալն, և յընդդէմ դառնալ նորա՝ խոշտանգեցին զնա դանիւք և հարեալ հանին զմի ակն. և նորա առեալ զայն եդ ՚ի գրպանի իւրում եւ տարեալ եցոյց ՚ի Հռոմ։ Վ-ծ-ն. 146։

Եւ յետ մահուան Արթուքայ, ժառանգեցին զիշխանութիւնն երուսաղէմի որդիք նորին Եէլղազի եւ Սուգման. ՀՀԱ (1091) իբրեւ զամս չորս՝ մինչեւ ՚ի մահն Թրթուշայ։ Եւ ՚իյաջորդ ամին եկ զօրավարն եգիպտոսի Աֆտալ պըն Պէտիր էլ-Ճէմալի բազմութեամբ զօրաց Մուսթալի Խալիփային Ֆաթիմեանց եւ տիրեաց երուսաղէմի. իսկ Եէլղազի և Սուգման խոյս տուեալ մեկնեցան անտի։ Եւ վերստին եմուտ երուսաղէմ իւրովք սահմանօք ընդ լծով ծառայութեան Ֆաթիմեանց. ՀՀԹ (1096)։

Սակայն ՚ի ժամանակիս յայսմիկ անկեալ և տկարացեալ էր ՚ի փառաց և ՚ի զօրութենէ Ֆաթիմեան հարստութիւնն եգիպտոսի, եւ օր քան զօր դիմէր ՚ի վատթարութիւն անդր. զօրավարն Աֆտալ՝ որ միանգամայն խնամակալ կացեալ էր Պետութեանն, չէր ձեռնհաս ՚ի դիմի հարկանել մեծաւոր թշնամեաց իւրոց և վանել զնոսա ՚ի սահմանացն, եւ մանաւանդ երկիղէր ՚ի Լատինաց որ սկսեալ էին երեւիլ ՚ի կողմանս Ասորւոց, եւ ոչ իշխէր ելանել ՚ի պատերազմ ընդդէմ նոցա, հակառակ էյուպեան հարըստութեան, որոյ վասն Թիւրք եւ Լատինք հատին զբատութեան գաւառս և քաղաքս յԱսորիս՝ ՚ի սահմանացն եգիպտոսի։ Եւ յետ ոչ բազում աւուրց տիրեցին նաեւ Խաչակիր զօրքն Լատինաց Ասորեաց բովանդակ Պաղեստինոյ և քաղաքին սրբոյ, որպէս ունիմք ասել ՚ի կարգի իւրում։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ա՛ջսաւանք Խաչակրաց յարեւելս։ Պատերազմ նոցա ՚ի կողմանս Բիւթանեայ։ Պաշարումն Անթիոքայ և առնումն նորին։ Տիրել նային Ռէմլէի, Բեթղեհէմի։ Պաշարել զԵրուսաղէմ և առնուլ զայն։ Կատարումն այլազգեացն։ Գրիգոր վկայաբեր։

ՅԵՏ այնչափ անհնարին ազէտից, սոսկալի կատորածոց և մոլեգին արիւնհեղութեանց, ապառումն և զժնդակ գերութեանց և յափշտակութեանց, զորս գործեցին յարեւելեայս եւ յաշխարհին Պաղեստինոյ ընդդէմ քրիստոնէից այլ և այլ իշխանական ցեղք Հագարացւոց։ Հուսկ ուրեմն հայեցաւ Տէր ՚ի ժողովուրդս իւր, և զարթոյց զմիտս քրիստոնէիցն Եւրոպիոյ վերկել զնոսա ՚ի ձեռաց նեղչացն։

Վասն այսորիկ կազմեցաւ միաբանութիւն ինչ հոգեւոր յարեւմտեան ՚ի մէջ Լատինացւոց յորդորանօք Ուրբանոսի Բ. հայրապետին Հռոմայ, և քարոզութեամբ Պետրոսի ուրումն մեծի միաբանակեցն՝ վասն ազատութեան Ս. Երկրին եւ բովանդակ սահմանաց նորին ՚ի ձեռաց այլազգեացն։ Եւ միաբանութիւն նոցա կոչեցաւ Խաչբոց, զի որք միանգամ մտանէին ՚ի համար նոցա, կրէին յաջոյ ուսս իւրեանց զկարմրերանգ նշան Ս. Խաչին (1095)։ Ապա ՚ի մի վայր եկեալ ժողովեցան բազմութիւնք յայժ քրիստոնէից յԻտալիոյ, ՚ի Գաղղիոյ, ՚ի Սպանիոյ, ՚ի Գերմանիոյ եւ յայլ կողմանց Եւրոպիոյ, զորս ՚ի հասարակի կոչեմք Լատինս կամ Խաչակիրս, որոց առաջնեցուն գլուխ և զօրավար եկաց իշխանն քաջազօր Կոնդոսլէ, ընդ նմա էին Բալտուին կամ Բեաուէն եւ Եւստաքէոս հարազատք նորին։ Տանկրէտ և Ռէյմոնտ կոմսքն Տիլհանարիոյ և Նորմանտիոյ։ Սինիեղ և միւս Պալտուին, և այլք։

Պետրոս միաբանակեացն երթայր յառաջոյ Ասպետացս գաւազանաւ ուխտաւորութեան իւրոյ։ Էին ընդ նոսա և բազմաթիւ եպիսկոպոսունք, քահանայք և պաշտօնեայք եկեղեցւոյ։ Եւ ճանապարհ արարեալ ահագին բազմութեամբ խաղացին ընդ Արեւելս։ անցեալ յաշխարհն Հունգարիոյ և Պուլղարիոյ հասին ՚ի դրունս Կոստանդինուպօլսի։

Իսկ Կայսրն Յունաց Ալէքս, որ տհաճ լսէր կոխել նոցին ՚ի սահմանս երկրին իւրոյ, առաքեաց զօրս ընդդէմ նոցա։ և ՚ի պատերազմին անկան բազումք յերկուց կողմանց եւ առաւ հաշտութիւն արարեալ ընկալաւ զնոսա Կայսրն ՚ի քաղաքն։ և յետ դաշինս կռելոյ ընդ միմեանս՝ մեկնեցան Լատինք ՚ի թաղաւորեալ քաղաքէ անտի ՚ի կողմանս Բիւթանիոյ, ուր ընդդէմ եկ նոցա հզօր բանակն պլղզեաց։ եւ ՚ի խմբել մարտին, պարսեցան պլղզիք եւ Լատինք սուր եղեալ կոտորեցին զնոսա եւ որք փանդամ էին ՚ի Նիկիա քաղաքին, և տիրեցին այնմ։ Եհաս գունդ ահագին Սելճանն Ղլիճարսլան, և պատմեաց նմա զանցս պլղզեացն։ եւ նորա թողեալ զպաշարումն Մելտինէ քաղաքին՝ գնաց

Իսկ Պատմիչք Արաբացւոց ասեն, թէ յետ առնուն Անտիոքայ արշաւեցին Լատինք 'ի կողմանս Միջագետաց, և պաշարեալ զՄառայ քաղաք՝ առին զայն եւ 'ի սուր հանին զբնակիչս նորին աւելի քան զ100,000 ոգիս, և զմանկագոյնն գերի վարեցին, և նստան անդ զաւուրս քառասուն։ Երից զդրունս առաջի նոցա եւ քաղաքն ելիս, որպէս և Բալտուին կոմն, եղբայր Գոդոպրեայ սիրեալ էր յառաջագոյն քաղաքին եղեալ։ Այլ վասն երկար ճանապարհորդութեան արշաւանաց և պէտսն գործոց, մարտից և պատերազմացն Լատինաց զոր մղեցին ընդդէմ Սարակինոսաց և Թուրքաց, և սիրելոյ քաղաքացն Ասիոյ, և թէ՛ որպէս 'ի վտանգի սովուն յօգնութիւն հասին նոցա իշխանքն Հայոց Կոստանդին, Բալտուին և Օշին, եւ կրօնաւորք վանօրէից Սեաւ լերին, և առաւել թեամբ լցին զամենայն պէտս նոցա, և զայլ ամենայն բարիսն՝ զոր ցուցին Հայք Ներկայիս զօրացն Լատինաց, Տե՛ս 'ի Գէս՝ Մատ՝ Ուռհայեցւոյ Եբե՝ 314։ Ե՛ 'ի Գէս՝ Հ՝ Մ՝ Զամչեան՝ Պատմ՝ Հայ՝ Գ՝ 19։

Զկնի այսր ամենայնի դարձոյց Կոնդոպրէ զզէնս իւր դէպ 'ի Հրէաստան՝ կոտորեալ 'ի ճանապարհին զընդդիմակացս իւր, եհաս յԱկաղոն քաղաք ծովեզերեայ, ուր եդիտ խոջ զրանակ Խալիֆային Եգիպտոսի, որոյ զօրագլուխ կացեալ էր նա ինքն Նախայիշխալն Աֆթալ՝ սակայն եհար զնոսա և ցրուեաց եւ կոտորեաց զբազումս, եւ մնացեալքն գնացին փախստական հանդէպ երեսաց իւրեանց և զօրավարին Աֆթալ զերծաւ յԵգիպտոս։ Ապա յառաջ խաղացեալ անտի յաղթանակաւ տիրեցին Ռեմլ քաղաքի, և հասին յԵրմնաուս։ Մտին Տանդրէա և Բալտուին 'ի Բեթղէհէմ 'ի 5ն Յունիսի։ Իսկ եւ իսկ պաշարեցաւ մայրաքաղաքն Հրէաստանի։ ապա կանգնեալ զմեքենայս և զայլ գործիս պատերազմի՝ մարտ եդեալ կռուէին զաւուրս քառասուն։ Այն ինչ տեսեալ Լատինաց ընդդիմադրութիւն քաղաքին՝ դժուխ և զառաչանք պաշարելոց, որք յուսահատեալ խոկ 'ի կենաց՝ առ հասարակ խուժէին 'ի մղկիթն Օմարայ։ Հեղան զեղան անդ 'ի մեծամեծաց մինչեւ ցիսքունս, պատճառեցին առ նոսա Լատինք և ասեն, զի եթէ յետ երից աւուրց ոչ ելանիցէք 'ի տաճարէ այսր, կոտորեցուք զձեզ անխնայ։ Իրրեւ լուաւ եղեւ

ցանս այս յականջս ամրոխին, խռովեալ տապանեցան եւ պաշարեցան յերկիւղ մեծ, եւ խուճապեալ դիմեցին 'ի դրունս տաճարին զերծանիլ արտաքս։ 'ի կուտել եւ 'ի խռնել ամբոխին 'ի գռնամէջս կռիւեցան 'ի միմեանց, մեռան բազումք 'ի խռան անդ։ Այլ մինչդեռ սոքա խռովեալ և պատազեալ էին զաղմկաւ իւրեանց, միոմն յասպետաց ոստուցեալ էլ 'ի վերայ պարսպին և կանգնեալ անդ զխաչանիշ դրօշն, որով աւետեր զառումն քաղաքին, որում հետեւելով և այլոց՝ խուժեցին 'ի ներքս եւ յարձակեալ 'ի տաճար անդր 'ի մզկիթն Ագայ՝ կոտորեցին զրազմութիւնս ապաստանելոցն ոգիս իրրեւ 65,000։ ըստ տոհմային Պատմագրաց եւ ըստ Արաբացւոց 70,000, յորոց բազումք 'ի գիտանոց և 'ի մեծամեծաց գտան էին, թող զայլ խառնիճաղանճս որք մեռան 'ի քաղաքամիջի եւ արտաքոյ նորին եւ 'ի դրունս տաճարին։ Ահա այսպէս առաւ մայրաքաղաքն Հրէաստանի յայս նուագ ետս, եւ ազատեցան Ս՝ Տեղիքն 'ի 15 Յուլիսի 1099 յամին եւ յաւուր Ուրբաթու, զկնի կէս աւուր ժամ իրրեւ իննեւորդ։ Յաւելու Արաբացի պատմիչն թէ աւարի առին Լատինք ըզգարդս մզկիթաց, որք մնացեալ էին յաւուրց անտի Ապտիւլ Մէլիք Խալիֆային Դամասկոսի, յորս նշանաւոր էին 2040 կանթեղք արծաթի, որոյ մին կշռէր 3600 տրամ և մի ջահ 40 լիտր Դամասկոսի։ եւ 23 կանթեղք ոսկի։ (եթէ չիցէ չափազանց)։ Յետ այնորիկ մաքրեցին Լատինք զմզկիթան զայնոսիկ եւ փոխեցին յեկեղեցի։ կանգնեցին սեղան պատարագի 'ի վերայ Սահարայ կոչեցեալ վիմին և Խաչ ոսկեձոյլ 'ի գլուխ գմբէթի նորին։ Եւ զկնի ութ աւուր կացուցին Թագաւոր Երուսաղէմի զնոյն ինքն զկոնդոպրէ եւ նուիրեցին նմա զնիակից ասպետաքն զթագ ընտրելուզեալ ակամբք պատուականօք, այլ նա ոչ երբէք ա՛ռ յանձն կրել զայնպիսի թագ 'ի գլուխ իւր անդ՝ ուր Քիստոս Բրիստոս պսակեալ էր փշեայ թագիւ։

Խառ կոնդոպրէ նաեւ զծովեզերեայ քաղաքն Ծռոպտոլեմայեցոց եւ պարսպեալ ամրացոյց զնա, ուր նստան եպիսկոպոսք Լատինաց։ Երից զդրունս առաջի նորա եւ քաղաքն Սամարացւոց, որ ասի Նապղուս։ Եւ զկնի տարածեալ զգենա իւրեանց սիրեցին այլոց գաւառաց և քաղա-

քաց, որպէս ունելոք ասել 'ի կարդին։

Ի պաշարման քաղաքին Երուսաղէմի գտաւ անդ և մեծ Հայրապետն Հայոց Գրիգոր վկայասէր, զի կրկին անգամ եկեալ էր անդ վասն ուխտի· զի թէպէտ և վտանգեցաւ յոյժ, զի այլազգիք 'ի խնդիր էին բերել 'ի ձեռս և սպանանել զնա, այլ խնամօքն Աստուծոյ զերծաւ անտի անվնաս և դարձ արար ուրախութեամբ 'ի տեղի իւր։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Մահ Կոնդոպղեայ։ Բալտովին Ա։ Կրճատմունքն Լատինաց։ Մռաւզաւիկ։ Ակշաւանք Բալտովինի և մահ նորա։ Բալտովին Բ. Գործ և մահ նորին։ Բալտովին Գ։ Տէր Գրիգոր։

Յետ սիրելոյ քրիստոնէից քաղաքին սրբոյ՝ զօրաժողով լեալ Խալիփային Եգիպտոսի յամենայն ազգաց, դիմեաց սաստկութեամբ եւ մեծաւ ցասմամբ 'ի սահմանս Հրէաստանի· եդեալ 'ի մոլ թաղել վերստին 'ի ձեռաց Լատինաց զերուսաղէմ իւրովք զաւառօք իրրեւ զսեփհական ժառանգութիւն իւր։ Իրրեւ լու եղեւ յականջս կոնդոպղեայ առաջին թագաւորին Երուսաղէմի արշաւանք Եգիպտացւոց՝ ամասարեալ էլ ընդ առաջ նոցա բազմութեամբ Աաչակիր զօրաց· թէպէտ և զանգիտէր կոնդոպղրէ հայեցեալ 'ի սակաւութիւն զօրաց իւրոց՝ ընդդէմ այնչափ բազմութեան թշնամեացն, այլ 'ի ճակատիլ սոցա յեզր Միջերկրական ծովուն՝ դիմեցին զայրագին 'ի վերայ սյլազգեաց, եւ կոտորեալ զգաղուսն 'ի նոցանէ արկին տապաստ զդիակունս նոցա, եւ զնաւսն զորս ելին ծովամբն, և կանգնեալ զնոսա յաղթանակն զայն, ժողովեցին աւար բազում եւ դարձան ուրախութեամբ յերուսաղէմ։

Իսկ յամին երկրորդի գնաց կոնդոպղէ 'ի Կեսարիա Պաղեստինացւոց, եւ այլազգի իշխանք քաղաքին նենգութեամբ ելին ընդ առաջ նորա եւ ընկալան զնա սիրով և խաղաղութեամբ, եւ արարին նմա ընթրիս, որոց խառնեալ էր 'ի կերակուրն թոյն մահաբեր, զոր ճաշակեալ անդիտութեամբ վտանգեցաւ ինքն եւ 40 այր ընդ նմա, և հասեալ յերուսաղէմ մեռաւ, և թաղեցին զնա 'ի տաճարին Ս. Յարութեան առաջի Գողգոթայի· իսկ այլք առեն թէ՝ մեռաւ 'ի Յոպպէ, և անտի բերին զմարմին նորա յերուսաղէմ. եւ յաջորդեաց զաթոռն եղբայր նորին Բոտուէն կամ Բալտովին Ա. կոմն Եդեսիոյ· այսքերիկ հմանուէն իշխանքս 'ի դիս Հայոց առհասարակ կոչին Պաղտին (1100)։

Եւ եղեւ 'ի սիրել Լատինաց Ս. Քաղաքին՝ առնչանք սիրատուութեան և գահերէցութեան կղերոց բռնադատէր զնոսա ձեռն արկանել և յիրաւունս այլոց քրիստոնեայ ազգաց, կամեցեալ մի միայն ինքեանց սեպհականել զրովանդակ անօրինական Ս. Տեղիս Քրիստոսի, որք են՝ եկեղեցին Ս. Յարութեան, Գողգոթային, Տիրամօրն՝ 'ի ձորն Գեթսեմանի, Համբարձմանն՝ 'ի լեառն Ձիթենեաց, Բեթղեհէմին, ուր է սուրբ Մննդեան, և այլոց, եւ մերժեցին իսկ 'ի տեղեաց սոսի գՀայս, գՅոյնս, գԱսորիս, և գՀրեայս· եւ կացուցին զսպասաւորս 'ի կանանց, իբրեւ ջահընկալս, աւելածուս և լուսարարս՝ ընդդէմ եկեղեցական կանոնաց։ Սակայն իրրեւ յամենայնի քրմինչէն եւ արտունչ 'ի ժողովուրդն, ինքեանք եւս սարջացան 'ի վերայ գործոցն զոր արարին· 'ի բաց հանին զնանայս յեկեղեցեաց անտի և թոյլ եւսուն ազգաց քրիստոնէից վերըստին ունել զպաժին ժառանգութեան իւրեանց 'ի Ս. Տեղիս· զայս և զայլ գործոց Լատինաց, բազում և իրաւացի գանգատանօք խոսի Ուրհայեցի Պատմագրն, և յաւելու՝ թէ սակս զրկանացս այսոցիկ յայնմ ամի ոչ վառեցան կանթեղք գերեզմանին Քրիստոսի յաւուր Մեծի չարաթու, այլ 'ի կիւրակէի, և այն աղօթիւք և խնդրուածովք ամենայն ազգաց· Տե՛ս Եչե՛ս 337· (1101)։

Են ոմանք որ ասեն առեալ յաւանդութենէ, թէ 'ի սոյն ժամանակի Լատինք խոպառ մերժեցին զՀայս 'ի գերեզմանէ Ս. Աստուածածնի, և 'ի թախանձելն Հայոց՝ թէ գոնէ 'ի չարաթուջ միանգամ յաւուր չորեքշաբաթու թոյլ տալ պատարագել 'ի վերայ գերեզմանի Ս. Կուսին, յայնժամ Սպանիացի կղերք առաջի եդեալ լցեն նոցա, թոյլ տալ

Հայոց եւս ինքեանց ի տարւոջ միանգամ յաւուր ծնեալ Ս. Յակոբայ որդւոյն Զեբեդեայ պատարագել ի վանս Հայոց ի տաճարի սրբոյն։ Եւ այս խնդիր կարեւոր կացեալ յերերի իբր ամս 40 յետ այնորիկ կարգադրեալ իցէ ի ժողովին Սիոնի, ուր էր յայնժամ Ս. Հայրապետն Հայոց Տէր Գրիգորիս, զորմէ ունիմք ասել ի տորեւ, եւ Ալեքսիկոս եպիսկոպոսն Նուիրակ Պապին։ Սակայն չգտանեմք ստուգագոյն աւանդութիւն ինչ վասն այսր ի գիրս Հայոց եւ մեք չկամիմք զհետ երթալ անոանց աւանդութեանց այլոց։ Իսկ Մարիոս վանահայր Լատին վանօրէից՝ կացեալ պատուիչ ի սկիզբն 17 դարու, այսպէս պատմէ ի պատմութեան Ս. Երկրին. «Ի վերայ դերեզմանի Ս. Կուսին ոչ ոք կարէ պատարագել առանց հրամանի մեծաւորին Յոյն, որ է պահապան Ս. Տեղեաց. բայց չնորհեցին Հայոց յաւուրս չորեքշաբաթուց պատարագել անդ վասն այնր բարեաց, զոր չնորհեցին Հայք Լատինաց ի տարւոջ միանգամ պատարագել յԱկեղեցին Ս. Յակոբայ, եւ միանգամ եւս ի վանս Ս. Փրկչի յաւուր Պենտեկոստէի»։ Բանք Մարիոսի հային ի յետին ժամանակս, մանաւանդ զի յետ տիրելոյ Սալահատտինի Ս. Երկրին՝ Լատինք խափանեցան անտի, իսկ Հայք կացին մնացին դարձեալ ի տեղիս իւրեանց մնալ ընդ իշխանութեամբ այնր Պետութեան, որպէս յայտ առնեն զայս Արաբացի հրոմարտակք։ Եւ զկնի ժամանակաց, յորժամ ընդարձակութիւն գտին Լատինք և եկին յԵրուսաղէմ և դարձեալ մտին ի գերեզմանն Ս. Աստուածածնի, անդ գտին զՀայս և զՅոյնս և ընկերութեամբ ժառանգեցին զՏեղին Ս. մինչեւ ի թուականն 1758, յորում իսպառ զրկեցան յեկեղեցւոյ անտի, զորոց տեսցուք ի կարգի իւրեանց։

Յաւուրս Հայրապետութեան Մեծին Գրիգորի վկայասիրի պատահեցաւ դարձեալ այլայլութիւն Զաքիի՝ որ առ Մոալաձին, որպէս պատահեալ էր յառաջագոյն, և ունէր պատահիլ մինչ ի 93 տարւոջ միանգամ ի վարիլն նովին ծօմարաւ. զի ամենայն քրիստոնեայք ծօնեցին զՋատիկն միով եօթնեկաւ յառաջ յաւուր Մաղկազարդի բաց ի Հայոց և Ասորւոց. զի Թէոփէտ և Լատինք չառեին ինչ վասն այսր, սակայն Յոյնք ունէին հակառակութիւն

մեծ, և սակրէին զՀայս ծօնել զՋատիկն ընդ ինքեանց. իսկ վանականք Երուսաղէմի ոչ առին յանձն, այլ կատարեցին զայն Տօն միով չաբաթաւ յետոյ (1102)։

Իսկ Թագաւորն Երուսաղէմի Բալդուինն Կաւ զկնատրիա Պազեստինացւոց աջակցութեամբ ձերակուտին Գենուացի իշխանաց առին զայն ի վարձ պինուորական ծառայութեանցն՝ և տարան յաշխարհն իւրեանց։

Առին Լատինք զծովեզերեայ քաղաքն Դրիմոլի, որ առն այժմ Նբոպո-լը- Նո, յետ պաշարելոյ զայն աւուրս 11, և չինելոյ քաղաք արտաքոյ նորին։ Յառման քաղաքին էր անդ և Թագաւորն Երուսաղէմի Բալդուին. եւ իշխանքն կամեցան տալ զայն կոմսին Անտիոքայ Տանկրի, որոյ վասն անկաւ դժուարութիւն մեծ ի մէջ Բալդուինի և Տանկրեայ, մինչեւ ի սուր մաշել զընակիչս քաղաքին։ Եւ յետ տարւոյ մերոյ առին նաեւ զԲերութ քաղաք (1110)։

Ի խաղալ բազմութեամբ զօրաց զօրավարն Պարսից՝ Մամատա ի վերայ Երուսաղէմ՝ եկ ընդ առաջ նորա Թագաւորն Երուսաղէմի Խաչակիր զօրօք, եւ հասեալ բանակեցան ի կողմանս Տիբերեական ծովու, ուր էր բանակն այլազգեաց. և չմնացեալ զալտեան Ռոճէր կոմսին Անտիոքայ և Սինկէղ կոմսին Դրիմոլեայ, որոց աղդ արարեալ էր յառաջագոյն հասանել ի Թիկունս. ամաւարեալ զրգռեաց ըզպատերազմն՝ կամելով ժառանգել զնոսն քաջութեան. սակայն չարաչար յաղթահարեալ ի Թշնամեաց, դարձաւ ի փախուստ կորանօք. բազումք ի մեծամեծաց իւրոց անկան տապատառ անդ, և կոտորեցան զօրքն հետեւակ. եւ իսկ եւ իսկ հասանէր վտանգ կենաց Թագաւորին, եթէ վրդով լիմն չէր հասեալ անդ կոմսին Անտիոքայ և Թափօքու։ Եւ չէր հասեալ անդ կոմսին Անտիոքայ և Թափեալ զնա ի ձեռաց Թշնամւոյն։ Ասեն Լատինք՝ Թէ ի վրեալ զնա ի ձեռաց Թշնամւոյն՝ զիմեցին եւ եկին դառնալ այլազգեաց ի պատերազմէն՝ զիմեցին եւ եկին ի լեառն Թաբոր, և Թափեցին զգաստութեան սրտմտութեան իւրեանց ի վերայ կրօնաւորացն քրիստոնէից կոտորելով զնոսա։ Զի ի լերինս յայսմիկ էին կառուցեալ վանօրայք երիս ի պատիւ Պայծառակերպութեան Տեառն մերոյ յաւուրց անտի Մեծին Կոստանդեայ և Հելինեայ. յորոց

'ի մին բնակէին կրօնաւորք Հայոց, որպէս առորագրէ զայն ականատես Եղիշէ վարդապետ կամ քահանայ 'ի Ճառն Պայծառակերպութեան։ Սոյն վանօրայք թէպէտ եւ կրեցին վիշտս և տառապանս ժամանակ առ ժամանակ յԱրաբացւոց, Թուրքաց և յայլոց, սակայն կացին մնացին մինչեւ 'ի ժամանակս աշխարհակալութեան Սալահատտինի · (1113)։

Բալտովին յետ մղելոյ զպէտսպէս սպառերազմունս, կանգնելոյ զյաղթանակս, եւ տիրելոյ քաղաքաց 'ի Պաղեստին եւ յայլ ուրեք, պատրաստեցաւ արշաւել 'ի սահմանս Եգիպտոսի · որպէս յառաջ բերէ զայս պատմիչն Սբաթացի, և կոչէ զնա Պեդուէնէ · հասեալ նորա 'ի քաղաքն Գազայ, առ զնա և աւերեաց զրաղաքն տեղիս նորին, և հուր արկեալ այրեաց զմզկիթն այնպիսեաց, եւ զկնի աւուրց ինչ՝ եկ անտի 'ի ճանապարհ Եօթ՝ գնալ յԵգիպտոս · չէր եւս հասեալ յաւանն Սրիշ, մեռաւ 'ի ճանապարհին եւ թաղեալ զիորոտիս նորին, ածին զդիակն յերուսաղէմ եւ թաղեցին 'ի տաճարին Ս · Յարութեան առաջի Գողգոթայի, առ գերեզմանաւ կոնդակրեայ և յաջորդեաց զաթոռ թագաւորութեան Բալտովին Բ · Տիւպուրկ, որ էր կոմս Եդեսիոյ, այր ազահ և ժլատ (1) (1118)։

Բալտովին Բ · բաց 'ի սահմանացն Երուսաղէմի, տիրեաց նաեւ Անտիոքայ, և քաղաքաց աշխարհին Կիւլիկիոյ, զրկելով զիշխանաւորս Հայոց յարդար վաստակոց նոցին, թերեւս վտանգաւոր երեւեալ և բարեաց նոցին հատուցին Լատինք զայսոսիկ չարիս, թէպէտ և Լեւոն Ա · իշխանն Հայոց առկասեօք հատոյց զչարիսն 'ի գլուխս նոցա և տարածեաց զզինս իւր մինչեւ 'ի սահմանս Եգիպտոսի։

Իսկ 'ի պատերազմին՝ որ 'ի կողմանս Սամոսատայ գերի վարեցաւ հանդերձ քեռորդւովն իւրով 'ի Պալակ ամիրային Բերրոյ և Հանձիտ, եւ եդաւ 'ի բանտի երկաթի կապանօք 'ի Խարբերդ, ուր բանտարկեալ էին յառաջագոյն կոմսն Եդեսիոյ Ջոսլին և Գալէրան (1123)։ Ջոսլին հնարիւք վախուցեալ զերծաւ 'ի բանտէ անտի, իսկ ամառպարիւն այլոց կապելոցն վերատին, եւ այլք կոտրեցան 'ի բերան սրոյ և կանայք պատուականք հասեցան 'ի ժայռէ անտի։ Ցետ կալոյ նոցա ամմի ողջոյն 'ի կապանս, մեռաւ ամիրային Բալակ, և կալաւ զիշխանութիւնն որդի նորին Տիմուր Տաշ։ Ցայնժամ Ջոսլին և Թագուհին կռեցին դաշինս ընդ նմա, եւտուն զդուստր Թագաւորին եւ զորդի Ջոսլինի և զայլ արս 15 'ի պատանդ եւ 100,000 դահեկան և դնեցին զԹագաւորն։ Սակայն կոմսն Գալէրան և քեռերորդի Թագաւորին մնացին 'ի բանտի և պատնան յամիրային։

Դուքսն Վենետկոյ Դոմինիկոս Միչիէլի էառ զՅոպպէայ քաղաքն ղՏիւրոս, և յետ սակաւուց յանձն արար զայն Թագաւորին Երուսաղէմի իրրեւ ընծայ և նուէր գերեզմանին Քրիստոսի, և ինքն մեկնեցաւ յաշխարհ իւր (1124)։

Մելիսանդրա անդրանիկ դուստր Բալտովինի երկրորդի՝ ամուսնացաւ ընդ Փուլգոնի Տ'անժու, եւ էած զԹագաւորութիւնն Երուսաղէմի 'ի տուն առն իւրում · (1130)։ Փուլգոն անկեալ 'ի ձիոյն մեռաւ (1140), որում յաջորդեաց որդի նորին Բալտովին Գ, Ցաւուրս սորա գտաւ 'ի Ժողովն Անտիոքայ Մեծ հայրապետն Հայոց Տէր Գրիգորիս ընդ եղբօր իւրոյ Ներսիսի Շնորհալւոյ ըստ հրաւիրանաց Լատին եպիսկոպոսին, Ցետ աւարտելոյ զգործ ժողովոյն՝ յոր պարտաւորեցաւ Հռոմուլոս Լատին եպիսկոպոս քաղաքին, դարձ արար Ներսէս յաթոռն Հայրապետական · իսկ կաթուղիկոսն Տէր Գրիգոր եկն յերուսաղէմ ուղեկցութեամբ Լատին եպիսկոպոսին և Նուբրակի Պապին, և 'ի միասին կատարեցին զաւն Ս · Ջատկին։ Եւ յետ այնորիկ և 'ի միասին կատարեցին Լատինք զարձեալ ժողով ինչ 'ի վանս Ս · Սիոնի, ուր հրաւիրեցին նաեւ զՀայրապետն Հայոց։ Ապա 'ի լինել բանից 'ի վերայ կրօնից և ծիսից Հայոց, նա իմաստութեամբ եւ ըստ իւրումն հանճարոյ առաջի եդ նոցա զկարգաւորութիւն եկեղեցւոյն Հայոց եւ համեզ բանիւք չինեաց զմիտս նոցա (1141)։ Այլ թէ որպիսի գովաբանեաց զնոսա Գրիգոր Կայծակն Հայրապետիս (1)։

(1) Գերեզմանք երկուց Թագաւորաց այսոցիկ նախ քան զերկուհ տաճարին՝ ժողովեին արտաքոյ երկրաքանդելոյ տապանագրով խրտնից, որպէս է տեսանել 'ի գիրս Ճանապարհորդացն Եւրոպացւոց։ Իսկ 'ի ժամանակս նորոգութեան մեծին գնաց Յակոբ 'ի Նեղբս 'ի սննեակն, ուր է մատուռն Ադամայ և այժմ չերեւին տեղիք նոցին։

(1) Ի սմին ժամանակի Արքեպիսկոպոսն Երուսաղէմի էր Տէր Եսայի Ա։

Տե՛ս Գէս Հ. Մ. Ջամչեան. Պատ. Հայ. Հատ. Գ. Երես 53։

Իսկ Թագաւորն Բալտուին, պաշարեաց զԱսկալոն քաղաք զամ մի ողջոյն, և ոտակայացուցեալ զմարան էառ զայն 'ի ձեռաց այլազգեաց նիզակակցութեամբ տաճարականաց ասպետաց. զամանս կոտորելով և զայլս արտաքսելով 'ի քաղաքէ անտի, ելից քրիստոնէիւք, և կանգնեաց զԱխչէն 'ի վերայ պարսպաց նորին (1153. 'ի 15 Օգոստոսի), յաւուր ոծնի փոխման Ս. Կուսին։ Եւ ուղղեաց զարշաւանս իւր 'ի Դամասկոս, էառ զԻեսարիա Փիլիպպեայ եւ նորագեայ զնա. զի յառաջադոյն Սուլթանն Բերիոյ և Դամասկոսի առեալ զայն 'ի ձեռաց Լատինաց՝ 'ի հուր դառեալ էր քաց յամրոցէն։ Սակայն պրտմեալ Նուրէտտինայ վերըստին էառ զայն 'ի ձեռաց նոցա յաւուրս Ամաուրի Թագաւորին, և խափան եղծեալ ապականեաց զնա, եւ այլ ոչ եւս յաւել կանգնել յաւերակաց իւրոց։

Բալտուին Գ. վարեալ զիշխանութիւն Թագաւորութեան ամս 20. մեռաւ (1160)։

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ.

Ա՛մալրիկ Ամաուրեայ։ Շիրքոհ և Սալահատտին։ Բալտուին իշխանութեան Ցաֆիմեանց։ Ներսոգութիւն եկեղեցւոյն Բեթղեհէմի։ Թագաւորի Մանուէլի Կայսեր. Մահ Նուրէտտինայ և Ամաուրեայ. Մկնատիւն Սալահատտինի։

Յետ մահուան Բալտուինի Գ. Թագաւորեաց յերուսաղէմ եղբայր նորին Ամաուրի կամ Ամալրիկոս (1162)։ Եւ զի նախորդք իւր՝ որք բացեալ էին ճանապարհ արշաւել 'ի սահմանս եգիպտոսի, սա առաւել եւս ընդարձակեաց զայն, հարկատու կացուցեալ զայլազգիան եգիպտոսի եւ յարձակեալ 'ի վերայ նոցա 'ի նեղ արկ զԱսկալիփայն եւ բռնութեամբ տիրեաց Պելպէս քաղաքի, աւարի էառ զինչս նորա, եւ զբազումս 'ի բնակչացն կոտորեաց, և զայլսն վարեաց 'ի գերութիւն։ Եւ յարուցեալ անտի էզ 'ի վերայ Գահիրէ քաղաքի և պաշարեաց զնա։ Իսկ Շաւէր,

որ վէզիր և զօրագլուխ էր Ա՛տաա Խալիփային՝ տեսեալ թէ Լատինք գրժեցին զաչինն եւ բազմութեամբ յարձակեալ են 'ի վերայ իւր, առ երկիւղին եւ հրդեհել զքաղաքն Մըսր, զի մի և նմա տիրեսցեն Լատինք, և բնակիչացն գաղթել 'ի Գահիրէ եւ ելանէր ծուխ քաղաքին զառուրս 54։

Իսկ Խալիփայն Ա՛տաա անկեալ 'ի վտանգ նեղութեան խնդրէր գտանել զկնի հնարից. զի Լատինք պաշարեալ էին զինքն եւ չէր ինչ վտառ 'ի զօրավարն իւր վանել զթշնամին, որոյ վասն տրտմութեամբ եւ անմխիթար սրտիւ գրեաց թուղթ առ Սուլթանն Դամասկոսի Նուրէտտին՝ և խնդրեաց 'ի նմանէ հասանել 'ի Թիկունս. յաւելու Արաբացի պատմիչն Թէ 'ի Թղթի անդ եղեալ էր զհերս կանանց։ Սակայն զօրավարն Շաւէր ջանայր տակաւ ցածուցանել զյաւուրն սրտմտութեան Լատինաց, տուեալ նոցա 100,000 ոսկիս, զի մեկնեսցին 'ի Գահիրէ քաղաքէ։

Եւ եղեւ իրրեւ եհաս նամակ Ա՛տաայ առ Նուրէտտին, պատրաստեաց բանակ հզօր եւ զօրագլուխ նմին զԵիրքոհ եղբայր էյուպայ, եւ զեղբօրորդի նորին զՍալահատտին նիզակակից նմին։ Թէպէտ նա բազում անգամ հրաժարեցաւ 'ի գործոյ անտի, այլ յետոյ զիջեալ 'ի թախանձանս Սուլթանին և հօրեղբօր իւրոյ, եւ 'ի ճանապարհ ընդ զօրսն։

Եւ հասեալ 'ի սահմանս եգիպտոսի՝ մարտ եդին ընդ Լատինս և առին զԱզէքսանդրիա։ Լատինք դարձան յետս յերուսաղէմ։ Շիրքոհ եհաս 'ի Գահիրէ և եմուտ առ Խալիփայն Ա՛տաա, եւ նորա սիրով ընկալեալ զնա՝ զգեցոյց նմա վերարկու պատուոյ, և դարձոյց զնա ուրախութեամբ 'ի վրանս նորա։ Իսկ զօրավարն Շաւէր խորհէր նենգութեամբ դաւաճանել զՇիրքոհ և զՍալահատտին։ Իրաւեկ լեալ այսմ Սալահատտինի՝ պատահեցաւ նմա 'ի ճանապարհի ուրեք, և կալեալ զձեռանէ նորա ցնցեալ ընկէց 'ի վայր 'ի ձիոյն, և վախեան արքն որք էին ընդ նմա. եհաս անդր և Շիրքոհ, և հատեալ զգլուխ Շաւերայ՝ առաքեցին առ Խալիփային, ընդ որ ուրախացեալ նորա՝ եւս կոչել առ ինքն զՇիրքոհ, և զգեցոյց նմա զվերարկու վկայութեան, և անուանեաց զնա Մկլիք Մանսուր և զօրա-

պետ, եւ յանձն արար նմա զգործ սէրտեթեան իւրոյ։ Բայց չվայելեալ նորա ընդ երկար զոյն իշխանութիւն մեռաւ ՈՂԷ (1168), կացեալ յաթոռ մետրութեան ամիսս 2 և աւուրս 5։

Արթասցիք զսա համարին սկիզբն և հեղինակ էյուպեան հարստութեան։ Շիրքու եւ էյուպ էին որդիք Շադէի 'ի Դուին քաղաքէ Հայոց, յազգէ Մարաց· բայց Սալահատին որդի էյուպայ ծննեալ էր 'ի Թիկրիտ քաղաքի Մարաց· և կային տոքա 'ի ծառայութեան Ամատէտինին զնգի ամիրային և որդւոյ նորին Նուրէտտինին Մուլթանին։

Ձեռն այնորիկ Խալիֆային Ա'տատ ըստ խնդրոյ զօրավարացն բանակին եւ իշխանացն Եգիպտոսի կացոյց զՍալահատտին Վէզիր և զօրագլուխ 'ի տեղի հօր եղբօր իւրոյ, և անուանեաց զնա Մէլիք Նասր· թէպէտ Նուրէտտին կոչէր զնա Սիմիհմալար (սպարապետ) եւ վճռանորդ իւր։ Սալահատտին կոչեաց և էած առ ինքն զհայր իւր էյուպ և զընտանիս նորա· որպէս Յովսէփ կոչեաց զհայր իւր զՅակոբ, զի լիցի կատարեալ ուրախութիւն իւր, եւ կացոյց զնա 'ի վերայ գանձուց իւրոց, որ և յետոյ անկեալ 'ի ձեռն մեռաւ, մինչդեռ Սալահատտին դեգերէր 'ի կողմանս Քեռքեայ կռուելով ընդ Լատինս։

Եւ 'ի նմին ամի իբրեւ լուաւ Սալահատտին թէ պաշարեցին Լատինք զՏիմիատ քաղաք, ամասպարեալ եհաս 'ի վերայ նոցա իբրեւ զկայծակն բաղմութեամբ զօրաց, և պաշարեաց զնոսա արտաքուստ զաւուրս 50։ Ազդ եղեւ Լատինացն թէ եկ Նուրէտտին 'ի վերայ Ծովեզերեայ քաղաքաց եւ ամրոցաց աւերեաց զնոսա, վասն որոյ վոխեցան կալան գառնալ յետս 'ի պահպանութիւն քաղաքացն։ Իսկ Սալահատտին դիմեալ 'ի վերայ Աքաղոնի եւ Ռէմլեի՝ ասպատակեր 'ի կողմանս յայնոսիկ· պաշարեաց նաեւ զմանս 'ի Ծովեզերեայ քաղաքաց 'ի Ծովու և 'ի ցամաքի, այլ չկարացեալ առնել ինչ՝ դարձաւ յեգիպտոս։

Մեռաւ վերջին Խալիֆայն Ա'տատ Ցաթիմեան հարբուտութեան 'ի Թուին Հիճրէթի ՈՂՁ (1170) եւ իսպառ բարձաւ յեգիպտոսէ իշխանութիւն ցեղին այնորիկ, տեւեալ ամս իրը 269, եւ Սալահատտին տիրեաց թագաւորական պալատին եւ ամենայն գանձուց նորա, և զընտանիս

Ասատայ հանեալ բնակեցոյց յայլ տեղի։

Ի սմին ժամանակի թագաւորն Երուսաղէմի Ամալրի դնաց 'ի կոստանդինուպօլիս և դարձաւ բազում գանձիւք յերուսաղէմ. և յետ աւուրց ինչ ձեռն արկ նորոգել զեկեղեցին Բեթղեհէմի, որպէս ցուցանէ Լատինական արձանագրութիւնն 'ի վերայ հարաւային որմոյ միջնապատուն Ցուռնայ, որ ունի օրինակ զայս։

ՆՈՐՈԴԵՑԱԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԵԹՂԵՀԷՄԻ ԵՒ ԳՈՑՆԶԳՈՑՆ ՄՈՒՋԱՑԻՒՔ ՁՕՐԻՆԵԱԼ ՁԱՐԴԱՐԵՑԱԻ ՅԱՒՈՒՐՍ ԿԱՑՍԵՐՈՒԹԵԱՆ ՅՈՒՆԱՑ ՄԱՆՈՒԷԼԻ ԵՒ ԼԱՏԻՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՄԱԻՐԵԱՑ, ԵՒ ՅԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՌՈՏՈԼՓՈՍԻ, ՅԱՄԻ ՏԵԱՌՆ ՌՃՀ Ի ՁԵՌՆ ՊԱՏԿԵՐԱՀԱՆ ԵՓԵՐԵՄ ԿՐՕՆԱՒՈՐԻ ԵՒ ՄԻԻՍԻՈՍ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԻ։

Ի սկզնագլուխ գաւթին 'ի վերայ հիւսիսային որմոյ՝ 'ի ներքոյ պատուհանաց են յետագայ արձանագրութիւնք։

Առաջին ժողով գումարեալ յԱնկիւրեա 12 եպիսկոպոսաց (314), յորում սահմանեցաւ ընդունիլ յեկեղեցի զուրացողն 'ի ժամանակս հալածանաց՝ ապաշխարութեան կանոնաւ։

Երկրորդ ժողով գումարեալ յԱնտիոք Ասորւոց 'ի 55 եպիսկոպոսաց, ընդդէմ Պօղոսի Սամոսատացւոյ։

Երրորդ ժողով գումարեալ 'ի Սարդիկէ 140 եպիսկոպոսաց (348) ընդդէմ Արիոսի և 'ի հաստատութիւն Աթոռոց ուղղափառ հայրապետաց։

Չորրորդ ժողով 'ի Գանգրիա գումարեալ 15 եպիսկոպոսաց (319) ընդդէմ Եւսաքիոսի եպիսկոպոսի Սեբաստացւոյ, որ խոտէր զօրինս աւետարանի։

Հինգերորդ ժողով գումարեալ 'ի Լաւոթիկէ 25 եպիսկոպոսաց ընդդէմ Մանթանոսի աղանդին (320)։

Վեցերորդ ժողով գումարեալ 'ի Կարկեդոն 50 եպիսկոպոսաց ընդդէմ Նովատեանց, որք ուրանային զապաշխարութեան օրէնս· (254)։

Ի վերայ հարաւային որմոյ, յանդիման գրելոցս։

Առաջին ժողով գումարեալ 'ի Նիկիա 318 եպիսկոպոսաց, ընդդէմ Արիոսի մոլորութեան (325)։

Երկրորդ ժողով գումարեալ ՚ի Կոստանդինուպոլիս 150 եպիսկոպոսաց, ընդդէմ հոգեմարտին Մակեդոնի (381)։

Երրորդ ժողով գումարեալ յԵփեսոս 200 եպիսկոպոսաց, ընդդէմ Նեստորի չարափառի։ (431)։

Չորրորդ ժողով գումարեալ ՚ի Քաղկեդոն 636 եպիսկոպոսաց ընդդէմ Եւտիքեսի եւ Դիոսկորոսի Պատրիարգին Աղէքսանդրեայ։ (451)։

Հինգերորդ Բ. ժողով գումարեալ ՚ի Կոստանդինուպոլիս 164 եպիսկոպոսաց, ընդդէմ հետեւողաց Նեստորի և Որոգինեայ գրոց։ (552)։

Վեցերորդ Գ. ժողով գումարեալ ՚ի Կոստանդինուպոլիս 106 եպիսկոպոսաց ընդդէմ միակամեանց։ (680)։

Եօթներորդ Բ. ժողով գումարեալ ՚ի Նիկիա Բիւթանացւոց 367 եպիսկոպոսաց, ընդդէմ Պատկերամարտից։ (787)։

Այս ամենայն նկարք զոր գրեցաք, և այլ խորհրդաւոր պատկերք անօրինութեան Փրկչին, արդարեւ էին գործք ձեռաց առն ճարտարի՝ յօրինեալ եւ յարմարեալ արուեստիւք եւ գոյնդգոյն մուղայիւք ՚ի նմին դարու, եւ ՚ի ներքոյ իւրաքանչիւր ժողովոց Յունական վերատեսութիւնք։ Այս կերտուած մեծածախ եւ աքանչելի՝ գործ կայսերաց եւ թագաւորաց, հանդիսեալ զանազան դիպաց եւ զերծեալ յաւերանաց՝ եկաց ամս 672։ Իսկ ՚ի յետին ժամանակս 1842՝ Յոյնք հանին հրաման ՚ի Դրանէ Օսմանեան եւ նորոգեցին զեկեղեցին, զորմէ ունիմք գրել ՚ի տեղւոջ իւրում։ Յայնժամ խանգարեալ ծածկեցին մեծագոյն մասամբ զնկարան, և այժմ սակաւք ոմանք եւ ճեպորդք նոցին երեւին, որպիսիք են առաջին ժողովն Նիկիոյ և հրեշտակք, և այլք թերի, ՚ի սիւնազարդ գաւթի, և ՚ի հիւսիսային դասուն դէպ յարեւելս, երեւումն Յիսուսի աշակերտաց և չօշափելն Թովմայի զկողն նորա, այլովքն հանդերձ։

Ի սմին ժամանակի եկն յԵրուսաղէմ յուխտ Աննա թագուհին կին Մանուէլի կայսեր, որ ՚ի գուստր իշխանաւորի ուրումն Ռուսաց՝ ընկերակցութեամբ Զոսեմայ Ռուս սարկաւագի, և Թէոփիլոս Պատրիարգն Յունաց եղոյց նոցա պատիւ մեծ՝ չրջելով ընդ նոսա ՚ի Տնօրինական տե-

ղիս, ՚ի Յորդանան, ՚ի Նազարէթ և յայլ ուրեք, և սարկաւագն գրեաց զՍ. Տեղիս և զվանօրայս Երուսաղէմի, որպէս յառաջ բերեն Յոյն Արարացիք։

Իսկ Սալահատտին մինչդեռ դեգերէր ՚ի կողմանս Քիւրքայ հակառակիլ Լատինաց, հայր Նորա էյուպ անկեալ ՚ի ձիոյն մեռաւ։ Բսրձաւ ՚ի կենաց նաեւ Նուրէտտին Սուլթանն Դամասկոսի ՕՀՀ. (1173) եւ թագաւորեաց որդի նորա Սալէհ Իսմայիլ։ Եւ թագաւորն Երուսաղէմի Ամաւրի դիմեաց ՚ի վերայ Դամասկոսի եւ ասպատակեալ գերեաց զաշխարհն. բնակիչք քաղաքին նեղեալ ՚ի բռնութենէ՝ խոստացան տալ նմա հարկս իբրեւ զառաջինն, բայց նա ոչ առ յանձն. զի եղեալ էր ՚ի մտի տիրել քաղաքին. սակայն կալաւ զնա անդ ցաւ ինչ մահաբեր, եւ ստիպեալ ՚ի խօթուխթենէ անտի՝ էառ հարկս և դարձաւ ՚ի Պաղեստինա, որ այժմ կոչի Աքքէ, և մեռաւ անդ թագաւորեալ ամս 11, եւ յաջորդեաց յաթոռ թագաւորութեանն որդի նորին Բալտուինի Դ։

Իբրեւ լուաւ Սալահատտին զմահ Նուրէտտինայ, եւ զթագաւորելն որդւոյ նորին, եւ զարշաւանս Լատինաց, չուաբար յԵգիպտոսէ և դէմ եղեալ գնաց ՚ի Դամասկոս, և խաղաղութեամբ մտեալ ՚ի քաղաքն տիրեաց նմա. էառ և զնմէս, և անտի յարուցեալ պաշարեաց զԲերիա քաղաք, ուր փախուցեալ էր նոր Սուլթանն Սալէհ։ Ապա միջնորդութեամբ երեւելեաց քաղաքին հաշտութիւն արարեալ՝ ընկալան զնա ՚ի ներքս, և բաժանեցին զթագաւորութիւնն ՚ի միջի իւրեանց. տիրել Սալահատտինայ կողմանց Եգիպտոսի, և Սալէհի՝ Դամասկոսի։ Ցետ հաստատելոյ զգաչինս՝ դարձ արար Սալահատտին յաշխարհն իւր յԵգիպտոս։

նիցս անդամ զերծաւ նա ՚ի ձեռաց Խաչակրաց, զի հաւատարիմք և մերձաւորք նորին ոգի ՚ի բան գնէն զործնել ազատեցին զնա ՚ի գերութիւն անկանելոյ։ Զմեռաւ ածնել Սալահատինի զյեղակարծուստ յարձակումն թըշնամեաց և պաշարիլն իւր իրրեւ ՚ի ծուղակի, ցիր և ցան վախուստ և ցրուումն այնքան զօրաց, կորուստ և յափըշտակութիւն կահուց և կալմածոց մեծի բանակին, զկորստեան պարտութիւնն իւր առաջի թշնամեաց, եւ զյաղթականակ քրիստոնէից, պաշարեցաւ ՚ի սուգ մեծ և անհնարին, և նստեալ յուղղ արագընթաց (հեծին) ախրաթախիծ ոգւով՝ տարեալ քաղցու և ծարաւոյ, մինչ քաղել ոգւոց նորա, հատեալ էանց զաւազուստ անապատն Թիհ, եւ գնալ 8 աւուրց եհաս ՚ի քաղաքն Պլպէս։ Մեծ էր վտանգն յոր պաշարեցաւ Սալահատին. զի որ զմեծամեծ գործս իւր իրրեւ զվաղս համարէր, զարմանայր ՚ի վերայ անակնկալ ազատութեան իւրոյ, որպէս յիշէ ՚ի նամակին զոր գրեաց առ Թուրան Շահ եղբայր իւր. «Քանիցս անդամ մատնեցաք ՚ի կորուստ, այլ Աստուած չնորհեաց մեզ զկեանս, և այս եւս ՚ի կատարումն կարեւոր գործոյ իմիք»։ Զայսմ պատերազմ գրէ նաեւ Վարդան Պատմիչ. «Թագաւորն պատերազմ գրէ նաեւ Վարդան Պատմիչ. «Թագաւորն երուսաղէմի 300 ձիաւորով եհար զՍալահատինն ՚ի դրան երուսաղէմի՝ զօրավարսն Ս. Խաչին, որ եկեալ էր առնուլ զերուսաղէմ հարիւր քառասուն հազարաւ. բարձեալ ընդ ինքեան ջուր 60,000 ուղտիւք, որ միշտ կրէին ՚ի գետոց և յաղբերաց»։ Ցեբե. 171։ Տե. Նե. ՚ի Դէր. Մէ. Աե. Ա.ուբ. Եբե. 483։ (1178)։

Թէպէտ եւ սուգ մեծ ունէր Սալահատին ՚ի վերայ պարտութեան իւրոյ, այլ չվհատեցաւ խոպան. զի չեւ եւս բոլորեալ էր շրջան տարւոյն, վերստին գումարեաց զզօրս իւր՝ գնալ յօգնութիւն Իսլամացն Ասորեաց, և այնպիսի արագութեամբ էանց ընդ երկիրն քրիստոնէից, որք ոչ միայն խափանել կարացին զչուր նորա, այլ չժամանեցին լսել եւս. եհաս երագութեամբ ՚ի ստորոտս Լիբանան լերանց, եւ հասեալ ճէպ տուեալ անտի զօրաց իւրոց՝ եգիտ զնոսա ՚ի Սիդոն (Սայտայ)։ Եւ անհեալ ՚ի վերայ բանակի թագաւորին երուսաղէմի՝ կոտորեաց զդաղումս, և զայլս ցիր եւ ցան արար վախստական. փոքու լմն անկանէր

ԴԼՈԽԻ.

Պատերազմ Ակռաղնի. Պարտութիւն Սալահատինի. Քաջութիւնք նորին ՅԱսորիս. Աւերումն նոր բերդին առ Յորդանան. Դէմ Սղան. Լատին իշխան Քերքայ. Հաշտութիւն.

ՊԱՏՄԻՉ Արաբացոց ասէն թէ Սալահատին զարձ արարեալ յեգիպտոս, սկիզբն արար պարսպել եւ ամրացուցանել զՂահիրէ քաղաք և հաստատել ՚ի նմա զդպրոցս և զայլ բարեգործական չինուածս. իսկ թագաւորն երուսաղէմի Բալդուինն Դ. առ ՚ի բառնալ զիւռովութիւնն եւ զերկպառակութիւնս իշխանաց իւրոց, ելոյծ զդաշնն զոր հաստատեալ էր ընդ Սուլթանին, զի կարասցէ շրջել զմիտս նոցա ՚ի վերայ արտաքին թշնամեաց։ Իրրեւ լուաւ զայս Սալահատինն՝ աճապարեալ ժողովեաց զբազմութիւն զօրաց իւրոց, և ահեղ բանակաւ դիմեաց ՚ի կողմանն Պաղեստինոյ առնուլ զառաջս վտանգին։ Այլ թագաւորն երուսաղէմի հայեցեալ ՚ի տակաւութիւն իւր և ՚ի սակաւութիւն զօրաց իւրոց, չհամարձակեր ինքնին յասպարիզ մարտի ընդդէմ թշնամեաց իւրոց, զոր ինքն գրգռեալ էր. լսոյս տուեալ ամենայն ՚ի բերդն Ակռաղնի։ Իսկ Սուլթանն արձակեաց զզօրս իւր առաքակեալ զերկիրն չրջակայ, և ինքն թիկնապահ զօրօք կալաւ տեղի ինչ անդրմի ՚ի մէջ Ակռաղնի եւ Ռէմլէի։ Առաւտակ զօրքն հեռացան ՚ի բուն բանակէն ժամս իրրեւ 6, և գործեցին զմեծամեծ չարիս զաւուրս երիս։ Իրիստոնեայք օրն դիտէին ՚ի բերդէն Ակռաղնի և տեսանէին զհեռանալ զօրացն, ժամ դիպող գտեալ ելին արտաքս, եւ երթային լուռ և անձայն ՚ի խորս և ՚ի փոսս, զի մի երեւեսցին, և մերձենան յիջեւանս Սուլթանին իրրեւ նեղընկեց մի, և նորա տեսեալ զնոսա յանկարծակի՝ չխոթեցաւ յոյժ. ձայն տայր զայրապին հեծելազնդին կոչել և ժողովել զզօրն, և ինքն աճապարեալ մեկնեցաւ անտի գրաւել զայլ տեղի կարեւոր, սակայն պաշարեցաւ ՚ի քրիստոնէից, և չգտեալ զայլ հնարս գարձաւ ՚ի վախուստ. և ՚ի տաղնապս յոյսմիկ քա-

'ի գերութիւն եւ Բալտուին Դ. եթէ ոչ էին ամապարեալ թիկնապահք նորին եւ հանեալ 'ի պատերազմէն, Պատմիչք Արաբացւոց զայս քաջութիւնս Սալահատինի հաւասար համարին առաջին տառապանաց, որ դիպաւ նմա յետ դարձի 'ի պատերազմէն Սակաղոնի, և թերեւս գերազանց քան զայն, որ այնպիսի երագութեամբ փութայր լուծանել զիրժ ձախողակի ձաղանաց իւրոց։ Ցետ այսր յաղթութեան չտուեալ հանգիստ զօրաց իւրոց, յարձակեցաւ վերստին 'ի վերայ բանակի Լատինաց, որոյ զօրագլուխ կացեալ էր կոմսն Տրիպօլսոյ, և եհար զնոսա 'ի հարուածս մեծամեծս։ Ապա չտս արարեալ դնոց 'ի վերայ բերդին կամ քաղաքին, զոր չիննալ էր թագաւորն երուսաղէմ 'ի վերայ Ցորդանան գետոյ, 'ի կողմանս Տիբերական ծովուս· այլ քրիստոնեայք ընդդէմ կացեալ վտանգեցին զնա, եւ հալածական տարին մինչեւ 'ի դուռն Դամասկոսի, և գերեցին զերկիրն։ Իսկ Սալահատինն զարձեալ ընդ կրունկն մինչդեռ պատահեցաւ նոցա, և կալաւ կենդանւոյն 200 Ֆրէդր 'ի տաճարական ասպետաց· հրձիգ արար զքաղաքն նոր, այրելով 'ի նմա զ500 ասպետս հանդերձ զլխաւորօք նոցին։ Զօրք Քաչակրաց ապշեալ լինն էին, զի զկնի պատերազմին Սակաղոնի չնչեալ և խորտակեալ համարէին զզօրութիւն Թշնամւոյ իւրեանց, այլ այժմ տեսանէին զնա իրրեւ առիւծ վիրաւոր զգեցեալ զզօրութիւն նոր, և առաւելեալ 'ի քաջութիւնս և 'ի յաղթութիւնս (1)։

Ի սմին ժամանակի Ռուբէն Բ· իշխանն Կիւլիկիոյ եկն յերուսաղէմ եւ արար հարսանիս բազմածախս՝ առեալ կին զդուստրն Ռընալտ որ Շաթիլեօն Լատին իշխանին Քերեքոյ (1181)· Ամբոխ· Եբէ· 103։ Զյանդուգն գործս Շաթիլեօնի այսպէս պատմեն Արաբացիք· ժողովեաց զվատինս որք բնակեալ էին 'ի Քերեք եւ 'ի Շովպէք, եւ կազմել

(1) Սոսկ Արքեպիսկոպոս Երուսաղէմի հրաւիրեալ կոչեցաւ 'ի ժողովն Հռոմայեցի· կամ ըստ այլոց 'ի Տարսոն Կիլիկեցւոց· զոր գտանք բնից Գրիգոր Կաթուղիկոս· վասն միաբանութեան ընդ եկեղեցւոն Յունաց· յորում խոստացաւ զոյն հրաշալի առնելարանութիւն Ս· Ներսէս Լամբրունեցի· 'ի հանդիսի Հայոց ժողովոյն· և յորում ամի մեռաւ Մանուէլ կայսրն· (1180)։

նաւս և խաղացոյց զայն 'ի ծովն Կարմիր, և եղեալ 'ի նմա զօրս արձակեաց 'ի Մէդինէ քաղաք, զի բերեալ հանցեն 'ի գերեզմանէ զսկեզբս մարգարէի նոցին՝ առնել յաչխարհն իւրեանց, չյաճախել այլ եւս անդ ուխտաւորացն Արաբացւոց· Իրրեւ լուաւ զայս Սալահատինն՝ որ էր յայնժամ 'ի կողմանս Քաւառայ, ազդ արար իշխանին Եգիպտոսի, և նա առաքեաց զկնի նոցա զՀիսամէտտին զօրօք, որոց խառնեցան խումբք Արաբացւոց, և հասեալ մերձ 'ի Մէդինէ՝ ձեռնակալ արարին 'ի նոցանէ զարս 10· և տարեալ 'ի Գահիրէ եւտուն կոտորել զնոսա դաւուց գիտնաւորաց·

Եւ մինչդեռ քրիստոնեայք եւ պլաղդինք տագնապէին 'ի սոյն վիճակ տաժանելի, Սուլթանն Իկոնիոյ, Գըլիճ Արսլան 'ի Սելճուգեան ճիւղոյդ, արշաւեաց 'ի սահմանս տէրութեան Սուլթանին 'ի գրաւել զերկրն Ռասլան· Սալահատինն բարկացաւ յոյժ, զի համարձակեցաւ աղարտել զկարգ օրինացն Իսլամայ· ուստի 'ի վաննել զնոր Քրիստոնեից զայս եթող զպատերազմն քրիստոնէից, որ ուխտ եդեալ էր անձին իւրում վախճան առնել նոցա· Առաքեաց զզօրավարն Թոգի Իտտին 1000 արամբք, որոյ պատահեալ 20,000 զօրաց Գլիճ Արսլանայ, յրուեաց զնոսա, և նոցա թողեալ զամրոցն Հէռն մեկնեցան 'ի տեղի իւրեանց եւ խնդրեցին հաշտութիւն· Սալահատինն ոչ կամեցաւ նեղել զժողովուրդն, որք նեղեալ էին յերեսաց սատակութեան սովուն· վասն որոյ առաջի արար Իսլամաց և Քրիստոնէից և ամենայն մերձակայ թագաւորաց ընդհանուր հաշտութիւն· ժողովեցան առ նա դեսպանք յամենայն կողմանց, ընդ որս և դեսպանն Բալտուինի, եւ եղեալ դաշինս՝ արարին խաղաղութիւն·

Սալահատինն, որ տածէր 'ի սրտի իւրում զկեր աշխարհակալութեան, արդիւնաւորեաց զայն յաստիական եւ յարաբական պատերազմունս, և վայելեցոյց զհամբաւ մեծութեան իւրոյ առաջի աշխարհի· զանգործ ազգաւոս և զկարօտեալս Սուրիոյ տարաւ ընդ իւր յեգիպտոս և հանգոյց զնոսա խնամօք, որով եղեւ երախտաւոր եւ բարերար հասարակաց· եւ ապա ձեռն արկ կատարել զարքեպիսկոպոսական չինուածան զոր սկսեալն էր յաւագպետն·

ԳԼՈՒԽ ԻԱ.

Մահ Բալտուինի և յաջորդութիւն Բալտուինի Ե. և Գա խանի։ Գործ Սալահատինի։ Պատերազմն Տիբերիոյ։ Պատուիրն Թագաւորին և խաչախոյին Քրիստոսի։

ԲԱԼՏՈՒԻՆ Դ. յետ դնելոյ դաչինս ընդ Սալահատինի եւ կնքելոյ զհաշտութիւնն անկաւ յախտ դողութեան, և յանձն արար զինանաւ թագաւորութեանն քեռորդւոյ իւրոյ։ Բալտուին առեալ էր զքոյր իւր Սիբիլլա, զայրիացեալն յառաջին յառնէ իւրմէ՝ ի Գուլիէլմոսէ երկայնատար անուանելոյ, ի հնութիւն Գուլիատոնի Լուսինեան։ Մեծամեծք աշխարհին նախանձելով ընդ այս ընտրութիւն, անկաւ ի նոսա երկպառակութիւն։ Ի մեռանել Բալտուինի Դ. (1184), յաջորդեաց նմա քեռորդի իւր Բալտուին Ե. որդի Սիբիլլայ և Գուլիէլմոսի, ծաղկահասակ թագաւորն, որ հազիւ էր ամաց ութից, մեռաւ (1186) աստիկ հիւանդութեամբ։ Մայր իւր Սիբիլլա ետ զթագաւորութիւնն Գուլիատոնի Լուսինեան՝ երկրորդ առնն, Կոմսն Տրապօլոյ մատնեաց զնորապսակ թագաւորն, որ անկաւ ի ձեռս Սալահատինի՝ ի պատերազմին Տիբերիոյ, զորոյ ունելիք արդ ասել ի տորեւ։

Մինչդեռ Սալահատին կայր պարապեալ ի գործ շինութեան յԵգիպտոս, մեռան թագաւորքն Մուսուլոյ և Բերիոյ։ անկաւ երկպառակութիւն ի մէջ ժառանգաց նոցին եւ լուծին զզաշնն։ Հարկ եղեւ Սալահատինի զէն առնուլ ընդդէմ նոցա։ զի Սէյֆէտտին և Սուլթան Սալէհ ոչս ունէին զնմանէ, և ի պահու մահուան իւրեանց մին զերկուսին որդիս իւր, և միւսն զորդի հօրեղբօր իւրոյ զրկեալ ի ժառանգութենէ զահաժառանգ կացուցին Իզզէտտին Մա՛սուտն, կարծելով թէ նա կարող է հանել զքէն վրիժուց իւրեանց ի Սալահատինէ։ Ի հասանել նորա իշխանութեան՝ մեծագումար պատերազմական ծախիւք միաբանեցան ընդ թագաւորին երուսաղէմի, եւ ի միասին արշաւեցին յերկիր տէրութեան Սալահատինի, Տրամեցաւ Սուլթանն ընդ այս, զի փոխանակ բարեացն՝

եդիտ չարիս, և զի ինքն չէր տուեալ պատճառս ինչ պարահելոյ զդաշնն, նմին իրի եդ ի մտի բառնալ ի միջոյ զկնանս Աֆտալէկին։ յայտ արար ամենեցուն թէ՝ ի թագաւորական հրովարտակին տուեալ յԱլպատեան Խալիֆայութենէ, պարտնակէ զնգիպտոս և զբովանդակ Սուրիս, մի միայն խորչելով յառքէ կոտորածէ Իսլամաց՝ թողեալ էաք զկողմանս Բերիոյ Աֆտալէկին։ իսկ նա դաշնակցեաւ ընդ Մաշակիրս ի կորուստ Իսլամաց։ ուստի հարկ եղեւ ձգել զնա օրինօք յիշխանութենէ։ Զկնի այսր հրատարակութեան եմուտ Սալահատին զօրօք յՍուրիս, և զամս չորս տուեալ պատերազմ անընդհատ, կառ զքաղաք և զերդս մինչեւ ի Տիգրանակերտ, նաեւ զերկիրն Իզզէտտինի։ անձնատուր եղեւ նմա և Բերիա։ զմատեհասին կացոյց իշխան Սենճարայ, պաշարեաց զՄուսուլ՝ բայց նախ քան զառնուլ քաղաքին՝ անկաւ խօթ ի մահիճս, եւ պայման հաշտութեան ընդ Իզզէտտինայ։ այսպէս յայսկոյս Եփրատայ տիրել Սալահատինի, եւ յայնկոյս գետոյն մնալ ի ձեռս Իզզէտտինի, եւ լինիլ հարկատու Սալահատինի։ Ձերկարել խաղաղութեանցս այսոցիկ իշխանք Մաշակիրայ պարապ գտեալ՝ բռնացան յամենայն կողմանս երկրին Իսլամաց։ զի ի սմին ժամանակի յամենից Միջերկրական ծովուն մինչեւ ի սահմանս Հայաստանի լցեալ էր պատերազմաւ և արիւնհեղութեամբ։ Սալահատին պատերազմեալ ընդ Սէյֆէտտինի խորհէր ի միտս իւր յետ պատերազմին Սէյֆէտտինի, դարձուցանել զբովանդակ զօրութիւն իւր ի վերայ քրիստոնէից։ սակայն միջնորդութիւն պանապետին Հաւսայ արգել զնա ի խորհրդոցն։ Նախապատիւ վարկաւ զխաղաղութիւնն ալրով, քան տիրել քաղաքաց խաղութեամբ։ ուստի վերստին եդ դաշինս ընդ Գուիատոն Թագաւորին երուսաղէմի, պայմանաւ՝ զամս չորս թող առնել զինուց։ Սակայն չեւ եւս բոլորեալ չորան առաջին ամի պայմանին, իշխանն Քերքի Ռընալտ որ Շաթիյոն, յարձակեալ ի վերայ կարաւանի ուխտաւորացն Իսլամաց, որ անցանէր մերձ ի սահմանս երկրին իւրոյ, առաւարի էառ զնա։ Սալահատին բողոք կալաւ առ թագաւորն երուսաղէմի՝ և խնդրեաց տալ զգերեալսն եւ ածել զապառուհաս ի վերոյ յանցաւորին։ Իրրեւ եւս թէ ա-

սխալան արար Թադաւորն զբանս իւր, պատրաստեցաւ ՚ի պատերազմ (1187)։ Տե՛ս Նե՛ ՚ի Գէդ՛ Վ.բդ՛նոյ. Ցեղե՛ 176։

Եհան հրամարտակ Սուլթանն ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ եւ հրաւիրեաց զիսլամս գալ ժողովիլ ՚ի ներքոյ դրօշս Ս. Պատերազմին։ Գրեաց և առ որդին իւր Մէլիք Ա.ֆտալ ելանել դնդաւ իւրով ՚ի կողմանս Տիբերեական ծովուն, լրտեսել զերկիր քրիստոնէից, և գումարել զհրաւիրեալ զօրսն։ Եւ ինքն դէմ եդեալ գնաց ՚ի կողմանս Քերեքայ, և խնամարկեալ ուխտաւորացն Իսլամից, առաքեաց զնոսա մինչ ՚ի կղզին Արաբացւոց, և ապա դարձաւ ՚ի վերայ Քերեքայ ՚ի ձեռս առնել զիշխանն, որ եղեւ առիթ եղծանելոյ դաշինն. աւարի եւս զքաղաքն և գերեաց զրաւումս, այլ ոչ կարաց ըմբռնել զիշխանն, որ ամրացեալ էր ՚ի բերդն անառիկ՝ չինեալ ՚ի գլուխ լերին հաստեալ ՚ի ժայռէ. Թէպէտ եւ պաշարեալ զայն աշխատ եղեւ ամաօրեայ ժամանակաւ, այլ ամրութիւն տեղւոյն ձեռնթափ արար զնա ՚ի գործոյ։ Զանցս Քերեքայ անցոյց նաեւ ՚ի Շովալէք. անդ հասին առ նա եւ զօրքն Եգիպտական։ Մէլիք Ա.ֆտալ կատարեալ զգործ իւր եհաս ՚ի Տիբերիա, և անտի ՚ի Սուֆուրեայ. ընդդէմ ելին Լատինք, բայց ՚ի զօսանեցան, եւ ոմանք եւս անկան գերի։ Զոր տարեալ Սալահատինի ՚ի կողմանց անտի եհաս առ որդին իւր՝ և եղեն բանակ մեծ. և ձեռն արկ պաշարել զքաղաքն Տիբերիա, չինեալ յեղր Համանուն ծովուն, եւ կանգնեալ զմեքենայս սկսաւ հարկանել զպարիսպն. յրել և հանել զմեծամեծ քարինս ՚ի հիմանց նորին և ՚ի դիշերին յայնմիկ կործանեցին զմի կողմն պարսպին եւ զնդան ՚ի ներքս։ Լուր առեալ Տիբերեայ և զկատմութիւն ահագին բանակին Սալահատինի զղջացաւ զքաղաքն երեւսաղէմ. պատրաստեցաւ և ինքն Գուիտոն Թագաւորն կոչեալ զամենայն իշխանս Լատինաց, գումարեաց զամենայն զօրս ընդ հնծեալ եւ ընդ հետեւակ իրրեւ 80,000 ըստ հաշուի Արաբացւոց, և եղեն բանակ մեծ. խառնեցաւ ընդ նոսա եւ Հերակլիոս Լատին Պատրիարքն Երուսաղէմի հանդերձ եկեղեցական դասուք, բարձեալ ընդ ինքեանս եւ զիսաչափեայն Քրիստոսի, և չոր արարեալ դնացին ՚ի վերայ Թշնամեաց իւրեանց. խորհէին նախ

սլատել զքաղաքն Տիբերեա, որ ամենայն պատուար էր ամենայն քաղաքացն Հրէաստանի. զի ՚ի վտանգիլ նորին, այլքն դիւրաւ մատնէին ՚ի ձեռս այլազգեաց։ Լուաւ Սալահատինն ՚ի ձեռն լրտեսաց իւրոց զդալուստ բանակին քրիստոնէից. եմուղ զՏիբերեա եւ ամաստարեալ կալաւ զդաշտան Հերմանի, զոր Արաբացիք կոչեն Հ.ՐՆ, հեռի ՚ի քաղաքէ անտի իրրեւ ժամ 2։ Գրաւեալ կալաւ զկարեւոր տեղիս, զդետն Յորդանան և զճանապարհս ծովակին. զի Թէպէտ և հասին անդ Լատինք, բայց տարակուսեալ իմն էին, զի առանց ջրոյ չէր հնար վճարել ինչ։ Յարձակեցան քանիցս բանալ զճանապարհ ջրոյ, այլ մղեցան յետս. և ՚ի հասանել գիշերի դադարեցաւ մարտն։ Զի որպէս քրիստոնեայք ոչ համարձակէին յանկարծ անկանիլ ՚ի վերայ այլազգեաց, զիտէր առեալ զքաջութենէ Սալահատինի եւ զամրութենէ բանակի նորին. նոյնպէս և Սալահատին չառնոյր յանձն գիշերապարծակ լինել ՚ի վերայ քրիստոնէից, զի բազումք ՚ի նոցանէ էին վաւեալ կռուողք, և ՚ի մանկութենէ քաջակիրթ ՚ի մարզս պատերազմաց և ՚ի կարդէ հեծելոց։

Այն ինչ մերկանայր գիշերն զսեւաթոյր քող տգեղութեան իւրոյ, եւ Հառագայթ վարդակարմիր արեգական հարեալ ՚ի զրահատլատ պէնս և ՚ի սաղավարդս սպառազէնս քաջաց դէմ ընդդէմ ճակատելոց, նշոյլք և փայլատակումնք հատանէին. ապա ձայն տուեալ մարտի՝ դիմեցին սատկութեամբ ՚ի վերայ իրերաց, զի մի կողմն սլատքեալ տուչսրէր ՚ի ծարաւոյ, և միւսն արեան քրիստոնէից. և պատահեալ այր իւրաքանչիւր ընկերի իւրում յոգիս ապատանի՝ չանայր յաղթահարել զսխոյեանն։ Հնծեալքն, որք էին յերկուս թեւս Սուլթանին, յարձակեալ չարժեցին զահեակ թեւն քրիստոնէից, և փոթորկեալ պատեցին զմիջավայրօք բանակին և կոտորեալ արիւն զոջ թեւօքն։

Զայն տեսեալ Ռիմոնտ կոմսին Տրապօլսոյ, որ կացեալ էր ՚ի գլուխ ահեակ թեւի Քաջակրաց, յարձակեցաւ նենդութեամբ և ձեղքեալ զկարգս այլազգեաց իրրեւ նետ անց ՚ի միջոյ նոցա, և փախուցեալ գնաց ընդ իւրոցն։ Զդաւաճանութիւն կոմսին յիշէ նաեւ Վարդան, և յաւելու թէ՝ ՚ի ծածուկ միաբանեալ էր ընդ Սալահատինի. Եր՛ 177։

Իսկ թագաւորն եւ իշխանք նորին անեակալ յայտնապէս զմանուկն նենգաւորին՝ չզօրէին առնել ինչ, այլ միայն խոյս առեալ յասպարիզէ մարտին՝ ապաւինեցան ՚ի մերձակայ բլուր ինչ, եւ այլազգիք պաշարեալ զայն երիցս յարձակեցան ՚ի վերայ նոցա, եւ առին զբլուրն, կենդանեաւքն կալան զԹագաւորն Դուխաոն, կամ Կիւ ոք Լուսինեան, և զամենայն երեւելի իշխանս Լատինաց՝ որք էին ընդ նմա։ Եւ այլք ՚ի գինուորաց, որք զերծեալ էին ՚ի սրոյ՝ վարեցան ՚ի գերութիւն։ Այլազգիք հայեցեալ ՚ի գերեալսն ասէին. ոչ ոք անկաւ ՚ի պատերազմս, եւ դարձուցեալ զաչս յառեալ ՚ի դիակունս անկելոց, ասէին՝ ոչ ոք գերեցաւ ՚ի քրիստոնէից։ Իսկ այլք ՚ի պատմագրաց հաշուեն զԹիւ անկելոց ՚ի բանակէն Լատինաց իբրեւ 30,000 հեծելոց ՚ի կարգէ ասպետաց։ Ապա ածին զԹագաւորն և զեղբայր նորին և զայլս ՚ի վրանն Սուլթանին, և նորա ընկալեալ բազմեցոյց զնա առ իւր, եւ զիշխանսն ըստ կարգի, և մատոյց Թագաւորին դրակ մի ջուր ձիւնախառն, և յետ ըմպելոյ նորա, մատոյց առ իշխանսն Քերբեքայ և ասէ, ա՛ռ Շաթիյկօն։ իբրեւ լուաւ Սուլթանն զանուն նորա, բարկացաւ յոյժ և ասէ. մի՞թէ արժան իցէ նենգաւորիս այսմիկ ըմպել ջուր առաջի իմ, որ ժողովեալ զգաս սիկարեանս իբրեւ 1000 յարձակեցաւ ՚ի վերայ կարաւանի ուխտաւորաց Մէքքէի, մինչ էր ՚ի պատերազմին Աքթաբէկի։ Ժամ է արդ կատարել զերդումն իմ և բառնալ զչարաշուք գլուխ առնդ, որ եղեւ առիթ եղծանելոյ զաշխարհն և պատերազմիս այսմիկ, և յետ յանդիմանելոյ բանիւք կշտամբանաց զՇաթիյկօն և զընկերս նորա, որք էին թուով 200, առաջի եդ նոցա դառնալ յայլազգութիւն։ իբրեւ ոչ առին նոքա յանձն, էառ հատանել մի առ մի զգլուխս նոցա ՚ի հրապարակի առաջի իւր։ Ապա հրամայեաց զԹագաւորն երուսաղէմի եւ զեղբայր նորին պՀոնկրի տէրն ձէպելայ և զայլս, տանել կապանօք ՚ի Դամասկոս և դնել ՚ի բանտ։ Իսկ խաչափայտն Քրիստոսի, պատեալ մաքուր ոսկւով և պսակ ոսկեղէն ՚ի գլուխս նորա զարդարեալ ակամբք պատուականօք էր ընդ բանակին քրիստոնէից, որպէս գրեցաք, որ և անկաւ ընդ այլ կահս ՚ի ձեռս այլազգեաց։ վարմանալ էին ՚ի վերայ քրիստո-

նէից, որ կարեւոր համարէին զփրկութիւն խաչին՝ քան Թագաւորին խրտնոց, և Թոռանձանօք խնդրէին զայն, այլ նոքա ոչ եւոուն։

Ետուս Սուլթանն ՚ի Տիբերիա և կամուրջի տէր քաղաքին յանձն արար զայն ՚ի ձեռս նորա, և ինքն մեկնեցաւ ՚ի քաղաք առն իւրոյ ՚ի Տրապօլիս։ և Սալահատին աւերեաց զեկեղեցին զոր կանգնեալ էր ՚ի նմա կոմն Տանգրի և կացուցեալ եպիսկոպոս (1099)։

Ի ժամանակի պատերազմիս յայսմիկ զօրք այլազգեաց եկեալ բնակեցան ՚ի վանօրայս Թոմորտական լերին, և ՚ի ձեռն կրօնաւորաց ամրացուցին զբերդն անդ, եւ յամին (1220) Արաբացիք տապալեցին զամրոցն և զաշտարակն, որ յանկիւնս յարեւելից հարաւոյ, աւերեցին և զվանօրայս։

Սալահատին զկատարեալ յաղթութիւնն զոր տարաւ ՚ի պատերազմին Տիբերիոյ, փութաց առաւել եւս բեւեռագործել զայն՝ տիրելով այլոց քաղաքաց եւս. վասն որոյ բաժանեաց զզօրս ՚ի գունդս գունդս, և կացուցեալ զօրավարս ՚ի վերայ նոցա, արձակեաց ՚ի չորեքկայս երուսաղէմ, և ինքն դէմ եդեալ գնաց ՚ի վերայ Պաղոմայիդայ Սիդոնի և այլոց ծովեզերեայ քաղաքաց։ Իսկ զօրավարացն այնոցիկ արշաւեալ ՚ի կողմանս կողմանս սրով և հրով՝ տիրեցին 15 հռչակաւոր եւ ամուր բերդից. առին զնաւարկեթ. դարն զՍուփուրիա դատարկ ՚ի բնակչաց. տիրեցին կեսարիայ Պաղեստինացւոյ. անձնատուր եղեւ տիրեցին Սբասէփ. հասին ՚ի Սեբաստիա և զվնծ եկեղեցի Յովհաննու Կարապետին փոխեցին ՚ի մզկիթ. առին զնասլուսս, և զայլ քաղաքս և զամրոցս. ժողովեցին աւար բազում և դերի, որոց ոչ դադր Թիւ։ Իսկ Սալահատին էառ զՊրտղոմայիս և զայլ ծովեզերեայ քաղաքս, պաշարեաց զԶրտղոմայիս, և խնդրէր զբերդն և զկին կոմսին որոյ այրն մեռեալ էր չարաչար. և նա խնդրեաց պատանդս յերեւելի արանց, զի գնասցէ առ նա և լինիցի նմա կին, եւ առեալ զնոսա ՚ի ներքս՝ եհատ զգլուխս նոցին և ընկէց արտաքս, ընդ որ զարհուրեալ ՚ի բաց գնացին։ Վ-ԸՐ-Ն։ Եբե- 177։

Ապա եհան Սալահատին զԹագաւորն երուսաղէմի զԴուխաոն եւ զորս ընդ նմա ՚ի բանտէ և խոստացաւ Թողուլ զնոսա ազատս, եթէ Թողուցուն Լատինք զայլ քա-

զաքս և երթիցեն 'ի բաց, եւ հեռացուսցեն զմարքիզն 'ի Տիբրոսէ։ Եւ ինքն ընդ եղբօր իւրոյ Մէլիք Ադիլայ էջ յԱկաղոն, և պաշարեաց զքաղաքն։ իսկ Լատինք եւուն զայն 'ի վրկանս Թագաւորին իւրեանց։ Ելին և մեկնեցան անտի, որոյ բազում աշխատութեամբ տիրեալ էին վաստակեալ ամն իրր 30։ կորուսանելով զբազմաթիւ գինուորս և զինչս ամրացուցեալ զնա յամենայն կողմանց։ Ցետ այնորիկ էառ Սուլթանն զՌէմլէ, զԲեթգուբրոն, և նատաւ անդ մինչեւ յանձն արարին զամրոցն Տարուսայ Նաթրոնի և Պէյթ Ճիպրէլի։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Ադուձն Երուսաղէմ 'ի Սալահատինէ եւ զանազան անգ նորին։ Տուն Յոհաննիսի եւ Անձայ։ Տաճար Ս. Յակոբայ։ Դաշնագիր Սալահատինի։ այլոցն հանդերձ։

Սալահատին որ այսչափ յաղթահարեալ տագնապեցոյց զՀատինս, խորհէր տակաւին հարկանել եւ վիրաւորել զնոսա 'ի սիրտ և 'ի հոգի, և խոցոտ ջնջել և հեռացուցանել յերկրէն Պաղեստինոյ։ ուստի 'ի ձեռն լրտեսաց ծանեաւ թէ ո՛չք ոմանք մնացեալ էին յերուսաղէմ, եւ ո՞րպիսի զօրութիւն նոցա, և թէ ո՛րպէս իշխանք և առաջնեք և Պատրիարգն կղերականօք պաշարեալ յերկիւղ և 'ի տրտմութիւն, խորհէին գառանել զնա իրաց։ և նկատ բազմութեամբ զօրաց յաւուր կիւրակէի, էջ յարեւմտեան կողմն քաղաքին, և առաքեաց պատգամաւորս առ ամիրան եղեալ առաջի նոցա զպէտս պայմանս։ զի տացեն զքաղաքն, եւ ներծուսցեն զնա 'ի վտանգէ պաշարման։ բայց քրիստոնեայք մերժեցին զպատգամս նորա և ոչ ընկալան, և սկիզբն եղեւ պաշարման քաղաքին սրբոյ։ ընդհիւսիսային և արեւելեան կողմանս քաղաքին սահմանեաց լինել նպատակ յարձակման, Լատինք եւս պատրաստեցան 'ի ներքուստ, 60,000 զօրս կացուցին 'ի ներքին կողմն քաղաքին ընդդէմ բանակին այլազգեաց, և իշխան քաղաքին

Գալեան զօրագլուխ նոցին, որք խոստացան չխնայել գլխոյն կաթիլս արեան իւրեանց 'ի վրկութիւն քաղաքին սրբոյ։ Սալահատին եւս վարել զնեքենայս պատերազմին 'ի պարիսպ անդ և սկսաւ հարկանել։ մեծաւ աշխատութեամբ բրկին զհիմունս խլել և հանել զմեծամեծ քարինս։ Իսկ ամրականք վտանգեալ 'ի քաջութիւն բազկի իւրեանց՝ հորդեալ զնգան արտաքս երկիցս և երիցս և 'ի բաց վանեալ զթագմութիւնն, ետրեալ խանդարեցին զմեքենայս նոցին, այլ զանգիտեալ 'ի խուժանէն վերատին ամբոցան 'ի քաղաքն։ Եւ տեսեալ թէ չիք հնար վրկութեան, գրեաց Գալեան իշխանն առ Սալահատինն եւ խնդրեաց զհաշտութիւն։ բայց նա ոչ առ յանձն, զի զայրացեալ էր ոգի նորա սակս անարգելոյ նոցին զառաջին պատգամաւոր իւր, եւ արար պատասխանի։ թէ պատրաստ է սրով առնուլ զքաղաքն, և թէ զոր ինչ արարին Լատինք Իսլամ ժողովրդոց յաւուրս քաղաքին, զնոյն պարտ է և ինձ առնել։ Կրկնեաց Գալեանն զխնդիրն խնայել բնակչաց քաղաքին և մի զայրացուցանել առաւել զյուսաբեկն 'ի կենաց։ զի եթէ ասէ կայ վտանգ մահու առաջի սոցա, չզերծանի և բանակ իւր 'ի մեծ վնասուց, ուստի եդեալ են յանձինս չվեռանիլ ուրեք, մինչեւ սպանեալ զտան այր յայլազգեաց։ և բաց 'ի սոցանէ, հիմնայատակ աւերել զքաղաքն, կործանել զգմբէթն մեծ 'ի վերայ Սախրայ մզկիթին, 'ի սուր մատնել զնգազարաւոր գերիս Իսլամաց, եւ յաւիտեանս զրանկունս և զինչս նոցա։ Ի վերայ այսր պատգամի 'ի խորհուրդ կոչեաց Սալահատինն զմեծամեծս տէրութեան իւրոյ, և զոմանս 'ի զօրագլխաց։

Սահմանեցաւ 'ի խորհրդեան խօսիլ հաշտութիւն այսու պայմանաւ, զի ամենեքեան որք գտանին 'ի քաղաքի անդ, 'ի մեծէ մինչեւ ցփոքունս, ասցէ այր իւրաքանչիւր վճռականս անձին իւրոյ ոսկիս 10, կին 5 և մանուկ 2։ և անկարողքն մնասցեն գերի։ յանձն առին Լատինք զպայմանն, եւ կացին երաշխաւոր Գալեանն, Պատրիարքն և իշխանք տաճարական ասպետաց եւ Գալեանն էառ 30,000 ոսկիս աղքատաց, տալ զփրկանս անձանց իւրեանց։ Իսկ այլք 'ի պատմագրացն այլազգեաց ասեն։ թէ Սալահատին գութ մեծ եցոյց 'ի վերայ պարտեալ քրիստոնէից, եւ

հրամայեաց ՚ի թագաւորական դանձէ, զոր եգիտ ՚ի քաղաքին, առ զմերկանս ժողովրդոց։ Եւ յետ այնորիկ յանձն արար զրանալոս բերդին, և երից զգրուներս քաղաքին, և եմուտ Սալահատտին վաղօք ՚ի ներքս յաւուր ուրբաթու։ Այսպէս առաւ Երուսաղէմ ՚ի Սալահատտինէ յամի Տեառն 1187, և ՚ի թուին Հայոց 636 եւ Հիճրեթին ՕՋՓ։ Հոկտեմբեր 2։ յետ սկրելոյ նմա Լատինաց ամս 88։ Եւ վերըսաին սկսաւ Ծածանիլ Մահմետական դրօշն ՚ի վերոյ պարսպաց նորին։ Այլազգիք գոհն ՚ի քաղաքի անդ զարս և զկանայս և զմանկունս աւելի քան զ100,000 ոգիս, եւ Սուլթանն եւս վաճառել զգրուներս քաղաքին, և կացոյց զոստիկան և զդիւրս ժողովել զարհմանեալ հարկն։ սակայն բաղումք կամեցան պարանաւ ընդ պարիսպն վախեան, ոմանք զղեցան ՚ի տունս, և այլք զերծան ՚ի ձեռն միջնորդաց։ Ապա ետ Սուլթանն ընչիւք առատս զնոսա զմն երեւելի Բամբիչ, զկին և զորդի թագաւորին Գուիտոնի, և զմն իշխանս հի դուստր Փիլիպպոսի, եւ մայր Հանկրի, և զայլս որք ընդ նոսա էին։

Գոան ՚ի սմին ժամանակի ՚ի քաղաքին (*) 500 ուխտաւորք յազգէն Հայոց, այլ չսահին ինչ ՚ի նոսանէ։ Ի սմին յիշեհանաց Սուլթանին խնդրէր նաեւ զ1000 ոգիս ՚ի Հայոց, բայց յայտ արարին թէ նոքա են կրօնաւորք բնակեալք յերուսաղէմ և ՚ի չրջակայս նորա, զորս եթող Սուլթանն, վաճառեցին Լատինք զինչս և զստացուածս իւրեանց դիւրագին, և զայլս թողին ՚ի բաց, և մեկնեցան ՚ի քաղաքէն։ Ժողովեալ երարձ Պատրիարգն զամենայն զարդս և զծանրագին սպասս եկեղեցեաց և տաճարին Ս։ Յարութեան և 13,000 կրօնակիցս իւր իւրեւ հոգեւոր որդիս, զորոց ազատութիւնն պատուական գիտէր քան անձին իւրոյ։ Ամաչէտաի զօրապետն զժկամակ եղեւ ընդ այս և մանուցեալ առ Սուլթանն ասէր, թէ՝ չէ օրէն քրիստոնէից զայնչափ հարստութիւն հանել ՚ի քաղաքէն, սակայն Սուլթանն արգել զնա ՚ի խորհրդոյն, մի բռնասցուք ասէ ՚ի

(*) Ազաքեայ պատմէն սխալ ասէ, զի 500 թիւն էին կրօնաւորք Հայոց բնակեալ ՚ի վանօրայս, իսկ հազար անձինք՝ էին 1000 տունք բնակիչք երուսաղէմի. կային նաեւ Հայք ՚ի Բեթղեհէմ, ՚ի Քերեք և յայլ սեր, որ ՚ի սմին ժամանակի եղեն ցիր և ցան։

վերոյ նոցա իրրեւ զանկրաւս և զաղտս, այլ արասցուք ըստ դաշինն՝ զոր եղաք, եւ այսպիսի եղանակաւ եւ ՚ի քաղաքէն սրբոյ բազմութեամբ եւ Պատրիարգն։ Մնացին անդ 15,000 աղքատք մեռեալք ՚ի տուման որք ոչ կարացին վրկանաւորել զանձինս, յորոց 7000 էին արք և 8000 կանայք և մանկունք, զորս բաժանեցին այլազգիք ՚ի միջի իւրեանց։

Սալահատտին ոչ կամեցաւ մտանել ՚ի միջին տաճարին, զոր Լատինք արարեալ էին զայն եկեղեցի։ եւ կոչծանել զսեղանն կանգնեալ ՚ի վերոյ Սախրայի, բառնալ զպատկերս, և քակել՝ զոր միանգամ չինեալ էին Լատինք։ Եւ յետ մաքրելոյ, եւ լուանալ զայն վարդեջրով. և առ այս հարկաւորութիւն 500 ուղտաք հազիւ բաւական եղեն առ ՚ի բերել զվարդեջուրն, ապա խնկեցին անուշահոտ ահ

دولت امير المؤمنين ادام الله ايامه ونصر اعلامه فى ايام الامير الاسفسلامه الكبير سيف الدين على بن احمد اعزه الله فى سنة تسعة وثمانين وخمسمايه من الهجره النبويه

Եւ ետ բերել 'ի Բերիոյ զմանրաքանդակ մէնակէրն (ամպլիոն), զոր Սուլթան Նուրէտտին 'ի ժամանակի իւրում տուեալ էր կազմել 'ի ձեռն ճարտարաց 'ի փղոսկրէ եւ յանձին վայել, և ետ կանգնել զայն 'ի մկիկին Ագսայ, ուր կայ ցարդ։ Զօրք Սալահատտինի ընկերին զԱյաչն առկղէն բարձրացուցեալ 'ի դագաթ գմբէթին Սախրայի, և ընդ քարշ ածին զայն մինչեւ 'ի լեառն Սիօնի, ուր ապա խորտակեցին։ Հրամայեաց Սուլթանն չինել մզկիթ 'ի բերդն, զոր Արաբացիք կոչեն տուն Դաւթի, ուր նըստէին Լատին իշխանք քաղաքին։ Մէկիք Ա֊ֆդալ օթագայեալ էր յեկեղեցին Սիօնի, և զօրք նորա 'ի վրանս առաջի դրանն։ Տեսեալ Սուլթանին զԴոյակապ եկեղեցին, որ ասի տուն Ծովակիմայ և Աննայի, եւ տեղի Ծննդեան Ս. կուսին, մերձ 'ի դուռն Պապ էլ֊Սդոմ կոչեցեալ, կարգեաց զայն 'ի դպրոց մանկտւոյն այլազգեաց, եւ անուանեաց Սալահիէ, և զինի հինգ ամաց աւանդեաց 'ի ձեռս դիտնոց, եդեալ արձանագիր 'ի վերայ դրան օրինակ զայս։

١ بسم الله الرحمن الرحيم
وما بكم من نعمة فمن الله

٢ هذه المدرسة وقفها مولانا الملك الناصر صلاح الدنيا والدين سلطان الاسلام

٣ والمسلمين بن المظفر يوسف بن ايوب بن شادى محيي دولت امير المؤمنين اعز الله

٤ انصره وجعل له بين خير الدنيا والاخرة على الفقهاء من اصحاب الامام بن عبد الله

٥ محمد بن ادريس الشافعى رضى الله عنه
فى سنة ثمان وثمانين وخمس مايه

Եկեղեցիս այս կայր մնայր ամայի 'ի ձեռս այլազգեաց յաւուրց անտի Սալահատտինի, զորմէ գրեցաք սակաւուք 'ի ճառն վանօրէից 'ի Գը֊ին ժԲ։ Հաննէ վարդապետ բերեալ է աստի մարմարիոն խաչաքար մի, և եդեալ 'ի դուռն ցորենատան Ս. Աթոռոյն (1728), և 'ի յիշատակարան ձեռագիր մատենի ինչ գրի այսպէս, «Գրեցաւ գիրքս 'ի տուն Յովակիմայ և Աննայի», թէ՝ յորո՞մ ժամանակի չէ յայտ, և 'ի ժամանակս Սալահատտինի ո՛վ արդեօք բնակէր 'ի վանս անդ, և յորմէ ազգէ ժառանգեցին զայն, լռեն պատմիչք Արաբացւոց։ Սակայն ոմանք 'ի Լատին կղերց յայտնապէս ասեն թէ՝ 'ի ժամանակս Խաչակրաց եկեղեցին էր 'ի ձեռս Հայոց. և 'ի յետին ժամանակս զՀող աւերակաց սենեկացն բդեշխքն Օսմանցւոց լցին 'ի Պրոպատիկէ աւազանն մերձ նմին։

Եւ 'ի ժամանակս մեր՝ յետ դաշնադրութեան Փարիզու (1856)· Գաղղիացիք առին զայն եկեղեցի 'ի պարգեւս 'ի Սուլթան Մէճիտ արքայէն և նորոգեցին ամբողջ զեկեղեցին առանց եղծանելոյ զնախնի դիւրս նորին, և 'ի գաւիթս չինեցին սենեակս 'ի բնակութիւն կրօնաւորաց. եւ հաստատեցին գպրոց, ուր ուսանին այժմ մանկունք Ցոյն կաթոլիկաց։

Սալահատտին հրամայեաց փակել զդուռն տաճարին Ս. Յարութեան եւ արգելուլ զուխտաւորս քրիստոնէից· ոմանք 'ի բարեկամաց նորին յորդորէին կործանել զայն· իսկ այլք ասէին թողուլ 'ի կայր իւրում, որպէս եթող ասեն Օմար Խաթթաւ 'ի տիրել քաղաքին։

Ոմանք եւս յաւելուն թէ զիջաւ Սալահատտին յաղաչանս քրիստոնէից թագաւորաց և ոչ կործանեաց զեկեղեցին, զի փոխանակ այնմ նորոգեցին 'ի Գալաթիա Կոստանդինուպոլսոյ զմզկիթն Արապ Ճամիսի կոչեցեալ, և կայսրն Յունաց 'ի գլուխ եհան զայն [1]։

---

[1] Սակայն այլք հնագոյն խորհրդան բոլորովին անհնար առնել զանուն և գիշատակս Հայոց, եւ ոչ աւելի յանձն գոնել առ վայր մի մոռանալ· թէ Հայք էին, և ոչ այլ որ ի քրիստոնեայ ազգաց, որք գնեցին զՍ. Գերեզմանն Քրիստոսի 'ի Սալահատտինէ. որպես անկողմնակալ ազգասէր վերայեն մեզ ասելագրութիւնք Աբբայարանին Անէնի, այսպես. «Քրիս-

Սալահատինն եղեալ էր անդ զկարասխս պատերազմին, և կարգեալ զմի կողմն խոհանոց, որպէս յայտ է 'ի դաստատանական գրոց, զորմէ յետոյ։

Իսկ զՊատրիարգարանն, որ յարեւմտեան տաճարին և կից, արար Թէքէյէ այլազգեաց, և կոչի Խանէ, ուր յետոյ չինեցին վենարէ, և է ցարդ 'ի ձեռս նոցա։

Այլ վասն տաճարի Ս. Յակորայ, այսպէս պատմէ Հաննա վարդապետ 'ի պատմութեան Երուսաղէմի. երէս 89, յորմէ առեալ է և Հ. Մ. Զաքէան. Հաթ. Գ. 154։ Սալահատինն կամեցաւ իւրացուցանել զՍ. Յակոր. իսկ ազգն Հայոց որք էին անդ պաղատանս մատուցեալ առ նա ազատհանօք եւ ընծայիւք՝ խնդրեցին 'ի նմանէ շնորհել զայն ինքեանց։ Նա թէպէտ և հաճեցաւ, բայց եդ 'ի միջի զայսպիսի պայման, զի նախ հրաման եւս փակել զդուռսն տաճարին եկեղեցւոյն քարամբք, և ապա մտանել 'ի ներքս առանձին, ելոյց զկանթեղ Աւագ Խորանին առանց դիտելոյ ուրուք. և ելեալ անտի՝ հրամայեաց փակել և զդուռնն քարամբք, և հնձեալ զայն ասէ. ես այժմ գնամ 'ի Դամասկոս. եթէ 'ի դառնալս իմ գտից զսա՝ որպէս թողի, ապա ձեզ ասպա թէ ոչ, ոչ ապա։ Իսկ Հայք զրկեալ յեկեղեցւոյ անտի՝ չինեցին առ դրան նորա խորան մի յանուն Ս. Գէորգայ, և անդ առնէին աղօթս, եւ մատուցանէին պատարագս զեօթն ամ։ Եւ 'ի լրանալ եօթն ամաց եկն անդ Սուլթանն, եւ Հայք զղացուցին նմա զխոստումն նորա, եւ նա բացեալ զեկեղեցին, եառեալ զի դեռ եւս վառ էր կանթեղն, և սարդի ոստայն եւս չրջապատեալ էր զնովաւ։ Զայս տեսեալ նորա՝ շնորհեաց Հայոց զեկեղեցին զայն։

Զայս աւանդութիւն Հայոց հաստատէ նաեւ Պ. Միչօտ հետևեալ արձանագրութեամբ 'ի 118ր նամակի իւրում ուր ասէ. «Ի թուականին Քրիստոսի յորում էառ Սալահատին զքաղաքն Քրիստոսի, եկեղեցին Ս. Յարութեան միայն մնաց 'ի ձեռս քրիստոնէից. հանդիպեցաւ նաեւ այսմ պատուոյ եկեղեցի Ս. Յակորայ. զի ոչ 'ի մըղ-

---

առնեայ Հայք հաստատեալ զմեծ գումարս դրամոց Սալահատինէ զըննեցին զանբուռնական գիրքսն և զնուրս Տաճարն»։ Աւետ. ամսագիրք. 1866. երէս 146. և Գաղղիերէն տետրակ Գոլեց կոնտանէ. երէս 25։

կիէ և ոչ 'ի գպրոց փոխարինեցաւ 'ի ձեռս իսլամաց եւ այս էր մի միայն ընդհանուր ատտուածային, որ հրաշիւք ցուցաւ ըստ աւանդութեան Հայոց։ Եւ յետ այնորիկ Հայք և կղերականք նոցին կալան գործեալ զայն եկեղեցի և ոչ ոք յօտար ազգաց կամ 'ի միաբանութենէն կարող եղեւ հակառակիլ գործոյ իրաւանց նոցին։

Ի գալիք եկեղեցւոյն են արդարեւ կրկին խորանք, յանուն Ս. Գէորգայ և Ս. Նիկողայոսի, յաջմէ և յահեկէ դրանն։ Խորանն Ս. Նիկողայոսի արարեալ է յետոյ նոյն ինքն Հաննա վարդապետ, որպէս ցուցանէ յիշատակարանն յետուստ պատկերին։ Բայց վասն այսր դիպուածոյ չեն նիմք ինչ յիշատակութիւն, ոչ 'ի գիրս և ոչ յարձանս, և չէ յայտ թէ Հաննա վարդապետ ուստի առեալ գրէ զայս. կամ յԱրաբացւոց իբրեւ Երուսաղէմացի և տեղեակ լեզուի նոցին, և կամ 'ի լատին միաբանից. ընդ որս կենակցեր 'ի տաճարին Ս. Յարութեան։ Իսկ Սալահատինն թերեւս ոչ կամեցաւ յայնժամ բոլորովին զրկել զՀայս 'ի ծառայութենէ իւրենց, զոր օրինակ զրկեաց յեկեղեցւոյն Ծովակիմայ և Սննայի, որ չունէր այնչափ թշնամութիւն ինչ ընդ նոսա, որպէս ընդ Լատինս, զի թէպէտ եւ յառման քաղաքին չզերծաւ եկեղեցի ինչ, բայց 'ի տաճարէն Ս. Յարութեան սակայն 'ի թախանձելոյ միաբանացն Հայոց եւ միջնորդելոյ Գրիգորի Կաթուղիկոսին, և Աբրահամ Պատրիարգի քաղաքին, շնորհեաց զայն նոցա։

Անդիր աւանդութիւն է 'ի մէջ միաբանից՝ թէ գմբէթ տաճարի Ս. Յակորայ էր յառաջագոյն կարի բարձր, ընդ որ նախանձեալ Սալահատինայ, կամ միով 'ի Սուլթանաց եգիպտոսի, և թերեւս յաւուրս Նիճմէտտինի և Սալխ Էյուպի. յորում կատորեցին զրնակիչս քաղաքին երուսաղէմի, և աւարի առին (1242) կործանեալ իցեն զայն, որպէս յայտ առնէ արդի դիրք գմբէթին, որոյ ուղղահայեաց լուսամուտն ծածկեցաւ յետոյ, իսկ դիրն Արաբերէն որ 'ի վերայ դրան ոչ է 'ի Սալահատինէ. այլ բազում ժամանակաւ յետոյ 'ի Սուլթանացն եգիպտոսի. զորմէ ունիմք գրել 'ի տեղւոջ իւրում։

Զդաշնագիրն Մելիք Սալահատինի տուեալ առ կրօնաւորս Հայոց Երուսաղէմի 'ի բարեբաս Ազաբացւոց, 'ի տի-

րել նորին քաղաքին սրբոյ, որպէս խոստացաք յառաջագոյն, զնեմք արդ զՄարգմանութիւն նորին ի կարգի պատմութեանս, որ ունի օրինակ զայս։

Ես յաղթող Սալահատինն՝ որդի Էյուպայ՝ որդւոյ Շատիայ՝ իրաւամբ յաղթականութեան իմոյ՝ եւս զդիրս զայս։

Գոհանամ զԱստուծոյ՝ որ ի ձեռն նուաստ ծառայիս իւրոյ չնորհեաց զտիրապետութիւնն Ս. Երկրին և սբրբեաց զտաճար իւր ի կռոց և ի պատկերաց։ Օրհնութիւն և գովութիւն ի վերայ այնորիկ, որ առաքեաց զաղբրմութիւն մարգկանց։ ..... Եւ յետ այսորիկ հարկ եղեւ դրել Մէկիք Սալահատինին, խաղաղարարին օրինաց և աշխարհի, թագաւորին մեծի, և լուսապայծառ անձին, Սալահատին Սուլթանին։ Պահեսցէ Տէր Աստուած զպանծալի թագաւորութիւնն նորին ի ժամանակս բազումս, և արարցէ նմա զբարիս ամս և ի հանդերձեալն։

Յորժամ ընթերցաւ և ի միտ էառ՝ զոր ինչ գրեալ էր Մարգարէն Աստուծոյ, որոյ բանիքն զհետ երթեալ էին Մեծն Օմար՝ որդի Խաթթապայ, և Մեծն Ալի՝ որդի Ապի Թալիպայ։ Հաճեցաւ նա ինքն եւս հետեւիլ գրոց և յիշատակաց նոցին, որք միանգամ գաշինս եդեալ էին ընդ ազգին Հայոց, կրօնակից եւ հետեւող ազգի նոցին, որք են, Հապէշք, Գալիք և Ասորիք։

Եւ ըստ օրինակի և աւանդութեան նոցին՝ գրեցի և ես առ ընդհանուր ազգն Հայոց, որք աւանդեալ են մեզ յԱստուծոյ, յարեւելից մինչեւ յարեւմուտս, խնամոնոց եւ տգէտ ռամկաց, հեռաւորաց եւ մերձաւորաց, ծանօթից և անծանօթից։ զայս հաստատուն գաշինս և զհաւատարմութիւնս։ Եւ կոտակաւ աւանդեմ զինի յաջորդաց իմոց, որք չեցեալ են յօրէնս Իսլամութեան։ պահել զիրաւունս և առնել զարդարութիւն։ անթերի եւ ճշմարտութեամբ ի կիր առնուլ զիմաստս գրոյս։

Զի եթէ ոք յիսլամաց՝ հակառակութեամբ լուծանէ և կամ այլայլէ զգաշինս, որպէս հրամայեալ է Մարգարէն, և հաւատարիմ բարեկամք և հետեւողք նորին։ յայնժամ լուծանէ զաստ Աստուծոյ, եւ եղծանէ զգաշինս, և արհամարհէ զպարտիս նորին։ Եթէ թագաւոր իցէ՝ եւ

թէ այլ ոք յիսլամաց։ Արդ՝ փոյթ յանձին կալայ տալ զգաշնագիրս եւ զյետագրս զայս, որք խնդրեցին յինէն։ և ի բովանդակ իշխանութենէ հրովարտակիս զուխտն Աստուծոյ, զգաշինս և զպարտիս Մարգարէին եւ Իսլամաց, յառաջնոց մինչեւ ցյետինս, զնզօր պարտիս եւ զգաշինս իմ։ զորօրինակ եւս Աստուած Մարգարէին, կամ ի ձեռն մերձաւոր հրեշտակին՝ վասն հնազանդութեան։ և պարտաւորեցաւ կատարել զխոստումնն՝ ուխտիւն Աստուծոյ։ Արդ՝ պաշտպանեցից և ես նախարարօք, իշխանօք և ամենայն Իսլամ ծառայիւք իմովք զհետաւորս նոցա, որք սփռեալ են ի սահմանս Տէրութեան իմոյ, ի նահանգս ցնահանգս։ յանդորրու կացուցից, պաշտպանեցից զնոսա եւ զեկեղեցիս նոցին, որք են՝ մեծ եկեղեցին Ս. Յակոբոյ՝ յարեւմտից հարաւոյ երուսաղէմի՝ մերձ ի վանս Սիոնի եւ զեկեղեցիս Ս. Փրկչի, Ս. Հրեշտակապետին, Բեթղհէմի և Նազրեթի, և ի տաճարին Ս. Յարութեան Գերեզմանն Քրիստոսի՝ յորմէ ելանէ լոյս ըստ կարծեաց նոցին։ զԳողգոթայն, զվերին և զստորին հարիս նորին։ զեկեղեցին Ս. Յովհաննու և ի չրջակայս երուսաղէմի, թէ ի ներքս եւ թէ յարտաքս, որք են սեպհականութիւնք ազգին Հայոց, որոյ վասն չունին հակառակութիւնս ինչ օտար ազգք քրիստոնէից։ Նոյնպէս եւս նոցա, որպէս եւսն Մարգարէն Աստուծոյ եւ հաւատարիմ բարեկամք նորին։ Եւ ըստ օրինակի նոցին եւս՝ զեկեղեցիս, զաղօթարանս, զտեղիս կրօնաւորաց, զբնակարանս անապատականաց ուր ուրեք և իցեն, ի լերինս, յայրս և ի փոսորս և որք միանգամ յարակից են օրինաց և սահմանաց նոցին, թէ ի ծովս և թէ ի ցամաքի, թէ յարեւելս և թէ յարեւմուտս, զորս սպարփակեալ բովանդակէ հրաման իշխանութեանս, և Իսլամ ժողովրդոց ազգին իմոյ։ Փրկեցից զնոսա յամենայն նեղութենէ, ի բռնութենէ և ի զրկանաց և ի ծառայելոյ այլոց։ Վանեցից զթշնամիս նոցա անճամբ և Իսլամ ծառայիւք և հպատակօք իմովք, և եւս թագաւորեցից ի վերայ նոցա։ այսպէս յարգել եւ պաշտպանել զնոսա յամենայն անարգութենէ, և բառնալ զբռնութիւնս այնպիսի իրաց, զորս ածեն ի վերայ նոցա դաշնակից ազգք, որպիսիք են՝ կոչտպատել և զրկել ի ժա-

ռանգութենէ, մինչդեռ հանգիստ եւ բարի լինիցի նոցա, եւ մի ապաղաչացին։ Ոչ արգելուլ զեպիսկոպոսն յեպիսկոպոսութենէ, քրիստոնեայն ՚ի քրիստոնէութենէ, կրօնաւորն ՚ի կրօնաւորութենէ, անապատականն յանապատէ, վայրնակեացն ՚ի խրճիթէ իւրմէ։ Չյանձնել ուժեք ՚ի քրիստոնեայ ազգաց տուն մի ՚ի կալուածոց եկեղեցեաց նոցին, եւ ոչ տեղ ինչ ՚ի տեղեաց տաճարաց նոցին։ չկործանել տուն ինչ ՚ի տանց եկեղեցեաց նոցին։ զի եթէ ոք յանդգնեսցի առնել զնոսա, լուծանի զուխտն Աստուծոյ եւ հակառակի ուխտի Մարգարէին, զոր տուեալ է Աբրահամ վարդապետին։ Եւ հակառակի ուխտին Օմարայ, զոր տուեալ է ազգի նոցին՝ ՚ի ժամանակս յաղթութեան իւրոյ, եւ ուխտին Ալեայ։ ուխտին եւ պարտեաց իմոց, զոր եւտու նոցա եւ հետեւակ երից ազգաց, որք են Հապէշք, Գըլթիք եւ Ասորիք։ զի նենդութիւն է պարտեացն Աստուծոյ, Մարգարէին եւ բարեկամաց նորին, եւ իմոց։ Զգնել հարկս ՚ի վերայ կրօնաւորաց եւ եղկեսպոսաց, որք ոչ են կարող հատուցանել, այլ հանգիստ պահել։ չառնել չափազանց տուրս եւ առ ընդ նոսա։ չպահանջել ՚ի վաճառականաց նոցին իւրաքանչիւր ամի աւելի քան զերիտասան դահեկանս։ Առաւել քան զկար եւ զշօրութիւնս նոցա, չընդնել բեռինս ծանունս ՚ի բերոց երկրի եւ ՚ի կալուածոց ըստ պատահման բազդի եւ ժամանակի, սակաւ ինչ տացեն եւ մի նեղել զժողովուրդն հարկաւոր առաւել քան զչափն։ Մի հարկադրեսցին երթալ ՚ի պատերազմ ընդդէմ թշնամեաց, չիք հարկ ՚ի վերայ նոցա, զի պարտաւորեցին զինքեանս լինել հարկաւոր եւ ընդ իշխանութեամբ Իսլամաց, առ ՚ի պատրաստել զէնուրս։ Այս է ուխտն Աստուծոյ եւ Մարգարէի նորին, զոր ինչ ունին Իսլամք, ունիցին եւ նոքա։ որ ինչ է Իսլամաց, եւ եղիցի նոցա։ եւ զոր ինչ ունին նոքա, ունիցին եւ Իսլամք։ եւ որ ինչ է նոցա, եղիցի Իսլամաց։ այս պայմանք օրինադրեն զիրաւունս արեան, պատուոյ կանանց եւ իրեանց։ եթէ հարկ լիցի նորոգել զեկեղեցիս եւ զդերեզմանատեղիս իրեանց, յօժարութեամբ եւ միաբանութեամբ օգնեսցեն նոցա Իսլամք, եւ մի լիցի հակառակութեամբ։ ըստ ուխտի Մարգարէին, իբրեւ նուէր ընծայել նոցա։ զի ունին զպար-

տիս Աստուծոյ եւ Մարգարէին։ Այսօրիկ են դաշինք եւ պայմանք Մարգարէին, զոր եդ եւ օրինադրեաց ընդ նոսա կատարելով զուխտն՝ զոր խոստացաւ։ Մի երբէք լինել խորհրդատու միւսոյ ՚ի պատերազմող ազգէ ընդ այլ պատերազմող ազգս, եւ կամ ընդ միւսոյ յԻսլամաց, ոչ յայտնի եւ ոչ ՚ի ծածուկ։ Ոչ ընդունիլ զթշնամիս Իսլամաց ՚ի տունս իւրեանց։ ոչ օգնել կամ նիզակակից լինել միւսոյ ՚ի պատերազմող ազգաց։ ոչ տալ փոխ զգինս իւրեանց։ Ոչ առնուլ աւանդ զինչս եւ զերկվարս նոցա։ Ոչ թղթակցութիւն եւ ոչ բարեկամութիւն հաստատել ընդ նոսա։ ոչ արգելուլ զիսլամս ՚ի թշնամեաց իւրեանց՝ եւ ոչ կերակրել զհիբս նոցա։ ոչ յայտնել թշնամեաց զհանգամանս Իսլամաց, եւ մի իւիք թերանալ ՚ի պարտեաց եւ նուաղել ՚ի պարզեւաց Մարգարէին, զոր ըստ բանից նորա, գրեցին երկոքին ձեռքն Սաքա և Սիւալքի։

Եթէ ոք լուծցէ մի ինչ ՚ի դաշանցս յայսցանէ, հեռացեալ լիցի նա ՚ի պարտեացն Աստուծոյ եւ Մարգարէի նորին։

Ահա այս է ուխտ եւ դաշինք, զոր եդաւ Մարգարէն եւ բարեկամք նորին՝ Աբրահամ վարդապետին, եպիսկոպոսաց, քահանայից, կրօնաւորաց եւ ժողովրդոց ազգի նոցին և հետեւակ երից ազգաց, որք են՝ Հապէշք, Գըլթիք և Ասորիք։ Լինիլ հաւատարիմ պարտիքն Աստուծոյ, Մարգարէին և բարեկամաց նորին, և իմ, և ամենայն Իսլամաց գործադրելի։ Զի որպէս ետ Աստուած ՚ի ձեռն Մարգարէին ժողովրդոց նորին, հաւատով կատարել զխոստումն։ Նմանապէս կատարեսցեն զուխտն իմ հետեւողք և յաջորդք եւ այլք յԻսլամաց եւ ՚ի մահմետական ժողովրդոց յաւիտեան, մինչեւ եկեսցէ ժամանակ՝ յորում ժառանգեսցէ Աստուած զերկիր և զոր ինչ ՚ի նմա։ և նա է բարին ժառանգաց։ Վկայեցին սմա եղբարք, որք գտան ՚ի ժողովին։

Ի յամենայն Ըհ՚էլի ՕՒՓ (1187)։

Հասան էլԱմա Շահապէդդին Նէճէդդին Աստուճ Իւղէդդին
Ինդդուլար։ Սէրխէլ։ Աբդուլահ։ Ձուրք Պէկ։
Ապու էլԱվան Հաճի
Պէն Պէրհան։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Գործ Սալահատինի. Խաղաղ Ֆրէդերիկոսի կայսեր յարեւելս. Թուղթ Գրիգորի Կաթուղիկոսին Հայոց առ Սալահատին.

ՍԱԼԱՀԱՏԻՆ կամեցեալ խափանել զպաշտամունս քրիստոնէից՝ ետ աւերել զամենայն զանգակատունս եկեղեցեացն Երուսաղէմի, ընդ որս եւ զմեծ զանգակատունն՝ առ դրան տաճարին Ս. Յարութեան, որոյ աւերակն էանց յետոյ ի ձեռս Յունաց, և զանգակն խորտակել. Արտաքսեաց զրովանդակ Լատին կղերս ի վանաց Սիօնի և ի Ս. Տեղեաց, և յԵրուսաղէմ իսկ հանդերձ ժողովրդովք նոցին. Լատին կղերք սկիզբն առին բնակիլ յԵրուսաղէմ հրամանաւ Ֆաթիմեան Սուլթանաց (1048), օր առաւել եւս եղին հալածուածք ի զինի տիրելոյ քաղաքին սրբոյ Կոնդոպրէ առաջին թագաւորին Խաչակրաց. Սակայն պատմիչք Արաբացւոց ասեն՝ թէ Սալահատին արձակեաց զամենայն գերիս յիւրաքանչիւր աշխարհ իւր. եւ թէ վախճանականքն հասեալ յԵրուսաղէմ, աւ ի գրկաւել զժողովուրդն, նկարեցին զպատկեր Քրիստոսի եւ առ ընթեր նմին զմեհենեմէտ գաւազան ի ձեռն, որ սպառնայր հարկանել զՔրիստոս, և նա խուսէր յերեսաց նորա:

Եւ յետ այնորիկ առաքեաց զմէլիք Ափտալ և զմէլիք Մուզաֆֆէր ի Պաղտմայիս, և ինքն նստէր յԵրուսաղէմ տիրել մնացեալ ամրոցաց. Եւ երկուցեալ ի Գոնրատոս Մարքիզէն ամրացոյց զբերդն, հատեալ խրամ լայն շուրջանակի, թողուլ կարի անձուկ զմուտս նորին: Ապաքէն գիտէր Սալահատին թէ քանի՞ սիրելի և պատուական էր Երուսաղէմ յաչս քրիստոնէից և այսպիսի յաջողութիւնք բաղձի՝ անտարակոյս ունէր գրգռել ընդդէմ իւր զհամայն Եւրոպա դիմել ի զէն. Նմին իրի փութաց մեկնիլ ի քաղաքէն սրբոյ ի Պաղտմայիս, և նախ քան զժամանել նոցին, տիրել մնացեալ ամրոցաց Աւորեաց, և սահմանել պատշաճաւոր բանակեալ զօրաց իւրոց. զի ի սմին ժամանակի անդադար մարտ պատերազմի էր ի մէջ Ասիացւոց և Եւրոպացւոց և ամենայն կարեւոր տեղիք ամրափակեալ էին: Եւ ապա պաշարեաց զքաղաքն Տիւրոս, եւ հատեալ զծառատունկս, մեքենայիւք արկանէր ի ներքս: Իսկ ամրականք քաջութեամբ ընդդէմ կացեալ գործեցին մեծ ի զօրս Սուլթանին, և ի ծովամարտի գերի վարեցին զտորմիղս նաւաց, որոյ վասն խոցեցաւ նա ի սիրտ և ի հոգի, եւ անճարացեալ դաշինս եդ ընդ իշխանին Անահիոքայ, արձակել նորա զինալար գերիսն եւ թոյլ առնել զինուց ամիս 8. և ինքն դարձաւ ի Պաղտմայիս ի ձմերել եւ ի գարնանել զօրս, յորոց բազումք վիրաւորեալ էին: Զմի մասն ապարանից տաճարական ասպետաց ի քաղաքին կարգեաց բնակարան գիանականաց, և զմի մասն ի դպրոց, եւ զտուն եպիսկոպոսին հիւանդանոց:

Գումժ առնան Երուսաղէմի դղրդեալ սարսեաց զհամայն Եւրոպա. կաթուածահար մեռաւ պապն Հռոմայ Ուրբանոս Գ. և յաջորդեց նորին Գրիգոր Ը. և ապա կղեմէս Գ. յորդորեցին զկայսրն Ալմանիոյ Ֆրէդէրիկ չիկամորուս (պարպորոս). զթագաւորն Գաղղիոյ Ֆիլիպ Օգոստոս, զթագաւորն Անգղիոյ առիւծասիրտն Ռիչարտ, և զամենայն աղնուականս և զկղերս եւ զայլս, որոց վստահ էին նայն աղնուականս և զկղերս եւ զայլս, որոց վստահ էին ի քաջութիւնս բազկի իւրեանց, վերստին առնուլ զերն վասն ազատութեան Ս. Գերեզմանին Քրիստոսի:

Լուեալ Սալահատինի զայսպիսի պատրաստութիւն Լատինաց և զանհամար բազմութիւնս նոցա, որք դիմեալ գային ի վերայ իւր ընդ ծով և ընդ ցամաք, զարհուրեցաւ յոյժ, եւ դրեաց աղերսանօք առ Նասրիտտին Խալիֆայն Պաղտատի և խնդրեաց ի նմանէ ձեռն օգնութեան. այլ նա ոչ միայն անտես արար զխնդիր նորա, այլ և պատասխանեաց անգամ չարար արժանի, որոյ վասն բովանդակ զօրութիւն նորա յեց եկաց ի զօրս եգիպտոսի, Ասորեաց և Իրդատանի:

Այլ վասն դալստեան Խաչակրաց բազմութեամբ յարեւելս առաջնորդութեամբ Ֆրէդէրիկ կայսեր Ալմանիոյ, և որդւոյ նորին Համանուն Հօր իւրոյ Ֆրէդէրիկի, զոր ամենեքին կոնրատոս ասացին, գրելոյ Թուղթ Կղեմէսի Գ. պա-

սին Հռոմայ առ Գրիգոր Կաթուղիկոսն Հայոց վասն այսր խնդրոյ լինել օգնական Լատինաց · զգաստանութիւն Ցուեաց 'ի ճանապարհին, եւ զհարդասէր հիւրընկալութիւնս իշխանացն Հայոց, այլովքն հանդերձ · Տե- 'ի Գէդ Հ · Մ · Զահլեան · Հատ · Գ · եջս 155 · Ե 'ի գոհմայէն Պատմութիւնս ։

Մի միայն բառական համարիմք դնել 'ի կարգի Պատմութեանս զԹուղթ Գրիգորի Կաթուղիկոսի տղայ կոչեցեալ գրեալ առ Մէլիք Սալահատտին, անյիշատակ մնացեալ յազգային պատմագիրս, որոյ Արաբական պատճէնն գտանի 'ի գիրս Լատինաց · Albert. Schultens. vita et resgestae . Sultani Saladini. lugd. bat 1732. fol. P. 12123 զորոյ զհամառօտ թարգմանութիւնն դիցուք աստ ։

Սրդ՝ եհաս գիր առ Սուլթանն 'ի Կաթուղիկոսէն եւ 'ի գլխաւորէն Հայոց, որ նաեւ 'ի Հռոմկլա 'ի կողմանս Եփրատայ, և ընթերցաւ առաջի Սուլթան Սալահատտինի ..... և այս է թարգմանութիւն նորին ։

Գործք եւ դէպք թագաւորին Ալմանիոյ ։ Ել նա յաշխարհէ իւրմէ և եհաս բռնութեամբ յերկիրն Հունգարիոյ, և նեղեալ զթագաւորն հնազանդեցոյց ինքեան, և էառ զդանձս և զղօրս նորին որչափ և կամեցաւ ։ Եհաս 'ի սահմանս աշխարհին Ցունաց, տիրեաց քաղաքաց, եւ աւարի եղ զնոսա ։ հնազանդեցոյց զթագաւորն եւ էառ պատանդս 'ի նմանէ զորդի և զեղբայր նորին, և զ40 այր 'ի նախարարացն ։ էառ 50 կենդանիս ոսկի և 50 արծաթ ։ մեծագին և ոսկեթել հանդերձս, և զտորմիղ նաւաց, նոքօք եկ 'ի կողմանս յայսոսիկ, եւ եհաս յերկիրն Գըղիճ Արսլանայ, և արձակեալ զպատանդսն՝ զաւուրս երիս չըրջէր 'ի կողմանս յայնոսիկ ։ Պատահեցան նմա վրանաշուք Թիւրքմէնք ասխարօք, արջաւօք, երիվարօք և կարասեօք, և ազահութեամբ ժողովեցան յամենայն քաղաքաց, և եւտուն պատերազմ եւ նեղեցին զթագաւորն զաւուրս 33 ։ Եւ զեգերեալ յայնոսիկ կողմանս մերձեցաւ յիկոնիոն (Ղոնեայ) · Գութպէտտին որդի Գըղիճ Արսլանայ զօրօք գիմեաց 'ի վերայ Նորա եւ յերկարիլ պատերազմին 'ի զարտուղութիւն մատնեցաւ ։ եւ թագաւորն գնի մեծի կոտրածին յարձակեցաւ 'ի վերայ քաղաքին · եւին ընդդէմ

Նորա բազմութիւնք Իսլամայ, և կոտորեալ զնոսա դարձոյց յետս, եւ մտեալ 'ի քաղաքն կոտորեաց զընդդիմակացս իւր ։ Եւ գնի հնդից առաւել խօսեցաւ հաչտութիւն ընդ Սուլթանին, և եդին դաշինս, և էառ թագաւորն 'ի նմանէ պատանդս զարս 20 'ի մեծամեծաց տէրութենէն նորին ։ Սուլթանն հաւանեցոյց զթագաւորն ուղղել զճանապարհ իւր 'ի Տարսոն և 'ի Մամեստիա, եւ նա արար ըստ խրատու նորին ։ Եւ նախ քան զժամանել նորին յերկիրս այս, ըստ խնդրանաց նորին առաքեցաք թուղթս և զարս ամենս երեւելիս ընդունել զթագաւորն և զպատասխանի թղթոյն, և եթէ հնար իցէ դարձուցանել զայն վերստին յերկիր Գըղիճ Արսլանայ ։ Ցանդիման եղեն թագաւորին եւ մեծամեծաց նորին, մատուցին ընծուղթն և ծանուցին զհանդամանս վերադառնալոյ ։ Քրիստոնեացաւ առ նովաւ բազմութիւն զօրաց եւ ինքն էլ յերդ գնաց, և յետ կերակրոյ՝ ննջեաց, և զարթուցեալ ցանկացաւ լուանալ 'ի գետն · և իբրեւ էլ 'ի ցուրտ ջրոյ անոտի, անկաւ խօթ 'ի մահիճս, որ և մեռաւ իսկ ։ Եւ Լեւոն երթայր ընդունել զթագաւորն · և 'ի պատահիլ դիպուածոյս, խոյս ետուն անտի պատգամաւորքն, եւ եկեալ պատմեցին Լեւոնի, եւ նա ամբացաւ 'ի բերդի ուրեք ։ Իսկ որդի թագաւորին, նախ քան զարշաւանս կացեալ էր ժառանգ թագաւորութեան հօր իւրոյ, որ և կատարեցին ըստ սովորութեան իւրեանց ։ Եւ յետս գարձուցեալ զպատգամաւորս Լեւոնի կացոյց առաջի իւր, և առ · հայր իմ 'ի ծերութեան իւրում ոչ վասն այլ իրաց եկն յաշխարհս այս, այլ միայն կատարել զնախան իւր յերուսաղէմ քաղաքի, և ես ժառանգ նորին՝ կրեցի վիշտս 'ի ճանապարհի · եթէ օգ հնազանդեսցի ինձ՝ ոչ արշաւեմ յերկիր նորա · գնաց Լեւոն եւս զորդի թագաւորին և զայլսն, և եւս զպաղմութիւնս զօրաց նորին, որք էին 42 գունդ հեծելոց վառեալ կուռ զրահիւք · թող զհետեւակս եւ զպատանիճաղանջս, որոց ոչ դայր թիւ ։ Կարի խիստ էին օրէնք նոցին 'ի վերայ յանցաւորաց, մինչեւ զենուլ զնա իրրեւ զայծեամն · լու եղեւ թէ՝ ոմն 'ի մեծամեծաց իւրեանց գան եհար ուժգին զձառայ իւր, 'ի ժողովի կղերաց եւտուն վճիռ զենուլ զնա · թէպէտ և բազումք աղա-

չեցին զԹագաւորն, այլ նա ոչ ընկալաւ զմիջնորդութիւն նոցա։ Էին 'ի պահս և հեռացեալ 'ի հեչտալեաց մարմնականաց, և զանհնազանդն՝ յանդիմանէին, և բաղումք 'ի նոցանէ 'ի բաց եդին զքինուորական հանդերձս, և ոչ կամէին զգենուլ։ այլ միայն երկաթ, մինչեւ ծանրացաւսն լինել զօրագետաց, զի այս ամենայն սուգ և ապաշխարութիւն, էր վասն քաղաքին Երուսաղէմ և որպ վասն համբերութեամբ տանէին վշտաց և տառապանաց ճանապարհին։

Զայսոսիկ ծանուցի ձեզ եւ առ յաղագ զեզեալսն ծանուցից։ Այս է Թուղթ կաթուղիկոսին, եւ իմաստ բանից Խ-ԼՖ-ՅԷ, որպ անունն է Տէր Գրիգոր որդի Վասլի։

Դարձեալ անդ՝ Գլ. ՀՐ. ԼՀ 124։ Արդ՝ եկն երկրորդ պատգամաւոր կաթուղիկոսին տալ զրոյց Սուլթանին, և ասէ. Թէպէտ նորա են բաղմաթիւ, այլ կարի տկարք, երիվարք և կազմածք նուաղունք. զկարասիս եւ զաղխս իւրեանց բարձեալ յէջս և յանղօր գրաստս։ Ասէ դարձեալ, կայի 'ի վերոյ կարճչի ուրեք, ուստի անցանէր բաղմութիւն մեծ, ոչ տեսի 'ի ձեռս նոցա նիզակ եւ վահան, բայց միայն սակաւուց. 'ի հարցանելն իմ, ետուն պատասխանի եւ ասեն. օթեւան կալաք 'ի դաշտի ուրեք, որպ օդն ապականեալ էր. 'ի պահասիլ պաշարոյ եւ փայտի այրեցաք զպատուական զէնս և զկազմածս մեր, եւ բազումք մեռան 'ի մէնջ 'ի կարօտութեան և 'ի նեղութեան մերում. զէնաք զերիվարս 'ի կերակուր, եւ փոխանակ փայտի այրեցաք զզեղարդունս, զզէնս և զկազմածս մեր. (1190)։

Այլ Թէ ուր Թագեցաւ մարմին Ֆրէտէրիկ կայսեր, զանազան կարծիք են առ պատմագիրս. Վարդան վարդապետ ասէ՝ Թէ ըստ զայն 'ի քաղաքն Սիս։ Հ. Մ. Ջամչեան. Թէ Թագեցին զնա յԱնտիոք Ասորւոց, իսկ պատմիչք Արաբացւոց գրեն Թէ՝ զմահեցին զմարմին նորա, և առին ընդ իւրեանս Թագել 'ի տաճարին Ս. Յարութեան, ըստ կտակին իւրոյ, որում չհասին։

Զայս նամակ հաղորդեաց մեզ 'ի Գերլինէ այրն գիտնաւոր եւ հայագէտ Պէտերման, իբր 'ի մուտս եղեալ 'ի պատմչացն Հայոց, զոր ընկալեալ եղաք 'ի կարգի պատ-

մութեանս զհամառօտ թարգմանութիւնս նորին. զի յայտնապէս պատմէ զդէպս եւ զղեկութիւնս, որ դիպան 'ի նմին ժամանակի, որ չէ ինչ հեռի 'ի ստուգութենէ։ Թէպէտ հարք վենետիկեան զայդ զայս նամակ համարին չինծու և անվաւեր, գործ Թշնամոյ եւ հակառակորդի. եւ Թէ այսպիսի տարօրինակ յիրս ոչ կաթուղիկոսն Գրիգոր և ոչ իշխանն Լեւոն կամէին լինել ձեռներէց սակս մեռեալութեան զոր ունէին յայնժամ առ Արեւմտեայս, և 'ի սիրալիր ընդունելութեան Թագաւորին, եւ որոց ընդնդմա. առ այս յառաջընթաց էր ներսէս Լամբրունեցին, և այլ արք իշխանաւորք։ Եւ առաւել կասկածանաց տեղի տուեալ է՝ բառդ Հաթէմ, փոխանակ գրելոյ Հեթում. Թէեւ նամակին Թուական ոչ ունէր, բայց յայտնի երեւի Թէ 'ի Հայէ Թարգմանեալ է յԱրաբացի բարբառ. և բառդ Թուղիկոս կարի զժուարին էր ընթեռնուլ, զի գրեալ էր Գադուս կամ Գադիդոս. Թերեւս Գագիկ, որպէս ոմանք կարծեցին։

Գ Լ Ո Ւ Խ Ի Դ.

Պաշարումն Պաղամբիդա (Ակքռա)։ Պատերազմունք Սալահատինի ընդ Լատինս։ Թագաւորն Անգղիոյ Ռիճարտոս։ Թագաւորն Գաղղիոյ Փիլիպպոս։ Առումն Պաղամբիդայ 'ի Լատինաց եւ դիմել նոցա պատերազմաւ 'ի Պաղեստին։ Շինուածն պարսպին Երուսաղէմի։ Պաշտպրաբերութիւն և զինագործք։

Այլ մինչդեռ Թագաւորն Ալմանիոյ, եւ որոց ընդնդմա, ըմբռնեալ 'ի սուգ մեծ, սակս տարաժամ մահուան Ֆրէտէրիկոսի կայսեր, դեգերէին յաշխարհին Կիւլիկիոյ՝ հանդիպեալ 'ի ճանապարհին սկսպէս ձախողութեանց, հիւանդութեանց և ախտից, յորոց նուազեցան Թիւ զօրաց և երիվարաց նոցին։ Աւուրս լատինք զհետ եղեն պաշարել զքաղաքն Պաղամբիդա. զնդպամանս այսր պաշարման և երկարաւոր պատերազմաց երկար գրեն պատմիչք Արաբացւոց, յորոց հանելով է և կենսագրութիւնն Սալահատինի 'ի Թուրք բարբառ. Բանզի վերջին Լատին Թագա-

սորն Երուսաղէմի Գուխտոն, որ անկաւ գերի ՚ի Տիբերացւոյն պատերազմին, և եւս միրանս անձին իւրոյ զքաղաքն Աւգարոն, և ՚ի պահու ապատութեան իւրոյ երդուեալ էր չառնուլ զէն մի սանդամ ընդդէմ Իսլամից. սակայն դըրժեալ նորա վերդումն իւր, ժողովեաց առ ինքն զխաղըտեսայս և զապրեալս ՚ի սրոյ, և դէզերեալ առ ժամանակ մի այսր և անդր, յանկարծ երևեցաւ առաջի Պաղտմայիդայ, եւ ՚ի սմին ժամանակի սկսեալ էին տակաւ երևիլ զօրք Խաչակրաց ՚ի ծովեզերս Աւորեաց, որք էին ՚ի Տանիմարքայէ, յԻտալիոյ և յԱնգղիոյ. սոքա միաբանեալ ընդ Թագաւորին Գուխտոնի՝ պաշարեցին զքաղաքն:

Սալահատտին իրրեւ զարծուի խոյացաւ անդ, և ձեզքեալ զխուժդս քրիստոնէից իրրեւ նետ Թաւուցիկ, որ ոստնուցու ՚ի գրկաց աղեղան, եմուտ ՚ի բերդն, և յաշտարակէ նորին զննեալ եւես զդիւրս և զկազմութիւն բանակին Լատինաց եւ եդեալ պահապանս ՚ի քաջ արանց դարձաւ անդրէն ՚ի տեղի իւր: Եւ մինչդեռ զհետ լեալ էր մեծաւ ջանիւք բառնալ և ցրուել զպաշարումն քաղաքին, հասին անդ այլ դունդք Լատինաց և ՚ի դերեւ հանին զխորհուրդս նորա. այնուհետեւ հոգք մեծամեծք սկսան տագնապել զնա, զի զծանրութիւն ապագայ վտանգին եւ զնեղութիւն մեծի խառնութեանն, իրրեւ զծով փոթորկեալ յալեաց, գրեթէ տեսանէր առաջի աչաց իւրոց: Թող զնեւրոպականան, քրիստոնեայք Սիւրիոյ և Տիւրոսի, մի զկնի միոյ հասանէին յօգնութիւն Լատինաց. մինչդի ՚ի միջոցի քառասուն աւուրց եհաս թիւ զօրաց Նոցա 200,000, որովք ամրացուցին զբանակն իրրեւ բերդ անմատչելի: Եւ յաւուր միում յոյսացեալ ՚ի զէնս եւ ՚ի զրահս իւրեանց, էջին յասպարէզ մարտի, և ճակատեցան ընդդէմ դնդին Սալահատտինի, որ իրրեւ մահիկ տողեալ էր ՚ի դաշտին, և սաստկութեամբ բաղխեցան ընդ միմեանս. ձախ թեւն Լատինաց չարժեաց զաջ թեւն Իսլամից եւ խորտակեալ ցիր և ցան կացոյց զնա, եւ անտի դիմեալ ՚ի բուն բանակն հասին մինչեւ ՚ի վրանս Սուլթանին:

Սալահատտին դէտ ակն ՚ի վեր կալեալ, յարձակեցաւ ՚ի վերայ աջոյ թեւին դնդին Լատինաց, որոյ զօրավարէր նա ինքն թագաւորն Գուխտոն. եհաս առ նա և Թոզի Էտ-

սին եւ սաստկացուցեալ զմարտն մղէին զնոսա յետս, մինչեւ ապաստանել նոցա ՚ի պատնէշս բանակի իւրեանց: Սակայն նախայարձակ զօրք Լատինաց կալեալ էին զկեդրոն բանակին. ՚ի հասանել գուժկանաց առ Սալահատտին՝ աճապարեաց դառնալ յետս, զի մի փակեացեն զճանապարհ իւր, և հասեալ անդ ցրուեաց զնոսա: Ցայսմ արիւնահեղ պատերազմիս անկան բազումք յերկուց կողմանց, գաղանք եւ թռչունք առանձին բանակ հարեալ էին ՚ի դաշտի անդ, սաեն պատմիչք Արաբացւոց: Եհաս ձմեռն, և Սուլթանն խոթացեալ մեկնեցաւ ՚ի լեառն Խոռոդ, և Հիսամէտտին եգիպտական զօրօք պահապան եկաց քաղաքին: Ի մեկնիլ և ՚ի տեղի տալ աւուրց ձմերայնոյ և ՚ի հասանիլ եղանակի գարնան, եհաս Մելիք Ադիլ բազմութեամբ զօրաց յեգիպտոսէ, և այլ իշխանք Քոկասիս իւրեանց, եւ Սուլթանն ապաքինեալ ՚ի ցաւոց, էջ ՚ի լեռնէ անտի:

Սակայն Լատինք առաւել եւս ամրացուցեալ էին զբանակն իւրեանց, մինչեւ երեվիլ առ քաղաքին այլ ինն նոր քաղաք: Եւ դարձեալ սկիզբն եղեւ մարտին. յարձակիլ Լատինաց ՚ի վերայ Պաղտմայիդայ, այլազգիք դիմէին ՚ի վերայ բանակի եւ պատնէշաց նոցին, և այս կրկնակի պատշարուման տեւեաց բովանդակ ամ մի, և դաշտն ասպարէզ մշանջենաւոր մարտի: Սալահատտին այրեաց զամրութիւնս եւ զպատնէշս նոցա, եւ թէպէտ եղոյգ քաջութիւն մեծ, այլ ոչ կարաց ազատել զերդն, զի Լատինք գային և յաճախէին անդ եւ լնուին զթիւ անկելոց: Լուր գալստեան կայսեր Ալմանիոյ առաւել դառնացոյց զսիրտ Սալահատտինի, և արկ զնա ՚ի տարակուսանս մեծ. վերատին դրեաց առ Խալիփային Պաղտատի և խնդրեաց օգնութիւն ՚ի նմանէ. «Քրիստոնեայք, ասէ, առաւել են քան զալիս ծովու, առատ է սերմն քան զհունձն, որքան քշտեացես զոստս ծառոց այնքան չառաւելս արձակէ, բանակ նոցա անմատչելի, զօրք մեր լքեալ և տարակուսեալ». եւ այլ սոցին նման բանք երկար, այլ Սուլթանն չէդիտ ՚ի նմանէ գոնէ բանս սփոփանաց: Գրեաց առ կայսրն Ցունաց և առ Սուլթանն Իկոնիոյ. զառաջինն չեզոքացոյց, և զերկրորդն առ իւր դաշնակից. զի սա և Սելճուգեանք առիթ լեալ էին

կրօտեան Ալմանիական զօրաց։ Հաղիւ ուրեմն եհաս կայսրն Ֆրէդերիկոս առաջի Գաղոմայիդաց, ուր եւ մեռաւ խակ։ Եւ 'ի գրգռել մարտին կռտորածն տեւեաց ժամս իրրեւ 8։ Ջնաւեցան Լատինք, բայց կորուսին այլազգիք զզօրս։ Գուժ մահուան կայսեր սուգ մեծ եղեւ քրիստոնէից։ Այնուհետեւ չէր ինչ փոյթ նոցա զքաղաքէն, զի խորհէին դառնալ 'ի հայրենիս իւրեանց, որոյ վասն խնդրեցին հաշտութիւն։ այլ իրրեւ հասին անդ այլ խումբք Թաչակաց, 'ի դէրեւ հանին զխորհուրդս նոցա, և վերստին սաստկացուցին զպաշարումն։ Սուլթանն տաղտկացեալ և տկարացեալ իսկ՝ խոյս ետ 'ի լեառն։ Թէև Լատինաց առաւելոյր և մարտն սաստկանայր։ մինչդէ 'ի միում նուազի սուսերամերկք յարձակեալ ելին յաչտարակս բերդին, և փոքուրիկն տիրեալ էին քաղաքին, եթէ ոչ էր հասեալ անդ Սուլթանին։ Եւ 'ի սոյն տագնապալից ժամու երեւեցան 'ի ծովափունս Սուրիոյ Թագաւորն Անգղիոյ Ռիգարտոս, առաջնորդն կոչեցեալ, և զկնի նորա Թագաւորն Գաղղիոյ Փիլիպպոս։ սոքա հասեալ հզօր բանակաւ իւրեանց, խառնեցան 'ի բուն բանակն։ Սուլթանն քաջութեամբ ընդդէմ եկաց յարձակմանց նոցին ամիսս երիս, և պաշարումն քաղաքին տեւեաց ամս երկու։ Հատան ճանապարհք ծովու, սպառեցաւ պաշար քաղաքին, անկան 'ի զօրութենէ ամրականք, եւ եղեն անձնատուր։ Սակայն այլք 'ի պատմագրաց ասեն։ Թէ 'ի սաստկանալ մարտին եւ 'ի կործանել միոյ կողման պարսպին, և 'ի կտորիլ այլազգաց անթնար 'ի բերան սրոյ, խնդրեցին հաշտութիւն պայմանաւ։ տալ այլազգեաց 100,000 ոսկիս, արձակել զքրիստոնեայ գերիս, գարձուցանել զՄաչախայան, և այլազգեաց ընչիւք իւրեանց մեկնիլ 'ի քաղաքէն։ բայց ասէին տալ առ ժամն 50,000 ոսկիս, եւ զտնանակ մնացելոցն տալ պատանդս, միայն զի արձակեսցեն զիսլամ գերիս։ Լատինք խնդրէին զամրողջ գումարն, և եկեալ ամանց տեսին զպանձն, զգերիս և զՄաչախայան, զոր կարծէին լինել 'ի Դամասկոս։ Լատինք թէպէտեւ զիջան 'ի պայմանն, այլ սոխպէին զնոսա կատարել անթերի, զոր խոստանային, և չէր փոյթ նոցա զի տիրեալ էին քաղաքին։ Սակայն և այնպէս մնաց խնդիրն անորոշ, եւ Սալահատտին

մեկնեցաւ անտի պահել զայլ քաղաքս ափրութեան իւրոց։ Իչխանք Լատինաց նախանձեալ ընդ յաղթութիւնս Թագաւորին Անգղիոյ, երկպառակեցան 'ի միջի իւրեանց, և բազումք մեկնեցան 'ի հայրենիս իւրեանց։

Այրս այս էր արդարեւ առիւծասիրտ, բայց ունէր զրնութիւն ընձու, ասեն այլազգի պատմիչք։ զի 'ի հրովարտակին՝ զոր եհան, յայտ առնէր զանկախ իչխանութիւնս իւր եւ զանիրաւ սպանումն 2500 Իսլամ գերեաց։ զի ըստ պայմանին՝ մինչ 'ի դարձ գերեացն քրիստոնէից 'ի Դամասկոսէ ունէին մնալ նոքա իրրեւ դրաւ 'ի ձեռս Նորա։ զի յաւուր յորում կոչեաց զնոսա 'ի բանակն արձակել յիւրաքանչիւր տեղիս իւրեանց, եւ կատարել զնոսա։ պատճառելով իբր թէ անցեալ էին պայմանեալ ժամս։ Իչխանք այլազգեաց սոխպէին զՍուլթանն սպանանել։ Սուլթանն ոչ առ յանձն։ առաջի ապարդիւն նա զայլ իմն եղանակ հաշտութեան, զի ինքն տացէ նա զայլ իմն եղանակ հաշտութեան Մէլիք Ադիլայ, եւ նստել Նորա զքոյր իւր 'ի կնութիւն Մէլիք Ադիլայ, եւ նստել Նորա իրրեւ իչխան երուսաղէմի, զՊողոմայիս և զայլ ամենայն քաղաքս, զոր առին Լատինք 'ի սմին պատերազմի, տալ իրրեւ օժիտ քուեր թագաւորին։ Լատին իչխանաց մի եւս ամրանալ 'ի բերդս, այլ բնակիլ 'ի գեօղս։ բազմութեան Լատին կրօնաւորաց չբնակիլ յերուսաղէմ։ զայսոսիկ պայմանս թէպէտ եւ ընկալաւ Սուլթանն, սակայն քոյր Թագաւորին ոչ առ յանձն ամուսնանալ ընդ առն այլազգւոյ, մանաւանդ կղերք ընդդէմ կացին, եւ հուսկ ուրեմն զիջան, եթէ թագաւորն իչխանն պահել կնոջ զամրիծ հա-

ւատս քրիստոնէութեան իւրոյ · ընդ այս եւս Մէլիք Սաիլ ոչ հաճեցաւ · և ՚ի չայջողիլ հաշտութեան , վերստին դիմեցին ՚ի պէն ։

Սուլթանն նստէր յերուսաղէմ ՚ի տունն Ադամ կուչեցեալ՝ մերձ յեկեղեցին Ս · Յարութեան , ակն ունելով գալատեան եգիպտական զօրաց , և մեծաւ ջանիւք փոյթ կալեալ էր չինել զպարիսպ քաղաքին · ընդ այս գործ առաքեալ էր յառաջագոյն տէրն Մուսուլայ քարահատս և գործաւորս իւրովք թոշակօք , յոր աշխատէին նոքա ամիսս իբրեւ 6 · ապա կայսէն ՚ի գերեցաց Լատինաց զարս իբրեւ 2000 ՚ի ծառայութիւն այսր գործոյ , և նորոգեցին զմարտկոցս ՚ի հիւսիսային դրանէ մինչեւ ՚ի դուռն արեւմտեան · զի զհատեալ քարինս ՚ի իրամէ անտի դնէին ՚ի պարիսպն ։ Սուլթանն փութացուցանէր զգործն ստիպաւ մեծաւ հանել ՚ի գլուխ , որոյ վասն բաժանեաց զայն որդւոց , եղբարց և իշխանաց իւրոց · ինքն լեալ անճամբ վերակացու , բառնալով զքարինս ՚ի թաղէն երիվարի իւրոյ , և ետան զամենայն բազմութիւնս քաղաքին ՚ի մեծամեծաց մինչեւ ցփոքուկս և առհասարակ վաստակէին ՚ի գործ շինութեան պարսպին · իսկ թագաւորն Անգղիոյ Թէոդէտ եւս գնացեալ էր յԱկաւղոն և ձեռնարկեալ նորոգել զպարիսպ նորա , սակայն իշխանք Աջակրաց ստիպէին զնա յաջողութիւն Ս · Գերեզմանին , և նա առ ՚ի կատարել զխոստումն իւր , դարձ արար անտի ։ Եւ ՚ի սմին ժամանակի մեռաւ Մարքիզն Տիւրոսի , եւ տիրեաց քաղաքին Ռիդարտոս , եւ խնդրեաց ՚ի Սուլթանէն զկէս մասն երկրին , երուսաղէմ և ամրոցն մնալ ՚ի ձեռս այլազգեաց , բայց ՚ի տաճարէն Ս · Յարութեան ։ Եւ ՚ի չառնուլ յանձն Սուլթանին , արշաւեցին նոքա ՚ի սահմանս եգիպտոսի , առին զբերդն Տարում , և ՚ի սուր հանին զբնակիչս նորին , եւ դարձան անտի ձոխ աւարաւ ՚ի վերայ Մեճաէլայ , բայց յետս վանեցան յամրականաց , և ամենք մեռան խակ , և անտի գնացին ամենք յԱկաւղոն և այլք ՚ի Պէյթ ձիպրիլ , և յետոյ ժողովեալ հասին ՚ի Պէյթ Նուպէ , եւ անտի ՚ի Գազնիա՝ որ հեռի է յերուսաղէմ 2 փարասախս ։ Առիւծասիրտն Ռիդարտոս , որոյ յանուանէ խակ ասրսէին Արաբացիք , և այնպէս հռչակեալ էր համբաւ քաջութեան նորա , մինչ զի զինի մահուան նորին յոտանուլ

երիվարի ուրուք յանկարծ առանց իրիք պատճառի , ասէին Սարակինոսք թէ՝ եւս ղհոգւոյն Ռիդարտոսի , կացեալ ՚ի հեռուստ ՚ի վերայ միոյ լերանց Հրէաստանի եւս զքաջն Ս · այլ չէր հնար մերձենալ ՚ի նա եւ կանդնել մեքենայս ՚ի պարիսպ նորին , ուստի դարձաւ յետս հառաջենայս ՚ի պարիսպ նորին , ուստի դարձաւ յետս հառաջանօք և թախծութեամբ սրտի մեռնելով իրրեւ զառիծ ։ Զի Սալահատտին ամրացուցեալ էր զքաղաքն յամենայն կողմանց , և ՚ի պատշաճաւոր տեղւոջ զետեղեալ զրանակ իւր , մեծայր գալատեան թշնամոյն ։ Իսկ Լատինք զարձեալ անտի անկան ՚ի վերայ զօրաց , որք զային յեգիպտոսէ , որոց զօրավարէր Ֆէլիքէտտին՝ եղբայր Սաիլայ , եւ ընդ նոսա վաճառականք բազումք , կոտորեցին զնոսա ՚ի բերան սրոյ , և զայլսն ցիր և ցան կացուցին յանապատի անդ , ուրանք դարձան յեգիպտոս , ուրանք կալան զճանապարհն Քերեքի , և այլք հասին առ Սուլթանն մերկ և հողոտուտ , և նորա մխիթարեալ քաջալերեաց զնոսա ։ Ռիդարտոս դարձաւ ՚ի Յոպպէ լի աւարաւ , եւ անտի մեկնեցաւ ՚ի Պաղտաճ ՚ի Յոպպէ լի մոլ պաշարել զՊերուէթ ։ Տեսեալ զայսմանէ եղեալ ՚ի մոլ պաշարել զՊերուէթ , առնսկ Սուլթանին դիմեաց և նա ինքն ՚ի վերայ Ռեմլէի և էառ զնա , բայց ոչ կարաց տիրել ներքին բերդին , և անտի գնացեալ պաշարեաց զՅոպպէ , և կործանեալ զմի կողմն պարսպին՝ մտին ՚ի ներքս , եւ ՚ի բերան սրոյ կոտորեցին զընդդիմակացսն , եւ յաւարի առնուլն զքաղաքն դարձեալ զբերդն և զաղխս եգիպտական զօրուն , և բարձին զնոսա ։ Իսկ ամրացեալքն ՚ի բերդին՝ խնդրեցին զերդումն հաւատարմութեան , և ելին առ Սուլթանն եպիսկոպոս քաղաքին և իշխանքն տալ զդանձս և զամբարս եւ խնդրել վերակացուս , և ՚ի տարաժամիլ աւուրն , թողին կարդալ զգործն ՚ի վաղիւն յառաւօտ ։ Սակայն ՚ի գիշերին յայնմիկ եհաս թագաւորն Անգղիոյ նաւուք ՚ի Յոպպէ և եմուտ ՚ի բերդն , և ազդ արար քրիստոնէից հանալ և եմուտ ՚ի բերդն , և ազդ արար քրիստոնէից հանդարտիլ ՚ի տեղիս իւրեանց ։ Տրտմութիւն մեծ եղեւ Սուլթանին եւ ապաշաւ անբուժելի , թէ զի՞արդ չապաղեաց տիրել բերդին ՚ի գիշերին յայնմիկ , և անտի դարձաւ ՚ի Ռեմլէ ։ Հուսկ ուրեմն խորհեցաւ թագաւորն Անգղիոյ վերջ տալ խռովութեանց և արիւնհեղութեանց , զի ստէպ ստէպ հասանէին յոտին նորա անախորժ եւ վհատակար զրոյցք

'ի թագաւորութենէ իւրմէ, որոյ վասն պատգամաւորս առաքեաց առ Սուլթանն կնքել զպայման հաշտութեան որ և իցէ եղանակաւ։ Գիտակ իսկ էր Սալահատտին թէ՝ որչափ զօրս և դանձս կորուսին Լատինք 'ի պատերազմունս յայսոսիկ զոր մէկին ընդդէմ ինքեան, և դադարեալ էր զալուստ օժանդակ զօրացն յԵւրոպայէ։ Թէպէտ և ինքն եդեալ էր 'ի մտի խոպառ մաքրել զՍուրիա յօտար ազգաց որ խոշն էին Իսլամաց։ Սակայն յաջողութիւնք բազմին և ժամանակին ոչ արդիւնաւորեցին զվաղորդ իւր, ուստի 'ի ժողովի իշխանաց իւրոց յայտ առեալ ասէ, 'ի բազում պատերազմունս մտեալ եմ ընդ ձեզ եւ 'ի բազում ուրեք կանգնեցաք դյաղթանակն, ապրեցաք քաղաքաց եւ աւանաց ժառանգելով զանոնս քաջութեան, երկնչիմ դուցէ յանկարծ հասանիցէ օրհաս մահուն եւ խափան լիցի գործոյս, յոր եղէ ձեռնամուխ։ Իսկ իշխանք եւ զօրագլուխք առաղհակացեալք 'ի պատերազմաց ետուն պատասխանի, ամրութիւնք տապալեցան, երկիրն անյայտաւ 'ի չգոյէ բնակչաց, վիշտք և տառապանք անընդհատ պատերազմիս՝ պարտասեալ լքուցին զձեռս քաջազուն զօրաց։ 'ի վերայ այսր ամենայնի ոչ է արժան խոպառ ընկղմել զերկրպահանս 'ի խորս յուսահատութեան, դուցէ դադարեսցին վերստին 'ի վերայ մեր և յաջողակեսցեն զերկիրս մեր, ուստի պարտ է առնել խաղաղութիւն և նորոգել զաւերեալ տեղիս։ զի եթէ նոքա ըստ բնածին սովորութեան իւրեանց լուծցեն զղաչն, յայնժամ և մեք պատրաստիմք 'ի մարտ ընդդէմ նոցա։ Հաճեցաւ Սուլթանն ընդ խորհուրդս նոցա և դըրաւեան Ամատ գրեաց զպայմանս հաշտութեան։ ընդհանուր գինադադար 'ի ծովս և 'ի ցամաքի ամս 3 և ամիսս 8։ 'ի Յոպպէ քաղաքէ մինչեւ 'ի Տիւրոս մնալ 'ի ձեռս Լատինաց։ Թողուլ զԱկաղոն աւերակ։ Լիւդիայի և Ռեմլէի լինել կիսաբաժին 'ի մէջ քրիստոնէից և Իսլամաց։ զերկիրն Իսմայիլիչ մուծանել 'ի դաշինս Սուլթանին։ զԱնտիոք և զԹարապոլուոս մուծանել 'ի դաշինս Լատինաց։ Բրիտոնեայք առանց գինու երթիցեն յերուսաղէմ։

Եւ 'ի լինել բանի երդման, Ռիչարտոս ոչ առ յանձն, զի չէր օրէն առն թագաւորի երդնուլ, այլ միայն կալաւ զձեռս Սուլթանին, եւ նա համեցաւ ընդ այն։ երդուաւ

քուերորդի թագաւորին, որ իշխան եկաց Ծովեզերեայ քաղաքացն, զորոյ անուն կոչէն Արարացիք Քանտէրէ։ էին անդ և իշխանաւորք Լատինաց Հանկրի, Պալեան, և այլք, որք եւ ձեռս տուն Սուլթանին 'ի հաշտութիւն։ Իսկ 'ի կողմանէ այլազգեաց երդուան Մէլիք Ադիլ եղբայր Սուլթանին։ Մէլիք Ափտալ և Մէլիք Զահր որդիք նորին, և այլք յիշխանացն, և հռչակեցաւ լուր հաշտութեան յամենայն տեղիս 'ի ձեռն մուննեհակաց յուրախութիւն ժողովրդոց (1191 'ի 1 Սեպտեմբերի)։ Զիջաւ Սուլթանն յաղաչանս Հուպերտ եպիսկոպոսին Սալիսպուրի, զի 2 քահանայք և 2 սարկաւագունք Լատինաց բնակեսցին 'ի տաճարն Ս. Յարութեան։ Դարձ արար Սուլթանն յերուսաղէմ և 'ի գլուխ հանեալ կառարեաց զվնտութիւն պարսպի նորին։ եկին նաեւ ոմանք 'ի Լատինաց եւ երկիրպագին Գերեզմանի Տեառն, որոյ վասն մղեալ էին զայնչափ պատերազմունս։ Իսկ թագաւորն Անգղիոյ յանձն արարեալ զծովեզերեայ քաղաքն քուերորդւոյ իւրոյ, դարձաւ յԵրոպա, և փակեցաւ յաշտարակի մեսմ յաշխարհին Գերմանիոյ։

Ի սմին ժամանակի վախճանեցաւ Տ. Ամրահամ Արքեպիսկոպոսն և Պատրիարդն Ս. Երուսաղէմի՝ եւ թաղեցաւ 'ի գաւթի տաճարին Ս. Յակոբայ, ուր երեւի ցարդ արձանագրեալ տապանաքար նորին (1192)։ եւ յաջորդեաց զթոռն Տ. Մինաս Արքեպիսկոպոսն։ Սա գտաւ ընդ այլ եպիսկոպոսունս 'ի հանդիսի օծման Լեւոն Ա. թագաւորին Հայոց 'ի Տարսոն Կիւլիկեցւոց (1198)։

Սալահատտին կարգեաց քաղաքապետ Երուսաղէմի, և գեկզեցին, յանուն Ս. Աստուածածնի, որ օթեւան էր Տաճարական ասպետաց, մերձ 'ի տաճարն Ս. Յարութեան՝ յարեւելից հարաւոյ, որոյ հիւանդանոց այլազգեաց, և ինքն մեկնեցաւ 'ի Պէրութ, ուր եկեն յողջոյն Լատին իշխանն Անտիոքայ, և ընդ նմա էին 14 տապետք։ Սուլթանն սիրով ընկալեալ զնոսա՝ զգեցոյց նոցա հանդերձ պատուոյ։ Եւ 'ի հասանիլն 'ի Դամասկոս զայրացաւ սաստ հիւանդութեան իւրոյ և անկաւ 'ի մահիճս, եւ կոչեալ առ ինքն զգահակալանգ որդին իւր Մէլիք Ափտալ՝ ասանգ զնա նմա զվերջին իւր Հայրական խրատս, պատկառ կալ

առաւաձային երկիրին, իրաւանց և դատաստանի նորա։ Ասա ետ կապել 'ի ծայր նիզակի գլխաւս պատանոց իւրոց, և 'ի ձեռն մանկտակի շուրջ ածել 'ի հրապարակս քաղաքին. «Սալահատին, որ տիրեաց Ասիոյ, եւ արժանի եղեւ այսչափ փառաց և մեծութեան, զոյն եւ եթ պատանոյ տանի ընդ իւր, եւ պակասեցաւ 'ի կենաց 'ի հասակի 57 ամաց 'ի 27 Սեպտեր ամսոյ · ՕԼՉ (1193), և թաղեցաւ անդ 'ի Դամասկոս, կացեալ յիշխանութեան ամս 23։

Ի սմին ամի պատահեցաւ գարձեալ այլայլութիւն Զատկի, որ ասի ծուռատուիկ, որպէս պատահէր յառաջագոյն, և եղեւ վճռ ընդ Յունաց յերուսաղէմ և յայլ քաղաքս եւ 'ի Կիւրիկիա · (1197)։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Բաժանումն թագաւորութեան յորդիս Սալահատինի։ Պատերազմ Լուսինոյ ընդ Մելիք Ասիլայ։ Պաշարումն Տիմիաթի։ Բանգումն պարսպին Երուսաղէմի։ Զօրանալ Լատինաց 'ի կղզիսն Եգիպտոսի. գալնիք նոցին։ Թագաւորն Սիկիլիոյ. սիրել նորին քաղաքին Երուսաղէմի։

ՍԱԼԱՀԱՏԻՆ եթող զկնի իւր զորդիս 17. անդրանիկն Մելիք Աֆտալ կալաւ զիշխանութիւնն Դամասկոսի՝ ըստ կտակի հօր իւրոյ · Մելիք Ազիզ, Եգիպտոսի · Մելիք Զահր, Բերիոյ · իսկ եղբայր նորին Մելիք Ասիլ, Քերեքի Շոմպէքայ և արեւելեան քաղաքաց · եւ այլք իշխեցին այլոց կողմանց։ Ձեռն բաժանելոյ սոցա զտէրութիւնն 'ի միջի իւրեանց և անցանելոյ չորից ամաց, երեւեցան դարձեալ Լատինք 'ի կողմանս Աւորեաց, և պաշարեալ առին զամրոցն Պէյրութի։ Թէպէտ և եհաս անդր Մելիք Ասիլ, բայց չկարացեալ առնել ինչ, դարձաւ 'ի վերայ Յոպպէի, եւ 'ի սուր հանեալ զզահապան զօրսն տիրեաց քաղաքին, և անտի դիմեաց 'ի Դիւպնին, սուր ժողովեալ էին Լատինք, եւ ստիպեաց զնոսա դառնալ 'ի Տիւրոս։ Սակայն նոքա կազմ և պատրաստ յանկարծ երեւեցան 'ի լերինս Սամարիոյ՝ յարձակիլ անտի 'ի վերայ քաղաքին սրբոյ։ Հասեալ

Մելիք Ասիլայ բանակեցաւ զէմ յանդիման նոցին, և կարիլ բանից իրաւախոհութեան, զկնի միոյ տարւոյ, նորոգեցին զդաշինս։ Մելիք Ասիլ վերստին եթող Լատինաց զՅոպպէ, եւ եբարձ զմանակցութիւնս այլազգեաց 'ի Լիւդիայ և 'ի Ռամլէ։ եւ ինքն չուեալ գնաց յեգիպտոս (1197)։

Իսկ յամին 1218 վերստին ժողովեցան Լատինք բազմութեամբ 'ի Ծովեզերեայ քաղաքն Պաղեստիոյ, և անտի դիմեալ բանակեցան 'ի Սամարիա · թէպէտ և եհաս անդ Մելիք Ասիլ յեգիպտոսէ, այլ ոչ կարաց 'ի դիմի հարկանել նոցա սակաւաթիւ զօրօք։ Լատինք առաջանալեն զքաղաքս այլազգեաց եւ աւերեցին զրուանդակ գաւառն որ 'ի մէջ Պիսանայ և Նապղուսայ, և կոտորեալ զբազումս դարձան աւարաւ 'ի Պաղեստիս։ Եւ 'ի յաջորդ ամին արշաւեցին 'ի սահմանս եգիպտոսի և պաշարեցին զՏիմիաթ քաղաք · եհաս անդ Մելիք Քեամիլ որդի Մելիք Ասիլայ և բանակեցաւ ընդդէմ նոցա · և զկնի չորից ամաց հալածական արար զնոսա անտի։ Իսկ Լատինք առեն թէ՝ քրիստոնեայք առին զՏիմիաթ, այլ յետոյ զօրացեալ Սարակինոսք յաղթեցին նոցա, և զբազումս կոտորեցին 'ի բերան սրոյ։ Եւ յաւելուն թէ Ֆրանչիսկոս կրօնաւոր էառ իբր ժառանգութիւն զվանքն Սիոնի յերուսաղէմ 'ի բնակութիւն Լատին կրօնաւորաց, և հաստատեաց զկարգ Ֆրանչիսկեան կրօնաւորաց յԱսորիս (1219)։ Ի սմին ամի մեռաւ Մելիք Ասիլ, և եկաց իշխան յեգիպտոս որդի նորին Մելիք Քեամիլ, և եղբայր սորա Մելիք Էլ Մուազզամ Իսայ 'ի Դամասկոս։ Իսկ Լատինք վերստին դիմեցին 'ի կողմանս եգիպտոսի, և առին զՏիմիաթ քաղաք, և 'ի սուր մնացին զպնակիչս նորին, եւ զմկիսիթն փոխեցին յԿկեզեցի։ (1220)։ Իբրեւ լուաւ զայս Մելիք Էլ Մուազզամ՝ տէրն Դամասկոսի, երկեաւ յոյժ · զի 'ի յարձակիլ Լատինաց 'ի վերայ Երուսաղէմի, չէր ձեռնհաս խափանել զարշաւանս նոցա և պահել զքաղաքն · ուստի առաքեաց զբազմութիւն գործաւորաց և քարահատաց, և ետ հիմնայատակ կործանել զպարիսպ քաղաքին, զոր Մելիք Սալահատին կարի նեղ զպարիսպ քաղաքին, զոր Մելիք Սալահատին կարի վայելուչ չինեալ և ամրացուցեալ էր զայն, որպէս ասացաք 'ի նախընթաց գլխին։ Զայն ահասեալ բնակչաց քա-

զաքին, պաշարեցան յերիվուղ մեծ, մի զուցէ յանկարծակի հասանիցին Լատինք 'ի վերայ նոցա, և մի խնայեսցեն 'ի մեծ և 'ի փոքր, որպ վասն բազումք 'ի նոցանէ թողեալ զկահ եւ զկարասիս իւրեանց՝ փախստեայ գնացին 'ի քաղաքէ 'ի քաղաք՝ վաճառեալ զինդ[լինար] ձիով 10 դեներ։ Եւ զինի միոյ ամսոյ եկ Մէլիք էլ Մուազզամ 'ի Դամասկոսէ, և հիմնայատակ կործանեալ աւերեաց խստու[թ]եամբ զքաղաքն կեսարիա Պաղեստինացւոց։ (1221)։

Ցետ տիրելոյ Լատինաց Տիմիաթի՝ եկին 'ի մեծ ուրախութիւն բովանդակ երկրին Եգիպտոսի։ ուստի յաւէտ խաղաղեալ հասին 'ի Մանսուրա, ուր ընդ առաջ եկ նոցա բանակին այլազգեաց։ Եւ սկիզբն լինել պատերազմին՝ ամսոյս Յունուարի հարան ընդ միմեանս 'ի ծովու եւ 'ի ցամաքի, յորում պարտեցան այլազգիք և բազումք եւս կոտորեցան։ Մէլիք Քեամիլ դրեաց առ եղբարս եւ առ ընտանիս իւր 'ի Դամասկոս հասանել 'ի թիկունս։ Մէլիք էլ Մուազզամ տէրն Դամասկոսի, և եղբայր նորին Մէլիք Աշրաֆ, տէր արեւելեան քաղաքաց, միաբանեցան ասոցա և այլ իշխանք և տեարք քաղաքաց և գաւառաց, և բազմութիւնամբ հասին առ Քեամիլ, սակայն չկարացեալ վճարել ինչ կոտորեցան բազումք։ ապա զնուաւ ածեալ զիորուստ զօրաց իւրեանց, խնդրեցին 'ի Լատինաց հաշտութիւն, դնելով դաչինս տալ նոցա զերուսաղէմ, զԱսկաղոն, զՏիբերիա, զՄատթիկէ, զՃիպոլիէ, և զամենայն ծովեզերեայ քաղաքս, զորս առեալ էր Սալահատտինն, բայ 'ի Քերեքայ և 'ի Շովպէքայ։ միայն Լատինք զարձուսցեն առ նոսա զՏիմիաթ։ Սակայն Լատինք ոչ ընկալան զայսոսիկ պայմանս, մանաւանդ պահանջէին 300,000 ոսկիս 'ի տուժ պարսպին երուսաղէմի՝ զոր կործանեցին, նաեւ զքերէք եւ զՇովպէք։ Զայս եւս ոչ առին յանձն այլազգիք, և խնդիր հաշտութեանն մնաց անորոշ։ Լատինք գրաւեալ էին զդաչան Տիմիաթի եւ հաստեալ զճանապարհս 'ի ծովու։ ուստի 'ի դիշերի նաւեալ այլազգեաց 'ի Նեղոսէ՝ եկին 'ի ցամաք, և յանկարծ երեւեցան 'ի մէջ Լատինաց և Տիմիաթի, եւ կալան զճանապարհն յորմէ գայր պաշար և օգնութիւն, Լատինք տագնապեալ 'ի սովու խնդրեցին հաշտութիւն և զիջան յանձն առնուլ զառաջին պայմանս զոր խոստա-

ցան նոցա առ փոխարէն Տիմիաթի, եւ 'ի սահմանել ժամանակի հաշտութեան՝ Լատին իշխանք, որք էին թուով իրրեւ 20, ոչ կարէին համաձայնիլ 'ի վերայ այսոցիկ պայմանացս։ Սակայն արտունջ զօրաց, որք տաղտկացեալ էին յերեսաց պատերազմի, դնդերելով յայնոսիկ կողմանս զամն երիս և ամիսս ինչ։ միաբանեցան ամենեքեան, եւ Մէլիք Քեամիլ յանձն առ կատարել զխնդիր նոցա տալով պատանդ զորդի իւր զՄէլիք Սալէհ, հնգետասան ամեայ, և էառ 'ի նոցանէ զիշխանն Պաղտմայիդայ և զայլս։ Ցետ այնորիկ դարմարեցաւ 'ի ժողով ընդ եղբարս և ընդ մերձաւորս իւր, և առեալ զՏիմիաթ յանձն արար Իսլամացոց, և մուտ փառաւք 'ի քաղաքն, և արձակեալ զիշխանս յիւրաքանչիւր տեղիս իւրեանց, զարձ արար ինքն 'ի Դահիրէ։ (1222)։

Պատմի 'ի ձեռագիրս ինչ վասն Յովհաննէս վարդապետի պատահեալ 'ի սմին ժամանակի։ Տե՛ս Նե՛ 'ի ՊոդմոՐեՒ՚ս կէրոկո՛ւ ՀրդոՂեո՛է։ Եբե՛ 211։ Հ։ Մ։ ԶամՀա՛ն։ Հա՛տ։ Գ։ Եբե՛ 243։ 244։ Սա եկեալ յերուսաղէմ յոսիա իջեւանէ՝կալաւ 'ի վանս Ս։ Յակոբայ։ եւ 'ի տանի Յայտնութեան գնաց 'ի Յորդանան, եւ մկրտեաց զայլազգի ոմն երկու որդւովք նորին, որք էին յաշխարհէն Պարսից։ յետ պատմելոյ նոցա զհաւատոյ առնելն, և բերեալ յերուսաղէմ հաղորդեցոյց զնոսա 'ի կենարար Մարմնոյ և Արեան Տեառն, և ապա մեկնեալ գնացին նոքա յարեւմուտս։

Դարձեալ պատմէ նա ինքն Յովհաննէս զտեսիլ կրօնաւորի ուրուճն, պատահեալ յեկեղեցւոջ Ս։ Յակոբայ, յաւուրս վեհակալութեան Պօղոս վարդապետի, յաւուրս տանի Աւետեաց Ս։ Կուսին։ Դարձեալ գնալն 40 Հայ ուխտաւորաց 'ի լեառն Սինէական, որ և ինքն Յովհաննէս էր ընդ նոսա, և իջեւանս կալեալ 'ի վանս Ցունաց, եւ ապա եկին 'ի լեառնն կացեալ անդ պահօք և ճգնութեամբ զաւուրս ինչ, և ապա իջին անտի ուրախութեամբ (1223)։

Տէր Աբրահամ և Տէր Աւաքեալ վարդապետք կամ եպիսկոպոսք Հայոց Տառն կազմել զվայրս միջնադարեան եկեղեցւոյն Բեթղեհէմի մանրաքանդակ յօրինուածովք ծաղկանց և նկարիւք խաչաց, որպէս երեւի մինչեւ ցայսօր հնութեամբ իւրով 'ի վերին կողմն միոյ փեղկին եզեալ

հայեցի վերատաւուքիւն երկաթագիր և յանդիման նորին 'ի միւս տեղիկին արտաքոյ, որք ունին օրինակ զայս։

Ի ԹՈՒԻՍ ՀԱՅՈՑ Ո. Հ ՀԱ. Զ. (676)։ (1227) ԿԱԶՄԵՑԱԻ ԴՈՒՐՍ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՍ ՁԵՌԱՄԲ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄՈՒ ԵՒ ՏԷՐ ԱՌԱՔԵԼՈՑ։ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՀԵԹՄՈՑ ՈՐԴՒՈՑ ԿՈՍՏԱՆԴԻՒ· ՓՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵՍՑԻ ԱՇԽԱՏԱՒՈՐԱՑ[1]։

كل هذا الباب بعون الله تعالى فى ايام مولانا السلطان المعظم
فى تاريخ الهجرة سنة اربعة وعشرين وستماية

Իսկ Մլէիք Քեամիլ իշխանն Եգիպտոսի՝ գրառեցեալ 'ի սիրոյ աղգականաց իւրոց, որք իշխէին 'ի Դամասկոս եւ յայլ տեղիս, աղգ արար թագաւորին Սիկիլիոյ, այն է Ֆրէտէրիկոս Բ. Կայսրն, բանադրեալ 'ի Գրիգոր Թ. Պապէն Հռոմայ, փութալ գալ 'ի Պաղեստինա, խոստացեալ տալ նմա զերուսաղէմ. և նորա անցեալ 'ի գլուխ վեցերորդ Խաչակրաց՝ գայ հասանէ անդ։ Մլէիք Մուազզամ լուեալ զգալուստ նորին՝ մեռաւ 'ի Դամասկոս, և կալաւ զիշխանութիւնն որդի նորին Մլէիք Նասր։ Եւ յետ սակաւ միոյ խնդրեաց 'ի նմանէ Քեամիլ զամրոցն Շովպէքայ. և 'ի չառնել նմա պատասխանի բանից նորա, եմուտ Քեամիլ յերկիր իշխանութեան նորին, և եդ վերակացուս յերուսաղէմ և յայլ քաղաքս (1229)։ Իսկ կայսրն ափրեաց Սիդոնի, որ կիսաբաժին էր 'ի մէջ այլազգեաց և քրիստոնէից. և էտ կանգնել զաւերեալ պարիսպս նորին, և ար-

[1] Զի ԹՒՒ 'ի վերջին գրոց նենգութիւնն ցուցանց չէր ծածկեալ եւ նզեալ զայլ պատմագրութիւնս Մննդեան ևկեղեցւոյն, անհերեւ տեառնէր արդեօք գոյն Հեթմայ արքային, քանզի 'ի հնուանալ խաչակրաց Ս. Տեղիքն ձեռին 'ի ձեռս Հայ կրօնաւորաց, զի ԹՒՒ գուցեւ նկարակերպ միոյն չենեցաւ յայնժամ, այլ նաեւ ընդ նմա բովանդակ փայտակերպ առաստաղ տաճարիս՝ ծախիք Հեթմայ արքային Հայոց. զորոյ առաջն էտ տալն և կերտել 'ի Տարսն քաղաքի. Թող զազգային աւանդութիւնս, ձեւ գերանաց և կերտուածոց առաղձից ինքնին ազգակերն վերիվ գոյն ձագարաց Տարսոն լերանց, որք են անհետաս փայտ, արուեստ Հոյակապ կոչեցեալ 'ի Տաճկաց։

գնել անտի զայլ իշխանս Լատինաց։ Սակայն երկպառակութիւնն եւ տաելութիւնն, որ անկեալ էր 'ի մէջ էյուպեան գերդաստանին, երթալով երթայր եւ զօրանայր 'ի նպաստ Լատին իշխանաւորաց։ Մլէիք Քեամիլ արձակեաց զեղբայր իւր 'ի վերայ Դամասկոսի պաշարել զնա, և զրկել յիշխանութենէ զեղբօրորդի իւր, եւ ինքն դաշինս եդ ընդ թագաւորին Սիկիլիոյ. տալ զերուսաղէմ Լատինաց, բայց այնու պայմանաւ, չկանգնել վերստին պիւրճանեաւ պարիսպ նորին, չվնասել ձեռներից Սարացի և Ագապ կոչեցեալ մզկիթայ, գիւղք և տունք 'ի Պաղեստինա յիւրայ մինչեւ յերուսաղէմ հանդերձ նահանգաւ նորին մնալ 'ի ձեռս Իսլամաց. եւ երդուան 'ի վերայ այսմ դաշինն, և յանձն արար Քեամիլ զերուսաղէմ 'ի ձեռս թագաւորին Սիկիլիոյ (1230)։ Եւ Կայսրն հրաժարակեաց զնա թագաւոր՝ 'ի մեծ զայթակղութիւն արեւմտեան քրիստոնէից. ապա եկն առնուլ զթագն կոստանդնի 'ի սեղանոյ Ս. Գերեզմանին. եդ զայն 'ի գլուխ իւր և էանց խնդուն յերուսաղէմ։ Իսկ Մլէիք Նասր պաշարեալ զքաղաքն Դամասկոս, արար ժողով մեծամեծաց իւրոց, եւ ծանոյց նոցա զոր ինչ միանգամ արար Քեամիլ։

Եւ մինչդեռ նոքա ողբային 'ի վերայ կորուստն երուսաղէմի, եհաս անդ Քեամիլ, և սաստկացուցեալ զպաշարուքն էառ զքաղաքն. եւ էտ Մլէիք Նասրայ զՔերքեք, զՇովպէք, զՊալդաց և զկողմանս Յորդանանու։

Սակայն Մլէիք Նասր, որ նստէր 'ի Քերքեք, իբրեւ լուաւ զլուր մահուան Մլէիք Քեամիլայ, դիմեաց 'ի վերայ երուսաղէմ եւ պաշարեաց զնա, զորոյ զպարիսպն սակաւ չինէին Լատինք ընդդէմ դաշինն կռելոյ, և սաստկացուցեալ զմարտն կործանեաց զոր չինեալ էին. և քանդեալ աւերեաց նաեւ զաշտարակն Դաւթի, որ զերծեալ էր յառաջին աւերածէն, և տիրեալ քաղաքին արտաքսեաց անտի զԼատինս, յետ կալոյ նոցա անդ ամս 14։ Կղերք Լատինաց դարձեալ կանգնեալ էին 'ի սմին ժամանակի սեղան պատարագի 'ի վերայ Սարայ կոչեցեալ վիմին 'ի մզկիթն Օմարայ, որպէս պատմեն ճանապարհորդք Արեւելեան։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Վանք Հայոց ի լեռնակողմն։ Կարապետ վարպետն։ Սալհ Էյուպ։ Ս. Լուսաւորիչ։ Առաքեն երուսաղէմի ի Թաթարաց։ Հեղեմ Ա. Յիշատակարան։ Քերթ։

Եւ քան զտիրել Սալահատտինի Ս. երկրին՝ մեծ բանք Հայոց բնակիչին ի վանս լեռնակողմանն, որ ըստ Արաբացւոց կոչի Ա՛ն Քեաբէ. և ոչ ոք նեղէր և կամ պահանջէր ինչ ի նոցանէ, իսկ յորժամ անկաւ երկիրն ընդ իշխանութեամբ Արաբացւոց, հարկահանք նոցին սկսան զաւուճառանօք սիրան նեղել զնոսա։ Իսկ մերանոց ոչ կարացեալ առնել ինչ՝ մատուցեալ առ քաղաքապետան եւուն գրել նմա զամենայն տառապանս իւրեանց առ Սուլթանն Եգիպտոսի, որոյ անունն էր էլ Մէլիքի Սալհի Նա՛մէ, որպէս տեսանի ի վերնագիր հրովարտակին, յորում է և գիր քաղաքապետին՝ պահել ի շարս գրոց Ս. Աթոռոյս, զորոց թարգմանութիւնն դնեմք առաջի։

Ի մտան երկրին և ի շրջակայս նորա բնակին կալուածատէրք, ի վանս Այն Քերիմի ի լեռնակողմն երուսաղէմի, ուր էր եկեղեցին ի ձեռս նոցա նախ քան զտիրելն երուսաղէմի, որպէս և է ցարդ. եւ նահանգն այն որ-չեալ էր, եւ չէր ոք որ հակառակ կայր նոցա, ոչ վանից ոչ եկեղեցւոյն եւ ոչ ժողովրդեանց նոցին։ Իսկ յորժամ եմուտ նահանգն այն ի կարգ սեփհականութեան. նոքա որք տակաւին բնակէին անդ, աղաչեցին դարձեալ որչել զայն ևս մի հակառակիլ. եւ ի միւն ժամանակի յորժամ դարձաւ ի սեփհականութիւն, արգել զնոսա տէր երկրին յեկեղեցւոյ, ի պաշտամանց և յայլ ժողովրդեանց նոցին, եւ կալուածատէրքն ունէին ի ձեռս իւրեանց հրովարտակ ի ժամանակէ Սուլթանին, որ կոչի ընդ-հեր Նասրէն. դաչինք նորա է բառնալ ի նոցանէ զնեղութիւնս և զվնասս, առնել զարդարութիւն և զողորմութիւն. ունին դարձեալ վճիռ յառաջին դատաւորաց և պիտոց, և խնդրեն ի գթութենէ ձերմէ տալ հրովարտակ, վարիլ բատ մտաց նոցին, և առանց նեղութեան կատարել զոր-

ժողովրդիւնս իւրեանց, որք հաստատեալ են ի ժամանակս յաղթութեան։ Գրեալ է ի սոյն թղթի հրովարտակն. առնել համաձայն հրովարտակին և վճռոց եւ չերեի օրինաց, և արգելուլ զանիրաւ հակառակողս։

Ի սմին ժամանակի կարապետ վարդապետ ոմն, որ զանձնէ ասէ լինել երուսաղէմացի, մաքրեաց զեկեղեցին Ս. Աստուածածնի ի ձորն Գեթսեմանի. զի հեղեղք անձրեւաց լցեալ էին անդ հողս, խիճս և քարինս, և գերեզմանն միայն երեւէր, տալով զվարձս մշակաց, եւ եթից զժորչս և զրաւիղս, զոր ոսկիք կոչէին դրունք դժոխոց։ (1230)։

Հանգեաւ ի Քրիստոս Տէր Վարդան Արք եպիսկոպոսն Կարուց, մեծիմաստ քերթողն եւ եղբայր Ցովհաննէսի ի Թուին Հայոց ՈՉԻ (1238). և թաղեցաւ ի գաւթի սաճարին Ս. Յակոբայ, որոյ արձանագիրն երեւի ցարդ ի մոյթս ձախակողմեան։

Իսկ Սալէհ Էյուպ Մէլիք եգիպտոսի կամեցեալ տիրել բովանդակ Պաղեստինոյ, ևին ի Գազա, այն է Ղազզէ, և զկնի իւր եհաս բազմութեամբ եգիպտական զօրաց զօրավար նորին Բէբէին Խտաին Պիլարս ի Մէլմլուք ցեղէ. եւ Սալէհ Իսմայիլ տէրն Դամասկոսի առաքեաց ի վերայ նորա զզօրավար իւր. եւ նորա հասեալ ի Գաղմայիս դաշնակցեցաւ ընդ Լաթինս, խոստացեալ տալ նոցա զմասն ինչ երկրին և կամ զերուսաղէմ. և նոքա ուրախութեամբ եառեն նմա զկնծեալ եւ զհետեւակ զօրս. եւ ի խմբել մարտին պատեցան Լաթինք եւ զարձան ի փախուստ. զկետ մնաւ եգիպտացւոց կոտորեցին զրաղուսն ի նոցանէ ի բերան սրոյ. եւ Սալէհ Էյուպ տիրեաց Գազայի և ծովեզերեայ քաղաքաց ոմանց. ձա նաեւ զերուսաղէմ (1240), և բազմութեամբ գերեաց զարձաւ յեգիպտոս։ Իսկ այլք ասեն թէ՝ յետ առման քաղաքին սրոյ, սպանին զամենայն բնակիչ. և յետագայ ամին դարձեալ յաւարի առին զայն, նախ քան զյանձնել Սալէհ Էյուպայ յաջորդին Նիմէլէտտինի։ Եւ այնուհետեւ մնաց երուսաղէմ ի ձեռս Իսլամայ մինչ ի ժամանակս Սուլթան Սէլիմ արքայի Օսմանցւոց, որպէս յառաջ բերեն արաբացի պատմիչք։

Սալէհ էյուպ տիրեալ Նաեւ Դամասկոսի, Պալէքայ, Տիբերիոյ, Ասկալոնի և Քերեքայ, և մեռաւ 'ի նոյն ամի, և թագաւորեաց որդի նորա Թուրան Շահ։

Ի կենդանութեան Սալէհ էյուպայ Լատինք տիրեալ էին Տիմիաթի, և 'ի սմին ժամանակի անկեալ էր խռովութիւն 'ի միջ նոցա և Իսլամից։ Լատինք խնդրէին ներուսաղէմ և զանոնա 'ի ծովեզերեայ քաղաքաց, զի փոխանակ այնոցիկ տացին նոցա զՏիմիաթ։ բայց նոքա ոչ առին յանձն, եւ յետ տարւոյ միոյ առին զայն պատերազմաւ և Թուրան Շահ սպանաւ (1242)։

Պատմէ ատտանօր Մարինոս Լատին թէ՝ 'ի սմին ժամանակի (1247) ելից Պատրիարգ Լատինաց յերուսաղէմ Ռոպերդոս, և ընդ նմա էին Յակորոս, Պանդալէոն և Թոմաս, և յետ կալոյ նոցա անդ սուղ ինչ ժամանակս, վերըստին արտաքսեալ աքսորեցան ընդ այլ կրօնաւորս եւ քրիստոնեայս։

Թագաւորն Գաղղիոյ Ս։ Լուդովիկոս, որ վաեալ էր սիրտ սիրով ազատութեան Ս։ երկրին, յուսկ ուրեմն ելից յարեւելս (1250) եւ դիմեալ զօրօք 'ի վերայ Տիմիաթ քաղաքի առ զնա 'ի ձեռաց եգիպտացւոց՝ և անտի ուղղեալ զարշաւանս իւր 'ի մայրաքաղաքն Եգիպտոսի 'ի Գահիրէ։ այլ չարաչար պարտեալ 'ի Սուլթանէն գերի վարեցաւ ինքն և շղթայակապ եդաւ 'ի բանտի, եւ զօրք նորա կոտորեցան առաւել 'ի ժանտախտէ քան 'ի սրոյ թշնամեաց։ Ականատես եղեւ անդ սպանման յետին ժառանգին ընտանեաց Սալահատտինի։ խուժադուժ Մեմլուք Պահարիքք յետ արկանելոյ զձեռն յարիւն տեառն իւրեանց։ խորհեցան խորտակել զշղթայս Ս։ Լուդովիկոսի և կացուցանել զնա Սուլթան 'ի վերայ իւրեանց՝ հնացեալ ընդ այնչափ առաքինութիւնս նորին։ Սակայն փոխեալ յետոյ զկորհուրդս իւրեանց ինքեանք կալան զԹուրն Եգիպտոսի կարգաւ, իսկ Ս։ Լուդովիկոս ազատեալ 'ի շղթայից դերութեան եկն յԱկռիս, ուր ընդդէմ ելից ժամանակս ինչ արշաւանացն այլազգեաց, մանաւանդ Սուլթանացն Դամասկոսի և Քերեայ, որ առեալ յարձակէին 'ի վերայ ծովեզերեայ քաղաքացն եղելոց 'ի ձեռս Լատինաց, եւ յետ երկուց ամաց ազատութեան իւրոյ ձեռն արկ

եւ ընդարձակել նորոգեալ զքաղաքն Յոպէ, տիրացեալ զնա պարսպաւ, ուր նստէր յայնժամ Լատին իշխանն Ճաֆհան Իպլինեան, և առեալ էր 'ի կնութիւն զդուստրն Հայոց զՄարիամ, զքոյր Թագաւորին Հայոց Հեթմոյ առաջնոյ, որպէս և Ճուլիա Իպլինեան, տէրն Սիդոնի և Եաւ յետոյ 'ի կնութիւն զդուստր նորին Հեթմոյ զՊիմիմի (Եւփիմիայ) (1252)։ զընդարձակ հանդամանս սոյն հարստանեաց։ Տե՛ս 'ի Գէո՛ Ալէքս։ Յո՛ւլիոս։ Հա՛յբ։ Հա՛տ։ Բ։ 533։ Լուդովիկոս վանեաց զքէշնամիս Սիդոնի և նորոգեաց զաւերեալ տեղիսն, յորում ըստ մահուան մօր իւրոյ Պլանշ դէվոյին, զոր տեղակալ կարդեալ էր Թագաւորութեան իւրոյ։ մեկնեցաւ արտմութեամբ 'ի Պաղեստինէ՝ եւ բազմութիւն քրիստոնէից յուզարկեցին զնա 'ի մայիս

ԹԱԳԱՒՈՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՇԻՆՈՒԵՑԱՒ ԵՐԱՆՈՒՀԻ ՏԻԿՆՈՋ ԶԱՊԵԼԻՆ ՅԵՍՊՈՆԻՈՅՆ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ Վ.ԵՐՋԸ ՅԱՂԹԱՆԱԿ ԵԼՆԱԼՈՎ. ԶՋ (1257)։ Եւ ի ներքոյ արձանագրութեանս գինադրոշմ, այսինքն նիզակք և դրոշք և ի միջի նոցա խոյր։

Ցեսպոնիոն է անուն քաղաքի, զոր Արաբացիք կոչեն Ցեսպէն, եւ ի Ս. Գիրս Եսեբոն. էր ի հնումն արքայանիստ քաղաք Սեհոնի Թագաւորին Ամորհացւոց. Գէր Թուոց. 21. 25։ Յայնկոյս Յորդանանու յարեւելից՝ չորեքայ ինչ լերանց ձգեալ ի հիւսիսոյ, արեւմտից հարաւոյ, զոր Արաբացիք կոչեն Պալքա, ուր էին յառաջագոյն մեծաչէն և վառաւոր քաղաքք, Գերասան, Ճըրաշ. Ամմոնի, Ամման. եւ այլք, այժմ ամենեքին են աւերակ եւ անմարդի բայ ի Քերեքայ և ի Սալթէ. յայսոսիկ լերինս Թափաւին բազմաթիւ վրանաշէտ արարք, բաժանեալ ի ցեղս ցեղս։ Ի քաղաքն Ամմոնի ցարդ երեւին աւերակք նախնական շինուածոց, ամիւիթէատրոնի և այլոց, արձանագիր յունական վերստաւութեամբ ի վերայ անկեալ քարանց. ձկնաւէտ գետակն, որ անցանէ ի ձորակէն, յերկուս բաժանէ զքաղաքն և միաւորէ կամրջաւն։

Զայսոսիկ քաղաքս և զամրոցս մինչ ի Քերեք, առեալ էր Հեթմոյ արքային օգնութեամբ Թաթարաց, որպէս գրէ նա ինքն վարդան ականատես, և զայնս պահանջէր Սուլթան եգիպտոսի Փնտուղտար յետ առման Դամասկոսի, իբր նահանգ նորին, որոց վասն եղեւ աւերումն Կիլիկիոյ, գերութիւն Լեւոնի եւ մահ Թորոսի արքայորդւոց։ Ցետ մնալոյ ի ձեռս Հեթմոյ ամս իրրեւ 7. առին զարձեալ եգիպտացիք (1264)։

Քերեք քաղաք է յայնկոյս Յորդանանու յարեւելից հարաւոյ Երուսաղէմի ի պարս նոյն լերանց, ուր էին յառաջագոյն հատուածք ի ժողովրդոցն Հայոց եւ եկեղեցի նուիրեալ յանուն Ս. Գէորգայ. որպէս յայտ առնէ յիշատակարանն ձեռագիր Ցայսմաւուրի յիշատակ արարեալ եկեղեցւոյն Քերեքայ Լեւոնի Դ. արքային Կիլիկիոյ ի թուին Հայոց ՉԿԹ. (1320). նոյնպէս և գիրքն կոչեցեալ Հարանց վարք։ Իսկ ի յետին ժամանակս ապրեալքն ի սրոյ թշնամեաց ժողովուրդք Հայոց, ոմանք ցրուեցան

այսր և անդր, այլք յարեցան յեկեղեցին Ցունաց, որ և ցարդ խոստովանին թէ նախնիք իւրեանց էին յազգէն Հայոց, եւ ցուցանեն խոկ զեկեղեցին, զոր գրաւեալ են Ցոյնք, և կամ աւերակ. ի սոցանէ երկու ընտանիք միայն գաղթեալ են ի Բեթղեհէմ և երկու յԵրուսաղէմ։

Այլ վասն եկեղեցւոյն Ս. Յակոբայ, զոր շինեալ է արքայն Հեթում ի նմին ժամանակի, ի յիշատակ բարեպաշտ տիկնոջ իւրոյ Զապել Թագուհւոյ ի Քրիստոս հանգուցելոյ, չէր ուրեք յիշատակութիւն ինչ մինչ ցգիւտ արձանագրութեանս։ Զանդի եկեղեցւոյն, զոր ցուցանեն արաբացիք Քերեքայ, արարեալ են իբր հիւրանոց, և յաւերակաց նորին գտեալ են զքարն արձանագրեալ, եւ սկիզմի արձաթ, դրեալ ի շրթունս հայկական տառիւք, զոր խոստացան զայն եւս բերել, այլ ազահութիւնն կաչկանդեաց զոտս նոցա։ Ցետ գրելոյ մեր զայսչափ ինչ տեղեկութիւն զարձցուք վերստին ի կարգ պատմութեանս։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Շինութիւնք Լեւոն Բ. Թագաւորի։ Փնտուղտար Սուլթանն եգիպտոսի, արշաւանք եւ գործք նորին մինչ ի մահն։ Մկրիք Մանասէ. Առաւել Պաղտայիդայ և կատարումն քրիստոնէից։ Բարձումն իշխանութեան Լատինաց յԱթենս։ Մահ։

Լեւոն Բ. արքայ Հայոց Կիլիկիոյ, որդի արքային Հեթմոյ Ա. ի վերջին ամս Թագաւորութեան իւրոյ արար շինուածս յերուսաղէմ, որպէս աւանդի ի յիշատակարանս ինչ, օրինակ զոյս։

«Ի Թուականութեանս Հայոց ևօթն հարիւր երեսուն և հինգ (1286)։ Նուաստ ծառայ աւետեաց քրիստոնէից Շալվայ վարդապետս՝ յարեւելից եկաք յաստուածակոփ քաղաքն Երուսաղէմ արդեամբք և ընչիւք սուրբ Թագաւորին Լեւոնի, և Տէր Յակոբ Կաթուղիկոսի։ Սրբոց Յարութեանց եկեղեցւոյ գաւիթս սալեցաք, եւ հրէշտակա-

պետան (վանք) պարսպելեցաք, որք կարգայք Ս. Թադեոսին և իւր զաւակացն երկար կեանս խնդրեցէք»։

Արձանագրութեանցն որ՝ի մեղմ տաճարին Ս. Յակոբայ, որպէս յիշէ Հաննա վարդապետ եւ ականատես ծերունի Հարք, չեզուս հնար առնուլ զպատճէնս նոցին և դնել՝ի կարգի Պատմութեանս. զի ծածկեալ են՝ի ներքոյ պատկերաց, յորում յիշատակին ասէ նա ինքն Հաննա թէ՝ որքան ընծայս տուեն և որչափ չինութիւնս պարսին թագաւորք և իշխանք Կիլիկիոյ։ Ի սոյն կարգի է և մատուռն Ս. Սահմանոյն՝ի մէջ տաճարին Ս. Յակոբայ, բայց՝ի խորանէն Ս. Լուսաւորչին, զոր չինեալ է Գրիգոր շքեղ-յակիր Պատրիարգն՝ի ժամանակի իւրում։

Սոյն այս Լեւոն թագաւոր չինեալ է Ս. Թորոս եկեղեցին՝ի յիշատակ եղբօր իւրոյ Թորոսի, որ անկաւ՝ի պատերազմին Եդիպտացւոց։ Թէպէտ Հաննա վարդապետ սխալմամբ դնէ զթուական չինութեան եկեղեցւոյն ՊԼ. (1386) փոխանակ դնելոյ ՉԼ. (1286), որպէս գրեցաք՝ի վեր անդր. զի՝ի նմին թուականի կործանեալ էր թագաւորութիւնն Կիլիկիոյ և Լեւոն Ե. մեկնեալ յԵրուսաղէմ։ Գրէ նաեւ հայր Ալիշան թէ, Լեւոն յետ ազատութեան՝ի գերութենէ իւրմէ գնաց յԵրուսաղէմ իւրոքն եւ մնաց անդ երկար ժամանակ չրջելով՝ի Ս. Տեղիս, և մեռաւ անդ Թորոս անուն որդի նորին, եւ թէ չինեաց եկեղեցի՝ի հիւսիսոյ կողմն տաճարին Ս. Յակոբայ, և՝ի յիշատակ որդւոյն անուանեաց Ս. Թորոս։ Ցոյժ. Հայ. Բ. Եբէս 518։ Սակայն բովանդակ տոհմային Պատմագիրքն վկայեն թէ. Լեւոն յետ դարձին՝ի գերութենէ չունէր արու զաւակ, և եկեղեցին այն որդէն կանգնեալ էր անդ, և չէր հնար գերեալ և յամենայն փառաց մերկացեալ թագաւորի կանգնել զայնպիսի եկեղեցի։ Նա երբէք չկարաց հանդիպիլ յԵրուսաղէմ, զի զերծեալ՝ի բանտէն եգիպտոսի, դիմեաց յԵւրոպա։

Ոչքին էառին Պիսպաս փիւռուզաար Մէհրուբ, Սալհեան փիւռուզաար կոչեցեալ յԱրաբացւոց, եկաց Սուլթան Եգիպտական հարստութեան՝ի Թուին հիճրէթի ՀՕԶ (1258) եւ՝ի հինգերորդ ամի իշխանութեան իւրոյ, արձակեաց զղօրս իւր՝ի Պաղեստին. աւարն առին զոյնոսիկ

կողմանս, որք չէին հնազանդեալ իշխանութեան տեառն իւրեանց. մինն յերուսաղէմ աւերեցին զտաճարն Ս. Յակոբեանց, մինն զՍուրբ Գրոբեան, կործանեցին նաեւ զվանս Լատինաց՝ի Բեթղեհէմ, որպէս գրէ Արաբացի պատմիչն. եւ յետ այնորիկ յարձակեցան՝ի Գազոնայիս, ուր եհաս նոցա եւ նա ինքն Փիւռուզաար, բայց չկարացին առնել քաղաքին, այլ միայն քակեցին զաշտարակս արտաքոյ նորին։ Առին զԿեսարիա Պաղեստինոյ և զԱքռոն, և դարձան յԵգիպտոս։

Եւ յետ երկուց ամաց (1265) դարձեալ էլ բազմութեամբ եգիպտական զօրաց. էառ զԱքէթ և զայլ տեղիս, երբեմն առաջի նոցա չառնել ինչ ուժ՝ի մարդկանէ. իսկ անձնատուր լինել նոցա՝ դրժեալ երդմանն, կոտորեաց զնոսա անխնայ՝ի բերան սրոյ. և յաջորդ ամին (1266) դէմ եւս դնալ մեծաւ պատրաստութեամբ՝ի Դամասկոս, և հասեալ՝ի քաղաքն Ցոպպէացւոց, էառ զնա՝ի ձեռաց Լատին իշխանաց եւ աւերեաց, զոր այն ինչ նորոգեալ էր Թագաւորն Գաղղիոյ Ս. Լուդովիկոս, որպէս գրեցաք՝ի նախընթաց գլուխն, էառ նա զքաղաքն Անտիոք, ուր նստէին տակաւին իշխանք Լատինացւոց, և՝ի սուր մատնեաց զբնակիչս նորին։ Զօրքն աւարասէր մտին յաշխարհն Կիլիկիոյ։ Տարաբաղդ արքայորդին Լեւոն՝ յետ գերութեանն հրամանաւ Սուլթանին եկն չքեղապէս և պինդ զօրօք յետնեալ յԵրուսաղէմ, և չրջեալ՝ի անօրինական Ս. Տեղիս աղօթիւք և խնդրուածովք մխիթարեցաւ՝ի հոգի իւր, և անդրէն դարձաւ՝ի բանակ Գահիրէի։

Լեւոն Բ. որդի Հիթմոյ Ա. արքային Հայոց, կին նորա կեանս թագուհի, դուստր Հիթմոյ, Տէր դղեկին Լամբրունի, և եղբօր Ներսեհ Լամբրունեցւոյ, որ՝ի բանտին կրօնաւորեալ կոչեցաւ Հեղի, և առանձնացաւ՝ի վանս Դրազարկու։ Լեւոն Բ. թագաւորեաց 1271. յերկրորդ ամի թագաւորութեան նորին՝ միաբանք Ակներ վանաց նուիրեն նմա այն սքանչելի Աւետարանն, գրեալ՝ի մագաղաթի ոսկեատառ և հրաշագեղ պատկերօք։ Ցեառնստ կոչմանէ ընդարձակ յիշատակարան, յիշելով զազգատոհմն թագաւորին, թագուհւոյն, եւ Ներսեհ Լամբրունեցւոյ. նա սքանչելի պատկերք թագաւորին, թագուհւոյն, որդւոց և դստերաց նոցին. Սոքա ոչ Սարգիս ալիճակի և

ոչ գոյն երիցանցի են նկարք, այլ առաւել հմուտ և ճարտար գրչի են գործ։ Աւետարանս գրեալ է յամի Տեառն 1272, որ այժմ պահի յեկեղեցին Սրբոյն Յակոբայ։

Ցետ այսր աւուցն եկն յերուսաղէմ Սուլթանն Փընտուգտար, եւ ետ կանգնել մզկիթ գմբէթարդ 'ի վերայ գերեզմանի Մովսիսի ուրումն, զոր Արաբացիք համբաւեն լինիլ գերեզման մեծի մարգարէին Մովսիսի, և կոչեն զնա Նեպէ Մ---ոյ, և է նոցա ուխտատեղի մեծ, ուր ժողովին 'ի տարւոջ միանգամ մեծաւ բազմութեամբ յաւուրս աւագ շաբաթու մեծի Պահոց։ Իսկ Սուլթանն 'ի գնալ իւրում յուխտ անդ, իջեւանս կալաւ 'ի ճանապարհի 'ի վանս Ս. Սաբայի, ուր եգիտ աղօթաւոր կրօնաւորս 300, բնակեալ 'ի խուցս և 'ի խրճիթս։ Եւ վանականք պատրաստեցին նմա ընթրիս մեծածախս, և պատիւ մեծ ցուցին նմա իբրեւ առն թագաւորի։ Բայց նա փոխանակ շնորհակալեաց՝ գոսա ապերախտ և չարահաճոյս՝ չարժեալ յախտ ագահութեան և ամբարտաւանութեան, եւ հրաման ետ իւրոցն կործանել զխրճիթս կրօնաւորաց, զի մի ձեռնտու լեալ 'ի թշնամիս իւր գաւ ինչ գործեսցեն վասն երուսաղէմի։ Սա նորոգեաց զմզկիթն Օմարայ յերուսաղէմ, եւ զՀայր Աբրահամուն 'ի Քեբրոն, եւ զայլ տեղիս։ Շինեաց կարաւանատուն արտաքոյ երուսաղէմի յարեւմտից հիւսիսոյ, զոր Արաբացիք կոչեն Խան Էլ-ղէհ, և եդ նմա դուռն 'ի Ցաֆիմեան ապարանէ բերեալ յեգիպտոսէ։ այժմ տեղին աւերակ, և կոչէին երբեմն Խէյէ Մ---ղէ։

Իսկ Արաբացի Ցոյն պատմիչն երուսաղէմի գրէ, թէ Սուլթան Շապան, փոխանակ գրելոյ Փնտուգտար, որ է յայտնի սխալ։ Շնորհեաց հիւրընկալ առնելոյն Ս. Յովհաննու, որք 'ի սմին ժամանակի նստէին 'ի կղզին Հռոդոսի, զապարանս իւրեանց յերուսաղէմ, մերձ 'ի տաճարն Ս. Յարութեան, յորմէ արտաքսեալ էր զնոսա Սալահատին 'ի տիրելն քաղաքին սրոյ։ Երարձ զհարկն ուխտաւորացն Լատինաց, զոր հատուցանէին այր իւրաքանչիւր ոսկիս 5 'ի մտանելն իւրեանց յերուսաղէմ։ Հրաման ետ քրիստոնէից նորոգել զեկեղեցիս իւրեանց, եւ նորոգեցաւ տաճարն Ս. Յարութեան։ կրօնաւորք Լատինաց չէնեցին զմի մասն վանից Բեթղեհէմի ոսկս

քնակութեան միայն 12 կրօնաւորաց, որպէս գրէ Մարինոս Սանուտոյ Լատին։ Եւ 'ի սմին ժամանակի Պետրոս Թագաւորն Կիպրոսի սպան զեղբայր իւր (1268)։ Իսկ ինքն Փնտուգտար մեռաւ 'ի Դամասկոս 'ի Թուին հիճրեթի ՀՀ• (1271), եւ յաջորդեաց զթագն Ղալաւուն, որ արտաքսեաց զքրիստոնեայս 'ի տեղւոջէ 'ի տեղի։

Մէլիք Մանսուր Սէյֆէտտին որդի Ղալաւունի 'ի Գալէոն ցեղէ, մէմլուք գնեալ 1000 դինարի՝ ամիրածու 'ի գահն եգիպտական 'ի Թուին հիճրեթի ՀՎՀ (1277)։ Սա արշաւեաց բազմութեամբ զօրաց յԱսորիս, պաշարեալ զԹարապուլուս հաս գնա, և զօրք նորին անգթաբար կոտորեցին զբնակիչսն չնայեալ 'ի ծերս և 'ի տղայս։ Նորոգեաց ընդ ձեղուն Ագարացիս մզկիթն յերուսաղէմ։ Իսա զՊրաղմայիս 'ի ձեռաց Լատինաց եւ 'ի սուր Եհան զբնակիչս նորին։ Իսկ Մարինոս Լատին կրօնաւորն այսպէս պատմէ զառումն քաղաքին։ «Զօրք Լատինաց Ժողովեալ էին 'ի Պաղեմայիս, ընդ որս էին և զինուորք Հայոց, Պատրիարգն երուսաղէմի, հիւրընկալ առեալք Ս. Յովհաննու, և այլք։ Քրիստոնեայք ասէ՝ Թողեալ զարտաքին թշնամիս իւրեանց, աղմկեալ և խառնեալ 'ի կռիւս՝ կոտորէին զիմեանս։ Իսկ Սուլթանն եգիպտոսի և Դամասկոսի իմացեալ զերկպառակութիւնս նոցին, եկ 'ի վերայ նոցա 16,000 հետեւակօք և 60 000 հեծելովք, և պաշարեալ զքաղաքն առ գնա, և մատեալ զքրիստոնեայս 'ի սուր և 'ի հուր։ և զրազումս արար նոցա զքրիստոնեայս 'ի սուր և 'ի հուր։ և զրազումս արար Յովամոյն։ այրեաց զվանս հանդերձ կրօնաւորօք։ Իրրեւ մտին 'ի վանս կուսանաց, առնել և անդ ըստ կամաց իւրեանց, տեսին զկուսանս թաթաւեալ յարեան, զի խրատիւք և յորդորանօք Աբբասուհւոյ իւրեանց հաստեալ էին զուներն, զի մի անկցին 'ի ձեռս թշնամեաց և խայտառակեսցին։ զայն տեսեալ Արաբացւոց, զայրացան յոյժ և սուր եդեալ կոտորեցին զամենեսեան առ հասարակ, և կորեան եդեալ կոտորեցին զամենեսեան առ հասարակ, և կորեան յաւուր յոյնմիկ 'ի քրիստոնէից ոգիք իրրեւ 60,000»։ Լատին պատմիչն կարի դանկատանօք խօսի զաղգէն իւրմէ, և անպատրուակ կշտամբէ զնպերիւլի և զանուղղայ գործս նոցին։ զի անօրէնութեամբ ապականեցին ասէ՝ զՍ. երկիրն, և առելութեամբ յարեան 'ի վերայ միմեանց, եւ տեղի եւուն թշնամեաց 'ի կորուստ անձանց։ կորուսին 15 քա-

զաքս, և խոպան ընդ յայնոսիկ կողմանց։ Իսկ Մէլիք Մանսուր տիրեաց նաեւ Սիդոնի եւ Պերութի. մարտ ետ առատուքեամբ ընդ Տիւրոս, և չառ զբովանդակ ծովեզերեայ քաղաքս և զամրոցս, եւ բնաջինջ եթարձ զիշխանութիւնս Լատինաց յայնոսիկ կողմանց (1291), յետ տիրելոյ նոցա ամս իբր 200, կամ ըստ այլոց 192։ Եւ ի սմին ժամանակի Լատին կրօնաւորք արտաքսեցան ի Սիոնէ, իսկ ինքն Մէլիք Մանսուր յետ առման Հռոմկլայ սպանաւ ի Գահիրէ քաղաքի, ի թուին Հիճրէթի ٦٩٣(*)։

Յաւուրս Ստեփաննոսի կաթուղիկոսի որ նստէր ի Հռոմկլայ, պատահեցաւ դարձեալ այլայլութիւն Զատկի, որ սակ ծառազաւոիկ, յորմէ ծագեցաւ վէճ ի մէջ Հայոց և Յունաց յերուսաղէմ. Յոյնք արարին զՋատիկն միով եօթնեկաւ յառաջ, ի Մաղկազարդին Հայոց. իսկ Հայք յետոյ ըստ սովորութեան իւրեանց։ Բայց յաչխարին Կիլիկիոյ ոչնիցին զպահքն ընդ Յունաց։ Տես ի Գէդ- Ասիքանոսէ Օշեանց. Գիշ. Բ. 194։ (1292) և Հ. Մ. Զամչեան. Հայ. Դ. 286։

(*) Զայս ամենայն տեղեկութիւնս եւ ասերանաց ի մէջ բերի վաւերամատենագրաց աշակերտ գոյն երջանից ի յիշատակարանի մեհենութեան Ծննդոց Փիլոնի Եբրայեցւոյ, զոր օրինակեցի ասէ ի վաչելատէ և ի մխիթարութիւն հոգւոյ և մանուկ ի ծոց մնուցչին իմոյ աստուածաբնակ տաճարին Ս. Աստուածածնի և Ս. Փրկչի, յանապատիս Արմենի։ Եւ յետ այլոց բանից ասէ, և վասն անհանդուրժելի վերզմանցս և խուճապ տագնապիս, որ էհաս ի վերայ մեր .... զի յաչխարհին ըզյոյսն եւթի և զպատրաստ մասն երկրիս մերոյ ի թուականին Ձխէ. 747. (1298). յորում եղեւ զքաւ գրոցս, և բազումք անկան ի սուր սուսերի և ի գերութիւն վարեցան .... Արդ զայսպիսի չարաչուկ և բազմադող ծանր պղտի առաւօտս, ես վաւերամ սակաւագոյն պրպտիս մարթեցի ճանել զիշատառութիւնս .... Եւ յետ այլոց բանից յիշէ զկնի գնաւոր հայրն և զուսուցիչն իւր զՍտեփաննոս գոյն երջանից։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Աչքառանք Թաթարաց ի Պաղեստին. Առումն Երուսաղէմի։ Հետումն Բ. արքայ Հայոց. Շինութիւնք նորին։ Մեկնիք նոցա։ Աւանն Ռեմկ և կոթող նորին։ Արտաքսեալ ազանագրութիւնք։

ՅԱՂԱԳՍ գալստեան Թաթարաց դրի Յոյն Արարացի պատմիչն, յորմէ առեալ դնեմք աստանօր. «Պատն Հռոմայ Նիկողոս Դ. գրեաց առ ամենայն թագաւորս առնուլ զէն քննդէմ այլազգեաց, և արտաքսել զնոսա յերուսաղէմէ, եւ ազատել զՍ. Տեղիս ի ձեռաց նոցին. գրեաց նաեւ առ կայսրն Յունաց ի Կոստանդինուպոլիս, եւ առ երկրորդ նորա, որ նստէր ի Տրապիզոն. առ թագաւորն Հայոց Հեթում Բ. առ թագաւորս Կիպրոսի, և Վրաց, և առ Խագանն Մողոլաց Ղազան Խան որդի Արղուն Խանի։ Բայց ոչ ոք ի քրիստոնեայ թագաւորաց արար բանից նորա պատասխանի, իբրեւ եհաս պատգամաւորն առ Ղազան Խան և մատոյց առնա զթուղթ Պապին, յորում խընդրեր ազատել զերուսաղէմ ի ձեռաց Սուլթանացն Եգիպտոսի, ուրախ եղեւ յոյժ ընդ այսպիսի խնդիրս նորին։ Իսկ եւ իսկ եհան հրաման զուտարել զօրաց ի բանակս, միաբանեաց ընդ իւր զթագաւորս Հայոց, Վրաց և Կիպրոսի, և անհամար բազմութեամբ հասին ի կողմանս եմիս քաղաքին, այն է Հոմս, ուր հարեալ էր զբանակ իւր Սուլթանն Եգիպտոսի։ Եւ ի խմբել մարտին, պարտեցաւ Սուլթանն, և կոտորեցան բազումք ի զօրաց նորին, և այլքն եղեն փախստական։ Անձնատուր եղեն Թաթարաց Բերիա և Դամասկոս. և անտի դիմեալ հասին յերուսաղէմ. տեսեալ բնակչաց քաղաքին զրաղմութիւնս նոցա, զահի հարան յոյժ, և առանց բանս ինչ զմտաւ ածելոյ բացին առաջի նոցա զդրունս քաղաքին, և Ղազան Խան և որք ընդ նմա մտին փառաւք ի ներքս, և գնացին դէպ ուղիղ յեկեղեցին Ս. Յարութեան և երկիրպագին Գերեզմանին Քրիստոսի ընդ այլ ուխտաւորս քրիստոնէից։ Զկատարմունքն երուսաղէմի յանձն արար Խագանն թագաւորին Հայոց Հեթմոյ, որ եւ Մարբինոս Լատին կոչէ զնա զօրա-

վար Հայոց։ Ցետ այնորիկ առաքեաց Ղազան դեսպանս հանդերձ Թղթով առ Պապն Հռոմայ եւ առ Թագաւորս արեւմտեան, յորում յետ յայտ առնելոյ զմտանել իւր յերուսաղէմ, և տիրել երկրին հրաւիրէր զնոսա գալ և միաբանիլ ընդ իւր ընդդէմ Սուլթանին եգիպտոսի։ Թէպէտ և ուրախ եղեն յոյժ Պապն և Թագաւորքն ընդ այնպիսի յաղթութիւնս նորին և միաբանեալ Թագաւորացն, բայց ոչ ոք ՚ի նոցանէ յօժարեցաւ ելանել պատերազմաւ ընդդէմ այլազգեաց (1300)։

Եւ ՚ի սմին ժամանակի ապատամբեալ եգիպտացւոց լսպանին զՍուլթանն իւրեանց զՄալիլ, եւ նախարարքն զերծուխիւնն, զի որդի նորին տղայ հասակաւ վախճեցեալ ամրացաւ ՚ի քաղաքն Քերէք, և ՚ի հասանիլ յարքունս եմուտ յեգիպտոս, և նստաւ յաթոռ իշխանութեան հօր իւրոյ։

Եւ մինչդեռ էր Ղազան յերուսաղէմ, եհաս առ նա լուր թէ ապստամբեցան Պարսիկք· աճապարեալ նորա եկ ՚ի ճանապարհ, և հասեալ ՚ի Դամասկոս հիւանդացաւ, ուր և մեռաւ իսկ· իբրեւ տարածեցաւ գոյժ մահուան նորին, Թագաւորն Հայոց եկ յերուսաղէմ և գնաց յերկիր իւր։ Տե՛ս նաե ՚ի Պատմ՚ին Հ· Մ· Զ՚ին Հատ· Գ· 208։

Ի հեռանալ արքային Հեթմոյ բաղմութեամբ զօրաց ընդ Թաթարս յաշխարհն Կիլիկիոյ, այլազգիք ոմանք պարսոյ դառեալ զաշխարհն և դիպող ժամ, բազմութեամբ զօրաց արշաւեցին ՚ի սահմանս նորա, և հրոյ ճարակ առեալ այրեցին զքաղաքն Լամբրուն եւ զՂրջկայս նորին (1300), որպէս ասացաք ՚ի յիշատակարանի Ճառընտրի մերոյ որ առ մեզ, գրեալ ՚ի Սուքիասնոսէ, և նա ինքն Գրիչն ժամանակակից և ականատես ասէ· Հազիւ կարացաք զերծանիլ օգնութեամբն Աստուծոյ, և կամք այժմ յերկրման և ՚ի սփռանման։ Վասնորոյ այս արկածք տարաղէպք մեծաւ մասամբ վշտացոյց զսիրտ արքային Հեթմոյ, յոյր սակս աճապարեաց մեկնիլ ՚ի սահմանացն Երուսաղէմի՝ առեալ ընդ իւր զզօրս իւր։ Իսկ քաղաքն Լամբրուն է առ ընդերս Համանուն դղեկին յարեւմուտս կոյս, յորում երեւի ցարդ մնացուած ինչ գերեզմանատան Հայոց, իսկ այժմ գիւղ կամ ձմերանոց տեղացի սյլազգեաց։

Ի միջոցին յորում եկաց արքայն Հայոց Հեթում Բ· յերուսաղէմ, չինեաց սեղան ՚ի տաճարին Ս· Աստուածածնի յարեւելս կոյս· յոր յորմն գերեզմանին, թէպէտ գրէ Հաննա վարդապետ ՚ի Պատմութեան իւրում, եր՚ե 297· այլ առանց թուականի և առանց որոշելոյ թէ ո՞ր Հեթում էր, եւ Հ· Մ· Զ՚ին Հատ· Գ· 196· տայ զչինութիւն սեղանոյն այնորիկ Հեթմոյ առաջնոյ առեալ ՚ի սոյն պատմագրէ, այլ որ և իցէ, սեղանն այն իբրեւ յիշատակ նախնեաց մերոց է ՚ի ձեռս մինչեւ ցայսօր աղգին Հայոց։ Նոյնպէս ՚ի տաճարին Ս· Ծարուխեան ՚ի կողմն սնարից Ս· Գերեզմանին, ՚ի մէջ հինգերորդ կամարի, (նախ քան զհրդեհն) չինեալ է Հեթում Բ· սեղան մի անծածկելի, որ յետոյ տուեալ են զայն Հայք Գալթոց, եւ փոխանակ նորա առեալ են եկեղեցի մի յեգիպտոս· Տե՛ս ՚ի Գէր՚ն Հան՚ն Վրդ՚պետէ՚ն· 233։ Իսկ զինի ժամանակաց իշխանք նոցին կամ կղերք ծածկեալ և ձեւացուցեալ զայն մատուռ իմն և է ցարդ ՚ի ձեռս նոցա (1)։

Ի մեկնիլ Թաթարաց ՚ի Պաղեստինոյ՝ անկաւ վերատին աշխարհն ընդ իշխանութեամբ Սուլթանացն եգիպտոսի, ընդ որս եւ երուսաղէմ· Մելիք Նասր էառ զնաչավանքն արտաքոյ երուսաղէմի, որ ՚ի սոյն ժամանակի էր ՚ի ձեռս աղգին Վրաց, և կարգեաց զսյն մզկիթ այլազգեաց· իբրեւ լուան զայս Թագաւորն Վրաց եւ կայսրն Ճուճաց, առաքեցին պատգամաւորս հանդերձ Թղթովք և մեծամեծ ընծայիւք, և խնդրեցին դարձուցանել զսյն առ աղգն Վրաց· ՚ի հասանիլ պատգամաւորացն յեգիպտոս, զիջաւ Նասր յաղաչանս նոցա, և առաքեաց զնոսա յերուսաղէմ Թղթով առ փոխանորդն իւր, եւ նորա ընկալեալ զհրամանն յանձնեաց անդրէն զվանս ՚ի ձեռս պատգամաւորաց (1305)։

Սոյն այս Մելիք Նասր հռչակաւոր ՚ի Սուլթանս եգիպ-

---

(1) Եթէ սոյգ է բան Հաննային, ապաքէն մեծ սխալմունք է, կորուսանել զայնպիսի յիշատակ առն մեծի և Թագաւորի, և փոխարինել եկեղեցին եգիպտոսի այժմ չէ ՚ի մէջ, և ոչ յիշատակ նորա։

Այս արկածք դիպեալ յաւուրս Պատրիարգութեան Սարգսի Ա· որպէս գրէ ՚ի յիշատակարանս Հարանց վերոյ 1311։

տոսի և պատմարան, ամփարձաւ 'ի գահն իշխանութեան երրորդ անգամ։ Ղեւաց բազմագիմի պատերազմս ընդդէմ Թաթարաց, ետ արշաւանս 'ի Կիլիկիա եւ հասս մինչեւ 'ի Սիս քաղաք, էառ զմելիտինէ Հայոց, արար նորոգութիւն 'ի մզկիթն Օմարայ, որպէս յայտ առնեն արձանագրութիւնք իւրաքանչիւր տեղւոյ։ Շինեաց զքրմուքն սկսեալ յաւազանաց անտի Սողոմոնի կոչեցեալ, ուր են աղբիւր վակեալ և աղբիւր կնքեալ, և զաղբիւրն 'ի վերայ աւազանին, որ կոչի Պ-ր-ի-ե-ն Ե-ա-մ-ն, արտաքոյ երուսաղէմի։ Եւ կացեալ յիշխանութեան ընդ ամենայն ամս 45 մեռաւ 'ի Թուին Հիճրէթի, ՀԽՌ (1340)։

Ռեմղէ քաղաք կեդրոն Պաղեստինոյ, շինեալ 'ի բարեբեր գաշտին Սարօնի, 'ի հնուման պարապեալ էր, ունելով դրունս 12· ամրոց՝ 4 երեւելի վաճառանոց եւ այլ երեւելի շինուածք, օթարան հսկայից Քանանացւոց 'ի ժամանակս որդւոցն Իսրայելի· ունէր շուրջանակի պարտէզս պտղատու ծառոց· Լատինք տիրեցին սմա ամս իբր 100։ Սալահատտին կործանեաց զամրոցն, աւերեաց զքաղաքն։ Եւ յետ այնորիկ կորոյս Ռեմղէ զառաջին փառս և զվայելչութիւնն իւր, և հազիւ ղերծաւ քառորդ մասն և այն եւս անչուք։ Կոթողն արտաքոյ աւանին յարեւմուտս, 'ի քրիստոնէից ասի լինիլ աշտարակ քառասուն մանկանց, որք նահատակեցան 'ի Սեբաստիա, եւ 'ի հնուման էր անդ եկեղեցի։ Իսկ Արաբացիք կոչեն զնա Ճ-մ-ե Ե-ա-մ-ե։ Հեղինակ շինութեանն ասի լինիլ Սիւլէյման Ապտիւլ Մէլիք, մին 'ի յաջորդաց Օմար Խաթթապա 'ի Թուին Հիճրէթի ՃԶ։ Զկնի ժամանակաց նորոգեաց զմզկիթն Իլիաս որդի Ապտուլլահի, մին 'ի նախարարաց Սալահատտինի, ՕՃԶ։ Մէլիք Զահր Պիպարս, յետ առնն Ճօպպէի՝ նորոգեաց զգմբէթն և զայլ կարեւոր տեղիս։ Եւ Սուլթան Նասր Մհհմէտ որդի Ղալաւունի, շինեաց մինարէ չնաչխարհիկ զարմանալի մեծութեամբ և բարձրութեամբ, որոյ շինութիւնն աւարտեցաւ 'ի Թուին Հիճրէթի ՈՒՀ (1322)։ Երկար Արաբացի արձանագրութիւնն երեւի ցարդ 'ի վերայ դրան նորին և կոթողն կանգուն· իսկ մզկիթն աւերակ, զորոց արձանագրութիւնս զետեղեմք աստանօր։

صورة التاريخ الموضوع على منارة الجامع الابيض بالرمله

بسم الله الرحمن الرحيم انما يعمر مساجد الله من آمن بالله واليوم الاخر واقام الصلاة واتى الزكاة ولم يخشى الا الله امر بانشاء هذه المنارة المباركة مولانا السلطان الملك الناصر العالم الغازى المجاهد المرابط المثاغر سلطان الاسلام والمسلمين محيي العدل فى العالمين قاتل الكفرة والمشركين ملك العرب والعجم مالك رقاب الامم حافظ حدود الله ناصر الدنيا والدين ابو الفتح محمد بن مولانا السلطان الشهيد الملك المنصور سيف الدنيا والدين قلاون الصالحى قسيم امير المؤمنين ادام الله ايامه وشرف بالنصر الويته واعلامه وكان الفراغ من بناها فى نصف شهر شعبان سنة ثمانية عشر وسبعمايه

صورة التاريخ الذى كان على القبة التى باب الجامع الابيض بالرمله

بسم الله الرحمن الرحيم انما يعمر مساجد الله من آمن بالله واليوم الاخر ولما اراد الله جل جلاله انفاذ حكمه لما سبق فى علمه اذن لعبده الفقير المتوكل على الله الانيب فى اموره اليه المجاهد فى سبيل الله الناصر لدين نبيه وحبيبه وخليله السلطان الاجل الكبير المجاهد المرابط المثاغر الغازى ركن الدنيا والدين سلطان الاسلام والمسلمين بيبرص بن عبد الله قسيم امير المؤمنين منع الله بقاه فخرخ بجيشه المنصور فى العاشر من شهر رجب الفرد من الديار المصريه عاقداً نية الجهاد غازياً اهل الشرك والعناد فنزل بثغر يافه بكرة النهار فتحها باذن الله فى ثالث ساعه منه ثم امر بأنشا هذه القبة فوق المنارة المباركة وهذا الباب على هذا الجامع

Դիոսպօլիս, այն է Լիւթիա, զորմէ բանք եղեն բազում անգամ յընթացս գործոյս, է 'ի հիւսիսակողմն Ռեմղէ աւանի· յառաջագոյն էր քաղաք մեծ շահավաճառ, ի[ջ]եւանատեղի կարաւանաց եգիպտոսի և Դամասկոսի· կոր-

ծանեաց զսա Մէլիք Սալահատտին ընդ Ռեմլէ քաղաքին, եւ զհոյակապ եկեղեցին Ս. Գէորգայ զօրավարին. և զմի մասն նորին կարգեաց 'ի մզկիթ այլազգեաց, և մնաց այն պէս կիսաւեր 'ի դարս և 'ի ժամանակս. և 'ի վերջին յաւուրս մեր Ցոյնք զկնի բազմադիմի վիճմանց դատաստանաց ընդ Լատինս՝ հանեալ հրաման յՕսմանեան դրանէ տիրեցին աւերակ մասին եկեղեցւոյն այնորիկ, եւ նորոգեալ ուղղեցին անդ սէղան պատարագի (1870)։

Գ Լ Ո Ւ Խ ԻԹ.

Պարգիս Պատրիարգ Երուսաղէմի։ Դէսպան Վրաց։ Խնդիր վանաց Ս. Յակոբայ։ Վիճք և Լատինք։ Տէր Յովսէփ յատեանս Եգիպտոսի, Հրովարտակ Սուլթանին։

Ի ՆՋԻ ցայս վայր ըստ կարի մերում գրեցաք փոքր 'ի շատէ զարշաւանաց եւ պատերազմաց զանազան ցեղից և ազգաց, զորս մղեցին 'ի Պաղեստին և 'ի սահմանս նորա, եւ բազում անգամ արեամբ ներկեցին զքարինս եւ զհողս երուսաղէմի։ Այս դաժանութիւնք և խժդժութիւնք առաւել եւս սաստկացան 'ի դարս Քրիստոնէութեան. աւարառութիւնք յափշտակութիւնք գերութիւնք եւ սպանութիւնք, և այլ սոցին նման տառապանք և հալածումն, զորս կրեցին քրիստոնեայք, աւերեցան և այլայլեցան Ս. տեղիքն, և կորուսին զառաջին պայծառութիւնս և գովելութիւնս իւրեանց. կործանեցան և եղծան 'ի բազմավիշտ վտանգս վանօրայք եւ եկեղեցիք, եւ բազումք եւս փոխեցան 'ի մզկիթ և յայլ իրս։ Ասպանացաւ երկիրն եւ կորոյս զառաջին բարեբերութիւն իւր յերեսաց սպասատակութեանց, զոր պարտաւոր էր քրտանց մշակին։ Այլ դարձուածոյ զրանս մեր յազգային դէպս, որք միանգամ պատահեցան 'ի ժամանակս յայսոսիկ յերուսաղէմ 'ի կրօնաւորս և 'ի վանորայս Հայոց 'ի դաւաճանութենէ եւ 'ի նենդութենէ օտար ազգաց քրիստոնեայ անուանելոց, որք

տառապել քան զոյլազգիսն դատնացուցին և տագնապեցին զեղկելիսն զայնոսիկ, կամեցեալ բռնազրօսել զդարաւոր զիրաւունս նոցա. որպէս յայտ առնեն զայս ամենայն զանազան հրովարտակք Սուլթանացն Եգիպտոսի և դատաստանական գրեանք, գրեալ 'ի բարբառ Արաբացւոց, թէպէտ բազումք 'ի նոցանէ բարձեալ 'ի միջոյ, և ամանք եւս եղծեալ և պակասեալ, այլ զոր միանգամ գտաք անթերի յարկեալս գրոց Ս. Աթոռոյս, զնոսին և եթ դնեմք 'ի կարգի պատմութեանս։

Զկնի ժողովոյն, որք գումարեցան 'ի Սիս և յԱտանա յաւուրս կաթուղիկոսութեանց Գրիգորի Անաւարզեցւոյ և Կոստանդեայ, Լեւոնի և Օշնի արքայից (1307—1316) յազագս փոփոխութեան ծխից եկեղեցւոյն Հայոց, զոր բազում 'ի Հարց արեւելից ոչ ընկալան զժողովն և զսահմանս նորա։ Իսկ Սարգիս եպիսկոպոս երուսաղէմի՝ մերժեալ իսպառ զկրաման Օշնի արքային և Կոստանդեայ կաթուղիկոսի, արդել զիւրան 'ի նոցանէ, և յինքն յանկուցեալ զամանս յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց, էառ հրովարտակ յԱմիրայէն Եգիպտոսի՝ իշխել 'ի վերայ իւրոցն անկաս 'ի կաթուղիկոսէն եւ յարքայէ. եւ եառ կոչել զինքն Պատրիարգ Երուսաղէմի, եւ այս եղեւ. (1311)։ Հ. Մ. Զամբէան. Հաթ. Գ. Եր. 313։

Առաւ սկսանի սովորութիւն Պատրիարգացն Երուսաղէմի դրոշմել կնիք կարմրագոյն 'ի կոնդակս և 'ի նամակսն իւրեանց, ըստ արժանի պատրիարքական պատուոյ և անուան. զի մինչեւ ցայն կաթուղիկոսք Սսոյ զոսկիազօծն Սրբոյ եպիսկոպոսի և եթ յօժարէին տալ նոցա, իսկ Սարգիս ընդ պատրիարգական անկախութեան՝ էառ եւ զայս իշխանութիւն, զի որպէս թագաւորացն Հայոց կիլիկեայ, նոյնպէս և Սուլթանաց Եգիպտոսի սովորութիւն լեալ էր դրոշմել կնիք կարմրագոյն 'ի հրովարտակս իւրեանց, որ պէս յորոց ոմանք պահին ցարդ աստ 'ի վանս։ Զի թէպէտ և ոմանք աւարկեն թէ՝ սովորութիւնն այն կաց միայն յերուսաղէմ յաւուրց անտի եղիազար կաթուղիկոսի. սակայն Դաւիթ, Անդրէաս և Գրիգոր Պարոն Տէր կոչեցեալ Պատրիարգաց կարմրագոյն կնիքն դրոշմեալ 'ի թուղթս տեսանի ցարդ աստ 'ի վանս, որք երիցագոյն են ժամա-

նակաւ քան զեղխազար, եւ զայս առաջարկութիւն անխախտ պահեալ Պատրիարքաց Ս. Աթոռոյս մեւէ մինչեւ ցայսօր. իսկ պատրիարքական Պերաթն Սարգսի ընդ այլ բազմաթիւ հրամարտակաց չերեւի այժմ՝ ի միջի։

Մինչդեռ Կաթուղիկոսք և Թագաւորք Հայոց յարեալ՝ ի Պալական եկեղեցին եւ խարեալ իսկ՝ ի մեռաի խոստմանց պաշտօնէից նորին, որոց բազմիցս զիարձ առեալ էին, եւ տակաւին պատուար ամրութեան զնէին զնոսա խարխլեալ քաղաքական վիճակի իւրեանց, յուղէին տարտապարտ կրօնական վէճ և խնդիրս, և զբաղեալ էին զուտարել ժողովս ոչ՝ ի շինութիւն, այլ ի երկպառակութիւն և՝ ի խռովութիւն եկեղեցւոյ և պաշտօնէից նորին. եւ՝ ի զարթուցանել զօտար թշնամիս՝ ի վերայ ինքեանց յիշ-ծուն եւ յատկանութիւն աշխարհին և՝ ի կորուստ անձանց, որպէս և եղեւ իսկ։ Ասի առիթ առեալ թերեւս Թագաւորն Վրաց, առաքեաց դեսպան առ Սուլթանն Եգիպտոսի Մէլիք Եաւսուֆ, եւ խնդրեաց՝ ի նմանէ առնուլ՝ ի ձեռաց Հայոց զվանս Ս. Յակոբայ յերուսաղէմ, և տալ Վրաց. քանզի դիտէր թէ Թագաւորն Օչին վասն արհամարհանաց իւրոց, չէնի ձեռնտու Սարգսի։ Ազգ եղեւ Պատրիարգին Հայոց դաւաճանութիւնն Վրաց և յարձակումն հայրենի վիճակին իւրոց, որոյ վասն աճապարեալ էառ հանդերձիր բազմակնիք՝ ի դաստարկ քաղաքին և յերեւելի այլազգեաց, եւ վճիռս՝ ի դէնպետաց, էառ ընդ իւր նաեւ զառաջին հրամարտակս, զորս տուեալ էին Սուլթանք Եգիպտոսի և նոքօք վտեղայ՝ ի Դահիրէ, եւ յանդգնեան լեալ մեծի առնէն, առաջի արար նոցա զգրեանս, և յայտնի եցոյց զիրաւունս ազգին իւրոց։ Այս եհարց Սուլթանն զդեսպանն, Թէ ունի՞ք ըստ օրինակի Հայոց զայնպիսի գրեանս եւ զվաւերս հրամարտակս՝ ի հաստատութիւն իրաւանց ձերոց։ Եւ պատասխանի դեսպանն Թէ, չունիմք. այլ միայն խնդրէ Թագաւորն մեր առնուլ՝ ի ձեռաց Հայոց զՍ. Յակոբ, և տալ Վրաց։ Զուռնիմք ասէ Սուլթանն զայդպիսի օրինս յաշխարհի մերում առանց հաստատուն գրոց բռնի կորզել զիրաւունս ուրուք և տալ այլոց. զի յայտնապէս տեսանի՝ ի վաւերական գիրս՝ ի ձեռս Հայոց, Թէ վանքն այն սեփհական կա-

ըստած է նոցա, եւ զիա՞րդ հնար իցէ յանիրաւի առնուլ զայն՝ ի ձեռաց նոցա և տալ ձեզ. Եւ՝ ի լուել գեսպանին, խնդրեաց Սարգիս եպիսկոպոս՝ ի Սուլթանէն, վերստին հրամարտակաւ հաստատել զեպիսկանութիւն ազգին իւրոց, զի մի՝ ի դարձին իւրում չերուսաղէմ նեղեսցեն վիրք զինքն և զիւրան։ Եւ նա կատարեաց զինդիր նորին՝ պատուիրելով գործակալաց իւրոց չնեղել ումեք լինել ձեռնամուխ՝ ի վիճակն Հայոց, զոր ժառանգեալ են՝ ի վաղ ժամանակաց՝ ի Թուին Հիճրեթի ՈՒՒ (1312), եւ ասպա դարձ արար Սարգիս Պատրիարգ՝ ի վիճակն իւր յերուսաղէմ։

Գրի եւ այս՝ ի յիշատակարանս ինչ. «Ի Թագաւորութեան Հայոց, ՝ի դառն և յանբարի ժամանակիս, որ լի էր ազգի ազգի վշտօք և նեղութեամբ, զի ազգն Իսմայելեան մաշէին՝ ի սուր և՝ ի գերութիւն զբրիստոնեայս յամենայն տեղիս, առին զպայրաքաղաքն Հայոց զՄելտինէ և աւարի եառուն, և զառաքեալսն՝ ի սրոյ վարեցին՝ ի գերութիւն. և զայլ քաղաքս և զամրոցս հինն՝ ի վեր տապալեցին։ Եւ որ մեծն է ամենայն վշտաց եւ ողեւոից՝ տասից՝ զի այսօր 128 ամ է որ Ս. Բաղաքս երուսաղէմ և ամենայն տեղիք անօրինականաց Քրիստոսի, է ոտնակոխ և՝ ի մեծի անարգութեան՝ ի տյն ազգէ, և չէ հնար ումեք զայս ընդ գրով արկանել։ (1316)։

Ցետ վախճանի Սարգսի Եպիսկոպոսի և յաջորդելոյ զնոյն առն Աստուածատուրոյ, և անցանելոյ եօթն ամաց, վերըստին չարժեցին Վիրք զինդիրն. Եւ զի յառաջին նաւադի չկարացեալ չահել ինչ ձեռն ունայն ելին յաւետնէ, իսկ՝ ի սմին ժամանակի մխաւանեցին ընդ իւրեանս զվասինս, և՝ ի միասին թախանձէին զՍուլթանն, ոչ միայն առնուլ զՍ. Յակոբ, այլ եւ զԲողգոթայն տեղի խաչելութեանն Քրիստոսի, ՝ի տաճարին Ս. Յարութեան։ Վասն ընդ փոյթ հասին յականջս մխաւանացն Հայոց ամբաստանութիւնք և խնդիրք երկուց ազգաց. նմին իրի վտեղացեալ առաքեցին յեգիպտոս զՏէր Սահակ և զՏէր Յովսէփ, տուեալ՝ ի ձեռս գկարեւոր գրեանս։ Հասեալ սոցա անդ, գինի աւուրց ինչ, ելին յատեանն Սուլթանին բազմութեամբ Հայ ժողովրդոց։ Եւ յետ ընթեռնելոյ գվաւերական գրեանս, և

յայանի կացուցանելոյ զիրաւունս իւրեանց, բազում բարձին յառնելի անդ զանիրաւ պահանջմանէ Վրաց և Լատինաց, որք առիթ եղեն այնքան ծախուց և վնասուց։ Եւ յետ աւարտելոյ գաղին, Հայք վերստին առին հրովարտակ ՚ի Սուլթանէն, թէ վասն սեփհականութեան Ս. Յակոբայ և թէ Գողգոթային, ըստ առաջնոյն մնալ ՚ի ժառանգութեան Հայոց։

Արդ զթարգմանութիւն հրովարտակին, զոր առեալ է Մէլիք Զահր Պերգուզ, արժան համարիմ դնել առաջիկ, որ ունի օրինակ զայս։

Զինի ողջունի պատուոյ եւ մեծարանաց։ Արդ յայտնի է ձեզ (իմա կուսակալն կամ փոխանորդն), որպէս և ինձ զոր ինչ միանգամ գրեալ եմ յառաջին հրովարտակն, և առաքեալ առ ձեզ մի զկնի միոյ, որք են այժմ ՚ի ձեռս Հայոց, Լատինաց և Վրաց, յորս բացայայտ ծանուցեալ են տեղիքն երբեմնի ՚ի ձեռս իւրաքանչիւր ազգաց, չհակառակել և չկռուիլ ընդ միմեանս սակս տեղոյ և եկեղեցւոյ։ զի Լատինք և Վիրք գան առ մեզ հրովարտակաւ և մուրհակաւ, նոյնպէս և Հայք հրովարտակաւ, մուրհակօք, վճռաւ չորից դիւանապետաց, և զօրաւոր հանրագրով, որոց վճիռ եւ զօրութիւն տեւէ յաւիտեանս, զի հաստատութեամբ և ճշմարտութեամբ վկայեն թէ՝ վանքն Ս. Յակոբայ, է սեփհական Հայոց, եւ ոչ այլոց։ Եւ յորժամ գայ ոք առ հանրագրութեամբ և հրովարտակաւ, զրեմ նմա հրովարտակ ըստ արտաքոյ նոցին։ Այժմ եկն ՚ի դուռս մեր դեսպան թագաւորին Վրաց, և յանդիման լինել նորա առնէի մերում, հրամայեցաք գրել հրովարտակ առաջի նորա, որպէս հրամայեցաք գրել առ Տէր Սէթ, (Թերևս իցէ Սահակ) և առ Տէր Յովսէփ, որք էին յաղթ Հայոց, սակս վանաց Ս. Յակոբայ, որպէս և ծանուցեալ իսկ էին մեզ, թէ անց բաւական ժամանակ և վանքն մեր մնաց ՚ի ներքոյ գաղի, եւ հասին առ մեզ մեծամեծ նեղութիւնք եւ վնասք։ Եւ մեք հաւանեալ գրեցաք առ մեծապատիւ կուսակալն զի կալցի իւրաքանչիւր ազգ զժառանգութիւն իւր։ և բնակեցին ՚ի տեղիս եւ յեկեղեցիս իւրեանց, զորս ունէին յառաջագոյն։ որպէս վկայեն այսմ մուրհակք և վճիռք գաղուորաց ՚ի ձեռս նոցա։

Եւ իւրաքանչիւր ազգ, զոր ինչ ունին միանգամ զտեղիս ՚ի տեղւոյ անտի, մնասցեն անխափան ՚ի ձեռս նոցա մինչեւ յաւիտեանս ժամանակաց, որպէս հրամայեալ են Աչքաթիեան Մէլիքքն՝ անխափան և հաստատուն մնասցեն առ նոսա, և մի հակառակեսցին ընդ միմեանս և մի թշնամանեսցէ մին զմիւսն վասն տեղոյ եթէ Լատին իցէ եթէ Հայ, և եթէ Վրացի։ և զոր ինչ միանգամ ունին ՚ի ձեռս իւրեանց ՚ի տեղւոյ անտի, բնակեսցին խաղաղութեամբ ՚ի տեղիս և յեկեղեցիս իւրեանց։ Լատինք յեկեղեցիս իւրեանց։ նոյնպէս և Վրացիք, որպէս վկայեն հրովարտակք տուեալ երկաքանչիւրոց յառաջին թագաւորաց, զորս ընդհանրութեամբ հաստատեալ են։ Զգոյշ լերուք չտալ գործել ընդդէմ իրաւանց եւ արդարութեան, մի յափշտակեսցէ ոք զիրաւունս այլոց, և մի հակառակեսցի մին ընդ միւսոյն սակս տեղոյ եւ ժառանգութեան։ Իսկ բնակիչն ՚ի տեղիս ՚ի տեղւոյն այնոցիկ, որք են վանք Ս. Յակոբայ և Գողգոթայ այլովքն հանդերձ, արդիւնեալ է և արդելիք զայլս յաղագս և յօտարաց։ զի բաց յայլոց, առանձեալ են նոքա մի միայն մեծապատիւ ազգին Հայոց։ Եւ արդ փոխ կալիք եւ մի իւիք զանց արասիք։ զի գործադրութիւն հրովարտակիս օրինակ բարւոյ լիցի այլոց, և յետ այնորիկ մնասցէ ՚ի ձեռս Հայոց։

Գրեցաւ հրովարտակս ձեռամբ հաճի Գասըմի, ՚ի Է ՁԷմաղիլ ամի ՎՒԹ (1319)։ Դաւիթ եպիսկոպոս Պատրիարգ Ս. Աթոռոյս վախճանեալ թաղի ՚ի գաւիթ տաճարին Ս. Յակոբայ, որոյ արձանագիրն երեւի ցարդ յաջակողմեան մասին (1321) յոտանաւոր բանս տապանագրին յիշատակին բառիդ «Երջանիկ և Ս. Հեղինակի»։ այլ թէ որոց իրաց իցէ լեալ հեղինակ, չէ յայտ։

ԳԼՈՒԽ Լ.

Հակառակութիւն Վրաց։ Որմն Ս. Յակոբայ։ Հարկահանք Եգիպտոսի։ Պահապանք Ս. Յարութեան։ Յրանչխկան կրօնաւորք։ Վանք Ս. Փրկչի։

Ի ԴԱՂԱՐԻՆ առաւ ինչ քաղաքական պատերազմաց, նորոգեցաւ կրօնական պատերազմն, և յայն յաւէտ յեկեղեցականս։ Հայք քանիցս անգամ լքին յեգիպտոս և ելին յատեանս Սուլթանոյ ի պաշտպանութիւն հայրենի սեփհականութեան իւրեանց, որպէս գրեցաք ի վեր անդր· այլ ոչ կարացին զերծանիլ ի հակառակութենէ ազգին Վրաց, զի հանապազ կագչին և կռուչին, և հարստահարէին իսկ զՀայս ի տաճարին Ս. Յարութեան· վնասէին առիթ մեծամեծ միաբանից և ուղտանաց, որպէս յայտ առնեն յետագայ բանք հրովարտակին, առեալ ի Մելիք Մէհեմմէտ զոր առեալ են Հայք ի նախատ նեղութեան իւրեանց, յորում յետ վերնագրին, ասէ· Մատոյց գիր աղաչանաց առ բարձրագոյն տէրանն մեր Սարգիս վարդապետն Հայոց, որ ինքն բնակի յերուսաղէմ ի տաճարին Ս. Յարութեան· և ազգն Վրաց բանացեալ ի վերոյ նորա տուեալ են նեղութիւնս եւ վնաս· եւ ապա պատուիրէ գործակալաց իւրոց թողուլ զազգն Հայոց ի նախնական վիճակի և ի սովորութեան իւրեանց, որպէս էին ի ժամանակին, յորում տիրեցին քաղաքին որոյ և պերեցին· արգելուլ զատարապատ նեղութիւնս եւ զանանելի հակառակութիւնս միմեանց, և մնալ տեղին այն ի ձեռս Հայոց յերուսաղէմ ի տաճարին Ս. Յարութեան ըստ առաջին սովորութեան, առանց այլայլելոյ և նուաղելոյ ի բարւոյն նոցա, ըստ որոմագրութեան հրովարտակաց առաջին թագաւորաց, տուեալ նոցա· եւ այժմ բարւոք ի միտ առեալ զիմաստս հրովարտակիս, զոր եաւ իբրեւ վճիռ գործադրելի, մի արասցեն հակառակ ինչ փոփոխութիւն առանց օրինաւոր մուրհակի· և ամենայն ոք հնազանդեսցի հրամանիս։ Ի ՝ի Շաբան ամսոյ ՈՂԵ (1334)։

Զկնի անցանելոյ ՅամանՅ այսմ հրովարտակի, քայքայեցան և անկան արտաքին որմն արեւմտեան վանացՍ. Յակոբայ· միաբանք ժամանակին իբրեւ ձեռն արկին զայն վերստին չինել և կանգնել, ընդ դէմ կացին այլազգիք քաղաքին, և ոչ եաւն թոյլ նոցա առնել զոր կամէին, որոյ վասն հարկ եղեւ միաբանից դիր աղաչանաց մատուցանել առ Սուլթանն և առնուլ հրաման վասն այնր, որպէս եւ արարին իսկ· բայց սակիզբն հրովարտակիս ի հնութենէ էր թերի։

Վարդապետք, քահանայք և սարկաւագունք երուսաղէմ մատուցին գիր աղաչանաց յատեանս մեր, յորում առէին՝ Թէ ունիմք վանս Ս. Յակոբ, ուր ժողովին ուխտաւորք և այլք ի քրիստոնեայ ազգէն Հայոց, այժմ կործանեալ է որմն նորին, յորմէ հանդիպեցաք դանր և մեծամեծ վնասուց յերեսաց դողոց և աւազակաց, և զչինութիւն նորին արգելին· Սուլթանն եւս Հրովարտակ ի ՝ի Շաբան ամսոյ, ՈՂ· (1339) և նոքա չինեցին զայն ըստ առաջին կերպի։

Հարկահանք Եգիպտոսի բռնացեալ ի վերայ վանօրէից, տագնապին զնոսա, խնդրելով հարկս և ցորեան· չհանդուրժեալ միաբանից ազգ արարին զնեղութիւնս իւրեանց առ ազգային Եգիպտոսի, և Մարիամ անուն կին ոմն, փութայ օգնել նոցա որոյ որդին Յակոբ սիրելի լեալ էր յաչս Սուլթանին, և առեալ Հրովարտակ ի Սուլթանէն, որ կոչի Մելիք Աշրաֆի Սէյֆի և առաքեաց յերուսաղէմ, յորում պատուիրէ դատաւորաց և գործակալաց, և ամենայն ումեք, որք միանգամ սեանձիցեն զհրովարտակն, դադարիլ ի բռնութենէ, չպահանջել հարկս եւ ցորեան ի քրիստոնէից բնակելոց ի վանս Ս. Յակոբայ· եւ չհնարել նորանոր սովորութիւնս և պրիսան· Վերջին հատուածք բանից մնալեալ էր և եղծեալ, որով և թուական պակասի։

Ի պատրիարքութեան երուսաղէմի Վասլի եպիսկոպոսի, այլազգի դռնապանք տաճարին Ս. Յարութեան պահանջէին հարկս ի ժողովրդոց եւ յեկեղեցականաց յելանելն և ի մտանելն նոցա յեկեղցին, Թէպէտ բազմից քանացին քրիստոնեայք բռնացեալ զայդ պիսի նեղութիւնս, սակայն

այլազգիք ոչ մատուցանէին ունկն բանից նոցա, որոյ վասն հարկ եղեւ Վասլի դիմել 'ի դուռն, և մատուցանել գիր աղաչանաց առ Մէլիք Մէհեմմէտ ապու Էլ Ֆադլ, և հրովարտակաւ առնել զրօնութիւնս այլազգաց. եւ նորա համեալ ընդ բանս նորա զրեաց առ զօրապետն և առ այլ գործակալս Պաղեստինոյ, բառնալ զայդպիսի նեղութիւնս 'ի քրիստոնէից, և չպահանջել տուրս 'ի դուռն Ս. Յարութեան կեսարիոպատից, 'ի վարդապետաց և 'ի ժողովրդոց, եւ պատուիրէ վարիլ ըստ մտաց առաջին հրովարտակին. ՎՀՉ (1341):

Մարինոս Լատին յառաջ բերէ 'ի պատմութիւն Ս. երկրին, Թէ միջնորդութեամբ Ռոպերթոս Թագաւորին Սիկիլիոյ առ Սուլթանս եգիպտոսի, վերստին զարձան Ֆրանչիսկեան կրօնաւորք յերուսաղէմ եւ բնակեցան 'ի վանս Սիոնի, (1313). Թէպէտ և ասէ, հալածեցան անտի ժամանակ առ ժամանակ, այլ վերստին ժողովեցան: Սակայն չեղեւ տեւական', կեսոյ եւս հալածեցան և տանջեցան խիստ, որպէս ունիմք յիշել 'ի կարգի բանիցս: Եւ Թէ չորս քահանայք նոցին նահատակեցան 'ի տաճարին Սողոմոնի, ուր քարոզէին զՔրիստոսեան, և մարմինք նոցա արկան 'ի հուր յայլազգեաց, (1331): Եւ Թէ 12 կրօնաւորք կոտորեցան 'ի վանս Սիոնի (1368): Սակայն այլք 'ի Լատին պատմագրաց, ասեն Թէ 1318 էն մինչեւ 1321 մի քանի նուաստ կրօնաւորք և Սարկաւագունք բնակէին յեկեղեցին Ս. Յարութեան, որ և նոքա զինի սուղ ժամանակի, ոչ միայն զՍ. Գերեզմանն Քրիստոսի, այլ նաեւ զՍ. Բաղաքն Թողեալ 'ի բաց գնացին: Միջնորդութիւնն Ռոպերթոս Թագաւորին, և զգարմ Ֆրանչիսկեան կրօնաւորաց դնէն յամի Տեառն 1342:

Սարդիս վարդապետ որդի Տմոխի գնեաց 'ի սմին ժամանակի տուն մի 'ի Թաղն Սիոնի, մերձ 'ի վանս Սուրբ Փրկչի՝ յայլազգեաց, և յետ տարւոյ միոյ դարձոյց զայն 'ի վերայ Կարապետ վարդապետ Պաւերիարքի, եւ ապա կտակաւ աւանդէ լինել կալուած վանացն Ս. Յակոբայ, և պատուիրէ չխոտել զկտակն և չվաճառել, այլ ոք լիցի եպիսկոպոս 'ի վանս Ս. Յակոբայ, այլ պահել և յանձնել զայն յաջորդին իւրոյ, որպէս յայտ առնէ զայս մուրհակ

դատարանի գրեալ 'ի վերոյ յիշատակիս, ոսկւոյ այժմ տեղին է անյայտ (1349):

Ի կենդանութեան Վասլի եպիսկոպոսի Գաբրիէլ վարդապետն ոմն, որ Թուի լինիլ միաբանորդ Պաւերիարքին, սկիզբն առաւ շինել և նորոգել զվանքն Ս. Փրկչի արտաքոյ քաղաքին երուսաղէմի մերձ 'ի վանս Սիոնի. զի յետ բնաց արշաւանաց եւ ապստամբութեանցն այլազգեաց քանդեալ և աւերեալ էր. զի թէպէտ եղեն ձեռնտուներ երբեմն չինել և նորոգել զայն, սակայն այլազգիք տեղւոյն խանդանեցին, որպէս ունիմք յառաջ բերել 'ի պատմականացն գրոց: Տեսեալ զայն մեծամեծացն այլազգեաց, մանաւանդ մելիքանդ գիմանականաց, խոստովեցին զքաղաքն և արարեալ ամբոխ մեծ, դիմեցին յառնան դատաւորին. խոստանան աղաղակեր Թէ՝ վանքն Հայոց, որ կոչի Բանա Ռիխտաէ՝ է չար և վնասակար տեղի հայհոյութեան և հնակառոյց օրինաց մերոց: Եւ զի յառաջ քան զայս ՎՀՕ (1305) բերին հրաման Հայք 'ի Մէլիք Մանսուր Հրամայ էատին Սալահիդին վասն շինութեան եկեղեցւոյն այնորիկ, այլ յայնժամ ոմանք 'ի բնակչաց քաղաքին գնացին յեգիպտոս, և ամիրատան լեալ ընդմանկ յայտ արարին զիշատակարութիւն նորին, և Սուլթանն առաքեաց քննիչս, և նոքա ծանուցին նմա Թէ՝ է վնասակար յոյժ, և իրրեւ սուրբ տապտառանի 'ի ձեռս քրիստոնէից. և Մէլիք Մանսուր հրովարտակաւ հրամայեաց քակել զվանքն եւ Թողուլ զայն յառաջին աւերակ վիճակի. որպէս և էր 'ի ժամանակի յաղթութեան, և անդիմաբար արշաւ զնաց. «Անէծք Աստուծոյ և մարգարէի նորին եղիցի 'ի վերայ այնորիկ, որ ասայ հրաման, կամ օգնեսցէ և կամ խնամ կալցի 'ի չինել և 'ի զարմուցանել զայն 'ի վիճակին առաջին, և եղիցին նմա ասսլք և Թշնամիք Աստուած և մարգարէ նորին, և յաւուրն դատաստանի ընդ չարագործս և ընդ ամբարիշտս համարեսցի. և յաւուրն յորում ասէ Աստուած ցԳեհէնն, Թէ էյա՞ր, ասացէ պատասխանի՝ ասկաբեն ոչ».

Իրրեւ լուաւ դատաւորն զմիաբանութիւնս նոցա, եւ քննեցաւ զՀրովարտակին զոր մատուցին առ նա, եւ կոչել զխոհանորդն Հայոց զԳաբրիէլ, և հրամայեաց նմա նկնալ եւ քակել, զոր միանգամ չինեալ էր եւ Թողուլ

զայն բուռ առաջին աւերակ վիճակին։ Թէպէտ Գաբրիէլ ոչ անսաց բանից դատաւորին, եւ ոչ յանձն առ քակել զչինուածն, ի մանաւանդ մատոյց զհրովարտակն զոր տուեալ էր Մէլէք Մալէհ Իսմայիլ յաւուրս իշխանութեան իւրոյ, սակս չինութեան վանացն այնոցիկ։ Եւ դատաւորն ընթերցաւ զայն, այլ ոչ ընկալաւ՝ և գրեաց զերկուս գիրս ամբաստանութեան, մին՝ ի դիմաց բնակչաց քաղաքին, և զերկրորդն՝ ի մեծամեծաց և ի դիւանականաց, ի ընթերց յերեւելեացն այլազգեաց զորս ասացն հաւատարիմ եւ խելահաս, եւ առաքեաց զնոսա յեգիպտոս հանդերձ քղխովք՝ եւ ի հասանիլ նոցա ի Գահիրէ, հանին զարձանագրութիւնս ի դիւանէ եւ զզատաճէն առաջին հրովարտակին, որ խափանէր զչինութիւնն զայն, եւ ապա պատմեցին յաւենիւ անդ, որպէս թէ յամաւթալ և ընդդէմ կացեալ են այլազգեաց քրիստոնեայք երկրին Պաղեստինոյ, և անցեալ զօրինօք և զսահմանօք մեծին Օմարայ։ Իսկ Սուլթանն լուեալ զայս ամենայն, կոչեաց զդպրապետսն՝ ի դիւանէ անտի, եւ հրամայեաց նմա գրել հրովարտակ, զի կործանեսցի վանքն այն եւ դարձցի՝ ի վիճակն առաջին եւ մնասցէ աւերակ, զի զզատաճկել քրիստոնէից մի եւս համարձակեսցեն անցանել զսահմանօք մեծին Օմարայ։ Առեալ պատգամաւորացն զհրովարտակն եւ զգեցեալ իւրաքանչիւր վերարկու պատուոյ, գարձան յերուսաղէմ։ Ժողովեցան այլազգիք խուռն բազմութեամբ՝ ի մեծամեծաց մինչեւ ցփոքրուն՝ ի սրահն մեծի Մզկիթին Օմարայ, ուր ընթերցան զհրովարտակն՝ ի լուր ամենեցուն։ Եւ ապա ելեալ անտի բազմութեամբ դիմեցին՝ ի վերայ Ս. Փրկչի վանացն, եւ քակեալ կործանեցին զայն բրկովք մինչեւ՝ ի հիմունս, և գարձեալ եդին զայն յաւեր և յապականութիւն։

Յետ այնորիկ կոչեաց դատաւորն զփոխանորդն Հայոց զԳաբրիէլ, և արդեալ զնա օրինօք դատաստանի և պատուոյ եւ չհակառակիլ մեւսանգամ վասն չինութեան վանացն, և գրեալ զդատաւճիռս զայս (հէօճճէթ) եւ՝ ի ձեռս նորա՝ ի ١ Շաբան ամսոյ ٧٥٥ (1353)՝ որ եւ ցարդ սպահեալ կայ՝ ի կարգս գրոց։

Են և այլ Արաբական յետագոյ եւ խոշոր գրեալ՝ ի ժա-

մանակս Վասլի եպիսկոպոսի սակս բաշխման և հաւաքման քաղաքական տուրց ընդ Ասորս եւ ընդ Դպիրս, պլ ոչ այնքան կարեւորք՝ ի սմին ժամանակի չինեցաւ վերկիւղ դուռն Ս. Աստուածոյն Պետրոսի և Պօղոսի, ի տաճարի Ս. Յակոբայ, յանիրաւ փայտէ, ի յիշատակ ննջեցելոյ հեզահոգի Յովհաննէսի, որպէս ցուցանէ արձանագրութիւնն, ի թուին Հայոց՝ ՊԵ. (1356)։

Յայն արարեալ Պատմիչն յառաջ բերէ աստանօր, թէ ի սմին ժամանակի Պատրիարքն Երուսաղէմի էր Սոփրոնիոս, որ վարեաց զիշխանութիւնն իւր ամս 46 ընդ իշխանութեամբ Մեմլուքաց, յորում բնակիչք Պաղեստինոյ տառապէին յերկաց արշաւանաց և աւարառութեանց այլազգեաց, զի Նախարարք եւ Իշխանք Եգիպտոսի երբեմն նչխահելով զՍուլթանս իւրեանց, ինքնագլուխ յառնէին՝ ի վերայ իրերաց, և տարածեալ զզէնս իւրեանց մինչեւ՝ ի սահմանս Երուսաղէմ, գործէին զմեծամեծ չարիս, ըզնոյն առնէին և զօրք Թաթարաց որք նստէին յԱսորիս, աւերելով զերկիրն և կողոպտելով զբնակիչս, և ոչ ոք էր որ ձեռնտու լինէր Երուսաղէմի բառնալ զվերահաս չարիսն, և ընդդէմ կայր աւարառուս թշնամեաց, որպէս առարին Դամասկոսի, Բերիոյ, Ղազզէի և Ռէմլէի։ Եւ զօրօք Սուլթանն Ֆերուձ յԱսորիս, եւ նուաճեալ զապստամբսն էկն յերուսաղէմ, և յետ տարւոյ միոյ յարեաւ՝ ի վերայ Նորա չէքի Մահմուտ՝ մին՝ ի գլխաւոր Նախարարաց իւրոց, և ընկերեալ զնա յաթոռսն, ինքն նստաւ՝ ի տեղի Նորա, որով սասակացաւ աւերութիւնն, խռովութիւն և պատերազմն, (1356)։

Աւանդէ՝ ի ձեռագիր ճաշոցի՝ ի գրատան Ս. Աթոռոյս Երուսաղէմ, այսպէս։ Ի սմին ժամանակի առաւ Աղէքսանդրիա, և քրիստոնեայք աշխարհին Պաղեստինոյ կային՝ ի մեծի նեղութեան եւ՝ ի տառապանս. փակեցին այլազգիք զդրունս եկեղեցեաց, ընդ որս և զտաճարին Ս. Յարութեան ամս ե. և յընչից քրիստոնէից՝ ի չորրորդէն զմի մասն առին. զրաղումս գարձուցին՝ ի կրօնս իւրեանց, և զրաղումս ապստին. եւ զմեզ զամենեսեան առ՝ եդին՝ ի խառարչային բանտի. և ազգի ազգի նեղութեամբ չարչարեցին զմեզ. զբերեցս, զաբեղաս և զեպիսկոպոսունս երկիցս առեալ տարան՝ ի Գազա. եւ զերկուս արեզայս՝ ի

մանկտւնից, պղծեսցէ զերկիրս, այնչափ հարիւր չաթաչար, մինչեւ անկան մարթքն ի մարմնոց նոցին, և այսպէս կատարեցան ի Բրիատոս։ Զմեսիմար բէյլին եւ զմի միայնակեաց յոգւէ մերմէ տարան յԵգիպտոս և անդ ընպանին զնոսա։ Կալան և զՏէր Մկրտիչ Արք եպիսկոպան երեսաղէմի և բազում խոստմամբ ոչ կարացին խախտել զնա ի հաւատոցն. ապա կապանօք և ազգի ազգի տանջանօք չարչարեցին, և նա համբերեաց վասն սիրոյն Քրիստոսի, եւ յաղթեաց յամենայնի Տերամբ, որ սայ համբերեցին սիրոյդ իւրոյ։ Յայս ներգնեցին Աւետարանն իմ ի Գողգոթայ ձեռք եւ ոչ կարացի հանել զնա, յորոյ վերոյ վշտացաւ սիրտ իմ, և հառաչ յոյս ակնկալութեան ինոյ միւսանգամ տեսանել բացեալ զդուռն տաճարին Ս. Յարութեան, և զԱւետարանն։ Ապա ածի զնոսա ի գողգոթան զայն, եւ ես ինայի անչէջատակ, ուրկից ձեռն արկից դրել զտարեդիրքն (ձայնից)։ Եւ ասացէ ինձ Քրիստոս կեանս տեսանել զնաղազութիւն աշխարհի եւ զաւետարանն, ծանեցից զայն ի մարմնաւոր ակս իմ։ Ողորմածն Աստուած, որ կատարէ զամենայն բարւոյ խնդրուածս՝ զկնի չորից ամաց ես տեսանել մեզ այնպիսի ուրախութեամբ, զոր այլ օք չէր տեսեալ, եւ գտի զաւետարանս, զնաչն զկոճակն և զկատեղն քակեալ էին, և ուրախ եղէ ի փառս Քրիստոսի։ Եւ վասն առաջի ուխտիս որ դրեցի զսա Ս. Գողգոթային ոչ կարացի ուխտապանց լինել, այլ եւտս զսա ըստ այնմ, զոյս ի քոյոց քեզ ընծայեմք յամենայնի կարող Տէր, ի թուին Հայոց 814 (1365) ի 12 Յուլիսի. գրեալ ի վարդան վարդապետէ Բարերդցւոյ ի գեղջէ ԵրմնուՍոյն այս Վարդան վարդապետ կացեալ յերուսաղէմ ամս 12. գրէ 2 ձայնից գիրքս. մին Գողգոթային և միւսն Ս. Փրկչի. եւ 1 աւետարան Ս. Մննդեան. երթայ ի Սիս եւ ինոյ անդ ամիս 9. ձեռնադրի եպիսկոպոս ի Տէր Կոստանդին կաթուղիկոսէ։ Աւետիս արեզագ եղբայր սորին գայ յերուսաղէմ, և չգտեալ զնա անդ՝ երթայ ի Սիս եւ առեալ գեղբայր իւր տանի ի Գրիմ, ուր զկնի 6 ամաց վախճանի Աւետիս՝ և ինքն Վարդան եպիսկոպոս գրէ միւս եւս ձայնից անդ ի Ղրիմ վասն Մննդեան վանացն և առաքէ յերուսաղէմ (1377)։

ԴԼՈՒԽ ԼԱ.

Յեւան ե։ Վանօտայք լուսնակոզման։ Հանրապէտ վասն Գողգոթայի։ Հոմարտակք։ Մարտիրոս եպիսկոպոս։ Սուրբն եպիսկոպոս։ Մեսրոպ եպիսկոպոս։ Պօղոս եպիսկոպոս։ Սուքիան Գաբրիէլ։

Վերջին ատրպաղտ թագաւորն Հայոց Կիլիկիոյ Լեւոն Ե. Լուսինեան, յետ ազատութեան իւրոյ ի գերութենէ և ի բանտէն Գահիրէի, նոյն յերուսաղէմ ընդ Մարիամ թագուհւոյ և դստեր իւրոյ Փեննայի. յետ չըրջելոյ և երկրպագելոյ ի Տնօրինական Ս. Տեղիս և գոհանալոյ պՏեառնէ վասն ազատութեան իւրոյ, մեկնեցաւ յերուսալ՝ 1382. իսկ թագուհին Մարիամ և դուստր նորա Փեննա մնացին յերուսաղէմ մինչ ի վախճան կենաց իւրեանց, և թաղեցան ի դստեր տաճարին Ս. Յակոբայ. Հ. Մ. Զաքէոս, Հաւ. Գ. Էջ 364։ Թէպէտ այժմ տեղի գերեզմանաց նոցին ծանեկալ է, բայց աւանդութեամբ ծերոց ասի լինիլ առ ընթեր սեան։ Զգերեզմանէ Փեննայի խնդիր արարին նաեւ Գաղատացիք ի ժամանակս մեր։ Այլ վասն Մարիամայ թագուհւոյն Հ. Գ. Ալիշան գրէ, թէ վախճանեցաւ նա ի Գահիրէ, յետ ազատութեան իւրոյ ի բանտէ, թէեւ ի ցաւոց սրտին, և թաղեցաւ ի միւսեմ յեկեղեցւոյն Հայոց։ Յուշիկ. Հաւ. Բ. 317։ Սակայն աւանդութեամբ դիտեմք երկոցունց գերեզմանացն լինիլ առա ի Ս. Յակոբ։

Դիցուք առաջնոյ զչիշատակարանս ձեռագրիս մատենից։ Նախէս Պաղտն կամ Պալիենց Սահցի՝ կրկնականք կրօնաւոր և չերմ Պապազատան, ի գիրս գաւազանադրոց թագաւորացն եւ քահանայապետաց Հայոց, չարագրեալ ի թուին Զխե 745 (1296) պատմէ ի վերջաբանին և զվախճան Մարուն թագուհւոյն կնոջ Լեւոնի՝ որ հանգեաւ յերուսաղէմ ի թուին 845 (1396)։ Ճիշատակարան ձայնոցի, յետ երկար բանից առէ։ Աւրն զմիս ծառայ հնձելն ի թուին ՊԻԴ. 824 (1375) Ապրիլ ամիս ԺՓ. բերին զԹագուհիկան Դոստանդին և զԱսորի Պատրիարքն, զԹագաւորն Լեւոն, Յուլիս ԺԱ. Դարձաւ ի հետ ԿԹ. եւ այլք

իշխանք ու Մարիամն Թագուհին՝ յՕգոստոս ամիս Զ։ էր Սուլթանն Մարայ Աչրաճի Մելիք Նասրի թոռն, ամիր Հուլնաց տղայ։

Սկզբ գրչաւ անհեթեթ և դժուարընթեռնլի. «Արդիւնցար Թ.Ղ.՝ի Մար է տարի, և յորժամ եղեւ թիւն ՊԱՆ. Հակա. Ա. երեկ (ևկն) Յիսանկ տեառնիքս Տղանացուի (Թերեւս Տարտել) առ ղինքն ու գնացեր։

Մարտիրոս վարդապետ, կարդ եւ թիւ թագաւորացն Հայոց հաւով ոտից համառօտ յօրինեալ (1672) ղվերջնոյ Լեւոնէ այսպէս գրէ։

Ցետս կոտանդնեայ որ հուսկ յետին,
Լեւոն որքայ ողորմելին։
Տիրեալ ամիս տասն և մին,
Կորոյս զթագն ընդ աթոռին։
Քանզի Սուլթանն եգիպտոսին,
եկեալ գերիաց զամենեսին։
Զալարն և զիւբան՝ի միասին,
Ու զթագուհի մարու նոցին։
Առ որ խղճեալ բանաւորին,
Թողու ազատ զայն թագուհին։
Աճէ գնալ ուր և կամին,
Իսկ նա դիմէ՝ի Պաղեստին։
Հասնի գրաւ կենաց նորին,
Ցերուսաղէմ Սուրբ Քաղաքին։
Թաղի ընդ սեամբ Սուրբ տաճարին,
Հայոց աղգի Սուրբ Աթոռին։
Ի յոթն հարիւր Հայոց թուին քսանևերիք ասելոյդին (1374)։
Ցաղգէ դժնեայ հագարացին, զգառն բաժակս զայս արբին։

Գրի ձեռնագրութեան՝ եւ այլ ծխից եւ արարողութեանց, ակնդօծ դվեստաւթք և պատկերօք, գրեալ՝ի Սիս՝ի տաճարի Ս. Աստուածածնէ, յամի 1266 ՝ի թագաւորութեան Հեթմոյ Ա. և՝ի կաթուղիկոսութեան Կոստանդեայ։ Դարձեալ այլ յիշատակարան գրեալ յետոյ ազգատ գրոյ։ «Ի թուականութեանս Հայոց Ո.800 (1351) առաւ Սիս՝ի քրիստոնէից, և էր՝ի ժամանակին այնմիկ

կաթուղիկոս Հայոց Տ. Կոստանդին Լամբրոնացին, արք խնամուն և հանճարեղ, և էր թագաւոր Հայոց Գարոն Լեւոն որդի Բրընձի. յա թագաւորեաց Հայոց ամ մի. յա վարեցաւ գերի յեգիպտոս Թագուհւով իւրով և որդւով, բայց Թագուհին մարուն եկաւ կեցաւ յերուսաղէմ զամս երիք և հանգեաւ՝ի Քրիստոս, և Թաղեցաւ առաջի դրան Ս. Յակոբայ (1)։

Յաւուրս իշխանութեան Գրիգորի եպիսկոպոսի եգիպտացւոյ կային տակաւին կանգուն վանօրայք՝ի լեռնակողմն, ուր բնակէին կրօնաւորք Հայոց, որպէս յայս առնէ յիշատակարան ձեռագրի միոյ։ «Գրեցաւ սակաւ գիրս՝ի հռչակաւոր անապատս լեռնակողմանս, որ կանուն Ս. Յովհաննու կարապետին՝ի թուին ՊԼԹ. (1390) Յուլիս 10, ձեռամբ Մահիթանոսի, յեպիսկոպոսութեան Ս. Երեսապէմի Տէր Գրիգորի Մարցւոյ։ Եւ այլ յիշատակարան, որ առ յաթոռակալութեան Հայոց Ս. Յակոբայ Տէր Գրիգորի և Տէր Մկրտչի հեգի և խոնարհի. ՊՀԳ. (1363)։

Եւրոպացի ճանապարհորդք յայցելութեան իւրեանց՝ի Ս. Տեղիս, տեսեալ են անդ՝ի վանս լեռնակոզմն բնակեալ՝ի միաբանացն Հայոց (1418)։ Նոյնպէս տեսեալ են նաեւ եւ պիլգրաւմանքն՝ի ձեռս միաբանից (1384), նախ քան զթողուլ Վրաց։ Իսկ յիշատակարանք ձեռագրիս մատենից ցուցանեն վինել յառաջագոյն՝ի լեռնակոզմն 4 վանօրայք՝ի ձեռս Հայոց, որք են Ս. Կարապետի. Ս. Վիմի. Ս. Աստուածածնի, այն է տուն եղիսաբեթի, զոր Լատինք այսբե-Ռեան կոչեն. և Ս. Յովհաննու Ծովհանու կարապետի, զորոց խօսեացուք յիւրում տեղւոջ։

Մարինոս Լատին գրէ՝ի գատ. Ս. Երկրին. թէ Լատինք մտին՝ի Ս. Աստուածածնի կոնդակաւ Իննովկենտիոսի Զ. գալին Հռոմայ (1392)։

Ի ժամանակս Սարգսի Սրբ եպիսկոպոսի ազգն Վրաց

(1) Իսկ Հ. Ղ. Ալիշան. յոյր գիրս եբե՝ 544. գրէ ընդ նմին գերեալ և Մարեմայ գհոգի (կնոջ Բ. Կոստանդեայ) և այսմակեալ երթայ Յերուսաղէմ. և անդ վախճանի, իսկ միւսն Մարիամ կին Լեւոնի՝ մնաւանի՝ ի գահիրէ եգիպտոսի. Տարերութիւնք այ սակաս երեւին՝ի գրուածս և՝ի Թուականս.

դարձեալ սիրդն սրտին յաւելու վնդիր Գողդոթայի, որոյ վասն Տէր Պետրոս և Տէր Վահրամ սահին հանդուգներ ի գահաւանէ Երուսաղէմի սատրաղրութեամբ Աբեւելի այլազգեաց, յորում վկայեն թէ Գողդոթայն է սկզբնաւթիւն աղգին Հայոց ի վաղ ժամանակաց անտի, և է ցարգ ի ձեռս նոցա, և ոչ ոք ի քրիստոնէից ունի իրաւունս լինել ձեռնամուխ ի տեղին յայն, և կամ հակառակել և վճռս յարուցանել վասն այնր։ ՎՀՎ (1395)։

Զհրովարտակ զոր տուեալ են Սուլթանք Եգիպտոսի առ Պատրիարքսն եւ կրօնաւորս Երուսաղէմի ևղծեալ և ապականեալ են մեծաւ մասամբ, և բազումք ետս չերեւեին ի միջի, որպէս գրեցաք։ Անառարիկ 1 հրովարտակ առեալ յանուն Մարաիրոս Եպիսկոպոսի առաջ գարձուցանելոյ զԳողգոթային առ ազգն Հայոց՝ թերի և անկատար, 2 հրովարտակ, գարձեալ վասն այսր խնդրոյ, որոյ մի մասն միայն մնացեալ է, և ընթերցուածն կարի գժուարին, գրեալ ի ՎՀ Րէպիլ Էվէլ ամսոյ ՅՕ• (1349)։ 3 հրովարտակ՝ յաղագս խնդրոյ Գողգոթային, առնուլ ի ձեռաց Վրաց և տալ Հայոց, գրեալ ի Ջ Մուհարրէմ ամսոյ ՎՕՈ, (1357)։ որոյ սկիզբն թերի։ այլ մեք կարի ղժուարութեամբ միայն կարաք գտանելոն գնել ի կարգի պատմութեանս։

Ի ժամանակին յորում իշխէին Սուլթանք Եգիպտոսի Ասորեաց և Պաղեստինայ, և մինչդեռ էր Մէլիք Նասր յԵրուսաղէմ, այրեցաւ մին ի մեծամեծ եկեղեցեացն այլազգեաց ի Գահիրէ, զկնի առին ի վերայ քահանայիցն Գողգոթայ, և յարեան եղիպտացիք ի վերայ քրիստոնէից և անխնայր կոտորէին զնոսա ուր և պատահէին, յաղագս յայսմանէ ժեռան բազումք ի քրիստոնէից յԵգիպտոս և ի սահմանս նորա, և էր ի մեծի ահագնալի և պատրիարքն Աղէքսանդրիոյ՝ զի խնդրէին և զնա, եւ այլք ահիւ և երկիւղիւ ևղանէին ի տանց իւրեանց, եւ այս առեալ սուի ինչ։ եւ Սուլթանն եւս քարոզ կարգալ յԵգիպտոս, յԱսորիս և յԵրուսաղէմ, և որք ընդ իշխանութեամբ նորա էին, չ'նքսակիլ քրիստոնէից յերկիւղ և ի կիսէշ և չդնել փակիլ ի գլուխս ըստ օրինի այլազգեաց (1389)։

Մարաիրոս եպիսկոպոս եւ միաբանք լեռնականացն, տաղտկացեալ յերկասց Արարացւոց, որք հանդգնեալ պա-

հանջէին ի վանականաց և յուխտաւորաց տուրս և հարկս ընդդէմ սովորութեան, և մանաւանդ զղուէին և նեղէին զնոսա ի հանապարհի ի գնալն նոցա յայլ և այլ տեղիս անօրինակաց, որոց վասն մտաւորեցին գէր ազաչանաց առ Սուլթանն եգիպտոսի Մէլիք զահր Սէյֆի Մէհէմմէտ, առ ի տանձել զրաւութիւնս նոցա որպէս յայտ առնէ թարգմանութիւն յետագայ հրովարտակին, օրինակ զայս։

Մարաիրոս Արք եպիսկոպոսն Հայոց և միաբանք նորին որք են ի վանս Սկին Քեարիմ կոչեցեալ արտաքոյ քաղաքին Երուսաղէմի յայտ արարին մեզ՝ թէ բաց յառաջ ազգաց ինքեանք միայն բնակին անդ ըստ սովորութեան իւրեանց յաւուրց անտի յաղթութեան մինչեւ յետին ժամանակս, և արգիլեալ է չնեղել զմիաբանս նոցա ի պատճառս որոց, չպահանջել հարկս չառնուլ զվանօրայս և ոչ ըզբնակիչս նոցա և զուխտաւորս, չհնարել և չնորոգել ի վերայ նոցա նորանոր իրս և զրկանս, որպէս աւանդեալ է նոցա, և մի՛ նեղել զոք ի նոցանէ ի գնալն յուխտ ի Յորդանան գետ և ի Բեթղեհէմ, և հաստատեալ զուխտս նոցա ի տաճարին Ս. Յարութեան, և զամենայն տեղիս զոր միաձայն ծանուցին մեզ, ըստ սովորութեան իւրեանց. և առ ի բառնալ զամենայն հազս նոցա, արգելուլ զհակառակորդս, ի գնալ նոցին ի վանս զոր գրեցաք ի վեր անդր, որ է ի ձեռս նոցա ի ժամանակի յաղթութեան, և չէր ինչ պահանջ ի վերայ միաբանից ազգի նոցին, յաւուրց անտի յաղթութեան մինչեւ ի յետին ժամանակս՝ և որպէսզի տեղիքն ըստ սրտմտութեան հրովարտակաց որ ի ձեռս նոցա, զի աւանդեալ կամ կտակեալ է նոցա, հաստատացին հրովարտակիս և ըստ մտաց սորին արասցեն, և Աստուած չէրիցս եղիցի իրրեւ յետ կար ի ձեռս նոցա ի ՃՕ ճէմազիլ ախըր, ՈՕՋ (1399)։

Մեսրովպ եպիսկոպոս, Թէպէտ ի ձեռագիր գաւազանագրս Պատրիարքաց ժամանակ իշխանութեան սորա գնի լինել 1435։ սակայն Թուականն հրովարտակին որ զբրեալ է յանուն Մեսրովպայ, չհամապատասխանէ այնմ, ուստի առ ի պահելոյ զիարգ Թուականաց, աստ զետեղեցաք զիարգմանութիւն նորին, չհայեցեալ սուկ զանուանն Պատրիարքաց, որոց գործքն չերեւին ի միջի։

Արդ ՝ի սոյն ժամանակի նեղեալ միաբանաց ՝ի բռնութենէ այլազգեաց , վասն զերեզմանատանն որ ասի՝ Ճոռնէք · և Արաբացիք կոչեն զայն Ա.պա- Բոռ և կամ Ա.պա- Սոռ· իսկ Մեսրովբ եպիսկոպոս իրրեւ ոչ կարաց վճարել ինչ յերուսաղէմ, եւ ցածուցանել զցասումն այլազգեաց , հարկադրեալ էջ յեղիպտոս , եւ բազմութեամբ ժողովրդոց յանդիման եղեւ Մէլիք Աչրաֆ Սէյֆի Սուլթանին , առաջի եդեալ նմա զհին հրովարտակս · զոտառապանս եւ զզրկանս ազգին իւրոյ , զոր կրէին յայլազգեաց երուսաղէմ սակս զերեզմանատանն այնորիկ · ապա խնդրեաց բառնալ զնեղութիւնս նոցա , և թոյլ տալ հանգիստ վարել զկեանս յաշխարհին յայնմիկ , եւ առանց տուգանաց խաղաղութեամբ թաղել զմեռեալս իւրեանց ։ Իսկ Սուլթանն կատարեաց զխնդիր նորա տալով հրովարտակ , եւ պատուիրելով մի և մի իւիք բռնանալ ՝ի վերայ եպիսկոպոսին եւ միաբանից նորա , զի վարեսցին ըստ վաղեմի սովորութեան իւրեանց , ՈՀ (1402)։

Արտաքոյ քաղաքին երուսաղէմ յայգակողմն ճանապարհին Բեթղեհէմ , էր յատաջագոյն վանք և եկեղեցի յանուն Մարկոսի Աւետարանչի , եւ դիւղ փոքրիկ · Մէլիք Ադիզ որդի Սալահատտինի առեալ զսոյն ՝ի ձեռաց քրիստոնէից , եւ այլազգւոց ուրումն Շէյխ Ահմէտ Ասլի Թուռ կոչեցեալ ՝ի ժառանգութիւն յորդւոց յորգէ · ՝ի Թուին Հիճրէթի ՕՉԷ (1198)։ Եւ յետ մեռանելոյ նորա թաղեցաւ անդ · և յայնմհետէ կոչեցաւ տեղին իրր ուխտատեղի այլազգեաց · այժմ աւերակ , և երեւի խարխալեալ չինուած ինչ ՝ի վերայ գերեզմանի նորին ։ Իսկ միաբանք Ճունաց ասեն զտեղւոջէն զայնմանէ լինիլ վանք յատաջագոյն ՝ի ձեռս Ճունաց , ուր թաղեալ է Մոգեստոս երից տեղապահ Ջաքարիա Պատրիարքի գերելոյ ՝ի Պարսից , որ և դասեալ են ՝ի կարգս սուենելի սրբոց ։ Իսկ գերեզմանատեղին Հայոց՝ զոր դրեցաք , է ՝ի ձախակողմն սորին դէպ յարեւելս , համարեալ է իրր կալուած (վաղֆ) , որոյ վասն Հայք կրեցին և կրեն նեղութիւնս մինչեւ ցայսօր ։

Ի տատականալ բռնութեանց հարկահանացն եգիպտացւոց , որոց գլխաւորն էր Սիւլէյման Իպն Աչրաֆ · զի պահանջէին հարկս նաեւ յուխտաւորաց ։ Իսկ Սարգիս եպիսկոպոս չկարացեալ տանել այսմ , մեռոյց գիր աղաչանաց առ Մէլիք Նասր Սուլթանն եգիպտոսի · և նա գրեաց հրովարտակ (Թաթթի Շէրիֆ) առ գաւառսն և գործակալս երուսաղէմի , պատուիրելով այսպէս · « Ուխտաւորքն Հայոց որք գան յերուսաղէմ· եթէ ոք ՝ի նոցանէ մեռցի անպատճառ քան զամի մի , յամին երկրորդի տացեն զտարեկան հարկն , ըստ սովորութեան որոյն ուխտաւորաց · և եթէ ոչ մեռցի ոք , գադարեսցի Սիւլէյման Իպն Աչրաֆ , եւ այլ նորա ՝ի հակառակութենէ , սակս հարկաց և այլ իրաց ։ Եւ եթէ նոքա ըստ հրամանի թագաւորին հատուցանեն զհարկն , մի ոք բռնասցի ՝ի վերայ նոցա , և մի ոք պահանջեսցէ ըստ կամս իւրոց՝ աւելի զիրս ինչ , որ չէ ինքեան հարկաւոր , և ոչ նոքա պարտաւոր , հաւատացէք սմա և ըստ այնմ գործեցէք , առանց թիւրելոյ զիմաստս և զվճիռս նորին , ՝ի ՀՉ Շաւալ ամսոյ՝ ՈՠՃ (1400)։

Ի և այլ հրովարտակ , զոր առեալ են վասն անդորրութեան ուխտաւորաց , եւ օտար ազգաց խաղաղութեամբ վարել ընդ միաբանս Հայոց , թերեւս ՝ի տաճարին Սուրբ Յարութեան յատուր Ճրագալուցի Պասեքին , որպէս ակնարկեն բանք հրովարտակին ։ Սակայն ՝ի թերութենէ նորին չէր հնար լսանալ զնուն Սուլթանին ։ Ուր ասէ՝ եպիսկոպոսն Հայոց հանդերձ վարդապետովք իւրովք միաբանք գիր աղաչանաց յատեանն եգիպտոսի , յորում խընդրէին չզահանջել այլազգեաց զտուրս ՝ի դուռն Ս· Յարութենէան յուխտաւորաց և յայլոց ՝ի մտանելն ՝ի ներքս ։ Եւ եկեղեցականք վրաց , Հայկէշաց եւ Ճունաց , յորժամ մտանեն ՝ի Գերեզմանն Քրիստոսի վասն ուխտի , հատատութեամբ մտցեն , և ամենեքեան ՝ի միասին կատարեսցեն զպաշտամունս իւրեանց · ըստ սրամադրութեան առաջին հրովարտակաց , զորս ունին իւրաքանչիւր ազգ ՝ի ձեռս իւրեանց · ՝ի Ժ ՁՄամսիլ եվվել ամսոյ՝ ՈՠԷ (1411)։

Պօղոս եպիսկոպոս յԱբարատոյ , զկնի Սարգսի յաջորդեաց զԱթոռն Պատրիարքական ։ Սա գնեաց զպարտէզն ձիթենեաց ՝ի ձորն Գեհենէմանի ՝ի վերին կողմն գերեզմանի Սուրբ Աստուածածնի , որոյ մուրհակն պահի ցարդ առ մեզ՝ ՈՠԶ (1413) · բայց յետ ժամանակաց այլազգիք վերստին տիրեալ են տեղւոյն , եւ ապա վերստին գնեալ

զայն Հայք, և ոչ այժմ՝ ի ձեռս Հայոց։ Սա ըստ ազաչանաց վարդապետացն Հայոց գնաց՝ ի Սիս, և արար խաղաղութիւն՝ ի մէջ միաբանաց Հայրապետականացն, և՝ ի յորդորել զնոսա ընտրել զայլ ոք առաքինի և իմաստուն յԱթոռն Հայրապետութեան. նոքա ընտրեցին զնոյն ինքն զՊօղոս և Օծին կաթողիկոս յԱթոռն Սսոյ, որ և յետոյ բարեկարգեաց վոքր ինչ զԱթոռն զայն. Տե՛ս Հ. Մ. Զահէեան, Հաթ. Գ. եէ. 458։ Եւ վասն այսր Հայրապետիս ասացեալ նաեւ՝ ի յիշատակարանս ձեռնարկի մերում. «Տէր Պօղոս՝ որ էր Արքեպիսկոպոս Երուսաղէմի, որ յետ սուզ ինչ ատենի եղեւ կաթողիկոս ամենայն Հայոց. եւ գրել զձեռնարկս զայս՝ ի թուին Հայոց ՊԿՀ (1419)՝ ի Սուլթանութեան էջիպտ։ Ի Հայրապետութեան Տ. Պօղոսի, Կիլիկեցոգոստութեան Երուսաղէմի Տ. Մարտիրոս Մարգոյն։ Գրիգոր կաթողիկոս Խանճոլատ, վասն ապերախտ ինչ գործոց, ընկենցեալ եղեւ յԱթոռոյն. և եկեալ տարան զՏէր Պօղոս և նստուցին յԱթոռ կաթողիկոսութեան։

Սուլթան Ահմէտ Պուրխ Պայի ամբարձաւ յիշխանական գահն Եգիպտական, եւ զօրացաւ քան զնախորդս. եկն յերուսաղէմ, և վակեաց զդրունս տաճարին Ս. Յարութեան, և արգել անտի զքրիստոնեայս։ Իրրեւ լուաւ զայս Թագաւորն Հասպէշոց, որում անունն էր Արամ Խառակ որդի Դաւթի. բարկացաւ յոյժ, և եւս կոտորել զամենայն ազգսդիս՝ ի սահմանս տէրութեան իւրոյ։ Եւ Սուլթանն Պուրխ Պայի լուեալ զայս տրամեցաւ յոյժ. եւ երդմամբ չար ուխտ եւս անձին իւրոյ, առնուլ զվրէժ ազգացն այնոցիկ՝ ի քրիստոնէից, որք սրամահ եղեն յաչխարհն Եթովպացւոց։ Եկան հրամանն՝ ի սուր սուրերի կոտորել զամենայն քրիստոնեայս որք բնակեալ են՝ ի սահմանս տէրութեան իւրոյ, սպանանել նաեւ զՊատրիարգսն Ազեքսանդրիայ և Երուսաղէմի։ Իրրեւ ազդ եղեւ հրամանն յաքանջս նախարարաց նորին, փութացեալ անկան յոտս նորա, և աղաչէին զնա չհեղուլ զարիւն անպարտ, եւ այսպէս հազիւ ուրեմն չիջուցին զբոց բարկութեան նորա, և ազատեցան քրիստոնեայքն։ Յաւելուլ ասել Ապարացի պատմիչս, թէ ոչ կարացի գիտել զդործս Պատրիարգաց, զի՝ ի դառն ժամանակին յայնմիկ չէր ոք որ՝ ի գրի հարկանէր,

զի քրիստոնեայք էին՝ ի մեծի տառապանս և՝ ի նեղութիւնս, և ոչ ոք եթող գրով զկնի իւր զոր եւս և լսեաս, թէ որպիսի անցք անցին՝ ի վերայ ազգացս և ժողովրդոց, միայն ասէ դառնութեամբ՝ ի գիրս Տօնիսխոսի տոկ անուանս ոմանց Պատրիարգաց (1423)։

Գրէ նաեւ Սամուէլ Անեցի թէ՝ յիշխանութեան Իաքենտէրին, ՝ի պարանոյթեան Սուլթան Ահմէտին, ՝ի կաթողիկոսութեան Տ. Պօղոսին, Ս. Յարութեան դուռն Ձ տէր վահկալ կայր։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Մարտիրոս Պատրիարք Եգիպտացի։ Գրաւումն Գազդեմայի՝ ի Վայրկ Դատաստանաց յաուանն Եգիպտոսի։ Մեծամեծ Չանք Մարտիրոսի։ Հրովարտակք և դատաստանագիրք։ Ի վերջ կորուստ իրաւանց, և չինութիւն եկեղեցւոյն Վերնատան։

Յետ ընտրութեան Պօղոս վարդապետի յԱթոռ կաթողիկոսութեան Սսոյ. յաջորդեաց իշխանութեան Պատրիարգութեան Երուսաղէմի, Տ. Մարտիրոս Արք եպիսկոպոս Եգիպտացի, որպէս ցուցանէ դաւազանագիր սոյն Աթոռոյ։

Սա նորոգեաց զնկեղեցին Ս. Աստուածածնի որ՝ ի Գեթսէմանի, ապիւ յարդարելով զյատակն և զսանիան, որոյ յիշատակարանն գրեալ կայ ասէ Հաննայ վարդապետ յաջակողմն արտաքին դրան, ՝ի թուին Հայոց ՊՀ. (1421)։ Պաթ. Երուսաղէմ. եէ. 304։ Սակայն չերեւի այժմ արձանագրութիւնն այն. զի զմեծ և զդեղեցկաչէն փառաւոր կամար դրանն տաճարին քարամբք հիւսեալ անձկացուցին զմուտն, յերկիւղ աւազակաց, ուստի կամ ջընջեցաւ և կամ ծածկեցաւ՝ ի ներքոյ քարանց։

Յաւուրս սորա տառապեցաւ վէմն ազգին Վրաց վասն Գողգոթայի տեղւոյն՝ ի տաճարի Ս. Յարութեան, որ լեալ էր սեփհական վիճակ ազգին Հայոց, որպէս պատահեալ էր յաւուրս Գրիգորի եւ Սարգսի, յորս հանդիպեցան Հայք

մեծամեծ վնասուց և տուգանաց, որպէս գրեցաք 'ի նախընթաց գլուխդ։ Սկիզբն արասցուք պատմել զվճռս եւ զխռովութիւնս ազգին Վրաց, որպէս ասացաք 'ի ձեռագիր յիշատակարանս։ յարելով նաեւ զթարգմանութիւնս հրովարտակաց և դատաստանական գրոց, զորս առեալ է Մարաիրոս վարդապետ։ Տէս Նոեմ 'է Գէորգ Հաննայ Լեզուպեդ։ Պապմ։ Երեսապէդ։ Երես 225։

Արդ, մին 'ի վաճառականաց Եգիպտոսի Դայիալի անուն, որ էր մտերիմ Սուլթանին, դէպ եղեւ ամս գնալ 'ի կողմանս Վրաստանի 'ի գործ վաճառականութեան, և 'ի հասանիլ նորա 'ի Տփղիս, պատիւ մեծ ցուցին թագաւորն Իվանէ եւ իշխանք իւր, խնդրեալ թէ նա սիրելի է յաչս Սուլթանին՝ որոցին զնա 'ի կամս իւրեանց ընծայիւք և պատարագօք։ Եւ ծանր խոստմամբ առաջի եդին նմա առաքել առ Սուլթանն մեմ յամէ ծանրագին ընծայս եւ պատարագս։ ծառայս եւ աղախնեայս, ազահարկ առնել զազգն Թուրքաց, որ ընդ իշխանութեամբ իւրեանց, նորոգել զհնացեալ մզկիթս նոցա, արձակել զգերիսն, կալ դաշինս սիրոյ և խաղաղութեան ընդ Սուլթանին, և կալ ընդ հնազանդութեամբ նորին, եթէ հաճեսցի ինքն լինել միջնորդ առ նա՝ և չրջել զկամս նորա։ առնուլ 'ի ձեռաց Հայոց զԳողգոթայն տեղի Յաչելութեանն Քրիստոսի, և տալ Վրաց։ հաւանեալ վաճառականին՝ խոստացաւ առնել ըստ կամաց նոցա։ Եւ եղեւ 'ի դառնալ վաճառականին յԵգիպտոս, յանդիման լինել Սուլթանին, յետ այլոց բանից՝ յայտ արար և զնդիր թագաւորին Վրաց և իշխանաց նորա, թէպէտ և խաժորեցաւ Սուլթանն և դժկամակ եղեւ ընդ բանս նորա։ սակայն ջանաց նա չողոքորդ բանիւք որոալ զմիտս նորա, հայեցուցեալ 'ի խոստմունս Վրաց և 'ի մարմնաւոր մեծութիւնս։ Հուսկ ուրեմն զիջաւ Սուլթանն Մէլիք Աչրաֆ 'ի կամս նորա։ գրեաց հրովարտակ առնուլ զԳողգոթայն 'ի ձեռաց Հայոց, և տալ Վրաց, որ և եղեւ սուգ անասնելի եւ արտմութիւն անմխիթար Հայոց ազգին։ Տեսեալ Մարաիրոս եպիսկոպոսն թէ չիք օգուտ կաքել ընդ այլազգիս և ընդ Վիրս յերուսաղէմ, մանաւանդ տեսեալ զյաւիչտակութիւնն վիճակին իւրոյ, արիացաւ և զգեցաւ զղօրութիւն 'ի ծերութեան իւրում, յանձն առ գնել զութիւնս և զաշխատութիւնս ինքեան վճարել զդրծն, զի չունէր օգնութիւն յուստէք, այլ յուսացեալ 'ի խնամս Արարչին, յուզի անկեալ չոքաւ յԵգիպտոս, և դգերեալ անդ զամն երիս, 'ի գրունս Իշխանաց և յատեանս Սուլթանին, ծախեաց բազում ինչ, և խոստացաւ եւս տալ հարկս ամ ըստ ամէ, միայն զարձուսցեն ինքեան զառաջին վիճակն Հայոց։ Իսկ միաբանք և ազգն Հայոց, որք կային յերուսաղէմ պաշարեալ 'ի սուգ՝ ողբային զկորուստս վիճակի իւրեանց։ թող զձաղանս և զթշնամանս և զազգի ազգի նախատինս, զոր կրէին 'ի թշնամեաց անտի քրիստոնեայ անուանելոց։ Այսոր առնէին եւ անգոսնէին այլազգիք եւ ասէին՝ կորեաւ ազգն ձեր։ բեկաւ զօրութիւն Պատրիարքի և միաբանութեան ձերոյ, յաւիշտակեցան սեղիք ձեր, արտաքսեցաք 'ի տաճարէն Ս։ Յարութեան, և եղեալ նախատինք և այսպէս կատականաց առաջի ազգաց եւ ազանց, եւ այլ սոցին նմանն բանք։ իսկ նոքա թախծեալ 'ի սիրտ և 'ի հոգի տարակուսեալ թափառէին այսր անդր, կէսք 'ի ներքս 'ի տաճարի անդ և այլք արտաքս՝ գրկեալ 'ի սովորական պաշտամանց։

Սակայն Մարաիրոս եպիսկոպոս, որ տակաւին դեգերեալ կայր յԵգիպտոս, ոչ ինչ կարաց չահիլ 'ի չրջանի երից ամաց, և 'ի վերայ այնչափ ծախուց, յաւել եւս տալ 3000 Ղևորիս իրրեւ հարկ արքունի վասն Գողգոթայի, որ դերազանցեր քան զառաջս Վրաց, եւ էառ վերստին ընծայիչական վիճակն իւր հրովարտակաւ, եւ դարձ արար յերուսաղէմ, և 'ի բաց մերժեաց զվիրս 'ի Գողգոթայէ և տիրեաց այնմ, և եղեւ ուրախութիւն մեծ ազգին Հայոց հղելոց անդր։ Ահաւասիկ թարգմանութիւն հրովարտակին, զոր էառ Մարաիրոս 'ի Սուլթանէն, Մէլիք Զահր Սէյֆի Մէհէմմէտ կոչեցելոյ։

Արդ՝ դարձցի վերստին առ մեծ և փառաւոր եպիսկոպոսն Մարաիրոս, որ է պարծանք քրիստոնէից և Արք եպիսկոպոս ազգին Հայոց Երուսաղէմի և Եգիպտոսի։ պահեցէք Տէր Աստուած 'ի փառաւորութեան իւրում։ Եւ առ ուխտաւորս և գերիս և միաբանս Հայոց՝ որք բնակին յերուսաղէմ, Գողգոթային և պահարանք (թերեւս սենեակք Նորա) 'ի տաճարին Ս։ Յարութեան, մնացէք 'ի ձեռս Նոցա,

հաստատեսցի մուտք նոցա անդր, և բնակեսցին. և աղօթեսցեն անդ ըստ վաղեմի սովորութեան իւրեանց. ի բաց մերժեսցի ազգն Վրաց եւ սյլք՝ ի սեղանոջն յայնմանէ. արդելեալք անթերի եւ կատարել. մի հակառակեսցին վասն այնր՝ ի պատճառս որ և իցէ. և մնասցէ՝ ի ձեռս Հայոց յաւետեանս յաւիտենից. զսպպդ և զգերեզ, ի տարխ և յամխա, ի դարս եւ ի ժամանակս. առեալ՝ ի ձեռաց նոցա տուք առ մեծ եպիսկոպոսն Հայոց և միաբանութեան նորին մնալ՝ ի ձեռս նոցա, և գրեալք յետկար՝ ի դատաբանի՝ ի վերայ նոցա. զի մի՛ միւսանգամ հակառակեսցին վասն Գողգոթայի և պահարանաց նորին, և կռուեսցին ընդ միմեանս վասն այնր։ Անգործադրելի մնասցին թղթեանքն, որք միանգամ գրեցան աստի յաղագս Վրաց. խոհականացին վճիռք և զօրութիւնք նոցա, եւ ջնջեսցին պատճէնք նոցին յարձանագրութենէ։ Եւ իւրաքանչիւր ազգ բնակեսցի՝ ի սեղանոջ իւրում, ըստ վաղեմի սովորութեան իւրեանց. առանց հակառակութեան եւ խռովութեան, որպէս տրամադրեն բանք հրովարտակիս։

Եւ մինչդեռ կային Հայք յատենի մերում. հարցումն եղեւ նոցա, եւ նոքա մատուցին զհրովարտակս և զպաշնագիրս առեալ յառաջին թագաւորաց, ի Մէհէմմէտ Նասրէ որդւոյ Զալատնի և յայլոց. զհանրագիրս, և ըստվճիռս գենգէսին։ Արդ՝ հաւատացեալն հրովարտակիս, և ըստ պահանջման սորա գործեացեն, եւ հաւատարմացի թագաւորական Խաթթի Շէրիֆս։ Գրեցաւ հրովարտակս յատենի արդարութեան եգիպտոսի. ի ԺԳ Րէպիլ ախր ամոյ՝ ՈՀ (1399)։

Զթերի հրովարտակս վասն այսր խնդրոյ. Տէս Գլուխ Լ.Ա. Եէ- 216։

Ձեռս այնորիկ կազմեցաւ ժողով մեծ՝ ի դատարանի յայլազգեաց և՝ ի քրիստոնէից. և ընթերցաւ դատաւորն առաջի նոցա զհրովարտակն, և գրեալ յետկար ետ ցմարաւրոս եպիսկոպոս։ Սակայն չվոխոռթիւն եւ տարբերութիւն մեծ երեւի՝ ի մէջ թուականաց, իրրեւ ամն քառասուն. զի թուական հրովարտակին կրէ ՈՀ որպէս եղաք, իսկ յետկար դատարանի ՈՀ, որպէս ունելիք դնել՝ ի բաց. յորմէ յայտ է թէ գիր դատարանի հիմնեալ է

՝ի վերայ վերջին հրովարտակին Մարտիրոսի, որ այժմ չերեւի՝ ի միջի։ Թերեւս յետ էառ Սուլթանն զայն հրովարտակ յետ տալոյ գՈղգոթային Վրաց, և ընդելոյ զարձանագրութիւն նորին։ Թուական հրովարտակին յայտ առնէ զժամանակն Սարգսի Պատրիարքի, յորում ժամանակի եւս խորհեցան վերք, որպէս գրեցաք, այլ Թողեալ մեր զայս քննութիւն, հայեսցաք՝ ի գիրս դատարանին. զոր էառ Մարտիրոս ըստ մնոց հրովարտակին։

Ցաւուր շաբաթու՝ ի ԺԵ Շաբան ամոյ՝ ՈԽԲ (1438)։ Եկն Թագաւորական հրովարտակ՝ ի Մէլիք զահր Սէյֆի տալու Սայիտ Մէհէմմէտ չագմաղէ, պահեսցէ Տէր Սաուած զԹագաւորութիւն նորա, նորոգեսցէ զանհնարն աւուրս դյաղթութիւն նորա, աիրել բոլանդակ լայնութեան երկրի՝ ի ծովս և՝ ի ցամաքի։ առ մեծապատիւ և պատուական կուսակալն և մեծ Նախարարն Երուսաղէմի եւ Քերրոնի։ Ցորում գինի ողջոյնի և յարգանաց, և կարգալոյ զանուն ողորմածին և գթածին Աստուծոյ՝ ասէ, գիտութիւն լիցի ձեզ, զի մեծ եպիսկոպոսն Մարտիրոս, որ է Սրբազեպիսկոպոս ազգին Հայոց, յանդիման եղեւ մեզ ասա յատենի մերում ժողովրդովք ազգին իւրոյ, եւ յայտ արարին թէ էր՝ ի ձեռս իւրեանց Գողգոթային և պահարանք նորին յերուսաղէմ՝ ի Ս. Յարութիւն, եւ ազգն Վրաց յափշտակեալ են զայն։ եւ դհրովարտակս առաջին թագաւորաց զոր ունէին՝ մատուցին ասա ատենի մերում, յորս ամենեքեան վկայեն թէ՝ Գողգոթայն է սեփհական վիճակ ազգին Հայոց, և Վիրք չունին ինչ իրաւունս և յարաբերութիւնս՝ ի վերայ այնոցիկ տեղեաց։ Ունէին նաեւ օրինաւոր հանրագիր՝ ի դատաբանէ տեղւոյն՝ ասորաբերութեամբ բազմաց, և զվճիռս՝ ի գենգէսեաց։ Շնորհեցաք զհրովարտակս զայս առ՝ ի դարձուցանել ինքեանց զԳողգոթայն և զպահարանն, Թողուլ՝ ի ձեռս նոցա, հաստատել զմուտս նոցա, բնակել անդ և աղօթել՝ ի նմա ըստ վաղեմի սովորութեան իւրեանց, եւ ըստ ամենայնի կատարեալ արդելուլ զազգն Վրաց՝ ի տեղոջն յայնմանէ, ի կռուելոյ և՝ ի հակառակելոյ ընդ նոսա։ Եւ գրեալքս վասն նոցա գիր վճռոյ և յետկար՝ ի դատարանի, չգտանջել միաբանգամ գԳողգոթայն և զպահարանն, չվիճել

և չհակառակիլ այլ եւս վասն այնր, և ամենայն ազգ բրնակեսցի ՚ի սահմանեալ տեղիս, ըստ սովորութեան իւրեանց առանց հակառակութեան և խռովութեան։ Յորժամ հասանիցէ հրովարտակս առ բարձրագոյն առաւանն ձեր, հաստատեցէք զեպիսկոպոսն զայն և զազգն նորա ՚ի Գողգոթայն և ՚ի սպահարանն, բնակիլ անդ ըստ վաղեմի սովորութեան իւրեանց, և գրեսջիք ՚ի վերայ ազգին Վրաց գիր դատակնքոյ· որպէս գրեցի ՚ի հրովարտակիս յայսմիկ, և կատարեալ արգելուլ զնոսա ՚ի հակառակութենէ Հայոց։ Ծանձն առնեմ զնոսա ձեզ եւ զմուտս նոցա ՚ի տեղիսն յայնոսիկ· զի արժանի եղեւ մեծ եպիսկոպոսն այն չնորհաց և ողորմութեանս այսմիկ· ՚ի դառնալ և ՚ի հասանիլ խաղաղութեամբ ՚ի տեղի իւր պատուական թիւրախիւս, թէ վասն այսր և թէ վասն այլոց իրիք· ըստ սովորութեան, որպէս գրեցաք յառաջագոյն, և զոր ինչ միանգամ սահմանեալ եմ ՚ի հրովարտակիս։ Գրեալ ՚ի ԺԷ Րէհմէպ ամսոյ՝ ՈՀ (1436)։

Ընկալաւ կաթողիկոսն զբանս թագաւորին, եւ խոնարհեալ հնազանդեցաւ ամենայն հրամանաց նորին, և յանձն առ յանձնել զԳողգոթային եւ զպահարանն Սրբ եպիսկոպոսին Մարտիրոսի և ազգի նորա։ Ապա եւս կոչել զազգն վրաց գրել յեւակար ՚ի վերայ նոցա՝ ըստ բանի հրովարտակին։ Եկին և յանդիման եղեն յաստենի անդ տեսուչն Վրաց Սթաբեկ որդի Թագայի որդւոյ Զէվէնկի, Զաքարի՝ որդի Գէորգայ որդւոյ Ղազարի· Մխարգրձ որդի Սառանի որդւոյ Քեամրի, յազգէ Վրաց· և խոստովան եղեն յաստենի անդ հաճութեամբ և հաւանութեամբ իւրեանց· որք էին ՚ի կենդանութեան և ՚ի խաղաղութեան, և ասեն· ՚ի այն թագաւորէն սկսեալ այսուհետեւ չունիմք հակառակութիւն վասն Գողգոթային այնմիկ և պահարանաց նորին, ոչ մեք և ոչ ոք յազգէն մերմէ· և չունիմք այսուհետեւ ոչ ընդ եպիսկոպոսին և ոչ ընդ ազգին Հայոց· ոչ վէճ, ոչ կռիւ, ոչ առելութիւն, ոչ թշնամութիւն, ոչ դատ և ոչ դատաստան։ Եւ այսպիսի եղանակաւ կատարելապէս ՚ի բաց կացին, օրինօք և դատաստանաւ արգելին զինքեանս ՚ի Գողգոթայէ և ՚ի պահարանացն, չվիճել և չհակառակիլ յաւենայի վասն այնր, որ և իցէ աւթիւ։

եւ ևթէ երեւեսցի դոյզն ինչ չարժումն ՚ի վերայ միոյ ՚ի նոցանէ և կամ ՚ի վերայ միոյ ազգի իւրեանց հակառակ գրելոցս այսոցիկ, տուժեսցին։ Եւ այսպէս ասքս երկքեանս, որոց անուանքն գրեցան ՚ի վեր անդր, մնին ՚ի ներքոյ դատակնքոյս, և յանձն արարին զԳողգոթային և զպահարանն եպիսկոպոսին Հայոց՝ առաջի Վրաց, յանձնումն ամենայն կատարեալ օրինօք և դատաստանաւ, հաճութեամբ և հաւանութեամբ, ՈՀԷ (1434)։

Վկայք։ Օմար պէյ Խալէլ։ Ալի պէյ Մէհմէտ։ Ճօճա պէյ Խալէլ։

Թէպէտ և վերջին հրովարտակն Մարտիրոսի չերեւի ՚ի միջի, որպէս գրեցաք· սակայն ամենայն խնամս նորին հանդերձ թուականաւն· բովանդակեալ է ՚ի դատաստանագրի աստ զոր գրեցաք անթերի։

Թէպէտ և փոքր ինչ ուրախացան Հայք ՚ի վերայ ազատութեան վիճակի իւրեանց մեծամեծ ծախիւք և աշխատութեամբ Մարտիրոս Պատրիարքի· այլ այս ուրախութիւն նոցա չեղեւ տեւական· զի իբրեւ լուաւ Թագաւորն Վրաց թէ Հայք վերստին դարձուցին յինքեանս ըզԳողգոթային, առաքեաց առ Սուլթանն զորս հաւատարիմս մեծամեծ պատարագօք և ծանրագին ընծայիւք, և դարձեալ եհան զայն ՚ի ձեռաց Հայոց· ՚ի վիշտ և ՚ի տագնապ բովանդակ միաբանից եւ նոյն իսկ Մարտիրոսի, զնոսա ածեալ զսպնչաւի աշխատութիւնս եւ զնեղութիւնս զոր կրեաց ՚ի ձերբազատութեան իւրում, եւ զանբաւ ծախսս դրամոց, և զճախորդ պատահումն գործոյն· այլ զի մի իսպառ անմխիթար թողցէ զնոսա, և բամբասեսցի առ չարս ժամանակի իրրեւ հեղգ ՚ի պաշտպանութիւն ազգային իրաւանց, յանձն առ զվիշտս ճանապարհի և զայլոց, և դարձեալ չոքաւ յԵդիպտոս։ (Թէպէտ Հաննա վարդապետ զերթալն նորա հնդիցս անգամ ասէ)։ և յանդիման լեալ Սուլթանին, այն է Սպառ Սայիտ Զադմադ· եւ նախաբարեաց նորա, ասէ՝ զի՞նչ իցէ այս, զի երիցս անգամ առիք յինէն զերիս հազար Ֆլորիս, և դարձուցիք առ իս զսեփհական վիճակն իմ, և այժմ դարձեալ գրկեցիք զնս անտի եւ առուք այլոց, եւ խաղ արարիք զնս ՚ի ծերբաթեան խնամ առաջի օտարաց և խորհս խակ։ Խակ իշխանքն որք բարեկամք էին, յորդոր եղեն նմա և ասեն, դու գոլով այր մի տառա-

պետ և յեցեալ յալէս, զիարդ հնար է ՚ի կէս գալ ընդ առն թագաւորի եւ իշխանի. զի ամենայն դժուարինք, դիբրինք և հնարաւորք են առնմա. զի խոստացաւ նա առ յիւրաքանչիւր ամի Սուլթանին մերոյ զայս չափ ընծայս և տուրս ծառայս և սպրուկս, և որ ինչ միանգամ կարեւոր իրք դիպեսցին մեզ պլտզդևացս յաշխարհին իւրում, անյապաղ կատարել. մինչ և գումք կալաղ էք վճարել զայսոսիկ։ Լուեալ Մարտիրոսի զխոստ բանս բարեկամաց իւրոց՝ ՚ի միտ առ թէ այնուհետեւ անհնար է չահիլ զմիտս նոցա. և զի ինքն մերկացեալ էր յամենայն ընչից և դրամոց. զի զոր ինչ ժողովեալ էր ցայն վայր՝ ծախեաց զամենայնն, եւ այլազգի բարեկամք նորին այլ ոչ եւս անօսային ճարտարութեան բանից և քաղցրութեան բարուց. զի վաղ փոխանակեալ էին զայնս ընդ մեծամարդիս ընծայս վրաց, եւ մանաւանդ հասեալ էր յականջս նորա առաւարանք ազգին իւրոյ որ ընդ իշխանութեամբ նոցին. զի յամենայն ուրեք խոչտանգանօք ժողովին զդրամս ՚ի հատուցումն խոստացեալ հարկին։ Ուստի ՚ի բաց եկաց ՚ի Գողգոթայէ. և խորհրդով Սուլթանին ընտրեաց վիճակ ազգին իւրոյ զտաղթատեղին թագաւորաց յանդիման Գողգոթայի ՚ի տաճարի անդ, եւ խնդրեալ էառ ՚ի Սուլթանէն վկայութեամբ դատաւորաց եւ մեծամեծացն այլազգաց. լինել տեղին այն սեփհական ժառանգութիւն ազգին Հայոց, և վակեցին զայն անիծիւք ըստ օրինաց իւրեանց. և ՚ի դարձին իւրում Մարտիրոսի յերուսաղէմ, եւ հաստատել ՚ի դատաւորաց և ՚ի վերակացուաց մինչեւ Օմարայ։ Եւ ապա սկիզբն արարեալ շինեաց զայն եկեղեցի վայելուչ կրկին խորանօք, ծախեալ 1000 փլորին, և անուանեաց երկրորդ Գողգոթայ. և զարդարեալ պայծառացոյց եկեղեցական զարդուք։ Իսկ նախանձորդք ազգին՝ զարձեալ ոչ դադարէին ՚ի յուզելոյ զգաղմուկս և խառնակութիւնս, եւ կամէին խափանել զգործն ՚ի ձեռս այլազգեաց, զի հակառակ և դժպիհի իմն էր նոցա շինութիւն տեղւոյն, և բնակութիւն միաբանացն Հայոց ՚ի տաճարի անդ։ Այլ Մարտիրոս ծախեալ բազում ինչ, յաղթեաց ամենայն դժուարութեանց և խափանեաց զկորհուրդս նոցա, և ՚ի գլուխ եհան զգործն, որոյ բովանդակ ծախուց գումարն

եհաս մինչեւ 3000 փլորին, եւ ժողովեալ զվիճակեանն իւր կատարեաց զնաւակատիս նորին հոգեւոր ուրախութեամբ, և յայնմհետէ միաբանք Հայոց ՚ի սոյն տեղւոջ կատարէին զպատշաճունս իւրեանց։ Արդ՝ չինեցաւ եկեղեցին վերնատան ՚ի թուին Հայոց ՊԶՀ. (1439)։ Հանիւ վարդապետն ականատես պատմէ զարձանագրութիւնս Մարտիրոս Պատրիարքի ՚ի վերնատան անդ, ազդուցեալ յորմն. Տէ՛ Պ՛ո՛ Եբ՛՛՛՛ՀՓ, երես 225. այլ այժմ արձանագիրն այն չերեւի ՚ի միջի, զի եղծեալ ապականեցաւ ՚ի հրդեհին պատահելոյ 1808. այլ յետոյ ՚ի բանալիենէ Ծուխոց և անհոգանալոյ մերոց, ոչ եղին զայն ՚ի տեղւոջ իւրում։

Արդ թէպէտ և Վիրք հատուցին բազում չարիս, և առիթ եղեն մեծամեծ վշտաց և ազգի ազգի նեղութեանց ազգին Հայոց, առին զԳողգոթայն, զվէրսն և զներքսն սենեկան ամենայն պարագայիւք, և զրկեցին զնոսա ՚ի հայրենի ժառանգութենէ, այլ ոչ ընդ երկար վայելեցին և ինքեանք, զի զկնի իսր քառասուն ամաց Լատինք բանի հանին զմի մասն ՚ի ձեռաց նոցա, այն է Տարածման տեղին, զորմէ յետոյ. և է ցարդ ՚ի ձեռս նոցա։

Եւ զկնի ժամանակաց Վիրք խաղաղ մերժեցան և անհետացան, և անուանք նոցա ջնջեցան ՚ի տահմանաց Ս. Երկրին. բարեյորդոր խրատիւք եկեղեցականացն Ծուխոց. Գողգոթային, վանօրայք նոցին, բովանդակ կալուածք այգիք և ծառաստունկք, այլոքն հանդերձ անկան ՚ի ձեռս Ծուխոց, պարտուակաւ կրօնակցութեան իւրեանց, և նոքա տիրեն մինչեւ ցայսօր ժամանակի։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Մէկիք Զահր. զոր ինչ արար Աբուսաղէմ։ Ապստամբութիւն Ս. Յակոբայ։ Վէրնից սանգիաքն վերնատան ՚ի Ս. Յարութեան։ Վճռ վրայ վան Ս. Յակոբայ։ Եպսկ Պատրիարք։

Յաւուրս Սուլթանին եդիպտոսի Մէկիք Զահր Ապստամբեալ Զազմազայ. զորմէ բազում բանք եղեն յընթացս գործոյս։ Յառաջս սորա անկաւ կացմանն ՚ի մզկիթն Օմա-

բայ Սախրա կոչեցեալ, և այրեաց զմի մասն ձեղուան նո-
րին, եւ Սուլթանն եւս նորոգել զայն։ Սա երթալ հրա-
վարտակաւ զղրկանս և զանիրաւութիւնս ի բնակչաց ե-
րուսաղէմի, և եւս գրել զայն ի վերայ արձանի և ազա-
ցանել յորմն Տաճարին մերձ ի դուռն Սիոնիւղ կոչեցեալ։
Յետ այնորիկ առաքեաց զմի ոմն ի մեծամեծաց իւրոց
հրովարտակաւ յերուսաղէմ, ի քննին առնուլ զանօրէնս
քրիստոնէից, քակել և կործանել զնոր շինուածս եթէ
գտանիցէ ի նոսա։ Եկեալ առնն քակեաց զսեղիս ինչ,
զոր չինեալ էին Լատինք ի Սիոնի, էառ ի ձեռաց նոցա
զգերեզմանն Դաւթի։ և բրեալ եհան զսկերս կրօնաւո-
րաց, որք թաղեալ էին առ չիրմաս նորին։ Եւ առ զմի
մանն վանաց Սաղուց և կարգեաց զայն ի մզկիթ, բա-
րբառելով թէ՝ յառաջմանէ լեալ էցէ նա մզկիթ և մտեալ
ի վանս, և յանձն արար Շեյխի ուրումն լինել աղօթարան
այլազգեաց։ քակեաց զնոր չինուածս վանաց ՌեթզեհԷմի,
և տաճարին Ս. Յարութեան, երկարձ անուն զխայտաչէն
վանդակն (Տրապիզին) որ ի չրջապատս մեծի գմբեթին,
և եւս տանել զայն ի մզկիթն Օմարայ բազմութեամբ եւ
աղաղակաւ, արար քննութիւն բռնանդակ վանօրէից քրիս-
տոնէից, եւ կործանեաց զնոր չինուածս զորս եդեալ ի
նոսա։ Յաւելու Արաբացի պատմիչն թէ՝ ի սմին ժամա-
նակի անկեալ էր երկպառակութիւն և խռովութիւն ի
մէջ քրիստոնէից՝ (1468)։ ի թուին Հիճրէթի՝ ՈՀԶ։

Սայն այս Մէլիք Զահր՝ որ էառ զգողգոթայն ի ձեռաց
Հայոց և եւս զայն ազգին Վրաց, արար և բարութիւնս
ինչ միաբանացն Հայոց՝ զոր խնդրեցին ի նմանէ, զի ի
սմին ժամանակի այլազգիք կամէին ի կապալի (տաման)
առնուլ զվանս Ս. Յակոբայ, եւ արկանել զայն ընդ քա-
ղաքական հարկաւ։ սա արգել հրովարտակաւ և անիծիւք
փակեաց զայնպիսի զրկանս և զանիրաւութիւնս որոց հը-
նարէն, որոյ պատճէնն արձանագրեալ կայ ի ներքին
կողմ արտաքին մեծի դրան վանացն ի ճակատ որմոյն,
որ ունի օրինակ զայս։

برز مرسوم مولانا السلطان الملك الظاهر ابو سعيد جقمق
عز نصره بابطال ما احدثه ابو الخير ابن النحاس من ضمان مارِيعقوب

دير الارمن بالقدس الشريف عما رده سيف الدين المقر الشرفى
الانصارى وسأل فى ابطال ذلك ليسطر فى الصحايف الشريفة بتاريخ
اربع وخمسين وثمانمائة من الهجرة الشريفة ملعون ابن ملعون وعليه
لعنة الله تعالى من احدث ضمانا او جدد مظلمة

Յետ վախճանի Մարտիրոս եպիսկոպոսի և անցանելոյ
սուղ ինչ ժամանակի աւերեալ քայքայեցաւ վերելից ա-
տիճանք սանդխոյն եկեղեցւոյն Վերնատան ի Ս. Յարու-
թիւն, յորմէ չէր հնար եղանել միաբանաց և ուխտաւո-
րաց, և այլազգիք քաղաքին չտային թոյլ նորոգել զայն,
թէ և բերեալ էին հրաման ի Սուլթանէն, որպէս յայտ է
ի դատաստանագրոյն գրեալ Մէհէմմէտ ապու էլ Ֆաթի
դատաւորէն, այսպէս։

Գերիքն Հայոց որ յերուսաղէմ ազգ արարին մեզ, թէ
եմք յաշքթաւութեան և ի ոտար վիճակի։ յարեան ի վերայ
մեր ի դատարանէ վերակացուք կալուածոց (վագֆ)։
պետղ աղօթից մերոց զԳողգոթայ ի տաճարին Ս. Յարու-
թեան, ուր ժողովէաք յաւուրս ոտնից և ի ժամ աղօթից՝
յափշտակեցին զայն ի ձեռաց մերոց ազգն Վրաց, իսկ քա-
րեայ աստիճանք այժմեան եկեղեցւոյն քակեալ եւ աւե-
րեալ է, և ի մտանելն մեր ի տաճար անդր, չգտանեմք
սեղի ժողովելոյ և աղօթս առնելոյ։ հասին մեզ եւ ուխ-
տաւորաց մերոց ընդառաջ մեծամեծք, երիցքին դատաւորքն
եւսուն մեզ վճիռ չինել զատիճանին, եւ ունիմք հրովար-
տակ վասն այնր։ Յետ այսր դանկատանաց դատաւորն և
այլազգիք եւսուն հրաման դներեցան (1) Հայոց չինել զա-
տիճանան ըստ առաջնոյն, որպէս արտադրէն վճիռք դա-
տաւորաց և արքունի հրովարտակն։

Ազգն Վրաց ձեռնտուութեամբ թագաւորին իւրեանց
և զօրութեամբ Սուլթանացն եգիպտոսի, տիրեցին վիճա-
կին Հայոց, եւ զի առաւել եւս նկուն արասցեն զնոսա,
խորհեցան գրաւել նաեւ վանս Ս. Յակոբայ, որպէս յա-
րուցին վճռս յաւուրս Սարգսի, եւ չ'չահեցան ինչ. խակ

(1) Գերիքք յաշխարհն Վրաց, և անդր ի նոցանէ ազատեալ
ի գերութենէ եկեալ են յաւետ ուրախութիւն։

այժմ վերատին չարժեցան յուզել զվանդիրն զայն, որպէս յայտ առնեն յետագայ բանք հրովարտակին, զոր գրեալ է Մէլիք Զահր Սէյֆի Ահմէտ, առ կուսակալն Պաղեստինոյ · օրինակ զայս ։

Ցայնմ է ձեզ հրովարտակն զոր յառաջադոյն գրեցաք, թէ յանդիման եղեւ մեզ առա յառենի մերում դեսպան թագաւորին Վրաց · վասն արքունի գործոց ինչ ։ Եւ մեկնեալ պատի դնաց յերուսաղէմ և սկսաւ անդ հակառակիլ և բռնանալ 'ի վերայ ազգին Հայոց յաղագս վանացն Ս · Յակորայ սեփհականութեան նոցին ։ Եւ նոքա յանդիման եղեն մեզ առա առենիս և մատուցին զհրովարտակս և զմուրհակս արքային դառաւորաց և մեծամեծաց քաղաքիս, յորս յայտնապէս ասացաւ թէ զործն է հաստատուն և աւարտեալ իրաւամբ և արդարութեամբ՝ զերծ յաւելբանութենէ և 'ի սուտ թենէ ։ Եւ հանրագիր 'ի բազմաթիւ ժողովրդոց՝ մատուցեալ առ թագաւորն · յորում ճառէր զճշմարտութիւն իրին · գրեալ ճշմարտութեամբ և ուղղութեամբ 'ի վառս վկայն Աստուծոյ, որ ունէր օրինակ զայս ։

«Դատաւորք և գիտնականք և մեծամեծք Երուսաղէմի, եւ այլ մեծ և փոքր բազմութիւն ժողովրդոց 'ի մի վայր գումարեալ գնացաք 'ի վանս Ս · Յակորայ, որ է սեփհականութիւն ազգին Հայոց · յայտնել և առուգել զզործն, ժողովեցան անդ ժողովուրդք 'ի Հայոց և 'ի Վրաց, առաջի դեսպանի թագաւորին Վրաց ։ Հայք մատուցին զհրովարտակս եւ զմուրհակս՝ զորս ունէին 'ի ձեռս իւրեանց, յորս յայտնապէս գրեալ և ծանուցեալ էր թէ վանք Ս · Յակորայ է սեփհականութիւն իւրեանց, և ինքեանք ժառանգեալ են մինչեւ ցայսօր ժամանակի » ։ Յետ այնորիկ հարցումն եղեւ և դեսպանին թէ՝ ունի՞ք և դուք զայսպիսի գիրս յաղագս Ս · Յակորայ յայտարար իրաւանց ձերոց ։ Իսկ դեսպանն ոչ կարաց մատուցանել գիրս ինչ 'ի հաստատութիւն եւ 'ի վկայութիւն իրաւանց ազգին Վրաց, առաջի բազմութեան ժողովրդոյն ։

Յետ այսր դատաստանի և քննութեան՝ վերատին եկն դեսպան 'ի թագաւորն Վրաց, և յանդիման եղեւ մեծի առենիս՝ դարձեալ յաղագս վանացն Ս · Յակորայ · և մեք հրամայեցաք գրել հրովարտակ վասն այնր ։ Եւ 'ի նմին

ժամանակի Հայք մատուցին յառեան թագաւորութեանս մերոյ զհրովարտակս՝ զոր ունէին յաղագս վանացն իւրեանց, որք էին՝ 1° հրովարտակ 'ի Մէլիք Աչրաֆէ, որոյ իմաստն է · «Ազգն Հայոց բնակեալ 'ի վանս Ս · Յակորայ, յայտ արարին մեզ զնեղութիւնս և զվնաս իւրեանց, զոր կրեցին յերեսաց ազգին Վրաց · և մեք գրեցաք զհրովարտակս, զի մի նեղեսցեն զնոսա · գրեցաւ 'ի թուին ՃՃ· (1477) ։ 2° հրովարտակ յաւուրց անառ Մէլիք Զահր Պերդուդայ, յորում վկայէ նոյնպէս զինքն թագաւորն ։ 3° հրովարտակ Ղալաւունի որդի Մէլիք Նասրէդին · գրեալ 'ի թուին ՎՀՃ (1329) ։ 4° հրովարտակ 'ի Սալէհ Նասրէդին՝ գրեալ 'ի թուին ՎԼՕ (1315) ։ 5° հրովարտակ 'ի Մէլիք Զահր Զաքմագդէն · գրեալ 'ի թուին ՃՕ· (1446) ։ Նոյնպէս Նաոնակ 'ի կուսակալէն, եւ դատաստանագիր քառակուսի 'ի դատարանէ, յորս բացայայտ գրեալ և ծանուցեալ են, թէ վանք Ս · Յակորայ՝ է սեփհականութիւն ազգին Հայոց » ։

Ցայնժամ հարցին և դեսպանն, թէ ունի՞ն ինքեանք եւս գիրս ինչ վասն այսր, և ա պատասխանեն և ասէ՝ ես ոչ ունիմ ընդիս մուրհակս ինչ կամ գիրս, և ոչ գիտեմ թէ ունի՞ թագաւորն մեր։ Ապա խոստովան եղեւ յառենի անդ թէ Հայք ապրեալ են և ապրեն մինչեւ ցայսօր ժամանակի վանաց Ս · Յակորայ ։

Այսոքիկ դատաստանք մինչեւ ցայս վայր զոր գրեցաք, բովանդակեալ էր 'ի մուրհակին, թէպէտ 'ի վերջոյ՝ ոտղս ինչ մաշեալ ։

Եսայի Արք Եպիսկոպոս կամ Պատրիարք աթոռոյն Երուսաղէմի, առ սա գրեաց պատն Հռոմայ Եւգինէոս Ե· Թուղթ, և ընդ նմին առաքեաց զթուղթս առ Կոստանդին Կաթողիկոսն Հայոց · փութով հասուցանել առ նա, յորում հրաւիրէր զնոյն ինքն զկաթուղիկոսն ընդ այլոց Հայրապետաց փութալ գալ 'ի ժողովն Փլորէնտիոյ ։ Իսկ Եսայի Պատրիարք առաքեաց զայն թուղթ 'ի Կիլիկեայ 'ի ձեռն Սարկաւագին իւրոյ որ կոչէր Ագաթանէհ · և ապա գրեաց առ Եւգինէոս, թէ առաքեցի զնամակն ձեր · Հ · Մ · Զ՟Ա՟Ե՟Ն՟ · Գ · Նբե՟ 474 · (1439) ։

Վասն այսր ժողովոյ այսպէս պատմէ Արաբացի Ծայն պատմիչն · «Մարկոս Եպիսկոպոս փոխանորդ Պատրիարքին

երուսաղէմ՝ գտաւ ՚ի ժողովն Հռոմայ, և ոչ ընկալաւ բռնահանման նորա, բարկացեալ կայսեր կամեցաւ բանտարկել զնա, և նորա խոյս տուեալ անտի եհաս յարեւելս՝ և Յովակիմ Յոյն Պատրիարքն երուսաղէմի ընկալաւ զնա առ իւր, գրեաց և այլ Պատրիարքունս աթոռոց, և յայտ արար նոցա թէ՝ կայսրն բռնադատեալ է զիմոհանորդ իւր, հակառակ կամաց իւրոց ընդունիլ զահմանս ժողովոյն, ժողովեցան առ Յովակիմ՝ Պատրիարքունք Աղէքսանդրիոյ, Անտիոքայ, Կեսարիոյ, և այլ արեւելեան կղերք ՚ի ժողովակի առ սահմանեցին ոչ ընդունել զահմանս ժողովոյն՝ և նզովիւք հերքեցին ոչ ընդունել զվեհաւորութիւն Պապին Հռոմայ։ Ընկենցին յաթոռոց զՊատրիարքն Կոստանդնուպօլսոյ զՄեթոփանես, որ ընկալեալ էր զահմանս ժողովոյն Հռոմայ։ Մեռաւ Յովհաննէս կայսրն, և նստաւ յաթոռ թագաւորութեան որդի նորին Կոստանդին (1449), վերջին կայսրն Յունաց։ Գնաց անդ Գրիգոր Պատրիարքն երուսաղէմի յաջորդ Յովակիմայ, Հասին և այլք, և ընկալին զԳրիգոր Պատրիարքն մայրաքաղաքին իբր հետեւող Պապին, և եդին ՚ի տեղի նորա զԱթանաս»։ Ի սմին ժամանակի երեւի չինեալ վանքն Ս. Փրկչի, որպէս յայտ առնէ յիշատակարան ձեռագրիս մատենի. այսպէս, Տէր Յիսուս արդար բարի՝ ողորմեա կարապետ վարդապետի երուսաղէմացւոյ՝ որ բազում աշխատութեամբ եւ երկարիւ զՍ. Փրկիչ եկեղեցին գնեցի յայլազգեաց և վանք չինեցի բան կարի խմուտ, որ է տեղիք չարչարանաց Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ, ուր կայ աստուածամարտ վէմն ուղղան Պատարագի։ Զորս անգամ յԵգիպտոս իջի և առի թուղթ հրամանի յաքքայէն Եգիպտոսի վասն խաղաղութեամբ կեալ և շրջել ՚ի Տնօրինական տեղիս։ Իսկ այլք առին թէ կարապետ վարդապետ աշակերտ Յովհաննու Արձիշեցւոյ ՚ի Տոսպ գաւառէն, եկեալ ուխտ յերուսաղէմ, և տեսեալ զվանս Ս. Փրկչի, զոր յափշտակեալ Աբարայեցոց արարեալ էին խան կամ ախոր, իջեալ Եգիպտոս 4000 դահեկանի գնէ զտեղին ՚ի Սուլթանէն, և վերստին չինէ զայն եկեղեցի։ Սակայն Աբարայիք ՚ի հինանէ կործանեցին զվանքն, յաւուրս Վասլի Պատրիարքի՝ որպէս գրեցաք, և ՚ի յիշատակարանի չիք յիշատակութիւն լինչ արարեալ զայս

կամ զայն, բայց է թէ ՚ի վերոյ աւերակաց նորին չինեաց զայն վանքն։

Գ Լ Ո Ւ Խ Լ Դ ։

Ագարակ արտաքոյ քաղաքին։ Սարգիս և Մկրտիչ եպիսկոպոսունք։ Յոյն պատրիկ. վէմ ընդ երկեմի վանաց։ Դէսպան Վրաց և վէմ նորա վասն Ս. Յակոբայ։ և Գողգոթայի։

ԶԱԶԱՐ անուն ումն որդի Ապտուլլահի որդւոյ Մէճալի Բնէրիացւոյ, մարան Ս. Աթանայն երուսաղէմի, սա դբյի Բնէրիացւոյ, մարան Ս. Աթանայն երուսաղէմի ՚ի վերոյ նեաց ագարակ արտաքոյ քաղաքին երուսաղէմի ՚ի վերոյ ճանապարհին Բեթղեհէմի, զանուն աւերոյն այնորիկ Ա-րարացիք կոչեն՝ Աբո էլ պէյթա, և անկեաց անդ այգի, և օրինօք դատարանի կուակեաց զայն լինել մի ՚ի կալուածոց վանացն Ս. Յակոբայ. որպէս ցուցանէ մատեանն գըրեալ ՚ի թուին ՈՂՀ (1456)։

Սակայն՝ այս և սմին նման այլ ագարակք և պարտէզք, ՚ի փոփոխութենէ իշխանութեան ժամանակին և ՚ի բռնութենէ Արարացւոց՝ վերաւին յաւիշտակեալ են, եւ այժմ չեն ՚ի ձեռս Հայոց։

Սարգիս եպիսկոպոս որդի Ապտուլլահի. սորա տեսեալ զվանս Ս. Յակոբայ իբրեւ զնաւ հողմակոծեալ և տատանեալ ՚ի մէջ անկարգութեան և խառնութեան. վի յառաջագոյն ոմանք յանզգոյշ միաբանաց հասեալ յիշխանութեան՝ առեալ էին գյոլով գրամս պարտեաց՝ ծանր տոկոսիւք. եդեալ ՚ի գրաւ զկալուածս վանացն, զզեստս և սիւք. եդեալ ՚ի գրաւ զկալուածս վանացն, զզեստս և վսպասս եկեղեցւոյ. ՚ի մեռանիլ կամ յանկանիլ յիշխանութենէ վիոյն, ծանրանայր պարտքն ՚ի վերոյ յաջորդին, իբրեւ ոչ կամէր ճանաչել եւ յանձն առնուլ զվճարումն նոցա, ծադէին վէճք և խառնութիւնք. կոդէին և կռուէին միաբանք ընդ նախագահի իւրեանց, և ՚ի առատանալ ազգին՝ ըմբռնացեալ գրամատուաց զդրաւն հանէին ՚ի վանաւ. Իսկ Սարգիս եպիսկոպոս խնամ կալաւ գարմանել զիրս և բառնալ ՚ի միջոյ զայնպիսի գործովքն անկարգութիւնս, որ նախասահք էին ազգին. ուղղեաց հար-

ցուսմն ինչ առ կրօնապէտս այլազգեացս, և խնդրեաց 'ի նոցանէ վճիռ 'ի լուծումն խնդրոյն. նոքա ետուն պատասխանի թէ՝ չէ օրէն զկալուածս վանից եւ զանօթս եկեղեցւոյ դնել 'ի գրաւի և կամ հանել 'ի վաճառս. ի վերայ այսր բանի էառ յետոյ 'ի դատաւորէ քաղաքին, և յայնմհետէ արգել եւ խափանեաց զանկարգութիւնս նոցա. մինչեւ չդնել զինչս եկեղեցւոյ 'ի գրաւ, և պարտատէրս չհանել զայնս 'ի վաճառ. իսկ եթէ ոք անհաստ գտեալ հրամանին՝ ժպրհեսցի յայնպիսի անարժան գործս, մտանեսցի 'ի տուգանս և 'ի բանս. (1470)։

Մկրտիչ եպիսկոպոս որդի Յովհաննիսի. սա համարի 'ի կարգս Պատրիարքաց աթոռոյն Երուսաղէմի. Յաւուրս իշխանութեան նորա 'ի վարձու կալաւ տուն մի 'ի թաղն Սիոնի մերձ 'ի վանս Ս. Յակոբայ 'ի կողմն հիւսիսոյ. նաւթ Աստ կոչեցեալ յայլազգէ. ամն 48 և աւելիս 8 պայմանաւ ժամանակի. եւ 'ի դատարանի մուրհակաւ հաստատեաց զպայման դաշինն։ Սակայն այլազգին այն միով ամաւ յառաջ 'ի վարձու առեալ էր զտունն 'ի Հայազգի Մարիամ հնոջէ, որ 'ի կենդանութեան իւրում կտակաւ աւանդեալ էր 'ի կալուած Ս. Յակոբայ. կտակակատար կացուցեալ զնոյն ինքն զՄկրտիչ եպիսկոպոս։ Եւ չեւ եւս լցեալ պայմանաժամն յարեան այլազգիք 'ի վերայ Մկրտչի և պահանջէին զտունն. իսկ նա օրինօք Շէրիի մերժեաց զնոսա։ Զի նախ քան զլրանալ պայմանաժամուն և մեռանելոյ Տեառնէն, որ էտ զտունն 'ի վարձու՝ չէ օրէն առնուլ զայն 'ի ձեռաց նորա։ Եւ 'ի միւսմ նուագի յորժամ կարի սակեկին զնա այլազգիքն. էտ պատասխանի՝ եւ փոխանորդ էի յայնժամ Աբրահամ եպիսկոպոսի որդւոյ Իսկէնտէրի որդւոյ Տաղեայ Բերիացւոյ, որ վերատեսուչ էր վանից. և այսպիսի եղանակաւ թափեաց զտունն 'ի ձեռաց այլազգեաց, եւ օրինօք դատարանի հաստատեաց զայն իրրեւ կալուած վանից, որպէս յայտ առնէ դիր դատարանի գրեալ 'ի թուին՝ ՌՌՌ (1483)։

Մկրտիչ եպիսկոպոս որդի Յովհաննիսի, որ վարեր զիշխանութիւն Պատրիարքութեան Երուսաղէմի, և 'ի ծերութեան իւրում ինքնայօժար կամօք հրաժարեցաւ Պատրիարքական յաթոռոյն, և օրինօք դատարանի, ըստ սովորութեան ժամանակին, կացոյց 'ի տեղի իւր զԱբրահամ եպիսկոպոս որդի Իսկէնտէրի որդւոյ Ազատուլլահի Բերիացւոյ, այր խոհեմ և մտացի հմուտ ամենայն գործոց կառավարութեան, զոր ինքն ընտրեալ էր յառաջագոյն, և ետ հաստատել զիշխանութիւնն նորին մուրհակաւ դատաւորին եւ մեծամեծացն այլազգեաց. և զարձ արարեալ 'ի վանս՝ նստոյց զԱբրահամ յաթոռ Պատրիարքութեան, յանձն արարեալ նմա զամենայն հոգս և գյանձանցանս աթոռոյն, և ինքն առանձնացաւ 'ի տեղիկի ուրեք մինչ 'ի վախճան կենաց իւրոց. 'ի թուին՝ ՌՂԱ (1485)։ Սոյն այս Աբրահամ գնեաց տուն մի 'ի կալուած Ս. Յակոբայ (1492)։

Յայն Արաբացի պատմիչն յառաջ բերէ զճանապարհորդութիւն Գաղղիացի կրօնաւորի ումեմն Նիգոլայ Կաւիան անուն, ուր ասէ՝ Հէտս նա յերուսաղէմ եւ իշխեանեցաւ 'ի վանս Սիոնի ճոխացեալ հարստութեամբ ընծայիւք թագաւորացն Եւրոպացւոց. և վանքն էր 'ի տեղւոջ յայնմիկ, ուր Քրիստոս կատարեաց զաւուրհնդրդ Ընթրեաց և 24 կրօնաւորք Լատինաց բնակէին անդ, տեսուչ նոցին կոչէր պահապան Ս. Երկրին. 2 քահանայք նոցին բնակէին 'ի տաճարն Ս. Յարութեան. եւ թէ Լատինք երկնչէին 'ի բազմութենէ Յունաց, զի Գերեզմանն Քրիստոսի էր 'ի ձեռս նոցա, և մեծ եկեղեցին Բեթղեհէմի՝ էր 'ի ձեռս Լատինաց, և կոչէին զնա յանուն Ս. Աստուածածնի, տիրէին նաեւ այրին Ծննդեան, ունէին և զայլ վանս 'ի Սիոն, ուր բնակէին 6 հաստատուն կանայք. Հայք ունէին զՍ. Յակոբ և զՍ. Փրկիչ. եւ էին յերուսաղէմ Մարոնիտք, Աստրիք, որք Յակոբիք կոչին, Քրլոսանիք, որք են Նեստորականք, և Գալիք. սոքա ամենեքեան բազմութեամբ բնակէին յերուսաղէմ, եւ Հրէայք էին անձինք իրրեւ 300. բայց Վրացիք 'ի սմին ժամանակի էին 'ի մեծի յարգանս ընդ իշխանութեամբ Սուլթանացն Եգիպտոսի. և պատճառ այսմ, զի ծագումն Սուլթանաց էր յաշխարհն արեւելից, և Վիրք գերի վարեին զնոսա Չերքէզս, և Սուլթանք յիշէին զազգատոհմն իւրեանց. դիտէին նաեւ զգօրութիւնս Վրաց, եւ պատուէին զնոսա, որք մտանէին յերուսաղէմ երիսաւորք և պինդք, և ոչ ապրին հարկս ե-

գիպատցւոց՝ և Գողգոթայն էր ի ձեռս նոցա, ոմանք կարծեն թէ՝ (էր ի ձեռս Լատինաց, և երբեմն պատարագէին անդ), Խաչափանքն և այլ տեղիք, և ոմանք ի քահանայից վրաց քնակէին ի Ս. Յարութիւն։

Իսկ Արաբացի այլազգի պատմիչն ասէ, ի սմին ժամանակի Լատինք դերի վարեցին զարս և յԱղէքսանդրիայ քաղաքէ, խնացեալ զայս Մէլիք Աշրաֆայ բարկացաւ յոյժ, գրեաց հրովարտակ եւ ի ձեռն ուղտապանաց առաքեաց զայն յերուսաղէմ, ըմբռնել զլատին կրօնաւորս, որք բնակէին ի Սիոն՝ ի Բեթզեկէմ, և ի Ս. Յարութիւն, և առաքել զնոսա կապանօք ի դուռն Սուլթանին, ի թուին ՈՒՒ (1476)։

Դեսպան թագաւորին Հապեշաց եկն յերուսաղէմ հրովարտակաւ Մէլիք Աշրաֆայ մերձ յաւուրս սոյն Պաւսէքին, և էին ընդ նմա ոսոխականք եւ գանձապահն կաստակոլին Դամասկոսի։ Սուլթանն գրեալ էր, չարգելուլ զբրիստոնեայս և չխափանել զմուտս նոցա ի տաճարն Ս. Յարութեան։ Իսկ այլազգիք քաղաքին վիայն զեսպանին և ժողովրդոց նորին եառն հրաման մտանել, բայց նա ոչ առ յանձն և մերժեաց զբանս նոցա, ապա յանձն արարին նմա զխնդրանս տաճարին, և նորա բացեալ զդուռնն եմուտ ինքըն և ամենայն ազգ քրիստոնէից՝ առանց հարկի եւ ծախուց, եւ կատարեցին հանդիսիս զոհս Ս. Զատկին, ի թուին՝ ՈՒՕ (1480)։

Լատին կղերք որք բնակէին ի վանս Սիոնի, չինեցին տրտաքոյ նորին մերձ ի գերեզմանատունս քրիստոնէից գմբեթ եւ ի ներքոյ սեղան պատարագի։ տեսեալ զայն դատաւորաց և մեծամեծաց քաղաքին, ժողովեալ գնացին անդ բազմութեամբ և բազմեցան ի ներքոյ գմբեթին այնորիկ, և սկիզբն արարին քննութեան, քրիստոնեապէս ասէին թէ՝ տեղին այն է գերեզման Բագոսի, և ուխտատեղի քրիստոնէից, պատ վասն գիտութեամբ այլազգեաց չինեցին գմբեթ ի վերայ նորա, կարծելով թէ անդ թաղեալ իցէ Բագոս վկայն, զոր Արաբացիք կոչեն Շեյխ էլ Մենա-էն, զորմէ գրեալ եմք յառաջագոյն։ Իսկ ի քննութեան, վկայութեամբ այլազգեաց յայտնի եղեւ թէ գերեզման Բագոսի է յայլ ուրեք ի պարտիզի ի ձեռս այլազգեաց մերձ

ի գմբեթն այն, և ոչ ոք գիտէր թէ ով թաղեալ է անդ։ և այլազգիք պնդէին թէ քրիստոնեապէս չունին իրաւունս ձեռն մխել յայն տեղի։ Ապա առաջեալ հաստատեցաւ թէ տեղին յորոյ վերայ չինեալ են Լատինք գմբեթ, էր տուն Ս. Աստուածածնի, որպէս ասէին քրիստոնեապէս։ Լատինք չինեալ էին զայն ի ձեւ եկեղեցւոյ եւ ուներ սեղան յարեւելս։

Սակայն տեղի եկեղեցւոյն սեփհականութիւն էր այլազգեացս։ Կոչեաց դատաւորն ի ժողով անդր զվերակացուս չինութեան այնորիկ, որք էին՝ Լատին վերատեսուչն Սիոնի վանացս և այլք ի քրիստոնէից։ և եհարց զնոսա վասն այնր, և նոքա խոստովան եղեն թէ՝ ինքեանք են պատճառ չինութեան եկեղեցւոյն, և դատաւորն պարտաւորեաց զնոսա կործանել զգմբեթն։ Եւ զկնի այսմ քննութեան առաջի եդին այլազգիք Լատինաց զայլ իմն խնդիր կարեւոր։ զի ի մէջ վանացս Սիոնի էր կամարակապ սենեակ մի, տեղի ժողովոյ Առաքելոց և իջման Հոգւոյն Սրբոյ, և ձեւ մինչ տապանի։ իբր թէ իցէ գերեզման մարգարէին Դաւթի։ քրիստոնեապէս պնդէին վասն այնր թէ՝ ի վաղ ժամանակաց անտի է ի ձեռս իւրեանց, յորոյ վերայ բազմադիմի վէմս յարուցին այլազգիք՝ իբր 100 ամաց յառաջ (1)։ և խնդիրն եհաս մինչեւ չեւ յառեանս առաջին Սուլթանաց, և գրեցաւ յայնժամ հրովարտակ վասն այնր։ յորմէ սաստկացաւ վէմն ի մէջ քրիստոնէից եւ այլազգեաց։ երբեմն յափշտակէին զայն այլազգիք, և քրիստոնեապէս դարձուցանէին։ եւ խնդիրն մնաց անորոշ մինչ ի ժամանակս Մէլիք Զահր Զաքմագի, եւ յառնէր նորա վերստին քննեցաւ խնդիրն և տուաւ հրովարտակ ի թուին՝ ՈՕՂ (1468)։ Որպէս գրեցաք յառաջագոյն։ և ի սոյն թուականէ մնաց գերեզմանն Դաւթի ի ձեռս այլազգեաց։ չինեցին անդ ժԹ խուցս ի կողմն հիւսիսոյ, ուր էր երեւոյթն՝ զորմէ ասէին թէ՝ է գերեզման Դաւթի, և կարգեցին վերատեսուչ եւ առօրիկ ի

---

(1) Հայկական յիշատակարանն պատմէ յառաջ բերէ 1201 յամին՝ պատգիք առին զԱիծն ի ձեռաց Լատինաց։ և յետ ժամանակաց՝ միջնորդութեամբ Ռոպերթոս թագաւորին Սիկիլիոյ վերստին ժառանգեցին զայն առ խուր 13։ և յետոյ ետպատ պատարքեան անտի։

պէտս ծախուց, եւ դրեցին վասն այնր հրովարտակ Սուլթանքն Եգիպտոսի՝ Մէլիք Զահր Իւնալ, եւ Մէլիք Զահր Մօշ գաւառ, և մնաց տեղին ի ձեռս այլազգեաց առանց հակառակութեան մինչեւ ցայսօր ժամանակի, եւ ոչ յայտնեցաւ իրաւունք քրիստոնէից, Ցետ այնորիկ մտեալ բազմեցան ի տեղիկի անդ՝ դատաւորն և մեծամեծք այլազգեաց· ընթերցան զկուրանն՝ յիշեցին զԱստուած եւ գովեցին զմարգարէն իւրեանց· որ բարձրացոյց զիսլամն և յամօթ արար զպաշտօնեայս խաչին, և ապա պարտաւորեցին զքրիստոնեայս և սահմանեցին յաւուր կիրակիէ կործանել զգմբէթն, զորմէ գրեցաք յառաջագոյն։ Իբրեւ մտանէր ամբոխ այլազգեաց ի քաղաքն, լու եղեւ Թէ՝ Սուլթանն Եգիպտոսի հասեալ ի Ռէմէ՝ կանգնեալ է անդ զվրան իւր, խռովեցաւ քաղաքն և առհասարակ փութային ելանել ընդառաջ նորա խառնամբոխ բազմութեամբ։ Իսկ դատաւորն ամալարէր և փութացուցանէր զկործանումն գմբէթին նախ քան զժամանել Սուլթանին· երկուցեալ գի մի նոր ինչ դէպք պատահեսցի ի գալստեան նորին։ Իբրեւ ի վեր էլ սատիճն համրաւոյն՝ ժողովեաց դատաւորն զմեծամեծս քաղաքին՝ գնաց բազմութեամբ ի վանս Սիոնի և բազմեցաւ անդ՝ եւ հրամայեաց ածել զգործիս կործանման· և վաստակեցան անդ բազմաթիւն մեծ ցայգուէ մինչեւ շերեկոյ, որոց աղաղակն դղրդէր առ հասարակ զքաղաքն, և քակեալ տապալեցին զեկեղեցին մինչեւ ի հիմունս նորա· գի մեծ էր ասէ Արաբացի պատմիչն՝ օրն այն Իսլամայ յաղթանակել ի վերայ քրիստոնէից, նախատել և թշնամանել զնոսա։ Ցետ աւերման դատաւորք և իշխանք՝ գրեալ յայտ արարին Սուլթանին Եգիպտոսի, զոր ինչ միանգամ արարին յերուսաղէմ· ի թուին ՋՀՐ (1489)։ Եւ զկնի միոյ տարւոյ եհաս հրաման ի Սուլթանէն կործանել խաղաւ զեկեղեցին, և բրել հանել գքարինս ի հիմանց նորա, և չթողուլ նշոյլ ինչ ի շինուածոց անտի։

Ի սատկութենէ յորդ անձրեւաց տարւոյն, քայքայեցաւ մի մասն տաճարին Ս. Յարութեան՝ և մեռան ի վաստակի անդ ոմանք ի Հապեշաց, և քրիստոնեայք ոչ կարացին նորոգել զաւերեալ տեղիսն, ՋՀՎ (1491)· յամ-

սեանն Ցունվարի։ Եւ ի սոյն ամի տարածեցաւ ժանտախտ յերուսաղէմ և ի սահմանս նորա· եւ մեռան բազումք ի քրիստոնէից և Հապեշաց և յայլազգեաց, և տեւեաց ամիսս երեք և դադարեաց։

Ոմանք ի բնակչաց Բեթղեհէմ աւանի յարուցին վէմս և կաքէին ընդ միմեանս Հայոց· իբրու Թէ՝ վերին սենեակն և քարեայ աստիճանք նորին ոչ են ի մասանէ վանացս· իսկ Տէր Սէթ որդի Գրիգորի (եգիպտացի) նեղեալ ի խռովութենէ դիւզականաց, ժողովեաց զգլխաւորս այլազգեաց և քրիստոնէից Բեթղեհէմի, և նոքօք դիմեաց առ դատաւորն երուսաղէմի· մատոյց և զերկրաւարտակն որքունի, որ վասն Բեթղեհէմի վանացս (այս հրովարտակ չերեւի այժմ ի միջի)· ընթերցաւ զայն դատաւորն առաջի գիւղականի, և Հարց ցնոսա զպատճառս ամբաստանութեան եւ նոցա, և Հարց ցխռովութեան նոցին· իսկ նոքա չկարացեալ պատասխանել զայլ ինչ, միայն ասացին Թէ՝ չունիմք իրաւունս ոչ մեք և ոչ բնակիչք Բեթղեհէմ գիւղին՝ ասել ինչ վասն վերնայարկ սենեկին, որ հարաւակողմն վանացս, և ոչ սանդղոցն՝ որ հանէ ի վեր· զի նոքա են մասն սեփհական վանացն այնորիկ, որոց տիրեալ է ազգն Հայոց ի վաղ ժամանակաց անտի· ուստի չունիմք վէմս եւ հակառակութիւնս վասն նոցա, և ոչ ընդ միաբանս և ընդ ժողովուրդս նոցա, որք բնակին ի վանս և ի գիւղն Բեթղեհէմի, եւ ոչ ընդ ախտաւորս նոցա, լուեալ դատաւորին զբանս գիւղականաց՝ օրինօք դատաւրանի հաստատեաց զիրաւունս Տէր Սէթայ, պատուիրեալ գիւղականաց չյարուցանել զայնպիսի ընդդունայն վէմս և խնդիրս· գրեալ ի ԺԷ Բէճէպ ամսոյ՝ ՋԻԶ (1519)։

Ցետ յաւիտենական վրաց զվիճակն Հայոց զԳողգոթայ, որպէս գրեցաք լիովին յառաջագոյն, եւ յետ անցանելոյ ամաց ինչ, Լատին կղերք բռնի կորզեցին զմի մասն նորին, այն է Տարածման տեղին, ի ձեռաց նոցա· և ազդ առնել վրաց Վասիլ Թագաւորի իւրեանց, զբռնաբարիլ իրաւանցն, բողոք կալաւ նա առ Սուլթանն Եգիպտոսի Մէլիք Աչրաֆ Սէյֆի, և առաքեաց դեսպանս և խնդրէր ի նմանէ գրել հրովարտակ առ կուսակալն երուսաղէմի եւ քերեկի· զի միով կայեցեն պաշտպանել զՀաչամանքն, զե-

կեզեցիս և զկրօնաւորս և զայլն՝ որք բնակին անդ, զի մի հարստահարեալ նեղեսցեն զնոսա, այլ կացցեն և մնասցեն 'ի յարգանս և 'ի մեծարանս, որպէս էին յառաջագոյն, նորոգել զաւերեալ եկեղեցիս առանց այլայլելոյ զառաջին դիրս, և չառնել թոյլ ումեք առանց հրամանի առնել նորահնար իրս՝ որ ոչ էր 'ի բնէ։ Եւ վասնզի Ս. Յակոբայ, որոյ տիրեալ են Հայք, սեփհականութիւն է ազգին Վրաց։ Եւ Լատինք չինեալ են նոր խորան 'ի վիճակին Վրաց 'ի Ս. Յարութեան, և պատարագեն անդ։ Արդ՝ խնդրեմք առնուլ զվանս Ս. Յակոբայ 'ի ձեռաց Հայոց և տալ Վրաց. կործանել զնոր սեղանն զոր հնարեալ են Լատինք յեկեղեցւոջ յայնմիկ։ Սուլթանն յարդանօք ընկալաւ զդեսպանն և զնամակ թագաւորին Վրաց, և գրեաց հրովարտակ առ մեծ նախարարն Եւ վտհանորդն իւր, որոյ անունն էր Սէյֆէ Եոսուֆ եԼ Աչրաֆէ։ Ի մեծաց հրովարտակին՝ յետ յարգական ողջունի և կարդալոյ զանուն գԹագին և ողբմածին Ատաւծոյ, և մակագրութեանն՝ ասէ. «եկն 'ի դուռս մեր Վսեմ Դեսպանն վսեմաւոր արքային Վրաց, և եգիտ պատիւս և մեծարանս յարքունիս մեր, և մատոյց զնամակ թագաւորին իւրոյ, յորում հայցեր զչնորհս 'ի գԹութենէ մերմէ սակս խնդրոյ ինչ։ Ահա գրեցի առ մեծութիւն ձեր՝ երևեալ անձամբ 'ի քննութիւն վանացն Ս. Յակոբայ, եւ սեղանոյն Լատինաց, առեալ ընդ քեզ զդատաւորս զմեծամեծս և զարս երեսելիս, որք բնակին յերուսաղէմ, քննել առաւգութեամբ և արձանագրել զամենայնն առանց նպատակի և թշնամութեան, եւ առանց հետեւելոյ հաճութեան կամաց։ Եթէ առաւգեցի թէ՝ է նորաչէն սեղանն Լատինաց՝ կործանելոյիք զայն։ Եւ եթէ յայնմի լեցի թէ՝ վանք Ս. Յակոբայ լեալիցէ սեփհական ազգին Վրաց, եւ Հայք բռնութեամբ տիրեալ են նմա, դարձուսջիք զայն առ Վրացիս ըստ սովորութեան իւրեանց, և գրեսջիք հանրագիր օրինօք, եւ վկայեսցեն 'ի նմա ամենայն արք երեսելիք՝ որք են 'ի ժողովի ձերում, և առաքեսջիք զայն առ Բարձրագոյն դուռն մեր։ Հրամանն առաջիք դեսպանին չինել և նորոգել զաւերեալ վանս իւրեանց 'ի վերայ նախնական դրից, առանց առնելոյ նորահնար իրս ինչ։ Արդ՝ մնկնեալ առաւ դեսպանին այն-

միկ դիմաց գալ առ մեծութիւն ձեր, յորժամ առասանելոյիք զբարձրագոյն հրովարտակս և զարքունական խիլայն՝ հաւատարմութեամբ գործեսջիք, տալ հրամանն դեսպանին, ազգի և ժողովրդոց նորին կալ 'ի խաղաղութեան, բառնալով զպատճառս վնասուց և նեղութեանց, որք կամին ածել 'ի վերայ կալուածոց այգեաց և ուխտաւորաց նոցին, չհակառակիլ ումեք գործոց եւ արարոց նոցին, նեղութեամբ վնասուք և տուգանօք, զորս կատարեն ըստ սովորութեան իւրեանց, և մի հնարել նորանոր իրս, կամ նորոգել զանիրաւութիւնս և զչարիսն, զի յաւուրս յայսոցիկ եղեւ սէր և խաղաղութիւն և դաշնակցութիւն արքունեաց մերոց ընդ թագաւորին Վրաց։ Զի Իսլամ ժողովուրդք յաշխարհս նոցա են յոյժ 'ի յարգանս և 'ի մեծարանս, և մեք պարտիմք 'ի պատուի ունել զնոսա, և խնամել զվնաւորսս զկալուածս զայգիս և զժողովուրդս նոցա, զի խաղաղութեամբ բնակեսցեն 'ի նոսա, և զերեւելի ուխտաւորս որք գան առ նոսա. զի ամենայնն ըստ կարգի և ըստ պաշտաձի վճռի բարի, որովհետեւ հպատակ կացին արքունեաց մերոց։ Եւ հրովարտակս այս հաստատեսցէ զնոսա առաջի ամենեցուն 'ի սեփհականութիւնս իւրեանց. բարձրեալն Ատաւծ պահեսցէ 'ի շնորհս իւր. գրեցաւ 'ի ١١ ձկմաղիլ էվվէլ ամոյ՝ ٩١٨ (1512)։

Եհաս հրովարտակն յերուսաղէմ առ մեծ նախարարն, և յանձն առ կատարել զհրաման Սուլթանին, կոչեաց ընդդատաւորս եւ զամենայն երեւելիս, ժողովեցան առ նա 'ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս, և գնացին 'ի վանս Ս. Յակոբայ, որ էր յայնժամ արտաքոյ Երուսաղէմ, առ 'ի կատարել զհրաման Սուլթանին. ժողովեցան անդ բազմութիւն 'ի Հայոց և 'ի Վրաց, և ինքն դեսպանն, որ եկեալ էր յեգիպտոսէ, և սկիզբն արար կուսակալն առաջի բազմութեան ամենայն զպուշութեամբ քննել և 'ի դիր արձանացուցանել։ Եհարց ցվիարանս Հայոց և ասէ՝ ծանուցէք ինձ վասն վանացն Ս. Յակոբայ, ունի՞ն վիրք բանս ինչ ընդ ամանէ, և նոքա ասեն, վանքս այս 'ի սկզբանէ անտի ժառանգութիւն է ազգին Հայոց և ոչ գիտեմք զայլս. և մատուցին զհրովարտակս առաջին թագաւորաց, և զօրինաւոր մուրհակս 'ի դատարանէ, որոց թուականքն անցա-

նէին աւելի քան զամս 100, յորս լացայայա գրեալ էին թէ՝ վանք Ս. Յակոբայ է սեփհական ժառանգութիւն ազգին Հայոց, և նոքա տիրեալ են նմա ըստ տրամադրութեան մուրհակաց եւ հրովարտակաց։ Եհարց նախարարն ցգեսպանն եւ ցժողովեալն վրաց, ունի՞ք և դուք գիրս ինչ 'ի վկայութիւն վանացս՝ թէ լեալ էցէ սեփհական ազգին Վրաց. և նոքա ոչ կարացին մատուցանել թուղթս ինչ վասն այնր։ Ապա ելեալ 'ի վանաց Ս. Յակոբայ գնացին քաղմուխեամբ 'ի տաճարն Ս. Յարութեան, եւ ելին յաստիճանացն 'ի վեր 'ի Գողգոթայ, չինեալ յերկուց քարուկիր ձեղուանց ձգեալ յարեւելից յարեւմուտս, առանց անջրպետ որմոյ՝ և 'ի միջավայրի մեթ մեծ և հաստատուն չինեալ 'ի քարանց, մին 'ի ձեղուանցն է 'ի կողմն հարաւոյ, և միւսն 'ի հիւսիսոյ, և յերկաքանչիւրսն կանգնեալ սեղան յարեւելս, ըստ սովորութեան եկեղեցեաց քրիստոնէից, ձեղուանն հարաւային՝ է 'ի ձեռս Լատինաց, իսկ հիւսիսայինն 'ի ձեռս ազգին Վրաց, 'ի վերայ այսոցիկ տեղեաց էր հակառակութիւնն 'ի մէջ երկուց ազգաց։ Եհարց նախարարն ցժողովեալն Վրաց, ունի՞ք թուղթս ինչ 'ի վկայութիւն սեփհականութեան տեղեացս. և նոքա մատուցին զհրովարտակն Մէլիք Աչրաֆայ, գրեալ առ թագաւորն Վրաց, խնդրեաց էր, «Եկն նահակ 'ի թագաւորէն Վրաց, և խնդրէր բնակեցուցանել զազգն իւր յերուսաղէմ յեկեղեցին Ս. Յարութեան, և մերժել անտի զազգն Հայոց և զայլ քրիստոնեայս։ Իսկ Մէլիք Աչրաֆ կատարեաց զխնդիր նորա եւ դարձոյց զեկեղեցին զայն ազգին Վրաց, եւ կարճեաց զձեռս Հայոց եւ այլ քրիստոնէից 'ի տեղւոջէն յայնմանէ. եւ համեմատ այսմ գրեաց նա եւ առ դատաւորն երուսաղէմի, 'ի ԺԳ Շէվվալ ամոյ՝ ՋՄԶ, (1432)։ Մատուցին զհրովարտակն երկրորդ, գրեալ 'ի Մէլիք Զահր Զագմագէ, առ թագաւորն Վրաց, այսու իմաստիւ, եկն Թուղթ 'ի թագաւորէն Վրաց, յորում խընդրեր 'ի գթութենէ մերմէ սիրով խնամել զազգն իւր եւ զեկեղեցականս, որք բնակին յերկրին Իսլամաց, և գրեցի զհրովարտակս 'ի ընորհս քրիստոնէից 'ի ժամանակի յայսմիկ, յորում նստէին 'ի բարձրագոյն դուռն մեր։ Սակայն քրիստոնեայք՝ վիրք և եկեղեցականքն, արարին որ ինչ արժան էր արդարութեան՝ պատուով և մեծարանօք, որոյ վասն ածին 'ի վերայ իւրեանց զընորհս, և առին զհրովարտակս վանս եկեղեցւոյն Գողգոթայի, ժառանգել զայն անկաս յաւիտեան։ Գրեալ 'ի ԺՕ Բէկիլ ախր ամոյ, ՋԽԽ (1440)։ Երրորդ հրովարտակ՝ զարձեալ 'ի նոյն Մէլիք Զահր Զագմագէ, գրեալ առ ամենայն գործակալս երուսաղէմի, իմաստն է. եթէ «Հաստատեցէք զեկեղեցականս թագաւորին վրաց յեկեղեցին Գողգոթայի 'ի տաճարին Ս. Յարութեան, և հրամայեցէք բանալ նոցա զդուռն հարաւային, յորմէ դիւրութիւն ունին նոքա, և արգելջիք զՀայս և զայլսն ինս չհակառակիլ վասն այնր, զի կատարեալ յանձնեցի նոցա»։ Գրեալ 'ի ԺԲ Մուհարրէմ ամոյ, ՋԽԳ (1439)։

Ցետ ընթերցման հրովարտակացս այսոցիկ, եհարց նախարարն ցժողովեալսն Լատինաց, և նոքա ասեն՝ հարաւային կողմն Գողգոթային, սեփհական է մեզ և մեք տիրեալ եմք նմա. եւ մատուցին հանրագիր ինչ 'ի դատարանն, խմաստն է. Գողգոթայ կոչեցեալ տեղին, և հարաւային խորանն, մին յերից խորանաց, սեփհական է ազգին Լատինաց, որք բնակին 'ի վանս Սիոնի արտաքոյ քաղաքին, ուր կատարեն զպաշտամունս իւրեանց 'ի սկզբանէ մինչեւ ցայսօր. և տիրեալ են տեղւոյն և խորանին յանուն ազգի իւրեանց յազգէ յազգ. չէ օրէն ումեք հակառակիլ ոչ տեղանոյն եւ ոչ պատարագին։ Գրեալ 'ի ԺԱ Զիլհիճէ ամոյ, ՌՄԶ (1481)(*)։ Հաստատեալ 'ի Շէմսէտտին դատաւորէն երուսաղէմի եւ 'ի մեծամեծաց։ Ցետ այսորիկ եկեալ էին Լատինք առաջի դատաւորին երուսաղէմի եւ 'ի մեծամեծաց, և ասէին Լատինք ասել. որովհետեւ ունիմք 'ի ձեռս մեր զայսպիսի մուրհակս, 'ի վկայութիւն սեփհականութեան Լատինաց, եւ տիրեալ եմք նմա. անհնար է մեզ կարճել զձեռս մեր 'ի տեղւոջէն յայնմանէ։ Իսկ կուսակալն և մեծամեծք այլազգեաց զայս ամենայն քննութիւնս պարագայիւք գրեալ յանուցին Սուլթանին. յԻ Ճէմազիլ ախր ամոյ, ՋԺՌ (1512)։ Զայս դատաստանական քննութիւն գրեալ յեակարի 'ի նմին ժամանակի, և պահեալ ամբողջ 'ի կարգս գրոց Ս. Աթոռոյս, և առանց խորչելոյ յերկա-

(*) Լատինք այն դատաստանի գրով միայն ժառանգեալ են զտեղին զայն, և վիրք ոչ կարացին հանել զնոսա անտի։

րութենէ ճշդիւ թարգմանեալ եգաք ՚ի կարդի պատմութեանս։ Սակայն Վիրք՝ թէպէտեւ ամբաստանութեամբ յարուցին վէճս և քննութիւնս, այլ ոչ ինչ կարացին շահիլ. զի ոչ կարացին մերժել զլատինս ՚ի տեղւոջէն յայնմանէ, զոր ժառանգէն մինչեւ ցայսօր ժամանակի. նոյնպէս և ոչ ՚ի վանաց Ս. Յակոբայ գՀայս։

Պատմէ Մարինոս Լատին թէ՝ վերելից սանդուխքն Golgothայի՝ էր յարեւմտից դէպ յարեւելս, և 8 աստիճանօք էջանէր մինչ ՚ի միջին տեղին, և անտի դառնայր դէպ ՚ի հարաւ, և 10 աստիճանօք էջանէր ՚ի յատակ եկեղեցւոյն, բաժանեալ յերկուս ՚ի մէջ Լատինաց և Յունաց. իսկ ամբողջ յատակ եկեղեցւոյն յօրինեալ էր գոյնզգոյն մանր մուզայիւք, որոյ զնմանն չէր տեսեալ աեսանել. և ՚ի շրջապատ յորմն զանազան խորհրդատուր պատկերք նկարեալ ՚ի Յունաց և ՚ի Վրացւոց, յորոց միջի երեւելի էին պատկերքն Հեղինէ թագուհւոյն և Հերակլի կայսեր։ Այժմ այլայլեալ են ամենեքեան, և փոխեալ ՚ի ձեռ եկեղեցւոյն Յունաց. միայն ՚ի Տարագմանն տեղին ՚ի բաժնին Լատինաց երեւին մնացորդք մուզայից, և այլքն նորոգեալք զինի հրդեհի տաճարին։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Սուլթան Սելիմ Օսմանցւոց։ Առնէ Ասպետս Պաղեստինոյ, և եգիպտոսի, բարձանի իշխանութեան Մեմլուքաց։ Հրովարտակ նորին առ Ասպետս Պատրիարք։ Բանտարկութիւն Լատին կրօնաւորաց։ Յովհաննէս Episkopos։ Առաւաձառուբ Պատրիարք։

ՍՈՒԼԹԱՆ Սելիմ առաջին, Եմեռաղ կոչեցեալ. հզօր թագաւոր Օսմանեան Պետութեան. Սա հանապազ երկնէր ՚ի մտի և քանիցս ծանուցեալ էր նախարարաց իւրոց՝ մաքրել զարեւելս յաղանդոյ Պարսից, և պատրաստէր միւսանգամ արշաւել ՚ի վերայ նոցա. բայց իրրեւ լուաւ թէ՝ Սուլթանն եգիպտոսի Ղաւրի կամ Ղաւրի ՚ի Չէրքէզ ցեղէ, դաշնակցեալ է ընդ Շահին հակառակ իւր. դարձոյց ըզ-

զինս յԱսորիս՝ և ՚ի կողմանս Բերիոյ ՚ի դաշտին Տաղէ կոչեցեալ, երկոքին հզօր բանակօքն պատահեցան միմեանց, խորտակեալ ցրուեցան եգիպտացիք ՚ի սաէպ յարձակմանէ հրանօթից, և Ղաւրի անկաւ ՚ի ճակատի անդ. Սելիմ տարածեաց զզինս իւր ՚ի Պաղեստին՝ և հասեալ ՚ի Ռամլէ բանակեցաւ անդ, և էլ յերուսաղէմ յուխտ ընդ մեծամեծս իւր, յամենայն Դեկտեմբերի յորում իջանէր յորդ անձրեւ, և անտի չոքաւ ՚ի Բերրոն, եւ վերստին դարձաւ ՚ի բանակն, և իրրեւ պատրաստէր ՚ի չոյ՝ խաղալ ՚ի սահմանս եգիպտոսի, առաքի եղ նմա մի սմն ՚ի նախարարաց զԴուլղադրեան ճանապարհին անջրդի անապատին, բարեկացեալ Սելիմայ ընդ բանս նորա, եւ հաստանիլ զգլուխն, եւ ինքն հորդան եւ զօրօքն։ Իսկ Թուման Պայ եղբօր որդի Ղաւրիայ, թագաւորեալ յեգիպտոս՝ էլ բազմութեամբ զօրաց ՚ի կողմանս Ղազզէի, եւ բանակեցաւ ընդդէմ Օսմանցւոց, և նախ քան զտալ նշան մարտին. ընտրեաց զարս երիս ՚ի քաջաց իւրոց, որք էին արք կորովիք ամրացեալք երկաթապատ զրահիւք. եւ յարձակեալ նոքօք ճեղքեաց զկարգ զօրացն Օսմանցւոց, և անցեալ եհաս ՚ի վրան արքային. և տեսեալ զվէզիրն մեծ Սինան Փաշայ՝ կարծեալ թէ նա ինքն Սելիմ իցէ, եհար զնա եւ տապալեաց անդ. ապան նաեւ զդաճձապետ արքային, եւ ՚ի յաղմկի անդ իրրեւ գիտաց թէ չհասին զօրք իւր զինի՝ և ինքն պաշարի ՚ի վտանգի, փախուցեալ էլ անտի՝ եւ դէմ եդեալ դնաց յեգիպտոս իւրովքն հանդերձ։ Իսկ արքայն Սելիմ կարգ եդեալ Եչնիչէրի զօրաց՝ դիմեաց ՚ի սահմանս եգիպտոսի, և եհաս ՚ի Գահիրէ քաղաք. Եւ յետ արիւնահեղ պատերազմաց զոր մղեաց ընդդէմ Քնէլ-Ղէնէ, տիրեաց բովանդակ երկրին, և ձեռնակալ արարեալ զԹուման Պայի եւ հանել ՚ի կախաղան ՚ի Գահիրէ ՚ի դուռն Պաղ Զաւէլէ կոչեցեալ՝ ուր ընկալաւ զանուն փախանորդի Մարգարէին, ժառանգելով զանուն Խալիֆայութեան. և կարգեալ կուսակալս և վարիչս երկրին, ինքն դարձաւ ՚ի Դապղէ և անտի ՚ի Դամասկոս, ուր հանդիսաւ եւս զօրաց ամիսս մինչ, եւ երկրորդ անգամ եկն յերուսաղէմ, ընդ առաջ ելին նմա բնակիչք քաղաքին և Պատրիարքն Հայոց և Յունաց հանդերձ մեծարանութեամբ իւրեանց. էին ընդ Սէ-

լիմայ եւ բազումք ՚ի քրիստոնէից ասէ՝ Ցոյն Արաբացի պատմիչն։ Ցետ Ռամնելոյ նորա յաղթանակաւ յերուսաղէմ, յանդիման եղեւ նմա Սարգիս Պատրիարքն Հայոց հանդերձ եպիսկոպոսօք վարդապետօք և միաբանովք իւրովք, և յանձն առ հպատակիլ և մատանել ընդ լծով ծառայութեան Օսմանցւոց։ Եւ մատուցեալ նմա զհին հրովարտակս Օմարայ Սալահատտինի և Սուլթանացն Եգիպտոսի, խնդրեաց ՚ի նմանէ ըստ սրամադրութեան նոցին շնորհել հրովարտակ, եւ վերստին հաստատել զազգային դարաւոր ժառանգութիւնս եւ զսեփհական իրաւունս։ Հաճեալ արքային ընդ բանս Սարգսի, հրամայեաց գրել հրովարտակ (Խաթթի Շէրիֆ), և ետ զայն ցՊատրիարքն Հայոց, որ սկզբնաւորի այսպէս։ «Օգնութեամբ բարձրելոյն Աստուծոյ եւ մարգարէի նորա։ ՚ի 25 Սեպտեմբերի ամսոյ յերուսաղէմ ՚ի տունն Աստուծոյ եկեալ՝ յաղթանակաւ մտաք ՚ի քաղաքն։ Սարգիս Պատրիարքն Հայոց ՚ի մէնեանն միաբանովք իւրովք եկեալ ՚ի հնազանդութիւն և ՚ի հպատակութիւն։ Խնդրեաց ՚ի չնորհաց և ՚ի պարգեւաց իմոց, տիրել Պատրիարքացն Հայոց ըստ նախնի օրինաց և վարդմի սովորութեանց իւրեանց։ Եկեղեցեաց վանօրէից տաճարաց և ամենայն ուխտատեղեաց, ըստ զօրութեան կայսերական դաշնագրոյն մերոյն Օմարայ։ Եւ արքունի հրովարտակացն տուեալ ՚ի ժամանակէ անտի Մէլիք Սալահատտինի։ տիրել այսոցիկ ասպետաց Պատրիարքացն Հայոց, որք նախն ՚ի վանս Ս։ Յակոբայ», և ապա թուէ յականէ յանուանէ զվանօրայս և զրաժինս անօրինական Ս։ Տեղեաց և զիրաւունս Պատրիարքին, զորս աւելորդ վարկաք մի ըստ միոջէ կրկնել առ։ Հրովարտակն գրեալ է յերուսաղէմ, ՚ի թուին Հիճրէթի ՈՀՀ (1516)։ Սա հինն համարի Օսմանեան կայսերաց վասն երուսաղէմի տուեալ հրովարտակաց։

Սուլթան Սէլիմ տուեալ է նաեւ զայս օրինակ հրովարտակ Պատրիարքին Ցունաց։ բայց տեսանի ՚ի նմա այլայլութիւն բառից, զոր յետոյ մուծեալ են։ Եւ ՚ի միջնորդելոյ քրիստոնէից եղելոց ընդ նմա, ետ նաեւ հրովարտակ կրօնաւորացն Սինայի։

Ահա սոյն օրինակ բարձաւ և ջնջեցաւ ՚ի միջոյ անուն փառք և իշխանութիւն Մեհմետ և Չերքէզ Սուլթանացն

Եգիպտոսի, և բովանդակ երկիր նոցին ընդ Պաղեստինոյ եւ Սուրիոյ անկաւ ընդ իշխանութեամբ Օսմանեան հզօր Պետութեան, որոց սիրելին և սիրեն ցարդ կառավարեալ ՚ի ձեռն կուսակալաց։ Արաբացի Ցոյն պատմիչն յառաջ բերէ առաջին, զոր ետ Սուլթան Սէլիմ որդի Պայեզիտայ, յարչաւանի իւրում յԵգիպտոս, եկն յերուսաղէմ, եւ ամենք յայլազգեաց ազգարարին նմա, թէ Լատին կրօնաւորք որք բնակին յերուսաղէմ, ունին անթիւ ոսկիս եւ գանձս բազումս, եւ Սուլթանն կոչեալ զնոսա առաջի իւր խնդրեաց ՚ի նոցանէ զգանձն, և նոքա ժխտեցին թէ՝ չունիմք զայդպիսի իրս, իսկ մի ոմն ՚ի թուրքաց ասէ՝ կրօնաւորքդ թաղեալ են ընդ գանձս իւրեանց յերկիր։ Սէլիմ հրամայեաց բանտարկել զնոսա ՚ի բերդն՝ մինչեւ խոստացին ցուցանել զտեղի գանձուն, և պատուիրեաց չտալ նոցա կերակուր, բաց ՚ի չորարեկ հացէ և սակաւ ինչ ջրոյ, և մնացին անդ ամիսս 27, և բազումք մեռան ՚ի քաղցու և ՚ի դառն տանջանաց, զոր տային նոցա պահապանքն, սակայն նոքա եւ ոչ մի ինչ յայտնեցին զոր պահեալ էին, և Սուլթանն յորժամ պատրաստեր ճանապարհորդել ՚ի մայրաքաղաքն, գթացեալ արձակեաց զնոսա»։

Զնոյն յաւելուլ և Մարինոս Լատին այսպէս, ՚ի բանտարկիլ Լատին կրօնաւորացն երուսաղէմի հրամանաւ Սէլիմայ արքային, զսեփհական տեղիս մեր ՚ի տաճարին Սուրբ Յարութեան՝ յանձնեցաք ՚ի պաշտպանութիւն Հայոց։ և մեռան ինչ ՚ի կենաց փայտէն պահեալ ՚ի Սեղանի եկեղեցւոյն, տուեալ ՚ի Հերակլէ կայսեր (628)։ իսկ Հայք ասէ՝ կարծելով թէ՝ այլ եւս ոչ դառնան Լատինք ՚ի տեղիս իւրեանց, զիաչն զոյն տուեալ տաքեցին ՚ի հայրենիս իւրեանց։ զոր յետոյ իբր թէ մեծաւոր նոցին մեծ աշխատութեամբ և ծախիւք ՚ի ձեռս բերեալ, վերստին եդեալ է ՚ի նոյն սեղանի։ Եւ դարձեալ՝ ՚ի բանտարկիլ նոցա ՚ի պատերազմին կրետէ կղզոյն, անյայտ եղեալ է խաչն այն, և այլ եւս ոչ կարացեալ են գտանել։ Ահա այս է չափ երախտագիտութեան Լատին կրօնաւորաց։

Զու արարեալ Սէլիմայ ՚ի Պաղեստինէ եկաս ՚ի Կոստանդնուպոլիս, ուր եգիտ զդեսպանս թագաւորին Սպա-

նոյ, որ խնդրէր ՚ի նմանէ պատուիրել Արարացւոց չըպահանջել հարկս ՚ի Լատին կրօնաւորացն Երուսաղէմ և յուխտաւորաց նոցին։

Կարեւոր համարիմ յառաջ բերել ասաանօր զկիսուր և զուտակասպաս բանս Վրացի Պատմագրաց Վախուշտի և Տիմոթէոս կոչեցելոց, որ յածին ցարդ ՚ի բերանս Ցոյն ազգաց։ Արդ ասէ՝ ՚ի պատերազմին Օսմանցւոց ընդ Պարսս, Թրանկք արշաւեցին ՚ի սահմանս տէրութեան նոցին։ Սէլիմ առաքեաց դեսպանս առ Գեորգ Թագաւորն Վրաց նորոգել զդաշնն, խոստացեալ տալ նմա զերուսաղէմ, և զՏնօրինական տեղիս, և զՅաչավանքն, այլովքն հանդերձ։ Երիւցեալ Սուլթանին մի գուցէ միաբանեսցին Վիրք ընդ Պարս ընդդէմ իւր։ Եւ Թագաւորն եկեալ էր ընդ իշխանս իւր յերուսաղէմ։ (Թերեւս ՚ի ժամանակս Հոլովմոյ խանին Թամարայ)։ Սակայն Ցոյն պատմիչն յաւելու թէ՝ զոյսմանէ չ՚ինչ ՚ի Պատմութեան իւրում Տոսիթէոս Ցոյն Պատրիարքն, զի յայնժամ Ցոյնք էին ՚ի մեծ նեղութեան, եւ թէ Վրացիք ունէին յերուսաղէմ զվեց վանօրայս, յորոց զերկուսն՝ զՍ։ Թեկղի (վանք Հաղեչոյ)։ և զՍ։ Յովհաննէս՝ (՚ի ձեռս խաչակրաց)։ եւտուն Ցունաց, և զվանս Յովհաննու աւետարանչին՝ Լատնաց։ Իսկ Տիմոթէոս ասէ, թէ Թագաւորն Վրաց 2 իշխանօք սիրեալ էին երուսաղէմի և սահմանաց նորա ան 18 (որ է բազմութիւն սուտ)։ և եթէ Լեւոն իշխան կախեթի ՚ի դարձին իւրում ՚ի հայրենիս՝ առաքեալ էին զբազում ընծայս և կենդանեացս ՚ի ձեռն Յովակիմայ տեսչի Խաչավանաց, և թէ՝ նորոգեալ էին զՍ։ Յարութիւն՝ և զՅողոքիմայ զարդարեալ մարմարիոն սալիւք, և Տիմոթէոսն այն տեսեալ էին զարձանագիր նորոգութեան, թէ Թագաւորն Վրաց նորոգեաց զեկեղեցին Քրիստոսի, յետ աւերելոյ զայն Թաթարաց։ ՚ի ձեռն Յովակիմայ եպիսկոպոսի տեսչի Խաչավանաց, և այլ այնպիսի բանք չազակրատանաց, որք են ՚ի կարգի առասպելաց և սուտ թեանց, որ ցարդ յածին ՚ի բերանս կրօնամոլ և տգէտ Ցոյն կղերին, որոց հետեւեալ են և ռամիկք նոցին։ և չունի պէտս հերքելոյ, զի Պատմութիւնն ինքնին ցուցանէ զվրիպակս ժամանակագրութեան։

Յովհաննէս եպիսկոպոս որդի Դուկասու, լեալ յառաջագոյն կաթուղիկոս Սայ։ զսա գտանեմք ՚ի գլուխ կառավարութեան Ս։ Աթոռոյն երուսաղէմ, որպէս ասացաք ՚ի դատաստանագրի գրեալ ՚ի գատարանն երուսաղէմ։ Յառաջագոյն՝ թերեւս ՚ի ժամանակս Սարգսի, կամ Պետրոս Պատրիարքի, զորմէ գրի ՚ի յիշատակարանս թէ՝ ծնեալ սպիտակացոյց զեկեղեցի Ս։ Յակոբայ, և զձառներն սալեաց և այլ բազում երախտիս արար Ս։ Աթոռոյն։ Գեորգ անուն ոմն ՚ի Թեբայիտ եգիպտոսի։ բնակեալ յայնժամ ՚ի քաղաքն սուբր՝ լեալ փոխանորդ կամ գործակատար վանաց Ս։ Յակոբայ։ Սա տեսեալ էր բազմագումար դրամս ստկոսեօք միաբանաց և ժողովրդոց քաղաքին, յինքն յափշտակեալ զղեկ կառավարութեան վանաց։ տիրեալ էր ամենայն կահուց և կարասեաց, եկեղեցական առնօթոց, կալուածոց և եկամտից, և ինքն յանձանցեր զպատաքին և զառանին գործս։

Իրրեւ եհաս Յովհաննէս եպիսկոպոս, (Թերեւս իցէ Թուլկուրանցին) Պատրիարքական իշխանութեան։ եդ ՚ի մոլ խոփանել զկառավարութիւն Գեորգայ, եւ բառնալ զինքն խակ գլխովին ՚ի վանաց։ Իմացեալ Գեորգայ զվիտս նորա, սկսաւ բռնանալ ՚ի վերայ միաբանից, և գրգռել զնոսա ընդդէմ Յովհաննիսի։ տեսեալ նորա թէ Գեորգ ոչ դադարի ՚ի խռովելոյ և յաղմկելոյ զմիաբանս և պատճառել զպարզամիտս ՚ի չահ իւր։ լուծ եկաց ժամանակս բազում

արարեալ 'ի դատարանէ՝ եհան արտաքսեաց զԳեորգ 'ի վանացն՝ և եհատ զհաղորդակցութիւնն նորա 'ի միաբանութենէ։ Թէպէտ արտաքսեցաւ Գեորգ եւ խոստովան եղեւ թէ՝ յանձնեցի զամենայն ինչս վանացն, սակայն ժխտեալ խոստմանն, պահեալ էր զսովոն յանօթոց առ իւր, և ստամբակեալ յուզէր խռովութիւնս 'ի մէջ միաբանից. այլ և այլ պատճառանօք և ստութեամբ ոչ կամէր յանձնել զոր պահեալն էր, և այս պղտիկ և խռովութիւնն նորա տեւեաց ամս եօթն. որոյ վասն անճարացեալ Յովհաննու, յանձն արար վինդիրն Մկրտիչ եպիսկոպոսի և Մանուելայ օրինօք վճարել զդործն. եւ նոքա ամբաստանեալ վերստին վարեցին զնա 'ի դատաստան՝ ուր մինչ 'ի դատ քննութեան առաջի այլազգեաց. և 'ի դերեւ հանեալ զամենայն ամբաստանութիւնս Գեորգայ, պարտաւորեցին զնա յատենի, եւ առին 'ի նմանէ զամենայն կահս զոր պահեալն էր. մինչեւ ասել Մկրտչի և Մանուելայ թէ չունիմք այսուհետեւ պահանջս ինչ 'ի Գեորգայ. և ապա արձակեցին զնա, ՈՂԱ (1524)։

Խաչատուր եպիսկոպոս որդի Ապատուլահի փոխանորդ Յովհաննու, և Մանուել որդի Դաննէմի զործակից նմին, (անուն Արարացւոց և օտար յազգային անուանց (*)). 'ի կարգի եդին ընդ Արարացիս զՀաճի կոչեցեալ տուրս Բեթղեհէմի. եւ սահմանեցին զայն օրինօք դատարանի առնուլ յիւրաքանչիւր ուխտաւորէ 2 դրամ արծաթ բերիոյ, և աւելի քան զայն չպահանջել ինչ յուխտաւորաց և նեղել զնոսա։

Յաւուրս Յովհաննու Պատրիարքի գմբեթն որ 'ի վերայ Հարթաձման ոտնատեղւոյն Քրիստոսի՝ 'ի լեառն Ձիթենեաց, խախտեալ և աւերեալ՝ և էր մերձ 'ի կործանիլ, և յերկիւղ վտանգի չհամարձակէր ոք մտանել 'ի ներքս յերկրպագութիւն տեղւոյն։ Իսկ Խաչատուր եպիսկոպոս և Մանուել կամեցեալ չինել և նորոգել զայն. սակ արկին ընդ ճարտարապետի քաղաքին և ընդ այլոց ոմանց 5000 դահեկանի վրայ վերարկուի, և զպայման՝ սակարկութեան հաստատեցին 'ի ձեռն դատաւորին, և նոքա ձեռնարկեալ

(*) Թարգման կամ գործակատար Լատին վանաց։

չինեցին և ամրացուցին զայն քարամբք և կրիւ քան պայմանին եւ խոստման իւրեանց. 'ի ՀԶ Մուհարրէմ ամսոյ՝ ՈՅԶ (1529)։

Իսկ Յովհաննէս եպիսկոպոս 'ի կենդանութեան իւրում ինքնայօժար կամօք հրաժարեցաւ յիշխանութենէ Պատրիարքութեան, և հաճութեամբ միաբանից յանձն արար զայն Աստուածատուր եպիսկոպոսի Մարտինցւոյ. տուեալ 'ի ձեռս նորա զկահ և զկարասիս և զանօթս, զկառավարութիւն վանօրէից և կալուածոց, և որ ինչ միանգամ էր 'ի ձեռս իւր։ Նոյնպէս և Խաչատուր եպիսկոպոս, որ վերաւէսչ (Միւթէվէլլի) էր վանաց, հրաժարեալ 'ի պաշտօնէ իւրմէ, յանձն արար զայն 'ի ձեռս Աստուածատրոյ։ Ապա ժողովեալ միաբանից գրեցին գիր վկայութեան եւ հաստատութեան, արկին 'ի նա ամենեքեան ձեռս, զի հաճութեամբ ընկալան զհրաժարումն Յովհաննու և զընտրութիւն Աստուածատրոյ, յետ կարգաւորելոյ զամենայնն 'ի միջի իւրեանց, էառ Յովհաննէս եպիսկոպոս զգիրն զայն և զԱստուածատուր՝ ելին 'ի դատարան, եւ կացուցին 'ի վկայ զերկուս երեւելիս 'ի վաճառականացն այլազգեաց, հաստուցեալ Յովհաննու զգիր միաբանութեան յայտ արար յատենի անդ զհրաժարումն իւր և զընտրութիւն Աստուածատրոյ լինել Պատրիարք ազգին Հայոց յերուսաղէմ, յանձն արարի սմա ասէ՝ հաճութեամբ միաբանից զկառավարութիւնս և զամենայն կահս վանաց Ս. Յակորայ, ընդ տեսչութիւն վանօրէից և կալուածոց, և ես այսուհետեւ չունիմ իրաւունս լինել ձեռնամուխ յիրս ինչ վանաց, ոչ հակառակիլ Պատրիարքին և ոչ խլուցանել զնա՝ յաթոռոյն մինչեւ ցմահ նորին, և ա՛չ որ եւ իցէ փոքր աւելի յարուցանել վէճս 'ի վերայ նորա, եւ կամ ընդդէմ լինել իշխանութեան նորին։ Ցետ այնորիկ եհարց դատաւորն ցԱստուածատուր եպիսկոպոս և ասէ՝ դու եւս յօժարութեամբ արար ընկալա՞ր զիշխանութիւն Պատրիարքութեան, եւ զամենայն զոր միանգամ յայտ արար յատենի աստ Յովհաննէս եպիսկոպոս. ետ պատասխանի եւ ասէ, ընկալեալ եմ զամենեսեան, որպէս յայտ արարեալ ծանոյց Յովհաննէս, և վկայ կացին բանիցն երկոքին այլազգիքն, և դատաւորն գրեաց յետկար, և հաստատեաց զՊատրիար-

գոբթիւնն 'ի վերայ Աստուածածաուր Եպիսկոպոսի : Ապա դարձ արարեալ անտի եկին 'ի վանս, եւ նստուցին զԱստուածածաուր յաթոռ Պատրիարքութեան, 'ի \ՐՀՀԼ ամսոյ, ՉՅՉ (1532) : Զայս ամենայն առեալ թարգմանեցաք 'ի նոյն յետկարէ, որպէս ասացաք : Ահա այսպիսի եղանակաւ կատարէին զիմոխոսութիւն Պատրիարքաց 'ի նմին ժամանակի, այլ թէ ովքը ինչ յառաջ եւս որպէ՞ս առնէին, չէ յայտ : Լատին կրօնաւորք, ոմանք բանտարկեցան յերուսաղէմ, և ոմանք վարեալ 'ի Դամասկոս եդան անդ 'ի բանտի, և մնացին ամս 3 · և ամիս 3 · և 'ի նոցանէ անձինք 8 մեռան 'ի բանտի : (1537) :

ԳԼՈՒԽ ԼԶ .

Ծաղկոփկ : Պարսից Երուսաղէմի : Անդրեաս Պատրիարք : Վէճ ընդ Ցուներց : Գերեզման Ս · Աստուածածնի : Պատմաւեղին Գրիգորիս 'ի Ս · Յարութեան :

Ի ԺԱՄԱՆԱԿՍ իշխանութեան Աստուածատուր Պատրիարքի Մարմնոյ, դարձեալ պատահեցաւ խոտորումն Զաւակի, որպէս պատահէր յառաջագոյն, զորոց գրեցաք 'ի նախընթաց գլուխդ, և եղեւ վէճ և խռովութիւն մեծամեծ 'ի մէջ միաբանացն Հայոց և Ցունաց եղելոց յերուսաղէմ, Հայք կարի 'ի նեղ անկեալ դիմեցին 'ի դուռն Օսմանեան, և 'ի դատարանի Մահմուտ Փաշայի առին մուրհակ· առանձին կատարել զոճն Պատերին, զի Ցոյնք յայսմ ամի ոչնչեցին 'ի 6 Ապրիլ, իսկ Հայք, 'ի 13 նոյն ամսոյ : Ցոյնք զչարեալ այսմ յարուցին աղմուկ մեծ, և առիթ եղեն հանդիպելոց Հայոց մեծամեծ վնասուց և նեղութեանց, և արկանել երկպառակութիւն 'ի մէջ ժողովրդոց, թէ Զաւակին Հայոց ոչ եղեւ ըստ նախնական սովորութեան, զի Լոյսն զորմէ ասէք, եւ այն յառաջագոյն վասն մեր, և այլ սոցին նման բանք անտեղիք, և իբրեւ ետես Աստուածատուր թէ Ցոյնք առաւել նեղեն եւ հալատահարին զժողովուրդ իւր բռնութեամբ, ազդ արար դատաւորի քաղաքին, իսկ նորա ցա-

ծուցեալ զաղմուկ ոամկին, պատուիրեաց չվնասել ումեք 'ի Հայոց, և ինքն գրեալ զամենայն եղելոյն ազդ արար 'ի Կոստանդինուպոլիս, ՉԼՕ (1538) :

Սուլթան Սիւլէյման որդի Սէլիմայ արքայ Օսմանցւոց, եւս պարապել չուրջանակի զերուսաղէմ քաղաք, որ կայր աւերեալ 'ի ժամանակէ անտի պատերազմացն Լատինաց, ապարանք խաչակիր սպանուցաց, որ մինչեւ ցայս վայր կացեալ էր կանգուն· մերձ 'ի Ս · Յարութիւն, եւս քակել և կործանել զայն, զնիւթս և զքարինս նորա 'ի կիր արկանել 'ի դործ շինութեան պարսպին · կանդնեաց և հոյակապ դրուն 'ի կողմն քաղաքին և զերկուս մասն դրուանցն, եդեալ 'ի պատշաճաւոր տեղիս վերատարութիւն 'ի բարբառ Արաբացւոց օրինակ զայս :

امر بانشاء هذا السور المبارك مولانا السلطان المعظم والخاقان المكرم
مالك الروم والعرب والعجم السلطان سليمان بن سليم خان خلد الله
ملكه وسلطانه بتاريخ في ربيع الاول سنة خمسة واربعين وتسعماية
من الهجرة النبوية عليه السلام

Շինեցաւ պարիսպս հրամանաւ մեծի Սուլթանին Սիւլէյմանայ որդւոյ Սէլիմայ, որ է թագաւոր Ցունաց, Արաբաց եւ Պարսից· պահեսցէ Աստուած զթագաւորութիւն և զիշխանութիւն նորին· ի Իլպիլ Էվվէլ ամսոյ· 'ի թուին Հիճրէթի՝ ՉԼՕ (1538) :

Ի հոյակապ շինուածոց ապարանից խաչակիր ասպետաց· մի միայն կամարն արտաքին հիւսիսային դրան՝ զերծեալ յաւերանաց· կայ մինչ ամենայն իւր պանծալի հնութեամբ՝ իսկ այլքն հանդերձ եկեղեցւոյ Ս · Աստուածածնի թաղեալ 'ի ներքոյ աւերակաց·

Ցետ ժամանակի այլազգիք զմի մասն արարին գործարան խաղալոտրդաց, որ եւ յետոյ բարձաւ այն պղտեղութիւն միջնորդութեամբ քրիստոնէից· Եւ 'ի ժամանակի մերում յորժամ եկն յայցելութիւն Ս · Քաղաքին գահաժառանգ որդին Գուլիէլմոս կայսեր Ալմանիոյ, եցոյց նմա զայն տեղի Հիւսպատոս նոցին Տօքթօր Ռօզ, որոյ զբննութիւնն արարեալ էր կանխաւ, և 'ի վերադարձին 'ի Կոստանդինուպոլիս, խնդրեաց յԱլտիւլ Ազիզ Կայսերէ Թուր-

քաց, և էառ զմի մանն նորին 'ի պարգեւս, և 'ի մաքրել զհող տեղւոյն երեւեցան հնութիւնք, և արձանագրութիւնք այլ և այլ ազգաց, և բեկոր ինչ մարմարիոն քարի Հայեցի տառիւք։ Իսկ մնացեալ մասն կայ մնայ աւերակ 'ի ձեռս Ցունաց։

Եւ 'ի ժամանակս չինութեան պարսպին՝ մնացին արտաքոյ վանօրայք Ս. Փրկչի և Ս. Սիոնի, լուեալ զայս արքային Սիւլէյմանայ ծանրացաւսումն եղեւ, մինչեւ հրամայել գլխատել զմարտարապետ նորին։

Ի ժամանակս իշխանութեան Սուլթանացն եգիպտոսի աւերեալ էր 'ի տեղիս տեղիս մզկիթն Օմարայ, և 'ի ամին ժամանակի պէտս ունէր նորոգութեան. զայն եւս հրամայեաց արքայն Սիւլէյման։ Սակայն գործաւորք եւ այլազգիք քակեալ 'ի բաց հանին զմարմարիոն սալս յատակէ Բեթղեհէմի եկեղեցւոյն, բարձին նաեւ զխնոյս, և նոքօք նորոգեցին զմզկիթն, կամէին առնուլ և զքարինս յայրէն Ծննդեան. բայց լուսաբարք վաղ զգացեալ, խորտակեալ անպիտանացուցին, որպէս երեւին ցարդ։

Իսկ Խրամ Սուլթան մին 'ի սերունդեաց Սիւլէյմանայ՝ չինեաց հիւրանոցս Թէ+էյե յերուսաղէմ. և սահմանեաց 'ի պէտս նորա գիւղս և ագարակս, որ կոչի Խասեքի Սուլթան վագըֆի. եւ զդուռն տաճարին Ս. Յարութեան եկամուտս նմին. կարգեալ դռնապանս յայլազգեաց. լաւինք որք ոչ էին ընդ իշխանութեամբ Սուլթանին, հաստուցանէր այր իւրաքանչիւր 14 դահեկան. Յոյնք 7. Հայք 5. Արաբացիք Ասորեաց և եգիպտոսի 3. իսկ 'ի Հապէշէ եւ 'ի վրաց չառնոյր ինչ. ասի սակն Յոյնք՝ թէ էանց բանալի դրանն 'ի ձեռս այլազգեաց եւ պատճառ այսմ դնեն զԴերմանոս Պատրիարքն Իւրեանց։

Ասորւոցն եպիսկոպոս Մարտինոյ վարեաց զիշխանութիւն Պատրիարքութեան Աթոռոյն երեսուն եւ չորս ամս 10. եւ 'ի պատճառս ծերութեան իւրոյ գոլով անձեռնհաս 'ի գործ կառավարութեան, էտ հանել հրովարտակ յարքունուստ 'ի կենդանութեան իւրում, եւ ինքն հաճութեամբ միաբանից էլ յաթոռն, և փոխանակ նորա ընտրեցին զԱնդրեաս եպիսկոպոս որդի Աբրահամու, որդի հօրեղբօր ծերունւոյն Ասորւոց. թէպէտեւ Անդրիաս յառաջագոյն աթոռակից և գործակից էր նմին յաւենայն իրս, որպէս գրի 'ի յիշատակարանս մատենից։ «Գրեցաւ յառաջնորդութեան Տէր Ասորւոց Աթոռ և Տէր Անդրիաս Արքեպիսկոպոսաց՝ և շնորհալից Դաւթին, եւ նոր նահատակացն Յովհաննէս հայրապետի, Սարգիս եպիսկոպոսի և Դաւթի կրօնաւորի, որք նուիրակ առաքեցան յԿիմաձնէն և նահատակեցան 'ի կաստանդինուպոլիս գլխատմամբ սրոյ. (1508)։ Սակայն տեսեալ միաբանից և նմին իսկ Ասորւոցն զյաջողակութիւն 'ի գործս և ճարտարութիւն 'ի բանս Անդրիասայ, ընտրեցին զնա գլուխ և առաջնորդ ինքեանց, և ամենեքեան ի ջուկ 'ի դատարան, յայտ արարին առաջի դատաւորին և այլազգեաց զընտրութիւն միոյն և զերաժարումն միւսոյն, և վկայեցին զԱնդրիասէ թէ՝ է այր բարի և հաւատարիմ յամենայն գործս իւր, և խնդրեցին հաստատել զպատրիարքութիւն նորին օրինօք դատարանի 'ի տեղի Ասորւոցն, և առին մուրհակ հրաժարման 'ի դատաւորէն ընդ արքունի հրամանի, և ապա ասէն՝ չունիմք առելութիւն կամ հակառակութիւն զԱսորւոցն, նոյնպէս և սա՝ զԱնդրիասէ։ Ձեռ լսելոյ դատաւորին զրանս երկաքանչիւրոցն, հաստատեաց զպատրիարքութիւնն 'ի վերայ Անդրիասայ, ՉԷՉ (1542)։

Դարձ արարեալ անտի նստուցին յաթոռն զՏէր Անդրիաս, որ և կոչեցաւ Պարոն Տէր։ Ի սմին ամի յորում նստաւ Անդրիաս յաթոռ Պատրիարքութեան, յարուցին վէմս Յոյնք յասւոր ձրագալուցի Զատկի, զի մինչեւ ցայն վայր սովորութիւն լեալ էր 'ի մէջ ազգաց, յերեկոյին յայնմիկ 'ի կատարել զՀանդէս Լուսաւորութեան, մտանէին 'ի Գերեզմանն Քրիստոսի. Նախ տեսուչն Հապէշից և ապա Պատրիարքունք Ցունաց և Հայոց, և զինի նոցա տեսուչքն վրաց եւ Գպթից. այլ 'ի սմին ամի ընդդէմ կացին Յոյնք այսմ սովորութեան, զի կամէին նախ մտանել Պատրիարքին իւրեանց՝ և ապա այլոց. որոյ վասն եղեւ կռիւ և խռովութիւն 'ի նմին պահու. այլ 'ի վերայ հասեալ այլազգեաց հանդարտեցին զնոսա առ ժամն, եւ էտուն կատարել զՀանդէսն ըստ առաջին սովորութեան. և զդատս իւրեանց վարել յատենի արքային։ Զորմէ յետոյ. տաղտկացեալ Անդրիասայ 'ի նեղութենէ այլազգեաց

չինեաց զորմն սպարապետի Հրեշտակապետաց, երկրէ նաեւ Սրբոյն հրամանաւ չքո՞ կոչեցեալ տուբա, զոր պահանջին այլազգիք ի վիճաբանաց և յուխտաւորաց, ընդդէմ առյորսութեան (1544)։

Ի սահմանել անձրեւաց ձմերնային եղանակին՝ հնձեցք ջուրց յորդեալ լցան ի տաճարն Ս. Աստուածածնի, որ ի ձորն Գեթսէմանի, յորմէ խախտեալ աւերեցան սալայատակք և այլ չինուածք, ընդ որս և գերեզման Սուրբ Կուսին։ Իսկ Անդրիաս եպիսկոպոս եւս դատարկել անուն ղջուրն և մաքրել զեղիւն, և ապա հրամանաւ դատաւորին երեք գմբարմարիսն քարինս յեկեղեցւոյն Բեթզեհէմի, և նոքօք չինեալ նորոգեաց զդերեզմանն (1549)։

Լատինք և Յոյնք զչարեալ իմն էին ընդ այս գործ Անդրիասայ, և խորհէին հասուցանել չարիս ի գլուխ նորին, և չգտեալ զոյր ինչ զկնի սակաւ արգելին զմիաբանս եւ զուխտաւորս Հայոց ի գերեզմանէն Ս. Աստուածածնին, և ոչ թողուին պատարագել և կատարել զնոգեւոր պաշտամունս իւրեանց։ Տեսեալ Հայոց թէ՝ ոչ գիջանին նոքա ի խաւարենէ իւրեանց, բողոք բարձին առ Սրբազն միաբանք եւ ուխտաւորք, բառնալ յինքեանց զնեղութիւնս յօտար ազգաց, և զդիրն զոյն առաքեցին ի ձեռն պատգամաւորի ի Թադաւորեալ քաղաքն։ Սրբոյն Սիւլէյման գրեաց հրովարտակ առ դատաւորն, զի ըստ գանկատանացն Հայոց վերահասու լինել իրացն, և բառնալ զհակառակութիւնս, և կատարել Հայոց զպաշտամունս իւրեանց ըստ առաջին սովորութեան, այնպէս արաքիք ասէ, մի վերստին բողոք բարձցեն Հայք ի Դուռն, ՋԽ. (1552)։

Փոխանորդ Ֆրանչիսկեան կրօնաւորաց Պոնիֆակիոս, առ հրաման ի դատաւորէն նորոգել զդիւրեթ տաճարն Ս. Յարութեան, և զայլ տեղիս։ Իսկ նորա ձեռնարկեալ նախ եւս քակել զՊատանատեղին Քրիստոսի, և զետեղեաց զմեծամեծ մարմարիոն քարինս, եւ բարձրացոյց զերիս մատնաչափս ի յատակէն, և եդ երկաթի վանդակս չուրջանակի, և այլազգեացս առաջին դիրք տեղւոյն։ Իսկ դատաւոր քաղաքին ել բազմութեամբ այլազգեաց ի քննութիւն, կոչեցին զգվաւորս քրիստոնէից, Գերմանոս պատրիարք Յունաց՝ և Անդրիաս Հայոց, տեսուչն վրաց

Յովակիմ և Հապէչաց Յովհաննէս, և ի հարցանել դատաւորին՝ եւս պատասխանի, փոխանորդն Լատինաց արարեալ է զայսոսիկ, զի յառաջագոյն յարդարեալ էր տեղին երեք դռնեան մանր քարամբք (միւսիոն) կարմիր սեաւ և սպիտակ, զորս թաղեալ էր փոխանորդն ի ներքոյ նոր քարանց, պատճառելով թէ՝ մի միան նորա սպառկանեալ էր, բարկացեալ ընդ այս Պատրիարքին Յունաց ասէ՝ մինչդեռ չրջէի ի կողմանս Գալիլեացւոց, Սիւրիոյ և Արարիոյ՝ Լատինք հակառակ հրամանին արարեալ են զայդ, զի քարինք տեղւոյն այնորիկ կարի անգին էին, եւ ոչ փոքր մասն անդամ ջնասեալ էր. վկայեցին այսմ և այլազգիք, ապա հրամայեաց դատաւորն քակել զքարինն և բառնալ զվանդակն, Իսկ ի քննութեան դիւրեթին չգտան հակառակ ինչ հրամանին։ Եհարց դատաւորն այլազգիսն դռնապանս տաճարին, թէ գոհ եղեն ի քրիստոնէից, և նոքա ասեն՝ գոհ եմք, և ոչ մի ինչ ջնաս հասեալ է մեզ մինչեւ ցայսօր, եւ եմք ի խաղաղութեան։ Զայս ամենայն քաղեցաք ի յետկարէ դատարանի գրեալ ԻՀ Բէպիլ Եվվէլ ամսոյ, ՋՂՓ (1554)։

Իսկ Մարինոս Լատին՝ զայսմ դատաստանէ ի նպաստ իւր խօսի՝ այսպէս, Ճշմարիտ քարն յորոյ վերայ պատեցաւ Քրիստոս. Յածիկեաց զոյն հայրն Պոնիֆակիոս Ռացաւ Քրիստոս. զի մի խանդարեսցի յանկոհեմից. եւ թէ սոյն տեղին սեփհականութիւն էր Լատինաց. գնեալ ի Թագաւորէն Սիկիլիոյ ի Սուլթանացն Եգիպտոսի, եւ ժառանգեալ էրեն զամն 420. յետոյ վերք առեալ զմեծ գումարս դրամոց Թագաւորին Օսմանցւոց և առեալ զտեղին։ Լատինք վերստին դարձուցեալ են զոյն միջնորդութեամբ դեսպանին Գաղղիոյ, որոյ զժկամակ լեալ վրաց դիմեալ են առ դատաւորն եւ չ'չահեալ ինչ։ Եւ ի վրաց դիմեալ են առ դատաւորն եւ չ'չահեալ ինչ։ Եւ ի սոյն ժամանակի իչխանն Թօսքանայ պատուեալ է զտեղին նկարեալ խորհուրդ չարչարանաց Քրիստոսի, այսպիսի վերտառութեամբ։ «ՖՐԵՏԵՐԻԿՈՍ ՄԷՏԻՒՐՈՍ ԴՈՒՔՈՍ ԹՕՍՔԱՆԱՅ Ի ՆՇԱՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1278», յորոյ վերայ պատարագէին Լատինք։

Գերմանոս նստեալ էր յաթոռ Պատրիարքութեան Յու-

նաց (1534) բազում գովեստիւամբ խօսին զանձնէ Յունաց, բայց խառնեալ ի նմա սուտիթիւն, որպէս այս թէ՝ նորոգեաց Գերմանոս զգերեզմանն Քրիստոսի և զկապար մեծի գմբեթին, բայց յայտնի երեւի ի դատաստանական գրի թէ՝ Լատինք արարին զայն։ Եւ ի ժամանակի սորա պատահեցաւ երկրաշարժ յերուսաղէմ, և ինասեցաւ զանգակատունն առ դրան Ս. Յարութեան, և ոմանք ի քարանց անկեալ իցեն ի վերայ գմբեթի տաճարին և ինասեալ զայն, և աշտարակն մնաց աւերակ մինչեւ ցայսօր։ Նոյնպէս եւ զանգակատունն Բեթղեհէմի Սրբ՝ զանգակատունն Ս. Յարութեան աւերեաց Սալահատտին։ Թէպէտ զկնի ժամանակաց կամեցան Յոյնք նորոգել զայն, այլ չեղեւ հրաման, որպէս ունիմք գրեալ յիւրում տեղւոջ։ իսկ զանգակատունն Բեթղեհէմի, զկնի ժամանակաց Յոյնք փոխեցին զայն ի սենեակ, և այժմ խառնեալ է ընդ շինուածս վանացն։

Գրէ Տոսիթիոս Պատրիարքն Յունաց ի պատմութեան երուսաղէմի թէ՝ եկեղեցին Բեթղեհէմի էր ի ձեռս Յունաց, և յաւուր ձրագալուցի Զատկին եկին ամենայն մարանք տեղւոյն յերուսաղէմ տեսանել զհանդէս լուսաւորութեան, և թողին անդ զլուսարարն միայն, եւ նորա եւս ցանկացեալ դնալ յերուսաղէմ, յանձն արար զբանալիս եկեղեցւոյն մեւմ ի կրօնաւորացն Լատինաց, պատուիրեալ նմա յարդարել զկանթեղսն այրին, և յաւուրն երկրորդի իբրեւ դարձաւ ի տեղի իւր ի Բեթղեհէմ՝ և խնդրեաց ի նմանէ զբանալիս եկեղեցւոյն, նա ոչ կամեցաւ տալ։ լուեալ զայս Յունաց յերուսաղէմ, կոչեցին զԼատինս ի դատարան։ սակայն Լատինք՝ ասէ, որսացեալ էին յառաջագոյն ի կողմն իւրեանց զդատաւորն, և այսպիսի եղանակաւ տիրեցին եկեղեցւոյն Բեթղեհէմի։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Ապստամբութիւն Լատինաց ի Սիոնէ։ Հիւրընկալութիւն Հայոց։ Ագռաւաբերդ Սիոնի՝ և հին եկեղեցին։ Վէմ Հայոց ընդ Յունաց։ Խաչատուր եպիսկոպոս։ Համբարձման եկեղեցին։

Յաղագս վանացն Սիոնի, ուր բնակէին Լատին կղերք։ բազում անգամ եղեւ յիշատակութիւն ի կարգի պատմութեանն՝ նշանակելով զերեւելի անցս նոցին, իսկ ընդ վերջին դիպուածս, որ պատահեցաւ ի սմին յայսմիկ ժամանակի, զանազան եղանակաւ պատմեն գրիչք, զորոց բանս դիցուք աստանօր։ Նախ նա ինքն Մարինոս Լատին ի պատմութեան Ս. Երկրին ասէ՝ Սիւլէյման արքայ Օսմանցւոց եւս պարսպել զքաղաքն Երուսաղէմ, և վանքն Սիոնի մնաց արտաքոյ նորին։ և Արաբացիք սկսան չարչարել և նեղել զԼատին կրօնաւորս սակս ընչից, իսկ մեծաւոր նոցին յեցեալ ի խառութիւնս և ի յամառութիւնս իւր, ոչ կամեցաւ տալ զդուռնար գրամոցն զոր պահանջէին, և առիթ եղեւ կորստեան վանացն, որպէս պատահեցաւ եպիսկոպոսի միոյ Ասորւոյ։ զի ոչ յանձն առ տալ զ400 դահեկանս։ ինքն սպանաւ և վանքն փոխեցաւ ի մզկիթ։ Ասա զայրացեալ գլխաւոր Շեյխք նոցին առին հրաման արքունուստ և արտաքսեցին զԼատինս ի տեղւոջ յայնմանէ, և գրաւեալ զվանքն անուանեցին Նեբէ Տաւուտ ի շնորհս դերեզմանի Մարգարէին Դաւթի։ իսկ կրօնաւորքն երկուցեալ ի յաւմանէ Արաբացւոց՝ փախուցեալ մնին ի քաղաքն։ և յետ ժամանակաց առին ի Յունաց զփոքր վանսն վրաց, և ընդարձակեալ զայն բնակեցան անդ։ և անուանեցին Ս. Փրկիչ, և Արաբացիք կոչեն զնա Տէյր էլ Ֆրուճ, այսինքն վանք սեան։ (1561)։

Սակայն արժան է գիտել թէ՝ հաւատարիմ Լատին պատմիչն յորմէ՞ հոգւոյ չարժեալ թողու ընդ քօղով մոռացութեան զբարեսէր հիւրընկալութիւնս կրօնաւորացն Հայոց, և չառնէ երբէք յիշատակութիւն զայնմ խնդրոյ, որոյ վասն դէսպանք և երեւելիք և նոյն իսկ կղերականք նոցին, ի նմին ժամանակի որք գտան ի Կոստանդինուպոլիս, ո՞րպէս

թախանձէին զբահանայս և զիշխանաւորս Հայոց, հաւատարիմ և սիրելի եղբայր կոչելով զնոսա, ժողովել զկրօնաւորս և պատսպարել զնոսա 'ի վանս ուրեք յերուսաղէմ։ Առ այս խնդիր նամականիք իշխանաւորացն Հայոց գրեալ թախանձանօք 'ի նմին ժամանակի առ Անդրիաս և Ստուածատուր Պատրիարքունս, լինել խնամակալ Լատին կրօնաւորաց, պահին տակաւին 'ի Ս. Աթոռս։ Իսկ Ցոյն պատմիչն առեալ 'ի Լատին ճանապարհորդէ ումեքէ Բակիվիլ կոչեցեալ, պատմէ այսպէս։ Ոմն 'ի պատուաւորացն Հրէից բնակեալ 'ի Կոստանդինուպոլիս, սեղանաւոր մեծի վէպիրին և սիրելի յաչս նորա, դէպ եղեւ նմա գնալ յերուսաղէմ յուխտ, ցանկացաւ նաեւ գնալ 'ի վանս Սիոնի՝ ուր էին դերեզմանք Դաւթի և Սողոմոնի նախնեաց իւրոց, և խընդրեաց 'ի տեսչէ վանացն մտանել 'ի ներքս, բայց նա ոչ եթող՝ և անարգութեամբ դարձոյց զնա յետս։ Վշտացեալ ընդ այս Հրէին՝ երդուաւ յօրէնս իւր, անպատճառ նուիրել չարիս 'ի գլուխս Լատինաց։ Ի դառնալ Հրէին 'ի Կոստանդինուպոլիս՝ եւ 'ի հարցանել վէպիրին զդէպ եղելութենէ նորին, ասէ՝ 'ի բազում ցաւոց և 'ի տրամութենէ սրտի լմոյ, չէղեւ կատարել ուխտն իմ. զի տեսի զդերեզմանս Դաւթի և Սողոմոնի 'ի ձեռս քրիստոնէից, որք 'ի պատուի են նաեւ յաչս ձեր, և արդեօք զայս 'ի մտանել անդր, և չէ արժան լուել ձեզ զայսմանէ և թողուլ զայնպիսի տեղի 'ի ձեռս նոցա։ Իսկ Վէպիրն ունկնդիր լեալ բանից Հրէին, հրաման ետ այլազգեաց հալածել անտի զվաճառս, և նոքա արտաքսեալ զնոսա անտի սիրեցին բովանդակ վանսն Սիոնի։ Ապա թուէ զվտառաս տաճարին Ս. Յարութենէն 'ի Գիւտ խաչին, մի սեղան Լատինաց, և մի Ցունաց, 3 խորան Հայոց, Սեղանն Դանիէլեանոսի սեփհական ամենայն քրիստոնէից, հանդերձ բաժանումն՝ Հայոց, Փուշ պսակին Հասեչաց, նոյնպէս վանքն Հայր Աբրահամու, խորանն Գաթոց յետ կոյս Դերեզմանին։ Զդուռն տաճարին բանային այլազգիք որոց տարեկան եկամուտն էր 36,000 արծաթ ըռեալ, զի մէն մի ուխտաւոր Լատին հատուցանէր 10 մահար ոսկիս, Ցոյնք 8, և այլք 7, բնակիչք քաղաքին՝ 3։ Իսկ ժողովուրդք պաղատինոյ էին 'ի մեծի նեղութեան, զի Պէտուի կոչեալ Արաբք յարձակեալ կողոպտէին զբա-

զաքն և առնէին, և ոչ երկնչէին յիշխանութենէ Սուլթանին։ Բղեզէս քաղաքին տակաւին զօրօք անկարող էր զսպել զնոսա, մինչեւ համարձակիլ նոցա մտանել յերուսաղէմ և կողոպտել զորս և գտանէին, և Բղեզէսն չկարեր ասել ինչ։

Պատճառ յափշտակելոյ զՍիոն, խնդրեալ են տաճիկք տակաւ մի քացախ 'ի միաբանութենէ Լատինաց, և նոցա պղցեալ՝ յափշտակեն, այսպէս գրի 'ի նամակին գրեալ առ Աղէքսանդր Կամուղիկոս, յետ երր 150 ամաց։

Ահաւասիկ պատճեն Հայկական ձեռագիր յիշատակարանին, զոր խոստացաք 'ի վեր անդր։

Ի թուին Հայոց ՌԴ (1554)։ Սկիզբն եղեւ նորոգութեան և հաստատութեան սիրոյ դաշին ազգին Հայոց ընդ Հռոմայեցիս, 'ի ձեռն Տէր Անդրիաս և Տէր Աստուածատուր Ս. Արք եպիսկոպոսաց առաջնորդաց առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի հանդերձ ամենայն միաբան եղբայրութեամբ։

Եւ այս եղեւ ըստ այսմ օրինակի։ Ի ժամանակս իշխանութեան Սուլթան Սիւլէյման Կայսեր Թուրքաց՝ առին Արաբացիք զվանս Սիոնի 'ի ձեռաց Լատինաց և արտաքսեցին զնոսա անտի, եւ նոցա տարակուսեալ դէպ երբէն այսր անդր չդտեալ տեղի բնակութեան։ Ապա խորհրդոյ գլխաւորաց նոցին, գնացին ոմանք 'ի նոցանէ 'ի Կոստանդինուպոլիս, եւ մատուցին գիր աղաչանաց առ արքայ, խնդրելով տեղի բնակութեան յերուսաղէմ. Սուլթանն հրաման ետ նոցա ընտրել տեղի, ուր և ինքեանք հաճեացին և բնակեսցին անդ։ Սակայն Լատինք հաստատեալ էին 'ի միտս իւրեանց ունել վանս ինչ, որոյ վասն բազում անգամ 'ի ժողով գումարեալ խորհէին 'ի վերայ այսր, բայց չկարացեալ գտանել զեկս հնարից, դիմեցին առ ազգն Հայոց, յիշելով զառաջին սէրն և զմիաբանութենն զոր ունէին յառաջադոյն 'ի Հարց անտի, գերագոյն համարեալ քան զամենայն ազգս քրիստոնէից, և յայտ արարին սիրով և մտերմաբար զխորհուրդս իւրեանց՝ քահանայից և գլխաւորաց ազգին, թէ ո՞րպէս յափշտակեցաւ Վանքն Սիոնի, եւ թէ զի՞րդ կրօնաւորք նոցին առանց տեղւոյ և բնակութեան թափառին աստանդական, ապա

յարէ յիշատակարանն, այժմ աղաչեմք եւ խնդրեմք 'ի բարեպաշտութենէ եւ յԱստուածասիրութենէ ձերմէ, յիշեցէք զսէրն զոր ունէիք 'ի ժամանակս առաջնին Թագաւորացն առ ազգն Ֆրանկաց, եւ ձեռն տուք մեզ քրիստոնէապար՝ գրել Թուղթ ընծայութեան առ առաջնորդս ձեր յերուսաղէմ, ժողովել անդ զառատապէս կրօնաւորս եւ ցուցանել նոցա տեղի բնակութեան, զի կատարեսցեն զպաշտօնն Աստուածային։ Իսկ երեւելիք աղդին հաւանեալ ընդ բանս, խոստացան կատարել զխնդիրս նոցա։ Ապա միաբանեալ քահանայք եւ տանուտեարք հանդերձ ամենայն ժողովրդովք, գրեցին Թուղթ յերուսաղէմ առ Պատրիարքն եւ առ ամենայն դասս կրօնաւորաց, պատուիրելով նոցա տալ տեղի ինչ յարմարագոյն 'ի բնակութիւն Լատին կրօնաւորաց, Թէ 'ի ներքս 'ի քաղաքին եւ Թէ արտաքոյ նորին, ուր եւ պատշաճ համարեսցին։ Զայս Թուղթ առեալ Լատին կրօնաւորաց, եւ բերեալ մատուցին առ Անդրիաս Պատրիարք։

Եւ նորա ընթերցեալ զայն առաջի միաբանից, անկան 'ի տարակուսանս, կասկածելով Թէ՝ մի գուցէ 'ի բարեպաշտութենէ ասեն յառաջ եկեսցէ զնաւակար չարիք, որոյ վասն գործն յապաղեցաւ եւ ձգեցաւ իրրեւ ամիս 10։ եւ զկնի բազմադիմի խորհրդոց հուսկ ուրեմն միաբանեցան 'ի մի կարծիս։ եւ եառն զվանս Հրեշտակապետաց 'ի բնակութիւն Լատին կրօնաւորաց, այսպիսի եղանակաւ։ 2 խառան յեկեղեցին։ 2 ջրհոր յետուստ նորին, եւ զերկուս բաժինս վանից 'ի բնակութիւն, 'ի խանէն մինչ 'ի պարտէզն եւ անտի մինչ 'ի ծառն նռնենեաց, առանց վարձու եւ առանց որ եւ իցէ պատճառի։ բնակիլ անդ իրրեւ հիւր ժամանակս լինչ եւ ակն ունել այցելութեան Տեառն։ կալ ընդ կրօնաւորս Հայոց սիրով եւ խաղաղութեամբ։ լինել բարեկամին բարեկամ՝ եւ թշնամւոյն թշնամի, ցաւակից եւ ուրախակից յամենայնի։ հասանել 'ի թիկունս 'ի վտանգի նեղութեան, որպէս նոքա հասին, եւ խոստանան հասանել, եւ զոր ինչ կամին առնել գիտութեամբ եւ հաճութեամբ նոցին արասցեն, որպէս սիրելի եղբարք։ Մինչեւ ցաստ էր յիշատակարանն։

Գրէ նաեւ վանն այսր Հաննա վարդապետ։ Թէ մինչեւ առին Լատինք հրամանն Թագաւորական բնակիլ 'ի վանս Վրաց։

Պոմ։ Երուսաղէմ։ Երես 278։ Զկնի 7 ամաց ելանեն Լատինք 'ի վանից Հրեշտակապետի։

Արդ՝ վանք Ս։ Սիոնի է արտաքոյ պարսպի քաղաքին Երուսաղէմի, կարի մերձ նմին եւ Ս։ Փրկչի վանքն Հայոց։ Զնաւս վարդապետն մեր անդ եկեալ զգառն Պասեքին յընթրիս։ եւ առանձնաց աչակերտաց իւրոց զվարդապետ վրկական Պատարագին։ լուաց զոտս աշակերտաց։ յետ Յարութեան երեւեցաւ նոցա գրօքն փակելովք։ եւ ետ չօշափել Թովմայի զվէրս կողին եւ զտեղիս բեւեռաց։ յետ Համբարձման իւրոյ աստ ժողովեցան Առաքեալք եւ աշակերտք։ աստ էջ ամենասուրբ Հոգին Աստուած եւ հանգեաւ 'ի դասս Առաքելոց, եւ զարդարեաց զնոսա եօթնարփեան շնորհօք։ այլովքն հանդերձ։ Մօտ էր սմա եւ տուն ամենօրհնեալ կուսին Մարիամայ մօր Տեառն, յորոյ վերայ կանդնեալ էր եկեղեցի, զոր կործանեցին այլազգիք։ վանքն Սիոնի զերծաւ յաւերանաց Տիտոսի եւ Ադրիանոսի։ վերջապէս աստ էր ժողովարան Առաքելոց եւ յաջորդաց նոցին մինչ 'ի չինութիւն եկեղեցեացն 'ի Սուրբ Տեղիս։ Ցեղենակ չինութեան եկեղեցւոյն Սիոնի, ասի լինել նա ինքն Թագուհին Հեղինէ մայր Կոստանդիանոսի մեծի։ Մովսէս Կաղանկատուացի յատորագրութեան եկեղեցեացն Ս։ Երկրին, ստորագրէ նաեւ զեկեղեցին Սիոնի՝ այսպէս, «Ս։ Սիոն եկեղեցին՝ միով ասպարիզաւ բացագոյն է 'ի յարութենէ՝ 100 կանգուն յերկայն եւ 70 'ի լայնն, 80 սեամբք կամարակապօք, եւ չէ վերնատնօք, այլ թարթ կապեալ է փայտեայ, եւ պսակ փշոյն կայ 'ի կախ գթարբէն, որ եդին կենարարին 'ի գլուխ»։ Այս եկեղեցի զոր յառաջ բերէ պատմագիրն՝ կայր կանգուն մինչ ցեօթնեբոյթ գար, եւ ապա կործանեալ յանկիշատակ ժամանակի։ այժմ ոչ միայն հիմունքն՝ այլ եւ տեղին անդամ նշմարել անհնարին է։ զի խառն 'ի խուռն տունք մահմետականաց կառուցեալ են անդ։ Ցետ այսմ եկեղեցւոյ, յարէ՝ «Եւ յայմմէ եկեղեցւոյն վերնատունն խորհրդոյ, եւ վայտեայ գմբեթ։ յորում նկարեալ է զընթացն խորհրդոյ Փրկչին։ յորում է սեղան խորհրդոյ, եւ պատարագ մատչի 'ի վերնայարկին Սիոնի, և վերնատուն մի լինի»։ Նկարագրութիւն եկեղեցւոյս յայտ առնէ, այժմեան զեկեղեցին, որ

պահի ամրողջ իւր հնութեամբ իւրով. թէպէտ և ի բազում տեղիս վտիտեալ և այլայլեալ ի դարս և ի ժամանակս, այլ միացորդք հնութեանց չատն ինչ կարծիս հետազօտ քննչաց։

Մինչ ի գալուստ Խաչակրաց ի Ս. Երկիրն՝ չէ յայտ թէ յո՛յր ձեռս էր վանքն Սիոնի. թէպէտ Յոյնք միշտ պնդեն թէ ի ձեռս իւրեանց էր, և մինչեւ ցայսօր յիշեն ի պատարագին՝ զՊատրիարքն իւրեանց, յետ այլոց դասուց, ի վերջոյ և Պատրիարք Ս. Սիոնի. և ապա անկաւ ի ձեռս Լատինաց. արտաքսեալ և հալածեալ անտի ի ժամանակս ժամանակս, որպէս գրեցաք ի կարգի իւրեանց, մինչ ի յետին գրաւումն այլազգեաց, Յետ գլխելոյ մեր զայսոսիկ վոքր ի չատէ, մնայ արդ ստորագրել արդի եկեղեցին Սիոնի, որ ի ձեռս Արաբացւոց։ Վերջին գրաւող վանաց Սիոնի՝ է նա ինքն Շէյխ Ահմէտ Տէճէնի, մին ի գլխաւոր գիտնաւորացն Արաբացւոց, ուր բնակին ցարդ սերունդք նորին և այլք։

Յետ ոչ բազում աւուրց վակեցին զդուռն եկեղեցւոյն, և բացին նոր դուռն մեծ՝ որ հայի ընդ հիւսիս, յորոյ վերայ կառուցին զընակարանս իւրեանց։ Եկեղեցին վերնատան կառուցեալ է ի վերայ 6 մարմարիոն սեանց, և 2 պատուհանք նորին հայրն ընդ հարաւ, ի քակել հին ծեփին երեւեցան յառաստաղս պատկերք դառն եւ տխուր քանդակեալ ի վերայ քարանց, թէպէտ և կամեցեալ են սւերել, այլ ոչ խոպան եղծանել, այլ նկարք եւ քանդակք ի խոյակս սեանց, խորտակեալ և եղծեալ խոպան, կորուսեալ ճարտարութիւն քանդակագործին։ Ի ճակատ արեւելեան որմոյն՝ ուր էր սեղանն քրիստոնէից, զետեղեալ կայ արձանագիր Արաբացի տառիւք, ի յիշատակ առաջին դրաւողի տեղւոյն, վերկայնութիւն եկեղեցւոյ 68, և լայնութիւնն 32 թզաչափ, դնէ Հաննա վարդապետ։ Ի հարաւոյ 5 աստիճանաւ ելանէ դէպ յարեւելս ի փոքր նեհանդն, և անտի ի հիւսիսային դրանէ մտանէ ի սենեակն, և անտի ի հիւսիսային դրանէ մտանէ ի սենեակն մեծ և քառակուսի, յորոյ վերայ ամբառնայ գմբեթն մեծ և քառակուսի, աստ է տեղի Իջման Հոգւոյն Սրբոյ ըստ քրիստոնէից. ուր չէին եալ են այլազգիք երեւոյթ ինչ չիրմի յեց յորմն հիւսիսոյ, ծածկեալ կտաւօք.

զոր միայն ցուցանեն քրիստոնեայ ուխտաւորաց, թէ եւ կարի մեծատոհմ եւ ազնուական իցէ, թէ՝ է գերեզման Մարգարէին Դաւթի։ Յարեւմուտս կոյս յանկեան հարաւոյ՝ է քարեայ սանդուխքն, յորոյ վերայ կառուցեալ է դիմեթ ի վերայ մարմարիոն սեանց, ասոլ իջանէ ի ներքին եկեղեցին, կանդնեալ դարձեալ ի վերայ սեանց ի չափ վերնոյն՝ յերկայն և ի լայն, անկարելի և աններելի է մտանել ասա առն քրիստոնէի. մի միան եկեղեցւոյն յարեւելից կուսէ բաժանեալ է երկաթի վանդակաւ, և այն եւս անչրպետեալ միջնորմով, հարաւային մասն ծառայէ ի տեղի մզկիթի, ուր է Մկրտարան նոցին. եւ ի միջնորդատն մտանէ ի սենեակն հիւսիսային, յատակեալ մաքուր մարմարիոն սալիւ, եւ յեց հիւսիսային յորմն ցուցանեն զգերեզման Մարգարէին Դաւթի, չինեալ ի ձեւ չիրմի եւ ծածկեալ մաքուր կտաւօք, յորոյ վերայ դրեալ է Արաբացի խոշոր տառիւք մաղթանս ինչ առ Դաւիթ, ուր պահին եւ դրոշակք իւրեանց. յորմն արեւելեան ցուցանեն զդուռն այրին ազխեալ եւ ի յետուստ կողմանէ հիւսեալ քարամբք. ուստի իջանէ ի բուն այրն, ուր ամփոփեալ են մարմինք Դաւթի և Սողոմոնի, սակայն աստ այլազգիք անգամ խորշին մտանել, թող թէ քրիստոնէից, և է փակեալ։ Ահա այս է այժմեան ձեւ եկեղեցւոյն, զոր այժմ նորոգեն այլազգիք։ Իսկ պատմիչն մեր բաց յեկեղեցեացս զոր դրեցաք, յաւելու զայլս, ուր ասէ. «Եւ Ս. Սիոնի ընդ աջմէ խորանն Պիղատոսի, որ կոպռէա անուանի. և ինչն յորոյ վերայ կայր Քրիստոս առաջի Պիղատոսի, յոր ոսից տեղն երեւի ցարդ եւս. և աւազանն ներքոյ նորին, ուր զաշակերտացն լուաց զոտս»։ Խորանն, ինչն, աւազանն, զորոց դրէ պատմագիրն, չերեւին աստ ի տեղւոջ ուրեք. այլ միայն կաւտակեալ տունք Մահմետականաց։ «Եւ յայնմ տեղւոջ ուր զՍ. Կուսին դադան կալաւ Հրեայն արտաքոյ քաղաքին չտալ թաղել, գմբեթ կապեալ ի չորից սեանց. եւ սեանցն պղնձի խաչ զգեցուցեալ, որ են մարմարիոնք»։ Պոմ. Աղէքս. Գէր+ Բ. Եբէ. 421—22. Տիպ Փարիզու։ Սոյն տեղի և գմբեթին եւս անյայտ լեալ. մի միայն բեկորք երկուց մարմարիոն սեանց, աւանդութեամբ տեառնի յանկիւնս արտաքոյ Ս. Փրկչի

վանաց · յարեւելս և յարեւմուտս , յորոյ վերայ յարուցին վէմս Ցոյնք և Լատինք 'ի ժամանակի մերում : Իսկ վանն Սիոնի՝ Տես նախ 'ի Դէր Հաննա Լուսաւորչեայ · Եւս 276 ·

بسم الله الرحمن الرحيم

امر بتطهير هذا المكان من المشركين وتنظيفه وعمله مسجد يذكر فيه
اسم الله سلطان الانام ناصر دين الاسلام وخادم البيت الحرام
منشي العدل والأمان سليمان بن السلطان السلطان بن عثمان
ايد الله الاسلام بحياته على يد مولانا شيخ الشيوخ المسمى محمد الواعظ
عجمى اجرى الله الخيرات على يديه ورحم والديه بتاريخ الخمس
من شهر ربيع الاول سنة ستة وثلاثين وسبعماية وحده الله والحمد

Հրամայեաց Սուլթան Սիւլէյման որդի Օսմանայ գլխաւոր Շէյխի ուրումն , որում անունն էր քարոզիչ Մէհէմմէտ 'ի Պարսիկ ցեղէ , մաքրել և որձել զտեղիս զայս 'ի քրիստոնէից , և կարգել 'ի մզկիթ , և անդ յիշել զանուն Աստուծոյ , 'ի թուին Հիճրէթի ՈՄԶ յամսեանն Րէպիւլ էվվէլի ·

Ցեսո խօսելոյ մեր վոքր 'ի չառէ զվանայ Սիոնի , դարձցուք այժմ դարձ զվէմն որ պատահեցաւ 'ի մէջ Հայոց և Ցունաց · Անհամաձայնութիւն Ցունաց՝ էր 'ի վերայ երկուց խնդրոց · զի նոքա ասէին զՀայս 'ի միասին վճարել զհարկս և զտուգանս սպանութեանց , որք պատահէին 'ի սմին ժամանակի , եւ արկանէին 'ի վերայ վանօրէից · և 'ի ձրագալուցի մեծի Պասկի 'ի հանդիսի Լուսաւորութեան չմոռանել Հապէշոյ 'ի Գերուսաղէմ Քրիստոսի՝ նախ քան զՑոյնս · Իսկ Հայք ընդդէմ սովորութեան Համարեալ զայս ոչ առնուին յանձն , որպ վասն բազմացան վէճք և խռովութիւնք 'ի մէջ երկուց ազգաց · Այլ իրրեւ ոչ կարացին համաձայնիլ և իրաւախոհ լինիլ 'ի մէջն իւրեանց · բողոք կալաւ Պատրիարքն Ցունաց Գերմանոս առ Արքայն Սիւլէյման և ամբաստան եղեւ զԱնդրիաս Պատրիարքէն Հայոց , և երկոքեանն իսկ չոքան 'ի Կոստանդինուպոլիս , և 'ի յանդիման լինիլ Մեծի կայսերական առաւնին · սկիզբն կալաւ խօսիլ Գերմանոս և ասէ · Կայսերական հարկն , զոր հաստուցանեմք ամի ամի յերուսաղէմ · 'ի սկզբանէ անտի

բաժանեալ եմք 'ի չորս մասունս · ըստ չորից ազգաց , որք են Լատինք , Սէրվիացիք , Ցոյնք , Վիրք և այլ հետեւակ համազգայինք մեր · Նոյնպէս Հայք եւ հետեւակք նոցա , Հապէշք , Գաղթիք և Ասորիք · և այսպէս առանց կակաոս կութեան հաւասար բաժանեաք 'ի միջի մերում · այժմ Հայք 'ի բաց հրաժարին և չկամին վճարել ընդ մեզ զհարկս եկեղեցեաց եւ զտուգանս սպանութեանց : Եւ յերեկոյի ձրագալուցի Զաքկին ընդ Հայոց 'ի միասին մտանէաք 'ի Գերեզմանն 'ի կատարել զխնդիս Լուսաւորութեան · այժմ Հապէշք զան զամենեսին յառաջ մտանեն · և Հայք , նոքա հետեւակք մեր են ասելով , կամին նախ քան զմեզ մտանել · խնդրեմք հարցանել ցՊատրիարքն Հայոց , եւ ապա պատուիրել նմա ընդ մեզ վճարել զտուգանն , և 'ի միասին մտանել 'ի Գերեզմանն ·

Ցառաջ մատեաւ Անդրիաս Պատրիարք և ասէ , արդարեւ Հապէշք հետեւակ են մեզ , և նախ քան զամենեսին մտանեն 'ի Գերեզմանն՝ և Հայք ընդ նոսա , ըստ առաջին սովորութեան , զհարկն բաժանեմք 'ի չորս մասունս , եւ երեք ազգքն հետեւակ են մեզ , անօրինեմք զզօրձս նոցա , կարգաւորեմք զխնդիրս կալուածոց նոցին , կարգեմք 'ի պաշտօն և հանեմք անտի · Պատրիարքունք Հայոց տիրեն և ժառանգեն զտացուածս վախճանեալ վարդապետաց նոցին , որպէս յայտ առնեն զայսոսիկ հրովարտակն արքային Սէլիմայ , և դաշնագիրք Օսմայ և Սալահատտինի , և հրովարտակք առաջին թագաւորաց , յորս հաստատեալ են եկեղեցիք սեփհականութիւնք եւ հետեւակքն մեր · և արձանագրեալ 'ի տումարն կայսերական , չնորհեցին մեզ հրովարտակ · Իսկ զհարկն եկեղեցեաց եւ հետեւակաց մերոց , և զտուգանս սպանութեանց , տուեալ եմք ընդ նոսա , որպէս Ցոյնք ընդ հետեւակս իւրեանց , զի գործք եկեղեցեաց եւ հետեւակացն Ցունաց , պատկանին նոցա · Նոյնպէս և գործք եկեղեցեաց և հետեւակացն Հայոց , պատկանին մեզ · զպատճէն կայսերական տումարին եւ զհրովարտակին ունիմք առ մեզ , ընթերցցի , եւ ապա տուգեսցի 'ի հաւատարիմ արանց , եւ ըստ զօրութեան նոցին որոշեսցի , և բարձցի 'ի միջոյ նանիր ամբաստանութիւն Գերմանոսի · Ընթերցան յառնէն անդ զգրեանս , զոր

մատոյց Անդրիաս, և գտին, որպէս պատմեաց, յառաջ մատեան եւ երեքին այլազգի վկայք, ասեն՝ ըստ մեաց Կայսերական գրոց եկեղեցիք վանօրայք եւ երկք աղքատ սեփհական են Հայոց, զհարկս և զառուգանս հատուցանեն ընդ հետեւակաց իւրեանց, որպէս եւ Յոյնք. և յաւուր ոմն Զաքկին յառաջ քան զամենեսին Հասէնք մտանեն 'ի Գերեզմանն Քրիստոսի, ապա Հայք և Յոյնք 'ի միասին։ Լուեալ առենակալաց զրանս երկաքանչիւր կողմանց, ահմանեցին՝ բաժանել զհարկն հատասար 'ի միջի իւրեանց, և այնպէս հատուցանել, պատուեր եառն Հայոց ընդ Յունաց 'ի միասին մտանել 'ի Գերեզմանն։ Յունաց չպահանջել 'ի Հայոց զհարկս եկեղեցեաց իւրեանց և զառուգանս սպասնութեանց, և արձակեցան յառենէ անտի. ՅՈ Բանզան ամսոյ, ՉԶՓ (1555)։ Որպէս յայտ առնեն զայսոսիկ դատաստանագիրքն և հրովարտակն։

Անդրիաս եպիսկոպոս կարգեալ էր ախոռակալ իւր Ներսէսատուր եպիսկոպոս, և նա վարէր զիշխանութիւն պատրիարքութեան 'ի բացակայութեան նորին, ուստի հրովարտակք և դատաստանագիրք ոմանք տուեալ են յանուն նորա։ Որպէս 'ի սմին ամի ուխտաւորք Հայոց եւ Յունաց, որք գային յարեւելից յաշխարհէն Հայոց, պատահեցան 'ի ճանապարհի նեղութեանց, զի 'ի հասանիլ նոցա յիւրաքանչիւր քաղաքս և յաւանս, հարկահանք այլազգեաց յափշտակէին զգրաստս նոցա, եւ յետ բազմադիմի նեղութեանց, առեալ յիւրաքանչիւր անձէ զերկուս ոսկիս, ապա դարձուցանէին առ նոսա զգրաստս նոցին։ Ի հասանիլ նոցա յերուսաղէմ, պատմեցին զանցս իւրեանց Ներսէսատուր եպիսկոպոսի, և նա գրեալ ծանոյց 'ի դուռն. որոյ վանն գրեցաւ հրովարտակ առ դատաւորս քաղաքաց, բառնալ զբռնութիւնս այլազգեաց, զի մի տացեն թոյլ նեղել զուխտաւորս 'ի ճանապարհի։

Սակն այս Ներսէսատուր եպիսկոպոս կամեցաւ չինել և նորոգել զաւերեալ տեղիս եկեղեցւոյն Համբարձման քրիստոսի 'ի լեառն Ձիթենեաց, զի այլազգիք բարձեալ տանէին զանկեալ քարինս յորմոց, և 'ի կիր անուին 'ի պէտս չինուածոց իւրեանց։ Իսկ Ներսէսատուր առ հրաման 'ի դատաւորէ, և սկսաւ արկանել անդ քարինս 'ի նորոգել։ Այ-

լազգիք արգելին զնա, և ոչ եառն նմա թոյլ արկանել 'ի նա ձեռս։ Ներսէսատուր գրեաց դիր աղաչանաց 'ի Դուռն, և յայտ արար թէ՝ եկեղեցին Համբարձման 'ի վաղ ժամանակաց անտի է՝ 'ի ձեռս Հայոց, ուր կատարեն զպաշտամունս իւրեանց, այժմ քայքայեալ աւերի և այլազգիք բարձեալ տանեն զքարինս նորին, և արգելուն զնորոգութիւնն։ Գրեցաւ հրովարտակ վասն այսր առ դատաւորն երուսաղէմի, վերահասու լինել գործոյն, և խնդալ թէ՝ ունի՞ն Հայք գիր ինչ 'ի դատարանէ վասն այնր, և հակառակ օրինաց չբռնանալ ուժիւք 'ի վերայ նոցա, և չանցանել քան զչափ նախնի գրից չինուածոյն, և զհակառակողսն յականջ յանուանէ ծանուցանել 'ի Դուռն, ՉՂԷ (1556)։ Սակայն այս գործ չինութեան մնաց մինչեւ 'ի գարձ Անդրիաս Պատրիարքի 'ի Թադաւորեալ քաղաքէ, զկնի չորից ամաց, որպէս տեսցի արդ։

Իսկ Անդրիաս Պատրիարք գարձ արար 'ի Կոստանդինուպոլսոյ յերուսաղէմ յաթոռ իւր, և յաւուր միում յանդիման եղեւ դատաւորին, և յայտ արար նմա զամենայն հանդամանս աւերածոյ եկեղեցւոյն Համբարձման, զի ձեղքեալ էր գմբեթն 'ի վերայ ռանատեզոյն Քրիստոսի, պատուհանքն քակեալ, և այլ չինուածք ներքոյ և արտաքոյ եղծեալ և ապականեալ, սալայատակք գաւթին խանգարեալ, չրջապատ սրմն անկեալ և խոնարհեալ։ Եւ 'ի ժամանակէ անտի՝ յորում պարսպէին զգաղաքն երուսաղէմ. լեալ էր մահազատեղի խաչանց և գոմ ոչխարաց, մատնեալ յաղտեղութիւն տեղին սուրբ։ Եւ ապա խնդրեաց ելանել 'ի քննութիւն, և տալ հրաման չինութեան և նորոգութեան Իսկ դատաւորն առաքեաց զոմանս յերեւելեացն այլազգեաց, ընդ որս էր և ճարտարապետ քաղաքին, և 'ի քննութիւն առեալ զամենայն հանդամանս տեղւոյն, գտին, որպէս պատմեալ էր Անդրիաս։ Եւ չափեաց ճարտարապետն զգրմն հիւսիսային՝ յարեւելից յարեւմուտս, և եդիտ զայն քակեալ 50 կանգուն յերկայն, և 10 'ի բարձր, հատասար հին մնացորդաց որմոյն։ Որմն արեւելից, չափեալ 'ի հիւսիսոյ 'ի հարաւ, 70 կանգուն յերկայն, և 10 'ի բարձր, հարաւային, յարեւելից յարեւմուտս, յառաջին անկիւնէ մինչ 'ի դուռն արտաքին՝ 30 յերկայն, և 10 'ի բարձր

ըստ հաւատարմութեան նախկին մնացորդաց չինուածոյն :

Ապա դարձ արարեալ անտի մատուցին առ դատաւորն զարդիւնս քննութեան : Իսկ նա խնդրեաց վկայս յԱնդրիաս՝ թէ արդարեւ էգե՞ն անկեալ որմք գաւթին, և մըտանե՞ն անաւուն՝ ի գմբէթն՝ որպէս զի տացէ հրաման նորոգութեան : Եւ էած և կացոյց առաջի նորա զարս 10 յայլազգեաց Երուսաղէմի և՝ ի Գեղջ լերին Զիթենեաց, որ և վկայեցին իսկ զաւերմանէ տեղոյն : Ցետ հաստատելոյ դատաւորին զայս ամենայն՝ ի դիր, հրամայեաց Անդրիաս Պատրիարքին Հայոց նորոգել զտեղին : Եւ նորա ձեռն՝ ի գործ արկեալ չինեաց զգմբէթն, և ծեփեալ ապու

զտեղին։ Ցանգխման եղեւ Անդրիաս առեւնին, եւ յետ լսելոյ զամբաստանութիւնս նոցա՝ առաջի արար զմուրհակս գրեալ օրինօք Շէրիի, որ լեալ էր տեղին սեփհական միաբանացն Հայոց աւելի քան զամս 20։ Եւ յայնմ եղեւ ստութիւն այլազգեաց։ Եւ դատաւորն մերժեաց զնոսա յերեսաց իւրոց, և վերստին գրով հաստատեաց զտեղին։ Թէպէտ և ելին արտաքս այլազգիք՝ ի դատարանէ առանց բանս ինչ ասելոյ, բայց եդին՝ ի մտի հաստուցանել չարիս՝ ի դլուխս Հայոց՝ ի դէպ ժամանակի։ Եւ չեւ եւս բոլորեալ էր չրջան տարւոյն, ահա ազգիկալ չխոթեցան, և յարուցեալ՝ ի վերայ միաբանից՝ խնդրելին զվանս Ս. Փրկչի՝ ըստ պարտէզն և զգերեզմանատունն, և տագնապէին պահանջելով զբսակս դրամոց՝ որոց չէր հնար հատուցանել զայնս, և յառաւելն նեղել և՝ ի չգտանել յուստեքէ աստար վըճռութեան, բողոք կարդացին՝ ի Դուռն Արքային։ Յայտ առեալ զգեւնութիւնս այլազգեաց Սիոնի։ Լուեալ արքային զառաջսանս Հայոց, գրեաց հրովարտակ առ քաղաքսլեան և առ դատաւորն Երուսաղէմի՝ առնել իրաւունս, եթէ անցեալ էր ասէ՝ ի վերայ խնդրոյն այսորիկ ամն 15։ մի՛ երբէք ունկն մատուսցիք բանից այլազգեաց, և եթէ նոքա հակառակ օրինաց և կայսերական հրամանին՝ չարժել կամին, որպէս յայտ արարին Հայք, արգելջիք զնոսա՝ եւ մի՛ թողուցուք լինել ձեռնամուխ՝ ի գործս նոցա, և եթէ ոք անհնազանդ գտցի հրամանին՝ ազդ արասջիք աստ՝ ի Դուռն, ՈՎՀ (1564)։

Յետ վճարելոյ միաբանից զդատս՝ որ ընդ այլազգիս, կամեցան նորոգել զաւերեալ տեղիս Ս. Փրկչի վանից։ սակայն այլազգիք Սիոնի՝ և այլք խափանեցին զգործն, զի պահանջէին՝ ի նոցանէ զինչս բազումս, իբրեւ ոչ կարացին հաճել զմիաս նոցա, յայտ արարին զնոցանէ իրեանց՝ ի Դուռն Արքունի, եւ առին հրովարտակ, զի դատաւորն արգելցէ նովաւ զբռնութիւնս այլազգեաց, և առանց պահանջելոց զիրս ինչ, ասացէ նորոգել Հայոց զվանս իւրեանց։ Եւ մինչդեռ պատրաստեալ էին այսու խնդրով՝ Խաչատուր եպիսկոպոս եհան հրովարտակ յԱրքունուստ նորոգել նա և զվանս Բեթղեհէմի, զի այլազգիք ընդդիմանային այնմ եւս, ՈՎՓ (1565)։

Սակայն առ ժամն ոչ կարացին Հայք՝ ի գլուխ տանել զգործն, այլ զկնի վից ամաց նորոգեաց զայն Անդրիաս Պատրիարք ըստ մտաց հրովարտակին, և յետ լրման գործոյն՝ գնաց դատաւորն բազմութեամբ՝ ի քննութիւն, և եգիտ զամենայն ինչ ըստ հրամանի Արքային, (1571)։

Անտանելի էին բռնութիւնք այլազգեաց՝ և կարի դըժուարին յագեցուցանել զնոսա, և չիջուցանել զցասումն սրտմտութեան նոցին, զի չեւ եւս մոռացեալ էին Հայք զնեղութիւնս զոր կրեցին յայլազգեաց ամօք յառաջ վասն սեփհականութեան իւրեանց։ և ահա՝ ի սմին ամ նորոգեցաւ դառնութիւնն։ զի միւսանգամ ամբարձին գըլուխ՝ և խնդրելին գրաւել զայգիս և զձիթենիս՝ թէ՝ ի մէջ քաղաքին և թէ արտաքոյ նորին, և զգերեզմանատունն իսկ գվաղվին։ և պահանջէին՝ ի միաբանից բազում ինչ, և՝ ի չգտանել զերը իրաց և զերծանիլ՝ ի ձեռաց նոցա։ Անդրիաս Պատրիարք գրեաց գիր աղաչանաց առ Արքայ, և՝ ի ձեռն հաւատարմին իւրոյ առաքեաց զայն՝ ի Թագաւորեալ քաղաքն։ յայտ արարեալ զտառապանս և զնեղութիւնս իւր՝ զոր կրէր յերեսաց այլազգեաց։ գրեցաւ հրովարտակ առ դատաւորն, չլսել զայնպիսի դատս և զամբաստանութիւնս առանց Արքունի հրամանի։ մանաւանդ որ անցեալ էր ամն 15։ գիտելով թէ այլազգիք սակս ագահութեան իւրեանց՝ հակառակ օրինաց եւ կայսերական հրամանի՝ յարուցեալ են՝ ի վերայ առացուածոցն Հայոց։ ապա պատուիրէ մերժել զնոսա, եւ չլսել զդատս նոցա, և զանհնազանդսն ծանուցանել՝ ի Դուռն, և չտալ թոյլ նեղել զազգն Հայոց՝ ի ՕՄուհարրէմ, ՈՎԷ (1566)։

Անդրիաս եպիսկոպոս, յետ բարւոք կառավարելոյ զաթոռն երուսաղէմի, և վարելոյ զիշխանութիւն Պատրիարքութեան ամս 29 վախճանեցաւ, սա արար չինութիւնս քութեան զվանս Ս. Փրկչի՝ ի վանօրայս, և վաստակեցաւ՝ ի զանազան գործս աթոռոյն, կրեալ վիշտս և դառնութիւնս յօտարաց, զնեցաց զտունս յայլազգեաց առաջի վանացն Ս. Յակոբայ յարեւմտեան կողս, և գսակեալ զնոսա՝ զտեղին արար պարտէզ ձիթենեաց, և զմի մասն նորին զնեաց յաջորդն Դաւիթ եպիսկոպոս (1571)։

Զկնի վախճանի Անդրիաս եպիսկոպոսի, ընտրեցաւ յա-

Թոռ Պատրիարքութեան Դաւիթ եպիսկոպոս գործակից և վաստակակից նմին, և մերան Ս. Աթոռոյն։ Ցաւուր սորա ՚ի յորդել անձրեւաց տարւոյն, անկան արեւելեան և հարաւային որմքն Ս. Փրկչի վանաց, և որմն պարսպի Հրեշտակապետի վանաց, և տուն մի կից նմին, իսկ Դաւիթ Պատրիարք առեալ հրաման ՚ի դատաւորէ քաղաքին չինեալ նորոգեաց զնոսա, ՈՂՌ (1580)։

Սյլաղդիք երուսաղէմի դարձեալ բռնացան ՚ի վերայ աղգին Հայոց, եւ արգելին զնոսա ՚ի գերեզմանէ Ս. Յարութեանն, և խափանեցին զհոգեւոր պաշտամունս նոցին։ Եւ ՚ի լինել բանից ՚ի վերայ այսր ՚ի միջ Պաշտաւոր եպիսկոպոսաց և այլազգեաց, յայտ արարին նոքա զմեծագոյնսն պահանջումն իւրեանց։ իսկ Պաշտաւոր չկամեցաւ ունկն մատուցանել բանից նոցա, առ ընդ իւր Փիլիպպոս կամ Բանոս եպիսկոպոս գնաց, և դէմ եդեալ դնոցա ՚ի Թագաւորեալ քաղաքն եւ մատուցեալ գիր աղաչանաց ՚ի Դուռն արքունի, յայտ արար զբռնութիւնս այլազգեաց թէ՝ ո՛րպէս զրկեցին զՀայս ՚ի գերեզմանէ Ս. Յարութեանն։ եւ խափանեցին զհոգեւոր պաշտամունս նոցա, զոր կատարէին յաւուրց անտի մեծին Օմարայ։ Գրեցաւ հրովարտակ առ այս և պատուէր առ դատաւորն երուսաղէմի ՚ի չափու ունել զպատահակութիւնս այլազգեաց։ եւ տալ կատարել զպաշտամունս ըստ սովորութեան, և զանհնազանդն հրամանին՝ ծանուցանել ՚ի Դուռն, ՈՂԳ (1584)։

Թարգման վանաց Ս. Յակոբայ Յակոբ որդի Մովսէսի, հրամանաւ դատաւորին չինեալ բարձրացոյց զբոլորակ որմն շուրջանակի պատուհանին ՚ի վերայ տանէից տաճարին Ա. Յարութեանն, ՚ի ղղուշութիւն մանկանց և անասնոց։ զի մի պատահանսցի վտանգ ինչ։ և մի հեղեղք անձրեւաց հոսանցին ՚ի ներքս ՚ի տաճարն, ՈՂԵ (1585)։

Սյլաղդիքն յօրէ յորմէ յափշտակեալ զվանս Սիոնի բռնակեցան անդ, ոչ երբէք դադարէին հասուցանելոյ չարիս միաբանից որք էին ՚ի վանս Ս. Փրկչի։ Զի ՚ի սմին ժամանակի դուռն վանաց էր ՚ի կողմն հարաւոյ յանդիման դրան Սիոնի։ Իսկ Դաւիթ Պատրիարք կամելով զերծանիլ ՚ի նեղութենէ և ՚ի բռնութենէ նոցին, առաքեաց առ դատաւոր քաղաքին զթարգման իւր զՅակոբ և յայտ արար

նմա զվնաս անցորդաց, և խնդրեաց փակել զդուռն զայն և բանալ ՚ի կողմն հիւսիսոյ։ Դատաւորն ինքնին եկ ՚ի քննութիւն տեղւոյն, և չգտեալ վնաս և կամ հակառակ ինչ օրինաց։ հրամայեաց փոխել զդուռն և նորոգել զվանս։

Իսկ Դաւիթ եպիսկոպոս եւս բառնալ անտի զդուռն և զտեղին եհեղ քարամբք, և ՚ի կողմն հիւսիսոյ արարեալ պարսպի վանաց կից յորմն էր սենեակ մի, որոյ դուռն բանայր ՚ի ներքուստ։ եւս բառնալ զայն անտի, և ընդարձակեալ զտեղին, երաց անտի զարտաքին դուռն վանաց, և արար ճանապարհ յատուկ սակս միաբանաց։ որպէս և բերի մինչև ցայսօր ժամանակի։ ՚ի ՚ԺԳ Մուհարրէմ, ՈՂԷ (1585)։

Ժողովուրդք Յունաց բնակեալք յերուսաղէմ, ժողովեցան յաւուր միում ՚ի տաճարն Ս. Յարութեան, և ՚ի դիւրին յայնմհետէ արբեալ չուայտեցան ՚ի գինւոյ, և բանս եդեալ ընդ միմեանս, խրբեւ զազան կատաղի սրով յարձակեցան ՚ի վերայ ուխտաւորացն Հայոց՝ որք էին անդ, և եղեւ աղմուկ և խռովութիւն մեծ, հարկանէին զիրերաս, ապա պատառեցին զպատկերս, խորտակեցին զկանթեղս, և զամենայն ինչ զոր միանգամ տեսին աչք նոցա։ Եհաս լուր խռովութեանն ՚ի վանս Ս. Յակոբայ, Կիրակոս վարդապետ Պաբաճայ կոչեցեալ՝ փութայ առ դատաւորն՝ ուր եգիպտ ըզքաղաքապետն, եւ պատմեալ առաջի նոցա զանկարգութիւնս Յունաց և զվնասն որ եղեւ ՚ի տաճարի անդ։ Իսկ դատաւորն առաքեաց զոմանս և եւս ըմբռնել զխռովիչսն, և ՚ի լինել հարցափորձի յատենի անդ, յերեսաց եկին առնենքեան, թէ ոչ երբէք արարեալ են զայնպիսի իրս։ Սակայն Կիրակոս վարդապետ կացոյց վկայս և հաստատեաց ՚ի վերայ նոցա, զոր միանգամ արարեալ էին, և դատաւորն պատուհասեաց զնոսա զանիւք։ ՚ի ՚ԺՕ Ձիւնհոգիլ ՈՂՌ (1589)։ Դաւիթ եպիսկոպոս տայր նորոգել զորմն Հրեշտակապետի վանաց, եւ դնէր զանկեալ քարինս ՚ի տեղի իւրեանց, իսկ քաղաքապետն կալեալ զգործաւորսն եդ ՚ի բանտ, պատճառելով թէ առանց հրամանի զնոր չինուածս առնէք։ Դաւիթ եպիսկոպոս ջանայր բազմօք չիջուցանել զցասումն նորա, և ՚ի չհանդարտիլ նորա՝ աղգ արար դատաւորին, և խնդրեաց ելանել ՚ի քննու-

թիւն, և հաստատել զկարծիս քաղաքապետին, և նա արար զքննութիւնն 'ի ձեռն հաւատարմաց իւրոց, և եկեալ պատմեցին առաջի նորա, թէ զանկեալ քարինս միայն եդեալ են 'ի տեղիս իւրեանց։ Բարկացեալ դատաւորին առաքեաց զարս առ քաղաքապետան արձակել զգործաւորսն, և հրամայեաց Դաւթի երթալ և կատարել զգործն, ՈՂՂ (1590)։

Ի սմին ժամանակի վականք դրան եկեղեցւոյ գերեզմանի Ս. Աստուածածնին էին 'ի ձեռս այլազգեաց, և կոչէին դռնապանք, յաւուր միում անկաւ խռովութիւն 'ի մէջ նոցա, զի Շեխ Սալէհ ումն առաջի արարեալ թուղթս ինչ հակառակէր թէ միայն ինքեան սեփհական է ծառայութիւն Ս. Գերեզմանին։ Լուցանել զկանթեղս և զաշտանակս՝ այլովքն հանդերձ։ Իսկ ընկերք նորին Շեխ Նուր Էոփէ, պնդէր զհակառակն, թէ պաշտօնդ այդ յանձն է քրիստոնէից բնակելոց յերուսաղէմ, և ոչ երբէք անկեալ է 'ի ձեռս այլազգեաց։ Եւ 'ի դրգռիլ վիճմանց՝ կոչեցին զԴաւիթ Պատրիարքն Հայոց, եւ զմարգմանն Լատինաց Հաննա որդի Եագուպայ եւ զայլս 'ի քրիստոնէից։ Նուր Էտտին կացեալ առաջի դատաւորին յայտ արար բազմութեան ժողովելոց անդր, և ասէ, պաշտօնեայք և լուսաբարք կանթեղաց գերեզմանի Ս. Կուսին, են քրիստոնեայք մինչեւ ցայսօր, եւ ոչ ոք ունի իրաւունս հակառակելոյ այնմ։ Տեսեալ Սալէհի թէ ոչ կարաց չահել ինչ, ինքն եւս յակամայս խոստովան եղեւ թէ արդարեւ այդպէս է, և ոչ կարեմ յաւիշտակել 'ի ձեռաց նոցա, եթէ էր 'ի ձեռս այլազգեաց, իրաւամբ պահանջչի զլուսարարութիւն գերեզմանին։ Եւ 'ի դադարիլ սոցա 'ի բանից՝ խնդրեցին քրիստոնեայք արձանագրել 'ի դատարանի զամենայն բանս զոր խօսեցան այլազգիք յատենի անդ։ 'ի ՝ի Բահաղան ամսոյ, ՈՂՂ (1590)։

ԳԼՈՒԽ ԼԹ։

Վանք Ս։ Սարգսի։ Հակառակութիւն Յունաց։ Բանալի պրին Ննգեդան։ Վանօթացք ազգաց յերուսաղէմ։ Եկեղեցին Համբարձման։ Գրիգոր Պարոն Տէր։ Վանք Ս։ Փրկչի։ և գերեզմանատունն անդ։

ՎԱՆՔ Ս։ Սարգսի կոչի ինայր 'ի ձեռս կրօնաւորացն Յունաց։ Սակայն յետ ժամանակաց ձանձրացեալ 'ի բըռնութենէ Արաբացւոց, վաճառեցին զայն Սերվիացւոց, և նոքա չինեալ նորոգեցին զաւերեալ տեղիս, եւ կանգնեցին աշտարակս և բուրգս, և կացուցին 'ի նոսա պահապանս հսկել զցայգ և զցերեկ և զդուշանալ յարձակմանց Արաբացւոց, և այսպէս մնաց ժամանակս մինչ 'ի ձեռս նոցա։ Ապա 'ի տկարանալ թագաւորացն Սերվիացւոց՝ չեղեն ձեռնհաս նորոգել զվանս, և այս տեւեաց ամս իրրեւ հարիւր, մինչ 'ի ժամանակս Տոսխթխոսի Ծոյն պատրիարքի, (1504)։ Ապա 'ի թագաւորութեան Սուլթան Սէլիմայ Բ։ Որդւոյ Սիւլէյմանայ, ելին յերուսաղէմ նոր Բդեշխ, և կրօնաւորքն Սարգսի եկին առ նա յողջոյն, որք էին անձինք իրրեւ 1000։ բերեալ ընծայս՝ և Բդեշխն եղեալ արտաքս ետես զնոսա զի զգեցեալ էին սեաւ սքեմս, և եհարց ցնոսա թէ ուստի իցեն, և նոքա ասեն։ 'ի վանից Ս։ Սարգսի։ և նա ասէ, ընկալայ զընծայս ձեր, սակայն ոչ կարեմ թողուլ զձեզ բնակիլ բազմութեամբ 'ի մի վանս, գուցէ աղտոտմբիցիք և դժուարին լինիցի ինձ յաղթել վանից ձերոց, որ ամրացեալ է իրրեւ բերդ ամուր, և դուք իրրեւ զինուորք վառաւորք, և յետ խորհելոյ ընդ բարեկամս իւր, հրաման ետ ենիչէրի զօրաց կոտորել զնոսա 'ի բերան սրոյ, որոշեալ 'ի նոցանէ զարս իրրեւ քսան։ Եւ Լատին ճանապարհորդն գնացեալ 'ի վանս նոցա, եգիտ միայն 30 կրօնաւորս։ (1570)։

Քարուկիր ձեղունն 'ի վերայ մեծի դրան տաճարի Ս։ Յարութեան 'ի ներքոյ վերնատան Հայոց։ որոյ մի ծայրն հաստատեալ կայր 'ի վերայ Գողգոթային և փակեալ դրան, 'ի հնութենէ չինուածոյն յանկարծ քայքայեալ

անկաւ 'ի վայր։ Դաւիթ եպիսկոպոս որդի Յովհաննիսի Պաարիարքն Հայոց կամեցաւ չինել և նորոգել զայն ըստ առաջնին կերպի. սակայն փոխանորդն Ղեւոնդի և Տեսուչն վրաց Պուճխանի ընդդէմ կացեալ արգելին զնա 'ի գործոյն. պատճառելով թէ տեղին այն ընկերութեամբ է քրիստոնէից, և ոչ միոյ ազգի սեփհական։ Իսկ Դաւիթ եպիսկոպոս յանձն առեալ զաշխատութիւնս եւ զծախս, կացոյց վկայս յայլազգեաց և 'ի քրիստոնէից, և հաստատեաց զտեղին լինել սեփհական ազգին Հայոց միայն, և 'ի բաց մերժեալ զբանս ոսոխաց իւրոց, չինեալ հաստատեաց զկամարն զայն։ Շինեաց նաեւ զրկին անջրպետ 'ի մէջ Գողգոթայի տաճկաց և վերնատան մերոյ, ուր է այժմ սեղանատունն, թէպէտ Յոյնք բազում աշխատ եղեն խափանել զայն, այլ ոչ կարացին. 'ի Է Մուհարրէմ ամսոյ՝ ՌՄ (1591)։

Ի սմին ժամանակի վանք Ս. Յակոբայ անկեալ 'ի ներքոյ պարսից, և միաբանք նորին ատեամբ 'ի չքաւորութեան և յաղքատութեան. եւ 'ի նեղել յայլազգեաց՝ դիմեցին 'ի վանս Լատինաց, և առին 'ի նոցանէ պարտեաց դրամս, եղեալ 'ի գրաւ զանալի այրին Ծննդեան Քրիստոսի, և զկնի ժամանակաց իրրեւ հատուցին զպարտեացն եւ խնդրեցին զբանալին եղեալ 'ի գրաւ, նոքա զայլ և այլ բանս պատճառանաց յօդելով ոչ կամեցան տալ զայն. թէպէտեւ բազմօք աշխատեցան Հայք, սակայն Լատինք խորամանկութեամբ երկարէին զմիջոցն. և պատրաստական բանիւք ջանային հաւանեցուցանել զմիաս Հայոց, որպէս զի կարասցեն զրկիլ յիրաւանց յայրին Ծննդեան։ Այլ Հայք վաղ զգացեալ զմիաս նոցա, և չգտեալ հնարս յերուսաղէմ, մատուցին դիր աղաչանաց առ Աւետիս Ամէտ Ս. Զեղէպ կոչեցեալ. զրեցաւ հրովարտակ եւ պատեաւ առ դատաւորն Երուսաղէմի, առնուլ զբանալին 'ի ձեռաց Լատինաց եւ տալ Հայոց, այնպէս կատարեցաւ առ պնդիրն. զի մի վերստին սոխակացին Հայք բաղաք բառնալ 'ի Դուռն. եւ կրկին հրամանի կարօտ լինին. 'ի հաւանել հրովարտակին յերուսաղէմ, էառ դատաւորն զբանալին 'ի Լատինաց և յանձն արար 'ի ձեռս միաբանից Հայոց։

Աստուածատուր վարդապետ Թարգման վանաց Ս. Յա-

կոբայ՝ լինդրեաց հրաման 'ի դատաւորէն նորոգել զխաչատեալն որմն Ս. Փրկչի վանաց, իսկ դատաւորն յետ հարցանելոյ զորպէսն յայլազգեաց Սիոնի. հրաման՝ եւ նորոգեաց զայն, ՌՃԲ (1603)։ Զկնի երից ամաց նորոգեաց նաեւ զորմն Հրեշտակապետի վանաց, և զբանի մի խուցս։

Այլ մինչդեռ միաբանք Հայոց պարապեալ էին յայսպիսի իրս, եկն հրաման Արքունուստ առ դատաւորն Երուսաղէմի, գրել զվանօրայս ազգաց որոց տիրել կամէին Յոյնք՝ ՌՃԵ (1606)։ Եւ դատաւորն սկիզբն արար գրել զնոսա որք էին։

ՎԱՆՕՐԱՑՔ ՎՐՈՑ

1°. Խաչավանքն՝ արտաքոյ քաղաքին Երուսաղէմի յարեւմուտս 'ի մէջ ձորոյն։

2°. Ս. Եղիայի վանքն՝ 'ի վերայ ճանապարհին Բեթղեհէմի։

3°. Ս. Տիմիքրիայ վանքն՝ 'ի մէջ քաղաքին Երուսաղէմի։

4°. Խնձորի վանքն՝ 'ի մէջ քաղաքին, որ յատաջագոյն կոչէր տուն Հաննոնի։

5°. Զաքկայի վանքն Ս. Նիկողայոսի՝ 'ի մէջ քաղաքին։

6°. Ս. Յակոբայ վանքն՝ առ դրան տաճարի Ս. Յարութեան 'ի ներքոյ պանդոկատան։

ՎԱՆՕՐԱՑՔ ՍԵՐՎԻԱՅԻՈՑ

1°. վանք Ս. Սաբայի, արտաքոյ քաղաքին Երուսաղէմի։

2°. վանք Ս. Բասիլիոսի՝ 'ի մէջ քաղաքին։

3°. վանք Ս. Միքայելի՝ 'ի մէջ քաղաքին։

4°. վանք Ս. Յովհաննու, Ապէթուս կոչեցեալ՝ 'ի մէջ քաղաքին։

5°. վանք Ս. Յովհաննու՝ Թուասխս կոչեցեալ։

6°. վանք Ս. Գէորգայ՝ 'ի ներքին կողմն Լատին վանաց՝ 'ի մէջ քաղաքին։

7°. Քրիստոսի բանտն՝ հանդէպ դրան Սուրբ Յարութեան։

ՎԱՆՕՐԱՅՔ ԵԹՈՎՊԱՅԻՈՑ ՈՐՔ ԵՆ ՀԱՊՂԵՔ

1°. Վանք Հայր Աբրահամու՝ *ի գաւթի տաճարին Սուրբ Յարութեան*։

2°. Փոքր մատուռն յանուն Մարիամու Եգիպտացւոյ՝ անդ *ի գաւթին*։

3°. Վանք յանուն Ս. Թեկղի՝ *ի մէջ քաղաքին*։

4°. Վանք յանուն Սրբոյ Ղազարոսի, *Աղջկանց վանք եւս ասի*, *ի մէջ քաղաքին*։

ՎԱՆՕՐԱՅՔ ՅՈՒՆԱՑ

1°. Վանք Ս. Կոստանդիանոսի, *որ Պատրիարքի եւս կոչի*։

2°. Վանք Ս. Թէոդորոսի՝ *ի մէջ քաղաքին*։

3°. Վանք Ս. Կատարինեայ՝ *ի մէջ քաղաքին*։

4°. Վանք Ս. Գեորգեայ՝ *ի մէջ քաղաքին ի Թաղն Հայոց*։

5°. Վանք Ս. Գեորգեայ *Նոր՝ արտաքոյ քաղաքին*։

6°. Վանք Ս. Գեորգեայ՝ *արտաքոյ քաղաքին, ի կողմն արեւելեան Աղբեռնի*։

Ամենեքեան սոքա 23 *վանօրայք, որ ի սոյն Թուականի Յոյնք տիրել կամէին իրրեւ տեղիական կալուած համագգեաց և հետեւակաց իւրեանց, որ և տիրեցին իսկ ղնոսի ժամանակաց, զոր ունելիք զրել ի կարգին։ Իսկ գաւառն զայս ամենայն առեալ ի դրի առաքեաց ի Կոստանդինուպոլիս՝ ըստ հրամանի Արքային։*

Իսկ այլազգիք Երուսաղէմի, որք սովոր էին հանապազ դառնացուցանել զբրիստոնեայս · ոմանք ի նոցանէ մտեալ ի գաւիթ եկեղեցւոյն Համբարձման Քրիստոսի ի լեառն Ձիթհննաց, կամէին չինել տունս բնակութեան · խմացեալ զայն մերանցն Հայոց՝ ընդդէմ կացին նոցա, զի չէր օրէն չինել տուն բնակութեան, ցուցանելով նոցա զվաւերական գրեանս, որք հաստատէին լինիլ տեղւոյն այնորիկ տիրական ազգին Հայոց · որ եւ նորոգեալ էին հրամանաւ դատաւորին · բայց այլազգիք ոչ ինչ համարէին զբանս նոցա, ուստի հարկ եղեւ Հայոց օրինօք և դատաստանաւ վճարել զիրան, գնացին առ դատաւորն և առաջի արարեալ զամենայն գրեանս, յայտ արարին զանվայել գործս այլազգեաց, եւ ազաչեցին զնա՝ գրով ծանուցանել զիւրա Արքային · զի զոնէ հրամանաւ նորին բարձցին հակառակութիւնք այլազգեաց, և նորա ընթերցեալ զվաւերական գրեանս, գրեաց ի Դուռն։ Իսկ Սուլթան Ահմէտ հրամայեաց գրել հրովարտակ վասն այսը, կալ մնալ Հայոց ի տեղւոջ յայնմիկ · դադարիլ այլազգեաց ի տարաղարտ ընդդիմութենանց, եւ զանհնազանդս ծանուցանել ի Դուռն · ի \ ձէ մարտի ամսոյ, ١٠٣٢ (1613)։

Գրիգոր Պարոն Տէր՝ որդի Մարգարէ՝ զաւակ բարեպաշտ ծնողաց, էր ի գաւառէն Վարանդոյ · ի սահմանս գանձակայ, (կենձէ) · ծնեալ ի գիւղն սպիտակաչէն, մերձ ի վանս եղիչէի Առաքելոյն՝ յաշխարհն Աղվանից։ Ազգատոհմ սորա կոչին Վարդանանք · անուն հօրն Մարգարայ և մօրն Թուրմանտայ։ Սա ի տիս մանկութեան իւրոյ անկաւ ի Թոնիր, և յաշատիլ նորա անտի անվնաս · խոստացան ծնողք նորին նուիրել զնա յերուսաղէմ ի տաճար Տեառն · կալ ի սպաս ծառայութեան Աստուծոյ, որպէս երբեմն Սամուէլ։ Սակայն կանխահաս մահ ծնողացն թերի և անկատար թողին զվաճառ նոցին։ Իսկ մանուկն Գրիգոր լուեալ իսկ էր ի քահանայից զուխտ ծնողաց իւրոց, յորմէ առնջանօք վաւերացեալ եկն ընդ աղգակիցս իւր յերուսաղէմ · և յետ կատարելոյ զուխտն, դարձաւ անդրէն ընդ նոսա ի հայրենիս իւր։ Եւ ի հասանիլ նորա յարքունս՝ աղգականք եւ մերձաւորք նորին՝ կամեցան մեծանալ զնա ի կարգ աչխարհի · այլ նորա արհամարհեալ զխորհուրդս նոցա և զբանս · խոյս ետ անտի՝ և եկն դարձեալ յերուսաղէմ (1581)։ Եւ կացեալ անդ աւ ժամանակ մի՝ գնաց ի Հռում յուխտ ի շիրիմս Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, եւ անտի դարձ արար միւսանգամ յաշխարհն իւր · Եւ ապա գնացեալ յարեցաւ ի Պետրոս վարդապետ Կարկառեցի, որ եւ յետոյ նստաւ կաթուղիկոս առանձին ի Բերիա։ Եւ նորա տեսեալ զուշիմութիւն Գրիգորի, զհարտարութիւն ի բանս և զյաջողակութիւն ի գործս՝ կացոյց զնա ի վերայ մասնաւոր գործոց երուսաղէմի, առանց կոչելոյ զնա յասպիճան եկեղեցականութեան։

եւ ՚ի տիրն ժամանակի անկեալ էր վանքն Ս. Յակոբայ ՚ի ներքոյ բազմապումար տոկոսաւոր պարտուց ՚ի դառնութենէ ժամանակին. ստացուածք վանաց՝ անօթք և սպասք եկեղեցւոյ՝ եղեալ ՚ի գրաւ, Փոխ կալաւ Գրիգոր մեծաւ աչքառութեամբ և խոհեմութեամբ թեթեւացուցանել զգլուխս Աթոռոյն. և խոհական տնտեսութեամբ տնօրինել զամենայն ինչ։ Իրրեւ եհաս Պետրոս Կաթուղիկոս զանխոնջ ջանս եւ զհաւատարիմ աշխատութիւնս նորին. հաճութեամբ Դաւթի Արք եպիսկոպոսի եւ Պատրիարքի քաղաքին երուսաղէմի և պլխաւորացն Հայոց. ձեռնադրեաց զնա ՚ի սարկաւագ. և յանձն արարին նմա զամենայն հոգս աթոռոյն. եւ նորա յօժարութեամբ յանձն առեալ անճանձիր պարապէր ՚ի գործս աթոռոյն, տարեալ բազմագիւղի վշտաց և նեղութեանց։ Գրեաց թուղթս և կոնդակս յարեւելս յաշխարհն Հայոց, և յայլ գաւառս, առ եպիսկոպոսունս և վարդապետս եւ առ իշխանաւորս ազգին՝ և յորդորական բանիւք շարժեաց զմիաս նոցա ՚ի սէր տնօրինական Ս. Տեղեաց Քրիստոսի. եւ նոքա սկսան գալ բազմութեամբ յամենայն կողմանց՝ ւի արդեամբք. բերէզոյ նուէր զպէսպէս անօթս եկեղեցւոյ և զճեռագիր մատեանս, յորոց միջի նշանաւոր են ժողովուրդք Լեհաստանի նուիրօք և յիշատակօք. եւ Գրիգոր արդեամբք նոցին հատոյց զամենայն պարտս Աթոռոյն՝ եւ ազատեաց զգըբատան. և սկիզբն արար հինութեան և նորոգութեան վճակին Հայոց։

Ապա ձեռնադրեցին զնա վարդապետ (1610)։ Տեսեալ զլխաւորաց ազգին զվշտի և զհաւատարիմ ծառայութիւն ժրաջան մշակին՝ ՚ի պայծառութիւն Աթոռոյն երուսաղէմ՝ եառնն ձեռնադրել զնա Արք եպիսկոպոս և Պատրիարք երուսաղէմի, զվնի մահուան Դաւթի։ Զայս ամենայն զոր գրեցաք սակաւուք, գտանի ՚ի պատմութեան նորին Գրիգորի, գրեալ ՚ի մագաղաթի. և ՚ի յիշատակարանի ձեռագիր Ցայսմաւուրի՝ Գրիգորի Ծերենց. գրեալ (1638) նորին հրամանաւ։ Իսկ զայլ գործս Գրիգորի, քաղեմք ՚ի գաւառատանական գրոց։

Ոմանք յայլազգեաց երուսաղէմի՝ թշնամացեալ ընդ վիճաբանս Հայոց. ՚ի գիշերի այրեցին հրով զարտաքին դուռն

Ս. Փրկչի վանաց՝ եւ զդուռն եկեղեցւոյն. և ՚ի գիշերին յայնմիկ՝ յետ գաւառելոյ զկարասիս վանաց, կողոպտեցին նաեւ զեկեղեցին. յաւիշտակեալ զեկեղեցական սպասս, և ոչ թողին անդ և ոչ մի ինչ։ Լուեալ Գրիգորի Պատրիարքի, չոքաւ անդ և եառս զեղեալսն. եկն և գաւառս քաղաքին և եառս զայրեալ դրունսն. մի ելանէր առակս ին ծուխ ՚ի խանձողաց, եւ զվանքն մերկացեալ. եհարց զՊրիգոր և ասէ՝ ունի՞ս յայսմ թշնամի զոք. և կամ յո՞ր վերայ հաստատեալ ես զկարծիս քո. և նա ասէ՝ թշնամացեալ են ինձ Շէյխ Սալէհ Տէվէնի եւ Շէյխ Թաճ էտտին՝ բնակիչք Սիոնի. յազգէ պարտուց, որոց վճարումն եղեւ ըստ մտաց արքունի հրովարտակին։ Սակայն՝ գաւառսն չկարացեալ ասել եւ կամ առնել ինչ, գարձաւ ՚ի տեղի իւր. միայն զեղեալսն հարեալ ՚ի դրի, եւ ՚ի ձեռս Գրիգորի. ՚ի ՀՓ Բ՚ելիւ էվվել ամոյ՝ ՌՃՃ (1613)։ Իսկ Շէյխ Սալէհ չառեալ յագուրդ յատարկ եկեղեցւոյն, ձեռն արկ յայլ լման գործ ինատակար ընդդէմ քրիստոնէից. Զի նախնիք սորա ընկալեալ էին զվերակացութիւն կալուածոց Սիւլէյմանայ արքային, վարել զայն յորդւոց յորդի. Սա գնացեալ առ գաւառսն ամբաստան եղեւ զքրիստոնէից. և խնդրէր կոչել յատեան զԱստուածատուր վարդապետ զվերատեսուչ վանաց Ս. Փրկչի. զիմոխանորդս Լատինաց՝ Ցունաց՝ Գպտից և Ասորւոց. ասէ առ, բովանդակ արտն և պարտէզքն՝ արտաքոյ պարսպի քաղաքին ՚ի շրջապատս և պարտէզքն՝ արտաքոյ պարսպի քաղաքին ՚ի շրջապատս Սիոնի. յարակից չիրմի Մարգարէին Դաւթի. և այլ կալուածք՝ առանձեալ են Շէյխ Ահմէտ Տէվէնեցոյ յարքայէն Սիւլէյմանայ. մին՝ ՚ի բազմաց անտի՝ է արտն՝ յոր Թաղեն քրիստոնեայք զվեռեալս իւրեանց, ահաւասիկ տահմանք նորին. ՚ի հարաւոյ՝ այգի Գաստալոյ. յարեւելից՝ այգի Սալէհին մինչ յորմն Ս. Փրկչի. ՚ի հիւսիսոյ Զիթհննեաց պարտէզն Հայոց, յարեւմտից՝ պարտէզն՝ ուր է դերեզմանն Բագոսի. մինչ ՚ի բլուրն՝ որ հայի ՚ի վերայ աւազանին Սուլթանին. (զայս պարտէզ գնեաց Յակոբ Զէլէպի Թարգմանն Հայոց, եւ խաւնեաց ՚ի գերեզմանատունն)։ տես ՚ի գաւառատանական գիրս, ՌՃՄԷ (1656)։ Ապա մատոյց զգիր գաւառսրին, զոր առեալ էին ՚ի ժամանել Արքունի հրովարտակին. յորում հրամայէր քնն-

նել և արձանագրել զամենայն արտօրայս և զպարտէզս, մնեալ 'ի տուման կալուածոց Մարգարէին Դաւթի, 'ի խնդրոյ Շէյխ Ահմէտ Տէհէնիայ և սերնդոց նորին։ կոչեալ էր յայնժամ դատաւորն զվճռատորս քրիստոնէից, որք էին Անդրէաս Պատրիարք Հայոց, եագուպ որդի Հաննայի վոխանորդ և թարգման Լատինաց, Խալիլ վոխանորդ Յունաց, Գպիթիք և Ասորիք · սոքա ամենեքեան թոյատովանեալ էին յայնժամ առաջի դատաւորին, որպէս յայտ առնէ մուրհակն գրեալ 'ի թուին ՋՂԷ (1556)։ Ցետ այսր ամենայնի թախանձէր Շէյխ Սալէհ զդատաւորն պատուիրել քրիստոնէից կարճել զձեռս իւրեանց յագարակէն յայնմանէ։

Ի յանդիման լինել վճռատորացն քրիստոնէից յատենի անդ, ետուն պատասխանի, զբովանդակ ագարակն զայն, յոր թաղեն Քրիստոնեայք զննջեցեալսն, ժառանգեալ են նախ քան զտիրել Օսմանցւոց, և 'ի ժամանակին յայնմիկ զմի մասն նորին գնեալ է Աստուածատուր Մելիքի, և կտակեալ թաղել զմեռեալս գերեալ քրիստոնէից, և զայլս յեկաց և 'ի բնակաց երուսաղէմի · գրեալ յետկար 'ի դատարանի, յոր նշանակեալ են ահմանք նորին։ Ցետ այսց բանից, ճայն բարձին բազմութիւնք քրիստոնէից ժողովելոց անդր և ասեն, անտեղի և անհիմն է ամբաստանութիւն դորա, չունի ազդել 'ի վերայ մեր և ոչ 'ի վերայ այլոց ուրուք, և եթէ վստահացեալ է դորա յարձանագրութիւն Արքունի տուման, անհիմն է և նա · և խնդրեցին ցուցանել զայն։

Իսկ Շէյխ Սալէհ՝ թէպէտ յայտ արար թէ՝ չունի զայնպիսի ինչ, սակայն եւ ոչ իսկ կամէր ունկն դնել բանից քրիստոնէից, և խնդրեաց 'ի նոցանէ զմուրհակն, և նոքա մատուցին չընթերցումն, ուր ասէ · « Վկայեմք, Աստուածատուր որդի Սէֆէրի որդւոյ Աստուածատրոյ՝ գնեաց զմի մասն ագարակին այնորիկ, և սահմանքն բացորոշ, և 'ի յետուստ կողմանէ գրեալ կտակ նորին, վաւերացեալ 'ի դատաւորաց և յայլազգեաց, և 'ի վերջոյ ներկայ դատաւորէն։ Որոնեցին նաեւ 'ի տուման կայսերական, եւ ոչ դատ 'ի նմա ագարակին այն։ Շէյխ Սալէհ առաջի արար զվճիռ մեծի գենովեային, յորում ասէր · բարւոք է վարել ըստ մտաց արքունի տուման · ապա մատոյց զհրովարտակն, յոր գրեալ էր, անկարելի է ումեք հակառակ կալ քրիստոնէից՝ սակս գերեզմանատանց նոցին հակառակ օրինաց, յետ շէմսդիլ էվվէլ ամսոյ՝ ՈՀԲ (1613)։ Ի դատաստանին յայսմիկ բարւոք 'ի միտ առ դատաւորն եւ ծանեաւ պարզապէս զիրաւունս քրիստոնէից, եւ ագարակն սեփհական գերեզմանատուն նոցին, ապա ասէ՝ «Շէյխ Սալէհ, 'ի գիրս դատարանի և 'ի տուման արքունի՝ զոր մատուցեր, չերեւին իրաւունք քո · և չկնի յիշատակութիւն զագարակէն զայնմանէ։ Իսկ վկայութիւնք ներկայ և բացակայ քրիստոնէից յայտ առնեն զշնչմարտութիւն իւրեն, ուստի չէ օրէն առնուլ զիրաւունս նոցա և տալ ձեզ, և մերժեաց զնա յատենէ իւրմէ։ Եւ վերստին գրով հաստատեաց զգերեզմանատունն 'ի ժառանգութիւն քրիստոնէից, և ունայնացոյց զվէճս և զհակառակութիւնս Շէյխ Սալէհի · 'ի \ Բէհէլ ամսոյ, ՈՀԳ (1614)։ Այլազգիք Սիոնի տեսեալ թէ չշահեցան ինչ 'ի դատաստանէ մատի, մանաւանդ թէ անարգեցան 'ի դատաւորէն, կամեցան թափել զցաւսումն բարկութեան իւրեանց 'ի վերայ Հայոց։ Քանզի պատրանօք առեալ հրովարտակ արքունուստ · բռնացան 'ի վերայ գերեզմանատան նոցին, կից Ս. Փրկչի վանաց, որով նեղէին եւ չարչարէին զԴրիդոր Պատրիարքն, մինչեւ անճարացեալ նորա · յայտ արար ըզտառապանս իւր 'ի Դուռն Արքունի, զի գերեզմանատուն նոցա, զոր պահանջէին բնակիչք Սիոնի, էր ընդ ժառանգն, զոր պահպանէին բնակիչք Սիոնի, էր ընդ ժառանգութեամբ Հայոց, հաստատեալ վաւերական գրովք, յորս ակնարկեալ էր դատաւոր քաղաքին։ Սակայն որդիք Շէյխ Ահմէտ Տէհէնեայ ոչ ինչ համարեալ զայնս, հնարիւք հանեալ էին հրովարտակ, թէ տեղին այն իցէ 'ի սահմանս կալուածոց հաւուն իւրեանց։ Թէպէտեւ յառաջադոյն առեալ էին Հայք հրովարտակ վասն այսր · յորում պատուիրէր, թէ մինչչեւ ծանուցեալ իցէ դատաւորն զնդիրն 'ի Դուռն, չհակառակիլ ումեք քրիստոնէից եւ յարուցանել վէճս 'ի վերայ նոցա։ Սակայն անստատեալ սոցա հրամանին, պէսպէս պատճառանօք յարուցանէին վէճս, արկանել զնոսա 'ի տուգանս, Տաղտկացեալ վիրաւանց 'ի զրկանաց եւ 'ի նեղութենանց աստի, սկսան փախչիլ և թաղչիլ այսր և անդր։ Ցետ գրելոյ Դրիդորի զայս ամենայն անցս 'ի Դու-

ոքն, խնդրեաց բառնալ զնեզուքիւնն նոցին, և չտալ հրովարտակ ի ձեռս այլազգեաց, մինչչեւ ծանուցեալ իցէ դատաւորին զինդիր նոցա, և խափանել զառաջին հրովարտակն, զոր առեալ էին։ Գրեցաւ գարձեալ հրովարտակ։ քննել գատաւորին զդերեզմանատունն համաձայն վաւերական թղթոցն Հայոց և մնալ ի ժառանգութեան նոցին, մերժել զայլազգիան և խափանել զվճիռս նոցա, զի մի գործեսցեն ընդդէմ օրինաց, և մի հարկ լիցի կրկին հրամանի։ ի \ Շապատն ամսոյ՝ \ՈՀԳ (1614)։

Այն ինչ գադարեալ համարէին ազմուկ խռովութեան այլազգեաց՝ սակս դերեզմանատան, բացաւ դուռն այլ իմն ինքնաւրէն, զի այլազգիք Սիոնի ի գիշերի ծակեցին զորմն Ս։ Փրկչի վանից եւ ընկեցին զմեծամեծ քարինս ի պատրըսպէ նորին, եւ կամէին կործանել զնա։ ի ձայնէ և ի դնդմանէ գործեացն քանդման, լուեալ միաբանացն, աղաղակեցին հասանիլ յօգնութիւն, և նոցա թողեալ զգործն վախեան անտի։ եւ ի լուսանալ առաւօտուն՝ գնաց անդր Գրիգոր Պարոն Տէր, եկին եւ գատաւոր քաղաքին ընդ մեծամեծս այլազգեաց, և քաղաքապետն Մօշխասպար Աղա, և ի քննութեան սահու ասելն զի քակեալ էր ծեփքն հարաւային որմոյն և ծակոտեալ յարեւելից յարեւմուտս 16 կանգուն, և անկեալ քարինք մեծամեծք։ եհարց գատաւորն զԳրիգոր զպատճառն, եւ թէ ուրնի կարծիս ինչ ի վերայ ուրուք, և նա ասէ։ բայ ի բնակչաց Սիոնի չունիմ կարծիս ի վերայ այլոյ ուրուք, զի յառաջմանէ անտի քննմութեամբ են ընդ մեզ, և մատոյց զհրովարտակն, որ վասն կուսոյ և վնասուց նոցին, (1610)։ և զայլ հրովարտակ վասն սոյն խնդրոյ (1614)։ եհարց գատաւորն և ցայլազգիս Սիոնի, թէ ո՛վ արդեօք արար զվնասն։ և նոքա իրրեւ յանգաւս յուրաստ եղեն։ Ապա առեալ զքաղաքապետն գնաց առ զօրագլուխ զօրուն, որ նստէր յայնժամ յերուսաղէմ, և առաջի նորա հարցանել զվնասուցեալն վանից, և իրրեւ ոչ կարացին գտանել զոք, հրաման ետուն Գրիգորի չինել և նորոգել զպարիսպն և զայլ տեղիս վանից, դնել դուռն երկաթի, զի մի այրեցին զայն աւազակք։ և փոխել զբարաւորս նորին։ և նորա ձեռն ի գործ արկեալ չինեաց զայնս և նորոգեալ ամրացոյց զա-

մենայն տեղիս, \ՈՀԳ (1614)։ Նորոգեաց նաեւ զվանս Ս։ Հրեշտակապետի, կրեալ բազում չարչարանս եւ նեզութիւնս, որպէս ունիմք պատմել ի տորիս։

Ձեռն նորոգութեանցս այսոցիկ, և անցանելոյ միոյ տարւոյ։ առաքեաց կուսակալն Դամասկոսի զմին ի պաշտօնէից իւրոց, որոյ անունն էր էյիւպ Աղա, գրեալ գիր առ գատաւորն երուսաղէմի, յորում ասէր։ եհաս յականջս իմ, թէ Աստուածատուր ումն անուն ի քրիստոնէից չինեալ իցէ զեկեղեցի արտաքոյ քաղաքին երուսաղէմի, մերձ ի չիրիմն Մարգարէին Դաւթի։ և ապատաւորք նորին նեզեալ են յոյժ անտի։ զեկեղին զայն առեալ ի քննութիւն ստուգութեամբ ծանուցես ինձ։ Ձեռն ընթեռնուլոյ գատաւորին զգիրն, կոչեաց զԱստուածատուր վարդապետ ի ժողովն, և եհարց ցնա առաջի պաշտօնէին։ Թէ չինեալ իցէ զեկեղեցի եւ բարձրացուցեալ զպարիսպս նորա քան զչինուածս մարգարէին Դաւթի։ Եւ պատասխանի Աստուածատուր, որ թարգման էր յայնժամ Ս։ Սիոնայն, Թէ չեմք արարեալ զայնպիսի իրս։ Այլ միայն Գրիգոր որդի Մարգարի Պատրիարքն Հայոց, հրաման առ նորոգել զվանս Ս։ Փրկչի։ կոչեցին անդ և զԳրիգոր՝ և նա առաջի ամենեցուն արար պատասխանի, վանք Ս։ Փրկչի ի վաղ ժամանակաց անտի է ի ձեռս Հայոց, խափտեալ և աւերեալ էր նա, եւ ինձ հրաման նախկին գատաւորն Երուսաղէմի Ալիմ էֆէնտի չինել եւ նորոգել զայն ըստ առաջին ձեւոյն, որպէս հրամայեալն էր հրովարտակն Արքունի և վճիռ մեծի դենպետին։ Եւ իրրեւ աւարտեցաւ չինուածն, եւ գատաւորն անձամբ ի քննութիւն։ և գտեալ զամենայն ըստ հրամանի իւրոյ, եւ ինձ մուրհակ անդորրութեան կնքով իւրով։ Ընթերցան զայն՝ և զհրովարտակն Արքային՝ և զվճիռ դենպետին։ Եկին անդ և ումանք յայլազգեաց Սիոնի և երուսաղէմ՝ և պատմեցին առաջի նոցա՝ թէ երկաթի դուռն վանից՝ յառաջագոյն էր ի կողմն հարաւոյ, և քարուկիր պատսպարանն շուրջանակի՝ քակեալ էր ի 20 ամաց հետէ։ և Գրիգոր հրամանաւ գատաւորին չինեալ նորոգեաց եւ եդ դուռն երկաթի՝ այլովքն հանդերձ։ Ձեռն այսր ամենայնի՝ խնդրեաց էյուպ աղա ինքնին երթալ ի քննութիւն վանից, առեալ զոմանս ի գա-

տաւորչն և զճարտարապետ քաղաքին. և եղեւ 'ի հատանել նոցա անդ՝ գտին գրուա վանաց ծերեակ ներքոյ եւ արտաքոյ և զպատասպարանս 'ի վերոյ պարսպին քարուկիւր. եհարց Էյուպ աղա ցճարտարապետն թէ՝ գտանի՞ աւելի ինչ քան զնախկին չինուածն, և նա ասէ՝ ոչ, եհարց նա և ցայլազգիսն Սիոնի. զնոյն պատասխանիս՝ ետուն և նոքա. ապա յաւելին ասել՝ թէ ոչ երբէք միաս հասեալ է մեզ 'ի քրիստոնէից՝ որք բնակին 'ի վանադ, և ոչ 'ի մէնջ առ նոսա. Ցետ այսր քննութեան՝ զարձան առ դատաւորն և պատմեցին նմա, և նորա 'ի գրի հարեալ զամենայն ինչ առաքեաց առ կուսակալն 'ի ձեռն Էյուպ աղայի, ՈՀԷ (1615). Ցետ այսր երկար դատաստանաց եւ քննութեանց զարձեալ ոչ կարացին զերծանիլ Հայք 'ի ձեռաց այլազգեաց. ուստի հարկ եղեւ նոցա առնել զգեաստուրն ծանուցանել զվճռեալսն 'ի Դուռն. վասն Սուրբ Փրկչի և Հրեշտակապետի վանօրէից, և խնդրել հրովարտակ յԱրքայէ. վի թէպէտև կարացին զերծանիլ այնու 'ի բռնութեանց այլազգեաց. և նա կատարեաց զխնդիրս նոցա, ՈՀԵ (1615).

Գ Լ Ո Ւ Խ Ս.

Գնացեալ Հաճարձման Սկեղեցւոյն. Վճռ Լատինաց ընդ Հայոց, առնս այրին Ծննդեան Քրիստոսի. եւ Պատանատուղսն, Ամբաստանութիւնք նոցին 'ի Դուռն ազգայն, և գարձեալ խռովութիւն առնս այրին Ծննդեան, և մերժումն Հայոց յայրէ անտի.

Ա 'ի սմին յայլազգեաց երուսաղէմ՝ 'ի սերնդոց Աբդ կոչեցեալ Շէյխին, 'ի կենդանութեան իւր 'ի ներքոյ գմբեթի Համբարձման ոտնատեղւոյն Քրիստոսի. լուեալ զայս Գրիգորի պատրիարքի և վիրաւորացն Հայոց, 'ի բազում աչխատս եղեն՝ և չանացին խափանել զնա 'ի խորհրդոց իւրոց, յորմէ կրեցին վիշտս և յանդիմեցան վնասուց. սակայն չ'չահեցան ինչ, և դատաւորն անգամ չկարաց դարձուցանել զնա 'ի խորհրդոց իւրոց. Ուստի հարկ եղեւ Գրիգորի ծանուցանել զյանդգնութիւն առնն 'ի Դուռն Արքայի, և զգիրն ամբաստանութեան առաքեաց 'ի ձեռն պատգամաւորի 'ի Կոստանդնուպոլիս. Գրեցաւ հրովարտակ վասն այսր, և պատուէր առ դատաւորն և առ քաղաքական երուսաղէմի. ընթեռնուլ զվաւերական գլուխս Հայոց և օրինօք Շէյխի քննել զնդիրն, և զսահմանադրութեան նոցին խափանել զխորհուրդս Շէյխ Մէհէմմէտ Ալիմեայ և զայլոց, և չբռնանալ 'ի վերայ Հայոց հակառակ օրինաց և կայսերական հրամանին, և մի' ուրուք մատուցանել կեղծ և սուտ վկայիցն այլազգեաց, այլ արդարութեամբ լուծանել զնդիրն, եւ ապա ծանուցանել 'ի Դուռն.

Ի հասանիլ հրովարտակին թէպէտև մերժեցաւ այլազգին, և խափանեցաւ գործ և խորհուրդ նորին, սակայն Հայք հանդիպեցան ծախուց և վնասուց՝ թող զչխատութիւնն, ՈՀԷ (1617). Իսկ Գրիգոր Պատրիարք միշտ զեռ պատաղեալ էր 'ի զբաղանս առքնէր լուծանել զվէճս և զդատաստանս, որ ընդ այլազգիս, Լատին կղերք ժամ գիպող հանարեցան ինքեանք եւս լինել խոչ ազգին, եւ յաւուր միում արդելին զմիաբանս Հայոց յայրէն Ծննդեան Քրիստոսի, բարձին անտի զկանթեղս և զչատանակս՝ եւ խափանեցին զպատարագելն եւ զհոգեւոր պաշտօնս նոցա, մինչ զնկարկելն եւս սարկաւագին. Թէպէտև բազում անգամ աղաչէր Գրիգոր Պարոն Տէր քաղցր եւ սղոք բանիւք թախանձէր զնոսա. չլինել առիթ կռուտեան իրաւանց աղգին. այլ չեղեւ հնար նմա ցածուցանել զկրօնամոլ բարկութիւնս նոցին. այլ օր քան զօր բռնացեալ 'ի վերայ նորա հասուցանէին նմա չարիս. հարստահարէին և կռվիլին զմիաբանան անարգանօք 'ի մտանելն նոցա յայրն Ծննդեան. Իբրեւ ետես Գրիգոր թէ չէք հնար միաբանիլ ընդ Լատինս, և յանդորրու պահել զիրաւունս իւր. հարկադրեցաւ դիմել 'ի Դուռն Արքունի, և ծանուցանել ընդ բռնութիւնս Լատինաց եւ զղրկանս ազգին իւրոյ. վասն բարի թղթովք հաստատեալ զսովհականութիւնն. Զայս ամենայն զգացուցին մեծամեծք դրանն առ Արքայն Զեվդէ կոչեցեալ՝ և հրամանաւ նորին զրեցաւ հրովարտակ (Խաթ-

թի Շէրիֆ) առ գատաւորն Երուսաղէմի, գաղարիլ Լատինաց ի բռնութենէ. հաստատուիլ զիրաւունս Հայոց. կախել վերատին զկանթեղս և դնել զաշտանակս, և կատարել զհոգեւոր պաշտօնս ըստ սովորութեան, որպէս յայտ առնեն Սրբոյն հրովարտակք. ի ՝ի Մուհարրէմ, ՝ի (1615)։ Ի ժամանել հրովարտակին եւ յընթեռնուլ զայն ի գատարանի, լռեցին Լատինք առ ժամն ի հակառակութենէ, եւ թոյլ ետուն Հայոց կատարել զպաշտօնս իւրեանց։ Սակայն յարուցին զայլ ինն վէճ ի տաճարին Ս. Յարութեան։ Բանզի եղեալ էին ի մոլ միայն ինքեանց սեփհականել զՊատանատեղին Քրիստոսի. և բռնացեալ ի վերայ Հայոց և Ցունաց՝ ոչ տային թոյլ լուացանել զմոմեղէնս աշտանակաց՝ որ անդ. և զի կարի դժուարին էր երկուց ազգաց ի միում նոտպի կորուսանել զիրաւունս իւրեանց. ուստի ոչ ետուն տեղի բանիւ Լատինաց, այլ վարէին ըստ առաջին սովորութեան։ Իրրեւ տեսին Լատինք թէ՝ ոչ կարացին վանել զընդդիմութիւնս Հայոց և Ցունաց. ազդարարին հիւպատոսին Գաղղիոյ, որ նստէր յայնժամ ի Բերիա. և նա գրեալ ծանոյց ի Դուռն, թէ Պատանատեղին օրինաւոր մուրհակօք սեփհական լեալ իցէ Լատինաց. և նոցա է լուացանել զմոմեղէնս աշտանակաց յաւուր Ուրբաթու ըստ նախնի սովորութեան. և խնդրեաց բառնալ զընդդիմութիւնս այնց քրիստոնէից։ Գրեցաւ հրովարտակ վասն այսր. և յետ ոչ բազում աւուրց եհաս յերուսաղէմ. առեալ զայն փոխանորդին Լատինաց՝ չուքաս ի գատարան, և խնդրեաց ի գատաւորէն կոչել զգլխաւորս քրիստոնէից. և առաջի բազմութեան ընթեռնուլ զհրովարտակն։ Եւ յետ կատարելոյ զամենայնն, եհարց գատաւորն ցժողովուրդ բազմութիւնն, և ասէ՝ արդարեւ տեղին այն միայն ազգին Լատինաց՞ իցէ սեփհական. և նոքա ետուն պատասխանի, և ոչ միոյ ազգի. այլ ամենեցուն հաւասար և ընկերութեամբ է տեղին այն, որպիսիք են Հայք, Ցունք, Լատինք, Վիրք, Գաղթիք և այլք։ Ապա խնդրեաց գատաւորն ի փոխանորդէն Լատինաց բերել զայլ վաւերական գրեանս վասն այնր, որովք խոստանային լինել ժառանգորդ տեղւոյն։ Սակայն փոխանորդն չունէր զայլ գիրս, և ոչ կարաց իսկ մատուցանել, ուստի սկսաւ զայլ և այլ անուն պատճառանս յո-

դել. երբեմն թէ՝ գրեանքն ի Բերիայ առ հիւպատոսն էն, եւ երբեմն զայլ ինչ. իմացեալ գատաւորին զմիաս նորա ի պատ ի պատ բանիցն, և զանտեղի ամբաստանութիւնս նոցին ի Դուռն՝ հրամայեաց ելանել յատենէ իւրմէ, Հայոց եւ Ցունաց տալ զիրաւունս ըստ առաջին սովորութեան իւրեանց։

Իսկ Մարիոս Լատին այլ ինն եղանակաւ յառաջ բերէ զայս խնդիր ի Պատմութեան Ս. Երկրին, ուր ասէ՝ «Եպիսկոպոսն Հայոց յարոյց վէճս վասն աշտանակաց Պատանատեղւոյն, զի Լատինք արգելին զնոսա լուացանել զմոմեղէնս նոցին. թէպէտ բազոք կալան իրրեւ տէր իրաւանց. և ստացան Հայք զտեղին»։ Եւ յետ ոչ բազում ժամանակի՝ Ցոյնք միջնորդութեամբ գատաւորաց համարձակ եդին անդ զաշտանակս, և մնաց Լատինաց մի միայն լապտեր։

Թէպէտ և մերժեցան Լատինք յերեսաց Դատաւորին, և առ ոչ ինչ համարեցան ամբաստանութիւնք նոցին, այլ ոչ երբէք յետս կացին ի խորհրդոց իւրեանց, զի անդադար կապ և կռիւ էր ի Տաճարին Ս. Յարութեան, ի մէջ Հայ եւ Լատին վիճաբանաց, զի գիծեալ ինն էին ի բանից Գրիգորի Պատրիարքի, և խորհէին չարիս հասուցանել նմա, նեղել և տագնապել զնա, նմին իրի և յայտնապէս բազոք կալան առ գլխաւորս ազգին Հայոց ի Կոստանդինուպոլիս, բառնալ զայն յերուսաղէմ և զայլ ոք դնել ի տեղի նորա, և զայլ յայտնի և գաղտնի բանս ստգտանոյց խօսէին զնմանէ, զորս չհամարիմք արժանի յիշատակելոյ ասս։ Իսկ Գրիգոր Պատրն Տէր Նեղեալ ի հալածանաց առաւ, բազում անգամ բազոք կալաւ ի Դուռն. նոյնպէս և գլխաւորք ազգին ի թագաւորեալ քաղաքի անդ, յայտնապէս խօսէին և ամբաստան լինէին զվատինաց. թէ ընդէ՞ր նեղէն և տագնապէն զՊատրիարքն եւ զմիաբանութիւնն այնպիսի յանդգնութեամբ, յեղծումն և յապականութիւն լինին՝ եւ առիթ կորստեան դարաւոր իրաւանց ընդ հանուր ազգին։ Եւ գուռն Օսմանեան ոչ անտես առնէր զխնդիրս նոցա, որպէս յայլ ամենայն դէպս, նոյնպէս և յայսգս խնդրոյս այսմիկ գրեցաւ հրովարտակ առանձին պրեռնութիւնս Լատինաց՝ բառնալ ի միջոյ զհառութիւնան։ Եւ վասն Պատանատեղւոյն պատուիրէր՝ վարել

իւրաքանչիւր ազգ ըստ վաղէմի սովորութեան իւրոյ, լուացանել զկանթեղս և զաշտանակս ի սահմանեալ աւուրս, եւ չզնել ունկն բանից Լատինաց, զի չէր տուեալ նոցա հրովարտակ վասն այնր, և ոչ դառաւ ի Կայսերական գիւանս արձանագրութիւն նորին։ Սակայն Լատինք պնդեալ կային ի բանս իւրեանց, և ոչ կամէին անսալ հրամանին. զի ի գալստեան իւրաքանչիւր հրովարտակի՝ լինէր ատեան մեծ ի դատարանի, և լինէր պատուէր չկազել եւ չհակառակիլ ընդ միմեանս, սակայն չեղեւ հնար, զի ի չրջանի միոյ տարւոյ հինգ թիւ հրովարտակաց մինչ ցհինգ, ղորս եառ բերել Գրիգոր Պատրիարք, թող զայլ բազմաթիւ գրեանս դատարանի, ղորս առնոյր յիւրաքանչիւր դատի։ Հուսկ ուրեմն ի վերայ այսքան գրեանց և դատաստանաց մեզմացաւ փոքր ինչ ընդդիմութիւն Լատինաց, զի տատակագոյնս բորբոքեցաւ զկնի աւուրց։ Այլ յերկարել այսքան խառվռութեանց եւ դատաստանաց հանդիպեցաւ Գրիգոր Պատրիարք մեծամեծ ծախուց և տուգանաց, թող զտաւապանս եւ զնեղութիւնս, զոր կրեաց անճամբ անձին. ՈՀՇ (1617)։

Իսկ Լատինք խորհեցան զայլ իմն չարիս հասուցանել ազգին։ Զի ի նմին ամի մատուցին գիր ամբաստանութեան առ Աբքայ, և չարախօս եղեն զԳրիգոր Պատրիարքէն եւ զմիաբանութենէ նորին և զազգէն Հայոց, թէ ոչ են արժանի նոքա մնալ յերուսաղէմ, այլ տալ հրովարտակ եւ ատիկան հանել զնոսա յերուսաղէմ և աքսորել ի կղզին Կիպրոսի։ Իսկ Սուլթան Օսման Բ. Նախ դրեալ եհարց ցդատաւորն եւ ցայլազգիս երուսաղէմի՝ զորպիսութենէ Հայոց եղելոց անդր, եւ նոցա միաբանեալ ընդ իւրեանս նաեւ զքրիստոնեայս քաղաքին՝ գրեցին պատասխանի՝ թէ Հայք ոչ ունէք տուեալ են ատա վնաս ինչ, եւ կան ի խաղաղութեան և ի չափաւորութեան իւրեանց. և չահս բազումս մատուցանեն քաղաքիս՝ ուխտաւորք նոցին, եւ յաւելուն զարգիւնս կալուածոց Սիւլէյմանայ արքային։ Բայց Լատինք հակառակ կացեալ, խոստանէր կամին զոսվորութիւնս նոցա չլուացանել զկանթեղս զաշտանակս, եւ կատարել զպաշտօնս իւրեանց ի Ս. տեղիս։ Յետ հասանելոյ հանրագրութեանս այսորիկ ի Դուռն, գրեցաւ հրո-

վարտակ, և պատուէր առ քաղաքապետն և առ դատաւորն Երուսաղէմի, վախճանտալ բռնութեանց Լատինաց, պաշտպան կալ Պատրիարքին և միաբանից և ազգին Հայոց, հաստատուն պահել զնոսա ի սեփհականութեան և ի սովորութեան իւրեանց, ՈՀՈ (1618)։

Ի սմին ժամանակի Գրիգոր Պարոն Տէր խնդրեաց հրաման ի դատաւորէն Երուսաղէմի ի ձեռն Աստուածատուր Թարգմանին իւրոյ՝ սակս նորոգութեան որմոց և սենեկաց Ս. Փրկչի, եւ յետ քննութեան ի ձեռն ճարտարապետաց քաղաքին՝ և այլոց, հրամայեաց չինել, և նորա սկիզբն առնել նորոգեաց պարսպաց։ ՈՀՈ (1618)։

Լատին կղերք ի լուծութեան իւրեանց, երկնչէին չարիս ի միտս, որ և ծնան իսկ յետ ոչ բազում աւուրց, և յարուցին վէմս և հակառակութիւնս անդադրմանելիս, զի իբրեւ տեսին թէ՝ ոչ կարացին յաղթահարել զՀայս ի խնդիրըս Պատանատեղւոյն, և ի սոյն միջոցի կամեցան լուծանել զվրէժ նորին, և խոստ նկուն առնել զնոսա։ Հայք կատարէին զհոգեւոր պաշտօնս իւրեանց յայրին Ծննդեան Քրիստոսի, ի տեղին Մուր կոչեցեալ, Լատինք փորձ փորձեցին վանել անտի զՀայս, այլ ոչ կարացին հասանիլ ցանկութեան իւրեանց, որպէս գրեցաք յառաջագոյն, և ի սոյն աւուրս դարձեալ նորոգեցին զվէմն, և յայս նըւագ խոստ արգելին զնոսա անտի՝ խափանելով նաեւ ըզպատարագն։ Լուեալ զայս Գրիգորի՝ չոքաւ առ դատաւորն՝ եւ խնդրեաց ի նմանէ կոչել զվոխանորդն Լատինաց, որում անունն էր Պաթիշթայ, և առաջի նորա ասէ՝ Հայք սովորութիւն ունէին ի վաղ ժամանակաց անտի մտանել յեկեղեցին Բեթղեհէմի, կատարել զհոգեւոր պաշտօնս՝ աղօթել եւ պատարագել յԱյրին Ծննդեան, լուացանել կանթեղս եւ զպաշտանակս՝ այլովքն հանդերձ։ Իսկ այժմ վոխանորդն Լատինաց արգել զայս ամենայն։ Եւ ի հարցանել դատաւորին ցվոխանորդն Լատինաց, առար նա պատասխանի՝ և ասէ, ոչ արգելումք զՀայս յերկրպագելոյ և ուխտս մատուցանելոյ ի տեղւոջ յայնմիկ, այլ արգելումք զպատարագն և զհոգեւոր պաշտօնս նոցա, զի փականք Այրին Ծննդեան են ի ձեռս Լատինաց, եւ նոքա լուացանեն զկանթեղս. բայց յերկուց կանթեղացն

Հայոց՝ զոր ինքեանք լուցանեն՝ այլ Պատարագի և հոգեւոր պաշտօնի ոչ ունին սովորութիւն։ Իսկ Գրիգոր յաւենայնի մերժէր զանոնցի բանս նորա, և ոչ կամէր յաւիրշատակել իրաւանց իւրոց։ Դատաւորն խնդրեաց ՚ի Գրիգոր Պատրիարքէ վկայութիւք հաստատել զխնդիրն՝ զոր պահանջէր ՚ի Լատինաց։ և նա ածեալ կացոյց առաջի նորա զայլազգիս երուսաղէմի և Բեթղեհէմի։ Եւ նոքա ետուն բարւոք վկայութիւն թէ՝ Հայք կատարէին զպաշտօնս և զպատարագս իբրեանց յայրին Ննդեան, և ոչ ոք էր որ հակառակ կայր նոցա։ Եւ դատաւորն ՚ի գրի եհար զբան վկայութեան նոցին, և պատուիրեաց փոխանորդին Լատինաց ՚ի քաց կալ ՚ի հակառակութենէ, և չխափանել զպաշտօնս Հայոց եւ լուցանելոյ զխանթեղս իւրեանց, ՈՀԹ (1618)։

Թէպէտեւ ՚ի դատաստանի տան և ՚ի քննութեան՝ յայտնի եղեւ իրաւունք Հայոց, և հաստատեցաւ գրովք դատաւորին։ այլ փոխանորդն Լատինաց ոչ առնոյր յանձն անսալ հրամանի դատաւորին, եւ ոչ ունկն մատուցանել ՚ի ճոգոց նորին։ Այլ դարձեալ արգել զնուագս Հայոց յայրն Ննդեան եւ խափանեաց զհոգեւոր պաշտօնս և զպատարագս նոցա։

Տրտմութիւն մեծ էր Գրիգորի և անպակաս ցաւ սրտի՝ յանիրաւ զրկանացն Լատինաց։ սակայն և այնպէս ոչ կարաց թողուլ իսպառ զսյն ՚ի ձեռաց։ այլ անկաւ ՚ի դրունս մեծամեծացն Երուսաղէմի, եւ հպիւ ուրեմն կարաց հասանել զվիրաս նոցա։ Հանդարտութեամբ ծանուցանել զիրան Արքային, և հրովարտակաւ բառնալ զընդդիմութիւնս Լատինաց։ Եւ նոցա յանձն առեալ գրեցին զամենայն անցան որք անցին ընդ Հայս եւ ընդ Լատինս։ և թէ ո՞րպէս արհամարհեն նոքա զհրաման և զվճիռ դատաւորին, այլոցքն հանդերձ։ ընդ նմին առաքեցին և զվճիռ մեծի դենոլեաին, զոր առեալ էր յառաջագոյն Գրիգոր Պատրիարքն։ ՚ի հասանել Թղթոց ՚ի քաղաքն կայսերական, դրեցաւ հրովարտակ ՚ի հաստատութիւն իրաւանց եւ սովորութեանցն Հայոց։ ՚ի \ ձեմարտի Էվվել տմոյ, ՈՀԹ (1619)։ Ցայս նուագ էւս մնացին Հայք յայրին Ննդեան։

Գրիգոր Պարոն Տէր երկայնմտութեամբ առնէր դատ-

նութեան ժամանակին և խաղութեան այլազգեաց և քրիստոնէից՝ համբերութեամբ և բազմավաստակ ճգամբ չինեալ նորոգեաց զվանս Ս. Փրկչի և Հրեշտակապետի, և ամրացոյց զնոսա յամենայն կողմանց։ բազմացոյց զսենեակս ՚ի պէտս միաբանից։ բազմացոյց զկրօնաւորս կարգեալ ՚ի վերայ նոցա հոգեւոր տեսուչս, և սահմանեաց կրօնաւորական կարգօք կալ ՚ի պաշտօն փառաբանութեան Աստուծոյ։ օրհնել զԱստուած, զտուիչն ամենայն բարեաց, եւ զբովանդակ ազգն, որք ձեռնտու եղեն առատութեամբ յամենայն գործառնութիւնս նորին։ Նորոգեաց նաեւ ըզվանս Ս. Յակոբայ, չինեալ ՚ի նմա նորանոր սենեակս եւ օթեւանս ՚ի պէտս ուխտաւորաց, և զարդարեաց զեկեղեցին ոսկեզէն և արծաթեզէն զարդուք։ Ծանրագին զգեստուք և սպասուք յօրինեալ պատուական ակամբք և մարգարտովք՝ և ձեռագիր մատենիւք։ Ապա ձեռնարկ նորոգել զվանս Բեթղեհէմի՝ չինեաց զեկեղեցի յանուն Սուրբ Աստուածածնի, ընդարձակեաց զսենեակս ՚ի պէտս ուխտաւորաց, եւ զիսանն ՚ի ներքոյ վանաց, եմոյծ զբերան ջրհորոյն ՚ի ներքս բազում նեղութեամբ, ծախեալ յոլով ինչս ՚ի դրունս այլազգեաց՝ և աւարառեաց զամենայն չինուածսն, յորս ինքն անձամբ աշխատէր ընդ մշակաց, կրելով զշաղախս և զքարինս։ Սակայն ՚ի վերայ այսր ամենայնի ոչ կարաց զերծանիլ ՚ի դառնութեանց և ՚ի զրպարտանացն Արաբացւոց։ զի Թէպէտ բազում անգամ բերեալ էր հրովարտակ Սուրբայէ, և գերբ ՚ի կուսակալէն Դամասկոսի՝ սակս չինուածոց, այլ դատաւորք և այլազգիք ելանէին ՚ի քննութիւն և տային հրաման չինելոյ, և յետ աւուրց ինչ պէս պէս պատճառանօք խափանէին զգործն՝ և պահանջէին զդուռարս գրամոց։ Գրիգոր Պատրիարք չէր եւս հաճեալ զկամս այլազգեաց երուսաղէմի, ելանէր առաջի նորա այլ իմն խոչ դժնդակ, զի կամ վայրագ Արաբացիք յառնէին ՚ի վերայ նորա՝ և կամ կուսակալք Դամասկոսի, և պահանջէին ՚ի նմանէ բազում ինչ, Թէպէտ նա ցուցանէր զհրամանս Արքային, այլ չէր ինչ փոյթ նոցա։ Թողուք ասել զյայտնի և զգաղտնի թշնամութիւնս Ծուսաց և Լատինաց, զանվերջանալի վէմս և զգժտութիւնս նոցին՝ զորս ունիմք առկուն պատմել։ Այսպէս անտանելի նե-

դրեթեամբ եւ բազում ծախիւք հազիւ կարաց աւարտել զնորոգութիւնն վանաց Բեթղեհէմի, եւ եդ արձանագիր ի վերայ արտաքին դրան եկեղեցւոյն, (1621)։

Գնաց նաեւ արտաքոյ քաղաքին ի գիւղօրայս՝ ի Վէլէհէ, ի Մալհս՝ եւ ի ձոռայ այգիս պարտէզս ձիթենեաց թուով իրրեւ 35, որպէս արարեալ էին նախորդքն իւր Անդրիաս եւ Դաւիթ Պատրիարքունք։ Եւ ի վերայ ճանապարհին Բեթղեհէմի ի կողմն յարեւմտից մերձ ի գերեզմանն Հռաքելի, գնեաց յԱբրահամեան սպարտէզ ձիթենեաց (1620)։ Եւ յետոյ Զուլղայեցի Սարգիս անուն ոմն ի միաբանից՝ գնեաց մաս մի եւս՝ եւ խառնեաց ի նա։ Եւ ի ժամանակս մեր Մեսրովպ եւ Աստուածատուր վարդապետք եւ այլք՝ յաւելին ի նա զայլ մասունս։ Եւ Տիգրանակերտցի Ցակոբ եպիսկոպոս առաւել եւս ընդարձակեաց զնոսին, անկեաց այգիս եւ ձիթենիս, եդիս եւ մեքենաւ յարդարեաց զհին մեծամեծ ջրհորս՝ եւ կառոյց սենեակս, ուր գտանի բեկորք քարանց դրօշմեալ Հայկական տառիւք, որպէս գրեցաք։ Եւ կոչի ցարդ տեղին յանուն Բարեյիշատակ Պատրիարքին՝ Պօղոս Տէր, եւ յԱբրահամեան՝ Աբո Ֆօ։ Իսկ ի գիւղն Վէլէհէ՝ առաջի աղբեր այգի մեծ՝ իրրեւ 30 սրտավար, յորում եւ ծառատունկք ձիթենեաց, չհնեալ ի նմա խաղ ինչ՝ յոր երթայր երբեմն յամառնային եղանակին։ Նոյնպէս եւ ի գոմէնս Փիլիպպոսի աղբեր, զոր Արաբացիք կոչեն Հէնէյէ, եւ յայլ տեղիս։ Սակայն ի դառնութենէ ժամանակիս այնորիկ բազում անգամ եղեն վէճք եւ դատաստանք վասն նոցա, զի ի նեղիլ Արաբացւոց՝ եկեալ բազմութեամբ վկայէին ի դատարանի՝ թէ սոքա ամենեքեան են կալուածք Ս. Ցակոբայ։ Եւ յընդարձակիլն՝ գարձեալ տիրէին նոցա, զոր կրկին եւ վերստին գնեալ են զնոսա միաբանք, որոց վաւերական ուրհնակքն ցարդ պահին անկորուստ, այլ տեղիքն յափշտակեալ եւ կորուսեալ, գտանին նաեւ ի կարգս գրոց հին հէօճճէթք կալուածոց՝ գրեալ ի մագաղաթի եւ ի բամբակեայ թղթի, այլ տեղիքն չերեւին ի միջի, զի փոփոխութիւնք ժամանակի եւ իշխանութեան՝ այլայլեալ են զամենայն ինչ, է՝ զի տիրեալ յԱբրահամեան, եւ է՝ զի յիշխանութենէ։ Եւ զոմանս եւս ի վաճառ հանեալ, որպէս զպարտէզն ձիթենեաց՝ մերձ ի

վանս Ս. Փրկչի՝ եւ զայլ տեղիս, զորս վերստին գնեաց Դաւիթ պատրիարք։ Զի ի ժամանակին յայնմիկ եւ հրամանաւ Աբդուլհամիտ վաճառել զիւրաքանչիւր եկեղեցեաց քրիստոնէից, եւ զդինս նոցա առնուլ ի գանձն Սրքունի։ Այլ ի բաց թողեալ մեր զայսոսիկ՝ դարձցուք պատմել զվէճս Կաթնաց ընդ Հայոց։

Յիրանչիսկեան կրօնաւորք՝ լեալ ոմերիմ թշնամի եկեղեցականացն Հայոց՝ երկնէին հանապազ ի միտս իւրեանց արտաքսել զնոսա խնայս յայրէն Ծննդեան Քրիստոսի եւ խափանել անտի զպաշտօնս նոցա, որպէս եւ քանիցս փորձ փորձեալ էին, եւ լեալ էր դատաստան ի քննութիւն ի վերայ այսր խնդրոյ։ Եւ յայտնի լեալ իրաւունք ազգին, որպէս գրեցաք ի վեր անդր։ Այլ Կաթնիք ոչ կասեցան յետս՝ զի ոչ ողբական բանիւք անսային, ոչ զիրաւունս այլոց ճանաչել դիտէին, ոչ վճռոյ՝ եւ ոչ ի սպառնալեաց եւ ի պատուիրանաց դատաւորին եւ այլազգեաց զանգիտէին՝ եւ ոչ նոյն իսկ Կայսերական հրովարտակաց ուշին դնէին։ Տեսեալ Գրիգորի պատրիարքի զյամառ միտս և զպատնայիս նոցա՝ գնգերէր ի դրունս այլազգեաց, և աղաչանօք թախանձէր զնոսա դարման տանել իրացն։ Գրել առ Սրքայ և ծանուցանել զինդիրն հանդերձ դատարանաւ։ Եւ նոքա յանձն առին՝ եւ գնացին առ այս վճիռ հզօր։ Այսպէս ջանիւք և աշխատութեամբ նորին, տուաւ ի սմին ամի երկու հրովարտակք յԱբքայէ (Խաբ-Թի Շէրիֆ) յաւուրս Սուլթան Մուսթաֆայի առաջնոյ՝ կատարել Հայոց զպաշտօնս յայրին Ծննդեան Քրիստոսի, և մնալ 2 կանթեղացն ի վերայ Մարդն։ Ընթերցան այսոքիկ հրովարտակք ի դատարանի առաջի բազմութեան՝ ուր էին Կաթնիք՝ և դատաւորն պատուիրեաց նոցա չհակառակիլ միաւանդամ ընդ Հայս վասն խնդրոյ Ծննդեան, և նոքա խոստացան հնազանդիլ հրամանի կայսերն և դատաւորին։

Այլ խոստումն նոցա միայն ի դատարանի էր, և յելանելն անտի դառնային յառաջին առկայութիւնս, մանաւանդ թէ առասպելին զանդազ ջանս և զթախանձանս Հայոց, դեգերեալ ի դրունս մեծամեծաց։ Ինքեանք եւս սկսան թախանձել զԻսուն Սրքունի։ Իրրեւ տեսին թէ չէ հնար փախ-

չիլ 'ի դատաստանաց, և քօղով սուբհան ծածկել զիրաւունս այլոց· ապա ձեռն արկին յայլ իմն դործ դժբնդակ, անհնարին յանդգնութեամբ, անհետ առնել խոպան զյիշատակս Հայոց յայրէն Մննդեան· Նախ խորտակեալ բարձին զերկոսին կանթեղս, կախեալ 'ի վերայ Մսրոյ Տեառն մերոյ· ապա խորտակեցին զղարանն (տօլապ), եւ զարկղն Հայոց յայրի անդ, յափշտակեցին զզգեստս պատարագին եւ զայլ սպասս· որք էին 3 արծաթ խաչ, 2 ոսկեզօծ, եւ 1 ահնապարզ· 2 Սկիհ ոսկեզօծ, 2 բուրվառ, 1 արծաթ եւ 1 պղինձ· 1 Աւետարան արծաթապատ· զգեստ Պատարագի իւր սարօք· դիպակ ոսկեթել 'ի գոյն կարմիր, և զայլ եկեղեցական սպասս· Լու եղեւ Գրիգորի Պատրիարքի արարք Լատինաց, եւ տարակուսեալ նորա անկաւ 'ի դրունս այլազգեաց, աղաչանօք և յորդորանօք հաճեցոյց զմիաս նոցա գրել և ծանուցանել 'ի Դուռն, և նոքա խոստացան· Սակս առաքեաց առ դատաւորն զՊետրոս որդի Գեորգեայ իբր վոխանորդ իւր եւ ամենատան եղեւ ղտեսչէն Լատին վանից Բեթղեհէմի, զոր տուեալ էր խորտակել զդարանն եւ զարկղն· Ժողովեցան այլազգիք՝ եկին եւ տեսուչն, խնդրեաց Պետրոս դարձուցանել յետս, զոր ինչ յափշտակեալ էին Լատինք, հաճեցաւ առ այս եւ Ժողովն· Եհարց դատաւորն ցտեսուչն, թէ արդարեւ արարե՞ր այնպէս, որպէս ամբաստանեն Հայք· և նա համարձակութեամբ ասէ՝ Ես իշուցի զկանթեղս Հայոց կախեալ յայրն Մննդեան 'ի վերայ Մսրոյն· խորտակեցի զդարանն և զարկղն, և բարձի զսպասս պաշտամանց նոցա, հրամանաւ Թագաւորին Գաղղիոյ, որ ընդ իշխանութեամբ նորա եմք· Վկայութեամբ Ժողովոյն վճիռ ետ դատաւորն հատուցանել զկնի դարանին տեսուչն Լատինաց, եւ հրաման ետ Պետրոսի երթալ և վերստին դնել զդարանն եւ հաստատել 'ի տեղի իւր· առ այս երաշխաւոր կացին փոխանորդն և Թարգմանն Լատինաց՝ տեսչի իբրեանց ըստ պահանջման դատաւորին· 'ի ԺԲ Ճէմազիլ ախր ամոյ՝ ՈՃԱ (1621)·

Եւ յետ այնորիկ դատաւորն հանդարտութեամբ ժողովոյն այլազգեաց գրեալ զամենայն ծանոյց 'ի Դուռն· եւ ընթերցեալ զայն նախարարաց՝ ծանեան զանհնազանդու-

թիւնս Լատին կղերոյ· այլ որպէս զի օրինօք կատարեսցեն զգործն, հարկ եղև նոցա հարցումն ուղղել առ դեսպանն մեծ և առնուլ զվճիռ նորին, որ ունէր օրինակ զայս· «Յերուսաղէմ 'ի Ս· Տեղիս, Հայք՝ և պատերազմող ազգն Ֆրանկաց, 'ի սկզբանէ անտի կատարեն անդ զաղօթս, այժմ Լատինք յարուցեալ են 'ի վերայ Հայոց՝ ասեն, թէ դուք իսկապէս չէք բաժանորդ Ս· Տեղեաց· եւ մինչեւ ցայժմ սակս մարդասիրութեան՝ ոչ արդելաք զձեզ, իսկ այժմ արգելուք, Հայք օրինօք հաստատեցին զբաժանորդ լինելն իբրեանց, և որոյ վասն տուեալ են յԱրքունուստ հրովարտակք և Հէօճճէթք 'ի դատարանէ· եւ եթէ Լատինք ոչ հնազանդեսցին կայսերական հրովարտակին, և հակառակ կայցեն նախանձ սովորութեանց, զի՞նչ պարտ իցէ առնել նոցա»· Պատասխանի, դան սաստիկ և բանտ ընդ երեսս նոցա· Ապա ծանուցին զիրս Արքային, և ըստ հրամանի նորին գրեցաւ հրովարտակ առ դատաւորն եւ առ մեծամեծս երուսաղէմի, խափանել զբռնութիւնս Լատինաց, կախել զկանթեղսն, դնել զարկղն եւ զդարանն 'ի տեղիս իւրեանց, տալ կատարել Հայոց զպաշտօնսն, որպէս յերեկին և յեռանդն, ժառանգել զսովորական իրաւունս, ըստ զօրութեան հրովարտակաց, դատաստանական գրոց· վճռոյ մեծի դեսպանին և վկայութեան այլազգեաց, իսկ եթէ անսաստ գտեալ Լատինաց միաբանգամ հակառակեսցին, թէ ունիմք հրովարտակ յԱրքայէ, առեալ զայն 'ի ձեռաց նոցա և եղեալ 'ի քսակի առաքելոչիք ատո· 'ի ՃԵ Բէպիւլ էվվել ամոյ՝ ՈՃԱ (1621)·

Ի հաստատել հրովարտակին յերուսաղէմ, կազմեցաւ ժողով մեծ 'ի դատարանի, կոչեցան անդ փոխանորդն եւ Թարգմանն Լատինաց· և ընթերցաւ հրովարտակն առաջի պաշտութեան, և 'ի ձեռն Թարգմանի բացատրեցաւ խնամս փոխանորդին Լատինաց· ապա եհարց ցնա դատաւորն՝ հնազանդի՞ն հրամանի Թագաւորին մերոյ· և նա ասէ՝ ունիմք հրովարտակ վասն այսր խնդրոյ, եւ մատոյց զայն առ նա· գրեալ 'ի ՃԵ Ճէմազիլ ախր ամոյ՝ ՈՃ (1620)· Ընթերցեալ զայն դատաւորին ասէ, թուական սորա հին է· ոչ կարեմ առնել ինչ 'ի վերայ այդորիկ· այլ ըստ զօրութեան նոր հրովարտակին և Հէօճճէթին Հայոց,

յորս հաստատեալ են իրաւունք նոցա։ Ի վերջոյ ուրեմն հնաղանդեցաւ փոխանորդն Լատինաց, և դատաւորն գրով հաստատեաց զիրաւունս Հայոց յայրին Ծննդեան՝ կատարել զայն ըստ առաջին սովորութեան. ١٠٣١ (1621)։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Հակառակութիւն Լատինաց։ Վանօրայք լինանոցման։ Խնդիր վանց Ս. Յակոբայ։ Գնալն Գրիգորի Պատրիարքի ի Կոստանդինուպոլիս։ Հին Երուսաղէմի տաճարն անդ։ Եկեղեցին Պետրոսի։ Նորոգութիւն եկեղեցւոյն Յովհաննու Աւետարանչի։ Վերնատան երկք կամարք։

ԹԷՊԷՏ և այսպիսի երկար և ոգետանջ դատաստանաւ իբրու թէ յանդ ելանէրն ի դատարանի, և Հայք տիրանալ կամէցան իրաւանց իւրեանց. սակայն չէ ևս էր անցեալ ամսօրեայ ժամանակ, փութացին Լատինք օգնութեամբ Դեսպանին Գաղղիոյ, և վերստին առին հրովարտակ յԱբքայէ, և առաքեցին զայն յԵրուսաղէմ ի ձեռն պինակերի նորին, որոյ անունն էր Եուսուֆ ազա, գրաւել զամենայն Ս. Տեղիս, և արտաքսել զայլ քրիստոնեայս, զի այնպէս ծանուցեալ էին Աբքայի, թէ այրն Ծննդեան Քրիստոսի ի Բեթղեհէմ, Գիմեթն տաճարի Ս. Յարութեան, Գերեզմանն և Պատանատեղին Քրիստոսի. և գերեզմանն Ս. Ածուածածնի, ի սկզբանէ անտի են ի ձեռս Լատինաց. իսկ այլոց քրիստոնէից միայն է լուացանել զկանթեղս եւ զաշտանակս, և չունին զայլ իրաւունս։ Եհաս ոստիկանն հրովարտակաւ յԵրուսաղէմ, եւ Լատինք էառուն զայն արձանագրել ի դատարանի, և ապա սկսան մեծամեծ պատարագօք և ընծայիւք որսալ զմիտս այլազգաց, առ ի գրաւել զՍ. Տեղիս. լուեալ զայս Գրիգորի Պատրիարքի եւ միաբանացն Հայոց՝ չոքան առ դատաւորն և ազդ արարին նմա զանտեղի խնդիրն Լատինաց, որպէս գրեալ էր ի հրովարտակին, զի իւրաքանչիւր ազգ ունի սեփհական վանս և զկենզեցիս՝ ասեն, եւ վասն այնց չիք հակառակութիւն ի միջի, իսկ չորեքին տեղիքն այնոքիկ հաւասար են ամենայն քրիստոնէից՝ և ըստ օրինաց իւրեանց լուացանէն կանթեղս և զաշտանակս, և է ի ժառանգութեան նոցին, և Հայք վասն խնդրոցս այսոցիկ բազում անգամ ի դատ մըտին ընդ Լատինս, և արգելին զնոսա, և ունին վաւերական գրեանս. եւ չէ հնար թողուլ զդարաւոր իրաւունս ի յափշտակութիւն Լատինաց։ Այն ինչ աւարտեալ էին Հայք զբանս իւրեանց, խոժեցին ի ներքս վերակացուք կալուածոց Սիւլէյմանայ Աբքայի, և եդեալ առաջի դատաւորին զնուամարն՝ ասեն, յաղագս տաճարի Ս. Յարութեան իւրաքանչիւր ամի հազիւ կարեմք առնուլ ի Լատինաց 300 ոսկիս. իսկ ի Հայոց և յայլ քրիստոնէից առնումք աւելի քան զ3000 ոսկիս. եթէ տեղիքս այսոքիկ ապցի ի ձեռս Լատինաց, եւ Հայք ի բաց մերժեսցին, եւ խափանեսցին պաշտօնք նոցին, ուստի՞ պարտ իցէ լինել զպահապանութիւն պաշտօնք նոցին, ուստի՞ պարտ իցէ լինել զպահապանութիւն արդեանց, զոր օրինադրեաց Աբքայն Սիւլէյման, ուստի պարտ իսկ է երկոցունց կողմանց մնալ ի վիճակին առաջին, և խնդիրն դարձցի վերստին ի Կոստանդինուպոլիս։ Հաճոյ թուեցան բանք վերակացուաց, եւ դատաւորն հանդերձ ժողովով գրեաց զամենայն հանգամանս գործոյն ի Դուռն. ١٠٣١ (1621)։

Ի հասանիլ Թղթոյ ի Կոստանդինուպոլիս, գրեցաւ հրովարտակ (ԽԹԹԻ Շէրիֆ), մերժել զվէճս Լատինաց, չնեղել զՀայս, և չգործել ինչ ընդդէմ նախնի սովորութեանց, որպէս պատուիրեալ է յառաջին հրովարտակն և հաստատեալ ի դատարանի, ի ١٥ Րէպիլ ախր ամսոյ՝ ١٠٣١ (1621)։ Սակայն ջանք մեծ էր Լատինաց և աշխատութիւն անխոնջ սակս գործադրութեան հրովարտակին, զի գրեալ էր ի նմա, եթէ ոչ անասցեն Հայք հրամանին և ի բաց կացցեն ի Ս. Տեղեաց՝ յանդիման լիցին մեծի ատենի կայսեր՝ և անդ վճարեսցեն զիրան։ Ծանձն առին Հայք, և սկսան պատրաստել զհանրագրութիւնս ի դատաւորէն և ի մեծամեծաց այլազգաց, և զայլ կարեւոր գրեանս, և ելին ի ճանապարհ երթալ ի քաղաքն Արքայանիստ։ Զի չեւ հասեալ սոցա անդ և յանդիման լեալ մեծի ատենին. Լատինք բարձին զկանթեղսն Հայոց ի Ս. Տեղեաց, խորտակեցին զարկեղսնս և զպահարանս, և յափշտակեցին զզգեստս և զպատս եկեղեցւոյ և անյայտ արարին. Լու եղեւ անակնկալ

գՀպեալ այս ՛ի թագաւորեալ քաղաքն, խռովեցան առ հասարակ ժողովուրդք Հայոց, և մատուցին գիր աղաչանաց ՛ի Դուռն՝ բողոք բարձեալ ասէին, եւէլ քան զ300 ամս ամենայն քրիստոնեայք ՛ի միասին հաւատարութեամբ պաշտէին զՍ. Տեղիս. այժմ զի՞ եղեւ Լատինաց, և ուսո՞ ծնաւ ՛ի միտս նոցա այսպիսի տենչ սիրապետութեան, տարօրինակ բռնութեամբ յափշտակել զիրաւունս այլոց։ Գրեալ էր և ման այսր յաւաջադոյն ճամիէր աղա ՛ի խնդրոյ Հայոց առ Արքայ, որ ՛ի նմին ժամանակի վերատեսուչ էր արքունի կալուածոց յԵրուսաղէմ, թէ ո՞րպիսի սիրապետութեան տենչանօք բռնացեալ են Լատինք ՛ի վերայ Հայոց, և թէ խռովութիւնք նոցին սաւթ լինին մեծամեծ չարեաց, և հասանէ վնաս գանձուն, եթէ ոչ հաւատարութեամբ պաշտեսցեն զՍ. Տեղիս, որպէս յայտ առնեն հանրագրութիւնք, և վճիռ մեծի դեսպետին առաքեալ յոտս ձեր։ Այս ամենայն բողոք և գանկատանք՝ եհաս յականջս Արքայի. հրաման եղեւ գրել հրովարտակ՝ վարել ըստ վճռոյ դեսպետին, և մնաց Արքունի հրովարտակաց և վաղեմի սովորութեանց, զամենայն որ ինչ միանգամ յափշտակեալ են Լատինք, դարձուցանել առ Հայս և շնորհել գնոսա, հաւատար վարել ՛ի Ս. Տեղիս, և զանհնազանդսն ծանուցանել ՛ի Դուռն. ՛ի \Ճէհմաղիլ եվվել. \٠٣\ (1621)։

Վանք Յովհաննու Ծննդեան ՛ի լեռնակողին՝ է հեռի երկու ժամաւ յերուսաղէմ, զորմէ ասեն Լատինք լինել տուն Զաքարիայ Քահանայապետի, եկեղեցին չինեալ ՛ի ձեւ եկեղեցեացն Հայոց 3 խորանաւ, ՛ի ներքոյ հիւսիսային խորանին ցուցանեն զտեղի ծննդեան Յովհաննու Կարապետին, ՛ի հալածիլ անտի կրօնաւորացն Հայոց ՛ի բռնութենէ Մ-ըՃէ կոչեցեալ Արաբացւոց՝ վանքն մնաց ամայի, և եկեղեցին լեալ էր գոմ ոչխարաց և մակաղաւորդի խաշանց գիւղական Արաբացւոց։ Եւ ՛ի սմին ժամանակի Լատին կրօնաւորք գնացին անդ առնել նախաճաշնակ յաւուր տոնի սրբոյն. բայց պաշարեցան գինուք Արաբացւոց՝ և խնդրեին ապաստանել գնոսա, և նոքա հաղիւ ուրեմն զերծեալ անտի թաքեան ՛ի տունս ուրուք, մինչեւ եկին գինուորք՝ և առեալ տարան գնոսա յԵրուսաղէմ (1621)։ Եւ յայնմհետէ սովորութիւն կալան Լատինք՝ երթալ անդ ՛ի տարուոջ մի-

անգամ գինուորօք Բդեչխին, եւ սակաւ առ սակաւ ընտելացուցեալ զԱրաբացիս հաստատեցան անդ. եւ 1725 յամին Նորոգեցին նոր չինութեամբ եւ ընդարձակեցին, և յաւուրս մեր չինեցին հիւրանոց ծախիւք Սպանիոյ թագաւորին, որ յանուն Սպանիացւոց նուիրեալ իսկ էին։ Իսկ վանքն Հայոց որ կոչի տուն Եղիսաբեթի՝ նուիրեալ յանուն Ս. Աստուածածնի, է արտաքոյ գիւղին. Մարինոս Լատին չկամելով յիշել զանուն Հայոց, ասէ՝ կառուցեալ ՛ի պատուական ձեռաց, ուր ընդ առաջ ել եղիսաբէթ Ս. Կուսին Մարիամու, և կոչեն Այցելութիւն Ս. Կուսին. և ՛ի տարւոջ միանգամ նախատօնակ առնէաք անդ ասէ։ Իսկ ՛ի սմին ժամանակի կատարեցին Արաբացիք զկրօնաւորս և կործանեցին զվանքն և զեկեղեցին, և մնաց այնպէս աւերակ ՛ի բազում ժամանակս։ Եւ ՛ի վերջոյ սիրեցին Լատինք եղեալ դուռն երկաթի, և նորոգեալ զեկեղեցին, զոր ասեն պատարագել անդ, զոր ինքնաբուղխ քաղցրահամ ջրհորն. և զարձանագիրս Հայկական տառիւք գտեալ յաւերակաց. զոմանս խորտակեցին և զայլս թաղեցին, և ՛ի վերայ դիմեսան, որ ցարդ կայ կանգուն՝ կանգնեցին խաչ մայեալ և սահմանեցին դերեզմանատեղի կրօնաւորաց. առ ընդհեր սմա է և դերեզմանատունն. իսկ զայդիս եւ զձիթենիս, զոմանս յափշտակեցին Արաբացիք, եւ այլքն անկան ՛ի ձեռս Լատինաց։ Եւ մերձ վանացս յաւուրս մեր չինեաց Հաննա դառնոյ տուն մեծ. եւ ապա վաճառեաց զայն վանահօր Ռուսաց. և նորա դնեալ զայդիս և զծառատունկս ընդարձակեաց յոյժ զսահմանն, չինեալ տունս և բնակարանս և զեկեղեցիս իսկ։ Տե՛ս Նե՛ ՛ի Գէր՛ Հաննայ վարդապետէ. Պատմ. Երուսաղէմ. Եր՛ 329։

Ի սմին ժամանակի Յայնք և Վիրք յարուցին զանհեդեդ խնդիրս և սկսան խօսիլ այսր անդր ՛ի քաղաքին, թէ վանք Ս. Յակոբայ լեալ իցէ սպղին վրաց, և թէ Հայք յափշտակեալ են զայն. լուեալ զայս Գրիգորի Պատրիարքի, սպղտար դատաւորին կոչել ՛ի քննութիւն, եւ նա կոչեաց զՊատրիարքն Յունաց Թէոփանէ, զտեսուչն Վրաց Նէոփիտոս, և զերիս Վրացի վարդապետս ընդ նմա, զխոհանորդն Հայոց Տօնիկ որդի Մալխազ, և զխոհանորդն Լատինաց Թէոդորոս։ Սոքա ամենեքեան յանդիման եղեն գատա-

ւորին, ուր ժողովեալ էին մեծամեծք այլազգեաց. եւ՝ի լինել բանից ի հարցմանց վասն վանացն Ս. Յակոբայ. պատմեցին եւսն Պատրիարքն Ծուենց եւ վարդապետքն Վրաց յաւէնի անդ և ասեն. այսուհետեւ ոչ մեք եւ ոչ ազգն մեր որ ղինի, չունիմք և չունեն երբէք իրաւունս յարուցանել վէճս և կամ խռովութիւնս՝ի վերայ ազգին Հայոց վասն վանացն Ս. Յակոբայ, կառուցեալ՝ի վերայ լերին Սիոնի. պահանջել զայն եւ կամ ամրաստան լինել զնմանէ. զի վանքն այն՝ի սկզբանէ անտի իրաւամբ եւ ճշմարտութեամբ ահիւականի է ազգին Հայոց, եւ նոքա տիրեալ և ժառանգեալ են զնա՝ի հինհարիւրաւոր ամաց հետէ մինչեւ ցայսօր. ոչ ոք՝ի քրիստոնէից ունի իրաւունս, առել ինչ և կամ հակառակիլ վասն այնր. Զայս ամենայն բանս խոստովանութեան լուաւ պատուարն՝ի բերանոյ Պատրիարքին Ծուենց և վարդապետացն Վրաց. և ժողովն հաստատեաց զբանս վկայութեամբ իւրով. և դառաւն հարեալ՝ի գրի ետ ցիսոնիկ՝՝ի է Զիւհիճէ ամսոյ՝ ՌՀՀ (1626)։

Գնալ Գրիգորի Պատրիարքի՝՝ի Կոստանդինուպոլիս՝՝ միշատակին յայլ և այլ գլուս, բայց զդէպսն ժամանակին ինքնին հարեալ է՝՝ի գրի, որ պահի ցարդ արձանագրեալ յեկեղեցին Պալատու՝՝ի Կոստանդինուպոլիս, յորմէ քաղեալ կարդեմք առաջիկս. Ի սմին ժամանակի էր եկեղեցի յանուն Ս. Նիկողայոսի Հայրապետի՝՝ի թաղն Գալաթիա. բրիւկ կոչեցեալ, որոյ մի մասն էր՝՝ի ձեռս Հայոց բուրաստանօք և պերեզմանատամբ. իսկ բնակարանն նեղ և անձուկ. և էր իջեւանատեղի կամ տուն երուսաղէմի Պատրիարքաց և միաբանացն Երուսաղէմի՝՝ի գնալ նոցա անդ. Իսկ մի մասն էր՝՝ի ձեռս Լատինաց, բայց այն ընդարձակագոյն քան զՀայոցն անհնգօք պարտիզօք և բուրաստանօք. մինչ զի՝՝ի հարկաւորիլն՝ Հայք՝՝ի վարձու ունէին՝՝ի նոցանէ. ի ժամանել Գրիգորի Պատրիարքի անդ, տեսեալ թէ անբաւական է տեղին իւրոցն. գնաց զտուն առն ուրումն երեւելւոյ՝ որ մերձ էր եկեղեցին, որ և յետոյ բնաջինջ եղեւ այրն տամբք և ընտանեօք, և խառնեաց զայն՝՝ի մասն Հայոց. կառոյց սենեակս եւ զայլ կարեւոր շինուածս. և զարդարեաց պարտիզօք և բուրաստանօք, որ

ընդարձակագոյն եղեւ քան զմնան Լատինաց. և աշակերտ իւր Յակոբ վարդապետ եհան անդ ջուր քաղցր՝ նորագեաց նաեւ զեկեղեցին և զարդարեաց զնա ասպատուք։

Իսկ այլազգի բնակիչք թաղին մեծացեալ ընդ այն, երկնչին՝՝ի միտս իւրեանց և ապաստին դիպող ժամու յափըշտակել զեղբն՝՝ի ձեռաց քրիստոնէից. Ցետ անցանելոյ ժամանակս ինչ, յաւուր միում Մուֆթի թաղին այնորիկ եկեալ փակեաց զդուռս տանն, զոր չինեաց Գրիգոր, եւ կնքեաց զնա, և մնաց այնպէս ամիս իրրեւ ՟Ի եւ՝՝ի խնդրել նորա դրամս. Եւսն նմա 200 դահեկան, և խոստացան եւս՝ եթէ բացցէ զդուռն։ Ի սմին ժամանակի եկեալ էր անդ Գրիգոր վարդապետ կեսարացի՝՝ի քաղաքէ իւրմէ. դիմեցին առ նա քահանայք եկեղեցւոյն. եւ յայտ արարեալ նմա զդիպուածսն, խնդրեցին լինել ձեռնտու ինքեանց. այլ նա փոխանակ օգնելոյ նոցա՝ սաստեաց և յանդիմանեաց զնոսա. «Ո՛վ իցէք դուք որ յայդպիսի գործս լինիք ձեռնամուխ. զի Լատինաց և բնիկ բնակչաց պարտ է հոգալ զայդ խնդիր»։ Եւ այլ խիստ և յիմարական բանիւք զղուեալ մերժեաց զնոսա յերեսաց իւրոց. և նոցա սարակաւսեալ մանաւանդ թէ յիմարեալ իսկ՝ գնացեալ առ այլազգին և յետս պահանջեցին զդրամն զոր եւսն։ Եւ նորա տեսեալ թէ անկեալ են՝՝ի մեաց Հայք, ազդ արարեալ կոչեաց փութապէս առ ինքն զդասս գիտնականաց և զամբոխ մեծ՝՝ի ժողովրդոց, և գնացեալ նոքօք եկեղեցին առ ձայնել զժամ աղօթից ըստ օրինաց իւրեանց, և կապին ամենեքեան յաղօթս եւ փոխեցին՝՝ի մզկիթ. տեսեալ զայս Հայոց պաշարեցան՝՝ի սուգ մեծ։

Իսկ Գրիգոր վարդապետ՝ զոր Մուլ կոչէին, անաւս արարեալ զթշուառութիւն ժողովրդոցն, պատաղեալ էր զգործովք իւրովք՝ եւ չանայր արկանել ազմուկ խռովութեան՝՝ի մէջ ազգին սակս խնդրոյ Պատրիարքութեան, զի հակառակեալ ընդ Յովհաննու վարդապետի՝ հալածեաց զնա՝՝ի Պաբրուսայ. և ինքն տիրեաց բռնութեամբ Պատրիարքական աթոռոյն՝ առանց Արքունի հրամանի, եւ եդեալ՝՝ի տեղի իւր փոխանորդ զՅովհաննէս վարդապետ զեղնկացի, որ կոչէր Բեկ Ներսէսէ Յոթ, և ինքն գնաց յաշխարհն Լեհաց։ Իսկ քահանայք և ժողովուրդք եկեղեցւոյն Ս. Նի-

կողայսոի Ճեացեալ առանց եկեղեցւոյ իբր անտէրունջ թափառէին այսր եւ անդր ամ մի ողջոյն, և ոչ ոք էր որ ժողովէր զնոսա, և կամ փոյթ տանէր վասն նոցա։ Ապա ինքեանք միաբանեալ գտին զեկեղեցի մի Ճոնաց յանուն Հրեշտակապետի 'ի ներքոյ գրան Պալատու՝ վակեալ 'ի խառարջոին տեղւոջ 'ի մէջ Հրէից, եղեն 'ի մոլ 'ի ձեռս բերել զայն, բայց մեծամեծ ծախուց պէտս ունէր, և զի ոչ ունէին գլուխ և առաջնորդ զոք յորդորիչ ժողովրդեան 'ի սէր և 'ի խաղաղութիւն։ Ի նոյն աւուրս՝ եկն 'ի Կոստանդինուպոլիս Արիստակէս վարդապետ Խարբերդցի, դիմեցին առ նա քահանայք և ժողովուրդք այնուքիւկ՝ հարցանել խորհուրդ 'ի նմանէ, և նա քաջալերական բանիւք խրախուսեաց զնոսա, պինդ կալ և չլքանիլ 'ի խորհրդոց, և ես ինքնին ասէ գլուխ և առաջնորդ եղէց ձեզ 'ի գործ լուխ տանել զգործն, և առեալ տարան զնա 'ի Խաչփիւղ, և նորա կոչեալ զժողովուրդն յորդորական բանիւք հաստնեցոյց զնոսա 'ի գործն, և ինքն ժողովեաց ոսկի և արծաթ բազում առ 'ի հոգալ զծախսն։ ապա չոքաւ առ վէմիրն մեծ՝ և առ մեծամեծս գրան, և ծանուցեալ ընդ խնդիրն հաճեցոյց զմիտս նոցա։ Իբրեւ լուան զայս Ցոյնք՝ պատրաստեցան 'ի կուիւ ընդ ազգին Հայոց, առ 'ի չտալ զեկեղեցին, այլ Հայք զօրացեալ յաղթահարեցին զնոսա։ Եւ վէմիրն մեծ Բէհլիւ Փաշայ՝ կոչեալ առ ինքն զոմանս 'ի Հայոց ետ նոցա հրովարտակ Արքունի, եւ առաքեաց ընդ նոսա զարս երիս 'ի Նուիրակապետաց իւրոց՝ բառնալ զեկեղեցին և յանձն առնել նոցա։ Եւ եղեւ ուրախութիւն մեծ Հայոց, սակայն սկսան խորհիլ՝ զի մեծամեծ ծախուց և աշխատութեանց պէտս ունէր, զի եկեղեցին էր կարի փոքր՝ մի՛ն՝ առերեալ և խախտեալ 'ի հիմանէ։ Եւ 'ի սմին ժամանակի անուանի էր 'ի մէջ ազգին Տիվրիկեցի Աստուածատուր՝ Պոլոյճէ կոչեցեալ, այր Աստուածասէր և մեծահանճար՝ որ քաղցրութեամբ բարուց իւրոց լեալ էր սիրելի յաչս մեծամեծաց դրան, եւ հաստատիմ բարեկամ Գրիգորի Պատրիարքին Երուսաղէմի։ Սա բազում աշխատութեամբ դեգերեալ 'ի դրունս մեծամեծաց՝ եհան հրաման նորոգելոյ զեկեղեցին, և էառ զամենայն կարեւոր գրեանս։ Իբրեւ լուան զայսոսիկ կուսակիցք կեսարացւոյն

Գրիգորի՝ որոց գլխաւորքն էին Մինաս վարդապետ Կարնեցի, Ծովհաննէս եպիսկոպոս Եղնկացի՝ տեղապահ Գրիգորի, չարժեալ 'ի չար նախանձուէ՝ հակառակ կացին Արիստակէս վարդապետի՝ քահանայից և ժողովրդոց Պալատու, և ջանային ցրուել զմիաբանութիւնս նոցա, խափանել զշինութիւն եկեղեցւոյն՝ եւ հալածել զԱրիստակէս վարդապետ, որ թագուցեալ կայր 'ի Դալաթիա։ Ի սոյն աւուրս եհաս անդ յներքուստ Գրիգոր Պատրիարք Պարոն Տէր կոչեցեալ։ Իբրեւ լուան քահանայք եւ ժողովուրդք Պալատու զգալուստ Նորին, մեծ և փոքր առհասարակ գնացին ընդ առաջ նորա 'ի յարդանս 'ի Հրուառելոյս՝ այն է Իւսկիւտար, և 'ի նմին պահու ձայն բարձեալ դոչէին և չարախօս լինէին զՅովհաննէս եպիսկոպոսէ, եւ Սուլու Մանաստրցի Աշչատուր երիցուէ, (ոնց ուռեցաւ եւ խափանեցաւ) ասէ նա ինքն Գրիգոր, եւ յորժամ էանց Պատրիարքն 'ի Խաս գիւղ, եկն առ նա Ծովհաննէս եպիսկոպոս յողջոյն և 'ի տեսութիւն, զի յառաջագոյն աչակերտեալ էր նմա, և նորա բացեալ զբերան իւր սաստկագոյնս կշտամբեալ յանդիմանեաց զնա նախատական բանիւք, որպէս ինքն ասէ (առաքելական իւրոց ծածկեաց զինքն, և տխրեալ դիմաք ել և գնաց)։

Ձեռն այնորիկ սկսաւ Գրիգոր Պատրիարք յորդորական բանիւք քաջալերել զժողովուրդն ձեռն արկանել 'ի շինութիւն եկեղեցւոյն Հրեշտակապետի։ Գլուխ և վերատեսուչ կացին գործոյն ինքն և Արիստակէս վարդապետ, ջանիւք և աշխատութեամբ կատարեցին զայն, և արարեալ զհանդէս նաւակատեաց օրհնեցին զնա։ Եւ Արիստակէս մեկնեալ անտի գնաց 'ի կողմանս Բիւթանիոյ։ Սակայն առաքն Հրէից կարի մեծ էին յեկեղեցին, և ըստ ազատի սովորութեանց նոցին բուրկր գարշահոտութիւնք նոցա 'ի զղուանս ժողովրդոյ, եւ երբեմն նախատէին իսկ զկրօնս քրիստոնէից և զեկեղեցին։ Էր անդ նաեւ տուն մեծ և բարձր քան զեկեղեցին՝ առն ուրումն մեծատան յազգէ Ճուենց, և սա եւս ստութեամբ գնայր ընդ ազգին սակս եկեղեցւոյն, և առաւել վատթարագոյն գտեալ քան զՀրէայսն, տայր արկանել 'ի վերայ եկեղեցւոյն զաւելորդս կերակրոց եւ այլոց իրաց իբրեւ յաղբեաւ եւ զինի առաւել քան պատա-

հեցաւ հրդեհ 'ի թաղի անդ և յամբիւն դատեաց զամենայն տեղիս, այրեցան և առնք Հրէից, և հոյակապ չինուածք մեծատանն՝ չզերծաւ 'ի միասուց և եկեղեցին Հայոց, զի այրեցան չինուածքն չուրջանակի, և կղմինտիրքն կոխան լեալ ոտից փչրեցան, և զսեղանն կործանեցին այլազգիք, միայն ձեղուն եկեղեցւոյն զերծեալ էր 'ի խանգողաց, եւ այն եւս խախտեալ, ի նմին առաւօտու առաքեցին զոմանս 'ի Գալաթիա և կոչեցին զԳրիգոր Պատրիարք. և նորա եկեալ դարձեալ սկսաւ քաջալերել և յորդորել զժողովուրդն, զի վերստին ձեռն արկցեն շինել և նորոգել զայրեալ և զխախտեալ տեղիս եկեղեցւոյն, սակայն նիւթքն կարի թանկագին էին յայնժամ՝ զի հրդեհն աւերեալ էր զքաղաքս տեղիս, 'ի Ծունդարանէ մինչեւ 'ի կամարս Ջրոց, այլ արհեստաւոր Ահնցի ազգայինք բնակեալ 'ի Խաս գիւղ, եւ այլք ոմանք երեւելիք անձինք 8. հաւուն իւրաքանչիւր ոք 800 կղմինտր, և այլք ըստ կարի իւրեանց, և մինչեւ յաւուրս երիս ժողովեցին 12,000 կղմինդր, և ծածկեցին զձեղուն եկեղեցւոյն. Ցեսեալ այլազգեաց չարժեցան 'ի նախանձ, զի տեղիք նոցին, սակս նուազութեան նիւթոց, մնային տակաւին աւերակ, և կոչեալ դատաւորի տեղւոյն զեկեղեցւոյնն գան եհար զնա, մինչեւ եկն հրաման 'ի Բդեշխէն եւ լռեցին այլազգիք, չինեցին զամենայն տեղիս եւ կանգնեցին զսեղանն. Ապա խորհեցան պատրաստել տեղի լուսալեաց, և 'ի բրելն երեւեցաւ ծայր գմբեթի միոյ, ծածկեցին զայն, և ձեռն արկին յայլ տեղի՝ մերձ նմին գտաւ չինուած մեծ լցեալ հողով, և դատարկեցին զմի անկիւնն նորին և եթե. Փոյթ քահանային էր միայն օրհնել զսեղանն, զայլ կարեւոր ոչնաւուցն չէր նոցա փոյթ. Օրհնեաց Գրիգոր Պարոն Տէր զՍեղանն հանդիսիւ եւ ինքն մատոյց զՊատարագն, և յորդորեաց զժողովուրդն վինել նուիրատու 'ի վճարումն պարտուց եկեղեցւոյն, արտնջէին զնմանէ քահանայք, զի ասաց վճարել զպարտս եկեղեցւոյն, և ոչ ասաց հոգալ զպէտս քահանային, լռեալ զայս Գրիգորի եթող զսփսէն, զոր ունէր 'ի ձեռին իւրում՝ ընդունիլ զգպատուս հաւատոց ժողովրդեան, եւ նոցա ունայն ելեալ գնացին իւրաքանչիւր 'ի տեղի իւր, և սահակեալ ոմանց 'ի քահանայից դիմեցին 'ի վերայ Գրիգորի և նախատակած

բանիւք անարգեցին զնա, փոխանակ այնքան բարեացն՝ եւ նորա վիրաւորեալ սրտիւ եւ եւ գնաց 'ի Գալաթիա, զիմոխարէնն այսչափ երախտեաց մերոց, այսպիսի բանիւք վճարեցին ասէ.

Գրիգոր Պատրիարք կարի նեղեալ յերեսաց այլազգեաց սակս չինութեանց և նորոգութեանց վանօրէից յերուսաղէմ, և զի մի զնոյն դառնութիւն կրեսցէ 'ի դարձին իւրում, խնդրեաց 'ի Սուլթան Օսման արքայէ՝ և ետու հրովարտակ վասն այնոցիկ, զի մի հակառակեսցին այլազգիք. Ետու նաեւ հրովարտակ վասն նորոգութեան. Ս. Յովհաննէս եկեղեցւոյն 'ի գաւթի տաճարին Ս. Յարութեան, և դարձ արարեալ անտի, մատոյց զայն առ դատաւորն, եւ եւ ինքն անձամբ 'ի քննութիւն տեղւոյն և 'ի գիր արձանացոյց զամենայն տեղիսն, և պատուիրեաց չառնել աւելի դիրս քան, որպէս խստագոյնս պատուիրէր Արքայ 'ի հրովարտակին, չանցանել երբէք զչափն առաջին և չզարդարել, և եթէ ոք համարձակեսցի, եւ կամ հրաման տացէ՝ կրեսցէ պատիժ ըստ արժանեաց, նմին իրի կարի զգուշանային դատաւորք, իսկ Գրիգոր նորոգեաց զեկեղեցին, և դարձոյց զմեծ կամարն արտաքին, կրեալ նեղութիւնս ոչ սակաւ, ՈՀՈ (1631). Յաւուրց անտի Մարտիրոս Եպիսկոպոսի՝ որ էառ զվերնատունն 'ի տաճարին Ս. Յարութեան. Յետ կորուսանելոյ զԴողգոթային, եւ տահմանեաց զայն եկեղեցի Հայոց. կայր մնայր այնպէս յանձկութեան և անբաւական ժողովրդոց եւ ուխտաւորաց. իսկ Գրիգոր Պարոն Տէր կամելով ընդարձակել զայն՝ էած 'ի քննութիւն զդատաւորն և զայլազգիս քաղաքին, և ետուց զընդարձակութիւն տեղւոյն Լատինաց՝ և զանձկութիւն իւրեանց. և ըստ հրամանի դատաւորին՝ Լատինք հաճեցան զառաջինն տալ Հայոց զերիս կամարս 'ի դիւրութիւն ժողովրդոց, այլ յետոյ ժխտեալ զրանս իւրեանց չոգան առ դատաւորն՝ և յայտ արարին անդ թէ՝ չէ հնար առանց հրամանի Թագաւորացն Եւրոպիոյ տալ մատնաչափ տեղի այլոց, ուստի ոչ կարեմք տալ զկամարան.

Ցեսեալ Գրիգորի թէ ոչ կացին նոքա 'ի խոստման իւրեանց՝ կալաւ զայլ ինն ճանապարհ իրաւախոհութեան, ետ նոցա զՊատէզ կոչեցեալ տեղին առաջի դրան եկեղեցւոյ

նոցին, ուր երեւեցաւ Քրիստոս Մարիամու Մագդաղենացւոյ յետ Յարութեան, և երարձ անտի զմի կանթեղն Հայոց և զմին եհոտ ի նշան, և փոխանակ այնր՝ զոր երարձ՝ ետ կախել զկանթեղն Լատինաց, և ետ նոցա 2 սենեակս անդ ի պարիսպին՝ մին փայտաչէն և միւսն քարուկիր, և էառ ի նոցանէ զերիս կամարս ի վերնատան, փոխարէն այնոցիկ զոր ետ՝ և բարձեալ զմիջնորմն Լատինաց յեկեղեցին Հայոց, որով ընդարձակեցաւ տեղին, եւ պայման եդին Լատինք յաւուր ծնի Զատկի նոցին դնել ի պատուհանս Հայոց ընդ պատուհանաց իւրեանց զոյգ աշտանակս մոմեղինօք, և զինի Տօնին բառնալ զայնս (1632)։

Գլուխ Խբ.

Վէճ Յունաց ընդ Լատինս սակս խնդրոյ Ս. Տեղեաց, և գրաւելոյ Յունացն զԴաղոթայ և զայրն Ծննդեան։ Վէճ ընդ Հայոց սակս Պատանատեղւոյն։ Սաբայի վանքն։ Հակառակութիւն Սերվացւոց և Վրաց։

ՊԱՏՐԻԱՐՔՆ Յունաց Թէոփանէ, որ դնգերկր ի դրունն մեծամեծաց տէրութեանն ի Կոստանդնուպոլիս, յաջողեցաւ առնուլ հրովարտակ Ամրքայէ սակս գրաւելոյ զՍ. Տեղիս յերուսաղէմ. առ ընդ իւր և վերկուս արս ի դրանէ իրրեւ Մուսաղէր, ընդ որս էր և Պայրամ անուն ոմն յազգէ Յունաց։ Ի հասանիլ սոցա յերուսաղէմ ետուն ընթեռնուլ զհրովարտակն ի ժողովին ալլազգեաց, եւ էառ ի Լատինաց Թէոփանէ զմին յերից բանալեաց այրին Ծննդեան ի Բեթղեհէմ, և կախեաց անդ զն կանթեղս. և եդ վերկուս աշտանակս մոմեղինօք ի մէջ այրին։ Ապա ըստ սմանց հրովարտակին պահանջէր ի Լատինաց զմեծ եկեղեցին Բեթղեհէմի, և վերկոսին պարտէզս արտաքոյ նորին, զՊատանատեղին, և զոյգ աշտանակս, և զկանթեղս անդ, վերին և ստորին ՝ կամարս Գողգոթայի, այսինքն զթովանդակ Խաչելութեան տեղին, որպէս էր յառաջագոյն ի ձեռս Հայոց, զորոյ զմի մասն յետոյ տուին Լատինք ի վրաց,

արդէն ասացեալ եմք։ Վերին և ստորին 7 կամարս ի Կուսին կոչեցեալ։ Իսկ Լատինք յետ բազմադիմի վիճմանց և դատաստանաց, ոչ միայն չառին յանձն տալ զնոսա ի ձեռս Յունաց, այլ նաեւ բազում կալան ի կոստադինուպոլիս առ դեսպանն Վենետկոյ՝ յայտ արարեալ զվէճս և զլինդիրս Յունաց, և նորա անյապաղ ծանուցեալ ի Դուռն՝ էառ նաեւ ինքն հրովարտակ վասն Լատինաց, ընդ նմին և զերկուս պաշտօնեայս, և առաքեաց յերուսաղէմ։

Ի հասանիլ հրովարտակին և արանցն, կազմեցաւ ժողով մեծ ի դատարանի, ուր էին Պատրիարքն Յունաց և փոխանորդն Լատինաց հանդերձ միաբանօք, ընթերցաւ հրովարտակն՝ և եղեւ վէճ բազում և դատաստանական քննութիւն, սակայն Յոյնք ոչ կարացին մատուցանել մուրհակս ի հաստատութիւն բանից իւրեանց զոր յառաջ բերէին։ Իսկ Լատինք մատուցին յաւետիս զգրամսթիւ դրեանս և օրինօք հաստատեցին զիրաւունս այրին և զերից դրանց և բանալեաց նոցին։ Ապա ետուն բառնալ անտի զկանթեղսն եւ պաշտանակս, զորս եդին Յոյնք, և վերստին յետս առին զմի բանալի դրան այրին, յետ մնալոյ ի ձեռս նոցա ամիսս 7. և ի դատաստանի անդ վերստին հաստատեցաւ մնալ ի ձեռս Լատինաց ըստ առաջնոյն՝ այրն դրօնքն և բանալիք նոցին՝ ՌԽԲ (1632)։ Եւ ի սոյն դատաստանի մատուցին Լատինք զդէր դատաւորին երուսաղէմի գրեալ ի Թուականի ՉՀԳ (1565)։ Ծորում ընթերցան զընդդիմութիւնն Գերմանոսի Յոյն Պատրիարքի սակս այրին Ծննդեան. զի ի նմին ժամանակի բերեալ էր և նա հրովարտակ Ամրքայէ՝ և կամէր լինել բաժանորդ այրին. և ի լինել դատաստանի՝ ոչ կարաց չահել ինչ. Թէպէտ և պնդէր Թէ զայրն Ծննդեան չինեալ էին Թագուհին Հելինէ մայր Կոստանդիանոսի յազգէ Յունաց. այլ Լատինք մերժեցին յայնժամ զբանս նորա, Թէ նոքա էին յազգէ Լատինաց և Հռոմայեցի. Եւ յերկարել դատաստանին՝ մերժեաւ Գերմանոս, և հաստատուն կացին Լատինք ի տեղիս խնդրանց։ Ցետ այսր քննութեան և դատաստանի վերստին մերժեցան Յոյնք յատենէ, և Թէոփանէ չչահեալ ինչ՝ վերստին դիմեաց ի Դուռն Ամրքայէ. և ի նոյն ամի էառ դարձեալ հրովարտակ, ՌԽԳ (1634)։ յորում խըս-

տադոյնս պատուիրէր Արքայ եւ ընդ նզովիւք արկանէր զանհնազանդսն հրամանի իւրոյ, որով Թէոփանէ համարձակութեամբ տիրեաց բովանդակ այրին եւ եկեղեցւոյն Բեթղեհէմի. հալածեալ անտի զլատինս։ Զայս ամենայն քաղեցաք ի դատաստանական գրոց, տեսցուք արդ զբանս Ծոյն Արաբացի պատմագրի։

Ծորժամ դարձաւ Պատրիարքն Թէոփանէ յաշխարհէն Ռուսաց, եգիտ զմիաբանութիւն իւր ընկճեալ. զի ի բացակայութեան իւրում խոստութիւնք Հայոց եւ Լատինաց զօրացեալ էին ի վերայ Ծունայ, և այրն Ծննդեան էր ի ձեռս Լատինաց. և քրիստոնեայք միայն հրամանաւ նոցին կարէին մտանել անդ։ Ցաւուր տօնի Ծննդեան Տեառն գնաց Թէոփանէ ի Բեթղեհէմ. և ի մեծի եկեղեցւոջ կատարեաց զխորհուրդ Պատարագին. իբրեւ կամեցաւ իջանել յայրն ըստ սովորութեան՝ արգելին զնա Լատինք եւ փակեցին զդրունս ընդդէմ նորա. և ասէին թէ՝ դռնապանն գնացեալ իցէ յերուսաղէմ. եւ ի բացակայութեան նորին չէ հնար ումեք բանալ զդուռն։

Տրտմեցաւ Պատրիարքն ընդ այս, եւ թերի թողեալ զխորհուրդ Պատարագին, ել յեկեղեցւոյն և դարձաւ յերուսաղէմ։ Իբրեւ տեսին Լատինք թէ լուաց Պատրիարքն և ոչ ազդ արար զեղելոյն ի Դուռն Արքայի, համարձակեցան տիրել բովանդակ Գողգոթային. և արգելին անտի զՅոյնս, և բացին պատուհան ի վերուստ ի վերայ Պատրիարքական աթոռոյ նորին, որով եղեւ տրտմութիւն եւ ցաւ սրտին Թէոփանեայ, և այլ ոչ ևս կարաց լուել և համբերել. չոքաւ առ դատաւոր քաղաքին, և մատոյց զամենայն գրեանս առաջին թագաւորաց. և նորա ընթերցեալ զայնս, հրամայեաց երթալ տիրել Գողգոթային և այրին Ծննդեան, ի խլրտիլ Ծունայ, Լատինք որպացին ի կողմն իւրեանց զբիգելեան երուսաղէմի, տալով նմա բազում ինչ. եւ նա խոստացաւ առնել ըստ կամաց նոցին. և կալեալ զՊատրիարքն Ծունայ զԹէոփանէ եդ ի բանտի, եգեալ ի մոլ բառնալ զնա ի կենաց. այլ միջնորդութեամբ դատաւորին եհան զնա ի բանտէն, և նորա եկեալ նստաւ ի տուն իւր, և ոչ կարէր ելանել արտաքս յահէ Լատինաց։ Եւ ի տօնի եղիայ Մարգարէի՝ ել ի դիշերի գաղտ յերուսաղէմ,

եւ դէմ եգեալ գնայր ի Պաղտմայիս։ Լուեալ Բդեչխին զփախուստն, արձակեաց զօրականս զնոր, զի կալեալ զնա ի ճանապարհի դարձուսցեն յետս եւ դիցեն ի բանտի. զինուորքն հասին առ նա ի լճառն Կարմելոս, և ատիպէին զնա դառնալ յետս, և նա ազաչէր զնոսա եւ յորդորական բանիւք խրատէր՝ չլինիլ պատճառ տարապարտ մահուան իւրոյ։ Իսկ զինուորքն, որք յառաջադոյն քրիստոնեայ էին յաղթէ Հապէշոյ. դէպացեալ թողին զնա երթալ յո՛ և կամէր. եւ առեալ պարգեւ ի նմանէ ոսկիս 100. դարձան առ Բդեչխն և առացին՝ ոչ կարացաք դառնել զնա։ Իսկ Պատրիարքն Թէոփանէ յապահով հասեալ ի Պաղտմայիս, եւ անտի նաւեաց ի Կոստանդինուպոլիս, և եղեալ ի կայսերական ատեանն բողոք երկար զդպրոց Լատինաց. առաջի դնելով զխրովարտակս Սուլթանաց. և առեանն հրամայեաց տիրել Ծունայ ըստ մտաց հրովարտակաց, բովանդակ Գողգոթային, այրին Բեթղեհէմի, եւ Պատանատեղոյն, և վասն այսր գրեցաւ հրովարտակ ընդարձակ՝ մինչեւ տալ գրել ի նմա զվանօրայս այլոց քրիստոնէից. Թէոփանէ առեալ զայն՝ դարձ արար յերուսաղէմ, արտաքսեաց զլատինս ի Գողգոթային և յայրէն Բեթղեհէմի. բայց դէպացեալ ի նոսա եթող կախել զկանթեղս ի վերայ Պատանատեղոյն։ Իբրեւ էանց ի վերայ այսր ամիս իբրեւ ՅՇ. առաքեցին Լատինք առ Վէզիրն Իպրահիմ Փաշայ քսակս դրամոց իբրեւ 16,000 դահեկան՝ և ձգեցին զնա ի կողմն իւրեանց. առին ի Թիկունս զգենեական մեծ և զայլս ի նախարարաց աշրուբէանն, եւ վէզիրն խնդրեալ յետս հան զհրովարտակն ի Պատրիարքէն Ծունայ, զոր տուեալ էր Սիւլէյման Արքայն որդի Սուլթան Մուրատի, և հանեալ անտի զանունն Ծունայ՝ և ի տեղի նորա դրեաց զանուն Լատինաց. և ետ հաստատել զայն Արքայի ձեռագրով նորին։ Զի նախնին քո ասէ Սուլթան Սիւլէյման, Լատինաց պարգեւեաց զՍ. Տեղիս երուսաղէմ, և ոչ Ծունայ. և այս հրովարտակ է նորա. հաւատաց Սուլթանն, և ետ հրաման լինել այնպէս. ընդ որ ուրախացան յոյժ Լատինք, կարծելով թէ՝ տեւական է հրամանն։

Եւ ի սմին ժամանակի պատրիարքն Թէոփանէ էր ի կողմանս Վալաքիոյ, իբրեւ լուաւ զդործս Լատինաց՝ իբ-

ռովեցաւ յոյժ, և այլ ոչ եւս կարացեալ մնալ անդ՝ գար-
ձաւ ՚ի Կոստանդինուպոլիս, բայց ոչ եդիտ զվէրին Խս-
րահիմ՝ զի դնացեալ էր նա ՚ի պատերազմ. կարգեալ ՚ի
տեղի իւր փոխանորդ զՄուստաֆայ Փաշայ՝ ազգաւ Այր-
նաւլուտ, սերեալ քրիստոնէից՝ և ձեռնտու գործոց նոցին-
առ սա զիմացս Պատրիարքն գտանել օգնութիւն ընդ-
դէմ Լատինաց. բայց նա չհամարձակեցաւ առնել ինչ, այլ
խրատ ետ եւ ասէ՝ խնդիրն որ ՚ի մէջ ձեր եւ Լատինաց,
բաց յԱրքայէ ոչ ոք կարէ լուծանել. և յորժամ յանդի-
ման լիցիս խնդրել ինչ ՚ի նմանէ, հարցանէ նա զազգն և
զտեղին զոր խնդրես, և ոչ կամի խոտանել զիրաւունս
ուրուք, եւ նորա արարեալ այնպէս. ապա մատոյց զիր
աղաչանաց՝ և Արքայ կոչեաց զտեղակալ Վէզիրին զՄուս-
տաֆայ՝ և ՚ի հարցանել նմա վասն խնդրոյն՝ նա հաստա-
տեաց զբանս Յունաց. և Թագաւորն կոչեաց զմին ՚ի ծա-
ռայից իւրոց ասէ՝ երթ յԵրուսաղէմ, և գտցես առ Յոյնս
զամենայն տեղիս՝ զոր առեալ են Լատինք. Դարձաւ Թէ-
ոփանէ հրովարտակաւ և ստիպեաներ ՚ի Ս. Քաղաքն՝ կա-
տարել զհրաման Արքային. մնին ՚ի տաճարն Ս. Յարու-
թեան և բացին զդուռն Գերեզմանին Քրիստոսի, զոր փա-
կեալ էին Լատինք ամիս 9. և տիրեցին նմա Յոյնք, նաեւ
Գողգոթային՝ և այրին Ծննդեան. և Պատրիարքն եւս հր-
բաման քահանային իւրոց՝ բառնալ զկանթեղս Լատինաց՝
՚ի Գողգոթայէ՝ և յայրէն Ծննդեան. իրրեւ տեսին Հայք՝
թէ բարձին զկանթեղս Լատինաց, բարձին նաեւ ինքեանք
զկանթեղս իւրեանց եւ հանին արտաքս, Յոյնք հարցին
ընոսա զպատճառն թէ՝ ընդէ՞ր հանէք զկանթեղս, և ոչ
հալածէ զձեզ. Հայք ետուն պատասխանի, դուք հանիք
զկանթեղս Լատին եղբարց մերոց, և մեք ոչ կամիմք բա-
ժանիլ ՚ի նոցանէ ՚ի բարիս և ՚ի չարիս, գիտեմք զի զկնի
սակաւուց ատենն Լատինք Ս. Տեղեաց, և զկանթեղս իւ-
րեանց կախեն ՚ի տեղիս, որպէս և էրն, յայնժամ և մեք
կախեմք զկանթեղս մեր (1), Թէպէտ գրեալ էր ՚ի հրովար-

(1) Բանք Յոյն պատմագրին երեւի զանգեալ սուտեամբ. զի յա-
ռաջագոյն Լատինք բարձին զկանթեղս Հայոց և արգելին զնոսա յայրէն
Ծննդեան, յետ բաղմագիմի խռովութեանց, որպէս գրեցաք ՚ի նախըն-
թաց գլուխս:

տակին թէ՝ նախ Բեթղեհէմի վանքն Լատինաց տացի Յու-
նաց, բայց Թէոփանէ ասէ, թուական է զՍ. Տեղիս զոր
առաք ՚ի Լատինաց իբր իրաւունք մեր, եւ վանքն այն
յառաջադոյն նոցա էր՝ և չէ լինձ փոյթ վասն այնր. Այլ
Թէոփանէ մինչդեռ էր ՚ի Կոստանդինուպոլիս խոստացեալ
էր Արքային հատուցանել մի ըստ միոյ 310 ոսկիս ՚ի մղկի-
թէն Սուլթան Ահմէտայ, զի մի վերստին բողոք բարձցեն
Լատինք ՚ի Դուռն՝ վասն Ս. Տեղեաց. Որպէս տեսանի
այս նաեւ ՚ի հրովարտակս, Յոյն պատրիարքն յետ վճա-
րելոյ զդրամս իւր ընդ Լատինաց, սկսաւ հակառակիլ նա
եւ ընդ Հայս. նախ կամեցաւ խափանել զկոչնակն զոր
հարիանէին ՚ի ժամս իւրեանց ՚ի տաճարին Ս. Յարութեան,
՚ի սահմանել վիճմանց և խռովութեանց՝ ստիպեցան Հայք
դատաստանաւ վճարել զդործն՝ և յանդիման լինել դա-
տաւորին երկուց կողմանց, Հայք մատուցին զհրովարտակն
զոր ունէին վասն այնր, որով խափանեցաւ ընդդիմու-
թիւնն Յունաց.

Թէոփանէ ՚ի դատաստանին Լատինաց, ետ բառնալ
զերիցուս աշտանակս Լատինաց ՚ի Պատանատեղւոյն Քրիս-
տոսի, և ՚ի տեղի նոցա եդ զիւրն, և չչատացեալ այնու՝
կամեցաւ բառնալ անտի և զաշտանակս Հայոց, որով ծա-
գեցաւ դարձեալ խռովութիւն մեծ. իսկ Քրիստոր Պատ-
րիարք առաքեաց առ դատաւորն զփոխանորդ իւր զՅովնիկ
որդի Մալիճայ, և ասէր ոտան եղեւ զՊատրիարքէն Յու-
նաց, զի ՚ի հրովարտակի նոյն ոչ էր յիշեալ անուն ազ-
գին Հայոց, եւ ոչ բառնալ զաշտանակս նոցա, կոչեցաւ
փոխանորդն Յունաց, ընթերցան զդրեանս Հայոց, ապա
եհարց դատաւորն զպատճառս հակառակութեանն. Իսկ
փոխանորդն Յունաց իրրեւ գիտաց թէ չիք ՚ի հրովար-
տակին անուն Հայոց՝ ժխտեաց յատենի անդ. թէ չեն
որարեալ ինչ՝ եւ թէ չունին հակառակութիւն ինչ ընդ
Հայս, և թէ՛ ունին նոքա աշտանակս անդ ՚ի վաղ ժամա-
նակաց եւ ինքեանք լուցանեն զմոմեղէնս, այսպէս լու-
ծեալ զխնդիրն մեկնեցան անտի. ի սմին ժամանակի Նո-
րագեղին վիրք զՄաշալանքն իւրեանց, որպ ՚ի քննութիւն
եկ դատաւորն հանդերձ մեծամեծօք, և ոչ եդիտ զաւե-
լորդ իրս, որպէս սակրատանալ էին այլք (1633).

Ի թուին Հայոց ՌՀԴ (1634), և ի Պատրիարքութեան Ս. Աթոռոյն Երուսաղէմի Տ. Գրիգորի Արք Եպիսկոպոսի Պարոն Տէր կոչեցեալ, պատահեցաւ դարձեալ այլայլութիւն Զատկի որ ասի ծառատիկ, որպէս բազմից պատահեալ էր յառաջագոյն։ Իսկ Գրիգոր Պատրիարք նախ քան զժամանել աւուրն՝ հոգայր մինչ դարմանել զիրան, որոյ վասն գրեալ ազդ արար յայլ և այլ կողմանս Հայոց եւ վիճակաւոր առաջնորդացն՝ և հրաւիրեաց զնոսա գալ ժողովիլ յԵրուսաղէմ. զի գիտէր իսկ թէ առաջի կայ նմա խռովութիւն մեծ ի հանդիսի Լուսաւորութեան, բազմադիմի ծախք և կասկած արիւն հեղութեան, որպէս լեալ էր յառաջադոյն, և ընթերցեալ ի պատմութիւնս Կիրակոսի և Վարդանայ, թէ որպէս կոտորեցին այլազգիք ի քրիստոնէից զարս իբրեւ 11000, այլ կարճութիւն ժամանակին ոչ ներեաց հասանել ժողովրդոցն յԵրուսաղէմ եւ կամ օգնել ընչիւք։ Իսկ Ցոյնք՝ ըստ ազգարարութեան Պատրիարքի նոցին, զեղան բազմութեամբ ի Ս. Քաղաքն յամենայն կողմանց, յորս յատկեան Ռուսք, Վիրք, Պուլղարք, Ուլահք, Սկրվիացիք, Պոսնացիք, Նաւարքք և այլ խառնիճաղանճ բազմութիւն. առին հրովարտակ յԱրքունուստ եւ ածին դռնապահապետ (Գարուճի Պաշի)։ Զգեցին ի կողմն իւրեանց մեծամեծ տրօք զգլխաւորս քաղաքին, և սկսան սաստիկս սպառնալ Գրիգորի Պատրիարքի, եթէ ոչ դառնայ ի կրօնս մեր և լինիցես հպատակ կանոնաց և հրամանաց մերոց, ոչ միայն ճշմարտեմք զԶատիկն մեր, այլ և կորզեմք բռնութեամբ զեկեղեցիս ձեր, և բառնամք զգլուխդ յանձնէդ։ Տեսեալ Գրիգորի զանհնարին խըռտութիւնս սրտից նոցա, սկսաւ ազաչել զնոսա, զի սիրով խաղաղացնէին, երկիցս եւ երիցս հրաւիրեաց զգլխաւորս նոցա ի ճաշ, և խօսեցաւ նոցա բազում բանս խաղաղականս, բայց նոքա բնաւ ոչ հաւանեցան բանից նորա։ Այլ արհամարհեալ ծիծաղէին և առիպէին զնա եւս զի յանձն առցէ իւրովքն հանդերձ տօնել զԶատիկն ի միասին։ Ապա յղեցին զոմանս ի Կոստանդինուպոլիս, և ի Դամասկոս առ կուսակալն Ահմէտ Փաշայ և առաքատան եղեն զՊատրիարքէն և զազգէն Հայոց, թէ բռնութեամբ արգելուն զմեզ յեկեղեցւոյ Ս. Յարութեան կատարել զԶատիկն ըստ սո-

վորութեան, առաջի եդեալ նմա զվճիռ գենպետին Դամասկոսի։ Իսկ կուսակալն դրեաց առ դատաւորն երուսաղէմի, և առաքեաց զայն ի ձեռն պաշտօնէին իւրոյ Շահ օղլու կոչեցեալ, ի բաց վանել զՀայս եւ թոյլ տալ Յունաց տօնել զԶատիկն։ Եւ ի սոյն աւուրս հասին ի Կոստանդինուպօլսոյ Գարուճի պաշի Խոզրով բերեալ ընդ իւր գիր ի մեծէ Եալչըքոսէ, և ընդ նմա արք ոմանք ի Յունաց, և մատուցեալ զգիրն առ դատաւորն՝ ասէ, Ցոյնք ծանուցին զընդդիմութիւնս Հայոց, և նա՝ առ հրովարտակ յԱրքայէ, և ինքն եւս գրեաց զթուղթս, և առաքեաց զնս ընդ ճանապարհին Բերիոյ ընդ արագ Յունաց։ Իբրեւ տեսին Ցոյնք թէ՝ զօրացան յամենայն կողմանց, վերստին ազդ արարին Գրիգորի Պատրիարքի և ասեն՝ եթէ ոչ տօնես ընդ Զատիկն ընդ մեզ, ոչ կարես ապրեցուցանել զքեզ և զքոյսդ ի ձեռաց մերոց, սպառնացան նաեւ Աստրուց Գըպթոց և Հապեշոյ, և նոցա ոչ անսացեալ բանից նոցա, եկին ի վանս Հայոց։ Եւ այնուհետեւ սկսան Ցոյնք խրոխտանօք շրջիլ ի մէջ քաղաքին սրօք եւ բրօք՝ իբրեւ արքունի հրամանաւ, և չարիս հասուցանել Հայոց, իսկ Գրիգոր վերստին գրեաց գիր թախանձանաց առ գլխաւորս ազգին յայլ և այլ կողմանս, այլ վասն կարճութեան ժամանակին՝ ոչ յուստեքէ եհաս նմա օգնութիւն, ապա անհարացեալ ազդ արար քաղաքապետին զտատահակութիւնս Յունաց, դիմաց առ դատաւորն և առ գլխաւորս քաղաքին և ծախեալ զ20,000 դահեկանս հաճեցոյց զմիտս նոցա, խորտակել զտատահակութիւնս Յունաց, յորմէ ունէր ծագիլ մեծամեծ խռովութեանց և չարեաց, եթէ ուղիղ էին միաք նոցին՝ ի՞նչ հարկ կայր այսչափ բազմութեան դիզանիլ ի քաղաքիս, պատճառելով զոմն Զատկի։ Իսկ դատաւորն ի վերայ այսր արար ժողով մեծ, ուր կոչեցան մեծամեծք և գիտնականք այլազգեաց, իբրեւ 120 արանց, կոչեցան անդ Գրիգոր և փոխանորդն Յունաց Պապա Տիոն, քահանայք Աստրուց, Գպթոց և Հապեշոյ, եւ 2 կրօնաւորք ի Լատինաց, այլազգի դռնապանք Ս. Յարութեան, եւ այլք։ Եւ դատաւորն մի առ մի հարցանէր նոցա վասն տօնի Զատկին, յետ ընթեռնուլոյ զգիր կուսակալին Դամասկոսի, զոր գրեցաք, և նոքա այր իւրաքան-

չիւր ըստ հաճոյից իւրոց ետուն պատասխանի, և 'ի վերջոյ եհարց ցայլազգի դեսպանսն, և նոքա ասեն, յետ տօնի արմաւենեաց, յորում գնան այլազգիք յուխտ 'ի գերեզման Մովսէսի, զի յերկկոյն շարաթուն եկեալ կանգնեն Ցոյնք, Հայք, Գաթիք, Հապէշք և Ասորիք առ գմբեթի Գերեզմանին, և ազգ առնեն Պատրիարքին Հայոց առաքել զմի ոք և կոչել զտեսուչն Հապեշից, զի նոցա է սեփհական վաճել զկոյն, զի հետեւակ են Հայոց, եւ եթէ ոչ եկեսցեն նոքա, ոչ վաճի լոյսն։ Յայսպիսի երիար եւ սարսափուր քննութիւնս չեղեւ նախատ լինչ Հայոց, այլ հաստատեցին զբանս Ցունաց, ակն ածեալ 'ի կուսակալէն Դամասկոսի։ Սակայն հանին հրաման 'ի բաց առնուլ ըզգինս 'ի Ցունաց, և 'ի չարիս պահել զխստութիւնս նոցա։ և չթողուլ մտանել 'ի քաղաքն զինուք։ Ընդ աւուրսն ընդ այնոսիկ եկն յուխտ յերուսաղէմ Բալիչեցի Աւետիք անուամբ ոմն, որ էր հանդերձապետ (Քիւրճի պաշի) կին չիւք Ահմէտ Փաշային, որ եկեալ էր յայնժամ 'ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի 'ի վերայ ապստամբեալ ազգն, որում անուն էր Մաւ ողբ։ Սա ինքն Աւետիք տեսեալ զչփոխութիւնս Ցունաց, չոքաւ վաղվաղակի առ Ահմէտ Փաշայն և ծանոյց նմա զամենայն անցս երուսաղէմի։ և նա փութանակի առաքեաց զարս առ Բդեչխն Դամասկոսի, և ազդ արար նմա սանձել զատահակութիւնս Ցունաց և պաշտպան լինիլ Հայոց։ և նա յղեաց զին 'ի հազարապետաց գնդաւ իւրով, որոյ եկեալ յերուսաղէմ խոստեցաւ ընդ քաղաքապետին, և մատոյց զդիր Կուսակալին առ դատաւորն։ եւ նա ընթերցաւ 'ի ժողովի, որ ունէր օրինակ զայս։ «Արդ որոշեցաւ՝ զի տօնեսցեն Հայք յայսմ ամի զՋատիկն իւրեանց 'ի 23 Շէվվալ ամսոյ, յորում պատահի ուխտագնացութիւն այլազգեաց 'ի գերեզմանն Մովսիսի։ իսկ Ցոյնք որք գնետ մնացեալ Լանան չարաթաւ միով յառաջ տօնել, խոստացեալ են 'ի կանոնէ և 'ի նախկին սովորութենէ։ Գրեալ 'ի 17 Շէվվալ ամսոյ։

Իսկ հպատակեան եկեալ եկաց 'ի դուռն Մ. Գերեզմանին 'ի նախընթաց աւուր Զատկին Ցունաց, և 'ի բաց վանեալ անտի զնաւս վաճառաց զդուռն և կնքեաց, և ոչ եւս թոյլ մտանել ումեք 'ի ներքս, և ապա յետ միոյ չա-

բաթու 'ի հաւանիլ Զատկին Հայոց, եւ բանալ զդուռն, և կատարեցին Հայք զՋատիկն հանդիսիւ, և ապա գնացին իւրաքանչիւր 'ի տեղիս իւրեանց։ Ընդ որ զայրացեալ Ցունաց՝ գնացին 'ի Կոստանդինուպոլիս, և ետուն ըմբռնել զարս երկուս 'ի Հայոց, Մինաս քահանայ և Ալաճաճի Սէֆէր՝ և մատնեցին յատեան դատաւորին։ և նոքա թէպէտ ցուցին զանձինս իւրեանց գոլ անպարտ, սակայն դատաւորն ստիպեաց զնոսա ուրանալ զհաւատս, և դառնալ 'ի կրօնս նոցին։ այլ նոքա հաստատուն կացեալ 'ի քրիստոնէական հաւատս, կատարեցան սրով։ Իսկ Գրիգոր Պատրիարք յետոյ բազում աշխատութեամբ վճարեաց ըզպարտսն, զոր արարեալ էր վասն այսր գործոյ։

Ցետ կատարելոյ զխնդիրս Մ. Յարութեան Տեառն, խոհականութեամբ և զգուշութեամբ վինու, գրեցին դատաւորն քաղաքապետն եւ ամենայն արք երեւելիք հանրապէտիր 'ի Կոստանդինուպոլիս առ Արքայն Սուլթան Մուրատ Դ. յայտ արարեալ զամենայն անցս, որ անցին 'ի մէջ Հայոց և Ցունաց՝ յաղագս խոտորման Զատկին։ եւ թէ ո՛րպէս լուծաւ խնդիրն օրինօք դատարանի, եւ տուաւ գիր 'ի ձեռս երիցանց իւրոց։ Եւ Արքայն տեղեկացեալ ամենայն հանգամանաց գործոյն՝ գրեաց հրովարտակ առ կուսակալն Դամասկոսի և առ դատաւորն Երուսաղէմի՝ բառնալ զհակառակութիւնս Ցունաց, եւ չտալ թոյլ գործել ումեք ընդդէմ վճռոյ դատաւորին՝ նախնի սովորութեանց և կայսերական հրամանին, իրաքանչիւր ազգ տօնել զՋատիկն ըստ իւրոց սովորութեան, զոյս հրովարտակ կուսակալն առաքեաց թղթով իւրով առ դատաւորն Երուսաղէմի ըստ խնդրանացն Հայոց։

Զպատմութիւն Մուազատի ընդ Ցոյնս, եդաք 'ի կարգի գործոյս ըստ աւանդելոյ ձեռագիր պատմութեան գրեալ 'ի նմին ժամանակի հրամանաւ Գրիգորի Պատրիարքի, յորմէ առեալ է եւ Հ. Մ. Զմլեան. Պտմ. Հայ. Հաթ. Գ. երես 615։ Իսկ մեք չընթացաք բանիս, չաւելաք ինչ ինչ 'ի հրովարտակաց և 'ի դատաստանական գրոց, առանց եզծանելոյ զկարգ պատմութեանն։ Սակայն 'ի պատմութեանն և 'ի դատաստանական գիրս երեւի փոքր ինչ անհամաձայնութիւն բանից, զի 'ի պատմութեան գրի, «եկեալ

հազարապետին 'ի բաց վանեաց անտի զՅոյնս եւ փակեալ զդուռն »։ Այլ վասն Ցուներց Զատիկին բացայայտ չգրէ ինչ, Թէ յորո՞ւմ աւուր և ո՞րպէս ոտնեցին զԶատիկն։ Զի 'ի ժամանել նահակի կուսակալին Դամասկոսի և հաղարապետին, եւ 'ի դատաստանի 'ի պատուիրելն փոխանորդին Ցունաց, չընդդիմանալ Հայոց ըստ հրամանին. Նա պատասխանի առնէ յատենի անդ, « Թէ՝ Զոյնք ոտնեցին զԶատիկն իւրեանց մինչ եօթնեկաւ յառաջ, և սովորական Լոյսն էլ վասն նոցա. այժմ չունին երբէք վճռ և հակառակութիւն ընդ Հայս եւ ընդ հետեւողս նոցին »։ Ի բանից աստի բացայայտ երեւի Թէ՝ Զոյնք սրարեալ են զԶատիկն յառաջագոյն, և ապա Հայք. զի անկարելի էր խափանել զԶատիկն նոցա, և տալ ոտնել ընդ Հայոց։ Իսկ խառնուածքն ծագեալ 'ի մէջ՝ էր այս. զի Զոյնք երբեւ զբաւոր ազգ կամէին հետեւեցուցանել ինքեանց զՀայս, եւ զայլ քրիստոնեայս, որպէս լեալ էր բազում անգամ, որոյ ոչ հաւանեալ Հայոց, ծագեցան գժտութիւնք եւ աղմուկք մեծամեծք. մինչեւ լուծանել խնդրոյն օրինօք դատարանի եւ զինուք։ Իսկ որ ասի Թէ՝ Զոյնք առելութեամբ մտանեցին զարս երկուս, դարձեալ 'ի նոյն բան հայի, Թէ ընդէ՞ր առանձին ոտնեցին Հայք, զայսքան բաւական համարեալ մեր վասն ծառազատի, տեսցաք զայլ գէպս, որք պատահեցան 'ի սմին ժամանակի։

Եկեղեցականք Վրաց՝ որք բնակէին յերուսաղէմ, նըշկահեցին զՊատրիարքն Ցունաց Թէոփանէ, և չկամեցեալ հնազանդիլ հոգեւոր իշխանութեան նորա. ասեն, ունիմք մեք Պատրիարք յաշխարհի մերում. և բաց 'ի նմանէ չճանաչեմք զայլ ոք իշխան 'ի վերայ մեր, և Թէ չունիմք այլ եւս տէրս Պատրիարքին Ցունաց։ Զնոյն արարին և Սերվիացիք, որով անկաւ գժտութիւն եւ հակառակութիւն 'ի մէջ Սերվիացւոց և Ցունաց, և 'ի սմին ժամանակի կայր տակաւին վանք Ս. Սարայ 'ի ձեռս Սերվիացւոց, և նորոգեալ ամրացուցեալ էին զայն պարսպօք եւ աշտարակօք, և զվանքն Ս. Մխայելի յերուսաղէմ, և ատիկին զՅոյնս տալ ինքեանց առանձին տեղի 'ի տաճարին Ս. Յարութեան, կատարել անդ զպաշտօնս իւրեանց, և բաժանիլ 'ի նոցանէ։ Տեսուչք վանօրէից Սերվիացւոց համարձակեցան կրել

իշխանական գաւազան, մինչեւ նոյն իսկ առաջի Պատրիարքին Ցունաց. 'ի զայրանալ և 'ի թշնամանալ սորա, Սերվիացիք բողոք կալան առ Պատրիարքն Կոստանդինուպոլսի և յայլ յաթոռս, նոցա յարուցեալ նկին չերուսաղէմ. եւ 'ի ժողովի մերժեցին զբռնութիւն Պատրիարքին երուսաղէմի, և եւս վճիռ չկրճել 'ի վերայ Սերվիացւոց, զի նոքա ունին Արք եպիսկոպոս յաշխարհն իւրեանց. նմա անկէ հովուել զոտս. եւ այսպէս որոշեցան Սերվիացիք 'ի Ցունաց 'ի ժամանակս Թէոփանէ Պատրիարքին, (1634)։ Սակայն Սերվիացիք կորուսեալ զառաջին ճոխութիւնս և զփառս, անկեալ էին 'ի ներքոյ պարտուց. մինչ զի խորհիլ վաճառել զամենայն ինչ, և դնալ այր իւրաքանչիւր յանդէպ երեսաց իւրոց. եւ մնացեալ էր միայնակեր վանք Ս. Սաբայ, եւ Ս. Մխայելի, մերձ 'ի վանս Լատինաց, զոր կամէին գնել նոքա. եւ Հայք եւս տիրել կամէին վանաց Ս. Սաբայ, զոր Թողեալ էին յայնժամ Սերվիացիք։ Լուեալ զայս Թէոփանէայ զայրացաւ յոյժ և երդուաւ իսկ չթողուլ Հայոց և Լատինաց տիրել վանօրէից։ Զի Սերվիացիք առեալ էին պարահօք 54,000 դահեկանս եւ գվանօրայս եդեալ 'ի գրաւ. կոչեալ զնոսա եւս նոցա զգուռարն զայն, պատուիրեալ հատուցանել զպարտսն և ազատել զվանօրայս. յորոյ վերայ զայրացեալ Հայոց եւ Լատինաց, ազգ արարին Բդեշխի քաղաքին եւ մեծամեծաց. եւ նորա կոչեալ զՊատրիարքն Ցունաց խնդրէր 'ի նմանէ հատուցանել զպարտս Սերվիացւոց, զոր պարտ էին Տէրութեան. եւ կամ հանել 'ի վաճառ զերկրսին վանն, առ 'ի վճարել զպարտս Տէրութեանն. և նա խնդրեաց 'ի նմանէ պայման ժամանակի, և ելեալ յերուսաղէմ գաղտ չոքաւ 'ի Պուղտան, այն է Բօսնեայ. և ել առաջի վասիլ Պէյի՝ եդեալ արաման 'ի պարանոց իւր, և 'ի հարցանել նորա զպատճառն, նա պատմեաց նմա զամենայն անցս երուսաղէմի. եւ եւս նմա 6000 ոսկի վճարել զպարտս։ Եւ մինչդեռ զեգերէր նա անդ՝ եհաս առ Պէյն ոստիկան 'ի Թագաւորէն և խնդրէր 'ի նմանէ զՊատրիարքն, տանել 'ի Թագաւորեալ քաղաքն եւ դնել 'ի բանտի մինչեւ հատուցանել նմա զպարտսն. եւ Պէյն եւս նմա 6000 ոսկիս եւս եւ արձակեաց զպատիկանն. յորեան եւ այլ գրամա-

տեարք, և խնդրէին 10,000 ոսկիս, և զայն եւս ետ. եւ 'ի վերջոյ ետ նմա 40,000 ոսկիս հատուցանել զամենայն պարտսն։

Իսկ Թէոփանեայ Հ'շատացեալ այնու 'ի դառնալ իւր յերուսաղէմ յամի 1639 ժողովեաց զամենայն եկեղեցական զարդս արծաթ և ոսկի մերկացուցեալ զեկեղեցիս, և առաքեաց յԱղէքսանդրիայ վաճառել զայնս, իմացեալ զայս ազգայինք նոցին անդ՝ ժողովեցան 'ի խորհուրդ, և մի ոմն յերեւելեաց նոցին դնեաց զամենայն անօթսն, անթերի վճարեալ զդինն, և զսպասն վերստին դարձոյց յեկեղեցիս երուսաղէմ 'ի յիշատակ իւր. այսպէս պատմէ Ծոյն Արաբացի պատմիչն։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Ընդհանրին Ծունաց. Տալ գրել Գրիգորի զգամին տեղիս Հայոց։ Գիւղականք Բեթղեհէմի. Տան Զատկի. Վանք Փրկչի. Չ կանթեղ 'ի Ս. Ննոնդ. Վանք Բեթղեհէմի եւ խանն. Մահ Գրիգորի Պատրիարքի. Ամիր Ագիզ.

Ի ՍՄԻՆ ժամանակի Ծոյնք տիրէին այրին Ննդեան Քրիստոսի և մեծի եկեղեցւոյն Բեթղեհէմի՝ Արքունի հրովարտակաւ, եւ 'ի ձեռս նոցա էր փականք դրանցն։ Դէպ եղեւ Գրիգորի Պատրիարքի գնալ 'ի Բեթղեհէմ, և ըստ սովորութեան իջանել յԱյրն սակս ուխտի, և մինչ կայր նա անդ յաղօթս, եհաս սպասաւոր Բգեչխին Քէնան աղա, ըստ գանկատանացն Ծունաց, եւ կոչեալ զԳրիգոր էած յերուսաղէմ և կացոյց առաջի դատաւորին, եկն և Աթանաս փոխանորդ Պատրիարքին Ծունաց, և սկսաւ ամբաստան լինել զԳրիգորէ՝ և ասէ, Կայսերական հրովարտակաւ փականք այրին Ննդեան Քրիստոսի են 'ի ձեռս Ծունաց, և չէ օրէն առանց հրամանի Պատրիարքին մտանել ուրեք եկեղեցին, ոչ 'ի Հայոց և ոչ 'ի Լատինաց և ոչ յայլոց քրիստոնէից։ Իսկ Գրիգորդ այդ՝ եմուտ անդ. ի հարցանել դատաւորին, եթ պատասխանի Գրիգոր՝ եւ

ասէ, եթէ փականք Այրին 'ի ձեռս Ծունաց է՝ ուրեմն նոքա բացին զդուռն, և դիտութեամբ նոցին մտի յայրն, և դատաւորն յեցեալ 'ի բանս հրովարտակին, պնդէր թէ չէ օրէն մտանել ուրեք անդ առանց հրամանի Ծունաց։ Գրիգոր Պատրիարք կացոյց վկայս յայլազգեաց, թէ Աթանաս ինքն եբաց զդուռն Այրին, և այլ բանիւք ջանայր ազատիլ 'ի զրպարտութենէ Ծունաց, այլ դատաւորն ոչ կամեցաւ լսել բանից նորա, որով անկաւ Գրիգոր Պատրիարք 'ի տուգանս, և տուեալ ինչս դատաւորին և մեծամեծաց զերծաւ 'ի վտանգէն։ Ի \։ Շապատ ամսոյ, \։չ (1635)։ Իսկ ձեռագիր յիշատակարան մի ասէ, թէ դատաւորն սպառնայր արկանել զնա 'ի գեհեն հնոցի, եւ նորա տուժեալ 1000 դահեկանս, հազիւ զերծաւ 'ի բռնութենէ Ծունաց։

Ցաւուրս յայսոսիկ սաստկանայր օր քան զօր վէճ եւ խռովութիւն 'ի մէջ կրօնաւորաց երից ազգաց՝ 'ի տաճարին Ս. Յարութեան, սակս լուցանելոյ զկանթեղս՝ աւել ածելոյ եւ մաքրելոյ, իւրաքանչիւր ազգ զսեփհական տեղիս իւր, և ջանային անցանել զսահմանն որոշեալ՝ և յափշտակել զիրաւունս միմեանց։ Ցայսպիսի դէպս բազում անդամ հարսահարեալ լինէին Հայք, 'ի Ցոյն և 'ի Լատին կղերից, և 'ի գրգռիլ բանից հարկանէին զիրեարս բրօք և մահակօք. և այսպէս անվերջանալի էր վէճն։ Գրիգոր Պատրիարք կամեցեալ դիւր առնել փոքր ինչ իւրոցն, առաքեաց առ դատաւորն զԹարգմանն Տօնիկ, և խնդրեաց 'ի նմանէ 'ի գրի հարկանել զրովանդակ սեփհական տեղիս Հայոց, զկանթեղս զաշտանակս և զսովորութիւնս, որք կատարին անդ, եւ նա արար այնպէս. ուր էին նաեւ Ցոյն և Լատին կղերք, և պատուիրեաց նոցա չյանդգնիլ ումեք ձեռն մխել յիրաւունս այլոց, և յարուցանել վէճս։ Ի \։ Էպիլ ամսոյ, \։չ (1636)։

Այլ մինչդեռ զբաղեալ էր Գրիգոր հանդարտել զվէճս Ս. Յարութեան, յարեան ոմանք յազգէն Ծունաց որք բնակէին 'ի Բեթղեհէմ. և կաքէին ընդ Գրիգորի Պատրիարքի, որպէս թէ յափշտակեալ իցէ զդերեզմանատունն նոցին և արարեալ պարտէզ, թէպէտ նա առաջի արար նոցա զվաւերական գրեանս վասն այնր տեղւոյ, և հաստատեր լինել սեփհա-

կանութիւն Հայոց, եւ քաղցրութեամբ յորդորէր զնոսա յետս կալ 'ի հակառակութենէ և 'ի տարապարտ վիճմանց, այլ նոքա ոչ կամէին ունկն մատուցանել բանից նորին, եդեալ 'ի մոլ բռնութեամբ կորզել զայն տեղի։ Տեսեալ Գրիգորի թէ ոչ հանդարտին նոքա 'ի խռովութենէ, մատոյց դիր աղաչանաց առ Արքայն Մուրատ՝ Դ. և յայտ արար զխռովայոյզ կամս գիւղականաց, և դատաստանական օրինօք հաստատեալ զիրաւունս իւր, և առաքեաց 'ի բանակն Արքունի։ Գրեցաւ հրովարտակ վասն այսր առ դատաւորն Երուսաղէմի՝ հաստատուն պահել զիրաւունս Հայոց, և զանհնազանդան ծանուցանել 'ի Դուռն, լուեալ զայս գիւղականաց դադարեցան յաղվիէ, և պարտէզն մնաց 'ի ձեռս Հայոց, որպէս և էրն։ 'ի ՝ի ՝ի ՝

քանզի խանն որ ի Ներքոյ վանաց Բեթ ղէհէմի, յափշտակեալ այլազգի դիւղականաց արարեալ էին զայն իջևանատեղի հասարակաց, թէպէտեւ Գրիգոր Պատրիարք յառաջագոյն բազում նեղութեամբ և տառապանօք ազատեալ էր զայն ի ձեռաց նոցա, և չինեալ ի վերայ նորա սենեակս ի բնակութիւն ուխտաւորաց, նորոգեալ էր նաեւ զաւերեալ և խախտեալ սենեակս ի վերայ երկաթի դրան վանացն։ Եւ այս ամենայն չինուածիւնք և նորոգութիւնք լեալ էին յայնժամ կայսերական հրովարտակաւ եւ դատաստանական գրովք եւ մանրամասն քննութեամբ դատաւորին և այլազգեաց՝ (1621)։ որպէս գրեցաք ի նախընթաց գլուխդ, և լեալ էր պատուէր և հրաման չնեղել այլազգեաց զՊատրիարքն և զվիճաբանութիւնն, վասն այնր չինուածոց։ Սակայն յանցանել ժամանակաց և ի փոփոխել դատաւորաց եւ կուսակալաց, ի մոռացօնս լինէին գրեանքն։ և չհամարեալ ինչ զնոսա, պէսպէս հնարիւք և խաբէութեամբ հանէին զայլ հրաման, և նոքօք բռնանային ի վերայ վանացս, և պահանջէին զդուռմարս դրամոց։ և երբեմն նոյն իսկ կուսակալն Դամասկոսի, Բգեչխ և դատաւորն երուսաղէմի, եւ այլք։ ոմանք թէ առանց հրամանի չինեալ էք, ոմանք ուելի քան զհրամայեալն։ այլք զայլ իմն անոտի պատճառս յօդելով պահանջէին զինչս և տագնապէին զՊատրիարքն և զվիճաբանս մինչեւ հոգիս լինել ապատան։ Զկարացեալ զդէմ ունել բռնութեանց և հանգուրժել տառապանաց՝ խորհէին թողուլ և լքանել վիճակաւն զչինուածս և զվանօրայս և մեկնիլ ի քաղաքէն, թերեւս չահիլ գլխոյն իւրեանց։ Սակայն կարի ծանր և դժուարին թուեցաւ այս խորհուրդ Գրիգորի Պատրիարքի, զի չէր գիւրին այնքան դառն աշխատութեամբ, քրտամբք վաստակօք և մեծամեծ ծախիւք զարդիւնս դարաւոր իրացանց։ ի միում աւուր մատնել ի ձեռս անողոք թըշնամեաց, որոց բերանաբաց սպասեալ կային։ Զմտաւ առնէր Գրիգոր չկորուսանել զբանաւաճառ վաստակս, և լինել առակ նշաւակի առաջի օտարաց։ այլ տեսանէր զինքն մերկացեալ ի գոյից, և տառապանքն զօրացեալ առաւել քան զկար իւր։ Սակայն ի բաց եթող առ ժամն զալեսանն ծուխս խորհրդոց իւրոց, չնքաւ առ դատաւոր քա-

զաքին և առ Բգեչխն եւս, եւ ընդ ազեսին իւրոյ առաջի արար նոցա զդրեանս և զհրովարտակն Սէլիմայ Աւքայիի։ և խնդրեաց ի նոցանէ գիւր առնել սակաւ ինչ ի տառապանաց, որ ծանրանայր գամ քան զգամ ի վերայ իւր և իւրոցն, եւ նոքա յանձն առին գրել եւ ծանուցանել ի Գուռն զտառապանս նորին, եւնդրել յԱրքայէ հրովարտակաւ բառնալ զամենայն խոչս՝ զորս պատմեաց նոցա։ իսկ դատաւորն յաւել ի գրի իւրում, թէ Հայք տաղտկացեալ են յերեսաց բռնութեանց այլազգեաց, եւ խորհին թողուլ և լքանել զվանօրայս եւ զրնակութիւնս իւրեանց, եւ մեկնեալ աստի գնալ տարագիպ, ուստի հասանել ինձ մեծ դատուց գիտնականաց, զոր կարգեալ է Սիւլէյման Արքայ ընթեռնուլ զիւրաքանչիւր հոգւոյ հօր իւրոյ Սէլիմայ, զի տարեկան հասք նոցին եղանել ի վաճառէլից անտի, ի հատանիլ գրոյն ի թագաւորեալ քաղաքն և ի ծանուցանել Սուլթան Իպրահիմայ։ գրեցաւ հրովարտակ (Թաթիի Շէրիֆ) բառնալ զանկարգութիւնս այլազգեաց, և չպահանջել ումեք ի նոցանէ և ոչ դանկ մի։ յանդորրութիւն պահել զՊատրիարքն և զվիճաբանս Հայոց, որպէս եւ էինն յառաջագոյն։ ի վերջ Զիլհիճէ, ՌՁԷ (1644)։

Զկնի երկուց ամաց եկաս հրովարտակ յԱրքայէ իջեւանատէմ, վասն խնդրոյ այրին Ծննդեան, զորմէ գրեցաք յառաջագոյն, առեալ զայն Գրիգորի Պատրիարքի չոքատ դատաւորն, ուր էր եւ իշխող քաղաքին Մէհէմմէտ Փաշայ, կազմեցաւ ժողով մեծ ի դատարանն՝ կոչեցան փոխանորդն Լատինաց Պետրոս եւ Թարգմանն Ծուհայ Իպրահիմ, և ընթերցաւ հրովարտակն առաջի ամենեցուն, և իմաստք նորին բացատրեալ ծանուցաւ ի ձեռն Թարգմանին՝ փոխանորդին Լատինաց, և նա հնազանդեցաւ հրամանին։ Ապա եկարց դատաւորն ցԹարգմանն Ծուհայ, եթէ ունի՞ք առ զայլ հրաման նոր Թուականաւ հակառակ այսմ, մատո՛ այսր, և նա արար պատասխանի թէ ոչ ունին։ սակայն Հայք առ՝ չունին իրաւունս պատարագելոյ խնկարկելոյ և կանթեղս լուցանելոյ յայրն Ծննդեան։ Առ որ իրր պատասխանի մատոյց Գրիգոր առաջին գրեանս՝ զորս պատրաստ ունէր առ իւր, յորոց յայտնի

եղեւ թէ որպէ՞ս կատարէին Հայք զպաշտաւնեունս իւ րեանց յայրի անդ, եւ թէ՝ որպէ՞ս խորտակեցին լատինք զդաբանն եւ զսրկէն, այլովքն հանդերձ. եւ թէ զիաղիդ հրամայէր Սրբոյ 'ի հրովարտակին՝ ըստ վճռոյ մեծի դեսպետին դնել եւ զետեղել զիւրաքանչիւր կաշ 'ի տեղի իւրում. և ըստ սովորութեան կատարել զպաշտաւնեունս, Յետ ընթեռնլոյ զայս ամենայն յատենի անդ, պատուեր ետ դատաւորն լատինաց և Յունաց չընդդիմանալ Հայոց վասն Պատարագի և այլոց իրաց. եւ ետ կոչել անդրէն զերիսս կանթեղս 'ի տեղւոջ իւրում, առաջի Ծոյն եւ լատին փոխանորդաց. 'ի \ Ակիքէր ասնոյ, \•०० (1645).

Ահա այսպէս Գրիգոր Պատրիարք Պարսն Տէր կոչեցեալ, զորոյ զպատմութիւնն փոքր 'ի չատէ գրեցաք, տառապեալ 'ի հոգւոյն դատաստանական խնդիրս և 'ի բազմայոյզ վէճս ընդ օտարազգիս, սերով դեգերեալ 'ի գբուռնս այլազգեաց և այլոց. վատակարեկ և խոնջ, նեղութեամբ և տուայտանօք չինեաց և նորոգեաց զվանօրայս և զեկեղեցիս Հայոց յերուսաղէմ և 'ի սահմանս նորա, բազմացոյց 'ի նոսա զկրօնաւորս զարդարեալս առաքինական վարուք, 'ի պաշտօն փառաբանութեան Աստուծոյ, ըստ կանոնի Ս. Հարց՝ ժողովեաց զբազում Ս. Գիրս, և տայր գրել որոց յաջողակ էին 'ի գրչութեան. տեսեալ ժողովրդոց զբարեկրօն վարս և զցանկալի բարեկարգութիւնս նորին, զսաքարթանային 'ի տուրս և չհնազէին ինչ 'ի նահանջ, որ և 'ի սոյն ամի՝ ասէ, յիշատակարանն, եաուն 'ի ձեռս նորա 4 բուն ոսկւով Աստուածաշունչս: եւ 'ի բերոց այգեաց՝ զորս գնեաց, մխիթարէր զմիարանս և զուխտաւորս, ժիր և արթուն 'ի հոգևոր պաշտամունս՝ հաւատար ընդ միաբանս, սակաւապէտ և անպահանջ, հեռիտես չրջելով յամենայն տեղիս. ունէր ընդ իւր խորհրդակից և աջակից 'ի գործս պիտոյից կարապետ վարդապետ՝ այր առաքինի և արթասէր վարուք, և չրջէր յամենայն քաղաքս և 'ի գեօղս Հայոց՝ և լուսաւոր վարդապետութեամբ միխիթարէր զհաւատացեալս, և զնուէրս նոցա առաքէր յերուսաղէմ 'ի ձեռս աշակերտաց իւրոց, և երբեմն ինքն առնէր: Այսպիսի առաքինական բարեգործութեամբ զարդարեալ վաստակաւոր մշակն եւ արթուն հովիւն հոգեւոր բանաւոր

հօտին, ցանկալին 'ի չարն Պատրիարքաց աթոռոյն երուսաղէմի Գրիգոր Հայրապետն Պարսն Տէր, հասեալ 'ի խոր ծերութեան հանդեաւ խաղաղութեամբ 'ի տէր, և թաղեցաւ 'ի վանս Ս. Փրկչի, վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեան տիեզնայն զպատուութեամբ տես 32, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. (1645):

Յետ այսորիկ սովորութիւն եղեւ մխաքանաց Ս. Յակոբայ թաղել զՊատրիարքունս և զեպիսկոպոսունս 'ի դաւթի վանայ Ս. Փրկչի. զի մինչեւ ցայս վայր զոմանս թաղէին 'ի դաւթի տաճարին Ս. Յակոբայ, և այլոց բազմացն չեն յայտնի. զի Թերեւս խառն ընդ ուխտաւորաց թաղէին 'ի Յառներ կոչեցեալ տեղին. զորմէ գրեն ներսոպացի ճանապարհորդք. «Ագարակն Ակեղբամայ, կամ գերեզմանատունն ուխտաւորաց, է 'ի հարաւակողմն լերին Սիոնի, 'ի վերոյս ձորոյն Գեհենի 'ի մէջ ցամաք բլրի, որ 'ի հին ժամանակս էր փոքր ինչ արտ 'ի մէջ քարաժայռ լերանց, զոր Հրեայք գնեցին 'ի Բրուտ 30 արծաթի. զոր մատնիչն Յուդայ յետս դարձոյց, և արարին գերեզման օտարաց, որք մեռանին յերուսաղէմ. Մատթ. Իէ. 1. 7. 8: Գործ. Ա. 19: Ի սոյն ներկայ ժամանակիս տեղւոյս այսմիկ տիրեն Հայազգի քրիստոնեայք, որք արարեալ են իւրեանց գերեզմանատուն գնեալ 'ի Թրքաց. 'ի միջին տեղի կառուցեալ կայ չինուած ինչ քառանկիւնի կամարակապ. 40 ոտնաչափ երկայն և նոյնչափ լայն. և ունի յատատաղն 3. 4. կամ 5 լուսամուտս, յորոց իջուցանեն Հայք պատանւոյ զմարմին ննջեցեալ Հայ ուխտաւորաց, որք մեռանին յերուսաղէմ. Բայց նոքա, այսինքն Հայք իջանեն անդ ուրուն ճանապարհաւ, կամ դրամբ 'ի վայր. և գնեն զմարմին մեռելոյ 'ի վերայ գետնի առանց թաղելոյ. միայն պատանօք կարգաւ հուպ առ հուպ (քով քովի), և այնպէս մնան յերկաս գետնի՝ եւ ոչ ծածկեն հողով. եւ 'ի վերայ այսր ամենայնի զինի մի քանի աւուրց չորանան առանց հոտելոյ՝ Թարգմանեալ 'ի Գերմաներէն գրքէ, տպեալ 1736:

Իսկ Մարինոս Լատին այլ ինն եղանակաւ գրէ զայսմանէ, Թէ 'ի 24 ժամս՝ մինչեր գարձուցանէ զդին, եթէ Թաղեսցի 'ի հող: Եւ Թէ՝ զվոյն Հեղինէ նաւուք տարաւ

'ի հողոյ ասաի 'ի Հռոմ, և նա լինել զայն մերձ 'ի լեառն Վատիկան, և այն կոչեցաւ գերեզմանատուն. և 'ի մէջտօն 24 ժամու 'ի հող լուծանել զմարմինն, թողլով միայն զոսկերան։ Ցես բառդ Charnel 'ի բառարանն Անգղիերէն և Գաղղիերէն, որք ցուցանեն գերեզմանք, ուր թաղեալ են մարմինք։ Ուստի 'ի ժամանակս Պաշակրաց տեղիս այս առ հասարակ կոչէր Charnel. քանզի երկրացի Արաբացիք և Քրիստոնեայք խակ մինչեւ ցայսօր կոչեն զտեղին զայն Շուռնեն. յորմէ և 'ի մեզ ածանցեալ է Ջառներ եւ կամ Ճառներ։

Սակայն գերեզմանն Բրաի կամ Ակեղեցւոյ, է 'ի հիւսիսակողմն ձորոյն Գեհենի. եւ է ցարդ 'ի ձեռս Հրէից. իսկ Ճառներն Հայոց՝ է 'ի կողմն հարաւոյ յայնկոյս ձորոյն, և 'ի հրովարտակս կոչի տեղին Ասլու Թոռ, որպէս գրեցաք յառաջագոյն, և է ցարդ 'ի ձեռս Հայոց, իսկ օտարազգի տեղագրութիւնն թողումք ընդ եան։

Ի ժամանակս բարեյիշատակ Գրիգորի Պատրիարքի գըտանէին 'ի վանս Ս. Յակոբայ արք բարեպաշտօնք և երկիւղածք յԱստուծոյ, վաստակաւորք և 'ի սրտէ ցանկացողք պայծառութեան Սիոնոյն և 'ի զարգացումն ազգին՝ որպիսի ոք էին Գրիգոր Մերենց, որոյ ձեռագիր Աչամաւուրն, գրեալ 1638 յամին. հրամանաւ Գրիգորի Պատրիարքի, կայ մեզ 'ի գրատան Ս. Սիոնայս։ Եւ մահտեսի Ամիր Ազիզ՝ այր կրօնասէր, զրմէ ունիմք սակաւ ինչ գըրել 'ի սորեւ՝ հանեալ 'ի յիշատակարանէ ձեռագիր մատենին։

Մահտեսի Ամիր Ազիզ 'ի յԱղցնեաց երկրէ 'ի Բզնունեաց վիճակէ (Բաղէշ) Ծորնել գեղջէ, որդի Սիմէոնի և եղբայր Միքայէլի Եալիկոզոսի, 'ի մանկական տիոյն անարգեալ զփառս աշխարհի, և բարձեալ զխաչն Քրիստոսի հետեւելով բանին կենաց՝ չըջելով 'ի Ս. Ուխտս և 'ի վանօրայս, աղօթելով եւ սրբութեանց սպասաւորելով սակս յուսոյ արքայութեանն. որ և ժամանակաւ եհաս մինչեւ յաչխարհն Լատինացւոց յԱռաքելական գահն 'ի մեծն Հռոմ. և դարձեալ կոխելով 'ի վերայ կոհակացն Ովկիանոսի՝ գայ յԱստուածածոկոս քաղաքն Երուսաղէմ, վասն ուխտի Աստուածահոտ Ծնօրինականացն Քրիստոսի. զորոյ տեսեալ զնորին

բարուցն և զընութեանցն բարութիւն առաջնորդ Ս. Գաղաքիա, առ ինքն կալեալ ոչ սակաւ ինչ ժողով հեռանալ բնաւ յինքենէ, զոր սա յօժարութեամբ կատարէր զամենայն հրամայեալսն առ 'ի նմանէ, որ եւ օժանդակութիւն ոչ սակաւ առնէր 'ի չինուիլն Ծնօրինականացն Քրիստոսի, Ըստնջնդեան՝ և Ս. Փրկչի և Հրեշտակապետաց՝ և Ս. Յակոբայ առաջարացն, երբեմն անձամբ աշխատելով և երբեմն հրամանաւ Գրիգորի Հայրապետին 'ի հեռաւոր և 'ի մերձաւոր տեղիս Նուիրակ գնալով, զորոյ զքաղցր և զհամեստ բարս տեսանելով՝ սիրէին զնա իրրեւ զառաքեալ 'ի Քրիստոսէ, և յօժար սրտիւ զհամաւոր տուրս և զպաժինս հոգւոց իւրեանց տային 'ի ձեռս նորա, և նա անվախճան զամենայնն հասուցանէր 'ի Ս. Գաղաքն Երուսաղէմ, առ 'ի լնուլ զպակասութիւն եկեղեցւոյն Երուսաղէմի. զի զամն 47 զգործս զայս անտրտունջ կատարեաց։ Ամիր Ազիզ զնի մահուան Գրիգորի Պատրիարքի՝ եկաց 'ի վանս Սուրբ Յակոբայ՝ նովին առաքինութեամբ, եւ բարի մահուամբ հանգեաւ 'ի Տէր։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Պատրիարքութիւն Աստուածածնաւր եպիսկոպոսի։ Ցեսուչ Նէստորականաց։ Վախտանգ Ս. Փրկչի և Ս. Հրեշտակապետաց։ Զարութիւն աւազակաց։ Աւերատանութիւնք եւ բանտութիւնք պղտզեցաց։ Գերեզման Ս. Աստուածածնին։

Զկնի մահուան Գրիգորի Պատրիարքի Պարոն Տէր կոչեցեալ։ ընտրեցաւ յԱթոռ Պատրիարքութեան Աստուածածնաւր Եպիսկոպոսս Տարոնեցի. ձեռնադրեցաւ աշակերտ նորին Գրիգորի, որպէս պատուիրեալ էր նա ինքն 'ի կենդանութեան իւրում՝ ընտրել զայն։ Սա ինքն Աստուածածնաւր յետ ընտրութեան իւրոյ՝ ինքն մատոյց գիր աղաչանաց 'ի Դուռն՝ յառաջս Սուլթան Խպրահիմայ, ծանուցանելով զվախճան նախորդին իւրոյ՝ եւ զընտրութիւն իւր 'ի տեղի նորա. եւ խնդրեաց հրովարտակաւ հաստատել

զիշխանութիւն իւր, և հատոյց զսահմանեալ տուրս 'ի գանձն Սրբոյն 8000 փողս (ագճէ), զոր սովոր էին Պատրիարքունք տալ յայնժամ. եւ նոցա յետ ակնարկելոյ յարձանագիրս Սրբոյն, ետուն հրովարտակ, այն է Պատրիարքական Պերաթն, հաստատեալ զՊատրիարքութիւնն 'ի վերայ Աստուածատուր Եպիսկոպոսի, ՌՂՂ (1645)։ Սակայն յաւուրս իշխանութեան սորա պատահեցան ձախորդութիւնք դիպուածք մեծամեծք և ցաւք անրուժելիք, յորս տագնապեալ տառապեցաւ նա ընդ երկար, զրոյց ունիմք պատմել 'ի կարգի։ Յերկրորդ ամի Պատրիարքութեան Աստուածատրոյ՝ կին ոմն անուն Եղիսաբէ՝ դուստր Ապտուլլահի, վերատեսուչ Նեստորականաց բնակելոց յԻրաւաղէմ։ Ծառուրան յայնոսիկ՝ մեռաւ մի ոմն յազգէ նոցին Էսէտ անուն, և կինն բարձեալ զայն թաղեաց լռելեայն 'ի գերեզմանատունն Հայոց, մերձ 'ի վանս Ս. Փրկչի։ Լուեալ զայս Աստուածատրոյ առաքեաց առ դատաւորն զխոհանորդն զՅօնիկ և զԹարգմանն զԲրիգոր. և ամբաստան եղեւ զնեստորականէն զայնմանէ, կոչեցաւ կինն. և 'ի ժողովի անդ ոչ կարաց ծածկել զգործն, զոր ապարեալ էր. և յաւել եւս առել ստութեամբ՝ թէ ըստ սովորութեան իմոյ թաղեցի զայն. եւ թէ գերեզմանատունն այն ոչ է սեփհական Հայոց։ Իսկ Հայք ըստ խնդրոյ դատաւորին կացուցին վկայս յերեւելի այլազգեաց, և հաստատեցին զսեփհականութիւն իւրեանց. և մերժեցաւ խաբէայութիւն Նեստորականին, եւ դատաւորն եհատ վճիռ, եթէ ոք 'ի Նեստորականաց և կամ այլ ոք յօտարաց ժըպրհեացի թաղել զմեռեալ իւր 'ի գերեզմանատունն Հայոց, հանեալ 'ի բաց ընկեացի դիակ նորա. 'ի ԱՀ Բէպիլ ախր ամսոյ՝ ՌՂՂ (1646)։

Ձեռն վճարելոյ զդատաստան Նեստորականին, եհաս այլ ինն վտանգ 'ի վերայ միաբանից. զի 'ի դիշերի միում եկեալ աւազակաց պաշարեցին զվանս Ս. Փրկչի. եւ ձայնէին 'ի ներքս առ միաբանն բանալ զդուռն. զի ոչ կարացին խորտակել զնա. ապա մտին 'ի պարտէզն ձիթենեաց որ անդ, կեղեւեցին և տաշեցին սրով զբունս 26 ծառոց. և տապալեալ չրջկեցին զքարինս գերեզմանաց 26 եւ պեղեցին զհողն։ Եւ յետ այնորիկ սկսան ահ արկանել և

սպառնալ միաբանից, և նեռամիտք լինել 'ի ներքս 'ի վանսն զի բացցին զդուռն՝ այլ վրիպեալ 'ի յուսոյ՝ դարձան յետս կորակոր։ Եւ 'ի լուսանալ առաւօտուն Աստուածատուր Պատրիարք ծանոյց զեղեալսն Բդեշխի քաղաքին, և նա առաքեաց զնին 'ի պաշտօնէից իւրոց առ դատաւորն՝ եւ ազդ արար նմա քննել և 'ի գիր հարկանել զեղեալսն 'ի վանս Ս. Փրկչի. և նա առաքեաց զարս երկուս ընդ պաշտօնէի Բդեշխին, և նոքա եկեալ դտին զերիս մեծամեծ քարինս թաւալեալ առաջի դրան վանացն. տեսին զկնճեալ ծառս ձիթենեաց և զքարինս թաւալեալ 'ի գերեզմանաց, եւ միաբանք բերեալ արկին առաջի նոցա զնետս ձգելոյ յաւազակաց, յետ քննելոյ զայս ամենայն դարձան 'ի տեղիս իւրեանց. ՃՀ Բամազան ամսոյ՝ ՌՂԷ (1646)։

Աստուածատուր Պատրիարք հրամանաւ դատաւորին ձեռն արկ չինել և նորոգել զվանս Ս. Հրեշտակապետի. և քակեալ զմայրաշէնն զերիս սեննեակս 'ի կողմն հիւսիսոյ, արար քարուկիր. և զերկուս սեննեակս 'ի կողմն արեւելից։ Ցետ աւարտելոյ զայնս՝ եկն դատաւորն և քննեալ եգիտ զամենայն ինչ ըստ հրամանի իւրոյ, և ետ անդորրագիր 'ի ձեռս Պատրիարքին։

Զայրացեալ ընդ այս այլազգեաց երուսաղէմի՝ բազք կալան առ կուսակալն Դամասկոսի և ամբաստանութեամբ զրպարտէին՝ թէ Հայք կառուցին զնոր չինուածս ընդդէմ օրինաց և կայսերական հրամանին, և նա առաքեաց զմին 'ի պաշտօնէից իւրոց Մուրթազա անուն, թզթով առ դատաւորն Երուսաղէմի հարցանել վասն չինուածոց։ Իսկ դատաւորն կոչեաց զմեծամեծս քաղաքին, ուր էր և Սարգիս Թարգմանն Հայոց, և ընթերցաւ զթուղթն առաջի նոցա, ապա հարցին զԹարգմանն վասն նորոգութեանց, եւ նա արար պատասխանի. Պատրիարքն Հայոց նորոգեաց զվանս Ս. Հրեշտակապետի հրամանաւ դատաւորին եւ քննութեամբ այլազգեաց, և գտին զնա 'ի ձեռն առաջին. ահաւասիկ դրեանք դատաւորին և քաղաքապետին, և ընթերցեալ գտին զամենայն ինչ ըստ հրամանին։ Ապա խնդրեաց Սարգիս, սանձել զրունութիւնս այլազգեաց որք տարապարտուց յարուցեալ չարչարեն զՀայս։

Ձեռն աւարտելոյ նորոգութեանց Ս. Հրեշտակապետի,

Աստուածատուր Պատրիարք եդ 'ի մոխ նորոգել նաեւ ըզվանս Ս. Փրկչի, զի արեւելեան պարիսպն խախտեալ կայր 'ի վտանգի, եւ ազդ առնել դատաւորին՝ յետ քննութեան ետ հրաման։ Սակայն այլազգիք Սիոնի ընդդէմ կացեալ ոչ եւտուն թոյլ սիզքն առնել գործոյն, եւ պահանջէին զմեծ գումարս դրամոց։ Իսկ Աստուածատուր Պատրիարք բազում աշխատութեամբ հազիւ կարաց համել զմիտս մեծամեծաց քաղաքին, և ելին 'ի քննութիւն կրկին և վերըստին, որպէս յայտ առնեն բազմաթիւ դատաստանական գրեանք։ Ապա ըստ Թալատուութեան նոցին չինեալ նորոգեաց զամենայն կարեւոր տեղիս փութանակի, բարձրացոյց զշրջապատ պարիսպն և սպիտակացոյց զեկեղեցին, եւ յետ ամենայնի դարձեալ ելին 'ի քննութիւն դատաւորն և ժողով այլազգեաց, և գտեալ զամենայն ինչ բան կամաց իւրեանց դարձան 'ի տեղիս իւրեանց։ Իսկ Թարգմանն Սարգիս որ բազում չարիս կրեալ էր յայլազգեաց Սիոնի, հազիւ ուրեմն կարաց ցածուցանել զսրտմտութիւնս նոցա, մինչեւ ետ վկայել առաջի դատաւորին թէ՝ չունիմք այսու հետեւ հակառակութիւնս ընդ Թարգմանին Հայոց՝ և կամ պահանջս ինչ 'ի նմանէ, ոչ թշնամութիւն և ոչ ատելութիւն։ և դատաւորն դրով հաստատեաց զբանս նոցա, և ետ ցԹարգմանն, ՌՕՀ (1647)։

Այն ինչ վճարեալ էին Հայք զդատաստանս եւ զքննութիւնս այլազգեաց քաղաքին, հասին անդ արք գործաւորք եւ բանաւորք 'ի կուսակալէն Դամասկոսի, եւ ոչխան նեղել և տագնապել զՊատրիարքն, թէ նորոգութիւնք վանացդ առանց հրամանի են։ եւ պահանջէին 'ի նմանէ գյոլով դրամ, և ոչ ասէին նմա թոյլ և դադար։ Իբրեւ ետես Աստուածատուր Պատրիարք թէ չէ հնար զերծանիլ 'ի ձեռաց նոցա, և կամ յագեցուցանել զագահութիւնս նոցա։ զրեաց գիր աղաչանաց 'ի Դուռն, յորում աղաչէր բառնալ զտառապանս և զնեղութիւնս իւր՝ և տանձել զտառահասութիւնս այլազգեաց ոմանց։ զայս գիր առաքեաց 'ի ձեռն հաւատարմին իւրոյ։ Գրեցաւ հրովարտակ առ դատաւորն Երուսաղէմի, տապել այլազգեաց։ զի չէր կամք Աբգալի 'ի ժամանակս արդարասէր թագաւորութեան իւրոյ՝ լինել այնպիսի անիրաւութեանց եւ

զրկանաց։ պատուիրել արանց կուսակալին և այլ գործակալաց՝ չլինել ձեռներէց յայնպիսի գործս և հասուցանել չարիս Հայոց։ 'ի բաց մերժել զայնպիսի կամակորս։ եւ յաղագս յանուանէ ծանուցանել 'ի Դուռն, որք ոչն կամին հնազանդիլ օրինաց և հրամանի Արքային, զի մի հարկ լիցի կրկնելոյ զհրամանն, ՌՕՀ (1648)։

Աստուածատուր Պատրիարք արար եւ նորոգութիւնս ինչ 'ի վանս Ս. Յակոբայ, սակայն այս չինութիւնք տեւեցին երկար և կրեցին վնասանք վիշտս և նեղութիւնս ոչ սակաւ։ որպէս յայտ առնեն բազմաթիւ դատաստանական գրեանք, զորոց զանց արարաք մի առ մի կրկնել առատանօր, բաց 'ի գրոյն կուսակալին Դամասկոսի։

Կուսակալն Մուստաֆայ Փաշայ՝ լուեալ էր զնորոգութեանց վանօրէիցն Հայոց, որոց վասն գրեաց Թուղթ առ դատաւորն Երուսաղէմի, և առաքեաց զայն 'ի ձեռն պաշտօնէին իւրոյ Ապտրրահման կոչեցեալոյ, հարցանել զորպիսութենէ չինուածոց։ ի հասանիլ առնն 'ի քաղաքն սուրբ՝ կազմեցաւ ժողով մեծ, ուր էին դատաւորն՝ քաղաքապետն Մէհէմմէտ Փաշայ, դասք գիտնականաց՝ և այլք, կոչեցան Յակոբ և Յօհիկ 'ի վանացն Հայոց, ընթերցաւ յատենի նախակ Կուսակալին՝ ուր ասէր, «Հայք բնակեալք յերուսաղէմ, լուաք թէ քակեալ են 'ի հիմանց զվանքն կոչեցեալ Հասլս էլ Մէսիհ, (բանան Քրիստոսի) արտաքոյ քաղաքին՝ մերձ 'ի չիրիմն Մարգարէին Դաւթի, եւ նորոգ չինեալ զայն։ քննութիւն արարեալ զայնմանէ առաջի պաշտօնէին մերոյ։ գրեալքն ըստ օրինի զարգիւնս նորին։ Հրամայեաց դատաւորն Հայոց պատմել զկրս նորոգութեանց։ եւ նոքա ասեն՝ Հայք ոչ են քակեալ և նորոգ չինեալ զվանս Սուրբ Փրկչի, այլ միայն առաջին Պատրիարքունք նորոգեալ են զայն հրամանաւ դատաւորաց քաղաքիս, որպէս եւ մեք նախ քան զերկուս ամս նորոգեցաք զպարիսպ նորին։ զի վտանգ մեծ էր անկանիլ քարանց 'ի վերայ այլազգեաց Սիոնի, ըստ քննութեան և հրամանի դատաւորին նորոգեցաք զայն, ըստ մտաց Արքունի հրովարտակին։ Ձեռ ընթեռնոյ զգրեանս չօքան բազմութեամբ 'ի վանս Սուրբ Փրկչի, և 'ի քննութեան պահու գտին միայն նորոգեալ հարաւային պարիսպն, զի 'ի տեղի հնացեալ եւ անկեալ

քարանց եղեալ էին զնորս. կոչեցին անդ զՀարտաբասեան և զորմիադիս եւ զոմանս յայլազգեաց Սիոնի, եւ նոքա ցուցանէին միայն զորմն զոյն չինեալ ըստ հրամանին։ Զբովանդակ քննութիւնս ի գրի եհար դատաւորն պարագայիւք. ի ՚Ի. Բլպիլ եկեալ առոյ, ՌՀՀ (1649)։ Սակայն պատգամաւորն Ազարրահման ոչ միայն առնուլ զղատաստանի նամակի տեառն իւրոյ, այլ միայն եռեակ զարդիւնս քննութեան և գարձաւ անդրէն ի տեղի իւր։ Իսկ դատաւորն գրեալ ծանոյց զամենայնն ըստ հրամանի նորին, և զանհամբերս բարս պատգամաւորին։

Ի սմին ժամանակի ընկենլին զԱստուածատուր Պատրիարք յԱթոռոյն. այլ նորա աճապարեալ մատոյց գիր աղաչանաց ի Դուռն, և վերստին էառ հրովարտակ վասն հաստատութեան իշխանութեան իւրոյ, որպէս և տեսանել ի կարգս Պատրիարքական Պերաթիոյ։ Ի սոյն հրովարտակի Սուլթան Մուհամմէտ՝ Դ. խաթիւ պատուիրէ դատաւորին երուսաղէմի և մեծամեծացն այլազգեաց զգործադրութիւն հրովարտակին՝ նստուցանելով զԱստուածատուր յԱթոռն, զտահակս և զանհնազանդս և զդաւադիր խափանիչս իշխանութեան նորին ծանուցանել ի Դուռն, կրել զպարժանաւոր պատիժս իւրեանց. ՌՀԱ (1650)։

Պատմէ ատաենօր Մարինոս Լատին՝ թէ ի յաճախել անձրեւաց տարւոյն՝ լցաւ ջուրն յարտաքին դաւիթն Տաճարի Ս. Աստուածածնի, և անտի յորդեաց ի ներքս եւ բարձրացաւ ջուրն մինչեւ ի սեղանս. և բազում աշխատութեամբ դատարկեալ զայն մաքրեցին զկնդկղեցին՝ Հայք, Ցոյնք՝ եւ Լատինք։ Որպէս պատահեալ էր յառաջադոյն և պատահի ցարդ։ Ապա մնաբանեալ երից ազգաց եռուն բառնալ զհողն յարտաքին դաւիթ, որ դիղեալ էր ի չափ կանգնոյ, և երեւեցաւ յատակն սալեալ քարամբք, և դատ անդ ջրհոր մի մեծ, բայց առ երկիւղի Արաբացւոց՝ եդին կափարիչ ի բերան նորա և ծածկեցին։ Այս ջրհոր ծածկեալ կայ ցարդ յարեւմտեան կոյս մերձ յորմն պարսպին Հայոց։ Ապա նորոգեցին զորմն և զյատակն Հայք՝ և Ցոյնք, և զարեւելեան որմն՝ Լատինք ընդ ճանապարհի մատրան իւրեանց (1648)։ Ցաւելու դարձեալ թէ ես Մարինոս վերատեսուչ Լատին վանաց նորոգեցի զդերեզմանս Սուրբ

կուսին, զոր ի քակէն՝ գտի քար մարմարիոն ի ներքոյ ծեփի արեւելեան որմոյն, թոյլտուութեամբ պալազգի դռնապանին։ Թէպէտ Ցոյնք յարուցին վէճս վասն այսր, այլ դատաւորն արգել զհակառակութիւնս նոցա (1656)։ Եւ թէ՝ ի ժամանակս Խաչակրաց էր վանք կրօնաւորաց անդ ի Ս. Աստուածածնին. զորոց թուլկաս յաւել Փիոս կոթիփրատոս առաջին Թագաւորն Երուսաղէմի. յետոյ աւերեալ յԱրաբացւոց ընդ այլ վանօրէից եղելոց անդր։ Պոռոնիէ Ս. Երէքէ, յԵռուսղէմ։ Իսկ Հաննա վարդապետ այսպէս գրէ. «Այս փառաւոր եկեղեցիս յատուկ էր ազգիս Հայոց, որպէս յորմս եկեղեցւոյն երեւին յիշատակարանք նորոգողաց եւ Թուականքն՝ երկաթագիր տառիւք»։ Սակայն զչարեալ ընդ այն Լատին լուսարարին՝ կռանաւ տաշեալ եղծեաց զգիրսն ի ծածուկ, և յիշատակարան Մարտիրոս վարդապետին մնացեալ մինչ ի ժամանակս իւր, որպէս գրեալ եմք։ Այլ այս եւս չերեւի այժմ։ Պոռոնիէ Երուսաղէմ, երէս 303։

ԳԼՈՒԽ ԽԵ.

Փիլիպպոս և Ներսէս կաթուղիկոսունք։ Վէճ Ցունաց առն Բեթղեհէմի վանաց։ Վանք Ս. Փրկչի։ Տեսչն Հապեշաց. Գրաւումն սեփհականութենաց նոցին ի Ցունաց. և վէճ վասն այսր խնդրոյ։

ՅԱՒՈՒՐՍ Աստուածատուր Պատրիարքի եկն յերուսաղէմ Տ. Փիլիպպոս կաթուղիկոս Ս. Էջմիածնի, և ի նմին աւուրս եկեալ էր անդ և Տ. Ներսէս կաթուղիկոսն Սսոյ, ընդ սոսա էին վարդապետք և եպիսկոպոսունք 20. և քահանայք յամենայն գաւառաց, և ուխտաւորք իբրեւ 800։ Սոքա արարին ժողով ի վանս Ս. Յակոբայ, վասն բառնալոյ զանկարգութիւնս որք մտեալ էին յեպիսկոպոսունս և յաշխարհական երիցունս, և վասն անհետ առնելոյ զատելութիւն թշնամութեան որ կայր ի մէջ երկուց աթոռոց. և ի ժողովն ասա սահմանեցին 13 կանոնական գլուխս, որ-

պէս յայտ առնեն յիշատակարանք, և Հ. Մ. Ջ.-ի Ն. Հայ. Գ. Եզեռ. 628։ Փիլիպպոս Կաթուղիկոս միաբանեալ ընդ Աստուածատուր Պատրիարքին և ընդ Կաթուղիկոսին Սսոյ եռուն յօրինել զյատակ տաճարին Ս. Յակոբայ գոյնզգոյն մանր քարամբք՝ և զբեմն Աւագ խորանին բարձրացուցին, և զխաչկալ խորանին ոսկով պատեցին՝ այսոցիկ գործոց ըստ կիզբն արարին յաւուրս Բուն բարեկենդանի և աւարտեցին ի Նոր կիւրակէի, ապա օրհնութեամբ և հոգեւոր ուրախութեամբ կատարեցին զնաւակատիս նորին։ Փիլիպպոս Կաթուղիկոս կացեալ յԵրուսաղէմ ամիսս իրրեւ ՟Ե և աւելի եւս, դարձ արար ՝ի Կոստանդնուպոլիս։ Եւ Տ. Ներսէս Կաթուղիկոսն Սսոյ յԱթոռն իւր։ Ի յօրինուածոց անտի Յիացեալ են ցարդ անեղծ յատակ դասուն եւ Աւագ խորանին։

Միաբանք Ցուռնայ զչարեալ լինն էին ընդ գործս Հայոց և ընդ յօրինուածս տաճարին, եւ մանաւանդ խակ յաւուրց անտի Գրիգորի Պատրիարքի սակս խնդրոյ Ծառազատկին, յորմէ սակս բանս եղեալ ընդ Բդեշխի քաղաքին, ամբաստանեցին զՀայս և յարուցին վէճս, որպէս թէ յափշտակեալ էին զերկու սենեակս եւ զմի մասն պարտիզին որ ՝ի Բեթղեհէմ, և այլ սոցին նման բանք։ Իսկ Բդեշխն եւս կազմել ժողով մեծ ՝ի դատարանի, ուր էին փոխանակ Բդեշխին և մեծամեծք այլազգեաց, և ՝ի դրդմանէ Ցուռնայ եկեալ էին խուռն բազմութեամբ բնակիչք Բեթղեհէմ գիւղի, և խառնաձայն լինն աղաղակէին յաւետնի անդ թէ՝ դերեզմանատունն ՝ի դաւթի եկեղեցւոյն Բեթղեհէմի ՝ի հարաւոյ, ուր թաղեալ կան ոսկերք նախնեաց մերոց։ Հայք ՝ի չինել և ՝ի նորոգել զերկուս խանս և զսենեակս ՝ի վերոյ նոցա, մուծին զչքհսն մեծ ՝ի ներքս և յափշտակեցին զմի մասն գերեզմանատան մերոյ, և արարին պարտէզ, տունկեալ ՝ի նմա որթս այգւոյ և ձիթենիս, և վակեցին զճանապարհն, որ ՝ի կողմն վանաց Նոցին, մտանել և թաղել զմեռեալս։ և խնդրէին զի դատաւորն և ատեանն երթիցեն ՝ի քննութիւն տեղւոյն։ և արձանագրեսցեն ըստ օրինի։ Հաճեալ ընդ այս դատաւորին՝ և չուեալ գնաց բազմութեամբ ՝ի Բեթղեհէմ, ընդ որս էին Ծոսիթիոս Պատրիարքն Ցուռնայ իւրովք պարագայիւք՝ և բազմութիւն ֆել-

լահից։ Ազդ եղեւ չուս նոցա և Պատրիարքին Հայոց, և նորա առեալ ընդ իւր զՅօհնիկ, զՅակոբ և զՄարգիս և զայլս ՝ի միաբանից՝ չորաս անդ։ Էին և ՝ի բնակչաց գիւղին ոմանք ՝ի կողմն Հայոց՝ վկայ լինել ճշմարտութեան։ և ՝ի ժողովիլ սոցա ամենեցուն, եղեւ քննութիւն առաջի խուռն բազմութեան, բովանդակ չինուածոց դերեզմանատան և պարտիզին։ Ապա եհարց դատաւորն զՊատրիարքն Հայոց, և ասէ՝ առ ի՞նչ պատճառի կատուցիք զչինուածս զայսոսիկ, և որո՞յ հրամանաւ առիք զչքհսն ՝ի ներքս, և նա արար պատասխանի, Կայսերական հրամանաւ և վճռով մեծի դեսպետին, սակս օգտի և բնակութեան ուխտաւորաց և միաբանից։ մանաւանդ ուխտաւորք այլազգեաց ՝ի գնալ եւ ՝ի դառնալն իւրեանց ՝ի Փեբրոն, բազում անգամ աստ ի-ջեւանին և զետեղին գրասոք և կարասիք նոցին, և կարեւորութիւն հարկին ստիպեաց զմեզ նորոգել եւ ՝ի ներքս առնուլ զչքհսն ՝ի պէտս միաբանից և այլոց։ Աստ ընթերցան զգրեանս Հայոց, յայնժամ բարձրացաւ ձայն աղաղակի գիւղականաց և եղեւ կապ և կռիւ և առելութիւն մեծ ՝ի մէջ Հայոց և Նոցա։ սակս գերեզմանատան, ասէ մինչ-նորոգութեամբ դատաւորին ղիջան ՝ի հաշտութիւն երկոքին կողմանցն, և միաբանեալ եղեն ՝ի միջի զայսպիսի պայմանս, չինել Հայոց որմ քարուկիր ՝ի գաւթի անդ, ՝ի հիւսիսային յորմոյ եկեղեցւոյն մինչեւ ցպարիսպն հարաւային, յերկայն 29՝ ՝ի լայն, 2 և ՝ի բարձր՝ 8 կանգուն, լինել անջրպետ ՝ի մէջ գերեզմանատան և պարտիզին Հայոց, և գիցեն գաւան ՝ի կողմն հիւսիսոյ մերձ յորմն եկեղեցւոյն, և տացեն Հայք 1 կանգուն ճանապարհ գիւղացւոց չրջապատեալ որմով գնալ անտի ՝ի գերեզմանատունն, և բանալի դրանն մնալ ՝ի ձեռս Հայոց։ գիւղացւոց մուծանել զմեռեալս ՝ի դրանէ վանացն Հայոց, և տարեալ յորոշեալ ճանապարհէ և ՝ի դրանէ հանել ՝ի գերեզմանատունն, ոչ ումեք բանալ Հայոց դղուռն զայն՝ բայց միայն առ ՝ի թաղել զմեռեալս, զի եթէ ստիպեսցեն գիւղացիք բանալ զդուռն ՝ի պատճառս այլոց իրիք, Հայք մի բացցեն զայն։ Հաճեալ ընդ այսպիսի միաբանութիւն երկոցունց կողմանց, Հայք սկիզբն արարին չինութեան որմոյն։

Ցետ այնորիկ խնդրեաց Աստուածատուր Պատրիարք

'ի դատաւորէն հարցանել ցմեծամեծս այլազգեաց, որք էին անդ. վասնակա՞ր իցէ թէ օգտակար չինուածքն Հայոց. և ամենեքեան 'ի մի բան եառնուն պատասխանի, թէ ոչ երբէք վնասակար գտանեմք, այլ մանաւանդ յօգուտ հասարակաց. և արժան իսկ է բառնալ զհակառակութիւնս դոցա և պատուիրել զի մի յարուցանեն վէճս եւ կռիւս 'ի վերայ Հայոց։ Իրրեւ բանք եղեն եւ վասն ջրհորոյն, եւ պատասխանի ճարտարապետն, եւ ասէ՝ ջրհորն ընդ շինուածոց 'ի սկզբանէ անտի 'ի ձեռս Հայոց և ժառանգութիւն նոցա է, ոչ գիւղացիք և ոչ այլք ունին զիրաւունս։ Իսկ դատաւորն յետ քննելոյ զամենայն ինչ և լսելոյ զբանս ժողովելոց անդր, և տեսանելոյ զգրեանս Հայոց, մերժեաց զհակառակութիւնս Ցուղայեցոց, և հրամայեաց առնել զամենայն ինչ ըստ որոշման ժողովոյն։ Եւ Ամատուածատուր Պատրիարք յետ առնելոյ զդիր հրամանին 'ի քաղաքապետէն, սկիզբն արարեալ շինեաց զորմն և ետ զդուռն։ Սակայն ծանր էին պայմանքն և վնասակար որք եդան, զի գիւղացիք ոչ տային հանդիստ միաբանացն Հայոց 'ի պատճառս մեռելոց իւրեանց, այլ զինի ժամանակաց բարձաւ և խափանեցաւ ճանապարհն եւ դուռն, զորմէ ասացուք յիւրում տեղւոջ, 'ի ԺԱ ՐՀպիլ Հվվէ. ՈՀՃ (1652)։ Վանք Ս. Փրկչի վանաց գոլով սրտաբոյ պարսպի քաղաքին, չզերծանէր 'ի վտանգէ՝ որպէս գրեալ եմք բազում անդամ, և 'ի սմին ամի գտեալ հնարս աւազակաց 'ի գիշերի մտին 'ի ներքս, և կալեալ զմիաբանան դան հարին ուժգին, զոմանս վիրաւորեցին եւ զայլս վտանգեցին մերձ 'ի մահ խորտակեալ զսակերս, մինչեւ անյոյս լինել նոցա և 'ի կենաց՝ որք էին թուով 6։ Իսկ աւազակաց որոնեալ յուզեցին զամենայն սենեակս և դատարկեալ կուտեցին 'ի մի վայր զկահ կարասին՝ զոր ինչ միանգամ դարձին անդ։ Ապա խորտակեցին զդուռն եկեղեցւոյն և կողոպտեցին զսպասս նորին և դատարկեցին մինչեւ չթողուլ մի ինչ 'ի նմա, եւ բարձեալ զամենայն աւարն 'ի բաց գնացին անտի։ Ցաւագնութեան պահու ազդ արարին վեղեալան Ամատուածատուր Պատրիարքին, և նա 'ի ձեռն թարգմանին իւրոյ ծանոյց զիրս դատաւորին. և նորա առեալ զքաղաքապետն Մուստաֆայ Փաշայ եւ զմեծամեծս քաղաքին գնաց 'ի վանս

Ս. Փրկչի, տեսին զվիրաւորեալսն, զկողոպտումն վանաց՝ և զկեկեղեցւոյն զնիասն և զաւերեալ տեղիսն, զորս քանդեալ և կործանեալ էին աւազակքն, և դարձան 'ի տեղիս իւրեանց. ՈՀՃ (1652)։

Ցաւուրս սոյն այս Ամատուածատուր Պատրիարքի՝ Գրիգոր եպիսկոպոս ոմն Երուսաղէմի՝ չքէեալ քարոզութեամբ յաշխարհն Եթովպիա մինչ 'ի Մուխա. եկն անդուստ 'ի Ռոչին (Հնդկաստան) եւ քարոզութեամբ իւրով հաստատեաց զամենեսեան 'ի դաւանութիւնս Հայոց և Ասորւոց։ Ապա դրեաց առ մարզպանն Հայոց Մէհրուժան՝ որ նստէր յայնժամ 'ի Տիգրանակերտ. եւ նա առաքեաց 'ի Հնդիկս զեպիսկոպոս մի Ասորի երկու քոր եպիսկոպոսօք, որոց եկեալ 'ի Ռոչին հովուեցին զեկեղեցին զամս 15։ Պ—ԳՀ. հին Հնդկաստանի. Գիբ. Գ. Գլ. Լ. (1652)։

Գաբրիէլ վարդապետ Եթովպացի, հոգեւոր տեսուչ կրօնաւորացն Հապեշաց եղելոց յերուսաղէմ. հակող և պահպան վանօրէից կալուածոց և բովանդակ սեփհականութեանց նոցին որ 'ի Ս. Տեղիս։ Ի վախճանիլ սորա 'ի սոյն ամի, Եթովպացի կրօնաւորք թողեալ զվանօրայս և զտեղիս իւրեանց 'ի ձեռս Հայոց՝ եւ զպահպանութիւն նոցին յանձն արարեալ Ամատուածատուր Պատրիարքի. մեկնեցան յաշխարհն իւրեանց. և մնաց յերուսաղէմ միայն Մարիամ անուն կին մի կրօնաւոր։ Տեսեալ զայս ամենայն Տոսիթէոս Պատրիարքին Ցունաց. եգ 'ի մտի զինիլ ընդդէմ Հայոց. զի ախտ ագահութեան եւ տենչանք տիրապետութեան գրգռէր զսիրտս նորին, որպէս արարեալ էին նախորդք իւր, Սեբաստացւոց և Վրաց. և սա եւս պատեհ առիթ համարեալ՝ բանս եդ ընդ ազգային իւր 'ի կոստանդնուպոլիս. հանկոյց յինքն զդատաւորն եւ զմեծամեծս երուսաղէմի երեւելի արօք և պարգեւօք, և գրաւեալ զամենայն տեղիս Հապեշաց՝ սիրեաց բովանդակ սեփհականութեանց նոցին. յորմէ ծագեցաւ աղմուկ մեծ և խռովութիւն 'ի մէջ Հայոց և Ցունաց յերուսաղէմ։

Իսկ Ամատուածատուր Պատրիարք դեգերեալ 'ի դրունս այլազգեաց ջանայր թաւիլ զնոսա 'ի ձեռաց Ցունաց. զի Ցոյնք տագնապէին զնա, թէ Հապեշք հետեւող և համազգային իւրեանց իցեն. և Հայք զհակառակն պնդէին. եւ

յերկարիլ վիճին և չգտանել Հայոց օդնութիւն յուսահատել, առաքեցին յԵղիպատոս զՏէր Յովհաննէս, Ասան եւ զԱստուածատուր, առ Մարիոս Պատրիարքն Գալատոյ, և յայտ արարին նմա զբռնութիւնս Թուրաց, եւ զկորուստ իրաւանցն Հալէշոյ։ Այլ նորա չկարացեալ առնել զայլ ինչ՝ 'ի դատաստանի տեղւոյն վկայիւք հաստատեաց Գալատոյ եւ Հալէշոյ լինել հետեւոյ աղգին Հայոց, և էառ Հէօճճէթ 'ի դատաւորէն, և վճիռ 'ի չորից դէնպետաց, և զնոյն ինքն զԱստուածատուր Պատրիարք Հայոց՝ օրինօք դատարանի կարգեաց լինել փոխանորդ աղգին Հալէշոյ։ յանձն արկանել նմա զվանօրայս զկալուածս և զբաժին տեղւոյ 'ի տաճարին Ս. Յարութեան, եւ յայլ Ս. Տեղիս։ Լուցանել զկանթեղս և զմոմս, կատարել զսովորական Թափորն եւ զպաշտամունս նոցա։ Ժողովել զհաս կալուածոց և տընտեսել զամենայն գործս նոցա, ցընտրութիւն նոր վերատեսչին Հալէշոյ, եւ կարճել զձեռս Թուրաց 'ի վիճակէ նոցին, զի 'ի ժամանակի անտի մեծին Օմարայ երկոքին աղգքն հետեւակք են աղգին Հայոց։

Թէպէտեւ հասին այսոքիկ դրեանք յերուսաղէմ, եւ Հայք մատուցին զնոսա յաւետս դատաւորին, բայց չկարացին չհետել ինչ։ զի այլազգիք հակեալ 'ի կողմն Թուրաց, ոչ կամեցան ունկն մատուցանել բանիցն Հայոց։ Տեսեալ Աստուածատուր Պատրիարքի թէ կորոյս զնախկինսն Թիւնս Հալէշոյ, և նատելով յերուսաղէմ չկարէ չհետել ինչ։ յուղի անկեալ չոքաւ 'ի Կոստանդնուպոլիս աչակերտովք իւրովք (1656)։ եւ անկեալ 'ի դրունս գլխաւորացն Հայոց՝ խնդրէր օգնութիւն 'ի նոցանէ։ բայց նոքա ոչ ինչ նպաստեցին նմա։ զի կային պատաղէտ զաղծիկաւ իւրեանց։

Իսկ Մարիոս Մալիացի որ եկն յերուսաղէմ վերատեսուչ Լատին վանաց (1652)։ և 'ի նոյն ամի Լատինք կառուցանէին զնոր շինուածս 'ի վանս իւրեանց, յոր սակս կրեցին բազում նեղութիւնս յայլազգեաց՝ այլ խին եղանակաւ պատմէ 'ի դիւրս իւր։ «Վերջապէս յամին 1653 Պատրիարքութիւնք Թուրաց և Հայոց, և նոյն ինքն Մարիոս տեսուչն Լատինաց, չոքան 'ի Խաչատանքն Թուրաց, և 'ի դիշերին յայնմիկ խոյս կտուն յաւանն Ռեմէ եւ ապա

'ի Գազա, ուր նստէր Բդեխն։ և չգտեալ օգնութիւն ինչ 'ի նմանէ՝ իջին 'ի Յոպպէ, և 'ի 22 Յունիսի նաւեցին անտի, և 2 Օգոստոս հասին 'ի Կոստանդնուպոլիս։ և յետ դեգերելոց այսր և անդր, որոշեցին փոյթ առնել չհել ըստ բաւականին զսիրտ Բդեխին Գազայի, եւ տալ զոր խնդրէրն, զի մի խոպան կորուսցեն զամենայնն։ մանաւանդ զՍ. Տեղիս, զորս միւսանգամ չհիլն չէին բաւական բիւրաւոր քսակք դրամոց, որպէս զմորճ առեալ էին Լատին կրօնաւորք, յուսալով վերստին 'ի ձեռս բերել զվանքն զՍիոն, որոյ վասն աղաչեցին զԹագաւորն Գազղիոյ։ և նա առաքեաց դեսպանս 'ի Դուռն մեծամեծ պատարագօք։ այլ չեղեւ հնար չրջել զմիտս Թագաւորին Օսմանեցւոց։ զի ասէր նա՝ եթէ Թագաւորն Գազղիոյ տացէ հրաման կանգնել մզկիթս 'ի Փարիզ և 'ի Հռոմ, յայնժամ և ես տաց ձեզ զլեառն Սիոն։

Եւ տեսեալ նորա թէ եղիազար վարդապետ Անթաղցի յաջողակ է 'ի գործս և փարթամ ընչիւք, դիմեաց առնա և աղաչեաց ձեռնտու լինել ինքեան դրամովք և աչխատութեամբ, և խոստացաւ առնել զնա իւր փոխանորդ, և ապա նաեւ յաջորդ Պատրիարքութեան, Թէպէտ Աստուածատուր զփոխանորդութիւն եղիազարու մերձկաւ հաստատեաց 'ի դատարանի, այլ ոմանք 'ի միաբանից ոչ ընկալան զայն՝ և ոչ յանձն առին յանձնել նմա զիրս վանաց, մինչեւ հարկ լինիլ եղիազարու ինքնին մատուցանել զիր աղաչանաց 'ի Դուռն եւ հրովարտակաւ հաստատել զայն, որով բարձաւ ընդդիմութիւնն։ և 'ի ժամանել նորա յերուսաղէմ, յանձն արարին զյանձնացանս վանաց Ս. Յակոբայ։ Աստուածատուր Պատրիարք յետ առնլոյ զՀաստատութիւնն Պատրիարքի, զնաց նովաւ հանդերձ առ Ռուհիլեան Հայ յԵղիազարէ

և ընդ իշխանութեամբ Պատրիարքի նոցին ։ Եւ ՚ի ծանուցանել Նորա զինդիրն Արքային Մէհէմմետայ · հրամայեաց Նա անխափան պահել զսահմանս նախնեաց իւրոց , և արգելուլ զհակառակութիւնս Ցոյն Պատրիարքին · մանաւանդ զի յառաջագոյն ՚ի դատին ՚ի Թագաւորեալ քաղաքին ընդ Ցոյնս · Հայք օրինօք հաստատեալ էին ղերիս ազգաց հետեւակ ինքեանց ըստ զօրութեան դաշնագրոյն Օսմանայ , եւ վասն այսր գրեցաւ հրովարտակ և տուաւ Եղիազարու · յաջողեցաւ առնուլ մեւս եւս զայլ հրովարտակ , յորում գրեթէ բառ առ բառ գաղափարեալ էին բանք հրովարտակին Արքային Մէհէմայ , Այսոքիկ երիցքին հրովարտակք ընդդէմ Ցունաց , գրեալ ՚ի մի և նոյն թուականի · այն է ՚ի վերջ Զիլգատէ ամսոյ , ՌՀՀ (1656) · Եւ զկնի երից աւուրց էառ նաեւ զերրորդ հրովարտակ՝ և հոգացեալ զամենայն ինչ , եւ ՚ի Թագաւորեալ քաղաքէ անտի և եկն յԵրուսաղէմ · Եւ մատուցեալ առ դատաւորն խնդրեաց ՚ի նմանէ զգործադրութիւնս նոցին ։ կազմեցաւ ժողով մեծ յերեւելեաց քաղաքին , ուր էր և Բդեշխն Իպրահիմ Պէյ · ընթերցան հրովարտակքն և արձանագրեցան ՚ի դատարանի ։

Այսպէս համառօտին խնամոք նոցին ։ « Հայք որք բնակին յԵրուսաղէմ , ունին ՚ի ձեռս իւրեանց զեկեղեցիս , և զսեփհական տեղիս ՚ի տաճարին Ս · Յարութեան · կանթեղս և աշտանակս , և զքրհոն մեծ , և Թափօր ՚ի հանդիսի Լուսամատութեան և յայլ աւուրս · Եւ վանքն Ս · Յակոբայ , ուր բնակին Պատրիարքունք և միաբանք նոցին · Ս · Հրեշտակապետ եւ Ս · Փրկիչ , դերեզմանն Ս · Աստուածածնի , եւ զայլ ուխտատեղիս արտաքոյ քաղաքին երուսաղէմի · եկեղեցին Բեթղեհէմի , և հիւսիսային դուռն այրին Ծննդեան , և բանալի նորին · կանթեղք աշտանակք եւ պաշտամունք նոցին ըստ օրինաց իւրեանց , և բովանդակ վանք նոցա անդ · ունին նաեւ զայգիս պարտէզս և զդերեզմանատունս ։ Եւ զհետեւոդ զերիս ազգս · Դպիթիք , Հապէշք և Սաորիք · ըստ դաշնագրոյն Օսմանայ եւ Սալահատտինի , եւ հրովարտակաց Սուլթանացն Ակլիմայ և Սիւլէյմանայ տուեալ ՚ի ձեռս նոցա ։

Իսկ Պատրիարքն Ցունաց առեալ է ՚ի ձեռաց Հայոց զբանալի հիւսիսային դրան այրին Ծննդեան զրկեալ զնոսա

՚ի ժառանգութենէ նորին , և զայգն Հապէշաց համարեալ հետեւողս իւր · տրեալ է եկեղեցեաց ստացուածոց եւ կալուածոց նոցին , որք չպատկանին Ցունաց ։ Այս պատուիրէ , ՚ի հասանիլ հրովարտակացն ազատել զնոսա ՚ի ձեռաց նոցին · բառնալ զհակառակութիւնս նոցա ըստ ամենայնի , զոր գրեցաք ՚ի վեր անդր · զի բարերարութեամբ եւ զթութեամբ Արքային , մնասցեն Հայք ՚ի սեփհական ժառանգութիւնս իւրեանց , որպէս հաստատեալ են հրովարտակօք առաջին Թագաւորքն , զորս մատոյց յատեան եղիազար վարդապետ » ։

Եւ զկնի այսմ հրամայեաց դատաւորն երթալ բազմութեամբ ՚ի գիւղն Բեթղեհէմ , եւ անդ եւս ընթեռնուլ զհրովարտակն · չոքան անդ Բդեշխն , փոխանորդ դատաւորին Շէրիֆ Իտրին՝ եկեղեցականք Հայոց , Ցունաց եւ այլք ։ Ընթերցան զհրովարտակն յեկեղեցւոջ անդ առաջի բազմութեան , և ըստ ակնարկելոյ դատաւորին ծանուցին զիմաստս նոցին կղերացն Ցունաց · Եւ փոխանորդ նոցին հնազանդեալ հրամանին՝ յանձն արար եղիազարու զդուռն հիւսիսային այրին Ծննդեան և զբանալի նորին , և դարձան յերուսաղէմ · Եւ զկնի աւուրց փոխանորդն Ցունաց եւս ՚ի ձեռս եղիազարու զամենայն սեփհականութիւնս և զկալուածս Հապէշաց , եւ դատաւորն պատուեր եւս Ցունաց չգործել ինչ ընդդէմ հրովարտակին ։

Երեմիա Չէլեպի քէօմիւրճեանց եղբայր Տէր Կոմիտաս քահանայի նահատակելոյ , եկեալ էր յուխտ յերուսաղէմ յաւուրս Աստուածատուր Պատրիարքի · Նախ քան զգրաւումն Ցունաց զվանօրայս Հապէշաց (1650) · գրէ ՚ի տաճկաբարբառ գիրս իւր ընդդէմ Ցունաց՝ այսպէս , « Հապէշք ՚ի տաճարն Ս · Յարութեան ՚ի Թափօրին զկնի Հայոց չրջին · վանօրայք և Ուխտատեղիք նոցին են ՚ի ձեռս Հայոց , եւ նա ինքն Երեմիա Չէլեպի յուխտաւորութեան անդ իւրում ինքնին բացեալ է զդուռն մատրան Ս · Աստուածածնի (յանուն Մարիամու Եգիպտացւոյ) ՚ի ներքոյ մատրան Լատինաց , ՚ի գաբէթի տաճարին Ս · Յարութեան , և լուցեալ զկանթեղս նորա յերեկոյեան ժամուն » ։ Դարձեալ գրէ անդ , « ի գալստեան Հապէշաց ՚ի կոստանդինուպոլիս հիւրընկալեալ են յեկեղեցիս Հայոց , ուր աղօթէին հաւա-

տար ընդ նոսա. և 'ի մեռանիլ Հապէշ երիցու միոյ՝ Հայք կատարեցին գյուղարիաւորութիւն նորին ըստ ծխի եկեղեցւոյն Հայոց, եւ թաղեցին 'ի գերեզմանատունս իւրեանց (1652)։

ԳԼՈՒԽ ԽԶ.

Բաժանումն այրին Ծննդեան 'ի մէջ Հայոց և Յունաց. կախումն կանթեղաց։ Գործ եղիազարու։ Վէճ Յունաց ընդ Հայս. և վճռումն գործոյն նոցա զվճռական Հապէշոյ. անդհանութիւնք Հապէշոյ։ Տագնապ եղիազարու։ Նուիրակութիւն Ս. Էջմիածնի։ Գրաւումն Ս. Յակոբայ 'ի Յունաց։

Յետ գրաւելոյ եղիազարու զբանալի այրին Ծննդեան, եղ 'ի մտի սահմանել նաեւ զժամ պատարագի և պաշտաման Հայոց անդ, բայց խորհէր թէ ո՛րպէս հնարեսցի կարգաւորել եւ զեռեղել զկանթեղունս յՍ.յրին, զորս բարձեալ էին յառաջագոյն Լատինք՝ և Յոյնք։ Եւ մինչ նա յայսմ խորհրդի էր, ահա յերուսաղէմ յաւուրսն յայնոսիկ Բդեչխն Գազարոս Հիւսէին Փաշայ, գնացին առ նա վարդապետք Յունաց եւ եղիազար վարդապետ, և միջնորդութեամբ նորին հաշտեցան ընդ միմեանս, և եղեւ խաղաղութիւն առ ժամն. ապա հաւանութեամբ երկուց ազգաց սահմանեցաւ որոշել զպատահարկութիւնն Ս.յրին Բեթղեհէմի յերիս բաժինս 'ի մէջ երկուց ազգաց. ըստ եղից գրանց Ս.յրին, որք են 'ի հարաւ՝ 'ի հիւսիս եւ յարեւմուտս, որ վարկաւ կայր յայնժամ. երկու բաժինն ընդ Ծննդեան տեղւոյն լինել՝ Յունաց, և մի բաժինն ընդ Մարոյ տեղւոյն՝ լինել 'ի ձեռս Հայոց. ունել Յունաց կանթեղս 42. որպէս կախեալ էին յիւրաքանչիւր տեղիս. կախել Հայոց եւս կանթեղս 21. Յունաց կատարել զպատարագն եւ զպաշտամունս իւրեանց 'ի վերայ Ծննդեան տեղւոյն, և Հայոց 'ի վերայ տեղւոյն Մարոյ. Հարաւային դուռն և բանալի նորին լինել 'ի ձեռս Յունաց և դնել զմի դռնապան 'ի միաբանից նոցին։ Դուռն հիւսիսային և

բանալի նորին լինել 'ի ձեռս Հայոց, եւ դնել զմի դռնապան 'ի միաբանից նոցին, և երկաքանչիւր ազգաց մտանել յՍ.յրն 'ի սեփհական դրանց իւրեանց։ Իսկ արեւմտեան փակեալ դուռն մնալ 'ի ձեռս երկուց ազգաց իրաւամբ երից բաժնից. եւ այսպէս միաբանեալ սահմանեցին առաջի Բդեչխին, և դատաւորն գրով հաստատեաց զմիաբանութիւնն նոցա։

Եւ զկնի աւուրց ինչ առաքեաց եղիազար վարդապետ զՅակոբ Թարգմանն առ դատաւորն առաքել զմի ոք 'ի սպասաւորից իւրոց 'ի Բեթղեհէմ, պատրաստել զտեղի կանթեղացն եւ կախել զնոսա 'ի սահմանեալ տեղիս։ Եւ նա առաքեաց զպետրապետն գրկալ գիր առ ազգն Յունաց, չհակառակիլ Հայոց սակս որոշեալ իրաց, զորս սահմանեցին միաբանութեամբ։ Ուղեկից եղեն նմա քարտուղար Բդեչխին Իսլրահիմ աղա, Պատրիարքն Յունաց՝ եւ Յովհաննէս եպիսկոպոս Հայոց, և զկնի բանից և քննութեան և պատրաստելոյ զտեղիս բնեւեաց՝ կախեցին զկանթեղս Հայոց այսպիսի եղանակաւ. 3 կանթեղ 'ի վերայ Ծննդեան տեղւոյն, դէմ յանդիման կանթեղացն Յունաց։ 5 կանթեղ 'ի վերայ Մարոյ տեղւոյն։ 3 կանթեղ 'ի վերայ դրան Ծննդեան 'ի ձեղուանէ Ս.յրին յանդիման կանթեղացն Յունաց։ 2 կանթեղ յանդէպ Ծննդեան տեղւոյն 'ի ձեղուանէ Ս.յրին։ 3 կանթեղ 'ի ձեղուանէ հիւսիսային դրան Ս.յրին՝ որ 'ի ձեռս Հայոց։ 2 կանթեղ 'ի վերայ հարաւային դրան՝ 'ի ձեռս Յունաց։ 3 կանթեղ յարեւմտեան յետին կողմն Ս.յրին. բոլանդակն 21 կանթեղ սեփհական ազգին Հայոց։

Յետ կատարելոյ նոցա զայս ամենայն, դարձ արարեալ անտի պատմեցին դատաւորին. եւ նա պատուիրեաց երկաքանչիւրոց չայլայլել զիրս ինչ, զի մնասցեն իւրաքանչիւրքն 'ի տեղիս իւրեանց (1656)։

Յետ այսր ամենայնի Եղիազար որոնեալ եղեալ զթագուցեալ դրամն 'ի Գրիգոր Պարոն Տէրէ, և գատարկեալ զանօթն եղ 'ի նոսա դեղին և սպիտակ մոմ. Զման ինչ 'ի դրամոց անտի եղ 'ի ծածուկ տեղւոջ յայլ ինն խորշ վանացդ, իսկ զմնացեալսն սփռեաց յանկասած տեղիս, և ինքն այնուհետեւ եղ 'ի մտի առնել չինութիւն 'ի վանս անդ և յայլ տեղիս. և ծախել զամենայն 'ի պէտս եկեղեց-

ւոյ, որպէս աւանդի 'ի ձեռագիրս, եւ 'ի պատմութիւն Հ· Մ· Զամչեան· Հատ· Գ· Եր· 665։

Տեսեալ Պատրիարքին Ճունաց զայսպիսի յաջողուածս գործոց եղիազարու, զայրացաւ յոյժ, և եղեալ յերուսաղէմ չոքաւ 'ի Կոստանդինուպոլիս։ Ի նոյն աւուրս 'ի 3 Սեպտեմբերի նստաւ եպարքոս անուանին Ֆէօպրիւլիս Մէհէմմէտ Փաշայ, մատեան առ նա Յոյնք մեծամեծ պատարագօք։ Սահմանեցաւ առանձին ժողովով վճարել զգործն, և եղեւ պատուէր երկուց ազգաց, 'ի ժամանակաւել աւուրն յանդիման լինիլ մեծի ատենին 'ի Դուռն։ Գնաց Պատրիարքն Ճունաց իւրովքն հանդերձ. և Աստուածատուր Պատրիարք առաքեաց զխոհանորդս իւր, որք էին Աբրահամ, Ռուհիջան, Մոմա Դաւիթ և Ղարաթան։ Եւ եղեւ սկիզբն լինիլ դատաստանին, բողոք երարձ Պատրիարքն Ճունաց, և սկսաւ ամբաստան լինել զԱստուածատուր Պատրիարքէն Հայոց, առաջի արար զկարծեցեալ դաշնագիրն Օմարայ որդւոյ Ղաթթաբայ, և զհրովարտակն Սէլիմայ և Սիւլէյմանայ և այլ թագաւորաց։ և ցուցանէր զբովանդակ տեղիս եւ զվանօրայս իւրեանց, և յաւել եւս 'ի բանս իւր, վանք Ս· Յակոբայ լինել Վրաց· Հապէչք, Գալթիք և Ասորիք հետեւողք ազգին Ճունաց, վանօրէից եւ ստացուածոց նոցին ժառանգորդ Պատրիարքն· ապա խնդրեաց կարճել զձեռս Պատրիարքին Հայոց յիրացն Հապեշաց։ Ճեւ ընթեռնլոյ առենակալաց զբերանս զորս մատոյց Պատրիարքն Ճունաց։ Հարցին ցխոհանորդսն Հայոց թէ՝ զի՞նչ ունին պատասխանել վասն այդոցիկ իրաց։ Իսկ նոքա գոլով արք անպիտանք և անտեղեակք գործոց երուսաղէմի՝ թէպէտ և մատուցին գրեանս ինչ, այլ ոչ կարէին հաստատել զբանս գրոց, և առեանն ոչ կամէցաւ ունկն մատուցանել նոցա, կեղծս և խաբեբայս համարելով զնոսա, եւ այս յաւէտ յակնարկութենէ մեծի վէզիրին· և Հայք տըրտմութեամբ դարձան յետս։

Ապա գրեցաւ հրովարտակ առ դատաւորն եւ առ քաղաքապետն երուսաղէմի, յոր եւոեն գրել Յոյնք 'ի կարգս վանօրէից իւրեանց, զվանօրայս և զստացուածս Հապեշաց Գալթոց և Ասորւոց, զի մի հակառակեսցին վանս այնց լատինք և Հայք· և վասն այսր սահմանեցին Յոյնք տալ մի

ընդ ամէ 1000 դահեկան 'ի մղկիթին Սուլթան Ահմէտայ, առնուլ 'ի ձեռաց Հայոց զվանօրայս՝ զորոշեալ տեղիս եւ զայլ կարասիս Հապեշաց, եւ յանձն առնել Պատրիարքին Ճունաց։ Նոյնպէս և զբանալիս երկուց դրանց այրին Բեթղեհէմի՝ և զայլ ամենայն տեղիսն, 'ի վերջ Իւլիւլ ամսոյ, ՈՀՀ (1665)։ Լուեալ զայսոսիկ եղիազարու յերուսաղէմ զարհուրեցաւ յոյժ, զի զհետ էին ըմբռնել և զնա, իսկ նորա խոյս տուեալ անտի անկաւ առ Բդեշխն Գազայի, և եղիտ անդ զերկուս Շէյխս, զմին եթող յերաշխի առ Բդեշխն, և զմիւսն առեալ ուղեկից իւր անկաւ 'ի Սինայ։ Իսկ Յոյնք վերստին գրաւեցին զվանօրայս և զստացուածս և զբաժինս Ս· Տեղեաց, Հապեշաց, և մնաց 'ի ձեռս նոցա մինչեւ ցայսօր ժամանակի։ Այսոքիկ են տեղիք կամ վիճակք Հապեշաց, զորս յափշտակեցին Յոյնք։ Ի տաճարին Ս· Յարութեան, Սեղան մի փոքր 'ի Գողգոթայ· Մութ եկեղեցին, սենեակ տախտակամած (թախթ) անդ։ Խորանքն Փուշ պսակի եւ Ղունկիանոսի։ Թախթ Սարգսի Խոշեցեալ տեղին, 'ի ներքոյ վերնատան Հայոց 6 սենեակք կոչեցեալ տեղին, 'ի ներքոյ վերնատան Հայոց 6 սենեակք կրկնայարկ 'ի ձախակողմն Գերեզմանին Քրիստոսի։ 1 կանթեղ 'ի վերայ Պատանատեղւոյն առ կանթեղօք Գալթոց։ 4 կանթեղ 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի 'ի սնարից, և 1 յանոտից։ 1 կանթեղ 'ի վերայ Հրեշտակի վիմին։ Փոքր մատուռն յանուն Մարիամու Եգիպտացւոյ 'ի գաւթի Ս· Յարութեան։ Վանք Հայր Աբրահամու գարձեալ անդ։ Վանք յանուն սրբուհւոյն Կատարինեայ 'ի գլուխ շուկայի երկաթագործաց։ Ի ձորն Գեթսեմանի յեկեղեցին Ս· Աստուածածնի, խորանն յանդիման ջրհորոյն 'ի կողմն հիւսիսոյ։ 3 կանթեղ 'ի վերայ գերեզմանի Ս· Կուսին։ յեկեղեցին Բեթղեհէմի։ Խորանն՝ 'ի ներքոյ աստիճանացն Ճունաց, յանդիման աջակողմեան դրան այրին։

Իսկ Աստուածատուր Պատրիարք մատոյց յայնժամ գիր աղաչանաց առ եպարքոսն Ֆէօպրիւլիս, բայց ոչ ինչ չահեալ՝ եւ 'ի Կոստանդինուպոլսոյ թախծագին ոգւով, եւ եկն յերուսաղէմ խորհիլ վասն այսր ընդ եղիազարու, կարգեալ 'ի Կոստանդինուպոլիս իւր գործակալ երուսաղէմի զՌուհիջան իշխանաւորն։

Իսկ Յոյնք՝ որք էին յերուսաղէմ, կամելով խափան նը-

կուն առնել զՀայս, և յինքեանս յափշտակել նաեւ զվանս Ս. Յակոբայ զրնիկ վիճակ նոցա, զրկեցին սուտ ամբաստանութիւն առ եպարքոսն, թէ զհրովարտակն քոյ՝ զոր յղեցեր այսր, ոչ ընկալան Հայք, այլ մերժեալ զնոյն, տուկաւին տիրեն վիճակին Հապէշաց։ Սոյնպէս և վանն զեղիազար՝ վարդապետէ չարախօս լեալ ասացին, թէ մատուցեալ նորա 30,000 դահեկան առ Հիւսէյին Բդեշխն Գազայու, չինեաց անդ եկեղեցի Հայոց։ Յաւելին և որ՝ ի Կոստանդինուպոլիս էին Յոյնք այլ եւս ամբաստանութիւն վանն եղիազարու, և բազում երեւելի տրամբ հաճեալ զնպարքոսն՝ առին՝ ի նմանէ հրովարտակ, զի Յունաց լիցի նաեւ Ս. Յակոբ, և եղիազար ուր եւ գոցի իրրեւ դլխաւորատ ածցի՝ ի Դուռն։

Իսկ ամբաստանութիւն Պատրիարքին Յունաց էր այս, յորոյ վերայ եւ հրովարտակ Արքունւոյս՝ ի \ Մուհարրէմ ամսոյ՝ \•ՂՀ թուին։ «Հայք ոչ անսացեալ Կայսերական հրովարտակաց եւ զատարանի վաւերական դրոց, հակառակ նախնական սովորութեանց· բռնութեամբ ունին զվանս Ս. Յակորայ պատրիզաք և ամենայն պարագայիւք, որ էր վանք Վրաց· եւ զրանալի երկաթեայ դրան ԲեթղեհԷմի, և յետուստ կողմանէ նորին զանեալս Հապէշաց և Գպթից, և զպարտէզն առաջի նոցա։ Արդ վանքն այն, պարտէզքն և բովանդակ տեղիքն յանձնեցի Յունաց, և քահանայն որում՝ զոր չինեցին Հայք՝ ի մէջ պատրիզին՝ ի ԲեթղեհԷմ, և բանալիքն առցի՝ ի ձեռաց Հայոց։

Ի հասանիլ այսր հրովարտակի յերուսաղէմ հանդերձ պատասխանով եպարքոսին, վուխայ եղիազար եւ անկաւ՝ ի դրունս մեծամեծաց և առ Բդեշխ քաղաքին Հասան Փաշայ եւ առ հայր նորա Հիւսէյին Փաշայ Բդեշխ Գազայի, որք էին իւր բարեկամք· և՝ ի ձեռն նոցա խափանեաց առ ժամանակ մի զհատուցումն հրամանաց։ Դիմեաց ապա եւ առ մեծ Բդեշխն Դամասկոսի, Թէյ-ը ըզը-՝ խնդրել օգնութիւն՝ ի նմանէ։ Իսկ նա՝ քանզի բազում ինչ առեալ էր՝ ի Յունաց, եւ ունէր եւս՝ ի ձեռն զհրաման եպարքոսին վանն տալոյ՝ ի Յոյնս զՍ. Յակոբ· սատակաց եղիազարու և արգել զնա՝ ի բանտի։ Եւ եղիազար տուեալ Բդեշխին քանի մի քսակս արծաթոյ՝ արձակեցաւ, եւ խոստացաւ

այլ եւս բազում, եթէ հնարեսցի ինչ՝ ի կողմն Հայոց։

Իսկ Բդեշխն Թէպէեաւ յոյս եւս նմա վանն դարմանն գտանելոյ իրացն, այլ հրամայեաց բերել առ ինքն զվիճակաւոն Ս. Յակորայ եւ պահել զայն առ իւր յատենդ՝ առաքեաց ապա և եւս կնքել զդուռն Ս. Յակորայ։ Եւ ապա բան տալ եղիազարու եւ բան յաճախելոյ խոստման դրամոցն, գրեաց ինքնին Բդեշխն Թուղթ վկայութեան առ եպարքոսն՝ թէ սուտ է այն ամբաստանութիւն Յունաց, զոր գրեալ են առ քեզ վանն Հայոց· զի ահա ասէ՝ վիճակ Հապէշաց՝ ի ձեռս Յունաց է, և ոչ Հայոց· և եւս՝ չիք չինեալ Հայոց եկեղեցի՝ ի Գազա· զի այն եկեղեցի՝ դորմէ գրեալ են Յոյնք, մղկիթ մեր է, ասէ, ՝ի վաղ ժամանակաց։ Իսկ զոր հրամայեալ էք ձեր, թէ տեղին Ս. Յակոբ կոչեցեալ՝ ասցի Յունաց, անմարթ է լինել· զի ամենայն ազգ զիւր առանձին վիճակ ունի յերուսաղէմ, եւ Ս. Յակոբ Հայոց է՝ ի սկզբանէ անտի։

Զայս այսպէս գրեալ Բդեշխին Դամասկոսի՝ յղեաց ընդ Թուղթն առ եպարքոսն՝ ի ձեռն ուրումն իշխանի· ընդ նմին առաքեաց առնա և ազնիւ ընծայս, և խնդրեաց գիր հաստատութեան՝ զի մի ելցէ Ս. Յակոբ՝ ի ձեռաց Հայոց։ Այլ յառաջ քան զժամանել իշխանի Բդեշխին՝ ի Կոստանդինուպոլիս, եկն Հասա անդր Դաւիթ վարդապետ Բերիացի, և ծանոյց Հայոց վանն չիտթութեանցն երուսաղէմի, ունելով Թուղթ աղաչանաց՝ ի դիմաց եղիազարու, և ոսկի յոլով՝ ի պէտս ծախուց, զորս յանձնեաց Ռուհիչան դրծակալին։

Եւ նորա առեալ զոմանս՝ ի մեծամեծացն Հայոց, գնաց վաղվաղակի առ ոտս եպարքոսին, որ հանդերձեալ էր չուել յԱդրիանուպոլիս· այլ երկրորդն նորա, որ այն ինքն է Վեկիր քեահիեայ՝ խոցեալ զզալուստ նոցա, ՝ի բաց վարեաց զնոսա՝ գիտացեալ թէ չինչ պատճառս են եկեալ։ Եւ իրրեւ մեկնեցան նոքա անտի՝ եկն եհաս՝ ի Կոստանդինուպոլիս Թղթարեր իշխանն, որում հանդիպեալ վուխանակի Ռուհիչան հանդերձ 30 պարմբք յերեւելեաց Հայոց՝ եւս նմա երաշխաւորութիւն, թէ պատրաստ եմք վճարել որչափ ինչ դրամք երթիցեն վանն հաճելոյ զեպարքոսն՝ ի ստանալ վերստին զՍ. Յակոբ։ Եւ իշխանն երեալ

գնաց յԱդրիանուպոլիս, ուր հասեալ էր յայնժամ եպարքոսն, և մատոյց առ նա զդիր Թխայր օղլու Բդեչխին եւ էարկ աղերս 'ի դխոյ Հայոց։ Իսկ եպարքոսն առեալ և ընթերցեալ զթուղթն ծալեաց եւ եդ 'ի ներքոյ ծնգաց իւրոց, և ոչ արար պատասխանի առ իշխանն. այլ դրեաց գիր առ Թխայր օղլուն, թէ զոր ետուս՝ տուեալ եմ։ Բայց այսու ամենայնիւ Թխայր օղլուն Թոյլ ետ Հայոց բանալ 'ի Զատկի զդուռն Ս. Յակոբայ եւ դարձեալ էառ զիշխանութիւն, այլ Թողացոյց նոցա կալ անդ լուսաբեամբ իրրեւ 'ի ծածուկ։

Զայս լուեալ եպարքոսին յազդարարութենէ Յունաց, դրեաց սաստ առ Թխայր օղլուն, և ինքն եդ այնուհետեւ 'ի մտի 'ի ձեռս բերել զեղիազար եւ առնուլ զդլուխս նորա։ Եւ Հայք յանհնարինս մտեալ՝ ազդ արարին եղիազարու զգուշանալ անձին, եւ առնուլ գիր վկայութեան 'ի դաստաւորաց Երուսաղէմ և 'ի Բդեչխից. և նորա դեղբեալ այսր և անդր, չրջեր տագնապաւ յԵդիպտոս եւ 'ի Դամասկոս և 'ի Գազա և յայլ տեղիս։

Յետ ապստամբելոյ 18 Բդեչխից՝ ընդ որս էր և Թխայր օղլու, կոչեալ առ ինքն զեղիազար պահեաց զնա առ իւր, ասէն ուսնելով առնուլ և այլ ինչ 'ի նմանէ. և յաւացուցաննէր զնա 'ի վերայ վանից Ս. Յակոբայ, ասելով՝ Թէ մեք հանդերձեալ եմք փոխել տալ զեպարքոսն, եւ կարգել զմին 'ի մէնջ եպարքոս, եւ յայնժամ 'ի գլուխ տարայց զինդիր քո։ Եւ Թէպէտ եղիազար ոչ հաւատայր այսմ, և աղաչէր արձակել զինքն, բայց Թխայր օղլուն ոչ եթող զնա իւր տարի մի։

Ի սմին ժամանակի նուիրակունք Ս. Էջմիածնի մտեալ 'ի սահմանս Օսմանեան Պետութեան սխուեալ էին 'ի դաւառս և 'ի քաղաքս. 'ի Վան, 'ի Տիգրանակերտ, 'ի Կարին, 'ի Տարօն եւ յայլ տեղիս. հասին նաեւ մինչ 'ի Կոստանդինուպոլիս, բաժանէին զմիւռոնն Ս. և ժողովէին զտուրս ժողովրդոց։ Սակայն Թողեալ նոցա զպաշտօնս իւրեանց, ձեռն արկին ընդդէմ կանոնի յիրս եկեղեցւոյ. փոխել զառաջնորդս և այլայլել զպաշտօնեայս եկեղեցւոյ ըստ կամս իւրեանց, և արկանել խռովութիւն 'ի տեղիս տեղիս. զինել զբազումս ընդդէմ իշխանութեան ազգին. յորդո-

րել զժողովուրդն յետս կալ 'ի նոցանէ, և ճանաչել մայր եւ գահեակ ինքեանց զՍթռ. Ս. Լուսաւորչին։ Լուեալ զխաւտորաց ազգին զայսպիսի խռովայոյզ և երկպառակիչ բանս վարդապետաց էջմիածնի՝ բողոք կարգացին առ Արքայ եւ գրեալ գիր ամբաստանութեան առաքեցին յԱդրիանուպոլիս, հանել զնոսա 'ի սահմանաց Օսմանեան Պետութեան. զի մի անկցի խռովութիւն 'ի մէջ ժողովրդոց, զի անվթար կարասցեն վճարել զհարկն Տէրութեան. եւ զի մի' վարդապետք Պարսկաստանի, որ առանց հրամանի Տէրութեան չրջին այսր և անդր, ձանձրացուսցեն զժողովուրդն՝ պատճառանօք բաժանելոյ զմիւռոնն. բռնի պահանջել զյոլով դրամս, և զայլ սոյնպիսի անկարգութիւնս, որք յաճախեալ էին 'ի մէջ ազգին 'ի սմին ժամանակի։ Գրեցաւ հրովարտակ հրամանաւ Արքային Մեհէմմէտի առ դաստաւորս քաղաքաց քաղաքաց, և 'ի Կոստանդինուպոլիս, բառնալ զանկարգութիւնս նուիրակաց, և չբաժանել զմիւռոնն առանց կայսերական հրամանի. եւ եթէ ոչ կամիցին խաղաղութեամբ դառնալ յաշխարհն իւրեանց, գործել ըստ սրատմադրութեան օրինաց։

Իսկ Մարտիրոս վարդապետ, որ էր յայնժամ 'ի թաղաւորեալ քաղաքի անդ՝ յորդորեալ 'ի բազմաց՝ գնաց յերկիր իւր 'ի Կաֆա, որպէս զի մարթասցի 'ի ձեռն Թոթար Խանին, որում էր սիրելի՝ հանդեցուցանել զեպարքոսն վասն դարձուցանելոյ զվիճակն Հայոց՝ որ յերուսաղէմ։ Գրեաց Թոթար Խանն վասն այսր գիր աղերսական և յորդորական առ Բէօսրիւլիւ Եպարքոսն, այլ նա աննայեալ անտես արար զաղաչանս նորա։ Ուստի և Յոյնք վրատահութիւն առեալ դիմեցին առ Թխայր Օղլու, որոյ 'ի ձեռս էր փականք Ս. Յակոբայ, և տուեալ նմա բազում ինչ՝ առին զայն և եկեալ յերուսաղէմ յաւուրս Պենտէկոստէից և տիրապար 'ի բաց վարեալ զՀայս, որք տակաւին մնացեալ էին իբր Թաքուն 'ի վանս Ս. Յակոբայ, գտարկեցին զամենայն անօթս և զպատս եկեղեցւոյն և դարպասաիցն և սենեկաց, և բնակեցուցին զՀայս 'ի Թաղն Փռչ կոչեցեալ, և ոչ Թողուին նոցա ելևմտուտ առնել 'ի Ս. Յակոբ ընդ մեծ դուռն, այլ բացին դուռն մի փոքր ընդ կողմն իշխանացն, զի ընդ այն մտցեն և ելցեն, և եղեւ սբրտ-

մուքիւն և սուգ մեծ Հայոց եղելոց անդ՝ և ուխտաւորաց եկելոց (1657)։

Ցառաւել յոխորտալ և՛ի ճախանալ Ցունաց՝ ի վերայ Հայոց՝ եւ՛ի ծաղր առնել զիշխանութիւն Պատրիարքի նոցին, կախեցաւ Պատրիարքն իւրեանց՝ ի Կոստանդնուպոլիս՝ ի Պարմադ դարու ասացեալ տեղոջ, եւ մեծամեծքն եղան՝ ի բանտն մահապարտաց։

Իրրեւ եհաս Աստուածատուր Պատրիարք թէ՝ Ցոյնք ո՛չ միայն զօրացեալ տիրեցին վիճակին Հապեշաց, այլ յամէնատակեցին նաեւ զբուն վիճակին ազգին Հայոց զՄուրց Ցակոբ եւ զայլ տեղիս, անկեալ՝ ի դրունս այլազգեաց էառ դիր վկայութեան և հանդարտութիւն, և ապա և յերուսաղէմ թախտագին սրտիւ եւ չոգաւ՝ ի Կոստանդնուպոլիս զտանել օգնութիւն վասն Ս. Ցակոբայ, եւ եղիազար վարդապետ յղեալ էր զդրամն առ Հայս՝ ի Կոստանդնուպոլիս, զի մարթասցին նոքօք՝ ի թիկունս հաստանել երուսաղէմ, եւ զի յայնժամ պատուղեալ էին նոքա զաղմկաւ Թովմայի Պատրիարքի իւրեանց, որ արկեալ էր ընդ իշխանութեամբ իւրով ընդ այլ եպիսկոպոսունս եւ զՊատրիարքն երուսաղէմ. զրկաց եւս առ նոսա թուղթ՝ ի բանակէ Բդեշխից ապատամբելոց, զի՞ կայ ձեր ասէ՝ եւ Թովմայի, թողեալ զերուսաղէմ՝ պնդեալ էք զհետ միոյ առն, զի՞նչ ինաս կարէ առնել նա ձեզ։ Իրրեւ տեսին տեղակալքն թէ՝ եղիազար ոչ է միաբան ընդ իւրեանս՝ ի մերժումն Թովմայի, ոչ ինչ փոյթ կալան զաղաչանաց նորա, եւ զդրամն առաքեալս՝ ի նմանէ ծախեցին՝ ի պէտս կռնոց իւրեանց, պատճառելով՝ թէ յորժամ զԹովմս բառնամք՝ ի միջոյ, յաջողին և իրք Երուսաղէմի։ Եւ յորդորէին զԱստուածատուր Պատրիարք եւս միաբանիլ՝ ի կորուստ Թովմայի, այլ նա ասէ՝ ինձ զի՞ փոյթ է վասն նորա, ես այժմ՝ ի նեղութեան եմ. զի Ս. Ցակոբ էլ՝ ի ձեռաց։ Բայց արեղայք Աստուածատուր, Սարգիս և Դաւիթ՝ բանիւ տեղակալաց գրգռէին զնա, և առեալ՝ ի ծածուկ զկինիք Աստուածատուր՝ կնքեցին նովիմբ զդիր սիրաստանութեան Թովմայի, և նա ոչ դիտելով միրն, չկամէր միաբանիլ ընդ նոսա, յորմէ կասկածեալ տեղակալաց եւ ժողովրդոց յորդորէին զնա լինիլ կամակից ինքեանց, զի

Լեհ Թովմա ապրի առանն՝ հալածատու առնէ և զերեսաղէմ, և յոչ անսալ Աստուածատուր՝ ի բաց կացին՝ ի նմանէ։

Եհաս գինի սակաւ աւուրց եւ Մարտիրոս վարդապետ՝ ի կաթողիկ, և խնայեալ որ ինչ գործեցաւն՝ լուա եղեւ, մանաւանդ թէ անիծեալ լեալ զայնմանէ՝ խնդրէր հնարս վասն իրացն երուսաղէմի. էառ ընդ իւր զոմանս՝ ի Հայոց և գնաց ընդ առաջ Բէօպրիւլիւ Եպարքոսին՝ որ դարձեալ դայր՝ ի պատերազմէն Մահառաց ընդ ճանապարհ Պելըրզատու, և մատուցեալ առ նա դիր ազաչանաց յիւրմէ և՝ ի Թաթար Խանէն, ազաչէր վասն տեղւոյն Ս. Ցակոբայ, զոր առին Ցոյնք։ Իսկ Եպարքոսն զայրագին դիմաք առեալ նմա եւ որոց ընդ նմա՝ ասէ, եւ ա՞ստ եւս եկեալ դաիք գիս, խաղաղարար դուք, յորոյ բանից զգէի հարեալ նոցա, հապէ ուրեմն զերծուցին զանձինս՝ եւ դարձան տրտմութեամբ յետս։

Իսկ եղիազար Անթափոցն՝ էր տակաւին՝ ի նոյն աւուրս՝ ի բանակ Բդեշխից ապատամբելոց, արդելեալ անդ իբր՝ ի կալանս՝ ի Թիլար օղլու Բդեշխէն Դամասկոսի, ընդ որում ակն մինչեւ՝ ի Պրուսա, և խնդրէր հնարս զերծանիլ՝ ի ձեռաց նորա, և երթալ հոգալ վասն Ս. Ցակոբայ, զի յուսահատ եղեւ՝ ի խոստմանէ Բդեշխին, որոյ վասն գրեաց բազում անգամ թուղթ աղաչանաց առ Հայս՝ ի Կոստանդնուպոլիս, և ձեռամբ նոցա մատոյց աղերս առ եպարքոսն Բէօպրիւլիւ, որ նորոգ դարձեալ էր՝ ի քաղաքն, իսկ եպարքոսն որովհետեւ ըստ չարախօսութեան թիւրքեանց՝ համարէր զնա միաբան ընդ ապատամբան, ոչ միայն չանսայր աղաչանաց նորա, այլ և զհետ էր՝ ի ձեռս ածել և պատուհասել զնա։ Եւ եղիազար նեղեալ էր յոյժ յերկուց կողմանց. զի մնալ՝ ի բանակի ապատամբաց յանցանս համարէր եւ երկնչէր յերեսաց եպարքոսին, իսկ փախչիլ՝ ի բանակէ անտի ոչ համարձակէր, կասկածեալ յահէ Բդեշխից։ Այլ յետոյ վատահացեալ՝ ի հնարս եպարքոսին և գրով աղերսանաց յայտ արարեալ՝ թէ ակամայ կամ յարգելանս՝ ի բանակի աստ՝ խոյս եւս հնարիւք, և եկն՝ ի տեղի ուրեք մօտ՝ ի Կոստանդնուպոլիս յամենայն նոյեմբերի, և նստաւ զամիսս երիս արտաքոյ քաղաքին՝ ի պարտիզի

ուրուն իշխանի յայլազգեաց, որ կոչէր Մէհէմմէտ աղա, և էր հոգաբարձու նորա Մարտիրոս վարդապետ կաֆացի աշակերտ Նորուն, որ եւ դեգերէր 'ի դրունս մեծամեծաց վասն նորա և վասն ազատութեան Ս. Յակոբայ։

Ցետ ջնջելոյ ապստամբ Բդեշխից ձեռք կոչեցելոց, իբրեւ ազդ եղեւ Եպարքոսին 'ի Թլթլեանց, թէ Եղիազար թագուցեալ կայ 'ի պարտիզի ուրեք, եւ երթեւեկն առ նա բարեկամք նորա, առաքեաց վաղվաղակի զօրականս հանդերձ մատնչաւն, որ կոչիւր Շէկ Գասպար, ունել զնա, և նոցա կալեալ զեղիազար՝ տարան յատեան։ Ցօսեցաւ ընդ նմա Եպարքոսն բարկութեամբ, և ասէ. դո՞ւ ես փոխանորդ Պատրիարքին երուսաղէմի, ասա՛ ինձ զի՞նչ էառ 'ի քէն Թիւար Օղլու։ Եւ նա ասէ՝ զամենայն զոր ինչ ունէի, էառ յինէն, Տէր, և զվանս մեր՝ որ Ս. Յակոբ ասի՝ առեալ այլոց՝ կալաւ զնս ընդ իւր խաբկանօք յարդելանն, թէ ահա երթամ առ Թագաւորն, և յայնժամ տաց զվանս ձեր 'ի ձեռս քո, այլ ես իբրեւ տեսի զյայտնի ապստամբութիւն նորա, և որոց ընդ նմա, ելի 'ի ձեռաց նորա և փախեայ այսր յոտս ձեր։ Ասէ Եպարքոսն, դու ինքնի՞ն էտուր Թիւար Օղլուին զվանսն, թէ նա էառ 'ի քէն։ Ոչ համարձակեաւ եղիազարու ասել թէ հրամանաւ քո եղեւ այն, պատասխանի էտ և ասէ, նա էր Տէր երկրին, և ես զի՞նդ կարէի ընդդիմանալ նմա։ Ասէ Եպարքոսն, կորիցէ երկիր ձեր ձեօք հանդերձ յանդունդս։ Ասէ Եղիազար, բարեբաստիկ Տէր՝ փառաւոր իշխան, մի անիծաներ զերկիր, այլ թոյլտուն քո յիմ վերայ. միայն խնայեա յաղգս իմ աղաչեմ, և արա իրաւունս 'ի փառս Արքայի և 'ի պատիւ երեսաց քոց, որպէս գիտէ Տէրութիւնդ։

Իսկ Եպարքոսն քանզի դեռ կասկած ունէր զնմանէ, հրամայեաց էտ հանել զնա յատենէ անտի և մատնել 'ի ձեռս դահճապետին, պնդել զոտս նորա յերկաթ, և պահել յօթեւանս զինուորաց ենիչէրլեր կոչեցելոց, եւ էր առաջին ժամ դիշերոյ 'ի 18 աւուր փետրվարի յորում պահու գայր եւ ձիւն սաստիկ, եւ ոչ ոք 'ի Հայոց իշխէր երեւիլ անդ 'ի դրան։

Բայց սակայն մի ումն 'ի ծանօթից եղիազարու, երեմիա Զելէպի Քեօմիւրճեանց, այր երեւելի եւ զգօն, առեալ

դրամս պահապանաց եմուտ առ նա, և որպէս ինքն պատմէ, եռես զի նստեալ նորա առ հրով չղթայ յոտս՝ փոխանակ ջերմանալոյ դողայր յերկիւղէ մահու. և 'ի տեսանելն զերեմէա՝ ելաց և լացոյց զնա, զի բարձեալ էր 'ի յոյսոյ կենաց. եւ ասա 'ի ձեռս նորա ծրար մի 500 ոսկւոյ, և զկնիքս իւր զմեծ և զփոքր։ Եւ նորա յոյս առեալ եղիազարու և մխիթարեալ զնա՝ ել և գնաց անտի, և տարեալ զաւանդն՝ եւս 'ի ձեռս Ռուհիջանին, որ էր գործակալ Պատրիարքին երուսաղէմի։

Մնաց եղիազար յերկաթս զաւուրս 3½. եւ բարեկամք նորա երթային և գային 'ի դրունս իշխանաց ծանր ընծայիւք, մինչեւ ճանճրանալ նոցա և ասել, մի՞թէ կարեմք իշխել կամաց Եպարքոսին. համբերեցէք սակաւ մի, և մեք գոցուք ելս իրացդ։ Ապա նոքին իսկ իշխանք այլազգեաց յաղաչանս անկեալ հայցէին բազում անգամ յեպարքոսէն՝ կատարել զխնդիրս Հայոց և հանել զեղիազար, միանդամայն դարձուցանել 'ի նոսա և զՍ. Յակոբ որ յերուսաղէմ։

Այլ նա ոչ լուաւ, և 'ի թախանձել նոցա բազմօք, յանձնեաց զիրան մեծի իշխանին, որ երկրորդ իւր էր (Վէզիր Փիահեասի). և զի Յոյնք որսացեալ էին զնա 'ի կամս իւրեանց՝ 'ի դիմել Հայոց առ նա՝ մերժեաց զնոսա յիւրմէ։ Գնացին ապա Հայք հանդերձ Մարտիրոս վարդապետիւ 'ի տեղին ուր կայր եղիազար 'ի կապանս, և 'ի խօսիլ նոցա ընդ նմա վասն ազատութեան անձին նորա և վասն Ս. Յակոբայ, ասէ ցնոսա եղիազար. վասն իմ մի ինչ հոգայք, այլ հոգ ձեր լիցի վասն Ս. Յակոբայ, զի մինչեւ ոչ ազատեսցի այն, ես ոչ կամիմ ելանել ասի. եւ ապա գրեաց թուղթ առ Մարտիրոս վարդապետ՝ և ասէ՝ որ ոք կամեցի հանել զիս ասի առանց կամելոյ հոգ տանիլ ազատութեան Ս. Յակոբայ, նզովեսցի յԱստուծոյ։ Այլ Մարտիրոս վարդապետս ոչ մատուցեալ ունկն բանից նորա, խորհուրդ արար ընդ Հայս, և գնացեալ նոքօք հանդերձ վերատին առ մեծամեծս այլազգեաց, ազաչէր զնոսա, մանաւանդ զՀազարապետեան զՄիւլէյման Պէյ, մեւանդամ միջնորդել դոնէ վասն ազատութեան եղիազարու. եւ նոքա հաշիւ ուրեմն հաճեցուցեալ զիսան Եպարքոսին առանց իրիք տուգանաց եւսուն արձակել զեղիազար, զոր առեալ Հայոց

բազում խնդութեամբ բերին ՚ի Դալմաթիա ՚ի Մարտի 22։

Ցետ այնորիկ ետ ընտրել եղեալաքՀոդվրդոց զՄարտիրոս վարդապետ կաթողիկոսական Պատրիարքութեան կոստանդինուպօլսոյ՝ առեալ նմա 10,000 դահեկան ՚ի սահար սիրոյից իշխանութեանն, եւ առեալ հաւանութիւն ՚ի մեծ մանկ ժողովրդեան՝ մատոյց գիր աղաչանաց առ եպարքոսն, և նոյոյց զՄարտիրոս Պատրիարք թագաւորեալ քաղաքին առանց ձեռնադրութեան եպիսկոպոսութեան, և եհան ՚ի հրովարտակէ Պատրիարքութեան կոստանդինուպօլսոյ ընծէրութիւն իշխելոյ ՚ի վերայ Երուսաղէմի։ Ցետ հանդարտելոյ սակաւ ինչ մեծի խռովութեանն, որ տեւեաց զամիսս 5, եւ հաչտելոյ երկուց կողմանց միջնորդութեամբ խաղաղասէր անձանց և խորհրդով Մարտիրոս Պատրիարքի, և վճարելոյ զ14,000 դահեկան պարտսն, զոր արարեալ էին ՚ի պատճառս մահուն Թովմայի, մերթ կալան այնուհետեւ դառնել հնարս վասն աղատութեան Ս. Յակոբայ, զոր առին Յոյնք. և եղեալաք վարդապետ յորդոր լեալ մեծամեծացն՝ ետ նոցա ժողովել դրամս ՚ի պատճառս այսր, և սպասէր յաջող ժամու։

Եւ եղեւ ՚ի մատուցանել վերոյհն եղեալարս գիր աղաչանաց առ եպարքոսն յԱդրիանուպօլիս վասն իրաց Ս. Յակոբայ, առաքեաց նա յերուսաղէմ հանդերձ գրով զմիոմնն ՚ի սպասաւորաց իւրոց Մուստաֆայ անուն՝ առ ՚ի ըստուգել և տեղեկանալ զհանրագրոյն, զոր առեալ էր յառաջագոյն Առաքելածատուր Պատրիարք՝ որպէս գրեցաք։ Եւ նորա հասեալ յերուսաղէմ, մատոյց զգիր եպարքոսին առ դատաւորն եւ զգիր վկայութեան սլաղգացն երուսաղէմի կնքեալ և ստորագրեալ ՚ի նոցունց, որ ունէր օրինակ զայս։ «Հայք բնակեալք ՚ի դարուս և՚ի ժամանակաց հետէ յերուսաղէմ, ունելով ինքեանց սեպհական ժառանգութիւն զվանօրայս Ս. Յակոբ, Ս. Փրկիչ, Ս. Հրեշտակապետ, զվանս Բեթղեհէմի, յոր մտանեն յերկոթեայ դրանէ, որ ՚ի մէջ մեծի եկեղեցւոյն, պարտէզ և ծառատունկ անդ, զսենեակսն որ ՚ի վերայ երկաթի ներքին դրան, գիտեմք զի Հայք սիրեալ և ժառանգեալ են այնոցիկ, և զայլ ոք ոչ գիտեմք։ Ասպա խնդրեաց պաշտօնեային ՚ի դատաւորէն կոչել զսլաղգիան զայնոսիկ, հարցանել և տեղեկանալ ճշմարտութեան, ըստ պատուիրելոյ եպարքոսին։ Ցանդիման լինիլ սլաղգացն այնոցիկ եւ ՚ի հարցանել նոցա՝ եռուն պատասխանի եւ ասեն, ճշմարիտ է գիրն վկայութեան և մեք կնքեալ եմք մատանեօք մերովք. վանօրայք և տեղիքն յիշատակեալք ՚ի գրի, են սեպհականութիւնք Հայոց, և ոչ ոք տիրեալ էր բաց ՚ի նոցանէ՝ մինչեւ ցօրն, յորում բռնութեամբ եհան ՚ի ձեռաց նոցա Թիւրք օզլու Ճէլալի կոչեցեալ։ Եւ լուեալ պաշտօնէին զայսոսիկ բանս ՚ի բերանոյ նոցա, խնդրեաց ՚ի դատաւորէն ՚ի գրի հարկանել զնոսա, որպէս յայտ արարին, և նորա գրեալ ետ ցնա. ՚ի ՚\ Ռէպիլ Էվվէլ ամոյ՝ ՚\՚Ո. (1659)։

Ցաւուրսն յայնոսիկ Ռէօպրիւլիւ Մէհէմմէտ եպարքոսն կարգեաց զորդի իւր զԱհմէտ ՚ի Բդեշխութիւն Կարնոյ՝ հրամանաւ և համաւթեամբ Թագաւորին, եւ արար վասն այսր հանդէս մեծ ՚ի Պրուսա առաջի Արքայի եւ ուրախութիւն ամենայն ժողովրդեան. և իբրեւ հանդերձեալ էր մեկնել Ահմէտ ՚ի Պրուսայէ ՚ի Կարին՝ յուզարկաւորեաց զնա հայր նորա Ռէօպրիւլիւ, և Թագաւորն ընդ նմա երեւելի վառօք։

Զայս ուրախութեան ժամ առեալ դիտող հանարեալ եղեալարս՝ եհան վերոյհնակի բազում ընծայիւք յոտս մեծի իշխանին՝ որ Վէզիր քիահեասի կոչի, և այլոց իշխանաց, եւ ազերս արկեալ՝ խնդրէր միջնորդ լինել առ եպարքոսն, զի դարձուսցէ վասն սիրոյ որդւոյ իւրոյ ըզվիճակն Հայոց՝ որ յերուսաղէմ, այն է վանք Ս. Յակոբայ, և այլ տեղիք։ Եւ նոքա գիւրաւ որսացին զսիրտ եպարքոսին յայնմ պահու. և՚ի ծանուցանել նորա Արքայի՝ եղ հրաման զի կատարեսցին խնդիրք Հայոց։ Եւ յաւուրսն յայնոսիկ դարձեալ էր պաշտօնեայն յերուսաղէմ, զոր առաքեալ էր եպարքոսն վասն քննութեան հանրագրոյն սլաղգացոց, զոր առեալ էին Առաքելածատուր եւ եղեալարս, և զգիր դատաւորին մատոյց առ եպարքոսն, յորում յայտ առնէր զքննութիւնս՝ եւ զամենայն տեղիս Հայոց նշանակեալ ուրոյն ուրոյն. ընթերցաւ այս գիր առաջի Արքային եւ յայտնի եղեւ նենգութիւնն Ցունաց։ Գրեցաւ հրովարտակ՝ յոր սկիզբն առնէ պատմել զհանրագիրն՝

զոր մատուցին նահակաւ Պատրիարքն և փոխանորդն Հայոց, քննութիւնն 'ի ձեռն պաշտօնէին, զգիրս դատաւորին և այլազգեացն երեսաղէմի, զհրովարտակն Սէլիմայ Արքային՝ և զնենգութիւն ազգին Ճուճայ, որոց առեալ զպաշտօնեայս 'ի Թէյար օղլուէն՝ զորոյ զգլուխն հատեալ էին, որ յայնժամ կուսակալ էր 'ի Դամասկոս, անիրաւութեամբ և զրկանօք յափշտակեալ են զեկեղեցիս և զվանօրայս Հայոց· ապա 'ի մէջ բերէ զգիրս դատարանի և ըստ հրովարտակաց նահանեաց իւրոց, մի ըստ զօրութեան նոցին տիրել Հայոց սեփհական վիճակի իւրեանց, եկեղեցեաց, վանօրէից, ուխտատեղեաց՝ և ամենայն սուգուռածոց որպէս յերեկն և յառաջն· արգելու և խափանել զնախատակութիւնս Ճուճայ, զի մի անհնազանդ գտեալ ասէ՝ հրամանաց իմոց բռնասցին 'ի վերայ հպատակացս, եւ առիթ լիցին տարադէպ ցրուելոյ նոցա այսր և անդր, և եթէ խարէպութեամբ հրովարտակ եւս հանեալ մատուսցեն, մի երբէք յարդ ընծայեսցի այնմ, և այսպիսի դատք և բընդիրք՝ որք միանգամ օրինօք Շէրիվի լուծեալ իցեն, միւսանգամ մի' լիցի ունկնդրութիւն· ապա պատուիրէ զգոյշ լինել չգործել ինչ հակառակ կայսերական հրամանին, զի իւրաքանչիւր ազգ կացցեն 'ի տեղիս իւրեանց առանց այլայլելոյ զսահմանս միմեանց՝ որպէս առանդեալ ունին 'ի նախնեաց անտի· ի \ձեմազիլէվվել առոյ՝ \•Ը• տուեալ յիսներկ քաղաքի· Եւ եղեւ այս մատ յաւուրս Խաչ վերացի յամի Տեառն (1659) եւ 'ի թուին Հայոց ՌՃՐ· Առեալ յայնժամ Եղիազարու զհրովարտակն՝ եկն յերուսաղէմ եւ 'ի բաց վարեալ զՁոյնս, անդրէն 'գրաւեաց զվանս Սուրբ Յակոբայ 'ի ձեռաց նոցին·

Եղիազար վարդապետ նախ քան զվեկնիլ իւր 'ի Կոստանդինուպոլսոյ, եւս հաստատել հրովարտակաւ զփոխանորդութիւնն իւր, որոյ բովանդակութիւնն է· «Աստուածատուր եպիսկոպոսն, որ կայսերական հրովարտակաւ Պատրիարք է յերուսաղէմ, եւ զվանօրայս մայրաքաղաքիս վեց եկեղեցեաց և ամենայն երեսփոխանք Հայոց մատուցին զիր աղաչանաց 'ի բարձրագոյն Դուռն, զի յերուսաղէմ, որ 'ի սկզբանէ անտի ուխտատեղի է ամենայն քրիստոնէից, եւ ըստ սրամադրութեան Արքունի հրովարտակաց՝ տուեալ յաւուրց անտի Սրբային Սէլիմայ՝ մինչեւ ցաւուրս մեր, Հայք՝ զոր ինչ միանգամ ժառանգութեամբ ունին 'ի գաւառին յայնմիկ, եկեղեցիք, վանօրայք, կալուածք եւ սուգուռածք, այգիք, պարտէզք եւ ամենայն սեփհականութիւնք· արծաթեղէնք և պղնձեղէնք, և ամենայն սպասք եկեղեցւոյ, 'ի վերայ ամենեցուն սոցա Եղիազար վարդապետ լիցի իշխան և վերատեսուչ, և անմիջական փոխանորդ Աստուածատուր Պատրիարքի, և յայսմհետէ յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց՝ և կամ ոք և իցէ յազգէն Հայոց, թէեւ ունիցի 'ի ձեռս իւր հրովարտակ Սրբուհի՝ մի' իշխեսցէ գնալ յերուսաղէմ, եւ ձեռն մխել 'ի գործս եղիազարու· զի Հայք միաբանութեամբ խնդրեցին հաստատել զայս հրովարտակաւ, եւ բառնալ զամենայն խոչն, \•Ը\ (1660)։

ԳԼՈՒԽ ԽԷ·

Գործ Եղիազար վարդապետի· Կոտիլ նորա առանձին կաթուղիկոս յերուսաղէմ· Նուիրակութիւնք Էջմիածնի· Գժտութիւն Աստուածատուր Պատրիարքի և Մարտիրոս վարդապետի ընդ Եղիազարու·

ՀԱՍՏԱՏԵԱԼ Եղիազարու զիշխանութիւն փոխանորդութեան և գործակալութեան (նազր) Աստուածատուր Պատրիարքի, եղ 'ի մտի այնուհետեւ լինիլ գլուխ ազգին Հայոց և նստիլ առանձին կաթուղիկոս 'ի վերայ Հայոց եղելոց ընդ իշխանութեամբ Օսմանցւոց և դնել զաթոռ իւր յերուսաղէմ, զի լեալ էր ծանօթ երկրին· Այսպիսի խորհրդով ձեռնարկեալ չինեաց զեկեղեցի 'ի հարաւակողմն Ս· Յակոբայ կից նմին, յորում է մին յերից դրանց եկեղեցւոյն՝ անաղարտ պահեալ զկնութիւն նորին, և կոչեաց զայն Աչվիանձին, 'ի յիշատակ իշման 'որդւոյն Աստուծոյ 'ի վերաիսկաւմն մօրն և հուսի· Եւ կազմել զաթոռ Հայրապետական փառաւոր և գմբեթարդ, եւ Մելիտոն սին ճարտարագործ յօրինեալ չքեղացոյց 'ի կոտորոց առատիւ

և 'ի թեցոյ կրայից (1661)· որպէս երեւի ցարդ ։ Գնեաց 'ի Ծոպոլէ զտունն և զտեղին՝ և հաստատեաց անդ վանս, և զկ մթերանոցս 'ի Բզեվնկն Գաղայու, մերձ 'ի տեղին, յորում եաես առաքեալն Պետրոս զտեսիլ կատարն կախեալ 'ի չորից տանոց· ասա է մի մասն տան Սիմոնի խաղախորդի, լեալ յառաջագոյն եկեղեցի քրիստոնէից· եւ տեղի մթերանոցացս լեալ է յառաջագոյն գերեզմանատուն Հայոց, որպէս ցուցանեն հին հեծծելք, և մի մասն եկեղեցւոյն փոխեալ 'ի մզկիթ յայլազգեաց· գնեաց և զայլ տեղիս 'ի կալուածՙ վանաց, եւ զմի քանի տունս յատանն Ռհոմէ եւ խառնեալ զնաս ընդ միմեանս արար վանք եւ իջեւանատեղի ուխտաւորաց, և եկեղեցի յանուն Ս· Գեորգեայ զօրավարին, և զայլս 'ի կալուածՙ, և զգերեզմանատունն 'ի վերայ ճանապարհին Ծոպոլէի ։ Այլ զի մի զայրացցին այլազգիք տեղւոյն ընդ հաստատութիւն վանաց, չինեաց զմիաս նոցա՝ նորոգելով զմզկիթ տեղւոյն, որ յառաջագոյն էր եկեղեցի քրիստոնէից 3 խորանաւ յանուն Ս· Յովհաննու Կարապետի, եւ սահմանեաց տալ նմա ամ ըստ ամէ իբր իւղագին 17 դահեկան 'ի կալուածոց Ս· Գեորգեայ ։ Շինեաց եւ զեկեղեցի 'ի Գաղա յանուն Հրեշտակապետաց· այլ յետոյ յանհոգութենէ աւերեալ խանգրեցաւ յԱրաբացւոց, և մի մասն աւերակաց տեղւոյն կայ մնայ անդ ։ Շինեաց զսենեակս միաբանաց յարեւմտեան կողմն 'ի վերայ արտաքին մեծի դրան Ս· Յակոբայ, և կոչեաց զայն Աքեղբեղ՝ 'ի ակս բնակութեան վարդապետաց, որոյ յիշատակարանն եդեալ կայ յորմն արեւելեան, և զայլ կարեւոր չինուածս (1663)։

Դեպ եղեւ 'ի նոյն աւուրս գալ յաւխտ յերուսաղէմ Յաչատուր կաթուղիկոսին Սսոյ, որում բազում սէր և մեծարանս պատուոյ ցուցեալ եղիազարու եւ ընդունելութիւն արարեալ յանկոյց յինքն զսիրտ նորա, և յառանձին պահու 'ի մատրան Ս· Յակոբայ Գլխադրի յայտնեաց նմա զսորհուրդս սրտի իւրոյ, և յաւել ասել՝ Թէ 'ի յաջողիլ կաթուղիկոսութեան իմոյ ոչ հասցէ քեզ բնաւին վնաս ինչ, այլ մանաւանդ յամենայնի ձեռնտու եղից քեզ· կալցի ասէ էջմիածին զիշխանութիւն իւր 'ի վերայ Արեւելեայց և եթՙ՝ որք կան ընդ տէրութեամբ Պարսից, եւ դու զիշխանու-

թիւն քո զառաջին 'ի սահմանս կիւլիկիոյ, և ես գիւրաձգեմ յիս զամենեսին, որք կան արտաքոյ քումդ վիճակի ընդ տէրութեամբ Օսմանցւոց 'ի բովանդակ Հոռոմաստան։ եւ զի Յաչատուր էր պարզամիտ օր, 'ի խօսիլն եղիազարու բազում ինչ հանդերձ խոտամտիւք, եւս նմա հաւանութիւն։ յայնժամ երկոքին նոքա 'ի միասին ուխտիւք դաշինս եդեալ հաստատեցին 'ի դիտող ժամու 'ի գլուխ առնել զերան։

Մեկնեալ անտի Յաչատուր գնաց 'ի տեղի իւր, և յետ ժամանակի 'ի կոստանդինուպոլիս վասն խռովութեան Դաւթի վարդապետի Բերիացւոյ։ Եւ եղիազար վարդապետ փութացեալ էառ ընդ իւր ոսկի բազում եւ դիմեաց առ սուս Եպարքոսին, այն ինքն է Քէօպրիւլիւ օղլու Ահմէտ Փաշա, և մատուցեալ նմա զընծայս իւր առատ՝ հաճեցոյց զնա, և էառ հրովարտակ առանձին կաթուղիկոսութեան, զոր խորհեալն էր 'ի վերայ Հայոց եղելոց ընդ տէրութեամբ Օսմանցւոց։ Էառ մխանգամայն և զՊատրիարքութիւնն երուսաղէմ։ էր 'ի բանակի Եպարքոսին մի ոմն յիշխանաւորացն Հայոց, Ասլրօ Զէլէպի ասացեալ, զոր եւս յանկոյց եղիազար 'ի կամս իւր և արար զնա իւր սրտակից և ձեռնտու։ Եւ խորհուրդ առեալ 'ի նմանէ չ'յայտնել զիրն այլոմ առ ժամանակ մի, մեկնեցաւ անտի և դարձ արարեալ գնաց 'ի Բերիա։ Ցղեաց անտի վաղվաղակի թուղթ 'ի կոստանդինուպոլիս առ Յաչատուր կաթուղիկոս Սսոյ, յորում գրեալ էր այսպէս. «Հոգեւոր եղբայրդ մեր Յաչատուր կաթուղիկոս, 'ի հասանիլ գրոյս 'ի ձեռս քո, փոյթ ընդ փոյթ եթէ հնար իցէ, դու ինքնին եկեսցես ընդ սուրհանդակաց առանձին 'ի Բերիա· սպասաւորք և կարասիք քո զինի եկեսցեն 'ի վանսդ։ մի յամեր աղաչեմ, զի ժամ է կատարելոյ զգան մեր, զոր հաստատեցաք 'ի միասին յերուսաղէմ։ Ընթերցեալ Յաչատուր զայս գիր՝ պատրաստեցաւ յուզի անկանիլ· բայց զգուշացեալ՝ զի մի 'ի գործել նորա զայսպիսի ինչ չտասցէ, ծագեացի ազմուկ չափթիթ եւ ինքն 'ի պատճառս այլոց 'ի բերան անկցի ամենեցուն, կոչեաց 'ի ծածուկ զամանս յերեւելեացն Հայոց և 'ի զգօնամիտ անձանց, ընդ որս էր եւ երեմիա Զէլէպի Քեօմիւրճեանց, և խորհուրդ արար ընդ նոսա վասն խրացս այս-

ցիկ։ Իսկ նոքա իրրեւ լուան, ափչեցան և զահի հարան։ յայտնի տեսանելով Թէ որպիսի պատահումն հանդերձեալ էր լինիլ 'ի մէջ ազգին, եւ պատահումն անկարկատելի, մանաւանդ զի գիտէին՝ Թէ հաւան է բովանդակ ազգն ընդ Ցակոբ Կաթուղիկոս Էջմիածնի, և սիրով կապեալ ընդ նմա վասն բարելաւութեան նորա, եւ չէր ուրուք գտեալ 'ի նմա արատս ինչ, վասն որոյ բազում աղաչանօք հաւանեցուցին զՄաչատուր մի վաղվաղել, զի Թերեւս դադարեսցի յայնպիսի խորհրդոց։ Եւ քանզի գրեալ էր եղիազար առ Յովսէփ վարդապետ, զոր եթող իբր փոխանորդ իւր 'ի Կոստանդինուպօլիս՝ զի յղեսցէ առ ինքն զերեմիա Չելէպի՝ վասն վինելոյ նորա յաջողակ 'ի գիր և 'ի բան, զնա ինքն զերեմիա յղեցին պատգամաւոր առ եղիազար՝ զի Թերեւս կարասցէ նա իմաստութեամբ իւրով փոխել զվիտս նորա։

Հասեալ երեմիայ 'ի Բերիա՝ յանդիման եղեւ եղիազարու, և խօսեցաւ ընդ նմա բազում ինչ 'ի բազում աւուրս՝ այլ ոչինչ օգտեցաւ։ քանզի ասէր եղիազար՝ իմ առեալէ Աբգունի հրովարտակ յետարքոսէ վասն կաթուղիկոսութեան, ապա զի՞ եւս ընդունայն աշխատիք նաներացուցանել զայն, և սկսաւ առաջի դնել նորա Թէ 'ի նաւիլ իմում յԱթոռ Հայրապետութեան, ահն ունիմ բազում օգուտս ցուցանել եւ առնել ազգիս Հայոց վինութեամբք և կարգաւորութեամբք, և չառնուլ բնաւ նուէրս 'ի ժողովրդենէ։ Եւ երեմիա Չելէպի անյոյս լեալ 'ի փոխելոյ զվիտս նորա՝ ծանոյց գրով 'ի Կոստանդինուպօլիս։ Իսկ եղիազար յետ ժամանակաց զայս Պետրոս կաթուղիկոսական տարաւ ընդ իւր Էջմիածին, և զնոր մահուան նորին, Սիմէոն կաթուղիկոս երեւանցի արկեալ 'ի հուր այրեաց՝ զի գրեալ էր 'ի նմա զանուանդ երուսաղէմ։ Տե՛ս 'ի Գէորգ Ջամբռ կաթողիկէ, տպեալ ՚ի Վենետիկ, երես 239։

Ցետ սակաւուց եկն և Մաչատուր կաթուղիկոս Սսոյ 'ի Կոստանդինուպօլսոյ 'ի Բերիա, և անդ վերատին խորհեալ ընդ եղիազարու եւ տեսեալ 'ի ձեռին նորա զԱբգունի հրովարտակ՝ զնջաւ կամաց նորա, և ձեռնադրեալ

էօծ զնա կաթուղիկոս։ Գրեաց յայնժամ եղիազար Թուղթ Օրհնութեան առ ամենայն Հայս եղեալս ընդ Տէրութեամբ Օսմանեցւոց, եւ յայտ արարեալ նոցա զնշխանութիւն իւր՝ զոր ընկալաւ Թագաւորական հրովարտակաւ, յորդորեաց զամենեսին կալ սիրով ընդ իւր, խոստացեալ նոցա առնել բազում բարիս, և ըստ ժամանակին առաքել 'ի ձեռն Նուիրակաց զՄիւռոնն ձրի, առանց իրիք նուիրաց և տուրց, և ինքն եղեալ դնաց յերուսաղէմ։ Եւ մինչդեռ ինքն էր 'ի Բերիա՝ գրեաց գիր գանկատանաց առ եպարքոսն, եւ առաքեաց զայն 'ի ձեռն պատգամաւորի, ամբաստանելով զնուիրակաց Էջմիածնի, զի ըստ սրամտագրութեան Աբգունի հրովարտակին ասէ՝ որ յառաջագոյն չնորհեցաւ ինձ, զի երուսաղէմ և եթ է տեղի ընդհանուր քրիստոնէից, և ամենեքեան դան անդր, և Հայք որք բնակեալ են 'ի կողմանս Ասիոյ և Եւրոպիոյ 'ի Պետութեան ձեր՝ են ընդ հոգեւոր իշխանութեամբ իմով, եւ չէ օրէն օտարաց և այլոց՝ առանց գիտութեան իմոյ ձեռն արկանել յեկեղեցական իրս եւ փոխել զպաշտօնեայս նորա հակառակ բարձրագոյն հրամանին, որ չնորհեալ է ինձ 'ի գանձանել (մալիյէ)։ Իսկ այժմ վարդապետք Պարսկաստանի չրջեալ 'ի գաւառս Օսմանեան Պետութեան՝ ընդդէմ օրինաց եւ կանոնի չվոթեն զգործս ժողովրդոց. ժողովեն զդրամս բռնութեամբ, և հասուցանեն գրկանս և անիրաւութիւնս ազգին՝ պատճառելով զմիւռոնն. և ապա թնդըրէ հանել զնոսա 'ի սահմանացն Օսմանեցւոց։ Գրեցաւ հրովարտակ վասն այսր առ ամենայն դատաւորս քաղաքացն Ասիոյ, 'ի Տիգրանակերտ, 'ի վան, 'ի Կարին, 'ի Սեբաստիա և յայլ տեղիս, առնել ըստ գանկատանաց եղիազարու եւ մերժել զնուիրակսն Էջմիածնի 'ի սահմանաց անտի։ Ցեղս ձգմտալիլ էվվել ամսոյ՝ ՌՀՀԸ (1666)։

Ի ժամանել Թղթոյ եղիազարու յայլ և այլ տեղիս, անկաւ երկպառակութիւն 'ի մէջ ժողովրդոց. կէսք 'ի կողմն Ցակոբայ կաթուղիկոսին Էջմիածնի, և կէսք՝ մանաւանդ Թէ յօլովք՝ 'ի կողմն եղիազարու, և կռչէին զիրերաս ՑՔՔՆ Ե ԵՂԲՈՐՔՈՆ։ Լուեալ Ցակոբայ կաթուղիկոսի ըզգործսն եղիազարու՝ 'ի կասկածի եղեւ սակս խռովութեան։ գրեաց նամակս խրատականս յայլ և այլ կողմանս

և յորդորեաց զամենեսեան յետս կալ յայնպիսի վրդովմանից գործոյ և բաժանելոյ զԱթոռ Լուսաւորչին 'ի դայթակղութենէն բազմաց եւ 'ի վնաս ազգին. մանգամայն խնդրէր իրաւունս, թէ զի՞նչ պատճառ եցեն, զի կամին որոշել 'ի հարազատ զլխոյ իւրեանց։ Գրեաց և առ Երուսաղէմացիս, և առ Սահակ, եւ տալաչաց զնոսա մի զհետ լինիլ եղիազարու՝ ակնկալութեամբ ընդունայն չահու։ Զգնաց և 'ի Բերիա առ եղիազար միջնորդ խաղաղութեան զՅովհան վարդապետ Արղնցի, զայրն զգօնամիտ և խնամուն, և ոչ ինչ օգտեցաւ։

Իրրեւ լուաւ Մարաիրոս վարդապետ կաթողիկոսութենէն եղիազարու՝ եւ վազվազակի յաչխարհն իւրմէ 'ի Դրինայ, դիմել 'ի Կոստանդինուպոլիս, խոհանել զգործս նորա, որպէս զի առնուցու զիրէց թշնամութեան նորին. և զճանապարհայն, ուր և հասանէր 'ի քաղաքս քաղաքս՝ ծանուցանէ չարախօսէր զեղիազարէ, և զնայր հանել զնա յաչաց ամենեցուն։ Եւ իրրեւ եհաս յԵդեսիա, եառեալ զի եկեալ էր անդր թուղթ Օրհնութեան յեղիազարէ և հաւանեալ եւս են ընդ այն գլխաւորք քաղաքին, ընդ որ դժուարեալ յոյժ Մարաիրոսի՝ եւ 'ի բեմն. և յետ խօսելոյ բազում ինչ զեղիազարէ՝ յաւել ասել զօրհնութիւն և զանէծս առն այնպիսւոյ որպէս զառաքելս պատուանց սարա է համարել։ Գրեաց ապա և ինքն գիր առ եղիազար լի անհանդիստ կշտամբանօք և անլսելի բերնամանօք. իսկ յերեսս թուղթն, ուր գրի հասցէ՝ եդ զանունն պատուոյ Կաթուղիկոսի այսպէս. « Հասցէ գիրս 'ի Հալապ 'ի ձեռս եղիազարու Կաթուղիկոսին Հայոցառնեայց »։ Եկեալ թուղթսերին 'ի քաղաք անդր՝ հանդիպեցաւ նմա Յովհաննու վարդապետի Արղնցւոյ, և նմա եա զթուղթն հասուցանել 'ի ձեռս եղիազարու. անդ դառաւ և երեմիա Զէյթլի, և Սուքիաս աշակերտ եղիազարու. և զի սոքա անտարակոյս գիտէին՝ թէ բանք նախատանաց կան գրեալ 'ի թուղթ անդ 'ի Մարաիրոսէ, չկամէցան տալ զայն եղիազարու։ Բայց եղիազար իրազեկ լեալ այսմ՝ խնդրեաց զթուղթն եւ բացեալ սկսաւ ընթեռնուլ յառաջիկայութեան երեմիայ եւ այլոց։ Իրրեւ եհաս 'ի կէս թուղթն՝ չառազուեցան երեսք նորա 'ի սրամտութենէ,

զի անտանելի էին բանք թուղթն. յայնժամ ձգեալ երեմիա զձեռն իւր՝ ասէ ցեղիազար, զի՞ եւս կարէաս ընդդատանա այդպիսիս. տուր լինիմ զի պատասխանիցէ զքո, և Սուքիաս բուռն հարեալ՝ յինքն հառ զթուղթն՝ և ասէ. ընդդէ՞ր է քեզ պատասխանել զայդ. առ ազգս Հայոց բողոքիմք՝ խնդրել զդատաստան 'ի Մարաիրոսէ եւ յայտ առնել՝ թէ այսպիսիք ոմանք են դիմադարձք եղիազարու. իսկ երեմիա աղաչէաց անետս առնել և յոչ ինչ համարիլ զբանս նորա. զի նա դիտեմ ասէ՝ թէ որպիսի ոք է նա յեղյեղուկ մտօք և անզգոյշ 'ի բանս. եւ այսպէս մեկնեցան 'ի միմեանց և երեմիա գնաց յուսատ յերուսաղէմ. իսկ Մարաիրոս ելեալ յԵդեսիոյ գնաց յԵդիաբեն, եւ անտի 'ի Կոստանդինուպոլիս. եւ ըստ խորհրդոյ Յակոբայ Կաթուղիկոսի՝ գտանել իւր ձեռնտու զմիրզէ և զՅոսեփ արեւելեան վաճառականս Հայոց, և նա ասէ եկից հանդարտ զինի քո։

Իսկ Աստուածատուր Պատրիարք՝ յորմէ յաւիտենից եղիազար զՊատրիարքութիւնն երուսաղէմի, բազում ընծայիւք հանեցոյց զիդեչէ քաղաքին որ կոչէր Էմիր էլ Հաճ Փաշա՝ և զայլսն. էառ դիր 'ի դատարանէ, և հանդարտութիւն յայլազգեաց, և առաքեալ 'ի դուռն՝ ամրաստան եղեւ զեղիազարէ։ Եւ դրեաց առ Մարաիրոս վարդապետ 'ի Կոստանդինուպոլիս զի հնարացի նանրացուցանել զՊատրիարքութիւն եղիազարու. եւ հաստատել զնոյն, յղեալ առ նա 20,000 դահեկան։ Եւ նորա տուեալ ինչ ինչ առ տեղապահ Եպարքոսին՝ էառ 'ի նմանէ թուղթ հաւանութեան, զի Աստուածատուր հաստատեսցի 'ի Պատրիարքութեան երուսաղէմի, եւ ինքն Մարաիրոս 'ի վերանորոգութեան նորին. և առ հաստատութիւն այսր առեալ Մարաիրոսի ընդ իւր զԹլքլեանս և զնմանիս նոցա, եւ եւ գնաց յԱդրիանուպոլիս, ուր եկեալ էր Եպարքոսն հանդերձ բանակաւ՝ դարձ արարեալ 'ի պատերազմէն Մաճառաց, եւ 'ի սոյն միջոցի Յակոբ Կաթուղիկոս ոչ դադարէր գրել առ ատ ատ դիր եւ նամակ օրհնութեան ընդ ամենայն տեղիս, աղաչելով զամենեսեան մի կրկին դառնալ երկպառակութեան, և մի' ընդդէմ գինել հարազատ ախոռոյ լուսեանց, եւ քանզի կային բազումք՝ որք

անչեզլի մուօք կապեալ էին ընդ Աթոռոյն Իջմիածնի, ունին մատուցեալ բանից Յակորայ Կաթուղիկոսի՝ ամենայն ոգւով ջանային խափանել զհնարս եղիազարու, որոյ վասն իսկ բազում պատարագօք և ընծայիւք դիմեալ յոտս Բդեշխից այլ և այլ քաղաքաց, Երուսաղէմի եւ Դամասկոսի, Ամիդայ և Կարնոյ, աղաչէին զնոսա մի տալ տեղի եղիազարու ՚ի կողմանն յայնոսիկ։ Եւ Բդեշխքն կարգեցին խնդրակս և պահակս յանցս ճանապարհաց, զի ուր և գըտցեն զեղիազար՝ կալցեն զնա։ Եւ ըստ բաղձալոյ Աստուածատուր Պատրիարքի՝ գրեցաւ հրովարտակ ՚ի Դրանէ՝ առ ամենայն իշխանս և գաւառս, սկսեալ ՚ի Կոստանդինուպոլսոյ մինչեւ ՚ի Դամասկոս, յորում ասէ. «Ի հասանիլ կայսերական հրովարտակիս գիտութիւն լիցի, եկին հասին յերուսաղէմ ՚ի կայսերական ատեանս թղթեանք դատաւորի և հանրագրութիւնք գիտնականաց և երեւելեաց քաղաքին, յորս հաստատեն խռովայոյզ չարութիւնք եւ պատիր նենգութիւնք եղիազարու, որ նախ քան զայս լեալ էր Պատրիարք Հայոց յերուսաղէմ. և լինակիչք քաղաքին վարեն զայն անառ, և ոչ կամին թնակիլ նորա անդ։ Արդ բարձեալ է ՚ի նմանէ իշխանութիւնն պատրիարքական եւ զայլ ոք եդեալ ՚ի տեղի նորա. եւ կարգեալ է ոստիկան ՚ի Դրանէ ՚ի վերայ նորա, արդարութեամբ քննել զգովանդակ հաշիւս նորին։ զի ուր և գտցի խռովայոյզ այրդ եղիազար ՚ի սահմանադ յայդոսիկ, քարշեսցի ՚ի գաւառան ՚ի ձեռն ոստիկանի, և ճշդիւ առնուլ զհաշիւն երուսաղէմի, ուր վարեաց նա զիշխանութիւն Պատրիարքութեան։

Տեսեալ եղիազարու զանյաջող ելս իրացն՝ ծպտեցաւ ՚ի կերպարանս առն վաճառականի, կամ իբր այլազգի իշխանաւորի, որպէս առնէր և յայլ բազում նուագս ՚ի ճանապարհորդութեան իւրում եւ փախուցեալ տեղւոջէ ՚ի տեղի՝ եկն ՚ի կողմանս Բոսպէրի, և յարեցաւ ՚ի կարաւանն եգիպտոսի, որ բարձեալ տանէր գանձս առ Թագաւորն ՚ի Կոստանդինուպոլիս. մինչեան ընդ կարաւանին եւ այլ ուղեկիցք, որք գային ՚ի Դամասկոսէ, և ուխտաւորք բազմամբ յերուսաղէմ, ընդ որս էր և երեմիա Զէլէպի։

Ելեալ սոցա ՚ի ճանապարհ յամենայն Ապրիլի, եկին

հասին մօտ ՚ի քաղաքն Համա, եւ անդ ՚ի վերայ հասին ոմանք ՚ի խնդրակաց, քանզի կասկած առեալ էին թէ եղիազար ՚ի կարաւանին է. այլ կանխաւ ղգացեալ նորա զայս, խոյս ետ գիշերայն, և էանց ընդ երիս իջեւանս ՚ի միում աւուր եւ խնդրակքն եկեալ որոնէին զնա ՚ի կարաւանին ՚ի մէջ ուխտաւորաց, և ոչ գտեալ անդ՝ կալան զամանս ՚ի Հայոց՝ ընդ որս եւ զերեմիա Զէլէպի, և ՚ի նոցանէ խնդրէին զնա։ Իսկ նոքա բազում բանիւք ցուցին՝ թէ ոչ գիտեմք ուր իցէ. յաւելին ոմանք ասել, թէ մի խնդրէք զնա ՚ի զգեստս Հայոց գտանել, այլ այլազգւոյ։ Տեղեկացեալ սակս խնդրակացն՝ թէ այր ումն այնպիսի մեկնեալ է ՚ի դիւրէրի ՚ի կարաւանէն, պնդեցան զհետ նորա յայլ և այլ ճանապարհս և ոչ կարացին գտանել։

Իսկ եղիազար անցեալ ընդ Անտիոք եկն և նստաւ ՚ի Պէյլան քաղաք. եկն անդ առ նա եւ Դաւիթ, որ նստաւ առանձին կաթուղիկոս ՚ի Բերիա, որ և հերքեալ էր յիշխանութենէ, և ՚ի կողմն եղիազարու լեալ քաջալերէր զնա։ Եւ եղեւ ՚ի ժամանել կարաւանին յայն տեղի՝ ղգացին ոմանք ՚ի Հայոց՝ թէ անդ է եղիազար, և եկեալ առ նա խօսէին ընդ նմա. եկն և երեմիա Զէլէպի՝ եւ սկսաւ կազել բազում բանիւք ընդ եղիազարու, զի՞րդ ասէ ձեռն արկեալ յայդպիսի գործ՝ ՚ի վտանգ արկեր զանձն քո. խօսեցաւ եւ զայլ բազում ինչ ըստ իմաստութեան իւրում. և տեսեալ առ նմա զԴաւիթ՝ ասէ. ահաւադիկ և դա զնուն առացաւ կաթուղիկոսի, իսկ օգուտ և ոչ մի, թող զաղմուկ խռովութեանն և զպատառումն ժողովրդեան։

Իսկ եղիազար այլ և այլ բանիւք լռեցուցեալ զերեմիա, ասէ ցնա. տեսցես և զարմասցիս, թէ զի՞նչ օգուտ լինիցի. և յետ ճանելոյ անդ ՚ի միասին, եկ անտի եղիազար, և յառաջեալ քան զկարաւանն, եկն եհաս ՚ի Պրուսա. եւ անտի ելեալ չոր արար դնալ Յադրիանուպոլիս առ եպարքոսն. այլ յառաջ քան զինքն յղեաց առ հաւատարիմս առ Ալբօ Զէլէպի, որ էր առ եպարքոսին. և էր իւր մեծերիմ եւ խորհրդակից, և ազդ արար նմա զգալստեանն իւրմէ։

Իսկ Մարտիրոս կաֆցայի՝ որ յառաջնմէ հասեալ էր յԱդրիանուպոլիս, գտեն զործէր յինքն յանկուցանել բա-

զուժ առաք զսիրա իշխանացն . և մատուցեալ առ մեծ իշխանն , որ անի Վէզիր Բհահեսի , խօսեցաւ ինչ առ ի խափանելոյ զիշխանութիւն կաթուղիկոսութեանն եղիազարու , և հաստատելոյ զՊատրիարքութիւնն Աստուածատրոյ եւ զիոհանորդութիւն իւր : Իրրեւ խնացաւ զայս Ապրօ Զէլէպի , եմուտ և ինքն առ իշխանն , և ջանացաւ ունայնացուցանել զբանն Մարաիրոսի . բայց Մարաիրոս առեալ իշխանին 18,000 դահեկան և ծառայից նորա եւս 2000 , հաճեցոյց զնա միայն վասն բանի Պատրիարքութեան Աստուածատրոյ եւ զիոհանորդութեան իւրոյ . իսկ ընդդէմ կաթուղիկոսութեան եղիազարու ոչ ինչ կարաց առնել : եւ իշխանն մտեալ առ եպարքոսն՝ խնդրեաց ի նմանէ , զի եթէ ոք ընդդէմ ելցէ Պատրիարքութեան Աստուածատրոյ և զիոհանորդութեան Մարաիրոսի՝ մի՛ լսելիցէ նմա ի չնորհս իւր . և եպարքոսն խոստացաւ կատարել զխնդիրն նորա :

Եհաս ապա և եղիազար յԱդրիանուպօլիս . եկին առ նա եւ բազումք ի գործակցաց նորա ի զանազան կողմանց ի Կոստանդինուպօլսոյ , ի Թեքիրտաղ և յայլոց քաղաքաց , աշխարհականք , երիցունք և վարդապետք , և ամենեքին միաբան ժողովեալ ի վրանն Ապրօ Զէլէպւոյ՝ խորհէին և յորդոր լինէին մեծաւոց վասն յաջողութեան իրացն եղիազարու : Իսկ Ապրօ՝ քանզի էր այր խորագէտ և զգուշաւոր՝ խորհուրդ առ նոցա և ասէ . մի՛ ինչ չտալաք գործեացուք , և մի՛ ընդ վայր ծախեացուք զդրամս . թող զի Մարաիրոսականք և եւս գտարկեսցեն զքահս իւրեանց , և անկցին ընդ պարտիւք . և ապա դիւրաւ լինի մեզ հաճել զեպարքոսն վասն բանի կաթուղիկոսութեան , զի նա ի մեր կողմն է . իսկ զՊատրիարքութիւնն երեսաղէմի յետոյ հոգացուք յիւրում ժամանակին : Եւ ինքն առանձին մտեալ առ եպարքոսն՝ ազդ արար նմա՝ թէ եկեալ է յոտս ձեր եղիազարն այն , որում ետուք հրաման վասն կաթուղիկոսութեան , և ոսկիք նորա ասէ հասեալ յառաջադոյն՝ ջանահնար լինին գտաճանել զնա . և եպարքոսն ետ պատասխանի , զիտեմ և ես լուռ լեր :

Այլ Մարաիրոս վարդապետ՝ որ ոչ կարաց խափանումն ինչ առնել իշխանութեան եղիազարու , յետ աւուրց ինչ յառ

ընդ իւր զմերսն և զնաստրով իւր հրաշխատուս էջմիածնէ , և ինքն լեալ իւր երաշխաւոր երեսաղէմ՝ թեւակից իւր ունելով և զայլս՝ եւ յատեան եպարքոսին ի նատիլ նորա ի վրանի՝ բողոքել զեղիազարէ , եղեալ ի մոռ մահու եւս արժանի ցուցանել զնա . կոչեցաւ անդր և եղիազար իւրովքն հանդերձ . նստեալ էր անդ եւ մեծ դատաւորն Գազևսքեր՝ և այլ մեծամեծք . Մատեաւ Մարաիրոս և ասէ՝ 200 քառս արծաթոյ էառ եղիազարդ այդ յԱստուածատրոյ Պատրիարքէն երեսաղէմ և ծախեաց զամենայնն առ ի խափանելոյ զհրաման Տէրութեանդ , թող զայլ կաս վանաց գորս վասնեաց՝ և զայսոսիկ քաջ գիտեմ ես , քանզի աշակերտ էի Աստուածատրոյ . Աւ եպարքոսն՝ ո՞րպիսի դրամ էր այն՝ զոր նա էառ . պատասխանի եւս Մարաիրոս . բովանդակն արծաթի դահեկան Աղանդու . Աւ եպարքոսն՝ մոռ դանձի դատանի . Հարցին և ցեղիազար՝ դու զի՞նչ ասես , նա եւս պատասխանի եւ ասէ . այո , բազում դրամք անցեալ են ընդ ձեռն իմ ընդ ժամանակս ժամանակս ի փոխանորդութեան երեսաղէմի , բայց չիք իմ ընդ վայր ծախել և ոչ դրամ մի՝ և ուստի՞ կարէ դա ցուցանել . և ինքն անդէն յառաջ բերեալ զվկայս՝ հաստատեաց զբան իւր . Խնդրեցան վկայք և ի կողմանէ Մարաիրոսի . եւ մի ոմն ի Տիվրիկցւոց և վկայեաց՝ բայց անորոշ . Բարկացեալ ընդ այն եպարքոսն՝ ասէ ցՄարաիրոսեանն՝ երբ չգիտէք ինչ գյանցանս առնդ՝ եւ ոչ կարէք ցուցանել , զի՞ ժողովեալ էք առ մեզ :

Տեսեալ Մարաիրոսեանց՝ թէ տկարանան բանք իւրեանց՝ սկսան այլ և այլս խօսիլ . ոմանք ասէին թէ նա ի մանկութենէ յայլ յօրէնս էր դարձեալ , և այժմ փոխեալէ ի Հայութիւն . այլք թէ՝ չինեաց եկեղեցիս ի հինդ և ի վեց տեղիս , ի Ռէմի , յերուսաղէմ , ի Պրուսա , և ի Կոստանդինուպօլիս , և այլք եւս այլ ինչ . Հայեցեալ եպարքոսին ի չփոթութիւն բանից նոցա՝ ի բաց վարեաց զնոսա յատենէ իւրմէ . եւ իրրեւ ելանէր Մարաիրոս արտաքս ի վրանէ՝ զհինգին ասպատուորք առնէին ի վերայ նորա , և հարկանէին զնա բռնցի և աքացի . նոյնպէս և ոմանք ի հարազատ ընկերաց նորա զայրացեալ թէ նամանօք նո-

թատէին զնա՝ թէ յամօթ արարեր զմեզ առաջի տեառնին։

Զայսոսիկ բանս յայտ առնէ նա ինքն Եղիազար՝ ի նահակի խրատուն գրեալ առ Զաքարիա վարդապետ ոմն, ուր յետ այլոց բանից ասէ՝ յորմէ հետէ անջատեցաքն ի մէնջ, կամ թէ ի Պէյլանկայ, ոչ գտաք զոք ուղեւոր տալ զողջունագիր մեր առ մեզ· այլ զի և ոչ զԱրքունականն իշխեցաք դնալ զլորոտա յահէ անաստուածից այսոցիկ ահարկու բանջաղանաց· վասն որոյ տարաղէպ վախստեայ չաւղօք մինչ ի Ֆիլիպէ ի բանակ Եպարքոսին մեծի, առ Պարոն և պայազատ անվրէպի սիրելիս մեր հասեալ հանդարտեցաք, և ապա քաջալերութեամբ նորին, որպէս եւ ուխտաւորացդ երբեմն յայդր՝ յանձն առաք ձեռնարկել ի ճանդիր այցելութեան կողոպտեալ տանդ սրբոյ, որոյ վասն և պատահեցաք արժանաւոր ընծայիւք Եպարքոսին և բարձակցացն ամենեցուն, և ընկալաք զքաջալերս յամենեցունց· և ի պատճառս այլոց իրաց մնացաք մինչ յօրս յայս· եւ թէպէտ հակառակորդք ոմանք՝ որոց և չարագլուխ Թաթարն լեալ (Մարտիրոս), բազում մարտս եդեալ լինէին, մինչ եկեղեցւոյ չինող, և փոքունց՝ ուրացեալ, և 200 քսակ դրամ եւս դաս եդեալ՝ մասն եղեն մեզ ի դիւանն Արքունի, բայց Աստուծով յամենայնի թշնամիք մեր անկեալ նիւն և տկար գտան, և մեք յարեաք և ուղիղք եղաք· մինչեւ ահա այսօր և վաղիւն զուղիղ իսկ ճշմարտ աւետեաց լսման ուղեւորելոց եմք առ մեզ, զի ի վաղիւն է օր բաժանման առաքեալ, և ի միւսում հրամանատուութիւն մեզ· զայս քան նշոյլ աւետեաց իրրեւ զկատարեալ ինչ դրեցաք առ մեզ ուրախ լինիլ, և աւետաստու հեռաւորաց և մերձաւորաց մինչ յերուսաղէմ, եւ հանդարտեցուցանել զսիրտ Ղազարու, զի մի աճապարեսցէ մեկնիլ անտի՝ եայլն, Գրեալ յ31 Յուլիս ամսոյ։

Իսկ Մարտիրոս վարդապետ տեսեալ թէ ոչ կարէ առնել ինչ ընդ եղիազար, զհետ եղեւ միայն առնուլ զհրովարտակն հաստատութեան Պարսկաբքութեան Աստուածատրոյ և փոխանորդութեան իւրոյ, զոր ստացեալն էր, որոյ վասն բազում աշխատեցաւ՝ և աշխատեցոյց զսպիր, մինչեւ էառ զնոյն և գարձաւ ի կոստանդինուպոլիս, և անտի յերուսաղէմ, և մատոյց առ Աստուածատուր զգիր

Պատրիարքութեան և փոխանորդութեան իւրոյ, և Աստուածատուր հաստատեցաւ վերստին յառաջնորդութեան իւրում։

Իսկ Յակոբ Կաթուղիկոս եղեալ յիշխմիածնէ՝ եհաս Իգմիւռնիա, և ընկալեալ գիր յորդորանաց յԱստուածատուր Պատրիարքէ՝ եկն յերուսաղէմ ընդ ուխտաւորս։

ԳԼՈՒԽ ԽԸ.

Վերսին հաստատութիւն Կաթուղիկոսութեան և խնամակալութեան Եղիազարու։ Հակառակութիւնք Թլէնից։ Ամբաստանութիւն Մարտիրոս վրդապետի ղեղիազարէ, առնլոյ Եղիազարու զՊատրիարքութիւնն Երուսաղէմի։ գանկաք եւ ամբաստանութիւնք ժողովոյդ ընդ Յակոբ Կաթուղիկոսն Էջմիածնի։

Իսկ Եղիազար՝ որ կայր տակաւին յԱդրիանուպօլիս ի դուռն Եպարքոսին, վարանէր ի խորհուրդս իւր վասն երուսաղէմի, զի մի երթեալ այն ի ձեռաց իւրոց, մի՝ զի անդ կամէր նա հաստատել զաթոռ Կաթուղիկոսութեան, եւ երկրորդ՝ զի անդ ի վանս Ս. Յակոբայ բազում ինչ ունէր նա պահեալ ի թաքստի, և կասկածէր՝ թէ դուցէ անկցի ի ձեռս Մարտիրոսի։

Խորհուրդ արար ապա ընդ Ալրօ Չէլէպեայ՝ գտանել հնարս վասն երուսաղէմի· իսկ երիցունք և վարդապետք և այլք ի Հայոց՝ որք եկեալ էին ընդ նմա, ժողովեցան անդ և ասեն, զի՞ եւս չընդունայն հոգս դեգերիմք· եթէ այլք առին զերուսաղէմ յեղիազարէ՝ իւրեանց լիցի այն· բաւական է այս՝ զի եղիազար լիցի մեր Կաթուղիկոս, և մեք վտիտ կալցուք՝ զի հաստատեսցի իշխանութիւն Կաթուղիկոսութեան նորա ի Տէրութեան Օսմանցւոց՝ և այն չատ է մեզ։ Ասէ եղիազար՝ ո՞ր տալա հաստատեսցի աթոռ Կաթողիկոսութեանս։ Եւուն նմա պատասխանի, եթէ ասեն հնար է՝ առցուք գոնէ այսչափ ինչ իշխանութիւն, զի դու առ այժմ կարգեսցիս խնամակալ եւ տեսուչ երուսաղէմի, (իրր Նազր Մութէվէլլի)· եւ այսոր

իշխանութեամբ նոցին անդ, և մեք ապաւեմք պարապոյ՝ զի հնարեսցուք դարձուցանել և զՊատրիարքութիւնն Երուսաղէմ՝ ի վերայ քո։ Հաւանեալ ընդ այս Ապրօի՝ եմուտ առ Եպարքոսն, և էառ նմա հրովարտակ հաստատութեան վանն Կաթողիկոսութեան Եղիազարու, խոստացեալ տալ Արքունիս ամ յամէ 15,000 մղոն։ Ցաւել ապա Ապրօ խնդրել եւ զվանամակալութիւն Երուսաղէմի իւր թեթեւ ինչ, և ասէ՝ որովհետեւ յանձն արարիք՝ ի ձեռս նորա հովուել զՀայս՝ որք են ընդ ձեռամբ Օսմանցւոց, կարեւոր է՝ զի ընդ ձեռն նորա հոգացին և հասք Աթոռոյն Երուսաղէմի, և մի վանեսցին ձեռամբ անգդոյշ անձանց։ և Եպարքոսն կատարեաց զխնդիր նորա։ Ցայնժամ առեալ Եղիազարու զհրովարտակ Կաթուղիկոսութեան, և զնամակ խնամակալութեան Երուսաղէմի, եկ յԱդրիանուպոլսոյ եւ չոգաւ՝ ի Թէքիրտաղ եւ անտի՝ ի Պրուսա։ Սակայն Հայք այսու եւս ոչ չատացեալ՝ մատուցին գիր աղաչանաց առ Եպարքոսն՝ ի բանակի անդ և ասեն՝ Եղիազար Կաթուղիկոսն եղեւ իշխան կայսերական հրովարտակաւ, ըստ օրինաց մերոց բաժանել զմիաբանն եւ հաճութեամբ ազգին կացուցանել նա խնամակալ ամենայն կալուածոց եւ առաջնորդաց վանօրէից Երուսաղէմի, զորս կոտակեալ եմք ըստ օրինաց մերոց՝ զի մի՛ առաջին Պատրիարքունք և արք նորա, և վարդապետք ոմանք, որք գնան անդ Արքունի հրամանաւ, լինիլ ձեռնամուխ եւ հակառակիլ տարապարտուց։ և զի մի կորնչեն և անկցին՝ ի ձեռս այլոց, զի վասն այսր առեալ է հրովարտակ՝ ի կայսերական առնել, եւ արձանագրեալ՝ ի դատարանն Երուսաղէմի։ Ապա խնդրեցին հրովարտակ ըստ առաջնոյն, լինել Եղիազարու խնամակալ վանօրէից և կալուածոց Երուսաղէմի, որպէս և էրն։ Եւ հրովարտակն այն չնորհեցին Արքունի գանձատանէ (մալիէ), զի մի առաջին Պատրիարքունք նամակաւ իւրեանց պահանջեսցեն զիրս ինչ՝ ի տուցուածոց կամ՝ ի կալուածոց անտի։ Գրեցաւ հրովարտակ առ կուսակալն Դամասկոսի եւ առ դատաւորն Երուսաղէմի, զի՝ ի հաստիլ անդր Եղիազարու առնել այնպէս։ ի ՀՕ Սկիզբն ամոյ, ՌՕՀ (1666)։

Իսկ Եղիազար դարձ արարեալ՝ ի Պրուսայէ, և եկն՝ ի

Կոստանդինուպոլիս, եւ եդեալ զերկուս վարդապետս իւր զՈնուփրիոս և զԱրգիս, զորս կալանաւք ածեալ էին զօրականքն՝ ի Պրուսայէ։ և տեսեալ զնոսա զերծեալս անվնաս, ուրախ եղեւ և եկեալ նոսառ առ ժամանակ մի յեկեղեցւոջ Ս. Լուսաւորչին, ուր յաճախին բնակիչք Կոստանդինուպոլսոյ մեծամեծք և փոքունք իրրեւ առ Կաթուղիկոսն իւրեանց, և խրախանային՝ ի տեսութեան նորա։ Ապա՝ ի գիշերամիկ Յովհաննու Պատրիարքի մայրաքաղաքին եւ ամրաստանել նաեւ առ Եպարքոսն, էառ գնա՝ ի տուն իւր Ապրօ Զէլէպի, եւ գնացեալ առ Իշխանն յայտ արար նմա՝ Թէ Եղիազար ոչ խառնի յիշխանութիւն Պատրիարքութեան Յովհաննու, այլ բանտարկուք ասէ՝ յօդնն զայնպէսի գրպարտութիւնս, եւ էառ հրաման՝ զի մի ոք իշխեսցէ վարել զնա՝ ի քաղաքէն, և դադարեաց՝ ի տուն Ապրօյի աւիսս 6։

Այլ մինչչեւ եկեալէր Եղիազար՝ ի Կոստանդինուպոլիս, էհաս լուր յերուսաղէմ, Թէ առեալ է նա իշխանութիւն խնամակալութեան Երուսաղէմի, և Թէ գայ այդր իրրեւ Կաթուղիկոս։ Եւ զի նորոգ ժամանեալէր անդ յայնժամ Յակոբ Կաթուղիկոս՝ խորհուրդ առ նմա Մարտիրոս վարդապետ՝ զի չանասցի առնուլ նմա՝ ի ձեռաց Եղիազարու զիշխանութիւն խնամակալութեան, և ապա դիւրաւ լիցի մեզ ասէ խափանել և զկաթուղիկոսութիւն նորա։

Զայս հաւանեցուցեալ՝ ի միտս Կաթուղիկոսի՝ և առեալ ընդ իւր գիր ամբաստանութեան՝ ի վերայ Եղիազարու՝ վկայութեամբ Աստուածատուր Պատրիարքի և դատաւորացն Երուսաղէմի, վաճառաց և եկն՝ ի Կոստանդինուպոլիս, և կամէր ելանել վերատին չատեան Եպարքոսին, դործակից իւր արարեալ զԹլթլեանս և զՋահուկեանս եւ զարեւելեայս, ընդ որս և զԱնդրիաս երեց մի, որ՝ ի ռամկաց ձեռնադիր Պետրովնէ կոչիւր։ Իսկ ոմանք յեղիազարեանց եկեալ առ Մարտիրոս յորդոր եղեն նմա՝ չհաս կալ՝ ի կռուոյ անտի, և մի՛ գրգռել կրկին զաղմուկ չխոթի։ Եւ Ապրօ յղեաց զերեմիա Զէլէպի հանդերձ Թղթով երթալ խօսիլ ընդ Մարտիրոսեանս, և նորա եկեալ հաճեցոյց նախ զմիրղն և զնոսոսով, և ապա յորդորեաց զՄարտիրոս գալ առ Ապրօ՝ և խօսիլ բանս խաղաղութեան։

Պատասխանի եւս Մարտիրոս և ասէ, այսուհետեւ չիք հնար խաղաղութեան՝ զի բան մեր առ մեծամեծս անկաւ, եւ եթէ ոչ կանխեցից խնդրել զիրաւունս՝ դատապարտ առնեն զիս։ Իսկ երեմիա ասէ ցնա՝ և ոչ մի ինչ փոխ է մեծամեծաց դրան վասն մեր և վասն քո, զի չեն նոքա անկեալ զհետ մեր, մեք եմք՝ որք յորդորեմք զնոսա, թէ առէք զինչս մեր։ Մատոյց ապա երեմիա զԹուղթ Ապրոյի առ Մարտիրոս՝ յորում գրեալ էր։ «Ծունր դնելով համբոյր մատուցանեմ զքոյ վարդապետիդ նուաստ ծառայ քո Ապրօ՝ և աղերսանօք աղաչեմ, զի յայսմ գիշերի հաճեսցիս օթեւել ի յարկս մեր, խօսիլ ինչ առանձին ընդ մեծութեանդ՝ ողջ լեր»։ Իսկ Մարտիրոս ոչ էառ յանձն երթալ, այլ առաքեաց ի տեղի իւր զՈսորով, խնամալ զմիտս Ապրոյի՝ թէ զի՞նչ կամիցի։ Եւ Ապրօ յորդորեալ զՈսորով ասէ, բաւական է՝ որ ինչ եղեւն ցարդ՝ անցեալն էանց, դադարեցարուք այսուհետեւ, և լերուք զհետ խաղաղութեան։ զի՞ պնդեալ էք թափել զձեզ յընչից և աղքատանալ, և յայտ արար եւս թէ՝ կատարած այսր ոչ բարւոք ունի վճարիլ։ Իսկ Ոսորով այնպէս եցոյց զանձն՝ որպէս թէ չիցէ ի կողմն Մարտիրոսի, և զայլ և այլ պատասխանիս արարեալ մեկնեցաւ անտի։

Այլ Մարտիրոս վարդապետ ի նմին իսկ աւուր բազքեալ ի Դուռն Եպարքոսի՝ եւս հանել զեղիազար յատեան, եւ մատոյց ի մէջ զդէր ամբաստանութեան նորա։ Բայց Եպարքոսն որ էր ի կողմն Ապրոյի՝ փութով վճարեաց ըզդատաստանն։ առեալ է ասէ յԱրքեպիսկոպոսէ եղիազարու հրաման խնամակալութեան երուսաղէմի, և չէ հնար յետս կոչել։ զայս ասացեալ՝ մերժեաց յիւրմէ սաստիւ զՄարտիրոս, և ի դառնալ նորա ի տեղի իւր՝ մեզադիր լինէին նմա բազումք, մինչեւ ցե՞րբ սահն այդ՝ եւ յորդորէին զնա մի՛ եւս պնդիլ զհետ։

Բայց ոմանք յԱրեւելեայց քաջալերեալ զՄարտիրոս, սկսան նոր խորհուրդ խորհիլ ընդ նմա, եւ ասեն։ Աստուածատուր Պատրիարք երուսաղէմի ծերացեալ է եւ չէ ինչ փոխ նմա զիշխանութենէ իւրմէ։ եկ զքեզ կացուսցուք ի տեղի նորա Պատրիարք, և յայնժամ կարասցես խափան նուաճել զեղիազար։ ի հաւանիլ նորա ընդ

այս, գնային երեւելի ընծայիւք առ մեծ իշխանն, Վէէր Բիհեռ՝ ասացեալ և խոստացան նմա 30,000 դահեկան։ եթէ ի վերայ Մարտիրոսի դարձուսցէ զՊատրիարքութիւնն երուսաղէմի։ Կոչեաց իշխանն զԱպրօ Զէլէպի՝ եւ ասէ ցնա՝ ահա այսչափ խոստացան ի միւս կողմանէ։ դու զի՞ասես վասն եղիազարուն քո։ եթէ կամիս լսել ինձ, զ3000 դահեկանս չնորհեմ քեզ։ առ ի 25,000, և հաստատեա զքոյդ։ Բայց Ապրօ որ այսպիսի առթի սպասէր, գիտելով թէ յիւր կողմն է եպարքոսն և այլ մեծամեծք՝ կամէր սակաւ դրամովք ի գլուխ առնել զիրսն։ այլ այսու ամենայնիւ խոստացաւ իշխանին 20,000։ սակայն իշխանն ոչ առ յանձն։ ամին իրի յապաղէր բանն։

Հանդերձեալ էր եպարքոսն գնալ ի նայն աւուրս ի պատերազմ ի վերայ Կրետեայ կղզւոյն։ եւ իբրեւ եկ ի Կոստանդինուպոլսոյ հանդերձ բանակաւ ի տեղին կոչեցեալ Տաուր Փաշ՝ արտաքոյ քաղաքին՝ հեւի իբր երեք ժամու, փութացաւ Մարտիրոս և մատոյց վերստին գիր աղաչանաց առ եպարքոսն, կոչել ի դատ զեղիազար։ զի կարեւոր իրք կան ասէ առաջի, եւս և յանցանք մահապարտութեան են ի վերայ նորա։ Զարմացեալ էին մեծամեծք Դրանն ընդ այնչափ համարձակութիւն Մարտիրոսի, եւ խօսէին ի մէջ իւրեանց վասն ջանից նորա թէ յինչ ունիցի վերջանալ։

Առաքեաց եպարքոսն արս՝ ածել զեղիազար ի բանակ անդր, և ի նմին պահու մինչեւ էր հասեալ եղիազարու, մտեալ Ապրօ առանձին առ եպարքոսն, խօսեցաւ ընդ նմա բազում ինչ, եւ հաճեցոյց զնա, զի բարձցէ խոպառ զիշխանութիւն Մարտիրոսի և Աստուածատրոյ յերուսաղէմ, և տացէ զՊատրիարքութիւն տեղոյն ցեղիազար։ Եւ եղեւ իբրեւ բերէին զեղիազար, ընթանային զհետ նորա թլփըլեանք բազմութեամբ, և ասէին պանծանօք առ Հայս՝ որք ժողովեալ էին անդր, այսօր ահա բառնամք զեղիազար ի կենաց։ պատասխանի եւսն ոմանք ի ժողովրդենէ և ասեն ցնոսա։ եթէ տայք սպանանել զնա, թաղեմք պատուով ըստ օրինի Մարտիրոսաց։

Ցորժամ յանդիման եղեն եպարքոսին Մարտիրոս և եղիազար, խօսեցաւ Մարտիրոս եւ ասէ։ ով բարերջանիկ

Տէր մեր, դու եառար ինձ զիշխանութիւն լինել վոխանորդ երուսաղէմի, իսկ եղիազարդ այդ նատեալ 'ի քաղաքի ասա, ժողովէ զբոմն յանուն երուսաղէմի, եւ պատրեալ կեղեքէ զՀայս։ Ասէ Եպարքոսն, զի՞նչ պարտի դա քեզ։ Եւ նա ասէ, 10 կամ 15,000 դահեկան։ ասէ Եպարքոսն, տակաւին ոչ զերծաւ 'ի ձեռաց քոց այրդ այդ։ Եհան Պարտիրոս Թուղթ մի՝ յորում դայր կինք եղիազարոս, և ասէ։ տովին թղթով իբր գրով և կնքով երուսաղէմի արձակեալ զպաշտօնեայս իւր՝ հաւաքել նոքօք զինչս։

Գարձաւ Եպարքոսն առ եղիազար, և ասէ։ այդ այդպէ՞ս իցէ։ Եւ նա ասէ։ յոտս մեծութեան ձերոյ հասեալ կամ՝ գադարել աւուրս ինչ 'ի պանծալի քաղաք Թագաւորական։ Եւ ժողովուրդն՝ որ վայելէ 'ի խնամս առատութեան ձերոյ, տայ և ինձ զկարեւոր պէտս առ 'ի պահելոյ զպաշտօնեայս իմ, յորոց մի էր երեսին և դա։ իսկ 'ի գիրդ յայդ չէք խարդախութիւն, զի իմ է կնիք գորա և յանուն իմ, և ոչ յանուն երուսաղէմի։

Հրամայեաց յայնժամ Եպարքոսն առ ծառայս իւր՝ բերել նմա վերարկու պատուոյ։ զի այր այդպիսի ասէ, որ հաւատարիմ է յԱրքունիս եւ սիրելի ժողովրդեան իւրոյ՝ կալցէ զՊատրիարքութիւնն երուսաղէմի։ Եւ իբրեւ բերին զվերարկուն, եհաս զգեցուցանել նմա 'ի մէջ առեւին յանդիման Մարտիրոսեանց։ Ցառաջ ընթացաւ եղիազար՝ հարբուրել զգեղանս Եպարքոսին, և նա ասէ։ երթ և արա աղօթս վասն կենաց Թագաւորին։ Եւ եղեւ 'ի մեկնիլ ամենեցուն յառնել անտի՝ ելին և Մարտիրոսեանք և Թլթելեանք ափշեալք և կորացեալք, և ցիր ու ցան լեալ գնացին յայլ և այլ տեղիս՝ ոչ կարելով տանել կատականաց քաղաքացւոյն։ Եւ այս եղեւ 'ի վերջն Մարտի յաւուր սուրբ մոհց Ս։ Լուսաւորչին 'ի վիրապն։ Եւ եղիազար հաճեցուցեալ զեպարքոսն՝ էառ և 'ի Թագաւորէն հրովարտակ 'ի հաստատութիւն իշխանութեան իւրոյ, և եկն 'ի Կոստանդնուպոլիս։

Հաստատեալ եղիազարու 'ի Պատրիարքութեան երուսաղէմի միանգամայն և յառաձին կաթուղիկոսութեան իւրոյ, առաքեաց վաղվաղակի Թուղթս 'ի Կոստանդնուպոլսոյ յայլ և այլ կողմանս իբր աւետաւորութիւն իմն

մատուցանելով՝ թէ Թագաւորն պարգեւեաց ինձ նաեւ զՊատրիարքութիւնն երուսաղէմի։ Եղեալ առաձին Թուղթ եւ առ միաբանս երուսաղէմի, եւ ասէ։ եթէ Յակոբ Կաթուղիկոս վասն ուխտի իցէ եկեալ այդր՝ յուղարկեսջիք զնա պատուով մեծաւ, եւ ելցէ 'ի տեղւոջէ անտի։ ապա եթէ այլ ինչ իրաց՝ մի՛ Թողջիք զնա և ոչ մի օր 'ի վանսդ։ Յորժամ եհաս այս գիր յերուսաղէմ, Յակոբ կաթուղիկոս ինքնին եւ 'ի վանաց Ս։ Յակոբայ, և օթեցաւ 'ի վանս Յունաց՝ զի մի՛ չիսթութիւն ինչ յառեսցի։

Իսկ ժողովուրդք որ 'ի Կոստանդինուպոլիս կուսակից եղիազարու՝ միաբանեալ դրեցին գիր դանկատանաց ընդ Յակոբ կաթուղիկոսէ առ Եպարքոսն՝ մինչդեռ էր նա յԱդրիանուպոլիս 'ի բանակն Սրքունւոյ, և առաքեցին զայն 'ի ձեռն պատգամաւորի՝ ուր ամբաստան լեալ զնմանէ՝ առէին, «Յակոբ կաթուղիկոս՝ որ նստի 'ի սահմանս Պարսից՝ ամի ամի առաքէ զվարդապետական կոնդակաւ իւրով յերուսաղէմ եւ յայլ գաւառս Օսմանեան Պետութեան, առ 'ի բաժանել զմիւռոնն, և նոցա բանագրեալ 'ի վերայ ժողովրդոց՝ ժողովն զդրամս, և այսու ոչ չատացեալ՝ ձեռնամուխ լինին 'ի կալուածս եկեղեցեաց մերոց, եւ զդրամս 'ի նոցանէ վատնեն և կորուսանեն՝ և հասուցանեն զպաղմադիմի զրկանս և չչարիս 'ի վերայ աղգին, եւ ապա խնդրեն 'ի բաց առնել զնեղութիւնս նոցա, և պատուիրել Յակոբայ կաթուղիկոսի չառաքել զվարդապետս և զմիւռոնն, զի ընդունիմք զայն ասեն՝ յեղիազարէ կաթուղիկոսէն, որ Սրքունի հրովարտակաւ վերատեսուչ է կալուածոց մերոց, և արտաքոյ կամաց և հաճութեան նորին մի՛ որ համարձակեսցի բաժանել զմիւռոնն։ Գրեցաւ հրովարտակ ըստ բանիցս այսոցիկ՝ առ դատաւորն երուսաղէմի՝ արդելուլ զնուիրակս Էջմիածնի՝ 'ի ՃՌ։ Բէպիլ ամբր ամոյ, ՌՈՃՌ (1666)։ Եւ զինի տասն աւուրց դարձեալ առին Հայք հրովարտակ վասն այսր խնդրոյ գրեալ ըստ օրինակիս այսմիկ։

Եւ յետ անցանելոյ ամսօրեայ աւուրց՝ եկին հասին 'ի Դուռն նամակք բողոքանաց Հայոց բնակելոց 'ի սահմանս Օսմանեան Պետութեան, այսինքն 'ի Կարնոյ, 'ի Տիգրանակերտ, 'ի Սեբաստիոյ, 'ի Կուտինայ և յայլ գաւառաց,

յորս յետ յայտ առնելոյ զնեղութիւնս իւրեանց, դանկատէին զնուիրակաց էջմիածնի և ասէին՝ վարդապետք եկեալ ի սահմանացն Պարսից ի պատճառս բաժանելոյ զՄիւռոնն, ժողովեն զմեծ գումարս դրամոց՝ եւ անցեալ դէպ առաւել քան զվէտս իւրեանց, զօրօք և երիվարօք գան իջանեն ի տունս մեր, պահանջելով զվէտս երիվարաց եւ իւրեանց· անիրաւութեամբ յափշտակեն զգառս և զոչխարս, իւղ և մեղր, և զայլ ամենայն ուտելիս եւ ըմպելիս, որով հաստացանեն մեզ զմեծամեծ չարիս եւ զրկանս: Իսկ Եղիազար կաթուղիկոսն երուսաղէմի ձրի բաժանէ մեզ զՄիւռոնն, չպահանջելով ի մէնջ և ոչ դանկ մի, և ինքն հաստուցանէ ի գանձն Արքունի իւրաքանչիւր ամի 15,000 փողս· զայս ամենայն գլխաւորք մեր օրինօք հաստատեալ՝ եւտուն մուրհակս, և ըստ այնմ տուաւ հրովարտակ կաթուղիկոսական, որով արար մեզ Արքայն ըզմեծամեծ չնորհս· եւ խնդրեն արգելուլ զնուիրական էջմիածնի չգալ երբէք ի սահմանս իւրեանց: Գրեցաւ հրովարտակ ըստ խնդրանաց նոցա առ ամենայն Իշխանս եւ Դատաւորս քաղաքաց քաղաքաց բառնալ զանկարգութիւնս նոցա:

Տեսեալ Եղիազարու, թէ Ծակոր կաթուղիկոս հակառակ իշխանութեան իւրոյ, առաքէ եւ սիրէ ի բազում գաւառս Հայոց զնամականիս և զկոնդակս իւր, և յորդորէ զնոսա ի բաց կալ յիշխանութենէ Եղիազարու, և ճանաչել ինքեանց գլուխ՝ զհարազատ աթոռն էջմիածնի· զայրացեալ ինքնին մատոյց գիր ազաչանաց առ նպարքոնն, և ամբաստան լեալ զնոսանէ, ասէ· ըստ որմանդրութեան կայսերական հրովարտակին լեալ եմ Պատրիարք և կաթուղիկոս յերուսաղէմ, սակս ձրի բաժանելոյ զՄիւռոնն ամենայն Հայոց եղելոց ի սահմանս Օսմանեան Պետութեան, և վասն այսր տուեալ է իմ մուրհակս Հայոց բնակելոց ի Կոստանդնուպոլիս, և ըստ այնմ չնորհեալ է ինձ յԱրքունուստ կայսերական հրովարտակ· Իսկ Ծակոր կաթուղիկոսն էջմիածնի, որ նաեւ ի սահմանս Պարսից, ընդդէմ դարձեալ ինձ և արանց իմոց· Թէ դուք հակառակ օրինաց և կանոնաց առեալ էք հրովարտակ՝ և բրեն նաբարէք զիրաւունս մեր: Այսպիսի ստութեամբ ամբաստանել զմեզ, առաքէ թուղթս յամենայն քաղաքս և ի գաւառս Տէրութեան ձերոյ, որք լի են ստութեամբ եւ զրպարտանօք, որովհետեւ ոչ ինչ կարաց հաստատել զիրս ինչ յայտնի վկայութեամբ ի վերայ իմ և իմոց· ապա զհետ եղեւ զրպարտութեամբ և թշնամանօք հնարել ըզթուղթս եւ առիթ լինել խռովութեան և երկպառակութեան ժողովրդոց· եւ ապա խնդրէ գառ առնել ըստ օրինաց: Գրեցաւ հրովարտակ առ Կուսակալս Կարնոյ, Տիգրանակերտի, Սեբաստիոյ, Կուտինայ եւ առ Բգեչխոս Վանայ և սահմանացն Իկոնիոյ· զի Ծակոր կաթուղիկոսն ուրեք և ընդ ումբ իշխանութեան գացի, մանրամասն քննեսցի, և զգրուեալ թուղթսն, որք առիթ են զրպարտութեան և բամբասանաց, անգործադրելի մնասցեն· և եթէ հաստատեսցի վկայիւք՝ Թէ վնասակար է նա յիրս Արքունի, առնել ըստ օրինաց:

Հասին ի Դուռն և այլ թուղթք բողոքանաց ի ժողովրդոց Եւդոկիոյ, Սամսիոյ և Գաղատիոյ վասն Ծակորայ կաթուղիկոսի· Թէ մեք յօժարութեամբ հաստուցանեմք զսահմանեալ տուրս եկեղեցեաց և վանօրէից մերոց, որ յերուսաղէմ, և աւելի քան զայն ոչ կարեմք հաստուցանել· իսկ այժմ Ծակոր կաթուղիկոսն էջմիածնի, առեալ ընդ իւր զհետեւեալս աւելի քան զքսան, եկեալ իջեւանի ի տունս մեր արամիք և երիվարօք, և յափշտակէ զամենայն ուտելիս և ըմպելիս մեր, պահանջելով զոչխարս և զգառինս և զկայս· զարման երիվարաց և զարօտատեղի, և ժողովեալ ոստիկանաւ զյոլով դրամս, աւելի քան զկար մեր, առաքէ ի սահմանս Պարսից· բազմացոյց ի վերայ մեր զրկանս և զանիրաւութիւնս, և էարկ խռովութիւն ի մէջ ժողովրդոց· Եւ ապա խնդրէն՝ զի ժողովեալ դրամն այն գիտութեամբ իւրեանց առցի ի գանձն Արքունի· Եւ հրաման առնել այնպէս, որպէս և խնդրէին· բայց զդուշացուցանէր զի մի՛ անպատուութիւն ինչ արասցեն կաթուղիկոսին:

Մատուցին նաեւ գիր ամբաստանութեան աղքատք Հայոց զՅակոր կաթուղիկոսէն առ Եպարքոսն ի բանակն Արքունի ի Տավուտ Փաչա, յորում ասէին· մեք ըստ խնդրանաց մերոց ընտրեցաք և կացուցաք զեղիազար վարդապետ կաթուղիկոս եւ հաստատեցաւ իշխանութիւն նորա

Կայսերական հրովարտակաւ։ Այլ Յակոբ Կաթուղիկոսն էջմիածնի ոչ անասցեալ Կայսերական հրամանին, սկիզբն արարեալ 'ի Կարնոյ, եհաս մինչեւ 'ի Զմիւռնի քաղաք։ Ժողովելով զամենայն Կաթուղիկոսական հասս, որք պատկանին եղիազարու։ և եղեւ մեզ զրկանք մեծ։ խռովութիւն և երկպառակութիւն 'ի մէջ ժողովրդոց։ այժմ ածցի այրն 'ի դատաստան 'ի ձեռն ոսոխականի։ և յետ օրինաւոր քննութեան, զրեսցի հաշիւ դրամոց ժողովելոց, և քան ցուցանելոյ հաշուոյն, տացեն հատոյթքն 'ի ձեռս եղիազարու, եւ որ լինչ յաւելցի՝ տացի տումարակալին Դամասկոսի։ Գրեցաւ հրովարտակ առ կուսակալն Դամասկոսի և առ դատաւորն երուսաղէմի, առնել այնպէս, որպէս խնդրէին։ 'ի \ Շէվվալ ամսոյ՝ \•ՎՂ (1666)։

Դարձեալ գիր գանկատանաց 'ի ժողովրդոց կոստանդինուպոլսոյ եւ 'ի գլխաւորաց վեց եկեղեցեաց առ Եպարքոսն, վասն Կաթուղիկոսին էջմիածնի և Նուիրակաց նորին, զի իւրաքանչիւրոք 'ի նոցանէ ասեն ժողովեալ աւելի քան զ10,000 դահեկանս տանին 'ի Պարսկաստան։ զի 'ի ժամանել նոցա 'ի վանօրայս ուտեն և ըմպեն եւ կողոպտեալ զնոսա առաքեն յաշխարհն Պարսից, յորոց ծանրացան 'ի վերայ նոցա չարիք եւ անկարգութիւնք։ Իսկ եղիազար Կաթուղիկոս, որ խոստացաւ տալ 'ի գանձն Սրբոյն 15,000 փող, սակս դիւրութեան և օգտի եկեղեցականաց, և ազատ պահելոյ 'ի վտանգէ կորսեան զամենայն կալուածս, և ձրի բաժանելոյ զմիւռոնն։ Գրեցաւ հրովարտակ առ կուսակալն Դամասկոսի և առ դատաւորն նատիլ երուսաղէմ։ օրհնել զմիւռոնն, լինիլ խնամակալ, արգելուլ զնուիրակս Յակոբայ Կաթուղիկոսին։ Եւ յետ միոյ ամսոյ դարձեալ ամբաստանութիւն գլխաւորացն Հայոց 'ի Կոստանդինուպոլիս, զնուիրակաց էջմիածնի, զի բարձեալ էր սովորութիւնն չբաժանել նոցա զմիւռոնն, այլ Յակոբ Կաթուղիկոս անասատ գտեալ հրամանին, առաքէր զնուիրակս, և առնոյր զտուրս 'ի Հայոց, զի նուիրակունք ապականեն և կորուսանեն ասեն զկալուածս վանօրէից, և զկտակեալ ինչս գողացեալ տանին յաշխարհն Պարսից, եւ առ 'ի վերջ կացուցանելոյ զատացուածս երուսաղէմի, զորս կտակաւ եդեալ եմք անդ, կարեւոր էր մեզ

կացուցանել զոք խնամակալ 'ի վերայ Պատրիարքին և վտխանորդի և արանց նորա։ և յաղագս դիւրութեան և օգտի ամենայն եկեղեցականաց, և խնամելոյ զազգն, որք ընդ իշխանութեամբ Օսմանցւոց՝ յաւելաքայ Արքունի հրովարտակաւ կարգեցաւ խնամակալ եղիազար Կաթուղիկոս եւ տուաւ նմա դիր 'ի դատարանի և հրովարտակ Սրբազնութեան։ և դարձեալ եղ հրաման տակս ձրի բաժանելոյ զմիւռոնն։ և այժմ ըստ զօրութեանց այնց հրովարտակաց, եղիազար ամենայն եկեղեցականաւք խրատեալ, երթեալ նստցի յերուսաղէմ 'ի վանս Ս։ Յակոբայ, վարել զիշխանութիւն Կաթուղիկոսութեան եւ Պատրիարքութեան խորոյ, օրհնել զմիւռոնն։ զի մի' երբէք հակառակեսցին Պատրիարքունք կոստանդինուպոլսոյ, և երուսաղէմի՝ և վտխանորդք նոցին, և որոց ընդ նմա, և մի ոք յեպիսկոպոսաց իշխեսցէ երթեալ անդր, եթէ ունիցի հրովարտակ 'ի ձեռին եւ եթէ ոչ, տուաւ հրովարտակ ըստ խնդրանաց նոցա։ գրեալ 'ի \ Շէվվալ ամսոյ, \•ՎՂ (1666)։

Գ Լ Ո Ւ Խ Թ.

Յոգիր պատարագելոյ 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի։ Մինչեւ եղեալ զարս Յերուսաղէմ Յակոբ Կաթուղիկոս։ Օրհնութիւն Միւռոնի Յերուսաղէմ։ Խնդիր եղիազարու և Ժողովոց։ Մինչեւ Պրոյի։ Բաժին Հայոց 'ի տաճարին Ս։ Յարութեան։ Դասիթ Խրիսթէ։ Գժտութիւն Մարտիրոսի ընդ եղիազար։ Մահ Աստուածատուր պատրիարքի։

Ի ԲԱԶՈՒՄ ժամանակաց հետէ խոտիանեալ էր խորհուրդ Պատարագին Հայոց 'ի Գերեզմանէն Քրիստոսի, մանաւանդ Լատին կղերք բազմօք ընդդիմացեալ այսմ բանի 'ի բաց մերժելին զՀայս, և ծանր թուէր նոցա մատանել 'ի Գերեզմանն։ Իսկ եղիազար թէպէտ եւ բազմօք ջանայր քաղցրացուցանել զմիտս և բառնալ զընդդիմութիւնն նոցա, այլ ոչ անասային նոքա, և բանք եղիազարու ոչ եգխտ տեղի 'ի լսելի նոցա, վասն որոյ հարկ եղեւ բողոք բառնալ 'ի Դուռն։ որ և գրեաց գիր ազաչանաց առ Եպար-

քան յԱդրիանուպոլիս ՚ի բանակին Արքունի, եւ յայտ առնէր զհակառակութիւնս Լատինաց, զնախնի սովորութիւնս Հայոց՝ ըստ ղօրութեան հրովարտակի Արքային Սկլիմոյ, եւ եղեւ ՚ի ծանուցանելն զայս Արքային, գրեցաւ հրովարտակ առ դատաւորս և առ մեծամեծս Երուսաղէմի, բառնալ զընդդիմութիւնս Լատինաց, և տալ կատարել Հայոց ըստ սովորութեան զխորհուրդ Պատարագին ՚ի վերայ Գեթսեմանին Քրիստոսի ՚ի վերջ Մուհարրէմ ամսոյ ՌՀՀ (1665)։ (Զկնի ժամանակաց զայս հրովարտակ նո՛ր նորոգել Ջաքարիա վարդապետ, զորմէ ուրիմք ասել յիւրում տեղւոջ)։ Սակայն Լատինք դարձեալ ընդդէմ կացեալ՝ ոչ անսացին հրովարտակին և ոչ բանիւ Եղիազարու՝ ուստի զկնի չորից ամսոց վերստին մատոյց դիր աղաչանաց առ Եալչըքան, և յայտ արար թէ որպէս անառատ գտան Լատինք կայսերական հրամանին, և խոստանեցան զայն։ Վերըստին գրեցաւ հրովարտակ, զի Լատինք մի՛ հակառակեսցին կայսերական հրամանին, և նախնական սովորութեան, և մի՛ երբէք նեղել և չարչարել զՀայս վասն այսր խնդրոյ, յետ ձեմռանել Հվեցն ամսոյ ՌՀՀ (1666)։ Սակայն Եղիազար զայս հրովարտակ եւս ոչ կարաց գործադրել ՚ի բազմադիմի խռովութեանց և ՚ի չվոխութեանց ժամանակին, և յանվերջանալի հակառակութեանց, և ՚ի վոխվոխութեանց Պատրիարքական իշխանութեանց, որպէս ցուցաք ցարդ, և տեսցի եւս վկին (՚)։

Իսկ Յակոբ Կաթուղիկոս ծախեալ յերուսաղէմ բազում ինչ ՚ի դրունս այլազգեաց, անկաւ ընդ պարտեաք, եւ պարտատէրքն նեղէին զնա, և ըստ Արքունական հրամանին, հանապարհ արար երթալ հանդերձ պարտատէրքն ՚ի Կոստանդինուպոլիս, յամենայն Սեպտեմբերի։

Այլ եղիազար ՚ի կարգի եդեալ զամենայն գործս իւր, և առեալ ՚ի Դրանէ զվարուց գրեանս, արար ՚ի Կոստանդինուպոլիս զհանդէս Կաթուղիկոսութեան և Պատրիարքութեան իւրոյ, եւ ձեռնադրեաց անդ եպիսկոպոսունս եօթն։ և ապա հաւաքեալ զնուէրս երուսաղէմի, եմուտ ՚ի նաւ յելս Օգոստոսի՝ հանդերձ 250 ուխտաւորօք։ Եւ յետ անցանելոյ ընդ նեղուցն, ապա լուաւ թէ եկեալ է Յակոբ Կաթուղիկոս ՚ի Կոստանդինուպոլիս։

Սրտ ՚ի հասանիլ Յակոբայ Կաթուղիկոսի յԻսկիւտար, եկին յողջոյն նորա ազգայինք, ընդ որս և Սալթ Զէլէպի հանդերձ երեմիասիւ։ և տեսեալ զքաղցր բարս նորա եւ զառաքինազարդ քաղաքավարութիւն նորին՝ յարեցան ՚ի նա, և բաղումք դարձան ՚ի հոգին նորա եւ ձեռնտուութեամբ նորին զխմբացս յԱդրիանուպոլիս, ուր էր Թագաւորն, և ծախեալ ՚ի դրունս իշխանաց 15,000 դահեկանս ընկալաւ յԱրքայէ նոր հրովարտակ, առ ՚ի հաստատուն ունելոյ զիւր կաթուղիկոսական իշխանութիւն նաեւ յերկիր Տէրութեան Օսմանցւոց։ Էառ և զՊատրիարքութիւնն երուսաղէմի, և դարձոյց զայն ՚ի վերայ Մարտիրոս վարդապետի։ Ահաւասիկ խնամոք հրովարտակին, յորում առաջի դնին բանք աղերսագրին Յակոբայ։ «Կաթուղիկոսունք էջմիածնի մինչեւ ցայսօր առաքէին զմիւռոնն առ Հայս բնակեալս ՚ի Տէրութեան Օսմանցւոց, եւ յայլ գաւառս, որպէս բացայայտ տեսանի ՚ի կայսերական հրովարտակին, զոր ունիմ ՚ի ձեռին իմում, չհակառակիլ ումեք։ Իսկ այժմ ազգն Հայոց, որ չէր արժան հակառակ օրինաց գործել, զնդիրացոյր վարդապետան հնարիւք եդին Պատրիարք յերուսաղէմ։ և նա առանձինն եղեւ Կաթուղիկոս, և խոստացաւ բաժանել անտի զմիւռոնն եւ հաւուցանել ամի ամի ՚ի դանձն Արքունի 15,000 փողս, որով արդել զմեծ մասն ժողովրդոց յողորմութենէ և ՚ի տրոց սահմանեալ, յաւուրց անտի Սկլիմայ Առաջնոյ։ և որոշեալ զրկեցան ՚ի մէնջ արք իրրեւ աւելի քան զ6000։ և Արքայն Սկլիմ ոչ սահմանեաց տուրս ինչ տալ ՚ի դանձն Արքունի, ուստի բարձոյն 15,000 փողն այն, և բաժանեցոյն Միւռոնն յէջմիածնէ, որպէս բացայայտ գրեալ է ՚ի հրովարտակին, ըստ նախնի սովորութեան, և մի՛ ոք խոչ լիցի Միւռոնին և Կաթուղիկոսական իշխանութեան մերոյ, եւ վասն հաստատութեան իրաւանց մերոց, չնարհեցաք նոր հրովարտակ»։ Յակնարկելն յարձանագրութիւն դիւանին, բաժանումն

(՚) Ի հիշատակարանս ինչ գրի, Թէ յաւուրս Եղիազարու սկիզբն առաքեալ պատարագել ՚ի վերջ Գեթսեմանին Քրիստոսի, ըստ նախնի սովորութեան մերոյ։ Բայց յետոյ խոստացեալ են զայս սովորութիւն ընդդիմութիւնք և հակառակութիւնք Լատինաց և Յունաց, և տեսեալ զկիզուածութիւնս այս մինչ ՚ի Թիւն 1829, զորմէ անդրէն խօսել յետոյ։

Մխիթարին, զաւաւ յերուսաղէմ հաստատեալ ՚ի վերայ Եղիազարու. սակայն հրամայեաց Արքայ վարիլ ըստ նախնի սովորութեան, զի Եղիազար խորէնութեամբ և հակառակ սահմանի նախնեաց իմոց ասէ առեալ է զհրովարտակն. Սահմանեցաւ՝ զի չէջմիածնի բաժանեսցի Մխիթարն և Եղիազար մի՛ խառնեսցի ՚ի գործ կաթուղիկոսութեան, բարձաւ նաեւ 15,000 փողն, զոր խոստացաւ հատուցանել Եղիազար. ՚ի \ Շաւալն ամսոյ, \•ՎՎ (1666). եւ Յակոբ կաթուղիկոս չեռ կատարելոյ զայս ամենայն և վճարելոյ զպարտսն՝ դարձաւ ՚ի տեղի իւր չէջմիածին.

Իսկ Եղիազար կաթուղիկոս չեռ հասանելոյ յերուսաղէմ, ոչ ինչ զիտելով զգործոյ Յակոբայ կաթուղիկոսի, ՚ի ասնի Աստուածայայտնութեանն օրհնեաց Մխիթարն ՚ի պղտղոյ Յոհաննէս յոր կոչեցաւ Տէրն մեր, ՚ի վանս Ս. Հրեշտակապետի, որպէս գրէ նա ինքն ՚ի կոնդակի իւրում գրեալ ՚ի թուին Հայոց 1115 (1666). ՚ի Յունվարի 23. քանզի ձիթենի Յոհաննէս Տէրն մեր Քրիստոս ՚ի Ս. Հրեշտակապետի վանն, ոչ ոք լուաւ, և ոչ ոք կտեսս յօրէն Աստուածայայտնութեան Տեառն մերոյ մինչեւ ցայսօր, եթէ հանեալ եղեւ ՚ի պղտղոյն ձէթ իւղոյ, սակս նուազութեան պղտղոյ Յոհաննայ, Իսկ յայսմ ամի՝ այնքան արդիւնացեալ չնորհիւ Տեառն, մինչ զի ձգեալ ձէթն ոչ միայն ՚ի նիւթ սրբալոյս Մխիթարին բաւականացաւ, այլ և ՚ի խնդրոյ Լատինաց Հռոմայ Պապին չնորհ առաքեցաւ. եւ չեռ այնորիկ բաշխէր ձրի զմխիթարն Յոզովրդոյն Հայոց բնակելոց ՚ի Տէրութեան Օսմանեցւոց. և ձեռն արկեալ սկսաւ բազում չինութիւնս առնել յերուսաղէմ և ՚ի վանս Յոպպէի.

Իբրեւ լուաւ Եղիազար թէ Յակոբ կաթուղիկոս չեռ հրովարտակ հակառակ ինքեան, եւ խափանեաց զգործս նորա, ամապարեալ գրեաց գիր ազաչանաց առ Եպարքոսն և առաքեաց ՚ի բանակն Արքունի, և խնդրեաց ՚ի նմանէ զի ըստ առաջին հրովարտակին իւրոյ, դարձեալ ինքն բաժանեսցէ ձրի զմխիթարն, եւ հատուցանել ամ ըստ ամէ զահմանեալ հարկն. և ընդ նմին առաքեաց զտուրս յաջորդ տարւոյն. Գրեցաւ հրովարտակ ըստ խնդրոյ նորին, բաժանել Եղիազարու զմխիթարն՝ և ՚ի բաց կալ Յակոբայ

Կաթուղիկոսի. այս եղեւ զինի միոյ ամսոյ, չեռ առնլոյ հրովարտակ Յակոբայ ՚ի ՀՓ Բահաղան ամսոյ՝ \•ՎՎ (1666).

Դիմեցին յայնժամ և Հայք յԱդրիանուպոլիս ՚ի բանակին Արքունի, որք բնակեալ էին ՚ի Կոստանդինուպոլիս և յայլ գաւառս՝ եւ մատուցեալ գիր ազաչանաց տրեատան լինէին զվարդապետացն էջմիածնի, որք չիջէին ՚ի սահմանս Օսմանեան Պետութեան. Յորժամ նուաճեցաւ ասեն, երեւան քաղաք ընդ իշխանութեամբ Օսմանեցւոց, տաւաւ յայնժամ կաթուղիկոսն էջմիածնի և ծանուցաւ նա իրրեւ զի ՚ի գլխաւոր վանօրէից Հայոց Օսմանեան Տէրութեան. և երեւան համարեցաւ իրրեւ զի ՚ի բարեկարգեալ քաղաքաց. Այլ զինի ժամանակաց ոմանք ՚ի վարդապետաց բերեալ զհրովարտակն յԱդրիանուպոլիս, նորոգեալ են զայն ՚ի վերայ Յակոբայ կաթուղիկոսի. թէ մեք բնակիմք ՚ի սահմանս Օսմանեցւոց, եւ սկսան իշխել ՚ի վերայ Հայոց բռնութեամբ և խոչտանգանօք. ծանր գնով վաճառել զմխիթարն, հատուցանել զրկանս եւ չարիս. խնդրեմք զի խափանեսցի, և մեզ հաճութեամբ ազգին բերցեն զմխիթարն եւ զնահատեսցի ձեռամբ վաճառապետին, որպէս այլ կարասիք, որք մտանեն ՚ի սահմանսն Պարսից, և ըստ այնմ բաժանեսցեն զայն, զի մի լիցի բռնութիւն. Գրեցաւ հրովարտակ առ ամենայն գաւառապետս եւ դատաւորս առնել այնպէս, որպէս խնդրէին. ՚ի \ Զիլհիճէ ամսոյ՝ \•ՎՎ (1666).

Ի սմին ժամանակի Մելքիթա ոմն անուն վերատեսուչ ազգին Վրաց, բնակեալ յերուսաղէմ, սկսեալ զչփոխութիւնս վաճառանացն Հայոց, ժամ բարեպատեհ համարեցաւ յայտնել զչնացեալ և զթագուցեալ մխանայ չարութեան սրտի իւրոյ, եւ այս յաւէտ ՚ի թելադրութենէ Յունաց. քանզի իչեալ սորա յաւուր միում ՚ի դատարան, տրեատան եղեւ զիխանորդէն Հայոց, որում անուն էր Խանաման՝ եւ ասէ, վանք Ս. Յակոբայ՝ որ յերուսաղէմ, ուր բնակին վիճակք Հայոց, ըստ զօրութեան Արքունի հրովարտակաց և օրինաւոր մուրհակաց, զորս ունիմք՝ է մին ՚ի սեփհականութենէ մերոց. զի փոխանորդն Հայոց յաւաչագոյն ամի ամի հատուցանէր Վրաց 25 ոսկի առչինի ՚ի վարձ նոյն վանից. իսկ այժմ ՚ի 40 ամաց հետէ ոչ ինչ

հայուցին Հայք ՚ի վարձուց անտի, եւ վիրք պահանջին ղվարձս անցեալ ամաց՝ որ հասեալ է ՚ի չափ 1000 սուէ Թանի ոսկւոյ, եւ խնդրեաց Մելքիթիս ՚ի դատաւորէն կոչել վուրթանակի զիոհառնորդն Հայոց՝ զի օրինօք դատեսցի. Եկն վոհառնորդն Հայոց, և դատաւորն առաքեաց խնդրելոյ զկնի Մելքիթիսի, և հրաւիրեաց զնա գալ ՚ի ժողով դատարանի, իսկ նա յօրէ յօր և ՚ի ժամանակէ ժամանակ ձգեալ, մինչեւ ցերիս առաւօտ ոչ կամեցաւ երեւիլ առաջի ատենին իւրոյ ՚ի դատարանի, զորմէ ամբաստանեալն էր. եւ ապա իսպառ հրաժարեցաւ ՚ի դատէն պատճառելով զհիւանդութիւն իւր, զի մի զամօթ կրեսցէ. Իսկ Յանտան յորժամ լուաս թէ նոյս եւս Մելքիթիս ՚ի ժողովոյ, և ոչ կամեցաւ գալ հաստատել զամբաստանութիւն իւր, որ առաքեամբ զրպարտէր զնա, խնդրեաց ՚ի դատաւորէն գրով հաստատել զնաթարեութիւնս ազգին վրաց, որպէս և արարն իսկ գրեալ ՚ի ՃՀժամսեալ ամի տեառն, ՌոՀՀ (1667), Եղիազար կաթուղիկոս ձանձրացեալ յատելութենէ և ՚ի կռուոյ, որ լինէր յարաժամ ՚ի տաճարին Ս. Յարութեան ՚ի մէջ երից ազգաց, առաքեաց առ դատաւորն զՊետրոս վարդապետ Թարգման իւր, և խնդրեաց ՚ի նմանէ ՚ի գիր դրոշմել զիմաստն Հայոց, զտեղիս, զկանթեղս, զշշաւնակս, զպատկերս, զտէրտերութիւնս, զժամանակ ուրբաթութեան և շաբաթի, և զայլ ամենայն որ ինչ միանգամ սեփհական է Հայոց, որպէս արարեալ էր յառաջագոյն Գրիգոր Պարոն Տէր. զի թերեւս բարձցի խռովութիւնն, եւ դատաւորն առաքեաց զոմանս յայլազգեաց, և ետ գրել զիմաստն Հայոց ըստ բանի եղիազարու. ՚ի ՂՃէվվեալ ամոյ՝ ՌոՀՀ.

Դաւիթ վարդապետ Բերիացի, որ նոտաւ կաթուղիկոս առանձին ՚ի Բերիա, ՚ի կենդանութեան Յաչատրոյ, եւ զկնի մահուան նորին գնացեալ ՚ի Սիս սկսաւ առաքել ընդ Մխուռնն ՚ի քաղաքս Թէմին երթոյ, եւ ժողովել զնուէրս ժողովրդոց. լուեալ եղիազարու զայս գործ Դաւթի, զբժկամակ եղեւ յոյժ. եւ անառատել նորա, բոլոր կալաւ ՚ի Դաւն, եւ հրովարտակաւ արդիլ զնուիրակս նորա. եւ մինչդեռ եղիազար միտ եդեալ յատաջ վարէր զգործս իւր եւ ջանայր յամենայնի անկասկած ունել զիշխանութիւնն

կաթուղիկոսութեան և Պատրիարքութեան երուսաղէմի, եհաս անդ Մարտիրոս վարդապետ Թազաւորական հրամանաւ, եւ ՚ի բաց վարեալ անտի զեղիազար, կալաւ զՊատրիարքութիւն տեղոյն. և եղիազար դնացեալ նստաւ ՚ի Ռհմէ առ ժամանակ մի, և երբեմն յԱրղնի.

Եւ զանդի միաբանք Ս. Յակոբայ չէին հաւան ընդ Մարտիրոս վարդապետ, և զի տակաւին կենդանի էր Տէրութեն Աստուածատուր, Ծախեալ դրամս ինչ՝ ընկալան ՚ի Դրանէ հրաման վասն Պատրիարքութեան նորա, և յայնժամ Մարտիրոս կարգեցաւ իբր վոհառնորդ նորա. Տեսեալ ժողովրդոց զայսպիսի անպատեհ և զիշխասակար գործս եկեղեցականաց ոմանց՝ և զգաւազի վիճակ Աթոռոյն Երուսաղէմի՝ ժողովեալ ամենեցուն ՚ի մի վայր, մտաւորին գիր ազաչանաց առ Եպարքոսն ՚ի բանակն Արքունի, բողոք բարձեալ զանիրաւութենէ ոմանց, որք առիթ եղեն անկարգութեան և վրդովման աթոռոյն Երուսաղէմի. զի Պատրիարգունք այնր աթոռոյ ցկեանս գահակալէին. եւ մինչչեւ էր վախճանեալ միոյն, չէր օրէն տալ այլոյմ զիշխանութիւնն զայն. Իսկ այժմ վարդապետք Պարսկաստանի և այլք ոմանք, ստութեամբ եւ խաբէութեամբ հանեալ հրովարտակ յԱրքունուստ, գիմեն յերուսաղէմ եւ խրոխտան ՚ի վերայ միաբանից, թէ ահա ունիմք հրովարտակս և եմք իշխան և խնամակալ վանօրէից և եկեղեցեաց կաթուածոց եւ ամենայն գոյից երուսաղէմի. Զի նախնիք մեր զկալուածս և զամենայն կարասիս եկեղեցեացն այնոցիկ, զորս տուեալ են յաւուրց անտի Արքային Սէլիմայ, են հայթայթանք պարենից ազքատաց. Իսկ նոքա բռնութեամբ յափշտակեալ զայնս, վատնեն և կորուսանեն ըստ կամաց իւրեանց, և յանցանելն նոցա քան զչափ, ծանրանան տուկոսաւոր պարտք ՚ի վերայ ազքատաց. Եւ նոցա եգեալ ՚ի գրաւի զկալուածս եւ զիարասիս վանից, խոյս տուեալ փախչին անտի, և պարտատէրք կալեալ զմիաբանս նեղութեամբ և տալնատալ պահանջեն ՚ի նոցանէ զդրամսն ցուցանելով զմուրհակն կնքեալ կնքով վանից, թէ գուք ունիք հատուցանել զայնս. և ապա աղերս արկեալ խնդրեն հրովարտակաւ բառնալ զանկարգութիւնն զայն. զի Պատրիարքունք երուսաղէմի մի իշխեսցեն մխել զձեռս

'ի կալուածս եւ 'ի կարասիս վանացս։ Գրեցաւ հրովարտակ ըստ խնդրոյ նոցին, ՌՀՀ (1667)։

Իրրեւ եւս եղիազար թէ ա՛ռ զՊատրիարքութիւն երուսաղէմի Աստուածատուր եպիսկոպոս, յուղի անկեալ չոքաւ 'ի Կոստանդնուպոլիս, և անտի դիմեաց առ Բէյսըրիւլիս Եպարքոսն, և յայտ արար նմա թէ Պատրիարքութիւնն եւ խնամակալութիւնն երուսաղէմի յատաջագոյն հրովարտակաւ հաստատեալ էր 'ի վերայ իւր, և չէր օրէն 'ի կենդանութեան իւրոյ՝ տալ զիշխանութիւնն զայն այլում։ զի Աստուածատուր եպիսկոպոս խաբէայ թեամբ էառ յինէն զՊատրիարքութիւնն, եւ հասոյց ինձ վնաս ասէ՝ եւ մեծամեծ չարիս։ Այլ արդ՝ բարձեալ յաթոռոյն՝ ձերով հրամանաւ Աստուածատուր, և վերստին չնորհեսցի ինձ Պատրիարքութիւնն և կաթուղիկոսութիւնն երուսաղէմի ըստ առաջնոյն։ և 'ի կենդանութեան իմում, մի ոք հանդգնակեսցի ձեռն մերել յայն։ Եւ այսպիսի եղանակաւ վերստին հաստատեաց եղիազար զիշխանութիւնն երուսաղէմի հրովարտակաւ, և եկեալ նստաւ անդ Պատրիարք եւ կաթուղիկոս անուամբ։ ՌՀՁ (1668)։ Եւ Մարտիրոս վարդապետ ոչ կարացեալ կալ յայնոսիկ կողմանս, եկ եւ դնաց 'ի Կոստանդնուպոլիս։

Եւ եղեւ 'ի մեռանիլ Բէյսըրիւլիս Մէհէմմէտ Փաշային՝ կարգեցաւ Վէզիր մեծ որդի Նորին Ահմէտ Փաշա։ Մարտիրոս վարդապետ միաբանեալ ընդ իւր զոմանս յատաջին գործակցաց իւրոց, դիմեաց մեծամեծ ընծայիւք առ եպարքոսն, որ էր յԱդրիանուպոլիս, և մատուցեալ գիր ամրաստանութեան 'ի վերայ եղիազարու՝ չարաբաւս եղեւ գնմանէ, թէ առանց թագաւորական հրամանի չինեալ իցէ բազում չինուածս յերկիզեցիս և 'ի վանօրայս յերուսաղէմ, և 'ի մոտակայ տեղիս, եւ էառ հրաման՝ զի ինքն իւրմէ վերստին Պատրիարք երուսաղէմի։

Եւ գարձ արարեալ 'ի Կոստանդնուպոլիս, ծանուցուցին արար յերկերցիս, թէ նոր Եպարքոսն յիմ կողմն է, և ինձ էառ զիշխանութիւնն հավուրս զամենեսեան, որք են ընդ Տէրութեամբ Օսմանցւոց, եւ զի ցայն վայր յանուն եղիազարու տային ժողովուրդք նուէրս երուսաղէմի, ջանայ ինքն հատուցել յանուն իւր, և կորզեաց ինչ ինչ յոմանց ազգանաց և յոմանց սպառնալեօք։ Այլ քանզի եղիազար տակաւին վարէր զիւր իշխանութիւն յերուսաղէմ, գրեաց առ նա Թուղթ Մարտիրոս վարդապետ, եւ ասէ իբր սպառնալեօք, զգուշութեամբ պահանջիր զանօթս վանացս Ս. Յակոբայ, զի մի յաւարի առցեն սպասաւորք դրանն, որք աւադիկ զան այդր հրամանաւ Եպարքոսին։ Բայց եղիազար իւր բարեկամ արարեալ զԻդէչխան երուսաղէմի եւ զԴուտաճկոսի եւ զայլ իշխանս, միջնորդութեամբ նոցա հաճեցոյց և հատանեցոյց զեպարքոսն, ձեալ հաստատուն յիւրում իշխանութեան յերուսաղէմ։ Եւ 'ի հասանիլ անդր սպասաւորաց դրանն, իրրեւ կամէին կործանել զշինուածսն, զորս նորոգ կերտեալ էր նորա, որովք ոսկւոյ հաճեցոյց զնոցա, և նոքա առ 'ի կատարումն հրամանաց Եպարքոսին, քակեցին միայն զվիքրիկ շինուած մի արտաքոյ եկեղեցւոյ և վանաց, և զզարդս ինչ պաշտպանաց և դարձան յետս։

Իսկ եղիազար ոչ կամեցաւ այլ եւս ձեալ յերուսաղէմ. խնդրեաց հրաման յեպարքոսէն՝ երթալ նստիլ 'ի Պրուսա քաղաք, չիաւնիլ երբէք 'ի գործ ազգին, և չտալ ումեք ինչ։ Եւ Եպարքոսն գրեաց առ դատաւորն Պրուսայ, զի 'ի հասանիլ եղիազարու անդր, պատուով ընկալցին զնա, և ի ոք հարմարհակեսցի չարիս հասուցանել նմա ընդդէմ օրինաց և կանոնի։ 'ի ՌՕ Բ՚ելիլ ախր ամսոյ՝ ՌՀՀ (1670)։ Իսկ Աստուածատուր Պատրիարք երուսաղէմի հասեալ 'ի խոր ծերութեան, վախճանեցաւ ի աւուրբք, 'ի թուին Հայոց 1120 (1671), և թաղեցաւ 'ի վանս Ս. Փրկչի՝ վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեան երուսաղէմի տասնապանօք ընդ եղիազարու եւ ընդ Մարտիրոսի ամս 26։ Ի վերայ տապանի սորա գրեալ կայ, Պատրիարք և առաջնորդ երուսաղէմի։ Զսորա մեծ սիւնն գոհարազարդ աշխարհական տեղակալք եդին 'ի գրաւ առ Լատինս, զոր զնին ժամանակաց ազատեաց Գրիգոր շքեղ սիւնակիր։

Իրրեւ տեսին միաբանք երուսաղէմի և ազգն Հայոց, թէ մեկնեցաւ եղիազար յաթոռոյն, եւ Մարտիրոս էառ զՊատրիարքութիւնն երուսաղէմի, միաբանեցան ամենեքեան եւ գրեցին գիր աղաչանաց առ եպարքոսն, որ էր յայնժամ յԱդրիանուպոլիս 'ի բանակն Սրքուճի 'ի տեղին

Տէ-Բ-ի Եւ-յէ-ղէ կոչեցեալ, յորում ասէին. մեք ի հարց և ի նախնեաց մերոց գոլով հպատակ Օսմանեան Տէրութեան, զամենայն հարկս նորին անթերի հատուցանեմք մինչեւ ցայսօր. իսկ այժմ Մարտիրոս անուն վարդապետ ոմն հպատակ Պարսից և հետեւող Հայոց, յրնթացս քանի ամաց վարեաց զիշխանութիւն Պատրիարքութեան Երուսաղէմի. զամենայն կալուածս և զառացուածս՝ թէ ի քաղաքի անդ և թէ յայլ գաւառս կայսերութեան, վասնեաց ի կամս իւր և կորոյս եւ յիւրաքանչիւր ամի ժողովեալ գյոլով դրամս յաղգէն Հայոց, առաքէ ի Պարսկաստան ընդ Ջուղայեցի Հայս հպատակ Պարսից, եւ արար զմեծ մեսս վանից՝ եւ հասոյց զրկանս աղքատաց. Իսկ այժմ զոր ընտրեցաք՝ զայն կացուսջիք Պատրիարք Երուսաղէմի, եւ զմարտիրոս զայն եւ զայլ Պարսկահայս ի բաց հանեալ արտաքսեսջիք ի միջոյ մերմէ. Եհաս անդր և Եղիազար և նա եւս մատոյց դիր աղաչանաց, և վերստին հաստատեցաւ ի Պատրիարքութեան Երուսաղէմի, ի ՀՀ ճէմազիլ էվվէլ աւուր՝ ՌՈՀԲ (1671). Էառ նաեւ Եղիազար հրովարտակ վասն Նուիրակաց էջմիածնի, չ՛շրջիլ ի գաւառս Օսմանեան Պետութեան.

Եւ զի ոչ կամէր Եղիազար գալ Յակոբայ Կաթուղիկոսի եւ շրջիլ ի Տէրութենէ Օսմանցւոց և գնալ ի Կոստանդինուպոլիս, քանզ գիտէին՝ թէ այնու ոչ պահպանի վէճք և հակառակութիւնք ի մէջ ժողովրդոց՝ յոչ խաղաղութիւն ինքեան, նմին իրի նախ աղէ արար առ կաւսականն Դամասկոսի Ահմէտ Փաշա, և եառ գրել նմա ի Դուռն վասն այնր, և ապա ինքն բազոք կալաւ առ Եպարքոսն. զի մեկնեալ Յակոբայ ի Տէրութենէ Օսմանցւոց երթիցէ ի վանս իւր: Գրեցաւ հրովարտակ առ ամենայն դատաւորս և գործակալս քաղաքաց և գաւառաց, Զմիւռնիոյ, Նիկոմիդեայ, մինչեւ ի սահմանս Վանայ, զի ուր և ընդ ում իշխանութեամբ գտցէ Յակոբ Կաթուղիկոս, մի տացեն թոյլ գալ ի Կոստանդինուպոլիս, այլ առանց յապաղելոյ մի օր և մի ժամ, որոշեալ ոստիկանաւ ընդ արս հաւատարիմս, հսկելով և պահպանելով զցայգ և զցերեկն, զի մի և փոքր միասն ինչ պատահեսցի անձին նորա, փութանակի հասուցանեն զայն ի վան քաղաք. ի ՀՀ Զիլգաժէ

ամսոյ՝ ՌՈՀԲ (1671). Տեսեալ Մարտիրոսի թէ ոչ կարաց հանել յեղիազարէ զգլաւիս Պատրիարքութեան Երուսաղէմի, նստաւ ի Կոստանդինուպոլիս յեկեղեցի Ս. Աստուածածնի, անուանեալ Նոր լիմն պատուոյ, կոչելով վինքն առաջնորդ Երուսաղէմի անկախ յեղիազարէ, և ժողովէր զառաքս ժողովրդեան՝ զոր տային յեկեղեցիս վասն Ցուցիր Յակոբայ, զորս Յակոբայ ի պէտս փոխոխութեան Պատրիարքայ այնր աթոռոյ. Ի ժամանակի այսմ ազմկալից և անդադրմանելի խռովութեանց, Տասիթիոս պատրիարքն Ցունաց ժամ բարեպատեհ գտեալ՝ ձեռնարկեալ նորոգեաց զեկեղեցին Բեթղեհէմի, զոր արդէն թափեալէր ի ձեռաց լատինաց՝ որ և ի բազում տեղիս փոխոխեալ այլեայլեաց զառաջին ձեւ եկեղեցւոյն. սակս իւրացուցանելոյ ինքեան՝ փակեաց զառաջին դրունն և եբաց նորս. անջըրպետեաց զդասն ի սիւնազարդ գաւթէն, յաւուրս Վէզիրութեան Քէօպրիւլիւ օղլու Ահմէտ Փաշայի (1672). Իսկ Գաղղիացի պատմիչն եկեղեցեաց Ս. Երկրին վօկէ ասէ, թէ յաւուրս Քէօպրիւլիւ Վէզիրին լեալ իցէ նորոգութիւնն և հապճեպ զերծեալ եկեղեցին ի կործանմանէ. ապայն ի սոյն թուականի Քէօպրիւլիւ Վէզիրն արդէն մեռեալ էր, և ի տեղի նորա անցեալ արդէն նորին Ահմէտ՝ որպէս գրեցաք ի վեր անդր, վարեալ պիշխանութիւն Վէզիրութեան աւն 15.

Գ Լ Ո Ւ Խ Ը.

Վէճ այլազգեաց Երուսաղէմի. Գիւղականք Բեթղեհէմի. Մարտիրոս վարդապետ. Աղաղակ գոնապանք. Վէճ այլազգեաց վասն գերեզմանատան. Գալ Յակոբայ Կաթուղիկոսի վերստին ի Կոստանդինուպոլիս. գրել նորա թուղթ Ներսէսեան եւ եղիազար, և վախճան նորին. Մարտիրոս վարդապետ և վախճան նորին.

ՈՄԱՆՔ յայլազգեաց բնակելոց յերուսաղէմ, հակառակեալ ընդ միաբանս Ս. Յակոբայ, յորոցին վէճս, և բազոք կալեալ առ դատաւորն առանն. որմն Ս. Հրեշտակա-

պետի վանաց եղեալ են 'ի վերայ հիման գործարանի օճառին, սեփհականութեան այլազգեաց, պատուիրել վաճառանացն Հայոց կարճել զձեռս իւրեանց անտի։ Իսկ Յաչատուր եպիսկոպոս, որ փոխանորդ էր յայնժամ Եղիազարու, չքաւ առ դատաւորն՝ և առաջի արար զվաւերական գրեանս զոր ունէր վասն այնր, և նանրացոյց զսեփհականութիւնս նոցին եւ եցոյց Հրեշտակապետի վանաց լեալ 'ի ձեռս Հայոց 'ի վաղ ժամանակաց անտի, և ոչ եղեալ հիմն 'ի վերայ գործարանի օճառի։ Եւ 'ի չհամբել ընդ այն ամբաստանողաց՝ եկին բազմութեամբ 'ի քննութիւն տեղւոյն, և դարձ արարեալ առ դատաւորն պատմեցին թէ 'ի զուր են ամբաստանութիւնք այլազգեաց, և նա յետ խափանելոյ զհակառակութիւնս նոցա, վերստին հաստատեաց զիրաւունս Հայոց, ՌՀԷ (1673)։

Դատաւորն Երուսաղէմի՝ որ այն ինչ եկեալ էր՝ և կամէր երթալ յետս 'ի Բեթղեհէմ, և անտի 'ի Քերբոն 'ի գերեզման Հայր Աբրահամու՝ ըստ սովորութեան իւրեանց, ոմանք յայլազգեաց մատուցեալ առ նա՝ ամբաստան եղեն զմիաբանացն Հայոց, բարուրեալ եղեալ 'ի վերայ նոցա. իբր թէ հակառակ օրինաց նոցին չինեալ իցեն նոր եկեղեցիս 'ի գիւղն Բեթղեհէմ 'ի վանս իւրեանց, և կամեալ անդ զկանթեղս և զաղաւակերս, և զարդարեալ եկեղեցական սպասուք՝ կատարել զօրինս իւրեանց։ Իբրեւ լուաւ դատաւորն զայսոսիկ՝ չարժեցաւ 'ի նախանձ մեծ, և ապանաւելեալ ոգւով աճապարեալ վտեղծաց 'ի պաշտպանութիւն օրինաց։ Սակայն առաքեաց նախ զփոխանորդ իւր և զոմանս յայլազգեաց 'ի Բեթղեհէմ, քննել եւ խնամալ զեղելոյն և բերել զրոյց առ ինքն. հասին նոքա անդ՝ ուր էր և Յաչատուր եպիսկոպոս փոխանորդ Եղիազարու, եւ տեսին զեկեղեցին՝ զոր չինեալ էր Գրիգոր Պարոն Տէր, և զրոմն նորա կարի հնագոյն, և դարձեալ անսի պատմեցին դատաւորին. իսկ նա վերստին եհարց զՅաչատուր վասն եկեղեցւոյն այնմիկ, և նորա պատասխանի արարեալ ասէ, 'ի սկզբանէ անտի սահմանեալ է այն 'ի սկիզբ աղօթից մերոց, որպէս գիտեն ամենայն այլազգիք քաղաքիս՝ և նա խնդրեաց առ այս վկայս յայլազգեաց, և նորա ժողովեալ զգլխաւորս նոցին յԵրուսաղէմէ և 'ի Բեթղեհէմէ,

հացոյց առաջի դատաւորին. և նոքա ասեն, եկեղեցին այն յառաջ քան զ80 ամ կարգեալ է 'ի սկիզբ աղօթից վիճանացն Հայոց, եւ է սեփհականութիւն ազգի նոցին. լուեալ դատաւորին զվկայութիւնս նոցին՝ լուաց, և հարկադրեաց գրով հաստատել զայն ըստ թախանձանաց Յաչատուր, յՔ Իւլիւլ եվվել ամոյ՝ ՌՀԶ (1673)։

Ցետ լուծուցանելոյ Յաչատուր եպիսկոպոսի զայլազգիս Երուսաղէմ, յարուցին վէճս և հակառակութիւնս բնակիչք գիւղին Բեթղեհէմ, չմոռանալ զհին բնութիւնս, և իբր նոքին[ա]րական ինչ աւանդելով որդւոց իւրեանց. զի յառաջագոյն քանիցս 'ի դառն մտեալ էին ընդ Հայս վասն գերեզմանատան և կորուսեալ իրաւանց իւրեանց։ Եւ 'ի սմին ժամանակի դարձեալ սկսան նորոգել զնոյն, յարիշտակեցին ասեն՝ Հայք զգերեզմանատունն մեր և արարին պարտէզ՝ մտծեալ 'ի վանս իւրեանց, եւ ապաւնեային բռնութեամբ կորզել զայն 'ի ձեռաց նոցա, և զի ոչ կամէին անուալ վաւերական գրոց, զոր ցուցանէր նոցա Եղիազար, գրեալ յաւուրս Գրիգորի Պատրիարքի Պարոն Տէր կոչեցելոյ, ուստի հարկագրեալ մատոյց գիր ազաչանաց առ Սպարքոսն 'ի բանակն Արքունի, և խնդրեաց 'ի նմանէ առնել զքննութիւնն գիւղականաց, և կարճել զձեռս նոցին, չվհել յանիրաւի յիրաւունս այլոց։ Գրեցաւ հրովարտակ վասն այսր առ դատաւորն Երուսաղէմի, օրինօք Շէրիւի քննել զվէճն, եթէ արդարեւ սեփհականութիւնն Հայոց հաստատեալ է վաւերական գրովք պատարանի, խափանեսցէ զընդդիմութիւնս գիւղականաց, և սատեսցէ նոցա չյանդգնել վիւսանգամ յայնպիսի իրս, և զանհնազանդսն ծանուցանել 'ի Դուռն։ և ապա պատուիրէ, այնպէս կարգաւորել զվնդիրն, զի մի վերստին հրամանի կարօտ լիցի գործն։

Իսկ դատաւորն յետ կատարելոյ զքննութիւնն արգել զընդդիմութիւնս նոցա, զի ոչ կարացին մատուցանել վաւերական գիրս ինչ 'ի ՌՃեմազիլ ախր ամոյ՝ ՌՀԷ (1676)։

Այլ մարտիրոս վարդապետս ծախեալ բազում ինչ 'ի գրոնս այլազգեաց, դարձոյց յինքն զիշխանութիւն Պատրիարքութեան Երուսաղէմի, և էառ հրովարտակ ՌՀԷ, և նոտաւ 'ի Կոստանդնուպոլիս, իբր անուանի առաջնորդ Երուսա-

ղէմի։ Զկնի երկուց ամաց դարձեալ Հաւ Հրովարտակ վասն այնր, որ 'ի ամին յաւելլու, անխոտոր պահել զիշխանութիւն Պատրիարքութեան. եւ մինչչեւ վախճանեալ իցէ մեռն, չղնել զայլ ոք 'ի տեղի նորա, զի վասն այսր ասէ 'ի բազում նուագս անկաւ ընդ պարտաւոք վանք Ս. Յակոբայ 'ի մեծ վնաս ազգին, ՌՈՀԹ (1678)։

Այլազգի գահնապանք տաճարին Ս. Յարութեան սահմանեալ օրինօք առնուին տուրս յուխտաւորաց անդ 'ի դրան տաճարին, զոր օրինակ 'ի Կոստանդինուպոլսոյ եկեալ յուխտաւորաց 210. 'ի Հայաստանէ՝ 150, յԵգիպատոսէ, 100 վարայ, իսկ 'ի ամին ամի ոչ բաւ համարէին զայսոսիկ տուրս, այլ պահանջէին զայլս եւս, և յընդդէմ դառնալ նոցին, առիթ լինէին նեղութեան եւ վնասուց վանօրէից և ուխտաւորաց։ Եւ յաղագս զնոյն իրաց՝ միաբանեցան Հայք ընդ Յոյնս, և գրեցին գիր աղաչանաց 'ի Դուռն, և առաքեցին զայն 'ի ձեռն պատգամաւորի, և առնուն գերել հրովարտակ, չղպահանջել գահնապանաց այլ եւս աւելի քան զսահմանեալ տուրսն 'ի նեղութիւն քրիստոնէից. 'ի ՌՃՀԹ (1679)։

Վերոհաց ուք և խնամակալք կալուածոց Մինճե կոչեցեալ դպրոցին այլազգեաց, որք էին Եահին և Գաւրի, մատուցին գիր ամբաստանութեան 'ի Դուռն զազգէն Հայոց, ասեն, զմի մասն կալուածոց դպրոցին, որոյ տեղին կոչի Սիոն, ելից վանից Ս. Փրկչէ, յանիրաւի յափշտակել զայն Հայոց, արարեալ են ինքեանց ձերձգիանատեղի, եւ յաւելագոյն յիւրաքանչիւր ամի 10 սուլթանի ոսկիս վճարել դպրոցին այնմիկ, որպէս ցուցանեն տուեալք կալուածոցն, իսկ այժմ զլանան հատուցանել զնոյն 'ի վնաս կալուածական իրաւանց եւ այսպիսի եղանակաւ տուին հրովարտակ յԱրքայէ։ Սակայն պատուիրէ 'ի նմա դատաւորին քննել եւ իմանալ ճշմարտութեամբ արդարութեամբ օրինօք Շէրիի, թէ արդարեւ այնպէ՞ս իցէ, որպէս ամբաստանեն։ Գրեալ յամսեանն Բահաղանի, ՌՈՀԹ (1678)։ Եւ մատուցեալ նոցա զհրովարտակն զայն առ դատաւորն Երուսաղէմի, խնդրեցին կոչել զդպրապետս քրիստոնէից, զորոց ամբաստանեալ էին։ Կոչեցան վախանորդք երից վանից, Եուվանօֆ՝ Յոյն. Սալվաթոռ՝ Լատին, Մաչատաւր Եպիս-

կոպոս՝ Հայ, եւ առաջի սոցա ընթերցաւ դատաւորն զհրովարտակն։ Եւ 'ի ամին պահու բարձրացուցին զձայնս իւրեանց Եասին և Գաւրի 'ի վերայ փոխանորդաց եւ ասեն՝ Ջրիստոնեայքդ այդպիսիկ, տիրեալ են միոյ մասին կալուածոց Մէնճէք դպրոցին, և բաժանեալ զայն 'ի միջի՝ թողեն զվեհագոյն իւրեանց, և միոյ մասին տիրեալ են Հայք՝ փոխելով զսահմանս նորին՝ հանդէպ վանացն Ս. Փրկչէ, եւ տնկեալ են անդ ձիթենիս, որոյ վասն հատուցանէին զ10 սուլթանի ոսկիս, և այժմ դարձեալ պահանջեալք զայնս։ Եկարծ դատաւորն ցփոխանորդսն՝ Թէ զինչ անվն պատասխանեալ առ այն։ Եւ նոքա ասեն, չունին դոքա իրաւունս պահանջելոյ զսակի և կամ զայլ իրս վասն անեղծն այնորիկ, զոր ժառանգեալ եմք 'ի վաղ ժամանակաց առանց կռուոյ և հակառակութեան, զօրութեամբ դատաւոռանական գրոց և կայսերական հրովարտակաց, Սէլիմայ և յորդոյ նորին Սիւլէյմանայ Սրքայից, եւ մատոյց զնոսա Մուհյատուր Եպիսկոպոս 'ի ժողովն, յորս գոյր յիշատակ գեղջմանատան, առեալ 'ի դաշնագրոց մեծին Օմարայ եւ Սալահատինի, որ և դատաւորն ընթերցաւ զայնս առաջի ամբաստանողաց, եւ ծանոյց զիմաստս նոցա։ Բայց նոքա ոչ կամէին հնազանդիլ բանից հրովարտակաց. կրկնեալ դատաւորն յականջս հակառակորդաց զպատուէր թագաւորացն. Թէ որպէս թողեալ են նոքա զժառանգութիւնս քրիստոնէից 'ի ձեռս նոցա հետեւելով եւ հաստատուն պահելով զբանս դաշնագրոց, որք նոքա չունէին կրկէք իրաւունս պահանջելոյ զիրս լինչ 'ի քրիստոնէից, զի Օմար և Սալահատին երիցագոյնք էին ժամանակաւ քան զմէնճէք, և զիա՞րդ կարէր կալուած համարիլ զայն տեղի, և հարկս դնել 'ի վերայ նորա, զի նոքա 'ի տիրել իւրեանց քաղաքին սրբոյ՝ թողին զկալուածս իւրաքանչիւր քրիստոնէի 'ի ձեռս իւրեանց, որպէս յայտնի ցուցաւ 'ի հրովարտակսդ։ Եւ յետ բազում բանից մերժեաց զնոսա դատաւորն յատենէ իւրմէ՝ և խոստացաւ զանիրաւ պահանջս և զհակառակութիւնս նոցին, և պատուիրեաց չպահանջել զիրս լինչ 'ի քրիստոնէից, եւ իւրաքանչիւր ազգաց մնալ 'ի սեփհական ժառանգութիւնս իւրեանց. և հուսկ ուրեմն հաճեցան հակառակորդքն՝ 'ի միտ առեալ զբանս հրովար-

տակաց, և յետս կացին յամրաստանութենէ իւրեանց, եւ դատաւորն հրաման եւս փոխանորդաց երից, տիրել իւրաքանչիւր տղաց բաժնի իւրում. ՌՃՂ (1680)։

Իսկ Յակոբ Կաթուղիկոս լուեալ զանցս Հայոց եղելոց ի Կոստանդինուպոլիս, ցաւակից լինէր հոգւով չար տարաբախտ վիճակի հօտին իւրոյ. կամէցաւ զարման մատուցանել այսմ ամենայնի, և ոչ հայեցեալ ի ծերութիւն իւր՝ եկն յԱյծմիածին և առանալարհ տարաժ մի ետանդամ ի Կոստանդինուպոլիս։ Եւ հասեալ անդր յամենայն Դեկտեմբերի (1679), գրեաց անտի թուղթ սիրոյ առ եղիազար յամենայն Յունաց, և առաք. սիրեցեալդ իմ ի Քրիստոս պատուական եղբայր, հայեաց եւ աղեխորով լեր ի վերոյ Թշուառութեան մերոյոց՝ որք կան ի թագաւորական քաղաքիս. դի և դու մատամբ իւիք եղեր պատճառ ցաւոցս այսոցիկ. եկ այսր և խորհուրդ արարեալ գայցուք զկնի հնարից յօգուտս ազգին։ Եւ եղիազար Քէչէտեւ յօժարեցաւ գնալ, բայց յամեալ փոքր մի գրեաց պատասխանի առ Յակոբ Կաթուղիկոս, և ասէ. մերձեալ են աւուրք ազուհացից և կայ առաջի տօն Զատկի և ժողովեալ են ամա ուխտաւորք բազումք, որք ոչ թողուն ելանել ինձ ամսի նախ քան զտօն Ս. Յարութեան, վասն որոյ խնդրեմ ներել դանդաղանացս։ Եւ Յակոբ Կաթուղիկոս երկայնամտեալ զանգի կալաւ ի Կոստանդինուպոլիս։

Յայնժամ մատուցեալ Երեմիա Չէլէպի առ Յակոբ Կաթուղիկոս՝ յորդորեաց զնա առաքել զմարտիրոս վարդապետ յԵրուսաղէմ հանդերձ յանձնարարական թղթով՝ զի գնացեալ անդր՝ հաչտեսցի ընդ եղիազարու եւ հանդարտեսցի. և ի դարձին նորա՝ եթէ կամեսցի՝ եկեսցէ ընդ նմա ի Կոստանդինուպոլիս։ Եւ ի հասանիլ Կաթուղիկոսին, հաճեալ և Մարտիրոսի՝ եւ և գնաց յԵրուսաղէմ, և եղիազար սիրով ընկալաւ զնա, և եւս նմա առանձին տեղի բնակութեան ի դարպասի. Յետ քանի մի աւուրց նուիրեցան ոմանք ձեռնադրել եպիսկոպոս յեղիազարէ իրրեւ ի Կաթուղիկոսէ իւրեանց. իսկ եղիազար ասէ ցնուիրեալսն. գնացէք ասացէք Մարտիրոս վարդապետին, զի եկեալ ազաչեսցէ վասն ձեր, եւ յայնժամ ձեռնադրեցից զձեզ։

Եւ նոցա առեալ ընդ իւրեանս զոմանս յուխտաւորաց խօսեցան ընդ Մարտիրոսի վասն այսր բանի՝ և նա յօժարութեամբ անսացեալ աղաչանաց նոցա, եկն առ եղիազար, և միջնորդ լեալ աղերսէր զնա ձեռնադրել զնուիրեալն. եւ եղիազար ասէ. արարից ըստ բանի քումմ, եւ կատարեցից անյապաղ զինդիր քոյ։ Ձեռնադրեալ ապա եղիազարու հանդիսիւ զնուիրեալն յեպիսկոպոսութիւն՝ արար խնճոյս մեծ, և ի սեղանի անդ յանդիման բազմութեան ասէ ցՄարտիրոս վարդապետ. ոչ դու այն էիր՝ որ յայսքան ժամանակ այսչափ վրդովմունս յարուցեր՝ կենօք և մահու չափ ընդդէմ զինելով ինձ, եւ հնարս գործէիր խափանել զգործ կաթուղիկոսութեանս. քարոզ կարգայեր առ ամենեսեան՝ թէ չէ նա կաթուղիկոս. մի օրհնեսցէ Մրուռն, մի ձեռնադրեսցէ եպիսկոպոս, և զիա՞րդ այժմ դու քեզն եկեալ ինձ աղաչաւոր՝ մաղթանս արկեր, եւ եւս ինձ իրր կաթուղիկոսի ձեռնադրել զդասս եպիսկոպոս. Եւ ես այժմ ձեռնհաս էի առնել ընդ քեզ զոր ինչ դու ընդ իս կամէիր առնել. բայց ի չնորհս պատուական եղբօր իմոյ Յակոբայ կաթուղիկոսի ներեմ քեզ, միայն թէ ճշմարտեաս հաւատարիմ ի սէրդ. զայս լուեալ Մարտիրոսի՝ ափշեցաւ եւ սարսափ կալաւ զնա եւ լուռ եկաց։

Յետ այսորիկ զինի աւուրց պենաէկոստէի ի պատրաստիլ եղիազարու գնալ ի Կոստանդինուպոլիս, հրամանգ տայ Յակոբ կաթուղիկոս ի թագաւորական քաղաքի անդ, և օր քան զօր սկսցաւեալ փոխեցաւ ի կենցաղոյս յերկրորդ աւուր ամսեանն Օգոստոսի (1680), ի հասակի 82 ամաց, կացեալ ի կաթուղիկոսութեան ամս 25 և ամիսս 4։ Եւ տարեալ թաղեցին զմարմին նորա պատուով մեծաւ եւ տարեալ թաղեցին զմարմին նորա պատուով մեծաւ ի գերեզմանատեղին Հայոց ի Պէյ օղլու։ Իսկ եղիազար հասեալ ի Կոստանդինուպոլիս, և տեսեալ թէ վախճանեալ է Յակոբ կաթուղիկոս, կամ ըստ ասելոյ ոմանց՝ ի ճանապարհի լուեալ զմահ նորա, դարձաւ անդրէն փութանակի յերուսաղէմ, և յայնմ օրէ սիրաբար վարէր զկաթողիկոսութիւն իւր ի վերայ Հայոց։

Իսկ մխարանք էջմիածնի զինի երկար խորհրդակցութեան, և հաճելոյ զմիտս Պարսիկ իշխանին Երեւանայ, և

առնլոյ ՚ի նմանէ հաւանութիւն սակս ընդունելոյ զկաթողիկոսութիւնն եղիազարու, գրեցին գիր առ նա ընդարձակ եւ ազաչաւոր բանիւք, որոյ սկիզբն է. « Առաւած պետականին բանական անդաստանաց քրիստոնէական հշակիզ որդւոյ վիճակն Յիսուսի Քրիստոսի անճառ արեամբ գնեալոցս, և այլն »։ Տե՛ս Սարգիսեան էջ 50։ Եւ առաքեցին զայն յերուսաղէմ ընդ Պետրոս վարդապետի՝ և այլոց որք ընդ նմա էին՝ առ եղիազար, և հրաւիրեցին գալ նստիլ յիջմիածին, և տիրել ՚ի վերայ ամենայն Հայոց, և ոչ սոսկ միոյ մասին և եթ։ Յանձն առեալ եղիազարու՝ եւ յերուսաղէմ վաւօք, և եկն նախ ՚ի Կոստանդինուպոլիս ՚ի 1 Մարտի, և անդ էառ հաստատութիւն իշխանութեան իւրոյ յԱբգուհուստա, և կացեալ զաւուրս քանի մի ձեռնադրեաց եպիսկոպոս զկարապետ վարդապետ, զՊատրիարք քաղաքին, և ապա յամենայնն Յունիսի նստեալ ընդ ծով ՚ի Պոնտոս, գնաց յիջմիածին, և ՚ի 22 Օգոստոսի հաւաքալ անդր, նստաւ կաթուղիկոս ամենայն Հայոց (1682)։ Եւ վարեալ իշխանութեամբ և քաղցրութեամբ զիվանութիւն իւր, արար և զբազում չնուաճս յիջմիածին և յայլ տեղիս։

Զկնի մեկնելոյ եղիազարու ՚ի Կոստանդինուպօլսոյ՝ եհաս անդր Մարտիրոս վարդապետ, եւ փութաց առնուլ յինքն զՊատրիարքութիւնն երուսաղէմի, եւ յետ կրկնոյ բազում տաճապանս և մատնելոյ ՚ի բանտ վասն բազմադէզ պարտուց իւրոց, ՚ի վաճառի ընկալաւ զայն իշխանութիւն Արքունի հրամանաւ, և եկեալ նստաւ յերուսաղէմ, Այլ զկնի սակաւ աւուրց աննկաւ դժուարութիւն ընդ նա եւ ընդ Յոյն պատրիարքն երուսաղէմի, եւ ջանայր Մարտիրոս ձեռամբ Լատինաց յաղթահարել զնա, եւ պատճառ դժուարեանն թերեւս իցէ այս, որպէս ասանդի ՚ի դատաստանական գիրս։ Հայք ըստ սովորութեանց իւրեանց յաւուր կիւրակէի Զատկի, յորժամ կատարէին ըստհանդէս Թափօրի ՚ի տաճարին Ս. Յարութեան չուրջ ընդ Գերեզմանատն Քրիստոսի, և եկն եկաց հանդիսապետն Գրիգոր եպիսկոպոս ՚ի դուռն Գերեզմանին. և մինչ ընթեռնոյր զվաւերական նոյր վաւեւտարանն՝ հասին ՚ի վերայ նորա Յոյնք բրօք և մահակօք, ՚ի բաց վարեալ զհանդիսականան և զժողովուրդն, և յափշտակեալ ՚ի ձեռաց Գրիգորի զվաւեւտարանն հարին զգետնի, և ապականեալ ընդ իրեարս կաքէին և ապականէին, և եղեւ չափաթ և խառնութիւն մեծ, և խանգարեցաւ հանդէսն ՚ի տրտմութիւն բազմաթիւ ուխտաւորաց. և մեկնեալ անտի դնացին ՚ի վանս Ս. Յակոբայ։ Եւ զկնի աւուրց ամբաստան եղեն միաբանք Հայոց առ դատաւորն զՓոխանորդէն և զմիաբանութենէ Յունաց, որոց դատաւորն զգէխաւորս երկուց աղգաց. Հայք պատմեցին զոր միանգամ արարեալ էին Յոյնք ՚ի տաճարի անդ, և խափանեալ զհանդէսն։ Եհարց դատաւորն ցփոխանորդն Յունաց, թէ որո՞վ համարձակութեամբ արարիք զայն. նա պատասխանի և ասէ՝ այո՛, արարեալ եմք զայն ամենայն, որպէս պատմեցին Հայք, զի չէր նոցա սովորութիւն ընթեռնուլ զվաւեւտարան ՚ի տեղւոջ յայնմիկ։ Առ այս եառն պատասխանի Հայք, թէ ոչ է այս նոր ինչ, այլ մին ՚ի վաղեմի սովորութեանց մերոց, զոր գիտեն ամենայն ազգք քաղաքիս, և դուռնապանք տաճարին, որք տեսանեն եւ գիտեն զսովորութիւնս Հայոց զորս կատարեն ՚ի չորքանի տարւոյն։ Իսկ դատաւորն առաքեաց զնոսա հանդերձ այլազգօք ՚ի Ս. Յարութիւն քննել անդ զկղկղանդն։ Եւ նոցա դնացեալ կոչեցին զդռնապանսն և զայլ յերեւելեաց՝ որոց տեղեակ էին սովորութեանց քրիստոնէից. ժողովեցան անդ և միաբանք երից աղգաց։ Հարցին ցայլազգիսն և նոքա եառն պատասխանի, Հայք ՚ի նմին տեսեր կատարեն զթափօրն և ընթեռնուն զվաւերականն ՚ի դուռն Գերեզմանին Քրիստոսի, և զայլ պաշտամունս, ըստ վաղեմի սովորութեան իւրեանց առանց ընդդիմանալոյ ումեք, եւ նոցա դարձեալ առ դատաւորն՝ պատմեցին զիրսն. և նա պատուիրեաց փոխանորդին եւ միաբանացն Յունաց՝ չհակառակիլ Հայոց սակս պաշտամանց նոցին։ ՚ի ՀՀ Բիպլի աթոր ամսոյ՝ ՌՀՀ (1683)։

Եւ իրրեւ ոչ կարացին վճարել զդատս իւրեանց՝ պատրիարքն Յունաց և Մարտիրոս վարդապետ, գնացին երկոքեան եւս յԱդրիանուպօլիս յառեան Եպարքոսին, եւ անդ արդարացուցեալ Յոյն Պատրիարքին զդատաստան իւր, դարձան ՚ի վերայ Մարտիրոսի և կամէր վրէժս առ-

նուէ 'ի նմանէ · զբեաց յայնժամ երեմիա Զէլէպի Թուղթ աղաչանաց առ Ցոյն Պատրիարքն, ընդ որում ունէր բարեկամութիւն և ընտանութիւն մեծ · և շահեալ զիրա նուրա՝ հաստատեաց խաղաղութիւն 'ի մէջ նորա և Մարաիրոսի : Եւ եղեւ յետ այնորիկ 'ի չուել Մարաիրոսի յերուսաղէմ, հասեալ յեդիսպտոս, հիւանդացաւ եւ վախճանեցաւ անդ եւ թաղեցաւ յեկեղեցւոջ Ս · Մինասայ, այն է Մաբ Մէնա, յաւուրս պահոց վերարտնման Կուսին, յերկրորդ ամի նստելոյ Եղիազարու յԱթոռն Լ̈ջմիածնի, և մահ իւր զերծոյց զնա 'ի ձեռաց պարտաւարոց իւրոց (1683)։

ԳԼՈՒԽ ԾԱ ·

Պատրիարքութիւն Ցովհաննէս վարդապետի : Սիմէն Եպիսկոպոս : Վէճ Ցունաց ընդ Լատինս : Հակառակութիւն Լատինաց : Նորոգութիւն Ս · Փրկչի : Գործ Ցոյն Պատրիարքի : Նեղութիւն աղաղնաց : Մահ Ցովհաննու Պատրիարքի :

Յետ վախճանելոյ Մարաիրոս վարդապետի և անցանելոյ երկուց ամաց, ընտրեցաւ յաթոռ Պատրիարքութեան երուսաղէմի Ցովհաննէս եպիսկոպոս Կոստանդինուպօլսեցի, մականուամբ ՆէօՌէֆէ կոչեցեալ, աշակերտ Աստուածատուր Պատրիարքի · սա եկեալ յերուսաղէմ միաբանեցաւ 'ի վանս Ս · Յակոբայ (1641), և յաջորդեաց յԱթոռ Պատրիարքութեան (1685)։

Սա ինքնին մատոյց գիր աղաչանաց 'ի Դուռն և էառ զերկուս հրովարտակս 'ի միում ամի՝ ՈՀՀ (1685) վասն հաստատութեան իշխանութեան իւրոյ · այլ անպակաս էին հակառակութիւնք ոմանց, զի հանապազ նիւթին նմա չարիս, յընկենուլ զնա յաթոռոյն։ Տեսեալ Ցովհաննու զահաճ միտս միաբանից ոմանց, փութաց և վերստին գրեաց գիր աղաչանաց 'ի Դուռն և առաքեաց զոյն 'ի ձեռն պատգամաւորի, զի հաստատեսցէ զիշխանութիւն Պատրիարքութեան իւրոյ ցկեանս, որպէս արարեալ էին ոմանք յառաջագոյն · Թէպէտ էառ հրովարտակ ըստ խնդրանաց

իւրոց, ՈՀՀ (1687) սակայն չեղեւ տեւական · զի Սիմէն եպիսկոպոս ոմն էառ 'ի Դրանէ զիշխանութիւն Պատրիարքութեան երուսաղէմի, առանց վճարելոյ զսահմանեալ տուրսն, որպէս յայտ առնէ զոյս Պատրիարքական Պատրիարքն · և եկեալ 'ի բաց վարեաց անտի զՑովհաննէս եւ յինքն կալաւ զաթոռն զամս իրս է, և ապա ընկեցաւ յաթոռոյն հնարիւք նախորդին իւրոյ։ Ի սոյն ժամանակի Մելիտոն և Թէոփանէ՝ և Ցովհաննէս վարդապետ, առեալ հրաման ձեռնին զեկեղեցի Ս · Յակոբայ և 8 սենեակս, և չինեցին զքարեայ սանդուխն Բեթղեհէմի վանացն։

Ի մեռանիլ Սուլթան Մէհէմմէտ չորրորդի, եւ 'ի թագաւորել Սուլթան Սիւլէյման երրորդի, եղեւ հրաման Նորոգութեան հին հրովարտակաց, ըստ սովորութեան թագաւորացն Օսմանցւոց։ Յայնժամ հարկ եղեւ Ցովհաննէս Պատրիարքի նորոգել զհրովարտակ իւր, որոյ վասն գնացեալ 'ի Կոստանդինուպօլիս, եւ նորոգել զոյն, վճարեալ զսահմանեալ տուրսն, եւ եկեալ յերուսաղէմ սկսաւ վարել զիշխանութիւն Պատրիարքութեան, ՈՀԳ (1691)։

Մինչչեւ ձեռնարկեալ մեր 'ի գործ Ցովհաննէս վարդապետի, տեսցուք համառօտիւ զվէճս Ցունաց ընդ Լատինս, որ եղեւ 'ի սմին ժամանակի։

Ցոյն Պատրիարքն երուսաղէմի առաքեաց զիսոհանորդս և զԹարգմանս իւր առ դատաւորն եւ ամբաստան եղեւ զնոսա, զի թարգմանս իւր առ դատաւորն եւ ամբաստան եղեւ զիսոհանորդն, զԱնտոն և զԹ

զայսմանէ, եւ նա արար պատասխանի. 'ի սիւնազարդ գաւիթ եկեղեցւոյն այնորիկ երեք քրիստոնեայ ազգք անխտիր մտանեն եւ ելանեն. զի իւրաքանչիւր ոք ունի դուռն եւ ճանապարհ անտի 'ի վանս իւր, եւ ժառանգեն զայն նախ քան զառաջին Երուսաղէմի 'ի Սէլիմայ Արքայէ, ըստ զօրութեան վաւերական գրոց. Իսկ ընդ առաջ լինելն Լատինաց նոր տեսչի իւրեանց, և իջանել նորա յԱյրն Մբ-նքնգեան, է մին 'ի վաղեմի սովորութեանց նոցին, եւ միաբանք Ծունաց միշտ հակառակ կացեալ այսմ, յարուցեալ են վէճս և խռովութիւնս, որպէս և յայսմ նուագի բռնեն հարեալ 'ի ափոցէ անտի 'ի բաց ընկեցին զայն ընդդէմ օրինաց և իրաւանց մերոց. Սակայն Ծոյնք ոչ կամէին հաւատալ և ոչ ունէին մատուցանել բանից նորա. թէ ունիցին Լատինք զայնպիսի սովորութիւնս 'ի տեղւոջ յայնմիկ. Լուեալ դատաւորին զբանս երկուց ոստոց հակառակ միմեանց, հրաման ետ կոչել զերեւելի այլազգիս քաղաքին. Ժողովեցաւ անդ բազմութիւն մեծ, և 'ի հարցանել ցնոսա, նոքա ետուն պատասխանի և ասեն. Սիւնազարդ գաւիթ եկեղեցւոյն այնորիկ՝ ճանապարհ է երից ազգաց, Հայոց, Ծունաց և Լատինաց, և ամենայն ոք անարգել մտանէ անդ և ելանէ. կոչեցին և զայլազգիս բերդնէցիս, և նոքա ըստնոյն ետուն վկայութիւն. Ասացին եւ վասն ընդունելութեան նոր տեսչին Լատինաց. Ձեւ այնորիկ սահմանեցաւ 'ի ժողովի անդ հաճութեամբ Ծունաց, բաժանորդութեամբ ունել երից ազգաց զսիւնազարդ գաւիթ եկեղեցւոյն եւ զԱյրն Մննդեան Քրիստոսի՝ և բարձաւ վէճն.

Բայց Ծոյնք չկարացեալ տանել այսմ, յարուցին զայլ վէճս ընդդէմ Լատինաց և ասեն. 'ի գալստեան կայսերական հրովարտակին, լեալ էր հրաման, յանձնել զամենայն ինչ ազգին Ծունաց որ միանգամ գրեալն էր 'ի նմա, մին 'ի բազմաց անտի էր քարուկիր չինուածն եւ պարտէզն, զորս պարտ էր յանձնել Ծունաց, զի յառաջագոյն սեփհականութիւն նոցին էր, այժմ Լատինք մուծեալ են զայնս 'ի վանս իւրեանց և առանց իրաւանց տիրեալ են բռնադակ վանացն. Ծակնարկել դատաւորին ցԼատինս՝ ետուն պատասխանի. վանքն Բեթղեհէմի 'ի ձեռս Լատինաց է 'ի ժամանակէ անտի Արքային Սէլիմայ մինչեւ ցայսօր ըստ

զօրութեան Արքունի հրովարտակաց և հաստատուն գրոց, և մատուցին զայնս առ դատաւորն ընթեռնուլ, որոց բովանդակութիւնն է. 'ի ժամանակի խռովութեան Ծունաց և Լատինաց սակս բանալեաց եկեղեցւոյն Բեթհեղէմի և այլ իրաց, եւ հրովարտակ յԱրքունեաց յանձնել զամենայն ինչ Ծունաց, որք միանգամ գրեալ էին 'ի հրովարտակին. բայց յայնժամ չեղեւ ինչ խնդիր և կամ վէճ ինչ յաղագս Լատին վանաց, զի բաց 'ի նոցանէ, ոչ ոք տիրեալ էր այնմ, և այս խնդիր այսպէս վախճան էառ.

Դարձեալ ասացին Ծոյնք. յորժամ եհաս հրովարտակն յերուսաղէմ, յորում պատուիրէր Արքայ յանձնել Ծունաց զԳերեզմանն Քրիստոսի, եւ բառնալ զնուագարանն՝ զոր եդեալ էին Լատինք յանդիման Գերեզմանին Քրիստոսի, և ոչ բարձին 'ի տաճարէն Ս. Յարութեան. Առ այս ետուն պատասխանի Լատինք, ըստ հրամանի Արքային՝ բարձին զայն անտի Լատինք, և եդին 'ի գաւիթ եկեղեցւոյն իւրեանց. Ապարկեցին Ծոյնք դարձեալ զայլ իմն խնդիր եւ ասեն. հրովարտակին այն գրեալ 'ի թուականի իւրում, իսկ այս նոր հրովարտակին զի՞նչ ունիք ասել, որ գրեալ է 'ի ՚ձ ձկտեմբերի էվվէլ ամոյ՝ ՚ռ՞գ (1688). Թէ մի գոցին Լատինք յերուսաղէմ աւելի քան զերեսուն և երիս անձինս. Մատոյց յայնժամ փոխանորդն Լատինաց զդաշնագիրն, յորոյ վերայ հիմնեալ էր կայսերական հրովարտակն, յաննուն Գաղղիոյ թագաւորին, 'ի ՚ռ. Սէպտեր ամոյ՝ ՚ռ՞է (1673). Ուր ասէ, մի ոք հակառակեսցի Լատին կղերաց բնակելոց յերուսաղէմ, եւ ուխտաւորաց նոցին, եւ մի ոք խափանեսցէ զսովորութիւնս նոցա, զի յառաջագոյն ամենայն ինչ 'ի ձեռս նոցա էր, թէ 'ի մէջ քաղաքին եւ թէ արտաքոյ նորին, և չէր ոք որ հակառակ կայր նոցա, եւ արտաքոյ նորին, և չէր ոք որ հակառակ կայր նոցա, եւ ո՛չ ոք համարձակէր ելանել 'ի քննութիւն եւ ոչ 'ի գիր ո՛չ ոք համարձակէր ելանել 'ի քննութիւն եւ ոչ 'ի գիր արձանացուցանել. նոյնպէս տաճարն Սուրբ Յարութեան եւ ամենայն ուխտատեղիքն, եւ չէր ոք որ ընդդէմ դառնայր եւ կամ նեղէր զնոսա. Ապա յաւելու, Լատինք որ բնակեալ են յերուսաղէմ, մնասցեն ըստ առաջին եղանակի 'ի բնակութիւնս և յուխտատեղիս իւրեանց, և եթէ դատաստան ինչ պատահեսցի, և ոչ լուծցի յերուսաղէմ, դատեսցին 'ի Կոստանդինուպոլիս. Եւ եկեղեցա-

կանք Գաղղիոյ և հետեւողք նոցին՝ յորմէ ազգէ և իցեն, ՚ի գալատեան նոցին յերուսաղէմ, մի պահանջեսցեն ՚ի նոցանէ ոսկի և կամ արծաթ։ Եւ զարձեալ մատոյց զայլ հրովարտակ, գրեալ յԱս Շէվվալ ամսոյ՝ ՌՀՀ (1635)։ Ուր ասէ. մի՛ ոք հակառակեսցի Լատին կղերից, եւ զոր ինչ միանգամ ունին ՚ի ձեռս իւրեանց ՚ի տաճարին Ս. Յարութեան, ՚ի Բեթղեհէմ, և յայլ տեղիս, որք յատկացեալ են ինքեանց։ Յետ ընթերցման վաւերական գրոց յերկուց կողմանց, յայտ արար դատաւորն ՚ի ժողովի անդ միաբանացն Ցունաց, չհակառակիլ ընդ Լատինս, զի սիւնազարդ դաւիթ եկեղեցւոյն Բեթղեհէմի՝ հասարակաց է՝ և ճանապարհ երից վանաց. վանքն, քարուկիր շինուածն և պարտէզն են ՚ի ձեռս Լատինաց, ժառանգեալ զայն ՚ի վաղ ժամանակաց. և զնուագարանն արդէն բարձեալ են ՚ի դրբանէ Գերեզմանին. և զատուէր եւս Ցունաց չվիճել ընդ Լատինս հակառակ կայսերական հրովարտակաց եւ դաշնագրին, որ ընդ Շարլ թագաւորին Գաղղիոյ, յԱս Շաւալան ամսոյ՝ ՌՌԱ (1688)։

Յաւուրս Սուլթան Սիւլէյման Բ. Արքայի՝ զկնի պատերազմին և հաշտութեան ընդ Վենետկացիս, միջնորդութեամբ դեսպանին Գաղղիոյ, Լատինք վերստին տիրեցին Ս. Տեղեաց, որպէս աւանդի ՚ի ձեռագիրս ինչ գրեալ ՚ի նմին ժամանակի եւ յաւուրս Յովհաննէս Պատրիարքի. ոչքա են որոց տիրեցին Լատինք, Գերեզմանն Քրիստոսի եւ շրջապատ նորին. մեծ և փոքր գմբեթքն. չորրորդ բանան Քրիստոսի. Խաչ Գիւտն, Գողգոթան եւ Տարածման տեղին. Պատանատեղին Քրիստոսի. բարձին անտի զաշտանակս և զպատերս Ցունաց, ՚ի դրանէ Գերեզմանին մինչ ցերկաթեայ դուռն, բառնալով նաեւ զերկաթի վանդակեան, խափանեցին զկոշնակն, վերին յարկն եօթն կամարաց Ս. կուսին. մեծ եկեղեցին Բեթղեհէմի եւ Սյրն Ծննդեան, հարաւային և հիւսիսային դրունք նորին. հիւսեալ խցին զդրունս զոր բացեալ էին Ցոյնք՝ բաց ՚ի դրանէ աւազանին ՚ի սիւնազարդ դաւթին. եւ զամենայն ինչ արարին ըստ կամաց իւրեանց, յորոց վերայ զարմացեալ հիանային Ցոյնք՝ թէ ո՞րպէս յանկարծ այսպիսի փոփոխութիւնք պատահեցան (1690)։ Եւ այսպէս մնաց ՚ի

ձեռս Լատինաց ամս 68։ Եւ ՚ի թուին 1758 Ցոյնք վերըստին տիրեցին Ս. Տեղեաց, զորոց ունիմք ասել ՚ի տեղոջ իւրում։

Ի սմին ժամանակի Պապա Մինառ, որ վարեալ էր ընդ պաշտօն վեքիլութեան Աթոռոյն ամս 42 եւ անկեալ ՚ի ներքոյ 200 քսակ պարտուց, երթալ յերուսաղէմ չոքաւ ՚ի Կոստանդինուպոլիս՝ խնդրել օգնութիւն ՚ի դվխաւորաց ազգին ՚ի վճարումն պարտուց. սակայն խառնութիւնք ժամանակին չեղեն նմա ձեռնտու, և օր քան զօր աճեալ բազմացաւ պարտքն մինչեւ ցաւուրս Շղթայակրի։

Յետ վճարելոյ Լատինաց զդատաստանս իւրեանց ընդ Ցունաց, սկիզբն արարին հակառակիլ եւ ընդ Հայոց. զի խորհէին մերժել և խպատ զրկել զնոսա ՚ի տնօրինական Ս. Տեղեաց և յափշտակել զրաժինս նոցա, յօրէ օր սաստկացուցանելով զկռիւն և զվէճն։ Տեսեալ Յովհաննու Պատրիարքի Թէ՝ չեն յապահովի տեղականութիւնք ազգին, և միաբանք իւր կան յերերի յերեսաց բռնութեան Լատինաց, առաքեաց առ դատաւորն զվոխանորդն և զԹարգմանն իւր զԴիմոդ եւ զԹէոդորոս վարդապետս, տուեալ ՚ի ձեռս նոցա զվաւերական գրեանս, զորս ունէին յաւուրց անտի Սէլիմայ առաջնոյ մինչեւ ցաւուրս իւրեանց և զերկուս դատաստանական գիրս, գրեալ յաւուրս Գրիգորի Պատրիարքի եւ եղիազարու, յորս բացայայտ գրեալ էին բովանդակ բաժինք և սովորութիւնք Հայոց ՚ի տաճարին Ս. Յարութեան, յԱյրն Բեթղեհէմի եւ ՚ի գերեզմանին Ս. Աստուածածնի. և խնդրեցին ՚ի դատաւորէն ընթեռնուլ զայնս, եւ բառնալ զնեղութիւնս Լատինաց. և դատաւորն հրամայեաց կոչել զվիարանս Լատինաց, և եկին անդ տեսուչն Բաթիշտա, վոխանորդն և Թարգմանն եւ այլք, յորում ժամանակի բնակէին ՚ի վանս իւրեանց Տէր Այլք եւ Ամոռ կոչեցեալ, և ընթերցաւ յականջս նոցա զամենայն գրեանս Հայոց. ապա եհարց ցնոսա. Թէ այսոքիկ տեղիք իրաւունք և սովորութիւնք ՚ի Ս. Յարութեան, ՚ի Բեթղեհէմ և ՚ի գերեզման Ս. կուսին իցե՞ն ՚ի ձեռս Հայոց. և նոքա ասեն, ըստ գործութեան հրովարտակաց և օրինաւոր գրոց՝ զորս ընթերցան առաջի մեր, տեղիքն, պաշտամունք եւ արարողութիւնք՝ իրաւունք են և սեպհական

ազգին Հայոց ՚ի վաղ ժամանակաց անտի, և բանք Թղթոցն ճշմարիտ են։ Ապա հրաման արար դատաւորն Պատրիարքին Հայոց, հանդերձ միաբանութեամբ իւրով տիրել եւ ժառանգել զսեպհականութիւնս ազգին իւրոյ առանց հակառակելոյ ուրուք։ ՚ի ՚ԱՀՀ Շէվվալ ամսոյ, ՌՈՃ (1691)։

Յաղագս Ս. Փրկչի վանացն, արտաքոյ պարսպի քաղաքին, բազում անգամ բանք եղեն յընթացս պատմութեան, է ուրեք զնորոգութենէ նորա ճառեցաք՝ և է դի՝ զայլ և այլ դիպուածս նորին նկարագրեցաք։ Զի Թէպէտեւ որքան նորոգեցաւ վանքն այն ՚ի ժամանակս ժամանակս, այլ արտաքին պարիսպ նորա մնաց խոնարհ, զի բռնութիւնք ժամանակին չտային Թոյլ բարձրացուցանել զայն, նմին կրի և չղերծաւ խակ ՚ի վտանգէ, զի ստէպ ստէպ գողք և աւազակք բերեալ սանդուխս եւ զայլ գործիս ՚ի գիշերի կանգնէին յորմն, և ելեալ ՚ի վեր մտանէին ՚ի վանս, եւ գործէին զմեծամեծ չարիս, որպէս արարին և յայսմ նըւազի՝ կողոպտելով զեկեղեցին՝ մերկացուցին զվանս ՚ի բովանդակ կահուց, և ապանին զերիւս ՚ի միաբանից՝ ըզՅովհաննէս և զկարապետ, և այլքն փախուցեալ զերծան ՚ի ձեռաց նոցին։ Տեսեալ Յովհաննու Պատրիարքի զխուժադուժ բարս Արաբացի աւազակաց, ազդ արար ՚ի Կոստանդինուպոլիս, և էառ հրովարտակ յԱրքայէ, և հրաման ՚ի դատաւորէն և՚ի մեծամեծաց Երուսաղէմի, և ձեռնարկեալ վերստին նորոգեաց զվանս Ս. Փրկչի, և բարձրացոյց զարտաքին պարիսպն կանգունս ՟ի վերայ հին պարսպին. նորոգեաց զեկեղեցին և զշն սենեակս անդ, և երից ըզդաղտնի պատուհանս ՚ի չորից կողմանց ՚ի տանիսն, դիտել անտի զերթեւեկս ՚ի պահանջել հարկին և հսկել պահապանաց. նորոգեաց զաստիճանս և զայլ ամենայն կարեւոր տեղիս. արար ճանապարհ ՚ի կողմն հիւսիսոյ, ուր է գուռն վանացն՝ եւ յարդարեաց զայն քարամբք, որ ձգի յարեւելից որմոյն մինչեւ յարեւմուտս, և այս ճանապարհ միայն սեպհական է Հայոց և՚ի դիւրութիւն միաբանից, եւ եղեւ կրկին կատարեաց զամենայն նորոգութիւնս, առաքեաց զխոխանորդ իւր առ դատաւորն, եւ խնդրեաց առնել քննութիւն, որպէս օրէն էր յայնժամ։ Եւ նա առաքեաց զոմանս ՚ի դատարանէ բազմութեամբ այլազգեաց,

ընդ որս էր և Ճարտարապետ քաղաքին, և եկեալ արկին ՚ի քննութիւն զրովանդակ տեղիսն, և եաւն չափել ըզբարձրութիւն և զլայնութիւն պարսպին, և զայլ տեղիս մի առ մի, և դարձ արարեալ առ դատաւորն, մատուցին նմա զարդիւնս քննութեան, և նորա ՚ի գրի հարեալ զամենայնն ետ ցՅովհաննէս Պատրիարք։ Սակայն զկնի նորոգութեանցս այսոցիկ՝ բազում չարիս կրեցին Պատրիարքն և միաբանք Ս. Յակոբայ ՚յերեսաց այլազգեաց, զի բազում անգամ քննութիւն արարեալ, հրաման տային նորոգութեան՝ այլ ՚ի ձեռնարկելն Հայոց ՚ի գործ՝ յարուցանէին վէճս և խռովութիւնս պատճառելով զպատճառս, և խափանէին զգործն, որպէս յայտ առնեն բազմաթիւ գրեանք դատարանի և այլոց վասն այսր։ Հուսկ ուրեմն հաճեցոյց զկամս նոցա՝ և աւարտեաց զնորոգութիւնն, կրելով վիշտս և զնեղութիւնս, այլ ոչ իսպառ կարաց զերծանիլ ՚ի վնասուց և՚ի տուգանացն այլազգեաց, զորոց տեսցի ՚ի ատենս, ՌՈՃ (1692)։

Ի սմին ժամանակի Յովն պատրիարքն Երուսաղէմի նըստեալ ՚ի Կոստանդինուպոլիս, առաքէր առ փոխանորդ իւր ազգի ազգի հրովարտակս, երբեմն վասն Լատինացեալ Յուդայի, և երբեմն վասն ձիթենեաց և արտօրէից Ս. Եղիայի նոց, և երբեմն վասն ձիթենեաց և արտօրէից զոր ժառանգեցին ՚ի վրաց։ բայց նա և ոչ զմին կատարէր գործադրել այլ միայն տայր առատ տուգանս, և՚ի նոյն ձգէր նաեւ զՅովհաննէս Պատրիարք Հայոց։ Եւ յաւուրս քառասնորդական պահոց հասեալ լիմն տարածեաց ՚ի քաղաքին, իբրու թէ Պատրիարքն Յունաց առեալ ՚ի հրովարտակաւ զՍ. Յակոբ ՚ի ձեռաց Հայոց, և պահեալ զնըրովարտակն յոթ յամենեան Յունիսի՝ տարեալ մատոյց առ դատաւորն զի արձանագրեսցէ զայն ՚ի գաղտ, և նորա չառեալ յանձն՝ կոչեաց զՀայս և զԼատինս, և առջի առ չառեալ յանձն՝ կոչեաց զՀայս և զԼատինս, և առջի առ մենեցուն ընթերցաւ զայն, որոյ իմաստքն էին՝ յերեկոյի ձրագալուցի Զատկին միայն Պատրիարքն Յունաց և կամ Փոխանորդ նորին մտցէ ՚ի Գերեզմանն Քրիստոսի, և այլք կացցեն արտաքս։

Եհարց դատաւորն ցՅովհաննէս Պատրիարք, յօժարի՞ք ընդ այս, և նորա, մերժեալ զբանս Յունաց, մատոյց զկին զբանս, որք յաւուրս Անդրիանոս Պատրիարքի,

և ետ ընթեռնուլ դատաւորին, և ապա սիրաստան եղեւ զՊատրիարքէն Ցունաց, թէ ո՞րպէս միով հրամանաւ՝ առանց գիտութեան ուրուք՝ զաղտնապէս խափանել կամի զնին զրեանս Հայոց, եւ դատաւորն ոչ արձանագրեաց զհրովարտակն 'ի դատարանի։ Տեսեալ Ցունաց թէ 'ի դերեւ եւ յոյս իւրեանց և յայտնեցան նենգութիւնք նոցին, զիջան զարձեալ ըստ առաջնին սովորութեան ընդ Հայոց 'ի միասին մտանել 'ի Գերեզման 'ի նոյն աւուր, և դատաւորն զրեաց երկաքանչիւրոց մէն մի էջօճմէթս և արձակեաց։

Այլ Յովհաննէս Պատրիարք կասկածեալ ընդ յեղյեղուկ բանս Ցունաց, պատրաստեալ զկարեւոր գրեանն՝ ազդարար 'ի Կոստանդինուպոլիս սիրացու Ալէքսան վոխանորդին իւրոյ, և առաքեաց զայն 'ի ձեռն հաւատարմին իւրոյ՝ պատուիրելով նորոգել զհրովարտակն վասն ձրագալուցի Զատկին՝ և խափանել զՑունացն և հաստցանել զայն յերուսաղէմ նախ քան զպասեքն, զի մի դաւ ինչ գործեսցի 'ի Ցունաց, (1692)։

Իսկ այլազգիք երուսաղէմի, որոց երկրորդ բնութիւն լեալ էր ագահութեամբ և պէսպէս բարբանօք կորզել ըզդրամս 'ի քրիստոնէից, զարձեալ բռնացան 'ի վերայ սիրացուացն Հայոց 'ի պատճառս նորոգութեան Ս. Փրկչի վանաց՝ զի ոմանք ասէին թէ աւելի քան զհրամայեալն չինեալ են զաւելորդ իրս, ոմանք թէ հակառակ է օրինաց մերոց, և այլք զայլ ինչ բանս յօդէին։ Զի թէպէտ Յովհաննէս Պատրիարք և միաբանք իւր բաղում անգամ չոքան 'ի դատարան՝ և առաջի արարին զգիրս քննութեանց դատաւորաց, եւ զվճիռ դենպէտին, զի համաձայն նոցին աւարտեալ էր չինուածն, այլ ոչ կամէին անսալ նոքա 'ի թոյլտուութենէ դատաւորաց, այլ հանապազ յուզէին եւ յարուցանէին զաղմուկս վասն դրամց։ Տաղտկացեալ Յովհաննու Պատրիարքի 'ի բռնութեանց աստի, գրեաց գիր աղաչանաց առ Եպարքոսն, և առաքեաց զայն 'ի բանակն արքունի յԱդրիանուպոլիս, և խնդրեաց բառնալ զնեղութիւնս այլազգեաց, զի ամենայն դատաստանք և գործք աւարտեալ էին օրինաւք դատարանի։ Գրեցաւ հրովարտակ առ քաղաքապետն և առ դատաւորն երուսաղէմի, խափանել զբռնութիւնս այլազգեաց, զի մի յանդգնեսցին ընդդէմ օրինաց և կայսերական հրամանին, յլը Եղվվալ ամսոյ՝ ՈՈՉ (1695)։

Ի հասանիլ հրովարտակիս՝ թէպէտ և ընթերցաւ յականջս այլազգեաց երուսաղէմի, այլ ոչ ինչ ազդեաց 'ի լսելիս նոցա, եւ զարձեալ սկսան նեղել զմիաբանս Հայոց՝ քաղաքապետն և գործակալքն տէրութեան վասն նորոգութեան Ս. Փրկչի վանաց, ոչ ինչ համարելով զբրեանս դատարանի և զհրովարտակն. և բռնացեալ 'ի վերայ նոցա, պահանջէին զգումարս դրամոց։ Զանձրացեալ միաբանաց 'ի կեղեքանաց աստի, վերստին բողոք բարձին 'ի Դուռն, և աղաչեցին բառնալ զնեղութիւնս այլազգեաց։ Յարձեալ գրեցաւ հրովարտակ առ դատաւորն երուսաղէմի՝ արդարութեամբ կատարել զգործն, զի եթէ ըստ հրամանի դատաւորաց չինեալ և բարձրացուցեալ իցեն զպարիսպ վանաց, և չգուցէ վնաս ինչ ումեք, գնալ ըստ զօրութեան վճռոյ դատարանի, արգելուլ զվճռամէծս եւ զայլս գաւառին չպահանջել բռնութեամբ դինչս, և զանհնազանդն ծանուցանել 'ի Դուռն։ Սակայն և 'ի վերայ այսր ամենայնի՝ չէր եւս բովանդակեալ շրջան տարւոյն, լուեալ գործակալացն և բռնաւորաց գաւառին՝ թէ նորոգեալ են Հայք զվանս Ս. Փրկչի, դիմեցին 'ի վերայ նոցա, նեղութեամբ և տագնապաւ խնդրելին բաղում ինչ վասն չինուածոյն, զի փոխեալ էք ասէին զառաջին հանգամանս նորին, և անցեալ քան զչափ սահմանի, և այլ սոցին նման բանք։ Անճարացեալ միաբանաց դիմեցին առ դատաւոր քաղաքին, եւ հաճեալ զկամս նորա աղերս արկին գրել զայս ամենայն տառապանս եւ հաստցանել յունկն Արքային, թէ որպէս աւազակք յառաջադոյն մտեալ 'ի վանս կողոպտեցին զայն և սպանին զմիաբանն, որ յամենայն տեղիս հռչակեցաւ, և չէ հնար թագչիլ, և չինեցաւ պարիսպն Արքունի հրամանաւ։ Իսկ այժմ յարուցեալ սոցա 'ի վերայ մեր, կեղեն և տառապեն զկեանս մեր, զի չունիմք զայլ ինչ հատուցանել սոցա։

Իսկ դատաւորն զիջեալ յաղաչանս նոցա՝ գրեալ ծանոյց 'ի Դուռն, զոր միանգամ ծանուցին նմա միաբանք Հայոց, և խնդրեաց հրովարտակաւ Արքայի դադարեցուցանել ըզ-

տառապանս նոցա. և ըստ այսմ մնաց դրեցաւ հրովարտակ, և սակաւ ինչ ոգի առին Հայք, ՈՈՀ (1698)։

Արաբացի պատմիչ և բանաստեղծ ոմն յանուն Ապո-Լ Ղադէ Նապլո-ս, ուղեւորեալ 'ի Դամասկոս, յեգիպտոս և յԱրաբիա, և ապա 'ի Թուին Հիճրէթի ՈՈՀ (1694) գայ հասանէ 'ի Ծոպպէ քաղաք Ծովեզերեայ, եւ իջեւանի 'ի վանս Հայոց, և գտանէ անդ ընդունելութիւն մեծ 'ի Տեսուչ վարդապետէն ինքն և ընկերք իւր, ապա գովութեամբ նկարագրէ 'ի պատմութեան իւրում զհաստատուն չինուածս վանացս, իբրեւ բերդ ամուր ամրացեալ պարսպօք և աշտարակօք, և չտեսի ասէ զայլ ինչ 'ի Ծոպպէ ամրագոյն քան զբերդն և զվանքն Հայոց։ Եւ եղեւ մեզ ասէ, և եղբարց մերոց, և որոց ընդ մեզ էին, կատարեալ ուրախութիւն և ցնծութիւն։ Եւ ապա գրէ ոտանաւոր քերդածս 'ի վերայ Ծոպպէ քաղաքի։

Իսկ Ծովհաննէս Եպիսկոպոս կրեալ վիշտս եւ նեղութիւնս յօտարաց և ընտանեաց վախճանեցաւ (1697) եւ Թաղեցաւ 'ի վանս Ս. Փրկչի։ Սա գնեաց յայլազգեաց ըզպարտէզն հանդէպ վանացս Ս. Հրեշտակապետի, և խառնեաց 'ի մեծ պարտէզն (1693)։ Եւ 'ի կենդանութեան իւրում կամակատեալ 'ի Թշնամեաց իւրոց, էառ վերստին հրովարտակ սակս անկասկած վարելոյ զիշխանութիւն իւր, և անխոտիոխ մնալ Պատրիարքաց Երուսաղէմի մինչ ցվախճան կենաց իւրեանց ՈՈՀ (1694)։ Եւ զկնի միոյ ամի 'ի գահակալութեան Սուլթան Ահմէտ երկրորդի, նորոգեաց զայն, սակայն ջանք նորին ոչ ինչ նպաստ եղեւ աթոռոյն, որպէս տեսցի յիւրում տեղւոջ։

ԳԼՈՒԽ ԾԲ.

Գալուստ վարդապետ։ Խղդջ միաբանաց։ Մինաս վարդապետ Ամթելի։ Ալեքսիք Երուսաղէմի և Սիոնի։ Աւետիք վարդապետ։ Միաբանն Երուսաղէմի ընդ պատրիարքութեան Կոստանդինուպոլսոյ։ Աչխարհական տեղակալք 'ի Ս. Յակոբ՝ Նազր անուամբ։

Զկնի մահուան Ծովհաննու Պատրիարքի, իշխանաւորք ազգին Կոստանդինուպոլսոյ, ընտրեցին 'ի տեղի նորա զԳալուստ վարդապետ Զէյթունցի կայծ-ն կոչեցեալ, և առին հրովարտակ 'ի Դրանէ վասն հաստատութեան Պատրիարքութեան նորին։ Իսկ նորա առեալ զհրովարտակն էլ 'ի Կոստանդինուպոլսոյ, և սկսաւ շրջիլ յամենայն քաղաքս Ասիոյ, իբրեւ Պատրիարք Երուսաղէմի, և ժողովել զնուէրս 'ի ժողովրդոց յանուն նորա։ Սակայն միաբանք վանացս Ս. Յակոբայ կային յեւին յաղքատութեան և 'ի չքաւորութեան եւ դէտակն կալեալ սպասէին գալստեան Պատրիարքի իւրեանց, և կամ գէթ առաքելոյ օգնութիւն ինչ 'ի նպաստ պիտոյից։ Իբրեւ տեսին թէ 'ի շրջանի միոյ տարւոյ ոչ երեւեցաւ նա, և անիծեալ լեալ զնեղութենէ միաբանաց ոչ առաքեաց առ նոսա զնուէրս ժողովրդոց զոր հաւաքէր, և չէ ինչ փոյթ նմա զկառավարութենէ և ըզխնամակալութենէ վանացս. դիմեցին առ դատաւորն Երուսաղէմի, և ճառ արկեալ պատմեցին զիշխանութիւն վճակին և զանիրաւութենէ Պատրիարքի իւրեանց։ Եւ նորա լուեալ զամենայն բանս եւ զհանգամանս գործոց նոցին, գրեաց և ազդ արար առ դատաւորն Կոստանդինուպոլսոյ։ Եւ 'ի սոյն ժամանակի հասին 'ի Կոստանդինուպոլիս հանրագրութիւնք ժողովրդոց Բերիոյ, Եւդոկիոյ, Սեբաստիոյ, Տիգրանակերտի և Կարնոյ, որք միաբան բողոք բարձեալ դանկաւածին զանիրաւութենէ և զղրկանաց Գալուստ վարդապետի և ցուցանէին զայն վնասակար և խռովիչ ժողովրդոց. եւ զնուէրս զոր ժողովեաց խարէութեամբ յանուն Երուսաղէմի, ոչ առաքեաց զայն 'ի տեղի իւր. այլ ինքն չարութեամբ և անզգամութեամբ եկեր և վատնեաց ըստ կամաց իւրոց եւ վանք Ս. Յակոբայ հետէ ընդ

Ծանր պարտեօք, և միաբանք նորին կապեալ յաղքատութեան որպէս յերկաթս։ Լուեալ գլխաւորաց ազգին զայս ամենայն բանս գանկատանաց գնալուստ վարդապետէ, ընկեցին զնա յիշխանութենէ Պատրիարքութեան, և ընտրեցին ՚ի տեղի նորա զՄինաս վարդապետ Ամթեցի, միաբան Ս. Երուսաղէմի. եւ ապա ելեալ գնացին բալնութեամբ առ դատաւորն Կոստանդինուպոլսոյ, եւ մատուցեալ գիր ամբաստանութեան, պատմեցին զգործս ընդդէմ Գալուստ վարդապետի, զմերժումն նորա, եւ զընտրութիւն Մինասայ. ապա խնդրեցին տալ ածել զԳալուստ ՚ի Կոստանդինուպոլիս, զի քննեսցին հաշիւք նորին։ Եւ դատաւորն գրեալ յայտ արար ՚ի Դուռն զամենայն բանս Հայոց, և զգիր գանկատանաց ժողովրդոցն, և զչրջիլ Գալուստ վարդապետի եղուզակարար եւ զվրդովել նորա զխաղաղութիւն ժողովրդոց, զբողոք դատաւորին Երուսաղէմի, զընտրութիւն նորոյ Պատրիարքի համաձայնութեամբ ազգին, և հաստատել յիշխանութեան Երուսաղէմի զՄինաս վարդապետ։ Եւ հրաման յԱրքայէ, զի ուր եւ գտցի Գալուստ վարդապետ, ածցի ՚ի Դուռն։ Եւ ապա գրեցաւ հրովարտակ կայսերական (Խաթթի Շէրիֆ) ՌՌՈ (1699), և հաստատեցաւ Պատրիարքութիւնն Երուսաղէմի ՚ի վերայ Մինաս վարդապետի։

Այլ Գալուստ վարդապետ լուեալ զանցս Կոստանդինուպոլսոյ, թագոյց զանձն իւր եւ վերծեալ ՚ի ձեռաց խնդրակաց իւրոց, եկաս ՚ի Թագաւորեալ քաղաք անդր. և սկսաւ արկանել զաղմուկ խառնութեան ՚ի մէջ ժողովրդոց, և չարախօս լինել զՄինաս վարդապետէ. եւ սակս հասուցանելոյ նմա չարիս՝ ձեռնամուխ լինէր ՚ի գործս նորա. և չրջեալ այսր անդր բամբասէր գնա, թէ սուտակասպաս բանիւք պատրեաց զժողովուրդն, և նոքօք եհան զԱրքայ ՚ի կամաց իւրոց. և յանիրաւի յափշտակեաց յինէն զիշխանութիւն Պատրիարքութեան, եւ այլ սոցին նման բանիւք ջանայր հանել գնա յաչաց։

Տեսեալ Մինաս վարդապետի թէ չիք խաղաղութիւն յերեսաց չարախօսութեանց Գալուստ վարդապետի. եւ դժուարին է նմա յանդորրու վարել զիշխանութիւն իւր, յուզի անկեալ չոքաւ ՚ի Կոստանդինուպոլիս. և իրրեւ ոչ

կարացին վճարել զվէճս իւրեանց ՚ի մէջ ազգին, ժամ ետին բողոքել յատեան նախարքոսին և անդ դասիլ։ Իրրեւ յանդիման եղեն մեծի ատենին երկոքեան, հարցին ատենակալքն. Գալուստ վարդապետ յառաջեալ քան զՄինաս, սկիզբն կալաւ պատմել. այրս այս յանիրաւի յափշտակեալ յինէն զիշխանութիւն Պատրիարքութեան, եւ իրրեւ կամէր զանձն արդարացուցանել եւ զնաասպարտ ցուցանել զՄինաս, ամպարտեալ նորա ընդհատեաց զբանն, և յայտնի կացոյց առաջի ատենին զբազմադիմի վնասս և զչարութիւնս նորա, զոր էած ՚ի վերայ ազգին և վանաց Ս. Յակոբայ յառաջ բերեալ զգիրս գանկատանաց ժողովրդեան և դատաւորին Երուսաղէմի, և թէ ո՞րպէս ժողովեալ ընդ նուէրս ազգին, ելեր և վաճառեաց ՚ի կամս իւր. ընտրութեամբ և համաձայնութեամբ ազգին եւ հրովարտակաւ Արքային լեալ էր ինքն Պատրիարք Երուսաղէմի։ Գալուստ վարդապետ ոչ կարացեալ առնել պատասխանի բանից Մինաս վարդապետի՝ պարտաւորեալ եղ յատենէ անտի։

Եւ Մինաս վարդապետ վերստին խնդրեաց հրովարտակ, զի ի նոր նեղեսցէ զինքն վասն բանի Պատրիարքութեան, և ինքեան հաստատուն յիշխանութեանն մնիցէ ցվախճան իւր։ Գրեցաւ հրովարտակ հրամանաւ Արքային, և ուեալ զայն Մինասայ դարձ արար յԵրուսաղէմ յԱթոռ իւր, ՌՌՌ (1699)։

Մինաս վարդապետ ՚ի նախընթաց ամին (1698) երից զարտաքին դուռն Ս. Հրեշտակապետի վանաց ՚ի կողմն հիւսիսոյ և նոր շինեաց զայն. նորոգեաց գքանի մի տեղիս Ս. Փրկչի վանաց, զի զօրքն իջեալ ՚ի վերուստ աւերեալ էին։

Ոմանք յայլազգեաց Երուսաղէմի գնացեալ ՚ի Կոստանդինուպոլիս՝ չարախօսութեամբ ամբաստան եղեն զվանօրէից քրիստոնեայ ազգաց, և առին հրովարտակ առ դատաւորն Երուսաղէմի գրեալ ՚ի Սեպտեմբեր ամսոյ, ՌՌՈ (1698) իբր թէ Հայք, Յոյնք և Լատինք յԵրուսաղէմ գնեալ իցեն տունս յայլազգեաց մերձ ՚ի պարիսպ քաղաքին, զամենս արարեալ իցեն պարտէզ եւ զայլս չինեալ նոր տունս ՚ի բնակութիւն։ Ապա հրամայէ քննել զայնոսիկ՝ եթէ այնպէս իցէ, որպէս ամբաստանիցին՝ քակեալ կործանեսցին

չինուածքն ։ ի հասանիլ հրովարտակին՝ դատաւորն առեալ ընդ իւր զվեցամեայս քաղաքին եւ ՚ի քննութիւն, եւ ՚ի չգտանել նորա զայնպիսի վնասակար իրս, ծանոյց ՚ի Դուռն թէ քրիստոնեայք քաղաքիս ոչ են արարեալ զայնպիսի իրս ։ Ծառատունկք ձիթենեաց ՚ի վաղեմի ժամանակաց հաստատեալ են օրինօք դատարանի ։ Իսկ Հայք՝ որք ունին պարտէզս և զձիթենիս ՚ի ներքս ՚ի պարսպին և արտաքոյ նորին, հաստատեալ են հրովարտակաւ Սուլթան Մուրատին, որպէս յայտ արար մեզ Մինաս վարդապետն Հայոց, ըստ օրինակիս յայսմիկ ծանուցանել ՚ի Դուռն, (1699)։

Եւ զկնի այսմ այլազգիք Սիոնի յարուցեալ ՚ի վերայ Մինաս Պատրիարքի, պահանջէին ՚ի նմանէ բազում ինչ վասն պարտիզի գերեզմանատան, մերձ ՚ի վանս Փրկչի ։ Թէպէտեւ Մինաս վարդապետ դնացեալ առ դատաւորն էջոյց առաջի ժողովոյն զհրովարտակս և զվաւերական գրեանս վասն տեղւոյն այնորիկ ։ Եւ թէ ո՞րպէս ժառանգեալ են զայն Հայք ՚ի սկզբանէ անտի ։ Թէպէտեւ սատուկաց նոցա դատաւորն եւ խոստագոյնս պատուիրեաց մի երբէք հակառակիլ ընդ ազգին Հայոց վասն այնր տեղւոյ ։ սակայն նոքա ոչ դադարեցուցեալ ունէին բանից նորին, դարձեալ նեղէին եւ խնդրէին զգուստաս գրոցն ՚ի վերայ նոցա ։ Եւ իբրեւ ոչ կարացին յագեցուցանել զագահութիւնս նոցա, սպառնացան արմատախիլ առնել զտունկս ձիթենեաց և գրաւել զնեղին ։ զի ասէին ունիմք հրովարտակ վասն այսր։ Նեղեալ յոյժ Մինաս վարդապետի մատոյց գիր աղաչանաց ՚ի Դուռն եւ խնդրեաց սանձել զմոլեգնութիւնս նոցա ։ Գրեցաւ հրովարտակ առ դատաւորն ԵրուսաղէմԻ և առաքաղաքական վախճան տալ հակառակութեանց և նեղութեանց այլազգեացն Սիոնի եւ զանկոծեանց և նեղութեանց այլազգեացն Սիոնի եւ զանհնազանդս օրինաց եւ հրամանաց Աբգարի՝ ծանուցանել ՚ի Դուռն ։ ՌՌՌ (1699)։

Ի սմին ժամանակի Երջնկացի Աւետիք վարդապետն նստեալ էր յԱմիտա Պատրիարքութեան ՚ի Կոստանդնուպոլիս ։ Սա գրեաց գիր յերուսաղէմ առ Մինաս վարդապետ, և նա արար նմա պատասխանի սիրով՝ խրատել ՚ի պատիր բանից նորա, և առաքեաց զայն առ նա ընծայիւք

և յաւել ծանուցանել նմա թէ չորք ՚ի վիճակաց երուսաղէմի՝ անկարգութիւն ինչ գործեալ աստ յեկեղեցւոջ՝ ժողովով արտաքսեցան ՚ի միջ ։ եթէ այդր եկեցցեն նոքա՝ ղգուշացիս ՚ի նոցանէ ։ Հասին չորս վիճակքն ՚ի Կոստանդնուպոլիս, չարախօսելով ՚ի ճանապարհի զՄինաս վարդապետէ, և յանդիման եղեն Աւետիք վարդապետի, եւ ՚ի հարցանել նորա զդրսխութենէ Մինաս վարդապետի եւ զվիճաբանացն ։ նոքա՝ սկսան բազում բանիւք ամբաստան լինել զմանկ եւ ծանր ծանր խրդմամբ հասուցանել զնա ։ ասէ ցնոսա Աւետիք, զայդ ատատիկին՝ զոր խօսիցին ։ ասէ ցնոսա Աւետիք, զայդ ամենայն զոր ասէքդ, կարէ՞ք վկայել և հաստատել առաջի ժողովրդեան եւս, և նոքա ասեն՝ ոչ միայն առաջի ժողովրդեան՝ այլ և առաջի մեծի Աբգարի եւս համարձակիմք ասել։ եւ ՚ի չարաչարել եւս ուխտաւորաց եկելոց յերուսաղէմ, զոր լուեալ էին ՚ի ճանապարհի ՚ի չորից վիճակաց նոց անտի, դրդուեցան ոմանք ՚ի վարդապետաց, և բազումք ՚ի կեսարացի հիւանդ՝ ընկենուլ զՄինաս յաթոռոյ, և դնել ՚ի տեղի նորա զՄատթէոս կեսարացի՝ Ա=էն սատեալ, ընկեցեալն ՚ի կաթուղիկոսութենէ Սսոյ ։ Իբրեւ լուաւ զայս Աւետիք վարդապետ՝ գրեաց սաստ առ Մատթէոս դնալ ՚ի տեղի իւր ։ Եւ առեալ զչորեսին նախայիչեալ միաբանն եւ զքազում վարդապետս եւ երիցունս, եւ նոքօք հանդերձ վեղար ՚ի գլուխ ամենեցուն՝ յատեան թագաւորին, և մատուցին թուղթ աղաչանաց՝ որ ունէր օրինակ զայս։

Մեք ամենեքին եկեղեցականք եւ գլխաւորք ազգին Հայոց, յայտ առնեմք զգոհունակութիւնս և գնատահութիւնս մեր, զոր ունիմք ՚ի վերայ Աւետիք վարդապետի, որ այժմ Պատրիարք է ՚ի Կոստանդինուպոլիս ։ զի նա գոլով հմուտ և տեղեակ ամենայն հանգամանաց օրինաց մերոց, կարէ հսկել և պահպանել զայն ըստ ժամանակին, և հաւատարմութեամբ բարւոք կատարել զօրէնս մեր, եւ պահել զամենայն ազգն Հայոց ։ չլինել երբէք հեռաւոր լատին կրօնի, որոյ վասն խնդրեմք ՚ի բարերար Աբգարէդ չնորհել սմա ընդ Պատրիարքութեան Կոստանդինուպոլսոյ և զՊատրիարքութիւնն Ամասիոյն երուսաղէմի ։ Եւ թագաւորն առաքեաց զնոսա առ եպարքոսն ։ Եւ նորա լուեալ

զամբատանութիւնս զմինաս վարդապետէ՝ բանիւ Աւետիք վարդապետի, ընկեց զմինաս ի Պատրիարքութենէ Երուսաղէմի, եւ կացոյց ի տեղի նորա զնոյն ինքն զԱւետիք հրովարտակաւ Սրբազի, գրեալ ի ՀՕ Սէպտեր ամսոյ՝ ՌՌՀ (1701)։ Մատոյց Աւետիք ի գանձն զպատրիարքական տուրս 11,900 մողս։ Ցետ մեռուցելոյ Աւետիք վարդապետի զիշխանութիւնն երկուց Պատրիարքական Աթոռոց, էառ հրովարտակ և ասիկան Սրբազնուստա եւ կարգեաց զկարապետ ոմն անուն փոխանորդ ի դիմաց իւրոց, և առաքեաց զնոսա յԵրուսաղէմ, գրեալ գիր առ Մինաս զպազա տեղակալ· զի ի հասանիլ նոցին անդր, կալեալ զմինաս վարդապետ՝ միայն հանդերձիւն, զոր զգեցեալն էր, դիցեն շղթայիւք ի բանտի եւ ի թողցեն առնուլ ինչ յԱթոռոյ, և ճշդութեամբ տեսցեն ընդ նմա զհաշիւն· և յետ այնորիկ ինքն տացէ զդատաստան նորին· զի իբր թէ հայհոյեալ իցէ նա զՍ. Հայրապետսն։ Նոյնպէս առնել և զհամախոհս նորին, որք կոչին Ակոռցի, և հաւատով Մինաս վարդապետի քաղկեդոնիք, եւ արկանել ի բանտ ըստ հրամանի Սրբազին· զի եթէ փախիցէ, և կամ այլ չար ինչ պատահեսցի, ինքն լիցի պատասխանատու։ Իսկ ի միաբանից՝ որք ճշմարիտ ուղղափառք իցեն և հաւատովն Լուսաւորչի, ուննել զնոսա ի պատուի· զի առեալ է իմ ասէ հրովարտակ վասն քննութեան հերձուածողութեանց նոցա։ Ապա պատուիրէ քննել և ծանուցանել զվիճակ Աթոռոյն եւ եկեղեցական զարդուց· զի լուեալ էր ինքն՝ թէ Մինաս վարդապետ զյիշատակս վանից տարեալ ի կոստանդինուպոլիս բաժանեալ է փոխանորդաց իւրոց, Եւ զ50 քսակ պարտս, զոր առեալ է ի Հրէից՝ կնքով Աթոռոյն, դարձուցանել յետս· և զհաշիւն, որ ի ժամանակի Յովհաննէս վարդապետի Նախուքեմի կոչեցելոյ· յորում եւ յԱթոռոյ գնալ յարեւելս, քանի՞ քսակ դրամոց առեալ իցէ, և քանի՞ բեռինս կարասեաց բարձեալ իցէ· զորս տարեալ ասէ յիջմիածին, նոքօք բազմացոյց զվէճս և զխռովութիւնս· և թէ ո՞րպէս վաճառեաց զտեղի խաներն որ ի Յոպպէ· և զվանքն Իսկիւտարու, և զայլ վընասս։ Զի՞նչ առեալ է և զի՞նչ նուաղեցուցեալ· յո՞ր վայր թագուցեալ է և կամ տուեալ զդրամս վանից, հանել ի

ձեռն ասորկանին· և թէ ո՞րքան ինչս վատնեալ և կորուսեալ իցէ, թէ ի դրամոց եւ թէ յեկեղեցական անօթոց և այլոց, առնել տումար· եւ ասա պատմել զամենայնն մի ըստ միոջէ յոշնկն դատաւորին· եւ զոր ինչ միանգամ դրեալ կայ ի հրովարտակին, անպատճառ գործադրել, և տալ դրել Հէօճճէթ, թէեւ լինիցի ծախք աւելի քան զ150 քսակս արծաթոյ, տալ և առնուլ զՀէօճճէթին եւ դրել զամենայն ինչ պարագայիւք, և առաքել ինքեան· զի թագաւորն և դէնգէտն մեծ խնամով ինճ օգնական եղեն ասէ՝ ի հաստատութիւն հաւատոյս մերոյ և ի կործանումն ախթարմայից· և յաւէտն իբրեանց ինճ հաւատացին զազգն Հայոց· ածել յուղղութիւն զիրանկացեալսն, եւ զանհաւանսն աղէ առնել նոցա։ Զի թէպէտ ասէ· խոստացան Մինասեանք տալ 100 քսակս արծաթոյ, այլ ոչ ինչ չահեցան և չահին թէեւ տացեն 1000, զի ինճ յանճն արարին զազգն· ի 13 Յուլիս ամսոյ՝ (1702)։

Եկն նոր վէքիլն ընդ գափուճի պաշի Մեհէմմէտ Սէլամ աղասին· գնացեալ միաբանից ածին զնա ի գիշերի ի վանսն Ս. Յակոբայ ի սենեակ Մինաս պատրպի։ Եւ յաւուրն երկրորդի ի 18 Օգոստոս, կոչեաց դատաւորն զմինաս վարդապետ միաբանօք, եւ յայտ արար զանկումն նորին յիշխանութենէ, և պատուիրեաց նմա տեսանել զհաշիւն ընդ նազրին, և դարձան անտի։ Կոչեաց առ ինքն ոստիկան Աւետիք վարդապետի զմինաս վարդապետ, եւ մեղադրանօք ասէ, ընդէ՞ր ոչ հանդիպեցայք մեզ։ Դատաւորն կոչեաց զմիաբանս, և ընթերցաւ առաջի նոցա զհրովարտակ Աւետիք վարդապետի, և դարձան ի վանս։ Դատաւորն դարձոյց յետս զյայտագիրն առ Մինաս վարդապետ՝ զոր տուեալ էին միաբանք վասն նորա։

Ծանուցումն յաւէտի եկեղեցւոյ եւ բարեմաղթութիւն վասն Աւետիք վարդապետի։ Մէհէմմէտ Փաշա Նապլուսի առաքեաց զնուիրակապետն իւր, և խնդրեաց ի նոր վէքիլէն տալ զպարգեւն։ Գնաց Մինաս վարդապետ առ դատաւորն և էառ Հէօճճէթ վասն հաշուոյ իւրոյ։ Նոր նազիրն փակեղամբ զարդարեցաւ ի քսակէ Ս. Յակոբայ։ Դանկատ այլազգեաց երուսաղէմի զՓաշայէն սակս խըստութեան նորին։ Նազիր կարապետն չոքաւ առ Մինաս

թէ Սուրբն ՓրանկացեալՀ՝ դառաւտան արա, բայց նա ոչ լուաւ։ Մէկէմմէտ Փաշա կուռէ ընդ Արապս 'ի կողմանս Նազլուսի, և սպանեալ զՇէյխս նոցա առաքէ զդլուխսն 'ի Կոստանդինուպոլիս։ Մուֆդին երթայ անդ ամբաստան լինիլ զնմանէ վասն խստութեան։ Նաեր բազում Արապկօք ձիաւորօք և հետեւակօք անցին 'ի դրանէ Երուսաղէմի ընդ Խալիլայ, եւ գնացին 'ի Նապլուս 'ի վերայ Մէկէմմէտ Փաշայի։ Հակ· 10 Նաղր աղային տեղի և դարձ սպառասպեցին յեկեղեցին։ Հակ· 30 Նոր Նաղըրն եւ Նոր վէքիլն Յովհաննէս արեղայն պահանջին հաշիւ 'ի պապա Մինասէն։ Աղմուկ մեծ եւ բազում վասն հաշուոյ 'ի մէջ վէքիլայ։ Նաղըրն գնացեալ առ դառաւտրն ազդ արար թէ նոր վէքիլ եկեալ է, կամի զալ տեսակիլ ընդ նմա թէ նոր վէքիլ եկեալ է, կամի զալ տեսակիլ ընդ նմա թէ նոր վէքիլ եկեալ է, որոյ եկեալ էին փոխանորդք Յունաց և Լատինաց։ Ապա չոքաւ Յովհաննէս առ դառաւտրն, եհարց նմա թէ լ՞ինչ ես, և նա ասէ, վէքիլ· ո՞ր է հրամանագիր, պատասխանէ, չունիմ, այլ միայն զիր 'ի Հայոց։ Նոյ· ն, տարին զմինաս վարդապետ 'ի դառարան, և դառաւտրն հրամայեաց երթալ տեսանել զնաչիւն, և յետ տեսանելոյ զայն ևն քսակ պարտաւոր յուղին զմինաս վարդապետ։

Թէպէտեւ Աւետիք վարդապետ կարդեալ էր զՅովհաննէս վարդապետ վէքիլ, և զնարաւտետ Նաղըր, դիտել հըմտութեամբ զամենայն գործս վանաց, այլ 'ի տրտնջել ժողովրդոց եւ 'ի յաճախել բամխասանաց 'ի մէջ ազգին, թէ զինչ՞ւդ այսքան մուռք և ելք սթռուզն 'ի ձեռս առն միոյ կամ երկուց աւանդեալ կառարին· առաքեաց և զվերթա-նէս վարդապետ զհաւատարիմ իւր, Նաղր և Ոսմիկան աղա նուամբ, զի ամենայն ինչ խորհրդով և դիտութեամբ երիցն նուամբ, և մի ոք արասցէ զիրս ինչ արտաքոյ կամաց կառարեացն, և մի ոք արասցէ զիրս ինչ արտաքոյ կամաց Նոցին, և փոխ կալցին վասն ապատութեան Սթռուզն 'ի պարտուց։ (Նամակք Աւետիքի)։

Յետ այնորիկ խնդրեաց Աւետիք վարդապետ զհաշիւն վանաց Ս· Յակոբայ 'ի Մինաս պապա կոչեցեալ միաբանէ, որ փոխանորդ էր Մինաս Պատրիարքի և խնամակալ վանացս, և տուեալ նորա զհաշիւն, ընկալաւ զիր 'ի դառարանէ առաջի վկայից, 'ի հաստատութիւն հաւատարմութեան իւրոյ։ Սակայն Աւետիք վարդապետ ոչ կամեցաւ

հաճիլ ընդ այն, այլ պահանջէր զայլ ինչս, սպառնացեալ նմա վարել զնա յաքսոր յԵրզնկայն, և կամ ածել 'ի Կոստանդինուպոլիս։ Նեղեալ միաբանից 'ի բռնութենէ աստի՝ բազք բարձին 'ի Դուռն, և խնդրեցին զիրաւունս, կարճել զբռնութիւն Աւետիք վարդապետի, որ զօրացեալ էր 'ի վերայ նոցա։ Իսկ դուռն հրովարտակաւ Արքայի՝ ազդ արար զդանկատանն միաբանից դառաւորին Երուսաղէմի, և եհարց ցնա՝ եթէ արդարեւ ըստ վկայութեան իւրեանց տուեալ իցեն զբռնադակ հաշիւս վանաց, եւ օրինօք ընկալեալ զդիր վկայութեան 'ի դառարանէ՝ բարձցեն զբռնութիւն Աւետիք վարդապետի, և մի տացէ Թոյլ նեղել զմիաբանսն, զի բնակեսցին խաղաղութեամբ 'ի տեղիս իւրեանց։

Աւետիք վարդապետ ոչ բաւականացեալ այսու, ձեռն արկ չարչարել նաեւ զմինաս վարդապետ վասն հաշուոյ, որ արդէն տուեալ էր և նորա ոչ ընկալեալ զայն՝ յօդէր զայլ և այլ պատճառս, և խնդրէր 'ի նմանէ և զայլ գումարս դրամոց, և յընդդէմ դառնալ Մինաս վարդապետի, ծագեցաւ 'ի մէջ խռովութիւն մեծ, և յառաջել նեղիլ 'ի բռնութենէ աստի, դիմեաց առ կուսակալն Դամասկոսի Զերքէզ Մէկէմմէտ Փաշայ, և խնդրեաց 'ի նմանէ զիր առ քաղաքապետն Երուսաղէմի, զի տացէ Աւետիք միջոց ժամանակի, դալ գործակալաց Մինաս վարդապետի 'ի կոստանդինուպոլսոյ, առ որս են ամենայն մուրհակք և թղթութեանք իւր, և նա գրեաց ըստ բանի նորա, ուր 'ի վերջ յաւելոյ, չտալ Թոյլ նեղել զմինաս վարդապետ։ Լուեալ Աւետիք վարդապետի զնզնալն յԵրուսաղէմ, մտացեալ զիր տիրատանութեան առ նպաքքոն, և չարաչոյս լինել զմինաս վարդապետէ ասէ՝ չարագործ է և անհաւատարիմ առ ազգն, և դարձեալ է 'ի փրանկուքիւն, և ըստ հաճոյից իւրոց կամաց եդեալ է զվանս մեր 'ի գրաւ, և գործեալ է զմեծամեծ չարիս և զինաս։ Ի ծանուցանել նորա զայսոսիկ բանս Արքային, գրեցաւ հրովարտակ առ դառաւորն Երուսաղէմի, քննել զամբաստանութիւնս Աւետիք վարդապետի յաւանէ ժողովոյ, և ծանուցանել 'ի Դուռն։

Ի հասանիլ հրամանին՝ կոչեաց դառաւորն զմեծամեծս այլազգեաց, զփոխանորդս Լատինաց, Յունաց և Ասորւոց,

եւ արար ժողով մեծ · եւ կոչել ՚ի ժողով անդր զՀամայն միաբանս Ս · Յակոբայ եւ զժողովուրդս Հայոց բնակեալ յերուսաղէմ, եւ ընթերցաւ առաջի ամենեցուն զհրովարտակն Արքայի · ապա եհարց ցմիաբանս Հայոց, թէ արդարեւ այդպէ՞ս իցէ Մինաս վարդապետան, որպէս լուաք այժմ ՚ի բանից հրովարտակին ; Նոքա եւս ոչ պատասխանի, Մինաս վարդապետ լեալ միաբան ՚ի վանս մեր ՚ի 10 ամաց հետէ, վարեալ է զպաշտօն փոխանորդութեան եւ զիշխանութիւն Պատրիարքութեան, զտուրս ողորմութեանց ուխտաւորաց եւ զնուէրս ազգին՝ զոր ժողովեաց ՚ի ժամանակս իշխանութեան իւրոյ, ծանեաց ՚ի կարեւոր պէտս չինութեան եւ նորոգութեան վանօրէից և եկեղեցեաց մերոց, և խնամ կալաւ աղքատաց և անանկաց եղելոց այսր, և ոչ գտանեաց նա զինչ ազգին ՚ի կամս իւր, մինչ չհոգալ ըզկարեւոր պէտս անձին իւրոյ, և հաւատարմութեամբ ծառայեալ անթերի կատարեաց զամենայն գործս վանաց, և ոչ երբէք հակամիտեալ է նորա ՚ի լատին կրօնս : Ուստի մեք ամենեքեան յատենի բազմութեան ժողովոյս յայտ առնեմք զգոհունակութիւն սրտից մերոց զնմանէ : Եւ դատաւորն ըստ պատմութեան նոցին գրեալ յայտ արար ՚ի Գուռն · եւ թէ որպէս վճարեաց զգործն քննութեան ՚ի բազմամարդ ժողովն անդ · ՌՌՀ (1702) ·

ԳԼՈՒԽ ԾԳ ·

Վէճ այլազգաց : Կաղապարումն վանաց Ս · Փրկչի · և պահանջումն Հմիաբանից : Պատրիարքութիւն Մինաս վարդապետի եւ վախճան նորին : Հակառակութիւն Լատինաց : Վէճ ՚ի դէպ ընդմէջ Ս · Աստուածածնի : Հակառակութիւն այլազգաց :

Այլ մինչդեռ Աւետիք եւ արք իւր յուզեալ զայսպիսի անօգուտ խնդիրս՝ մտաքանէին ընդ Մինասայ եւ ընդ միաբանս վանաց, և զբաղեալ էին ՚ի կռիւս եւ ՚ի վէճս իւրեանց, յարեան ոմանք յայլազգեաց երուսաղէմի, որք էին վերատեսուչք Սալահիյէ դպրոցին · և գնացեալ առ դատաւորն ամրառնան եղեն զմինաս վարդապետէ եւ ետուն կոչել անդ զհմարգման վանաց զՅովհաննէս վարդապետ, և ասեն · ադարակն Սիոնի՝ որտեղոյ պարսպի քաղաքին, ուր են վանքն Հայոց, պարտէզն Ձիթենեաց, գերեզմանատունն, ՚ի պարսպէ Ս · Փրկչի մինչեւ յարեւմտեան ձանապարհն՝ են ՚ի կալուածոց Սալահիյէ դպրոցին, որք այժմ են ՚ի ձեռս Հայոց · ՚ի վերայ վանաց և պարսպին եղեալ էր տարեկան վարձս ինչ (Հէքիր), եւ իւրաքանչիւր ամի հատուցանէին վերակացուաց դպրոցին 880 փարայ : Իսկ այժմ միաբանքն Հայոց ՚ի 10 ամաց հետէ ոչ հատուցանէ զայն, եւ դումարն հասեալ է 8800 փարայ, զոր պահանջեմք այժմ ՚ի Հայոց : Պատասխանի ետ Թարգմանն և ասէ, ոչ ՚ի վերայ վանաց և ոչ ՚ի վերայ պարսպիցին՝ եղեալ իցէ ոք զայդպիսի վարձս, և ոչ լուեալ է մեր թէ սահմանեալ իցէ ոք զայդպիսի տուրս, և ոչ ունիմք պարտս ինչ գըպրոցին այնմիկ, զի Հայք ժառանգեալ են զայնոսիկ տեղիս ՚ի վաղ ժամանակաց մինչեւ ցայսօր, և մատոյց զդիրն դատաստանատան, ՌՈԽԱ (1631) · զի ՚ի նմին ժամանակի վերոյհարեալ էր դատն ըստ զօրութեան հրովարտակացն Սէլիմայ և Սիւլէյմանայ, հիմնեալ ՚ի վերայ դաշնագրոց : Եւ մատոյց դարձեալ հրովարտակ ՌՌՌՌ (1699), յորում հաստատէր զսեփհականութիւնս Հայոց : Ցետ այնորիկ յայտ արար դատաւորն այլազգեացն այնոցիկ · թէ տեղիքն այնոքիկ՝ սեփհական ժառանգութիւն է Հայոց, որպէս ցուցանեն վաւերական դրեանքն, և ոչ ոք սահմանեալ և կամ պահանջեալ է տուրս ինչ ՚ի նոցանէ, և ոչ ձեզ այժմ օրէն է պահանջել զայն : Ապա արգել զնոսա օրինօք դատարանիւ, չհակառակիլ միաբանդամ ընդ Հայս և յանիրաւի պահանջել զիրս ինչ ՚ի նոցանէ, ՌՌՀ (1702) ·

Ի սմին ժամանակի բազմացեալ էին գողք և աւազակք ՚ի գիւղն Բեթղեհէմի, զի ՚ի գիշերի մտեալ ՚ի վանս կողոպտէին՝ զոր ինչ միանգամ գտանէին, և հարեալ վիրաւորէին նաեւ զընդդիմակացս իւրեանց : Պապա Մինաս բազում անգամ ծանուցեալէր զայն Բդեշխի քաղաքին՝ այլ նա չէր ձեռնհաս խափանել զանկարգութիւնս նոցա · ապա չէր ձեռնհաս խափանել զանկարգութիւնս նոցա · ապա էառ հրաման ՚ի նմանէ, եւ կացոյց զինեալ պահապանս անդ ՚ի վանս Բեթղեհէմի, և առանց խարելոյ հարկանել

եւ սպանանել, որոց կամիցին աւազակութեամբ մտանել
'ի վանս, ՌՌՀ (1703)։

Եկն Պալթաճի այվազ Փաշան յերուսաղէմ, եւ երեք
ընդ իւր զՀիւսպատոսս Յրանկաց, հատատաւել զնոսա անդ,
('ի 5 Փետրվար· 1700)։ Ժողով եղեւ վասն դատաւորին,
որ էր որդի վանի էֆէնտեայ, զի սպանցեն զնա, այլ միջ-
նորդութեամբ ղերծաւ։ Սպանին զՇահվէնտէրն, խնդը-
րեցին զԱֆիֆին և զայլս, բայց ոչ գտին· դատաւորն խոստ
անիրաւութիւն արար· (յ8 Մայիս, 1703)։

Ի 18 ամսեան Օգոստոսի՝ միաբանք Ս· Փրկչի վանաց,
ըստ սովորութեան, ոչ եկին 'ի Ս· Յակոբ վանն կերակրոյ,
և գնացեալ ոմանք 'ի միաբանից գտին զդուռն վանաց կի-
սաբաց, և մտեալ 'ի ներքս տեսին զդիակունս անկելոց,
խորտակեալ դրունք եկեղեցւոյ և սենեկաց, և մերկացու-
ցեալ իսպառ յամենայն զարդուց և 'ի կարասեաց· և դարձ
արարեալ անտի՝ պատմեցին վէրժիլ Յովհաննէս վարդապե-
տի, և նորա ժողովեալ առ հասարակ զմիաբանսն, դիմեաց
առ դատաւորն և առ քաղաքապետն եւ պատմեցին նոցա
զեղեալն։ Եւ նոցա եկեալ բազմութեամբ 'ի քննութիւն՝
տեսին զդիակունս միաբանից թաթաւեալ յարեանն, որք էին
Սարգիս վարդապետ և երեք ծերունի միաբանք· յայրըշ-
տակեալ եկեղեցին և սենեակքն։ Ի գիր արձանացոյց դա-
տաւորն զոր եռես և լուաւ, և ետ 'ի ձեռս Հայոց։ Ժո-
ղովեալ էին անդ ընդ բազմութեան Հայոց նաեւ Լատինք,
Յոյնք, Սյլազդիք և Հրէայք իսկ 'ի տեսարանն ողբմելի։
Ցետ աւազելոյ և կոծելոյ՝ բարձին զդիակունս և թաղե-
ցին յիւրաքանչիւր 'ի գերեզմանի իւրում։ Եւ 'ի բողոք
բառնալ Հայոց վասն այսր առ դատաւորս, ասեն՝ դուք
դիտէք զԹշնամիս ձեր, որոնեալ գտէք և տուք 'ի ձեռս
մեր՝ զի դառնացուք։ Եւ ապա բռնի առեալ 'ի նոցանէ
զկնի քսակս արծաթոյ, իբր տուգանս վասն մեռելոց, ար-
ձակեցին զնոսա։ Եւ նոցա եկեալ 'ի վանս Ս· Յակոբայ,
կոչեցին զվաստինս և զՅոյնս 'ի խորհուրդ, թէ զի՞նչ պարտ
իցէ առնել, զի կորուսին զարս և զդրամս· և նոքա խոս-
տացան միաբանիլ ընդ նոսա 'ի գտանել զաւազակս։ Հայք
զկէտ եղեն յօրէ յայնմանէ յորոնել և պատուիրել եւս· ո-
մանք 'ի բարեկամաց ԲՆԹղեհէմի գտին զոմն 'ի բնակչաց

Հովիւ գիւղի՝ գիտակ այսմ, և ածին զնա յերուսաղէմ առ
Յովհաննէս վարդապետ, և նա սկիզբն արար 'ի պատմել։
Ոմանք 'ի Յէլլահաց եկին առ իս երթալ յերուսաղէմ եւ
կողոպտել 'ի քաղաքի զայս նիշ տուն, և 'ի պատճառել ի-
մում չմտանել 'ի քաղաքն, մեկնեցան յինէն, և յառաւօ-
տեան պահու գնացեալ առ նոսա, տեսի զի բաժանէին 'ի
միջի իւրեանց զինչս եկեղեցւոյ· զարմացեալ ընդ այն՝ հար-
ցի զնոսա, թէ զիա՞րդ մտեալ իցեն 'ի վանս, և նոքա ա-
սեն՝ մինչ խորհէաք 'ի գերեզմանատունն Հայոց, եկն առ
մեզ մի ոմն յայլազգեաց Սիոնի, և որսացեալ զմիտս մեր
ասէ· ահա' դիպող առիթ կողոպտելոյ վանս Հայոց, զի
յաղաքս ասէ զնոսա, բերեալ են անդ բազում ինչ, և
փութացեալ երեր զտափոր ջրոյն և զարս երկուս ընդ իւր,
և սկսան բաղխել զդուռն վանաց և խնդրել զջուր, զի ժա-
մն էր իրրեւ 11· և 'ի բանալ դռնապանին, հարաք ըզ-
գլուխ նորա և տապալեցաք զնա անդ, և մտեալ 'ի ներքս
խողխողեցաք զարս երիս, և առարի առաք զեկեղեցին և
զսենեակս, եւ ապա բարձաք նաեւ զվիրաւորն 'ի կենաց
և մեկնեցաք անտի, և տուեալ ինձ բաժինս յաւարէ ան-
տի, պատուիրեցին չյայտել ինչ ումեք, եւ մին 'ի նոցանէ
էր 'ի քաղաքէն երուսաղէմի։ Լուեալ Հայոց զպատմու-
թիւնս զայս, ետուն ընդունել զայրն քաղաքացի, և 'ի մատ-
նել զայն քաղաքապետին 'ի գանս, մատնեաց զդողակիցս
իւր, յորոց մին էր Սիոնցի այրն Համոան անուն, և գո-
ղոնն թաքուցեալ 'ի գիւղն Բեյթ Ճալայ 'ի տուն առն միոյ,
թաղեալ 'ի ներքոյ քարի, և գնացեալ հանին զայն անտի,
և բերին յերուսաղէմ, այլ ոչ զբովանդակն, զի միայն զրա-
ժին առնն գտին անդ։ Եւ 'ի պահու քննութեան՝ յայտնի
եղեւ թէ գողութիւնն լեալ է 'ի ձեռս այլազգեաց Սիոնի,
եւ Համոան փախուցեալ 'ի քաղաքէն։ Այլազգիք Սիոնի
բազում անգամ գործեալ էին զայսպիսի սճիրս և մնացեալ
անպատիժ, որպէս յառաջագոյն եւս սպանեալ էին զարս
երկուս անդ 'ի վանս Ս· Փրկչի, և հասուցեալ բազմադի-
մի ինաս, և Խալիլ անուն ոմն 'ի նոցանէ մտեալ 'ի վանս
Ս· Հրեշտակապետի, սպանեալ անդ եւս զարս երկուս և
կողոպտեալ զեկեղեցին, և 'ի վաճառել նորա զՀեւտայան
մի 'ի կոստանդնուպոլիս 'ի Դալաթիա, թափեաց 'ի ձե-

ռաց Նորա զայն Պապա Մինաս։ Թող զաւերական տուբա, զոր պահանջեն տէ յամէ։ Ջուխայ, տէր, և զայլ իրս, եւ այնպէս ոչ կարէին զերծանիլ միաբանք 'ի նախատանաց և 'ի գանից, և 'ի վերայ նոցա յաւելին զայս եւս։ Ցետ այնորիկ եւս գրել Յովհաննէս վարդապետ զայս առիւնայն անցս դատաւորին, և գրեաց եւս ինքն առ Սահակ Պատրիարք եւ առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս դարմանիլ զկրան։ գրեցին նաեւ Ցոյնք և Լատինք առ իւրեան, յետ պատմելոյ նոցա զայլ և այլ չարիս Սիմոնցւոց, յաւելին ասել՝ թէ որպէս հանին 'ի գերեզմանէ զդի դատաւորի իւրեանց՝ և ընկեցին 'ի բաց, և ապա խնդրեցին հանել զայլազգիսն 'ի Սիոնէ՝ և հրամանաւ Արքայի առաքել զնոսա 'ի Գազա, և 'ի տեղիս նոցա բնակեցուցանել զերկնիչէրիս, ՌՌՀ (1703)։

Իսկ Մինաս վարդապետ տեսեալ թէ գժուարին է այնուհետեւ կալ մնալ 'ի վանս Ս։ Յակոբայ, և խաղաղ կեանս վարել յերեսաց ասոյաց իւրոց, յորմէ անկեալ չոքաւ 'ի Կոստանդինուպոլիս։ Եւ 'ի սմին ժամանակի, 'ի 10 Օգոստոսի, եղին թագաւոր Օսմանցիք զՄուլթան Ահմէտ 'ի տեղի Սուլթան Մուստաֆայի։ բարձաւ 'ի կենաց Ցէյզուլլահ դէնղէան, պաշտպան Աւետիք վարդապետի։ Եւ Սուլթան Ահմէտ դարձաւ 'ի Կոստանդինուպոլիս Արքունեօք։ և Աւետիք վարդապետ եղեալ էր յեէպիոլէ 'ի դխալահողջ։ Տեսեալ Մինաս վարդապետի զվոխոխութիւն ժամանակին, մատոյց դիր աղաչանաց 'ի Դուռն, և յայտ արար թէ՝ ո՛րպէս Աւետիք վարդապետ ձեռնաւորութեամբ կամարարաց իւրոց, խաբէութեամբ յափշտակեաց զՊատրիարքութիւնն իւր, որ յառաջագոյն հաճութեամբ աղդին եւ Արքունի հրովարտակաւ ինքն էր, և թէ քանի՞ առիթից և վնասուց հանդիպեցաւ յերեսաց չարեաց նորին, եւ այլ սոցին նման բանք։ Ապա խնդրեաց վերստին դարձուցանել ինքեան զվիճանութիւն Պատրիարքութեան և 'ի բաց բառնալ զնեղութիւնն Աւետիքարքութեան և 'ի բաց բառնալ զնեղութիւնն Աւետիքարքութեան և 'ի բաց բառնալ զնեղութիւնն Աւետիքեանց։ զի մի այլ եւս ձեռն մխեացեն 'ի գործս իւր եւ չարչարեսցեն զնա։ Եւ եղեւ 'ի ծանուցանելն Արքային՝ չընորհեաց վերստին զՊատրիարքութիւնն Երուսաղէմի Մինաս վարդապետի Արքունի հրովարտակաւ, ՌՌՀ (1703)։ Դարձ արար Մինաս յԵրուսաղէմ։ գնաց ընդ նմա իւր օգ-

նական և Գրիգոր վարդապետ ղէֆ-ն կոչեցեալ, որ անկեալ էր 'ի կաթուղիկոսութենէ Սսոյ։ Հառեալ Մինաս վարդապետի յԵրուսաղէմ և կացեալ ժամանակս ինչ յիշխանութեան իւրում, վախճանեցաւ 'ի Թուին Հայոց ՌՃԾԳ (1704) 'ի 14 Նոյեմբեր ամսոյ յաւուր Ուրբաթու։ և թաղեցաւ 'ի վանս Ս։ Փրկչի 'ի կարգս Պատրիարքաց Աթոռոյն։ Մինաս վարդապետ էր 'ի Տիգրանակերտ քաղաքէ, այր բարեկրօն եւ իմաստուն։ Սա սարար քաղուածս ինչ յաջորդութեան Թագաւորացն Հայոց եւ կայսերացն Հռոմայեցւոց, որ կայ տպագրեալ։ գրեաց նաեւ զդիպուածս ժամանակի իւրոյ իրրեւ օրագիր, որ գտանի ձեռագիր նորին 'ի դրատան Ս։ Աթոռոյն Երուսաղէմի։ Իսկ զկնի նորին 'ի դրատան Ս։ Աթոռոյն Երուսաղէմի՝ ոչ յաջորդեաց օրինաւոր մահուան Մինաս վարդապետի՝ ոչ յաջորդեաց օրինաւոր Պատրիարք Աթոռն Երուսաղէմի մինչ 'ի Թուականն (1718)։ զի Պատրիարքունք Կոստանդինուպոլսոյ, յաւուրց անտի Աւետիք վարդապետի արկեալ էին զայն Աթոռ ընդ իշխանութեամբ իւրեանց, եւ կառավարէին աշխարհական տեղակալօք եւ Նպարօք, մինչեւ ցընտրութիւն Գրիգոր վարդապետի։ Ցետ աքսորանաց Աւետիք վարդապետի, եկաց Պատրիարք 'ի Կոստանդինուպոլիս Մատթէոս վարդապետ, Սէրէ ասացեալ, որ լեալ էր կաթուղիկոս Սսոյ։ և զկնի նորա Սահակ վարդապետ։ սոքա հանէին հրովարտակս վանս Պատրիարքութեան Երուսաղէմի եւս, և առաքէին զնոսա ընդ տեղակալս իւրեանց, որպէս է տեսանել 'ի կարգս հրովարտակաց։ Իսկ աշխարհական տեղակալք 'ի կարգս կոչեցեալք, եկեալ տիրաբար բռնանային 'ի վերայ Պապ կոչեցելոցն, ժողովէին զարդիւնս ուխտաւորաց, եւ ըստ հաճոյից իւրեանց վատնէին զնոսա։ իրրեւ ոչ կարացին յահաւ

իբրեանց և զկործանումն վանացն Ս. Յակոբայ. իսկ դէնպէտն գթացեալ յարտասուս նոցա, դրեալ ծանոյց զամենայն անցս Հայոց 'ի Դուռն Արքայի, թէ յո՛րպիսի նեղութիւնս և 'ի տառապանս անկաւ վանք Ս. Յակոբայ, և թէ քանի՞ չարիք գործեցան ասա յաւուրց անտի, յորում 'ի մի ձուլեցան Պատրիարքութիւնք երկուց Ամառաց. բազմացան առհասարակ պարտք, և կալուածք եդան 'ի դրաւ. միաբանք սակաւք՝ հեծեն 'ի չքաւորութեան. անօթք եկեղեցւոյ յոսկւոյ և արծաթոյ յափշտակեցան 'ի տեղւոյ կալաց. Արդ՝ եթէ ոչ բաժանեսցի ասէ՝ Պատրիարքութիւնն երուսաղէմի 'ի Պատրիարքութենէ թագաւորեալ քաղաքին, չիք հնար ազատութեան, զի յաւուրց անտի Սելիմայ Արքայի ունէին Հայք առանձին Պատրիարքութիւն յերուսաղէմ, եւ չէր հնար ումեք ձեռնամուխ լինել 'ի գործս նոցա. Իսկ այժմ խախտեցան համօրէն կարգ եւ օրէնք վանաց, եւ մօտալուտ կործանումն նորա հասեալ կայ 'ի դուռս. միաբանք կան 'ի տարակուսի, ակնկալեալ այցելութեան Տեառն. Սակայն այս գիր դէնպէտին ոչ ինչ ազդեցութիւն գործեաց 'ի թագաւորեալ քաղաքին, այլ ընդ հակառակն առաւել բազմացան եւ աճեցին անկարգութիւնք յերուսաղէմ, մինչեւ ցաւուրս Յովհաննու եւ Գրիգորի վարդապետաց.

Ի սմին ժամանակի յարեաւ վէճ 'ի մէջ Յունաց և Լատինաց սակս առաջնութեան. զի Նէոփիտոս փոխանորդն Երիսանթոս Պատրիարքին Յունաց, դժկամակ լինն էր ընդ առաջնութիւն Լատինաց, եւ երկնէր 'ի միտս իւր յափշտակել զայն 'ի ձեռաց նոցա, ուստի ամէնասան եղեւ զփոխանորդէն Լատինաց առ դատաւորն, և կոչեցան 'ի դատաստան փոխանորդք եւ Թարգմանք երկաքանչիւր ազգաց. Ռափայէլ Լատին փոխանորդն ասէ՝ տաճարն Ս. Յարութեան, եւ վանքք երից դրանց եկեղեցւոյն Բեթղեհէմի են 'ի ձեռս Լատինաց յամենայն ուխտատեղիս. եւ 'ի սահմանեալ կայսերական տուրս, մինչ առաջնութիւնն էր Լատինաց, և փոխանորդ նոցին նախագահ բազմի յամենայն ժողովս. Իբրեւ հարցաւ 'ի փոխանորդէն Յունաց, նա ոչ երբէք ընկալաւ զայն, եւ խնդրէր իսկ խափանել զվարհուրդս նորա. Կրկնեաց Ռափայէլ և ասէ՝ զի օրսիս

յերուսաղէմ յուխտատեղիս 'ի Գողգոթա, և 'ի սահմանեալ տուրս, հրովարտակաւ նախագահութիւնն է Լատինաց, նմանապէս ըստ սովորութեան և ըստ զօրութեան կայսերական դաշնագրին, որպէս 'ի կոստանդնուպոլիս, նոյնպէս և յայլ տեղիս յորժամ ժողովիմք ընդ ազգս քրիստոնէից, միշտ նախագահութիւնն սեփհական է Լատինաց. և ապա մատոյց զդաշնագիրս և զայլ գրեանս, որոց իմաստքըն հաստատէին բանից իւրոց. եւ 'ի հարցանել դատաւորին ցայլազգիս ոմանս. նոքա եւս պատասխանի եւ ասեն, այր ձեռն մեան փականք երից դրանց եկեղեցւոյն Բեթղեհէմի, նա յամենայն ժողովս նախագահ բազմի, և այժմ փականքն այնոքիկ են 'ի ձեռս Լատինաց. և դատաւորն հաստատեաց զնախագահութիւն նոցին եւ արգել զՅոյնս.

Յովհաննէս վարդապետ տեղակալ, դնէ երկաթ 'ի պատուհանս Բեթղեհէմի վանաց. եւ զկնի քննութեան դատաւորի, եհից զմի բերանն ջրհորոյն, որ 'ի վերայ ճանապարհին. յորմէ լնուին այլազգիք Սիոնի քարինս եւ հողս, և մնաց մի բերանն 'ի ներքս 'ի վանս Ս. Փրկչի. և դատաւորն գրեաց առ բնակիչս Սիոնի չհակառակիլ ընդ Հայոց վանն ջրհորոյն.

Լատին կղերք ունէին ոմս յաւուրց անտի Անդրիաս Պատրիարքին Հայոց, որ նորոգեաց զգերեզման Ս. Կուսին եդեալ 'ի մտի հատուցանել չարիս Հայոց 'ի դիպող ժամանակի, որոյ վասն գրգռեցին զլուսաւարսն իբրեանց դերեզմանի Ս. Աստուածածնի հակառակիլ միաբանացն Հայոց, և 'ի բաց վանել անտի զուխտաւորս նոցա, որպէս թէ չունիցին նոքա անդ իրաւունս. զի եկեղեցին և գերեզմանն սեփհական իցէ միայն Լատինաց. Զայսպիսի անկարգութիւնս Լատինաց աղդ արարին Հայք դատաւորի քաղաքին, եւ մատուցին զհրովարտակս և զգրեանս վասն սեփհականութեան իւրեանց. Եւ դատաւորն եւս ընթեռնուլ զնոսա 'ի ժողովի անդ, յորում էր եւ Թարգմանն Լատինաց Մանուէր եւ ետ կոչել զերկոսին այլազգի դռնապանս դերեզմանի Ս. Կուսին. զի 'ի սմին ժամանակի 'ի ձեռս նոցա էր փականք դրանն, եւ ըստ Թարգմանն Յունաց, զլուսաւարսն տաճարին Ս. Յարու-

թեան, զպատրա Տաւուտ, և զմնանս յայլազգեաց, և եհարց ցնոսա. թէ արդարեւ ըստ զօրութեան վաւերական գրոց՝ կատարե՞ն Հայք զպաշտօնս իւրեանց ՚ի գերեզմանի Ս. Կուսին, և նոքա ասեն՝ այո՛. զի ունին անդ յատկացեալ տեղիս, և սահմանեալ օրս և ժամանակս. գնան անդ ուխտաւորք, ուխտաւորք և ժողովուրդք նոցա առանց հակառակութեան ուրուք, որպէս հրամայեալ են առաջին թագաւորք. լուեալ դատաւորին զայնոսիկ, հրաման ետ Հայոց անխափան կատարել զպաշտամունս իւրեանց ըստ առաջին սովորութեան. և պատուէր ետ Լատինաց չընդդիմանալ Հայոց։

Այլազգիք երուսաղէմի ոչ երբէք դադարէին ՚ի հակառակութենէ իւրեանց, որպէս ՚ի ամէն ամի Փաղլալեահ անուն ոմն՝ ՚ի ժառանգաց Շէյխ Ահմէտ տէճենեայ ամբաստան եղեւ զՅովհաննէս վարդապետէն, թէ գերեզմանատունն և տեղին Ս. Փրկչի վանաց լեալ էին ՚ի կալուածոց հաւուն իւրոյ, և խնդրեաց ՚ի դատաւորէն պատուէր առ Հայոց յանձնել ինքեան զայնոսիկ տեղիս, և կամ հաւուցանել վարձս ամ ըստ ամէ։ Կոչեցաւ Յովհաննէս վարդապետ տեղակալ, այլ ՚ի բաց մերժեաց զխնդիրս նորա, հաստատելով վաւերական գրովք թէ տեղիքն այնոքիկ սեփհական են ազգին Հայոց, և ժառանգեալ են ՚ի սկզբանէ անտի, ուր թագն նաեւ զննջեցեալ իւրեանց. Շէյխ Սալէհ յարոյց զխնդիրս զայս յաւուրս Անդրէաս Պատրիարքի և ՚ի թարգմանութեան Աստուածատուր վարդապետի, այլ ոչ կարաց հաստատել և շահիլ ինչ։ Իրրեւ յայտնի եղեւ ստութիւն նորա, մերժեցաւ յատենէ դատաւորին, և վերստին հաստատեցաւ իրաւունքն Հայոց։ Առաջի արար Յովհաննէս զգրեանն, և ընթերցեալ դատաւորին, մերժեաց զՇահալլահ յատենէ իւրմէ իրրեւ զստախօս, և վերստին գրով հաստատեաց զժառանգութիւնս Հայոց։

(1714)։

Գործք տեղական. Պարոյր սիմոնեան Երուսաղէմի և թշուառութիւն նորա։ Յովհաննէս վարդապետ Բաղիշեցի եւ երաշխաւորութիւն նորա։ Գայիքեանցի Յովհաննէս։ Ընտրութիւն Գրիգոր վարդապետի և բաժանումն Պատրիարքութեան Երուսաղէմի։

Արդ՝ յետ վիճաւորելոյ զպատրիարքութիւնն Երուսաղէմի ընդ պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ, Պապա վէքիլ Նազր Ղալղիմալ անուամբ եկեալ տեղակալէին սուտ յերուսաղէմ, և գործէին զանսանելի չարիս, որպէս երկար գրէ ցաւագին բանիւք Հաննա վարդապետ ականատես։

Եւ ՚ի լինիլ այսմ այսպէս՝ զտուրս ողորմութեան ուխտաւորաց, որք կամէին գնալ յերուսաղէմ, առնուին անդ ՚ի Կոստանդինուպօլիս, եւ տային թուղթ ՚ի ձեռս նոցա, թէ վճարեաց սուտ զպարտաւորութիւն իւր։ Եւ զի գնէին ոմանք իրրեւ զմուխթարմայ զտեղակալութիւնն զայն, և ՚ի հասանիլ ուխտաւորաց յերուսաղէմ՝ Գործակալք տեղւոյն որոց չէր եւս էր լրացեալ պայմանեալ ժամանակն, բռնութեամբ առնուին ՚ի նոցանէ՝ զոր ինչ և կամէին. ամէն իրի սկսաւ նուազիլ թիւ ուխտաւորաց ամ յամէ։ Եւ երբեմն առաքէին զփոխանակագիրս՝ զի Տեղակալք վճարեացեն զայն յայլուստ եկեալ ուխտաւորաց. Եւ երբեմն չդնէին անդ զազգականս և զծանօթս իւրեանց՝ որդւովք և ընտանեօք, որք բաղումք ՚ի նոցանէ այն ինչ վերծեալք ՚ի բանտից և ՚ի կապանաց. և երբեմն եւս զքահանայս ոմանս վարակեալս տգիտութեամբ՝ վարել զպաշտօն Պատրիարքի, և իբրաքանչիւր ամի տային բերել զկնդակս յերուսաղէմէ լցեալս ամենատաւիկ ստութեամբ, եւ ընթեռնուին յեկեղեցիս հանդերձ ծանուցմամբ յատենի, թէ ՚ի ձեռն Տեղակալացս մերոց զայս քան բարիս արարաք տանն Ս. Յակոբայ. իսկ ընդ հակառակն՝ ՚ի հասանիլ նոցա յերուսաղէմ, բռնացեալ ՚ի վերայ միաբանից տառապէին զնոսա, և խոնարհեցուցանէին ՚ի կամս իւրեանց. իշխէին տիրաբար ՚ի վերայ եկեղեցական դաւուց, օգտեալ յեպիսկոպոսէ՝ մինչեւ ցաղքատա

կրօնաւորն, Զծերսն 'ի բանս մատնէին և զերիտասարդս 'ի գանս և 'ի կալանս և յաքսորս իսկ· զվարդապետս հալածէին՝ զի մի' քարոզեսցեն զՃշմարտութիւն Բանին կենաց· իսկ եթէ հանդիպակիր ոք հակառակ նոցին բան ինչ խօսել, գանակոծ և վատահարեալ հալածէին զնա, եկն 'ի սմին ժամանակի 'ի Կոստանդինուպոլիս Յովհաննէս վարդապետ Բաղիշեցի՝ միաբան Ս· Կարապետի՝ որ 'ի Տարոն, 'ի ժողովել զողորմութիւն վասն նորոգութեան վանացն, որոյ առաջնորդ էր Գրիգոր վարդապետ Ամրոսեցի, որպէս գրի 'ի մեծ և 'ի փոքր կնիքս նորին, կամ Բաղիշեցի· Եւ երկոքեան սոքա Գրիգոր եւ Յովհաննէս էին աշակերտք վարդանայ վարդապետի՝ առաջնորդի վանացն Ամորդւոյն՝ որ 'ի Բաղէշ, յորմէ երկոքեան եւս կոչեցան Բաղիշեցի·

Եւ զի սա ինքն Յովհաննէս վարդապետ ունէր պարկեշտ վարս, և խոհական միտս և առատութիւն բանից 'ի քարոզս, Պատրիարքն Կոստանդինուպոլսոյ Սահակ վարդապետ՝ սիրով ընկալաւ զնա·

Տեսեալ և մեծամեծացն Հայոց՝ խորհուրդ արարին 'ի միջի իւրեանց, առաքել զայնպիսի այր առաքինի՝ որ զօրաւոր է 'ի բանս եւ 'ի գործս, յերուսաղէմ· ճար առնել Աթոռոյն Ս· Յակոբայ՝ եւ հնարս գտանել ազատութեան 'ի պարտուց· Ապա միակամ հաւանութեամբ ընտրեցին զնա Տեղակալ Երուսաղէմի եւ Փոխանորդ Պատրիարքի, եւ առաքեցին անդր, որպէս և ինքն ասէ· հրաւիրմամբ և սահմանիւ աստուածասէր ժողովրդոց եւ յորդորմամբ Տեառն Իսահակայ Պատրիարքի գահին Ս· Սպիտակայ, հարկեցաք առնել զողորմութիւն հաւատացելոցն 'ի Ս· Երուսաղէմ, և ծառայել Աստուածակոս Տեղեացն· Ցղեցին ընդ նմա և զիսրայէլ վարդապետ, որ կոչեցաւն Պօղոս, իբր գործակից նմա· Իբրեւ եհաս Յովհաննէս վարդապետ յերուսաղէմ, և ետես զաղետալի վիճակ վանացն և եկեղեցւոյն, որպէս ինքն ասէ· այնպէս հարին ազահութեան ախտիւ, մինչ չԹողուլ 'ի նմա մնան առողջութեան· եւ զանազան ամենայն զրուԹեամբ ազատել զայն 'ի թշուառութեանց անտի· Ազատեաց զմին 'ի վանօրէից 'ի վաճառելոյ, զոր եդեալ էին 'ի գրաւ, և զկանԹեղս Գերեզմանին Քրիստոսի՝ 'ի Լատինաց, և զպարտէզն Ս· Հրեշտակապետի, որոյ վասն կրեաց բազում տառապանս և զրպարտութիւնս յայնց պարտատէրց, որք համակամ էին կողոպտիչ եղելոցն·

Մինչդեռ նա յայսպիսի իրս պատաղեալ էր, վարեցաւ 'ի Պատրիարքութենէ Սահակ վարդապետ եւ նստաւ 'ի տեղի նորա Յովհաննէս վարդապետ Գանձակեցի· Եւ սա առաքեաց յերուսաղէմ զարս չորս, որք յառաջագոյն իսկ բազում չարիս հասուցեալ էին վանացն Ս· Յակոբայ· Եհաս գուժ առ Յովհաննէս վարդապետ, որ այն ինչ յուզարկեալ էր զբաստաւորս 'ի տեղիս իւրեանց· Թէ ահա գայ Պալիքեսիրցին ընդ ուխտաւորս փոխանորդ և վիքիլ· Եւ զկնի սակաւ աւուրց եկն եմուտ յերուսաղէմ ընդ արբանեկօք իւրովք·

Եւ զկնի աւուրց լինչ ձեռնարկեն 'ի կահ և 'ի կարասիս տանն, և ժողովեալ զամենայն ալընձեղէնս 'ի միւսմ գիշերի գաղտագողի իջուցին 'ի Յոպպէ, և անտի յԵգիպտոս, և զայլ իրս յայլ տեղի· զի համարձակ վաճառեսցեն, եւ զմեծամեծ խալկինան, զորս չինեալ էր Գրիգոր Պարոն Տէր, եւտուն քաղաքապետին 'ի տուգանս, որք են այժմ 'ի Քերրոն 'ի ձեռս այլազգեաց՝ վկայ չարութեանց նոցին· Զառունս և զպարտէզս և զայլ կալուածս վանացն, առ երեւոյթ իրրեւ Թէ 'ի գրաւի դնէին, բայց 'ի ծածուկ վաճառէին· Ապա խորտակեցին զամենայն անօթս եկեղեցւոյ զարծաԹեղէնս և զոսկեղէնս, զխաչս, զսկիհս, բուրվառս, տապանակս, քշոցս, և զկանԹեղս, եւ վաճառէին այլազգեաց անարգ գնով· 'ի բաց հատեալ նուագեցուցին զգեղահ կերակուրն մխարանաց մեռցելոց, և յետոյ խոպան փակեցին զնստեսատունն· Եւ 'ի գալ նոր Տեղակալաց՝ ամօրեայ ժամանակաւ կագէին ընդ միմեանս· նորքն հնոց վրէժխնդիր, հինք նորոց քինառուք· մատնել լեալ իրեարց անկանէին 'ի տուգանս, եւ վատնէին զարդիւնս ժողովրդոց 'ի յադուրդ կրից իւրեանց· Դէզադէզ բարդեալ կուտեցան տոհմատուր պարտք եւ ոչ գոք գտանէին այնուհետեւ առնուլ դրամս, Թէեւ կաշառս խոստանային երաշխաւորաց ընդ գրաւսն, մինչ 'ի գալ նոր ուխտաւորաց· այլ ոչ ինչ օգտեցան, զի բարձեալ էր 'ի նոցանէ յոյս հաւատարմութեան· Զայս ամենայն տեսեալ պար-

տատեարց՝ բողոք բարձեալ աղաղակէին. թէ ահա կրեան դրամքն մեր. ապա հանին 'ի վաճառ զընացեալ անօթս եկեղեցւոյ, զորս եդեալ էին 'ի գրաւի՝ 'ի ձեռն Հրէից: Եւ ամանք 'ի պարտատերաց դնացեալ 'ի վանս՝ կապէին զերիվարս խուրանց 'ի կոշնակէ և 'ի դրանց եկեղեցւոյն, և ասային կրծել զնոսա և տաշել: Փակեցան դրունք եկեղեցւոյ յահէ պարտատերաց և խափանեցան պաշտօնք եւ պատարագք, 'ի մոռացօնս եղեն սահմանք վանականութեան և կրօնաւորութեան. զի տեղակալք կանամբք, որդւովք և դստերօք պերճացեալ ճոխանային՝ օտարացեալք յԱստուածային օրինաց՝ և 'ի կարգաց պարկեշտութեան. Թագին զեկեղեցական արարողութիւնս եւ զկարգաւորութիւն հանդիսաւոր Թափօրաց. եղեալ նշաւակ եւ այսոյ հատականաց առաջի օտարաց, և առիթ յափշտակութեան ազգային իրաւանց: Համարձակեալ այնուհետեւ պարտատերք՝ դիմէին 'ի սենեակս միաբանից հանդերձ զինուորօք՝ խորտակէին զդրունս և զլուսամուտս, և զդիշերն ողջոյն չրջէին սենեակ 'ի սենեկէ, և ոմանք այր և անդր 'ի դարանի նստէին, հայհոյէին և թքանէին յերեսս ծերոցն. ապտակէին և կռիւահարէին՝ և կալեալ զհերացն դարչէին արտաքս, և յափշտակէին զոր ինչ միանգամ զըտանէին անդ: Եւ յաւուրս կիւրակէից 'ի բանալ եկեղեցւոյն՝ դիմէին անդր և ելանէին մինչեւ 'ի բեմն յափշտակել զսկիհն 'ի ձեռաց նուիրագործողին, եւ այսպէս հասեալ էր ազգ Հայոց յետին անարգութիւն, զի 'ի սմին ժամանակի 'ի նախատինս համարեալ էր յերուսաղէմ անուանդ Հայ:

Իբրեւ տեսին պարտատերք, թէ ոչ դոյ այլ եւս յոյս առնելոյ զդրամս խուրանց, զի սպառեցաւ ամենայն ինչ, հանին 'ի Կոստանդինուպօլսոյ հրաման Սրքունի վաճառել զամենայն կալուածս, և առնուլ զպարտսն. Հ. Մ. Զամչեան յաւելուս ասէ, զրնակարանս և զվանս Ս. Յակոբայ. Հա. Գ. Եդե. 771: Սակայն չիք այս 'ի պատմութեան Հաննէի և ոչ 'ի ձեռագիրս:

Լուեալ զայս Տեղակալաց, խորհեցան նախ վաճառել զվանս Ս. Փրկչի. զայսպիսի լուր առեալ միաբանից, որք մնացեալ էին սակաւ թուով, անկան 'ի դրունս պարտատերաց՝ բողոքելով եկեղեցականք և աշխարհականք, և բազում աղաչանօք և դառն արտասուօք աղաչէին զնոսա, սարի մի եւս հարկերել. և նոցա գթացեալ յարտասուս նոցա՝ թէպէտեւ լուան պաղատանաց նոցին, բայց խնդրէին երաշխաւորս: Դիմեալ նոցա առ Յովհաննէս վարդապետ, աղաչեցին զնա յանձն առնուլ զայն երաշխաւորութիւն, եւ տարան զնա 'ի դատարան, զի անդ էին ժողովեալ ամենայն պարտատերք: Տեսեալ նոցա զՅովհաննէս վարդապետ, հաւանեցան ընդ նա, եւ ընկալան զերաշխաւորութիւն նորա, և առին 'ի նմանէ զուարկայ օրինօք զատարանի այսպիսի պայմանաւ, թէպէտ տալ նմա ամ ի-և ինքն ամ յամէ փոքր փոքր վճարեսցէ զամենայն պարտսն:

Եւ ապա առեալ տարան զնա հանդերձ մխարանօք առ Բդեշխն. պատմեցին նմա զդաշն զոր եդին՝ ցուցանելով զուարկան Յովհաննու: Եւ Բդեշխն հաճեալ ընդ այն, դարձեալ զՅովհաննէս վարդապետ, և զդեցոյց նմա վերարկու պատուոյ եւ արձակեաց 'ի վանս. եւ ինքն գրեալ ծանոյց զայս ամենայն 'ի Դուռն, Դարձ արարեալ անտի Յովհաննու 'ի վանս՝ ժողովեաց զմխարանսն, և յուսադրական բանս 'ի վանս՝ ժողովեաց զմխարանսն, և սկսաւ խորհիլ ընդ նոսա, յորոց մէջ էր եւ Հաննա վարդապետ, որ պատմէ զայսոսիկ, և գտեալ զհատարակաց կնիք վանից, խորտակեաց զայն, զի ամենայն Տեղակալք զուարկան պարտուց նովին կնքով կնքէին, և կոչէր կնիքն այն Օբէյ Դէհէ-ըէ՞, յորոյ վերայ գրեալ կայր անուն վանից Ս. Յակոբայ:

Զայս այսպէս արարեալ Յովհաննու վարդապետի, եւ 'ի կարգի եդեալ զիրս վանից՝ էլ և գնաց 'ի Կոստանդինուպօլիս (1715), եւ մատուցեալ առ մեծամեծս Հայոց, ծանոյց նոցա զամենայն ինչ, եւս և զերաշխաւորութիւնն իւր, և նոցա հաւանեալ դովեցին զնա, և հնարէին 'ի գըտնել զիրան: Իսկ Յովհաննէս վարդապետ յայտարար նոցա եւ ասէ. այն վճարումն պարտուց ոչ ինչ օգտ ունի Սբ-ոտն, բայց եթէ դիցի եւ յայն Սբ-ոտ առանձին յատուկ Պատրիարք, որպէս էր յառաջադոյն, զի հայրապետը նամ զբով հոգ տարցի այնմ:

Հաւանեալ սմա մեծամեծացն Հայոց, յաւուր միում ժողովեցան առ նա, յորոց մէջի երեւելի էր Ակնցի եպե-

ւանենց Սեղբոս Ամիրայն, եւ ասեն՝ եթէ կամիս դի այս իրք բարւոք կատարեսցի, ե՛կ լե՛ր դու նախ Պատրիարք Կոստանդինուպօլսոյ, և ապա դու ինքնին զո ոք և կամիս, արա Պատրիարք Երուսաղէմի։ Այլ նորա հրաժարեալ՝ ասէ՝ այդմ չէ հնար լինել, դի եթէ յետ տարւոյ միոյ ընկեսցեն զիս ՚ի Պատրիարքութենէ, որպէս արարին բաղմաց, ես յայնժամ ուստի՞ կարացից վճարել զպարտսն Երուսաղէմի, և զերաչխաւորութիւնս իմ ընուլ։ Պատասխանի եառն և ասեն, ոչ թոյլ տամք մեք այդմ, և կամք ՚ի պատրաստ ոչ միայն պաշտպանել զքեզ, այլ եւ զամենայն արգելսն վանել, և զամենայն հնարս հնարել, մինչեւ զերծանիցիս դու յերաչխաւորութենէ քումմէ։ Ընդ այս հաւանեցաւ և Յովհաննէս Դանճակեցի, և խոստացաւ կամովին հրաժարիլ ՚ի Պատրիարքութենէ։

Եւ իբրեւ յանձն առ Յովհաննէս վարդապետ Բաղիշեցի զինդիր նոցա, նոյն ժամայն նստուցին զնա Պատրիարք, ոչ գոլով դեռ եւս եպիսկոպոս, որ եւ իբր մականուամբ Կոյտ կոչեցաւ (1715) ՚ի 16 Սեպտեմբեր ամսոյ, յաւուր ուրբաթու։ Եւ ՚ի վաղիւ անդր նա ինքն Յովհաննէս ետ յիշատակել առաջի սեղանոյն զՊրիդոր վարդապետ, զառաջնորդ Ս. Կարապետին՝ իբր Պատրիարք Երուսաղէմի, և զնոյն ետ առնել յայլ եկեղեցիս եւս ծանուցմամբ։

Այլ մինչդեռ յերուսաղէմ էր Յովհաննէս վարդապետ, եկն յարքունուստ հրաման առ դատաւորն Երուսաղէմի, որով խնդրէր տեղեկութիւն զորպիսութենէ Պալիքեսիրցի Յովհաննէսի, որ ամօք յառաջ աքսորեալ էր յԱվրատ ատտաի կոչեցեալ կղզին, և բանտարկեալ անդ։ Քննել եւ իմանալ ատուգիւ, թէ ո՞րպիսի ոք էր նա, եւ զի՞նչ լինչ պատահեցան ՚ի ժամանակի նորին։ զայս ամենայն պարագայիւք ծանուցանել ՚ի Դուռն։ Եւ նորա ժողովեալ զայլազգիս քաղաքին, եհարց ցնոսա, և նոքա եառն պատասխանի և ասեն, էր նա այր չարագործ, զրպարտիչ և խառնայն և ասեն, էր նա այր չարագործ, զրպարտիչ և խառնայն և ասեն, որպէս նախորդ դատաւորն Երուսաղէմի գրեաց զնմանէ, և զտանի արձանագրութիւնն ՚ի տումար դատարանի, եւ գտեալ զայն ընթերցան առաջի նորա, յորում գրեալ էր այսպէս. «Գվնաւորք այլազգեաց Երուսաղէմի և միաբանք Հայոց, հաստատեցին ՚ի վերայ Յովհաննիսի՝

թէ ոչ միայն է այր անօրէն և չարագործ, այլ և առհասարակ կոչէին զնա Մ--ը-ր, այսինքն ուրացող, եւ ՚ի քննութեան պահու յայտնի եղեւ նենգութիւն եւ դաւաճանութիւն նորին, դի զերաւունս և զղջմութիւնս նուիրեալս յեկեղեցւոյ, յանուն վանացն Ս. Յակոբայ, վատնեալ ոչնչացոյց ՚ի կաս իւր, և ՚ի ժամանակի փոխանորդութեան իւրոյ յաւել նաեւ պարտս ՚ի վերայ Աթոռոյն, եւ ՚ի պահու քննութեան հաշուոյ նորին, պարտաւորեալ գտաւ 5500 դահեկան, որոյ վասն միաբանք վանացն ընկեցին զայն ՚ի փոխանորդութենէ օրինօք դատարանի, և ՚ի տեղի նորա եդին զԵդիազարոս վարդապետ. ՌՃԻԳ (1711)։ Յետ այնորիկ՝ արք երեւելիք, որք ձեռնարկեալ էին ՚ի գիրն յայն ՚ի ժամանակին յայնմիկ, պատժեցին զամենայն եղեալսն՝ որք ականատես իսկ էին չարութեան նորին։ Իբրեւ եհաս այս լուր ՚ի վանս Սրբոյն Յակոբայ, դիմեցին անդր Յովհաննէս վարդապետ Վէքիլ և այլք ՚ի միաբանից, և բողոք բարձեալ զանկատէին զանիրաւութենէ բանտարկեալ Յովհաննիսի, և կոչէին զնա այր անօրէն և ժանտ, յայտ արարեալ յատենի անդ զամենայն գործս նորա։ ապա յաւելին ասել՝ թէ չունիմք հաւատարմութիւն ՚ի վերայ նորա, զի նա ուրացութեամբ և անկրօնութիւն ՚ի վերայ նորա, զի նա ուրացութեամբ և անկրօնութեամբ իւրով հռչակաւոր է ՚ի մէջ քաղաքիս, որոյ վասն արքունի հրամանաւ բարձաւ աստի՝ և աքսորեցաւ, և ցարդ բանտարկեալ կայ ՚ի կղզւոջն։ լուեալ զայս ամենայն դատաւորն գրեալ ազդ արար ՚ի Դուռն, ՌՃԻԳ (1714)։

Եւ ՚ի նմին ժամանակի Թագաւորն էր յԱդրիանուպօլիս, դնացին մեծամեծք Հայոց անդր՝ կոչեցին և զկնատլիս, դնացին մեծամեծք Հայոց անդր՝ կոչեցին և զկնատլիս, բացի Մելիտոնն, որ երեւելի էր յայնմ ժամանակի ՚ի Դուռն։ զի առցեն հաւանութիւն վասն նորոգ Պատրիարքաց՝ և հրովարտակ։ Տարան և զՅովհաննէս վարդապետ անդր՝ և հանդերձ առաջնորդաւ տեղւոյն, որ էր Աբրահամ վարդապետ ծերունի։ ծախեցին բազում ինչ՝ և մատուցին դէր աղաչանաց առ Թագաւորն, և նա խոստացաւ կատարել զինդիրս նոցա, եւ ինքնանք դարձան յետս։ Իսկ Սրբոյ հրամայեաց յակնարկել յարձանագիրս կայսերական դիւանին՝ և դտաւ Պատրիարքութիւնն Երուսաղէմի

'ի վերայ Գանձակեցի Յովհաննէս վարդապետի, որ յառաջագոյն 'ի փախստեան իւրում 'ի Պարսկաստան, ըմբռնեցաւ 'ի ճանապարհի և եղաւ 'ի բանտի, և բարձեալ 'ի նմանէ պատիւ Պատրիարքութեան Կոստանդինուպոլսոյ։ Բայց Երուսաղէմայն մնացեալ 'ի վերայ նորա, չարչարեաց զաղքատս, և դատապարտեաց զնոսա 'ի տուժս և 'ի տուգանս եւ ըստ ցանկութեան սրտի իւրոյ՝ եկեր եւ վատնեաց զինչս և զստացուածս եկեղեցեաց և վանօրէից, ուրոյ վասն դատապարտեցաւ նա 'ի պատիժ պատուհասի։

Իմացեալ զայսոսիկ Արքայի, հրամայեաց բաժանել զՊատրիարքութիւնն Երուսաղէմի 'ի Կոստանդինուպոլսոյ։ և մի եւս համարձակիլ ումեք միաւորել զայն։ Յովհաննէս վարդապետ կացեալ անդ յԱդրիանուպոլիս, էսա զերկուս հրովարտակս. զմին վասն իւրոյ Պատրիարքութեան ՈՒՀԹ (1717), և զմիւսն վասն Պատրիարքութեան Գրիգորի վարդապետի 'ի վերայ Երուսաղէմի ՈՒՀ (1718), և դարձաւ 'ի Կոստանդինուպոլիս։

Բայց զհրովարտակն Պատրիարքութեան Երուսաղէմի, որ մինչեւ ցայն վայր վոխոխեալ և այլայլեալ էին Տեղակալք 'ի չխոթութեան խրթանց, եւս յղկել և նորոգել և գրեթէ վերստին ձուլել զայն. գրեալ 'ի նմա ուրոյն ուրոյն իշխանութիւն Պատրիարքին, և բովանդակ իրաւունք և սեփհականութիւնք աղքին, ըստ մտաց առաջնոյ հրովարտակաց. և այս գործ տեւեաց բավանդակ ամ մի և ամիսս ութ, Եւ 'ի դարձին իւրում 'ի Կոստանդինուպոլիս, արար ժողով մեծ յեկեղեցւոջ Ս. Աստուածածնի, եւ եւս գրել նոցա Թուղթ աղաչանաց յիշմիածին առ Աստուածատուր Կաթուղիկոս Համատանցի, զի հրամայեսցէ սոխակոսացն զՊրիդոր եպիսկոպոս, զառաջնորդն Ս. Կարապետի գալ 'ի Կոստանդինուպոլիս վասն Պատրիարքութեան Երուսաղէմի, քանզի կասկածէին՝ թէ նա ոչ առնու յանձն գալ անդր. գրեցին առ նա և ինքեանք եւ աղաչեցին, զի մի յապաղեսցէ գալ, եւ առաքեցին զբան երեւելիս հրաւիրել զնա։

Հաճեալ յոյժ ընդ այս կաթուղիկոսին, գրեաց առ Գրիգոր եպիսկոպոսն, եւ հարկեցուցիչ հրամանաւ բանադատեաց զնա յանձն առնուլ գայն իշխանութիւն յօգուտ ազգին, եւ նորա ակամայ կամաք զիջեալ՝ եկն 'ի Կոստանդինուպոլիս (1717) յամենայն Օգոստոսի 'ի տօնի Վերափոխման Կուսին, զոր ամենայն սիրով և պատիւ ընկալեալ ժողովրդեանն՝ վաղվաղակի գրեցին Թուղթ առ միաբանսն Ս. Յակոբայ, և ծանուցին նոցա զեղեալսն. եւ կոնդակաւ կարգեցին Աթոռակալ տանն Երուսաղէմի զնոյն ինքն Հանննա (Յովհաննէս) վարդապետ Երուսաղէմացի, մինչեւ գնասցէ անդր Գրիգոր վարդապետ։

Իսկ ինքն Գրիգոր Պատրիարք մնաց առ ժամանակ մի 'ի Կոստանդինուպոլիս, զի 'ի միասին ընդ Յովհաննու վարդապետի հոգասցեն վասն այնչափ դիզացեալ պարտուց Աթոռոյն, որ հասեալ էր 9800 քսակ։ եւ այնչափ եղեւ վերջ նորա վասն այսր, մինչեւ զարմացուցանել և զայլազգիս։ Էարկ ապա 'ի պարանոց իւր զերկաթի չղթայ ծանր, և աղխեաց զայն, և ուխտեաց Աստուծոյ ոչ առնուլ 'ի բաց զչղթայն յանձնէ իւրմէ, մինչեւ նա ինքն այդ արասցէ տառապանաց Աթոռոյն. եւ յաւուրս տօնից կացեալ 'ի դրան եկեղեցւոյ Ս. Աստուածածնի չղթայիւք իւրովք՝ ձայնէր լալով առ ժողովուրդսն, որք մտանէին յեկեղեցի, ասելով առ նոսա 'ի դիմաց Աթոռոյն երուսաղէմի. ողորմեցարուք, ողորմեցարուք ինձ, հաւատացեալքդ Քրիստոսի, զի տունն իմ 'ի գրաւի է, և որդիք իմ հեռացեալ են յինէն, և ես մատնեալ 'ի դերութիւն. նըստեալ եմ 'ի սուգ գառնութեան, ողորմեցարուք ինձ. հանէք և լուծէք զծանրութիւն պարտուցս՝ որք դիզեալ են 'ի վերայ իմ. ես Աթոռ էի Առաքելոյն Յակոբայ, այժմ Աթոռ եմ պարտուց, և ոչ ոք է որ ձեռն կարկառէ ինձ։ Զայսպիսի գործ գործեալ սորա՝ չարժեաց զժողովուրդն առհասարակ 'ի գութ, և ժողովեաց բազում ինչ յօգնութիւն Աթոռոյն։ եւ այն չղթայքն նորա մնացին 'ի պարանոցի նորուն ամս 8, եւ վասն այսր պատճառի կոչեցաւ Շղթայակիր, և այլազգիսն Զինճիրլի վարդապետ։

Այլ 'ի ժամանակի աստ՝ մինչդեռ 'ի Կոստանդինուպոլիս էր Շղթայակիր Գրիգոր Պատրիարք, և 'ի միասին ընդ Յովհաննու վարդապետի վոխի տանէր վասն թեթեւութեան պարտուց Երուսաղէմի՝ եղեւ հրիւղութիւն մեծ 'ի քաղաքի անդ, և այրեցան բազում տունք և ոգիք, ընդ

որա և եկեղեցի Ս. Աստուածածնի և Պատրիարքարանն։ Զայս տեսեալ երկուց Պատրիարքաց՝ գրեթէ յուսահատեցան յառաջադրութենէ իւրեանց. զի ոչ գիտէին՝ թէ յինչ ձեռն արկանիցեն, ի պաշտօն երուսաղէմ՝ թէ ի չինութիւն եկեղեցւոյն. քանզի անհամար ծախք պիտոյ էին վանն հրաման առնլոյ յարքունուստ առ ի չինել զայն, և անհամար ծախք եւս առ ի դնել զնիւթան՝ և ի կատար հասուցանել զչինուածն։ Բայց այսու ամենայնիւ յուսացեալ ի խնամն Ս. Աստուածածնի, չանացան և առին ըզհրամանն՝ և չինեցին զայն. անճամբ անձին ընդ գործառոյս աշխատելով ի մէջ հողոյ և փոշւոյ, որոց ձեռնտու եղեն յամենայն իրս Ակնցի Սեդրոս Ամիրայն, Կեսարացի Մելիտոնն և Յարութիւնն և Սարգիս Գալշեան։

ԳԼՈՒԽ ԾԵ.

Նորոգութիւն գմբեթի տաճարին Ս. Յարութեան, և բաժնի Լատինաց։ Նորոգել Ցունաց զբաժին տեղւոյս իւրեանց. Քննութիւն նորոգութեանց։ Նորոգութիւն բաժնին Հայոց ի տաճարի անդ։ Վէճ Ցունաց ընդ Հայոց առ հանդիսի լուսատոթեան։ Ազդեալ Սինանի. Դատաստանք գիւղականացն Բեթղեհէմի։

Այլ մինչդեռ պարապեալ էին Գրիգոր և Յովհաննէս վարդապետք ի գործ չինուածոյն Ս. Աստուածածնի, Դեսպանն Դաղղիոյ մատոյց գիր ազաչանաց առ Սուլթան Ահմէտ Գ. և խնդրեաց հրովարտակ ի նըմանէ՝ նորոգել զմեծ գմբեթն տաճարին Ս. Յարութեան, եւ զայլ բաժին տեղւոյս իւրեանց՝ եւ զընծաիարանս Լատին կղերաց։ Զայս զգացեալ Ցունաց՝ դիմեցին եւ նոքա ի Դուռն և խնդրեցին հրաման ինքեանք եւս նորոգել ըզբաժին տեղւոյս իւրեանց ի տաճարի անդ։ Սակայն խնդիրն յաւէտ մեծի դէսպէտ և դաստուց գխոնարհանաց, և հարցաւ ի նոցանէ թէ՝ ներե՞ն արդեօք օրէնք Իսլամաց՝ տալ հրաման Քրիստոնէից նորոգել զեկեղեցիս իւրեանց։ Եւ վճիռ յաւէտ անտի այսպէս. «Նորոգել միայն ի վերայ նախնական դրից, չառնել ի նմա զաւելի իրա-

քան զնախկին չափն, և չյաւելուլ ինչ ի նա գէթ մատնաչափ»։ Եւ յետ այնորիկ գրեալ հարցին ցԴղեչխն Երուսաղէմի՝ թէ արդարեւ հնացեա՞լ իցէ գմբեթ տաճարին, և թէ պէտս ունի՞ն նորոգութեան այլ տեղիք և բնակարանք։ Իսկ Դղեչխն և դատաւորն բազմութեամբ այլազգեաց՝ ըստ հրամանին արարին քննութիւն յայնոսիկ տեղիս՝ զոր յիշեցաք, և յայտ արարին ի Դուռն։ Եւ ըստ այնմ գրեցաւ հրովարտակ Կայսերական (Խաթթի Շէրիֆ) և ի ձեռն ոսկիկանի և վերատեսչի առաքեցաւ յԵրուսաղէմ, ՌՃՄ (1719)։ Զայս իմացեալ Գրիգորի և Յովհաննէս՝ դիմեցին առ Դեսպանն Դաղղիոյ, եւ եդին ի միջի պայման իմն այսպիսի, ի նորոգել Լատինաց զմեծ և ըզփոքր գմբեթսն տաճարին՝ և զայլ տեղիս իւրեանց, եթէ հարկադրեսցին քակել զտեղիս Հայոց, և կամ ի քակելն պատահմամբ փլանիցի կամ անկցի՝ և կամ միւսանգամ ինչ պատահեսցի տեղւոյն Հայոց՝ չինեսցեն զայնս Լատինք ըստ առաջին կերպի, և զծախսն մի՛ պահանջեսցեն ի Հայոց, և մի՛ մխեսցեն զձեռս ի սեպհական բաժինս նոցա, և ոչ ի կանթեղս, յաշտանակս և յայլ իրս, և մի՛ պատճառեսցեն նեղութիւնս ինչ միաբանից որք բնակիցն անդ՝ նաեւ ուխտաւորաց, զայս պայման հաճութեամբ ընկալան երկոքին կողմանքն, և հաստատեցին ի Դատարանին Գալաթիոյ։

Այլ վասն նորոգութեան բաժնին Հայոց խորհէին երկոքեան ի միասին. զի չէր հնար թողուլ և լքանել զայն այնպէս առանձին հակառակութենէ եւ մեծամեծ ընդդիմութենէ, եւ թերեւս յարիշատակութեան իրաւանց։ Եւ ի ձեռնարկել նոցա յայն գործ՝ պէտս ունէին բազում դրամոց, և ինքեանք կային ի չքաւորութեան եւ ընդդմեալ ի հոգս առ ի վճարելոյ զպարտս երուսաղէմի։ Սակայն մատուցին ի չնորհս Տեառն, մատուցին և ինքեանք գիր ապաւինեալ ի չնորհս Տեառն, մատուցին և ինքեանք գիր ազաչանաց առ Արքայն ընդ մեծամեծացն Հայոց եւ բազմութեամբ եկեղեցականաց, և խնդրեցին հրաման նորոգել զբաժինս Հայոց, Ասորոց և Գաղթոց, ըստ նմանութեան երկուց ազգաց։ Եւ ընկալան զայն բազում նեղութեամբ և առաքեցին զհրովարտակն առ Հաննա վարդապետ Աթոռակալ. գրեցին և առանձին գիր յորդորական, և քաջալերեցին զնա չհայիլ ի դառնութիւն ժամանակին

և յաղթաւոթիւն Սիմոնոյն · և մի ուրեք դնել բանից օտարաց , այլ արկանել ձեռն 'ի գործ չինուածեան , զի ինքեանք պատրաստ էին օգնել նմա : Հասին թուղթք , վերակացուք և ոստիկանք յերուսաղէմ , և զկնի աւուրց ինչ կազմեցաւ առեան մեծ յապարանս Բդեչխին · դատաւորն և ամենայն մեծամեծք այլազգեաց , եկին ճարտարապետք որմնադիրք և որք միանգամ տեղեակք էին գործոց չինուածեան · հրաւիրեցան անդ Թարգմանք և Փոխանորդք երից աղգաց , և ընթերցան առաջի բազմութեան զհրովարտակս Արքային , տուեալ իւրաքանչիւր ազգաց : Ցորում չեա ծանուցանելոյ զնորոգութիւն տաճարին Ս · Յարութեան , խստագոյնս պատուիրէ դատաւորաց և վերակացուաց , չխոխել զնախնական դիրս , չչաւելուլ ինչ , եւ չանցանել զչափն և զսահմանն առաջին · եթէ ոք յանդգնեսցի դործել ընդդէմ օրինաց և կայսերական հրամանին սակս խորոց ագահութեան և զրաքաղաքութեան՝ մուծանելով փոխոխութիւնս ինչ 'ի չինուածն , այնպիսին ոչ երբէք ունի զերծանիլ 'ի պատիժ պատուհասից : Ապա եհարց առեանն ցՓոխանորդս երից ազգաց , թէ զի՞նչ են կամք ձեր , եւ նոքա ետուն պատասխանի · քննել օրինօք դատարանի զրաժին տեղիս իւրաքանչիւր ազգաց եւ թոյլ տալ նորոգել նոցա զրաժինս իւրեանց , ըստ զօրութեան կայսերական հրովարտակին : Ընկալեալ զայս առենակալս դնացին բազմութեամբ 'ի Ս · Յարութիւն , եւ ետուն քննել և չափել 'ի ձեռն ճարտարապետաց զրովանդակ տեղիս իւրաքանչիւր ազգի · և 'ի գիր հարեալ զայն՝ ետուն զմէն մի վաւերացեալ պատճէնս 'ի ձեռս իւրաքանչիւր ազգի · ապա այնուհետեւ սկիզբն արարին նորոգութեան : Հաննա վարդապետ նորոգեաց զրաժին տեղիս Հայոց , որք են · սենեակն զոդ պատուհանաւ , որ հայի 'ի վերայ արտաքին մեծի դրան Ս · Յարութեան · ամբողջ եկեղեցին վերնատան 37 վերեւից քարեայ աստիճանօք նորին · իւրաքանչիւր սեղանն և երեք կամարքն անդ , Հանդերձ բոլոր ժանեան խորանն , Լուսաւորիչ եկեղեցին 'ի վերայ այրի Գիւտոյ Խաչին , և զերիս սեղանս անդ · (այժմ երեսի միայն 2 սեղան յանուն Ս · Լուսաւորչի և Ս · Կարապետի , և զերրորդն որ անկանէր 'ի վերայ ճանապարհի Գիւտ Խա-

չին , քակեալ են լատինք) , եւ զայլ տեղիս Հայոց ընդ նոսին եւ զրաժինս Գաղթոց և Ասորւոց , Տե՛ս Գէդ- Նա Վըրդապետի · Եր՛ս 188—192 :

Տեղիքն Յունաց զոր նորոգեցին · տաճարն , զոր ինքեանք կոչեն Աչխարհամատրան , զընդհանուրն մանաւորելով · Գողգոթայն՝ միայն տեղին Խաչելութեան , չորրորդ բանան Քրիստոսի , զկենդեցին Կոստանդիանոսի · իսկ մեծ աշտարակն , որ էր յառաջագոյն զանգակատուն , աւերեալ մասամբ իւիք 'ի Սալահատինէ , կարի բարձր , չինեալ 'ի վերոյ չորից դատիկոնաց , այլ ոչ էր հրաման նորոգել զայն , զի պէտս ունէր մեծի ծախուց · և 'ի հրովարտակին քակել հրամայէր զերկոսին հարկս , սակայն և այնպէս թոզքակել հրամայէր զերկոսին հարկս , սակայն և այնպէս թողին զայն որպէս և էրն յառաջագոյն · եւ զկնի ժամանակաց կաթողիկոսին անդ Յոյնք զանգականս :

Բաժինք Լատինաց · մեծ դմբեթն տաճարին փայտակերտ ծածկեալ կապարաւ , և արձակ չորանակն 'ի ներքոյ նորին մինչեւ 'ի գլուխս սեանց եւ կամարաց · բարձրութիւն դմբեթին 7 կանդուն և 9 մատնաչափ · 11 կամարքն՝ որք կոչին Կոմբէ Խուէ · 5 կամարքն 'ի նոցանէ , որք էին 'ի ներքոյ սենեկաց Խուէ կոչեցեալ մենաստանին այլազգեաց , և 15 սենեակք 'ի վերին և 'ի տորին հարկի նորին · փոքր եկեղեցին Լատինաց , 'ի կողմն հիւսիսոյ · յատակեցին զայն հաստարակ սալիւ , քակեալ զմիւսիոնն առաջին · դահլիճն առաջի նորա յատակեցին հաստարակ քարիւ · զի յառաջագոյն գոյնզգոյն մրւսիոնով զարդարեալ էր : Զայրն Գիւտի Ս · Խաչին , 'ի Գողգոթա տեղի Տարածմանն միայն , և զերկոսին կամարան · զվերին եւ զտորին հարկս 7 կամարք Ս · Կոյսին կոչեցեալ · եւ ոմանց 'ի մարմարիոն սեանց վեսաւելոց ազուցին երկաթի չրջանակս :

Բանզի Մելիք Սալահատին 'ի տիրել քաղաքին երուսաղէմ՝ զլատորիարքարանն Լատինաց կից Ս · Յարութեան , պրոշեալ կարգեաց զայն 'ի մզկիթ , անուն եդեալ նմա Խանքէ , և չինեաց անդ այլ եւս սենեակս 'ի բնակութիւն այլազգեաց , որք և յետոյ ամ ըստ ամէ այլք եւս չինեցին անդ սենեակս մինչեւ 'ի վերոյ կամարաց և մեծի չրջանակի գմբեթի եկեղեցւոյն , եւ զի անհնարին էր նորոգել ըզ-

կամարան և զգմբեթն առանց քակելոյ զսենեակն զայնո-
սիկ։ Իսկ այլազգիք՝ որք բնակէին անդ, ոչ տային նոցա
թոյլ մերձենալ անդր։ Ի դժուարիլ գործոյն, վոխանորդն
Լատինաց խոստացաւ առաջի բազմութեան այլազգեաց,
քակել զսենեակն, և զկնի չինութեան գմբեթին՝ վերըս-
տին չինել զայնս իւրովք ծախիւք ըստ առաջին կարգի։
Ցանձն առին զայս պայման այլազգիքն, և ետուն չափել
ճարտարապետին զամենայն սենեական իւրաքանչիւր պա-
րագայիւք, և ապա քակեալ զայնս, յետ չինութեան գըմ-
բեթին, վերստին չինեցին զնոսա, որոց 2 պատուհանքն
հայէին ի տաճար անդր Ս. Յարութեան, որ և փակեալ
խափանեցան յետոյ։

Զկնի աւարտման նորոգութեանց և չինութեանց, եկին
Բդեշխն և դատաւորն բազմութեամբ այլազգեաց ի տա-
ճար անդր, ընդ որս էին ռասիկանք դրանն և ճարտարա-
պետք, և չրջեալ յամենայն տեղիս արարին մանրամասն
քննութիւն ի բաժնի իւրաքանչիւր ազգաց։ և զարդիւնս
քննութեան հարեալ ի գրի՝ առաքեցին ի Դուռն, որպէս
պատուիրեալ էր նոցա յառաջագոյն։ Այլ իրրեւ կամեցան
ծեփել և սպիտակացուցանել զնորոգեալ տեղիսն, ոչ ետուն
թոյլ Բդեշխն և որոց ընդ նմա, զի յառաջագոյն հրովար-
տակաւ արգելեալ էր զայն Սրբոյն։ Ապա միաբանեալ Փո-
խանորդաց երից ազգաց, բազում թախանձանօք ածին ի
հաւանութիւն զմիտս դատաւորաց, ցուցանելով նոցա զչնա-
ցեալ ծեփս և զզանազան պատկերս եւ նկարս, որք զար-
դարեալ էին զորմն, զի ի թանձրամած ծխոյ սեւացեալ
եւ խանգարեալ էին։ Զի ի ժամանակին յորում սկրեաց
Սալահատտին քաղաքին երուսաղէմ եւ ի բաց վարեաց
անտի զՄաչակիրս, կարգեալ էր զՍ. Յարութիւն լինել
խոհանոց զօրաց իւրոց, զաղխս և զկարասիս պատերազմին
լցեալ էր անդ, յորոց եղծեալ և ապականեալ էին բազում
տեղիք։ զայս ամենայն մանրախոյզ քննութեամբ ստուգեալ
դատաւորաց՝ ծանուցին ի Դուռն, ընդ նմին և զխափան-
ձանս քրիստոնէից։ զի եթէ ոչ էր ծեփեալ նորոգեալ տե-
ղիքն, ընդունայն լինէին ամենայն ծախիք եւ աշխատու-
թիւնք։ Ի հաստնիլ այսմ թղթոյ ի Դուռն, եւս հրաման
Սրբոյն միայն ծեփել և սպիտակացուցանել՝ առանց պատ-

կերի և նկարու, և ըստ այնմ արարեալ քրիստոնէից, ա-
ւարտեցին զգործն։ (1720)։ Ի ժամանակս նորոգութեան
տաճարին Ս. Յարութեան եկեալ էին յերուսաղէմ յայլ
և այլ կողմանց մշակք և արհեստաւորք սակս աշխատելոյ
ի գործ չինութեան, որք մեծաւ մասամբ էին յազգէ Հա-
յոց, եւ մինչ աշխատէին ի միջի մեծի գմբեթին, մի ոմն
ի նոցանէ Տէվլէթ անուն անկաւ գահավէժ ի միջոցակեր-
տէ անտի և անմիջապէս աւանդեաց զհոգին։ Իսկ Թարգ-
մանն Լատինաց Մանսուր ազգ արար դատաւորի քաղա-
քին։ Եւ զկնի քննութեան հրամանաւ նորին բարձեալ
Թաղեցին։

Այն ինչ ի գլուխ էլեալ էր քննութիւն նորոգեալ տե-
ղեաց, եհաս հրովարտակ առ դատաւորն երուսաղէմի, զի
Գրիգոր եւ Յովհաննէս Պատրիարքունք եւ բազմութիւն
Եկեղեցականացն Հայոց՝ ի Կոստանդինուպոլիս, բողոք
բարձեալ ի Դուռն ամբաստան լեալ էին պատրիարքէն
Յունաց, զի ի նախընթաց ամին արգելեալ էր նա զՀայս
մտանելոյ ի Գերեզմանն Քրիստոսի՝ յերեկոյի ձրագալուցի
Զատկին։ Եւ ի հրովարտակին պատուիրէր Սրբոյ ստու-
գութեամբ քննել զկնդիրն ի գաւառանի և ծանուցանել
ի Դուռն։

Իսկ զթարգմանութիւն աղերսագրոյն զոր մատուցին
Գրիգոր և Յովհաննէս՝ զետեղեմք աստանօր։ Յերուսաղէմ
ի տաճարին Ս. Յարութեան, ուր է Գերեզմանն Քրիստո-
սի, ի ներքոյ վոքր գմբեթին, սովորութիւն էր ի սկզբան-
նէ և այսր Հայոց և Յունաց ի միասին կատարել զՀանդէս
Լուսաւորութեան և Թափօրի։ Զի յերեկոյին յայնմիկ այ-
լազգի դռնապանք տաճարին, ըստ սովորութեան բանան
զդուռն Գերեզմանին, պատրիարքունք Յունաց և Հայոց և
զկնի Փոխանորդք նոցին ի միասին մտեալ ի ներքս լու-
կաւ Փոխանորդք նոցին ի միասին մտեալ ի ներքս լու-
ցանէին զմոմս, և ապա հետեւակք երկուց ազգաց, ի նո-
ցանէ, եւ չէր ինչ լեալ հակառակութիւն, եւ ոչ երբէք
լուեալ էր՝ թէ Հայք դիմեալ են առ պատրիարքն Յունաց,
զի ի միասին մտեալ կատարէին զօրէնս, և այսմ գիտակ
իսկ են բնակիչք Երուսաղէմի։ Քանզի Յոյնք յառաջագոյն
յարուցին վէճս վասն այսր խնդրոյ։ պատճառելով թէ
Հայէիչք մի մոցեն յառաջ քան զմեզ, և ի դատաստանին

յայնմիկ՝ խոստացան և յանձն առին ընդ Հայոց ի միասին մնանել, եւ տուաւ դիր յայնժամ Հայոց ի դատաստանի, եւ բաց յայսմանէ բացայայտ վկայեն դաշնագիրք Օմարայ և Սալահատինի՝ և կայսերական հրովարտակք Սէլիմայ, Սիւլէյմանայ և Մուրատայ, և վաւերական մուրհակք դատաստանի, որք պահեալ կան յերուսաղէմ ի վանս Հայոց, որ չէր հնար հակառակ նոցին առնել ինչ։ Այլ զի պատրիարքութիւնն Ցուցից յերուսաղէմ է անփոփոխ և ըստ կեանս, իսկ կարգադրութիւն պատրիարքութեանն Հայոց խանգարեալ է ի բազում ժամանակաց հետէ, մինչեւ ցաւուրս իշխանութեան ձերոյ։ զի ի չրջանի միոյ կամ երկու տարւոյ լինէր փոփոխութիւն Պատրիարքաց, և նոցա զբաղեալ ի վճռս և ի կռիւս իրերանց, անփոյթ արարեալ էին զկարգաց և զկանոնաց երուսաղէմի, և ի չիսթութենէ ատի հանդարտութիւն գտեալ Ցուցից, անկան ի անոտի տենչանս առաջնութեան, զի եւ ի ժամանակիս առաջին թագաւորաց չէ ոք այժմ ի միջի, եւ ոչ ոք մնացեալ կենդանի, որք թոյլ եւտուն Ցուցից վարիլ հակառակ խոստմանց իւրեանց՝ և մուրհակացն Հայոց, յօգնելով զսկսիզ պատճառանս, եւ պնդելով թէ՝ Հայք մինչեւ ցայսօր դիմեալ են Ցուցից։ և թէ առաջնութիւնն է նոցա։ եւ թէ Հայք ոչ երբէք դադարեալ են ի խռովութենէ, եւ այսպիսի առութեամբ առին հրովարտակ Արքունուստ ՈՈՀՇ (1696)։ և իրրեւ կամեցան վարիլ նովաւ ընդդէմ նախնի սովորութեանց, առիթ եղեն մեծի խռովութեան։ և ի դատաստանի յայտնի եղեւ նենգութիւնք նոցին առաջի օրինաւոր վկայից և բնակչաց քաղաքին։ և վաւերական մուրհակօք Հայոց խափանեցան խռովութիւնք նոցին, և տուաւ դիր Հայոց ի դատաստանի։ եւ զկնի միոյ տարւոյ՝ վերստին յարուցին զնոյն խռովութիւն, և գործեալ մերժեցան ամենատանութիւնք Ցուցից ի դատաստանի, և այսպէս մինչեւ ցայսօր անխափան մնացին սովորութիւնք երկուց ազգաց։ Սակայն Ցոյնք բնական նենգութեամբ իւրեանց զխափանեալ հրովարտակն զայն եւտուն նորոգել օրինօք դատաստանի ի թուին ՈՈՀՀ (1710)։ եւ թագուցին զայն մինչեւ ցայսօր։ զի դիտաւորութիւնք նոցին էին գտանիլ արձանագրութիւն հրովարտակին ի դիւանս

զի ի դէպ ժամանակի ցուցանել զայն, յորմէ չունէին Հայք բնաւին տեղեկութիւն։ Այլ այս առելութիւն նոցին ոչ միայն էր ընդդէմ Հայոց՝ այլ և Լատինաց, հակառակ կայսերական դաշնագրոյն։ եւ զի մի յայտնի լիցի գործն, այլով ինն եղանակաւ առին զայն ի գանձատանէ (Մալկէ)։ Այլ Լատինք յորժամ իրազգաց եղեն այսմ, ետուն ջնջել և բառնալ ի միջոյ զհրովարտակն զայն յարձանագրութենէ դիւանին՝ ձեռամբ Դեսպանին Գաղղիոյ, և յանդիմանեցաւ Ցոյն պատրիարքն երուսաղէմի։ Իսկ Հայք գոլով ազգ անզօր և անկարող՝ կարօտին միայն չնորհաց և գթութեան բարերար Տեառնէ։ Ցոյնք ի սմին նուագի բացայայտ ետուն գրել ի հրովարտակին զխոքր գմբեթն ի վերայ Գերեզմանին Քրիստոսի, զի ի վնասիլ նոցին՝ ինքեանք չինեսցեն, և այս դիտաւորութիւն նոցին՝ ոչ միայն վասն չինեսցեն է, այլ նաեւ վասն Հայոց։ և ի հաստատեալ հրովարտակի նոցին զոր պահեալ են յիւրին նաեւ Հայք, և յայսմ յամենայնի յայտնի լինելով առելութիւն նոցին, կասկածմամբ և մանաւանդ թէ երկնչիմք իսկ, մի՛ գուցէ կասկածմամբ և մանաւանդ թէ երկնչիմք իսկ, մի՛ գուցէ սակաւ առ սակաւ յափշտակեալ զերաւունս մեր բարձցեն ի միջոյ։

Ի կարգս անհիմն բանից դասելի է և այն անոտի պատճառանք նոցին, զոր յօգնեն ի վերայ Հայոց, իբր նոքա ապաւինեալ են միշտ ի չնորհս դատաւորին երուսաղէմի։ Սակայն ըստ տրամադրութեան վաւերեալ թղթոց մերոց, և Տէր Տէր-էն հրովարտակին Ցուցից, կարի դիւրին է յայտնել զարդարութիւնն և զիրաւունս, զի զօրութիւնք վաւերալ գրոցն Հայոց և եղելութիւնք գործոյն, յայտնի հաչակեալ է անդ յերուսաղէմ. ոտիկանք և պաշտօնեայք նորոգութեան ցարդ կան մնան անդ, և Տէրութիւնն ունի կատարեալ վստահութիւն ի վերայ նոցա, և գիտէ զհաւատարմութիւն նոցին, չմնայ այլ եւս ունկն դնել բանից Հայոց և Ցուցից, զի ի ժամանակի արդարասէր Թագաւորութեան ձերոյ սահմանեցաւ աշխարհի օրէնք արդարութեան, զթացէք ուրեմն ի վերայ տառապեալ և անկարող աղքատացն Հայոց, և սակս կարգադրութեան գործոյ նոցին։ Դատաւորն եւ պաշտօնեայք չինութեան եւ բնակչաց քաղաքին եղիցին վերակացուք, անկողմնակալ

ոգւով առանց ագահելոյ և ոչ դանկի միոյ, ի քննութիւն արկցեն զինդիրն, թէ ո՞րպէս մնանէին Հայք մինչեւ ցարդ ի Գերեզմանն յաւուր ձրագալուցի, և թէ դիմաճ լեցեն առ Պատրիարքն Ցունաց, և յորո՞մ ժամանակի լեալ իցէ առաջնութիւն նոցին, որ բացայայտ եառնէ գրել ի հրովարտակին իւրեանց։ Եւ արդարութեամբ ստուգեսցին սեփհականութիւնք, կանթեղք եւ այլ ամենայն տեղիք պարագայիւք՝ Հայոց և Ցունաց ի տաճարի անդ, և հաստատեսցի գրով և կնքով վերակացուաց, և զկնի ընթերցման եւ դիտութեան Տէրութեան, արձանագրեսցի ի տեղւոջ իւրում։

Եւ յաղագս վիճին Հայոց եւ Ցունաց, որ պատահի ի Ս. Յարութիւն, այլ եւս մի՛ տացի հրովարտակ, և զի խափան բարձցի խառնութիւնն ի միջոյ, եւ կարգաւորեսցի խնդիրն, պատուէր տայիք կայսերական առենին և Մ-ԼՅԵ դիւանաց։

Գրիգոր Պատրիարք Երուսաղէմի։ Յովհաննէս Պատրիարք Կոստանդնուպոլսի։ եկեղեցականք Հայոց, եւ այլք։

Ի հասանիլ հրամանի կայսեր յերուսաղէմ։ դատաւորն արար ժողով մեծ, կոչեաց եւ զպայլազդի դռնապանն Ս. Յարութեան, եկին և փոխանորդքն Հայոց և Ցունաց և ընթերցաւ հրովարտակն առաջի ամենեցուն։ Ապա եհարց դատաւորն ցփոխանորդն Հայոց Հաննա վարդապետ, թէ զի՞նչ կոչեն խնդիրք ձեր, եւս նա պատասխանի եւ ասէ, ի սկզբանէ մինչեւ ցայսօր կայսերական հրովարտակօք և վաւերական գրովք հաստատեալ է երեկոյի Պատեքին Հայոց և Ցունաց ի միասին մնանել ի Գերեզմանն Քրիստոսի և լուցանել զճրագունս։ Իսկ փոխանորդն Ցունաց Նէոփիտոս ի նախընթաց ամի խաբէութեամբ հանեալ հրովարտակ, արգել զմեզ մեր, պատճառելով թէ մեր է առաջնութիւնն, եւ թէպէտ ի վաւերական գրոց հաստատեցաւ յայնժամ իրաւունքն Հայոց, այլ նա յերեսաց ի բանն հրովարտակին, ոչ կամեցաւ ունկն մատուցանել այնց գրոց։ Իրրեւ հարցաւ եւ ի նմանէ, արար պատասխանի եւ ասէ, ճշմարիտ են գրեանքն ի ձեռս Հաննա վարդապետի, և ոչ երբէք բռնացեալ եմք ի վերայ Հայոց սակս

առաջնութեան, այլ ի միասին լեալ է մեզ մեր ի Գերեզմանն յաւուր յայնմիկ, և ոչ ուրիմք հակառակութիւն ինչ ընդ Հայս, և ըստ այսմ բանից ազգ ազգացն ի Դուռն, իսկ դատաւորն ընթերցաւ զգիրս Հայոց, եւ ստուգեաց զիրան յայլազգի դռնապանաց, և ըստ այնմ գրեալ յայտ արար ի Դուռն։ Ի հասանիլ այսոցիկ գրեանց ի թագաւորեալ քաղաքն, տուաւ նոր հրովարտակ Հայոց, վարիլ ըստ նախնի սովորութեան և ջնջեցաւ հրովարտակն Ցունաց՝ զոր հանեալ էին ի ծածուկ։ (1720)։

Ի լրանալ այսր դատաստանի, էլ առաջի այլ խմն խընդիր սրտամաշ։ զի ումն ի բնակչաց Սիոնի Ցաղլալեահ անուն, ամբաստան լեալ զՀաննա վարդապետէն առ դատաւորն եւ ասէ։ Զիթենեաց պարտէզն՝ Գերեզմանատունն՝ և տեղին Ս. Փրկչի վանաց, են ի կալուածոց մերոց, որպէս յայտ առնէ կալուածական տումարն, և միաբանք Հայոց յանիրաւի յափշտակեալ են զայնս, այժմ խնդրեմք պատուիրել նոցա, զի ամիոիւեսցեն զձեռս իւրեանց ի տեղեացն այնոցիկ՝ և յանձնել մեզ։ Կոչեաց դատաւորն զՀաննա և զԱբրահամ վարդապետս և զԱբրահամ Թարգմանն, և եհարց ցնոսա, և նոքա առեն, բայցւմ անգամ յարուցեալ են վէճս ազգականք առնս այսորիկ, վասն տեղեացս զոր յանիրաւի պահանջեն, և չ'չահեալ ինչ դարձեալ են յետս իբր ամօթասպարա, զի տեղիքն այնքիկ սեփհական ժառանգութիւն են Հայոց ի սկզբանէ և այսր։ զի ի տիրել Սրբոյին Սէլիմոյ աշխարհին Պաղեստինոյ և կողմանցս այսոցիկ՝ հաստատեալ է զայնոսիկ տեղիս լինել սեփհական ազգին Հայոց։ Եւ ետ ընթեռնուլ դատաւորն զրովանդակ գրեանս զոր մատոյց Հաննա վարդապետ առաջի Ցաղլալեահի, և ծանոյց զիմաստս նոցա և զընդունայն դատաստանս առաջնին վերատեսչաց, որք ոչ ինչ չահեցան և նոքա ի ժամանակին յայնմիկ։ Եւ լինել այսպէս և ի խափանիլ հակառակութեան նորին, մնին ի ներքս և ազգականք առնն, և վկայեցին առաջի դատաւորին, թէ ոչ Ցաղլալեահ և ոչ ինքեանք ունին իրաւունս տեղեացն այնոցիկ, զի նոքա են ի ձեռս Հայոց (1720)։

Իսկ Հաննա վարդապետ խնդրեաց ի դատաւորէն՝ զայս ամենայն գրով յայտ առնել ի Դուռն և խնդրել հրովար-

տակ, զի մի միւսանգամ բռնացոյին այլազգիքն 'ի վերայ միաբանացն Հայոց, և լեցին առիթ ձեռաուց և տուգանաց. եւ նորա հաւանեալ՝ արար այնպէս. Գրեցաւ հրովարտակ ըստ այնմ մտաց, զի այլազգիքն Սիոնի այլ եւս մի' հակառակեսցին վանս տեղւոցն այնոցիկ, ՌՄԽ (1721)։

Ի սմին ժամանակի կարի զօրացեալ էին բռնութիւնք և անիրաւ պահանջք բնակչաց ոմանց ԲԹՂՀԵՄ գիւղի. իսկ աթոռակալ Հաննա վարդապետ կամեցեալ զիրսն դարմանել, բանս եդ ընդ փոխանորդաց Ծուռնաց և Լատինաց. և նոքա դիւրաւ անասցին բանից նորա եւ միաբանեցան, զի եւ ինքեանք չէին զերծ 'ի բռնութենէ անտի. Ապա 'ի խորհրդեան սահմանեցին առնել, զոր միանգամ հարկն պահանջէր ըստ տանելոյ ժամանակին. Կոչեցին զգլխաւորս իւրաքանչիւր թաղի աւանին ԲԹՂՀԵՄ՝ 'ի քրիստոնէից և յայլազգեաց, որք կոչէին Շէյխք, և առաջի եդին նոցա զայսոսիկ պայմանս։

1°. Ցաւուր տօնի ծննդեան Քրիստոսի առնուլ յիւրաքանչիւր վանաց 600 դահեկան իբրեւ պարգեւ, և աւելի քան զայն մի ինչ պահանջել, և լինիլ երաշխաւոր գիւղացոյ մեծի և փոքու. չնեղել և չհակառակիլ վանօրէից եւ միաբանից. չյափշտակել 'ի ճանապարհի և 'ի դրունս վանօրէից զպարէնս նոցա, որք առաքին յերուսաղէմ։

2°. Եթէ ոք 'ի գիւղականաց կարդեսցի 'ի պաշտօն հարկահանութեան, մի երբէք վիճեսցի և կռուեսցի ընդ վանականորդս երից աղգաց. Եւ եթէ չանդգնեսցի ոք, տուժեսցէ 200 դահեկան։

3°. Չյուզել և չդրդռել զվաղեմի և զանցեալ դատս, և չչարուցանել վէճս 'ի վերայ վանօրէից. Եւ եթէ 'ի ճանապարհի պատահեսցի ինչ գրաստուց իւրեանց, զոր տուեալ են 'ի վարձու, չպահանջել զինեան 'ի վերելելոց նոցին, ոչ 'ի վանօրէից և ոչ 'ի միաբանից։

4°. Զվաճառել ինչ բռնութեամբ վանօրէից, որպիսիք են՝ փայտ, ածուխ, խաղող և այլ սոցին նման իրք. և 'ի դնելն զայնոսիկ միաբանից ըստ կամաց իւրեանց, մի արիւն խառնութիւն 'ի մէջ դնողին և վաճառողին, և մի կացեն քեսպեն ընդ նոսա։

5°. եթէ տուգանք կամ որ և իցէ պահանջք հասանել

'ի վերայ գլխաւորաց և բնակչաց գիւղին 'ի կառավարութենէ և կամ յԱրարատցւոց, մի արկցեն զայն 'ի վերայ վանօրէից, և մի առասցեն թէ դուք վկայեցէք և առիթ եղիցի, և մի առասցեն թէ դուք վկայեցէք և առիթ եղէք սորա աքսորանաց. ուստի պարտիք վճարել զտուգանսն։


6°. Մի' ոք 'ի գիւղականաց համարձակեսցի առնել և պարծիլ այսր և անդր. թէ ունիմք մեք սահմանեալ հասս 'ի վանօրէից, 'ի միաբանից և յուխտաւորաց. և մի ոք յանդգնեսցի հակառակիլ վանս այսր, կռուիլ ընդ միաբանս ընդ ուխտաւորս, և հայհոյել նոցա. և կամ քակել զորմն վանօրէից և պարտիզաց նոցին, և զորմն ախոռոյն Հայոց. և եթէ համարձակեսցի ոք, տուժեսցէ երաշխաւորն 200 դահեկան։

7°. Ի ճանապարհի չպահանջել յուխտաւորաց զՊՐԱՒՍ Ղ-ՖԸ անուանեալ. չդալ 'ի գիւղերի 'ի դրունս վանօրէից և բաղխել զնոսա, պահանջելով զկերակուրս և զայլ իրս. և յոչ բանալ նոցին քարձիդ լինել 'ի ներքս, և այլ սոցին նման անկարգութիւնք, զորս սովոր էին առնել. Զայսոսիկ 7 գլուխս պայմանս յանձն առին գլխաւորք Շէյխք ԲԹՂՀԵՄ, զորս առաջի եդին վանականորդք երից աղգաց և խոստացան զամենայնն անթերի կատարել սակս խաղաղութեան վանականաց, ուխտաւորաց և ամենայն ժողովրդոց։ Եւ ապա չորքան 'ի դատարան եւ օրինօք Շէրիվ հաստատեցին զայն 7 գլուխս պայմանաց, զորս եդին. և գրեցաւ մուրհակ 'ի վերայ գլխաւորաց գիւղին, ՌՄԽ (1720)։

Ցետ այնորիկ էառ հրաման Հաննա վարդապետ 'ի Կուսակալէն Դամասկոսի, եւ Նորոգեաց զպարիսպ Ս. Փրկչի վանացս, և էա դնել 'ի տեղի իւրեանց զանկեալ քարինս. Նորոգեաց և զմեծ կամարն արեւմտեան, որ 'ի վերայ արտաքին մեծի դրան վանացս Ս. Յակոբայ, եւ զբովանդակ որմն. Նոյնպէս և զանջրպետ որմն 'ի մէջ վանացս Հայոց և Ծուռնաց, որ 'ի ԲԹՂՀԵՄ. զի հնացեալ և խախտեալ էր, և կասկած երկիւղի գողոյ և աւազակաց. և ըստ հրամանի Բգեվլին առաւել ամրութեամբ չինեալ բարձրացոյց նաեւ զորմն պարտիզին, եդեալ 'ի նմա դուռն, և զայլ կարեւոր տեղիս վանացս. (1721)։

Մինչեւ ցայս վայր հասուցեալ մեր զընթացս պատմութեանս, վասնզան տամք արդ Առաջին Հատորոյ Գրքոյս. ակն ունելով չնորհայ և զթութեան Տեառն վերստին ձեռն արկանել երկրորդ Հատորոյ գործոյս։

ՎԵՐՋ
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՅ



ՑԱՆԿ ԳԼԽՈՑ
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՅ

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

Ա. Ծնունդ Տեառն մերոյ. Գալուստ Մոգուցն. Կատարումն մանկանց. Յովհաննէս մկրտիչ. Հերովդէս. Աբգար. Պիղատոս. Հրեշտակք Աբգարու. Մկրտութիւն Տեառն և քարոզութիւն նորին մինչեւ ի համբառնալն յերկինս. 11

Բ. Գալուստ Հոգւոյն Աբգայ. Հաստատութիւն եկեղեցւոյ և համբառնալ նորին. Յակոբ առաջին եպիսկոպոս Երուսաղէմի և Թուղթ նորին. Պիղատոս. Գլխատումն Յակոբեայ. Հերակլէս Ագրիպպաս. 18

Գ. Մահ Աբգարու. Կին նորա Հելենէ Թագուհին Հայոց. Մահ և հերիմ նորին. Նահատակութիւն Յակոբայ արդարոյն. 25

Դ. Նշանք ժամանակի. Ապստամբութիւն Հրէից. Պաշարումն Երուսաղէմ. Առումն և հիմնայատակ քանդումն նորին ի Տիտոսէ հանդերձ Տաճարաւն. Կատարումն Հրէից և գերութիւն նոցա. 30

Ե. Շնորհն ապգականն Քրիստոսի. Կատարումն նորին. Եպիսկոպոսութիւն ի Հրէից հաստատեցեալ. Շինումն Երուսաղէմի Ադրիանոսէ. Կոտորումն և հալածումն Հրէից. Մարկոս Եպիսկոպոս ի հեթանոսաց հաստատեցեալ, մինչ ի կատարումն Ադրբանոսի. 41

Զ. Որոգինէս. Նախախոս աղանդապետ. Պողոս Սամոսատցի. Արիոս ուսուցանէ. 47

Է. Հալածումն եկեղեցւոյ. Մեծն Կոստանդիանոս. Ժողով Նիկիայ ընդդէմ Արիոսի. Դշխոյն Հելենէ մայր Կոստանդիանոսի. Շինութիւն Տնօրինական Ս. Տեղեաց Երուսաղէմ. 52

Ը. Վիճակ եկեղեցւոյ. Սիլվեստր Երուսաղէմցի. Երեւումն Աբգայ Թագաւորին Յերկինս. Յուվենաղիոս և հակառակութիւնք նորին ընդդէմ Քրիստոնէից. և ատակումն նորին ի Պարս. 65

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

Թ. Ժողով Կաոսանդինուպոլսոյ. Յովհաննէս Հայրապետ. Դէպք ի ժամանակի նորին. 72

Ժ. Ժողով Եփեսոսի. Եւտիքես վանահայր. Բ. Ժողով Եփեսոսի. և շրջոյզ Ժողով Քաղկեդոնի. 78

ԺԱ. Վանօրայք Հայոց Յերուսաղէմ. Անաստաս Վարդապետ. Հայ Հառաջք. 86

ԺԲ. Երկրորդ Ժողով Կաոսանդինուպոլսի. Վանք Սոբայ կրօնաւորք. Թուղթ Գրիգորի Լուսաւորչայ Արծրանեայ ի Հայս վասն ոճոյ Տեառնընդառաջի. 98

ԺԳ. Հերակլ կայսր. Առաւել երեսաղեմի ի Պարսից. Գերեվարիլ Ս. Խաչին եւ Ջաքարիայ պատրիարքին. Մագեստաս երէց անդամոյն. Թուղթ նորին առ կաթուղիկոս Համազասպ Հայոց. Դարձ Ս. Խաչին Յերուսաղէմ. 103

ԺԴ. Մհհմեմ. Օմար. Աշխարհ Իսմայելեան զջրսեն Յորդանան. Առաւել Դամասկոս. Դաշինք Գրիսաոնէից. Գալուստ Օմարայ Յերուսաղէմ եւ տիրել քաղաքին գամբք. 108

ԺԵ. Մահ Օմարայ և Սոփրոնիոսի. Ապտել Մելիք տիրի Մըսրայ. Շինուածիւն տիկնին Օմարայ. Երկրորդ Ժողով Նիկիոյ. Գերեզմանն Բագոսի. Յովհաննէս Զմշկիկ. 117

ԺԶ. Ծառատունկ և կատարումն քրիստոնէից. Աւերումն տաճարին Ս. Յարութեան և նորոգումն նորին. Հրովարտակ Մեհմեթի և նորոգումն նորին. Հրամանք Ալիքսիոսի. Բարձումն իշխանութիւն եղիսկոպոսի. Ախէն եղիսկոպոս. Բարձումն իշխանութիւն Նուէթեան Ֆաթիմեանց Յերուսաղէմ և վերատին տիրել նոցին. 121

ԺԷ. Աշխատանք Խաչակրաց յարեւելս. Պատերազմ նոցա ի կողմանս Քիւթանիոյ. Պաշարումն Անտիոքայ եւ առառւմն նորին. Տիրել նոցին Ռուհիէ և Բեթղեհէմի. Պաշարել զԵրուսաղէմ և զերկուս ղէմ եւ առնուլ զայն. Կատարումն այլազգեաց. Գրիգոր վիսյաձէր.

ԺԸ. Մահ Կանդպզբեայ. Բաղտուին. Ա. Կաթուղիկոսութիւն Լատինոց. Ծառատունկ. Աշխատանք Բալտուինի և մահ նորա. Բալտուին. Բ. Դարձ և մահ նորին. Բալտուին. Գ. Տէր Գրիգոր.

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

ԺԹ. Աշխատանք Ամաուրեայ. Շիրքու և Սալահատին. Բռնաւորիւն իշխանութեան Ֆաթիմեանց. Նորոգութիւն հիւղպչեղէն Բեթղեհէմի. Թագուհի Մանուէլի կայսեր. Մահ Նուրետտինայ և Ամաուրեայ. Միաբանիւն Սալահատինի. 136

Ի. Պատերազմ Ակալոնի. Պարտութիւն Սալահատինի. Քաջնութիւնք նորին Ասորիս. Աւերումն նոր բերդին առ Յորդանանաւ. Գլխատ Ռայնալդոսի. Լատին իշխան Քերքայ. Հաշտութիւն. 142

ԻԱ. Մահ Բալտուինի և յաջորդութիւն Բալտուինի Ե. և Գոթիմանի. Դարձ Սալահատինի. Պատերազմին Տիբերիայ. Պարտութիւն Թաչակրաց. Գերութիւն Թագաւորին և Խաչափայտին Քրիստոսի. 146

ԻԲ. Աւերումն Յերուսաղէմի ի Սալահատինէ և զանազան անգամ նորին. Տուն Յովհաննայ և Աննայի. Տաճար Ս. Յակոբայ. Դաշնագիր Սալահատինի, այլովքն հանդերձ. 152

ԻԳ. Գարձ Սալահատինի. Թագալ Ֆրեդերիկոսի Կայսերայրեվեղը. Թուղթ Գրիգորի Կաթուղիկոսին Հայոց առ Սալահատին. 164

ԻԴ. Պաշարումն Պտղոմայիդա (Ակքէս). Պատերազմունք Սալահատինի ընդ Լատինս. Թագաւորն Անգղիոյ Ռիչարտոս. Թագաւորն Գաղղիոյ Փիլիպպոս. Աւերումն Պտղոմայիդայ ի Լատինոց և գիմել նոցա պատերազմս ի Պաղեստին. Շինուածն պարսպին Երուսաղէմ. Դաշնադրութիւն եւ զինադադար.

ԻԵ. Բաժանումն Թագաւորութեան յորդւս Սալահատինի. Պատերազմ Լատինոց ընդ Մելիք Ադիլայ. Պաշարումն Տիմաթի. Քանդումն պարսպին Երուսաղէմի. Զօրանալ Լատինոց ի կողմանս Եգիպտոսի. Դաշինք նորին. Թագաւորն Ակիկիոյ. տիրել նորին քաղաքին Երուսաղէմ. 178

ԻԶ. Վանք Հայոց ի լեռնակողմն. Կաթուղիկոսք Հայոց. Սահակ Եզրատ. Ս՝. Լուդովիկոս. Աւերումն Երուսաղէմի ի Թաթարաց. Հեթում Ա. Յիշատակարան. Քերքք. 184

ԻԷ. Շինուածիւնք Լիւսի Բ. Թագաւորի. Փնտռտուք Սուլթանին Եգիպտոսի. արշաւանք եւ գործք նորին մինչ ի մահն. Մելիք Մանսուր. Աւերումն Պտղոմայիդայ եւ կատարումն քրիստոնէից. Բարձումն իշխանութեան Լատինոց Յերուսաղէմ. Ծառատունկ.

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

ԻՀ. Աչշառանք Թաթարաց Ի Պաղեստին. Առաւել Երուսաղէմ. Հնութիւն Բ. տաքայ Հայոց. Շինութիւնք նորին. Մեկնք Նոյա. Աւանն Ռեհէք և կոթող նորին. Արաբական տոհմանպատութիւնք. 195

ԻԹ. Աարդխա Պատրիարք Երուսաղէմի. Դեղոյան Վրաց. Խնդիր վանից Ս. Յակոբայ. Վիլլե և Լատինք. Տէր Սահակ և Տէր Յովհէփ յատեանս Եգիպտոսի. Հրամարտակ Սուլթանին. 200

Լ. Հակառակութիւն վրաց. Որմն Ս. Յակոբայ. Հարկահանք Եգիպտոսի. Դռնապանք Ս. Յարութեան. Ֆրանգիական կրօնաւորք. Վանք Ս. Փրկչի. 206

ԼԲ. Լեառն Ե. Վանօրայք լեռնակողմեան. Հաներագիր վանն Գողգոթայի. Հրամարտակք. Մարտիրոս եպիսկոպոս. Սարգիս եպիսկոպոս. Մեսրոպիկ եպիսկոպոս. Պօղոս եպիսկոպոս. Սուլթան Պարիս Պէյ. 213

ԼԳ. Մարտիրոս պատրիարք Եգիպտացի. Գրաւումն Գողգոթայի ի վրաց. Դատաստանք յատեանս Եգիպտոսի. Մեծամեծ Հանդէս Մարտիրոսի. Հրամարտակք եւ դատաստանագիրք. Ի վերջոյ կորուստ իրաւանց, եւ վերստին եկեղեցւոյն վերանալն. 221

ԼԴ. Մեկնք Զահր. զոր ինչ արար Երուսաղէմ. Աբբայի արձանագրութիւն Ս. Յակոբայ. Վերակից ասպետքն Վկրտանայ ի Ս. Յարութեան. Վէմ վրայ վանն Ս. Յակոբայ. Եւայի պատրիարք. 229

ԼԴ. Ազգաւոր արտաքոյ քաղաքին. Սոլգիս և Մկրտիչ եպիսկոպոսունք. Յոյն պատմիչ. Վէմ Բնեզհեմի վանայ. Դեղոյան Վրաց և վէմ նորա վանն Ս. Յակոբայ, և Գողգոթայի. 233

ԼԵ. Սուլթան Սելիմ Օսմանցւոց. Աւանն Աղրեայ. Պաղեստինայ. և Եգիպտոսի. բարձումն իշխանութեան Մամլուքայ. Հրամարտակ նորին առ Սպտիս պատրիարք. Բանտարկութիւն Լատին կրօնաւորաց. Յոյնքն եղիսկոպոս. Աստուածածնայր պատրիարք. 246

ԼԶ. Մրամարտիկ. Պաբիայ Երուսաղէմի. Անգլիաց պատրիարք. Վէմ ընդ Յունաց. Գերեզման Ս. Աստուածածնի. Պատանեաց նորին Քրիստոսի ի Ս. Յարութեան. 254

ԼԷ. Աղտաքաւումն Լատինաց ի Սիոն. Հին բընակութիւն Հայոց.

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

Պատանեպարութիւն Սիոնի. և հին եկեղեցին. Վէմ Հայոց ընդ Յունաց. Խաչատուր եպիսկոպոս. Համբարձման եկեղեցին. 261

ԼԸ. Վէմ Յունաց ընդ Լատինաց. Բռնութիւնք Արաբացւոց. Վանօրայք Ս. Հրեշտակապետաց և Ս. Փրկչի. Վախճան Անդրիա պատրիարքի. և յաջորդելոյ պահառն Դաւթի. Եկեղեցին Ս. Աստուածածնի. Դաւառն Ս. Փրկչի վանայ. Դռնապանք Ս. Աստուածածնի գերեզմանին. 272

ԼԹ. Վանք Ս. Սաբայի. հակառակութիւն Յունաց. Բանալի պրկին Մինգհան. Վանօրայք ազգաց Լերուսաղէմ. Եկեղեցին Համբարձման. Գրիգոր Պարսն Տէր. Վանք Ս. Փրկչի. և գերեզմանատունն անդ. 279

Խ. Գմբեթին Համբարձման եկեղեցւոյն. Վէմ Լատինաց ընդ Հայոց, ասկ պրկին Մինգհան Քրիստոսի. եւ Պատանեաց. Ամրաստանութիւնք նոցին վ Դաւթ արքայի. և գաթեղաղ խռովութիւն ասկ պրկին Մինգհան. և մերժուն Հայոց յայրէ անտի. 290

ԽԱ. Հակառակութիւն Լատինաց. Վանօրայք լեռնակողմեան. Խնդիր վանից Ս. Յակոբայ. Գնալն Գրիգորի պատրիարքի ի Կոստանդինուպոլիս. Հին Երուսաղէմի տունն անդ. Եկեղեցին Գալատաց. Նորոգութիւն եկեղեցւոյն Յովհաննու Աւետարանչի. Վերնատան Երկք կամարքն. 302

ԽԲ. Վէմ Յունաց ընդ Լատինս ասկ խնդրոյ Ս. Տէղւոյ. և գերեզմանէյն Յունաց ընդ Պաղտոմայ եւ զպրն Մինգհան. Վէմ ընդ Հայոց ասկ Պատանեաց. Սաբայի վանքն. Հակառակութիւն Սերվիացւոց և վրաց. 312

ԽԳ. Ղևնգութիւն Յունաց. Տալ գրել Գրիգորի զքաժին տեղիս Հայոց. Գիւղականք Բնեզհեհմի. Տան Զաքարի. Վանք Փրկչի. Չ կանթեղ վ Ս. Մինուճ. Վանք Բնեզհեհմի և խանն. Մահ Գրիգորի պատրիարքի. Ամիր Աջիզ. 324

ԽԴ. Պատրիարքութիւն Աստուածատուր Եպիսկոպոսի. Տեսուչ Եկեղեցեաց. Վանօրայք Ս. Փրկչի և Ս. Հրեշտակապետաց. Զաքարիա աւազակաց. Ամրաստանութիւնք և բռնութիւնք պղտզակաց. Գերեզման Ս. Աստուածածնի. 333

ԽԵ. Փիլիպպոս և Եղբայս կաթուղիկոսունք. Վէմ Յունաց ասկ Բնեզհեհմի վանայ. Վանք Ս. Փրկչի. Տեսուչն Հապե-

Հայ. Գրաւումն ամփոփանութեանց նորին ի Ցունաց. և վէճ վասն այսր խնդրոյ. 339

ԽԶ. Բաժանումն այրին Մշունեան ի մէջ Հայոց և Ցունաց. կաթուղիկոսութիւն Գողթն Եղիազարու. Վէճ Ցունաց ընդ Հայս. և վերստին գրաւելը նոցա ղվինացին Հապէշոց. սեպհականութիւնք Հապէշոց. Տագնապ Եղիազարու. Նուիրակութիւն Ս. Էջմիածնի. Գրաւումն Ս. Յակոբայ ի Ցունաց. 348

ԽԷ. Գործ Եղիազար վարդապետի. Նամիկ նորա առանձին Կաթուղիկոս Յերուսաղէմ. Նուիրակութիւն Էջմիածնի. Գլխաւորութիւն Աստուածատուր պատրիարքի և Մարտիրոս վարդապետի ընդ Եղիազարու. 365

ԽՀ. Վէրստին հաստատութիւն կաթուղիկոսութեան և խնամակալութեան Եղիազարու. Հակառակութիւնք Թլթլեանց. Աժբատանութիւն Մարտիրոս վարդապետի ղՆերսէսի, առնելը Եղիազարու զպատրիարքութիւնն Երուսաղէմ. գանկատ և ամբաստանութիւնք Ժողովրդոց զՅակոբ կաթուղիկոսէն Էջմիածնի. 375

ԽԹ. Խնդիր պատարագելոյ ի վերայ Գերեզմանին Քրիստոսի. Մեկնիլ Եղիազարու Յերուսաղէմ. Յակոբ կաթուղիկոս. Օրհնութիւն Մխիթարի Յերուսաղէմ. Բողոք Եղիազարու և Ժողովրդոց. Մեկնումն Վրաց. Բաժինք Հայոց ի տաճարին Ս. Յարութեան. Դաւիթ Բերիացի. Գժտութիւն Մարտիրոսի ընդ Եղիազարու. Մահ Աստուածատուր պատրիարքի. 385

Ծ. Վէճ պլաղգեաց Երուսաղէմի. Գիւղականք Բեթղեհէմի. Մարտիրոս վարդապետ. Ա. Լուսգի դռնապանք. Վէճ պլաղգեաց վասն գերեզմանատան. Գալ Յակոբայ կաթուղիկոսի վերստին ի կաթուղիկոսարանն. Գրել նորա Թուղթ Յերուսաղէմ առ Եղիազար, և վախճան նորին. Մարտիրոս վարդապետ և վախճան նորին. 395

ԾԱ. Պատրիարքութիւն Յովհաննէս վարդապետի. Սիմէոն եպիսկոպոս. Վէճ Ցունաց ընդ Լատինս. Հակառակութիւն Լատինաց. Նորոգութիւն Ս. Փրկչի. Գործ Յոյն պատրիարքին Նեղութիւն պլաղգեաց. Մահ Յովհաննու պատրիարքի. 404

ԾԲ. Գալուստ վարդապետ. Բողոք միաբանից. Մինաս վարդապետ Ամթեցի. Ա. Լուսգիք Երուսաղէմի և Սիոնի. Աւուրք

վարդապետ. Մխիթարն Ամթեցին Երուսաղէմի ընդ պատրիարքութեան կոստանդինուպոլսոյ. Աշխարհական տեղակալք ի Ս. Յակոբ՝ Նազր անուամբ. 415

ԾԳ. Վէճ պլաղգեաց. Կողոպտումն վանաց Ս. Փրկչի. և սպանումն Ա միաբանից. Պատրիարքութիւն Մինաս վարդապետի և վախճան նորին. Հակառակութիւն Լատինաց. Վէճ ի գնջմանի Ս. Աստուածածնի. Հակառակութիւն պլաղգեաց. 424

ԾԴ. Գործք սեղակալաց. Պարտք Ամթեցին Երուսաղէմի և Թըշուսաբութիւն նորա. Յովհաննէս վարդապետ Բաղիշեցի եւ Հրաշխատութիւն նորա. Պաիքսէրցոյ Յովհաննէս. Ընդհրաժարումն Գրիգոր վարդապետի և բաժանումն պատրիարքութեան Երուսաղէմի. 435

ԾԵ. Նորոգութիւն գմբէթի տաճարին Ս. Յարութեան, և բաժնի Լատինաց. Նորոգել Ցունաց զբաժին տեղիս իւրեանց. Փշնութիւն նորոգութեանց. Նորոգութիւն բաժնին Հայոց ի տաճարի անդ. Վէճ Ցունաց ընդ Հայոց սակս հանգիսի Լուսաւորութեան. Ա. Լուսգիք Սիանի. Դատաստանք գիւղականացն Բեթղեհէմի. 442

ՎՐԻՊԱԿՔ

Է՛Ջ	ՏՈՂ.	ՍԽԱԼ.	ՈՒՂԻՂ.
25	18	Սանդրուկ	Սանատրուկ
26	33	գտանիմք	գտանեմք
27	16	Հնչմարեն	Հնչմարին
29	33	արճանէն	արճանին
32	19	Կամանոս	Կումանոս
33	33	Յարկանել	'ի հարկանել
34	19	Յոդաղատոյ	Յոտաղատոյ
35	37	յաւելու	յաւելաւ
38	11	քարկոծ առնէին	կոծէին
43	17	'ի Հռոմայեցւոյ	'ի Հռոմայեցւոց
43	30	եդ	եւ
44	3	Թոփոսի	Բոփոսի
45	26	կիզոց	կեզոց
46	9	Ներկեսոսի	Նարկեսոսի
67	26	դօրաշուց	'ի դրօշուց
70	7	Ասրուոյ	Ասորւոց
74	30	Յովհաննու	Յովհան
88	15	Գանթարայ	Գանթարայ
88	19	հին	էին
92	12	Գազաւան	Գազաւոն
95	26	զվահան	զվանս
99	34	կարդայն	կարդայեն
104	33	Ալրուհն	Ալրուհզ
112	23	եւս	եդ
121	14	Ադրիանոսի	Անդրիասի
122	20	ՀՀՎ.	ՀՀՎ
122	32	Նորա	Նոր

Էջ	ՏՈՂ.	ՍԽԱԼ.	ՈՒՂԻՂ.
139	5	*Լատինական*	*Լատինական*
139	22	55	33
145	2	*բերեալ*	*բրեալ*
176	10	*առեալ*	*արաբեալ*
206	19	*Մխիթարիէտ*	*Մխիթարիեան*
217	30	*ձեռագիր*	*ձեռագիր*



ՀՀ Ազգային գրադարան
NL0408855